281(Հ) N 3621
Ա 78

ԼԻԱԿԱՏԱՐ ՎԱՐՔ
ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ՍՐԲՈՑ

Որք կան 'ի հին Տօնացուցի Եկեղեցւոյ
Հայաստանեայց։

Յօրինեալ հաւաքական բանիւք ճառընտրաց մերոց
եւ այլոց ազգաց, հանդերձ ծանօթութեամբք։

'Ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան, յաշակերտութենէ մեծին Մխիթարայ Աբբայհօր։

Հրամանաւ Տ՟ն Տ՟ն Ստեփաննոսի Ագոնց՝ Աբբայի եւ
Արքեպիսկոպոսի։

Արդեամբք ա՟ծասէր Մանուկ Աղայի կարնեցւոյ մահտեսի Ածատուրեան։

ՀԱՏՈՐ. Ե։

Միջոց Ա՟ծածնի մինչեւ ցխաչն.

'Ի Յովակիմայ եւ յաննայէ մինչեւ 'ի ժողովն Նիկիոյ։

1813. 'Ի ՎԵՆԵՏԻԿ. ՌՄԿԲ։
'Ի Վանս Սրբոյն Ղազարու։

A
1021



Ծնունդ սրբուհւոյ կուսին Մարիամու ։

P. Antonio Novelli del. — Fabio Berardi Scul. Ven.ª

ՎԱՐՔ ՍՐԲՈՑՆ

Յովակիմայ, և Աննայի ծնողաց սբ՟ Ածածնի ։(1)

Հ․ յուլիսի․ 25 ։ Յ․ յուլ․ 25․ և օգոստ․ 9 ։ Լ․ մարտ․ 20․ և յուլ․ 26 ։ Բոլլանդեանք․ 'ի Դ․ հատ․ մարտի․ էջ․ 77=80․ և 'ի Է․ հատ․ յուլ․ 233=279 ։ Խորէն․ Թղթ․ առ սահակ արծր ։ Յոհն․ պատմաբ․ յղ․ ուղղ․ հատուած․ Ժ․ 14․ և այլք 'ի հարց և 'ի վկայաբանաց ։ (2)

ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ պանծալիք և գովելիք, 'ի մարդկանէ հրեշտակք, և պարծանք ազգի մարդկան․ փառաւորեցեալք յա՟յ գերագոյն պատուով քան զա՟մ նախահարս և զնախամարս, զ՟ի որում ընտրեցեալք 'ի լինել ծնօղ ծնողի ա՟ծորդւոյն, և ստուգա՟պս նախահաւ և նախամայր փրկչին տիեզերաց ։ Արդ ո՞ բաւական իցէ ասել զմեծութի՟ երկոցս երանելեացս, որք այսպիսում հասին բարեմասնութե՟ ․ կմ՟ ո՞ր բան արժանաւոր կայցէ 'ի ճառել զբարելաւութի՟ նց՟ ․ զորոց շատ է տեսել 'ի գովութ՟ի և 'ի պատմութ՟ի վարուց նց՟, եթէ ծնօղք էին սբ՟ ա՟ծածնի. որպէս և ա՟մ լրումն կատարելութ՟ե մաքուր զաւակի նոցա ամենասբ՟ կուսին մարիամու յայն քան բովանդակի, զի եղև մայր ա՟յ ։

Ա՟ զի ոչ՟ մարիամ ծառ կենաց, նոյնպէս և յովակիմ և աննա արմատ ծառոյն կենաց. մարիամ տունկ օրհնութ՟ե, և ծնօղք նր՟ արմատ օրհնութեան. և եթէ 'ի պտղոյ անտի ծառն ճանաչի, ապա 'ի յո՟է զմարիամ, և 'ի մարիամայ զյովակիմ և զաննա ծանիցուք աներկբայ՝ ը՟ ա՟մ ձրից լաւութ՟ե ։ Եւ արդարև՝ եթէ վս՟ զաքարիայ և եղիսաբեթի ծնողաց սբ՟յ կարապետին վկայեաց աւետարանիչն, եթէ էին արդարք երկոքեանն առաջի ա՟յ, գնային յա՟մ պատուիրանս և յիրաւունս տ՟ն անարատք, ո՞րչափ ևս առաւել տայ մեզ իմանալ զծայրագոյնն արդարութ՟ի և զանարատ քաղաքավարութ՟ի զյովակիմայ և զաննայի. որք յայնչափ վերագոյն ընտրեցան աստիճան քան զծնօղս մկրտչին, որչափ մեծ է գերաստիճան բարձրութ՟ի ա՟ծամայրութ՟ե սբ՟ զաւակի իւրեանց՝ քան զպաշտօն կարապետութ՟ե և մկրտութ՟ե. զի թէ նա մեծ 'ի ծնունդս կանանց կոչեցաւ, այլ մօրն ա՟յ չիք կշռութ՟ի ը՟ կանանցածինս. զի զի՞նչ համեմատութ՟ի ը՟ կարգ ծառայական և ը՟ ծնողական ։ Այլ քանզի 'ի գրոց սբ՟ց չունիմք և ոչ մի տեղեկութ՟ի պատմական զծնողաց ծնողի բանին ա՟յ, տեսցուք զի՞նչ ինչ աւանդութ՟ի եկեղեցական 'ի գիրս հարց և

վ՟դպաց

վ՟ղպաց կայցէ զնոցանէ ։

Ս՟բն յովակիմ հայրն ս՟բ ա՟ծածնի, և հարազատ հաւն ֆ՟ պապն յ՟ի ք՟ի որդւոյն ա՟յ, թէպէտև չէր 'ի մեծատանց ֆ՟ի և 'ի փառաւորաց, այլ ըստ ծագմանն էր յարքայական զարմէ տանն իէլի, 'ի ցեղէն յուդայ և յազգէ դաւթի, ըստ ոմանց՝ իջեալ 'ի սերնդոց սողոմոնի արքայի՝ յորմէ յաջորդեցին թագաւորք յուդայ, և միացեալ խնամութ՟բ ը՟ տանն նաթանայ եղբօրն սողոմոնի. կ՟մ ըստ այլոց՝ ուղղագիծ իջեալ 'ի սերնդոց նաթանայ որդւոյ դաւթի, և միացեալ խնամու՟բ ը՟ տանն սողոմոնի. յորմէ էր ս՟բն յովսէփ ա՟ծահայրն կոչեցեալ ։ (3)

Բանզի ը՟ եբրայական աւանդից՝ զոր 'ի բանից եպիփանու յառաջ բերեն մովսէս խորենացի և յովհան դամասկացի, ս՟բն յովակիմ էր որդի բարեայ պանթեռն կոչեցելոյ, կ՟մ որդի բարպանթեռայ որդւոյ պանթեռայ՝ որդւոյ ղևեայ. այս այն ղևի է որդի մեղքեայ յազգէ յուդայ և դաւթի, զոր յիշատակէ ս՟բն ղուկաս՝ յասել անդ. յովսեփայ, որ յակովբայն, որ հեղեայն, որ մատաթեայն, որ ղևեայն, որ մեղքեայն. այնպէս՝ զի ըստ խորենացւոյն, հեղին այն մատաթեան՝ է հօրեղբօրորդի ս՟բյն յովակիմայ. և միանգամայն նոյն հեղի է օրինական հայր ս՟բյն յովսեփայ, որոյ բնական հայրն էր յակոբ համամայր եղբայրն հեղեայ (4) ։ Սո՛ղ զոր ոմանք 'ի յետնոց եղբարս համահարս կամեցան առնել զյովակիմ և զյովսէփ, լաւ ևս վարկան այլք 'ի նոր մեկնչաց ասել՝ թէ հեղին իցէ նոյն ինքն յովակիմ, ըստ որում հեղի մերձ է յանունս եղիակիմ, և այն 'ի յովակիմ. թէպէտ և առանց նախնեացն վկայութե̃. և ըստ այսմ սր̃ն յովակիմ լինի որդի մատաթեայ որդւոյ ղևեայ. և սր̃ն յովսէփ ոչ լինի մերձաւոր յովակիմայ, այլ՝ աննայի եղբօրորդի, և աննա հօրաքոյր յովսեփայ. քանզի համարին զաննա լինել դուստր մատթանայ, որ ծնաւ զյակոբ զհայրն յովսեփայ, ըստ մատթէոսի աւետարանչի:

Եւ սակայն այլք դնեն հանգոյն յայսմաւուրաց յունաց և հայոց, թէ սր̃ն աննա ոչ էր դուստր մատթանայ՝ որ 'ի տանէ յուդայ, այլ դուստր մատթանայ քահանայի 'ի ղետական ազգէ՝ բնակելոյ 'ի բեթղեհէմ քաղաք յուդայ, քոյր սովփէի կամ սոբէի մօրն եղիսաբեթի. քանզի ծնաւ ասեն մատթան քահանայ երիս դստերս. և այս երից քերց դստերք եղեն՝ եղիսաբէթ, մարիամ մայր տն̃, և սողոմէ: 'Ի սոսին վերածին և այլ բազմապատիկ կարծիք հին և նոր վէպաց, որք անմիաբան գտանին 'ի խնդիրն ազգաբանութե̃ս 'ի մասնաւորի, ուր ըստ հանրապէս միաբան հաստատեն գրովք, թէ յովակիմ և աննա էին 'ի թագաւորական ազգէ դաւթի, ունելով միանգամայն և ազգականութի̃ ըստ քահանայական ազգի. և այս կամ ըստ հին ծագման, ըստ որում զքոյր նաասոնի ամինադաբեան էառ 'ի կնութի̃ եղիազար որդի ահարոնի, և կամ ըստ այլ մերձաւոր խնամութեան

Թեան ը՟ ծնօղս տիրամօրն և ը՟ եղիսաբէթ մայր մկրտչին ։

Արդ՝ 'ի գալ հասանել ժամանակի լրման ուխտի առ հարսն եղելոյ՝ 'ի յովակիմ և յաննա, յորս միացեալ էին թագաւորական և քահանայական գաւազանք, և կայր մնայր անկանելոյն հիմնարկութ՟ի նորոյ Տ՟ի՝ ծննդեամբ ծնողի փրկչին, կամք եղեն Այ՟՝ զի զառաջինն անզաւակ մնասցեն յովակիմ և աննա . ոչ՟ զի 'ի ծերութ՟ե և յամլութ՟ե հրաշագործեսցէ նց՟ զաւակ հրաշալի սահմանել՟ 'ի ծննդութ՟ի միածնին իւրոյ ։ Տխրէր յովակիմ ը՟ ամլութ՟ի աննայի, և աննա առաւել քան զնա . այլ առաւելաւ տրտմութ՟ի նց՟, ուր փոխանակ ընդունելոյ մխիթար սրտի 'ի բարեկամաց և 'ի քահանայից, ընկալան զյետինն նախատինս . զի ոչ՟ ասի՝ 'ի գնալ երբեմն յովակիմայ ը՟ այլս 'ի տաճարն ե՟ջմի մատուցանել Այ՟ զպատարագ 'ի խաշանց իւրոց կըրկին, իսաքար ոմն անուն քահանայ (ը՟ ոմանց ռուփիմ քահանայապետ) յամօթ արար զնա՝ ասելով . չէ՛ պարտ յառաջ ընծայ մատուցանել քեզ Այ՟ . վ՟ն զի ոչ գոյ զաւակ քեզ 'ի մէջ իէլի ։ Յոյժ խոցեցաւ յովակիմ, երկիւղածն 'ի Այ՟ . և թախծագին սրտիւ՟ մեկնեալ յե՟ջմէ՝ ոչ դարձաւ 'ի նազարէթ 'ի տուն իւր, և ոչ երևեցոյց զանձն աննայի կնոջ իւրում . այլ գնաց յանապատ առ հովիւս խաշանց իւրոց, զոր ոմանք մերձ 'ի պրոբատիկէ ասեն (զի յունարէն բռօ́վատոն է ոչխար, և բռօվատիգի ոչխարանոց կ՟մ խաշնայ

նայրին) . և անդ կանգնեաց զխորան իւր, և պահեաց պահս (ըս̃ ոմանց՝ զխ̃ օր) . և ասէ ցանձն իւր . ոչ իջանեմ՝ ի տուն իմ, և ոչ կերայց և արբից, մինչև այց արասցէ ինձ տ̃ր ա̃ծ իմ. և աղօթք իմ լիցին ինձ կերակուր,
և արտասուք իմ ըմպելի .

Իսկ աննա ամուսինն իւր բարեպաշտ վարանեալ ը̃ յամենայն նր̃, և իմացեալ՝ ի համբաւոյ զպատճառս իրացն, կրկին ողբս ողբայր, և կրկին կոծս կոծէր . և ասէր . լացից զայրութիս իմ, լացից և զանզաւակութի̃ իմ : Եւ զգեցաւ աննա հանդերձ սգոյ . և 'ի միում յաւուրց յիններորդ ժամն էջ 'ի դրախտ տան իւրոյ, և նստաւ ը̃ դաքնի ծառով . յաղօթս եկաց առ ա̃ծ, և ասէ . տ̃ր ա̃ծ հարցն մերոց՝ յիշեա՛ զտառապանս իմ, և օրհնեա՛ զիս, ո՛ր օրհնեցեր զարդարն աբրահամ հայր մեր 'ի սառա, և ետուր նմա զաւակ զիսահակ : Եւ էր պշուցեալ ը̃ երկինս, և լայր : Եւ ետես 'ի ծառն դաքնի՝ երկու բոյն ճընճղկաց, և ողբաց մեծաձայնս և ասէ . վա՛յ ինձ՝ թէ ո՞վ ծնաւ զիս, կամ ո՞ր մայր երկնեաց զիս . զի յանէծս ծնեալ եղէ ես 'ի մէջ իէ̃լի, և անդոսնելի՛ և նախատինս եղէ 'ի տաճարի տ̃ն ա̃յ մերոյ : Վա՛յ ինձ, ո՞ւմ նմանեցայ ես, և ոչ գազանաց՝ երկրի նմանեցայ ես, և ոչ թռչնոց երկնից . զի թռչնոց երկնից ձագք գո̃ն առաջի քո տ̃ր, և գազանք և անասունք ծննդականք են առաջի քո : Վա՛յ ինձ, թէ ո՞ւմ նման եմ ես . և ոչ ջուրց՝ նման գտայ ես . զի և ջուրքս այս զեռունս բերեն առաջի քո տր՟, և ձկունք և կայտառք օրհնեն ըզքեզ ։ Վա՛յ ինձ, թէ ում նմանեցայ ես. և ոչ հողոյ՝ երկրի նման եմ ես. զի և երկիր մատուցանէ զպտուղ իւր 'ի ժամանակի՝ որդւոց մարդկան, և օրհնեն զքեզ տր՟ ։

Եւ 'ի նոյն ժամն հրեշտակ տն՟ երևեցաւ Աննայի, և ասէ. Աննա՛ Աննա, լուա՛ւ ած՟ աղօթից քոց. և ահա յղասցիս և ծնցիս մանուկ, և եղիցի անուն նր՟ ը՟ ամ՟ երկիր ։ Եւ ասէ Աննա. կենդանի՛ է տր՟ ած՟ իմ. եթէ ծնայց զաւակ, մատուցից զնա ընծայ տն՟ այ՟ ը՟ օրինակին Աննայի մօր Սամուէլի. և լիցի և զաւակ իմ պաշտօնեայ տաճարին այ՟ զամ՟ աւուրս կենաց իմոց ։

Էջ հրեշտակ տն՟ և առ այր նորա, և ասէ. Յովակիմ, լուա՛ւ ած՟ աղօթից քոց. էջ 'ի տուն քո, և Աննա կին քո յղասցի. և եղիցի ձեզ և ամ՟ երկրի ցնծութի՟ ։ Եւ ասէ Յովակիմ ցհովի՛ւս իւր. ածէ՛ք ինձ որոջս ժ՟ անարատս և ամբիծս, և լինիցին ընծայ յանուն տն՟ այ՟ իմոյ, և ասէ. ածէ՛ք ինձ զուա՛րակս փափուկս և գեղեցիկս. և լինիցին քահանայիցն և ծերոց. նոյնպէս և նոխազս ճ՟ ժողովրդեանն ։ Եւ յեւանել նր՟ 'ի Ճանապարհ՝ ազդեցին Աննայի հրեշտակք և ասեն. ահա Յովակիմ այր քո գայ, և բերէ զհովի՛ւսն զկնի իւր ։

Իբրև եկն Յովակիմ 'ի տուն իւր, ընթացաւ Աննա ը՟առաջ նր՟, և ասէ. այժմ գիտացի՝ թէ ողորմեցաւ ինձ ած՟, և օրհնեաց զիս յոյժ. և ոչ ևս իցեմ այրի, և ոչ անզաւակ ։

Եւ յետ մատուցանելոյ յովակիմայ զընծայս իւր ա͞յ, յղացաւ աննա կին ն͞ր (5) զզաւակն ուխտական՝ զօրհնեալն 'ի ծնունդս կանանց, զօրհնիչն եւայի, օրինօք բնութ͞՝ 'ի վեր քան զբնութիս. զորմէ ունիմք ասել ճառօրէն 'ի սկիզբն տ͞րունական տօնից՝ յայտնաբանելով զանարատ յղութ͞ի ամենասրբուհւոյն:

Նոյնօրինակ մնայ մեզ անդանօր ստորագրել զծնունդ տիրուհւոյն 'ի յաննայէ, եւ զոր զկնի ընծայումն 'ի տաճարն. այլ աստանօր ըստ վկայաբանից ոճոյ զկարգ պատմութ͞ես տեսցուք:

Յորժամ լցան աւուրքն, եւ ծնաւ շնորհանունն աննա զմանուկն իւր՝ զդուստր շնորհալի, կոչեաց զանուն ն͞ր մարիամ, որ եւ միրհմ, ստուգաբանել ͞է այլեւայլ բարբառոյ, բարձրուի, տիրուհի, լուսապայծառ, աստղ ծովու, եւ͞ն, բազմապատիկ խորհրդով 'ի դէպ եկեալ իսկուհւոյն մերում: Որ եւ յորժամ եղեւ վեցամսեայ, կանգնեցաւ ասէ պատմութիւն՝ մանուկն մարիամ յոտս իւր, եւ քայլեաց քայլս եօթն. եւ դարձաւ անդրէն 'ի գիրկս մօրն:

Եւ լցաւ սիրտ աննայի ուրախութ͞բ մեծաւ. եւ ասէ աննա. կենդանի է տ͞ր ա͞ծ, զի ոչ կոխեսցէ զերկիր, մինչեւ տարայց զդա 'ի տուն տ͞ն. եւ արար սրբութ͞ի աննա 'ի սենեկի իւրում, զի եղիցի զաւակ իւր սրբեալ տ͞ն. եւ ոչինչ պիղծ կամ զազիր մուծանէր 'ի սենեակ անդր առ մարիամ. եւ ոչ գիտէր զայն, եթէ ինքնին ս͞րն ս͞րց բնակեալ է 'ի սրտին մարիամու,

մու , և ունի բնակել երբեմն և մարմնա՟պս ։ Եւ յորժամ եղև մանուկն տարեկան , արար յովակիմ ընդունելութ՟ի մեծ 'ի տան իւրում 'ի նազարէթ կամ յե՟մ (6) . և կոչեաց զքահանայս և զդպիրս և զծերս և զբազումս 'ի ժողովրդենէն ի՟էլի . և առաջի ամենեցուն մատոյց զմանուկն 'ի ձեռս քահանայապետին . և նա օրհնեաց զնա , և ասէ , տ՟ր ա՟ծ օրհնեա՛ զտղայս զայս . և տո՛ւր սմա շնորհս՝ անուանի լինել յա՟մ ազգս յաւիտենից . և ասաց ա՟մ բազմութ՟ին . եղիցի՛ եղիցի ։ Եւ դարձեալ մատուցին զտղայն առ քահանայսն . և օրհնեցին զնա , և ասեն . ա՟ծ՝ որ 'ի բարձունս ես , նայեա՛ 'ի մանուկս յայս , և օրհնեա՛ զսա քոյին օրհնութ՟բդ՝ որ ոչ անցանէ . և ասացին ժողովուրդն . եղիցի՛ եղիցի՛ ։ Եւ առեալ մայրն 'ի գիրկս իւր՝ տարաւ 'ի մաքրագարդել սենեակ իւր , և օրհնեաց զա՟ծ , և ասէ . երգեցից տ՟ն ա՟յ իմոյ նոր օրհնութ՟ի , վ՟ զի այց արար ինձ , և եբարձ յինէն զնախատինս որդւոց մարդկան . և ետ ինձ պտուղ արդարութ՟ե յիշատակ առաջի իւր ։

Եւ իբրև եղև մանուկն ամաց երից՝ ը՟ չափու ընծայման սամուէլի 'ի տուն տ՟ն , առեալ յովակիմայ և աննայի զմարիամ՝ տարան զնա 'ի տաճարն , և ընծայեցին ա՟յ ըստ ուխտի իւրեանց , դնել 'ի պաշտօն տ՟ն ընդ այլ կուսանս՝ որք բնակէին 'ի կուսաստանի տաճարին՝ ը՟ դաստիարակութ՟բ , որպ՟ ասի՝ աննայի մարգարէի դստեր փանուէլի յազգէ

աասերայ ։ Բայց քանզի չէր բաւական չափ հասակի կուսին՝ ը̃ այլոց բնակակցութե̃, ասաց քահանայապետն ցծնօղս նր̃՝ տանել և պահել զնա 'ի տան ամբծութե̃. և 'ի լինել եօթն ամաց՝ բերել և դնել 'ի կուսանոցի անդ. և նք̃ արարին այնպէս ։ Իսկ յայնմ հետէ եկաց մարիամ սերովբէն հողեղէն ը̃ դասս կուսանաց այլ ևս ամս եօթն. և ապա ը̃ տնտեսութե̃ն ա̃յ՝ 'ի չորեքտասաներորդամի հասակին խօսեցե̃լ եղև յովսեփայ առն արդարոյ. և 'ի հնգետասաներորդին ծնաւ անփորձ կուսութե̃. զփրկիչն ք̃ի զյ̃ս զորդին ա̃յ ։

Իսկ ծնօղք ս̃բ ա̃ծածնի յովակիմ և աննա՝ սքանչելի քաղաքավարութե̃ լցեալ զաւուրս կենաց իւրեանց՝ փոխեցան 'ի հաճոյս ա̃յ 'ի խորին ծերութե̃. Թէպէտև ժամանակն անգիտելի ։ Սովորական կարծիք են, եթէ յովակիմ յառաջ վախճանեցաւ քան զաննա, որ արժանի եղև ասեն տեսանել զթոռն իւր զյ̃ս ք̃ս զա̃ծորդին 'ի մարմնի. և յաւուրս մանկութե̃ փրկչին փոխեցաւ 'ի կենցաղոյս, և թաղեցաւ 'ի գերեզմանի առն իւրոյ յովակիմայ 'ի ձորն գեթսեմանի. ուր և ցուցանի տեղի շիրմի նց̃ մինչև ցայսօր 'ի մջ̃ աստիճանաց, ը̃ որս լինի իջանել 'ի գերեզմանն ս̃բ ա̃ծածնի. բայց պատուական նշխարք երկոցունցն իսկ՝ յովակիմայ և աննայի, 'ի վաղ ժամանակաց հետէ բարձան 'ի շիրմէ անտի, և փոխադրե̃լ յարևմուտս՝ սփռեցան 'ի բազում տեղիս. զորոց ունիմք ասել 'ի ծանօ-

թու

Թութիւնս ։ (7)

Արդ նշանակեսցուք և զյաճախութիւն սքանչելեացն՝ որք պատմին լեալ 'ի նշխարաց սրցս, ոչ և 'ի կարդալոյ զանուն նցա հաւատով. և զի՞նչ են զարմանք. զի թէ քն ոչ զլանայ երբէք զխնդրուածս անարատ ծնողին իւրոյ մարիամու, նոյնպէս և տծածինն մարիամ զխնդիր հօր և մօր իւրոյ. մանաւանդ թէ ինքնին տրն կանխէ յտմի 'ի կատարել զբարեխօսութի երջանիկ հաւուն և հանւոյն իւրոյ, յովակիմայ ասեմ և աննայի։

xxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxx

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Այեղչապէս առընթեր տօնի վերափոխման տծամօր կուսի կարգեալ է 'ի մեզ տօն ծնողաց նր յովակիմայ և աննայի, որոց անյայտ է օր փոխմանն, բայց գերեզման նց պատուէի մօտ առ գերեզմանի կուսին։ Իսկ թէ Հ. և Յ. միօրինակ նշանակեն զկատարումն կամ զվարս յովակիմայ և աննայի 'ի յուլիսի. 25. ոչ և Լ. զաննայի 'ի 26. այդ երևի վն իրիք փոխադրութե նշխարաց կամ մասնաւոր խորհրդոյ կարգեալ. Թող զի լատինք զյովակիմ այլով խորհրդով վերածին 'ի մարտի 20. զկնի տօնի յովսեփայ՝ որ 'ի 19. վնյ ասեն բոլլանդեանք. * Օրս այս՝ մարտի 20. որ այժմ առ լատինս
,, սահմանեալ է 'ի պաշտօն նր (յովակիմայ), ոչ վասն
,, այլ պատճառի երևի ընտրեալ, եթէ ոչ՝ զի զկնի փե-
,, սային առընթեր դիցի և տօն աներոյն ||: Թող զի յոյնք առընթեր ծննդեան տծածնի՝ կրկին ևս առնեն զյիշատակ ծնողաց նր 'ի սեպտ. 9։

(2) Եթէ զանուանս յովակիմայ և աննայի, և եթէ ըզհամառօտ վարս նց՝ առաւել վն եղանակի յղութեան և ծննդեան և ընծայման կուսին, ունիմք 'ի միաբան աւանդութէ նախնի հարց. զորոց զվկայութիւս յերկար լինի նշանակել. այլ զայս միայն ծանուցանեմք, թէ 'ի

բանս Հայոց և վիպաց մեր ազգաց տեսանի նախ՝ ինչ ինչ նման բանից գտելոց յանյայտ գիրս, որ կոչի պատմութիւն կամ նախաւետարան Յակոբայ տեառն եղբօր, և կամ Յակոբայ ուրումն ժամանակակցի առաքելոց. և երկրորդ՝ տեսանի և ինչ ինչ՝ որ ոչ գտանի յայն գիրս Յակոբայ. որք և ոչ մեր բանք այնր գրոց գտանին առ Հայս: Յորմէ պարտ է իմանալ, զի որպիսի և իցէ հեղինակութիւն այն գրոց, Հայք ընտրութեամբ ակնարկէին ՚ի բանս այնր մատենի. զի զոր ինչ համաձայն առաքելական աւանդից կամ պատշաճ էր Աստուածածնի և ծնողաց նորա յանկաւոր գտին անդ, զայն և եթ առին, ՚ի բաց թողեալ զանհաւաստի կամ զտարադէպ բանս. զնոյն հնարին առնել և մեր իմաստուն քննիչք. և մեք զնոյն շաւիղ կալաք՝ ըստ հետոց նախնեաց:

Բայց թէ ոմանք ՚ի քննչաց նաև զընդունելիսն Հայոց ըստ քննութեամբ կամին արկանել իբրև անընդունելիս, մեզ չէ փոյթ: Օրինակ իմն, Հայք և վկայաբանք ենթադրեն զՅովակիմ լինել ոչ կարի մեծատուն կամ երևելի ընչիւք, և ոչ կարի աղքատ. այլ ունօղ չափաւոր ընչից ըստ արևելեան տանուտեարց, ըստ որում ասի ունել արջառս և ոչխարս, և հովիւս խաշանց: Արդ՝ տես, թէ որպիսի մտածութեամբ զընդդէմն կամի հաստատել պապեբրոք կամ հենսքեննիոս բոլլանդեան (՚ի Գ. հատորն մարտի). ոչ է հաւանելի ասէ՝ թէ դրախտք ընդարձակք եղեալ իցեն Յովակիմայ, կամ բազմութիւն խաշանց. քանզի ասէ ցուցաք մեք (զոր ոչ գիտեմ, թէ ո՛ ընդունի), զի Յովսէփ՝ որ էր աղքատ հիւսն բնակեալ յաղքատին տան՝ որ երևի արդ ՚ի Լաւրետոն, հարազատ եղբայր էր Յովակիմայ և հօրեղբայր Մարիամու. և մարթ է մակաբերել, թէ Յովակիմ և Յովսէփ թէպէտև յաղնուական տոհմէ էին, այլ չքաւորք. և թերևս կորուսեալ նոցա զոր ինչ և կալուածս հայրենի ունէին յերկրին Յուդայ՝ առ ՚ի տանելոյ թեթև ամօթոյ մեկնեալ իցեն ՚ի քաղաքէ իւրեանց ՚ի Բեթղեհեմէ, և եկեալ ՚ի Նազարէթ Գալիլեացւոց. ուր Յովսէփ սկսեալ իցէ հիւսնութիւն առնել, և Յովակիմ զսակաւ թուով արդեօք մնացեալ խաշինս դարմանել. մինչև կարօղ լինել գնել և զաղքատին զայն տուն: Ուր յայտ է թէ ոչինչ աւելի հաւանական բարբառի քննիչս քան զբանս նախնեաց, ըստ որս անհաւան զինքն ցուցանէ. վասն և մեք ոչ յերկարեմք զրոյցս մեր այսպիսի քննութեանց:

(3) Ըստ Խորենացւոյն և ըստ Դամասկացւոյն ազգաբանու-

1021

նութն յովակիմայ և յովսեփայ այսպէս բովանդակի ։ Դաւիթ ծնաւ զսողոմոն (զոր յիշէ մատթէոս), և զնաթան (զոր յիշէ ղուկաս)։ 'ի սողոմոնէ սերունդք որդւոց յորդիս մինչև յեղիազար, որ ծնաւ զմատթան, մատթան ծնաւ զյակոբ, և յակոբ զյովսէփ զայրն մարիամու կուսի, և զկղէովպաս։ Իսկ 'ի նաթանայ եղեն սերունդք որդւոց յորդիս մինչև 'ի ղևի. որդիք ղևեայ երեք. մեղքի, մատաթ, և պանթեռ, կմ՟ բար՝ պանթեռ կոչեցեալ. 'ի մեռանիլ մատաթայ անորդի՝ մեղքի եղբայր նր՟ էառ զկին նր՟. և ծնաւ զհեղի 'ի կնոջէն մատաթայ կմ՟ մատթանայ, ք՟ 'ի մօրէն յակոբայ. և հեղի մեռաւ անորդի. և ը՟ այսմ օր՟ մատաթ նոյնանայ ը՟ մատթանայ, նոյնպս՟ և ղևի ը՟ եղիազարու։ Իսկ յակոբ որդի մատթանայ՝ 'ի մեռանիլ հօր իւրոյ սնաւ 'ի տան մեղքեայ օրինական հայր իւր կոչեցելոյ. զի և հեղի և յակոբ՝ համամայր եղբարք էին յայլևայլ հօրէ, յակոբ 'ի տանէ սողոմոնի, և հեղի 'ի տանէ նաթանայ։ Եւ 'ի մեռանիլ հեղեայ անզաւակ՝ էառ յակոբ զկին նր՟, և յարոյց զաւակ եղբօր իւրում զյովսէփ և զկղէովպաս. վ՟յ սոքա կոչին նաև որդիք հեղեայ։

Իսկ պանթեռ որդի ղևեայ, կամ բարպանթեռ որդի պանթեռայ որդւոյ ղևեայ, ծնաւ զյովակիմ. յովակիմ ծնաւ յաննայէ զմարիամ կոյս. յորմէ ծնաւ յս՟՝ որ անուանեցաւ քս՟։

Այլ ը՟ աւափխոտէի՝ զորոյ զկարծիս դնէ և հայրն մեր մխիթար աբբայ 'ի մեկնութե՟ մատթէի, 'ի սողոմոնէ դաւթեան սերի ծնունդ եղիազարու՝ որ ծնաւ զմատթան. և մատթան ծնաւ զյակոբ, և զաննա և զսոբէ. յակոբ ծնաւ զյովսէփ և զկղէովպաս. աննա ծնաւ զմարիամ կոյս. և սոբէ զեղիսաբէթ՝ որ կոչի ազգական կուսին։ Իսկ 'ի նաթանայ դաւթեան՝ ծնունդ ղևեայ, որ ծնաւ զմատաթ, և մատաթ ծնաւ զհեղի, որ է յովակիմ. և սա ծնաւ զմարիամ կոյս յաննայէ։

Բայց ը՟ յայսմաւուրաց հայոց և յունաց (որոց համաձայն խօսեցաւ և բաբեպրոք 'ի վարս յովհ. մկրտչի), մատթան քահանայ ղևտացի ծնաւ երիս դստերս, ք՟ զմարիամ, զսովլէ կմ՟ զսո[illegible] և զաննա. [illegible] կին յովակիմայ ծնաւ զս՟բ կոյսն մարիամ ածածինն. [illegible] ծնաւ զեղիսաբէթ զկին զաքարիայ և զմայրն մկրտչին. և մարիամ ծնաւ զսողոմէ [illegible] որդւոյն զեբեդեայ, կամ զայլ ոք սաղոմէ մար[illegible] կոչեցեալ. իսկ եղբարք և քորք քս՟ի կոչեցեալ[illegible]ն զաւակք կղէոպայ եղբօրն յովսեփայ ծծահայր կոչեցելոյ (վ՟ս զաւակք ն՟ր համարեցան 'ի դստերէն մատթանայ քահանայի,) յակոբոս եղբայր տ՟ն, սիմոն կմ՟ շմաւոն ազգական ք՟ի, յուդա, յովսէս. մարթա, եսթեր, և սողոմէ մայր յակոբայ և յովհաննու որդւոցն զեբեդեայ:

(4) Պանթեռ անուն՝ անծանօթ կարծեցեալ առ յեանն, յիշի յեպիփանէ, 'ի խորենացւոյն, և 'ի դամասկացւոյն: Եպիփան 'Ի ԳԻՐՍ ՀԵՐՁ. ՀԸ. (ը՟ այժմու օրինակաց) գրէ, թէ յովսէփ և կղէովպաս ծնան 'ի յակոբայ, որ մականուանեալ կոչիւր պանթեռ: Խորենացին 'Ի ԹՂԹ. ԱՌ ՍԱՀԱԿ ԱՐԾՐ. * Ասէ և եպիփան կիպրացի մեծ վրդ՟պն այսպէս. Սբ՟ կոյսն մարիամ ծծածին դուստր էր յովակիմայ և աննայի. իսկ յովակիմ որդի բարեայ, որ կոչի պանթեռ, եղբայր մելքեայ. ո՟պ կայ յաւանդութենէն հրէից. որդի ղեւեայ 'ի զաւակէ նաթանայ և սաղմոնի (կմ՟ սողոմոնի) 'ի ցեղէ դաւթի՝ յազգէ յուդայ ||: Եւ դամասկացին. ՅՂ. ՈՒՂ. ՀԱՒ. Դ. 14. * ղեւի ծնաւ զմելքի և զպանթեռ. պանթեռ ծնաւ զբարպանթեռ զայսպէս մականուանեալն. և այս բար պանթեռ ծնաւ զյովակիմ. յովակիմ ծնաւ զծծածինն սբ՟ ||:

Քննիչք՝ որ ոչ գիտեն զբանս խորենացւոյն, որ ը՟ իմիք միաբանէ զընթերցուած եպիփանու ը՟ բանից դամասկացւոյն յետոյ քան զինքն եղելոյ, վարանին ը՟ անմիաբանութիւն՝ որ 'ի մէջ եպիփանու և դամասկացւոյն. և այսչափ միայն ասեն, թէ դուցէ կայր ո՟ք պանթեռ անուն 'ի մէջ նախահարց կմ՟ ազգատոհմին ք՟ի. ը՟ որոյ և հոյհոյիչն կելսոս՝ ասէ որոգինէս, բարբանջէ զս՟բյ կուսէն լինել կին պանթեռայ ուրումն. և հրէայք շաղփաղփեն՝ թէ յս՟ էր որդի պանդիռայ և մարիամու մազդաղենայ: Եւ զի մեք ընթեռնումք նաև 'ի գիրս սբյն եղիշէի, զի պարսիկք անարգանօք զք՟ս փանդուրակայ որդի կոչէին, և իմանամք զնոյն նշանակել ընդ բանին հրէից, * ոչ սա է մանուկ հիւսանն ||, ունիմք ասել՝ թէ ո՟պ յովսէփ էր հիւսն, նոյնպէս և 'ի նախնիս նորա կմ՟ կուսին դոյր հիւսն նշանաւոր՝ պանթեռ կոչեցեալ: Իսկ զստուգաբանութիւն պանթեռայ իբրև հիւսն՝ ոչ գտանեմք յայտնի. թերևս մերձենայ 'ի ձայնս տիւրիւտկէր, որ է հիւսն փայտի. և 'ի ՊԷՆԹՈՒՐԻ-ԿԷՐ, որ՟պս թէ խայնտիւրկէր. այ՟ որդի հիւսան:

(5) Սբ՟ն եպիփան 'Ի ԳԻՐՍ ՀԵՐՁ. Գ. ԾԸ. կամ ՀԸ. ասէ. * Թէպէտև 'ի պատմութենէն մարիամու և յաւանդութ՟է ,, ունիմք, զի յովակիմայ հօր ն՟ր յայտնեցաւ յանապա-

,, տի յայ, թէ կին քո յղացաւ. բայց չէ՛ պարտ այնմ ,, իմանալ, ո՟ր թէ լեալ իցէ անզուգաւորութ՟բ և ան,, սերմնապէս. այլ որ ինչ հանդերձեալ էր լինել՝ նշա,, նակեաց ա՟ծառաք հրեշտակն ||: Ուր բարւոք առնէր եպիփան, եթէ ասէր՝ ո՟ր և չիք տարակոյս, թէ զհոմանձայն բառ յունական՝ փ՟խել իմանալոյ յապառնին, յղասցի (ո՟ր ընթեռնումք առ այլս և 'ի Հ.), վրիպակաւ իմացեալ են ոմանք 'ի կատարեալն՝ յղացաւ: Եւ արդարև այսպիսի վրիպական կարծեօք տարածեցաւ 'ի մէջ պարզամտացն յունաց մինչև ցայսօր, թէ ա՟նն առանց գործակցութ՟ե յովակիմայ իցէ յղացեալ և ծնեալ զս՟բ կոյսն, ո՟ր ս՟բ կոյսն զք՟ն յղացաւ և ծնաւ առանց գործակցութ՟ե յովսեփայ. որ ոչ է տանելի. զի միայն ամենաս՟բ կուսին պահեալ է այդ, և ո՛չ մօր ն՟ր: Ցուցեն լատին քննիչք, թէ նոյն տարադէպ կարծիք գոյր երբեմն և 'ի մէջ իտալացւոց. բայց հռոմ փութով տարագիր արար զայն. նաև իմաստունք յունաց տարագրեն զայդ, բայց ոչ կարացին խնուլ զա՟մ բերան ռամկաց:

Ընդ հակառակն եղեն ոմանք և յիմաստնոց ա՟մ ազգաց, որք համարեցան՝ թէ ս՟բյն աննայի լեալ իցեն և այլ դստերք՝ զկնի կուսին մարիամոյ, մարիամ կ՟մ այլ անուամբ. և սակայն իմաստնագոյնք պնդ ունին ը՟ մեզ՝ թէ կոյսն մարիամ միածին ծնունդ եղև ծնողացն, հրաւիրեալ 'ի մայրունի միածնին հօր ա՟յ: Բազմօք հաստատէ զայս և կոպեր բոլլանդեան 'ի է՟ հատ. յուլիսի. և 'ի վ՟ր ա՟մի բերէ զայս գեղեցիկ հատուած բանից իսիդորոսի արքեպ՟սին թեսաղոնիկեցւոց յաղագս ծննդեան ս՟բյ կուսին յաննայէ. * Արդ յընծայիլ 'ի լոյս լուսա,, պայծառ և ա՟ծահրաշ պատկերիս՝ եկաց այնուհետև ,, և աննա յորդեծնութ՟ե. զի չէին իսկ պէտք այսպի,, սում մօր լինել յաւելուած այլոյ զաւակի, ո՟ր թէ ,, 'ի լնուլ զպակասորդն անդրանկին. զի որ ծնաւն՝ ,, ա՟մի էր ճոխացեալ առաքինութ՟բ: Թո՛ղ զի ո՛չ կա,, րօղ էր ծնանել զհամանմանն ամենա՟բ զաւակին. զի ,, թէ երկրորդ այլ դուստր էր ծնեալ ն՟ր. 'ի դէպ էր ,, այնուհետև տարակուսիլ ը՟ մայրն՝ թէ որո՞ւմ 'ի դստե,, րաց անտի աննմանեաց իցէ մայր. վ՟ս զի անհնար էր ,, այլում զաւակի հպաւորիլ 'ի նմանութ՟ի առաքինութեց ,, կուսին. և այսպէս նուաղուն լինէր պատուոյ մօրն՝ ,, յայլմէ ծննդենէ, քան զոր այժմս ունի 'ի միամօրն ,, ծնողութ՟ե: Տե՛ս նա՝ և ո՛չ իսկ մարդիկ, և ո՛չ հրեշ,, տակք, և ո՛չ այլ արարածք կամէին՝ թէ ծնցի զա-

,, ուղ երկրորդ յայնպիսի գեղեցկածին մօրէ․ վս՟ զի
,, շատ գտաւ առ վայելչութե ա՟մ արարածոց մեծազօր
,, և գերաբուն դուստր միամօր․ քանզի 'ի նմա՝ որպէս
,, կամք են ասել բանին մեծին պօղոսի, ա՟մ գանձք
,, իմաստութե և գիտութե ծածկեալ կան ||:

(6) Որչափ ստոյգ գիտեմք, թէ ո՟բ կոյսն մարիամ յառնուլ զաւետիս 'ի գաբրիէլէ՝ էր 'ի նազարէթ գալիլեացւոց, ուր էր բնակութի և ս՟բյն յովսեփայ խօսնաւոն նր՟, ոչ նոյնչափ ստուգեալ տեսանեմք զտուն ծնողաց նր՟, արդեօք միշտ 'ի նազարէթ էին և նք՟, թէ 'ի բեթղեհէմ, կմ՟ յե՟մ, և կմ՟ մօտ 'ի պրօբատիկէ․ զի պէսպէս խօսին հարք և վկայաբանք և քննիչք, և ոչ միաբանին․ բայց չէ ինչ զի ոչ շատ հեռի են 'ի միմեանց այս տեղիք, և ոչ թերևս միշտ 'ի միում վայրի լեալ իցէ բնակութի ծնողաց կուսին, մանաւանդ յետ ընծայելոյ զո՟բ կոյսն 'ի տաճարն: Սբ՟ն յովհան դամասկացի ասաց ասեն զիւր ներբողեան 'ի փոխումն կուսին մօտ 'ի պրոբատիկէ աւազանն, ուր կառուցեալ էր եկեղեցի յանուն մօր նր՟ ս՟բյն աննայի․ և էր աւանդութի եէ՟մացւոց՝ թէ անդ լեալ իցէ և ծնունդ կուսին յաննայէ:

(7) Իսկ վս՟ գերեզմանի յովակիմայ և աննայի՝ որպէս և ս՟բյ կուսին, եւս և յովսեփայ, հասարակաց աւանդութի է՝ լինել 'ի ձորն յովսափատու մերձ 'ի պարտէզն գեթսեմանի․ զորմէ այսպէս գրէ փրանկիսկոս կուարեզմիոս 'ի զննութե ս՟բյ երկրին․ հատ․ Է՟․ Գիրք․ Դ՟․ Գլ․ 2:

* Յաջմէ կողմանէ մտանողաց, այն է յարևելից կու-
• սէ, իբրու 'ի միջավայրի յիսնասախճան սանդղոց՝ ը՟
• որ լինի իջանել 'ի գերեզման կուսին, կայ մատուռն․
• յորում են երկու դամբարանք խորանաձև․ յորոց 'ի
• միումն՝ որ հայի ը՟ հիւսիս, թաղեցաւ երբեմն մար-
• մին ս՟բյն աննայի մօր ա՟ծածնի․ իսկ 'ի միւսումն ընդ-
• արևելս՝ մարմին ս՟բյն յովակիմայ հօր կուսին: 'Ի
• միւս կողմանէ հանդէպ մատուռնս կայ այլ մատուռն
• նուիրեալ յանուն ս՟բյն յովսեփայ փեսայի կուսին
• մարիամու․ ուր է գերեզման նր՟ նոյնպէս խորանաձև:
• Այս շիրիմք թափուր են 'ի ս՟բ մարմնոց․ բայց հա-
• ւատացեալքն մեծարեն զայնոսիկ պատարագօք և ա-
• ղօթիւք՝ մանաւանդ յաւուրս տօնից նց՟․ իբր զի ա-
• ւանդութի է, թէ պատուական մարմինք ս՟րցս այ-
• սոցիկ յայն գերեզմանս թաղեալ իցեն, և ո՟բ նշխա-
• րք նց՟ սրբազանեալ ||: Յայտ է աւանդելապէս, թէ
նովին մտօք պատուէին և պաշտէին և ո՟բ գերեզմանք կու-
սին

ւին և փրկչին ։ Թողից ասել զանստոյգ բանս ոմանց , թէ նք՟ յովակիմ և աննա ը՟ սբ՟յն յովսէփայ յարուցեալ իցեն 'ի մեռելոց յաւուր խաչելութե՟ փրկչին ․ կամ՛ թէ մարմին սբ՟յն յովսէփայ՝ որ ոչն գտանի այժմ ուրեք , իցէ վերափոխեալ ը՟ ք՟ի յաւուր համբարձման ․ զնոյն կամեցան ասել ոմանք և զյովակիմայ և զաննայէ , այլ բազմութի՟ն նշխարաց գտելոց յանուն նց՟ ասէ զայդ ։

Վ՟ր սբ՟յն յովակիմայ ասի , թէ նշխարք ինչ նր՟ իցեն 'ի բոնոնիա (քղ՟ 'ի պոլոնիա իտալացւոց) 'ի տաճարի սբ՟յն պօղոսի ․ ուր և սկաւառակ գլխոյն ասի լինել 'ի կողոնիա գերմանացւոց յեկեղեցւոջ մակաբայեցւոց ․ զոր և քննութբ՟ ականատես վկայից յամի տն՟ 1665 ․ հաստատեն բոլլանդեանք , թէ ամփոփեալ է յանօթ արծաթի 'ի ձև գլխոյ պատկերոյ ականակապ և մարգարտայեա զարդուք ․ 'ի վերուստ կուսէ ունի բացարան 'ի ցուցանել ժողովրդեան ․ և 'ի ստորին կողմն գրեալ հին ոսկեգիր , * գլուխ սբ՟յն յովակիմայ || ։ Վկայեն արժանահաւատ անձինք երևելիք , թէ 'ի համբուրել անդ զնր՟ գլուխն՝ հարկանէր 'ի մեզ հոտ անուշութե՟ ։

Իսկ վասն մարմնոյ սբ՟յն աննայի բազում են բանք ․ և նախ յօրինակս ինչ հռովմէական ժամագրքի ը՟ ապագրութե՟ փարեզու ասի , թէ սբ՟ն հեղինէ դշխոյ տարեալ իցէ յեղ՟մէ 'ի կոստանդնուպօլիս զմարմին սբ՟յն աննայի ․ իցէ՛ թէ յիշելին զայդ և պատմիչք յունաց 'ի խօսել զտաճարէ սբ՟յն աննայի 'ի կոստանդինուպօլիս , զոր ը՟ պրոկոպիոսի շինեաց յուստինիանոս կայսր՝ հոյակապ և հրաշակերտ՝ 'ի տեղւոջն , որ կոչիւր տեւդերոն , քղ՟ երկրորդ ․ զոր և նորոգեաց զկնի վասիլ կայսր արշակունի , ուր գրէ 'ի վարս նր՟ թոռն նորին կոստանդին պերփեռուժէն ։

Բայց զարմանալին այն է , զի աբդեցիք՝ քղ՟ բնակիչք աբդեայ քաղաքի 'ի գաղղիա ունէին աւանդութի՟ , թէ 'ի ձեռն առաքելոց կամ աշակերտաց ք՟ի բերեալ իցէ առ իւրեանս մարմին սբ՟յն աննայի , և եդեալ 'ի մառառան միում ․ զոր յաւուրս հալածանաց ետ ծածկել եպ՟ս տեղւոյն ․ իսկ յաւուրս մեծին կարոլոսի՝ յառաջիկայութե՟ նորա յայտնեցաւ 'ի ձեռն մանկան միոյ յովհաննէս կոչեցելոյ ․ որ 'ի ծնէ կոյր , խուլ և համր գոլով՝ նշանացի եցոյց զտեղին ․ և ը՟ բանալ և գտանել զմարմինն հանդերձ վառեալ ճրագաւ մատրանն՝ ետես կոյրն , խօսեցաւ համրն , և լսել սկսաւ խուլն ․ ուստի կարգեցաւ տօն գիւտի մարմնոյ սբ՟յն աննայի հրամանաւ կայ_ սեր, և եղև տեղին ուխտատեղի երևելի:

Արդ՝ ուր ասէին արգեցիք առ իւրեանս ունել զգլուխ սրբյն աննայի ը՟ այլ նշխարս ն՟ր, յորոց սփռեալ իցեն և յայլ տեղիս, զնոյն պնդէին և այլք 'ի գաղղիացւոց՝ որ 'ի վաւվառայ կղզւոջ մօտ 'ի Լուգդոն. ոմ՟ք թէ առ նմ՟ իցէ գլուխ սրբյն աննայի՝ մասամբք ինչ ն՟ր, իբրու բերեալ 'ի ձեռն սրբյն ղոնգինոսի զինաւորին: Իսկ կարնոտացիք 'ի նոյն գաղղիա համարէին՝ թէ առ իւրեանս է 'ի տաճարի ծծածնի՝ գլուխ սրբյն աննայի բերեալ 'ի կոստանդնուպօլսոյ 'ի ձեռն կոմսի ուրումն:

Արտաքոյ գաղղիոյ 'ի բռննիա խաւլացւոց կայ ասեն սկաւառակ սրբյն աննայի, զոր երանելին նիկողայոս ալբերդացի առեալ է 'ի պարգևս 'ի հենրիկոսէ վեցերորդէ արքայէն անգղիացւոց: 'Ի կաստելլոպոն սիկիլիացւոց մասն գանկի, որ ասի բերեալ 'ի գաղղիոյ. որ և փակեալ յարծաթի գլխի՝ ունի յիշատակ յունարէն գրով դրոշմեալ. * Գլուխ սրբյն աննայի՝ մօր ծծածնի ||. Եւ 'ի մարկոդուրոն գերմանացւոց առ ռուրա գետով, կայ ասեն գլուխ սրբյն աննայի՝ որ երբեմն էր 'ի մոգունտիա, բերեալ յեճմէ:

Զայս ամ՟ լսելով՝ մի ոք զարմասցի. նախ՝ զի ուր և մասնիկ մի գլխոյ գտցի, կոչի գլուխ, զմասն անուամբ բոլորին կարդալով. և երկրորդ՝ բազում են աննա անուամբ սրբ՟ կուսանք կմ՟ կանայք 'ի սկզբանէ հետէ. զորոց զգլուխս դիւրաւ շփոթեն ը՟ միմեանս, ուր ամ՟քին կամին, զի իւրեանցն իցէ մեծին աննայի գլուխ, քան թէ այլոյ: Սոյնպէս իմա և զանբաւութի՟ այլոց նշխարաց, որք կրեն զանուն սրբյն աննայի:

Զոր օրինակ. 'ի յիշատակարանս տրեվեր քաղաքի ընդ այլ նշխարս սր՟ց յիշի * բազուկ սրբյն աննայի մօր մարիամու ||: 'Ի կողոնիա 'ի տաճարի սրբյն վաւվառեայ՝ այլ * բազուկ սրբյն աննայի ||: 'Ի լուսիտանիա 'ի տաճարի դթութ՟ե՝ * բազուկ սրբյն աննայի մօր երկնից թագուհւոյն ||. և այլ բազուկ ն՟ր 'ի հռոմ յեկեղեցւոջ սրբյն պօղոսի. զի 'ի բազկաձև անօթ եդեալ է այլևայլ մասն. սոյնպէս իմա և զայլ մասանց, զի ուրեք ձեռն յիշի, այլուր ոտն, և այլ մասունք առաւել անհաւատալիք. որք կախին զստուգութ՟է և զանստուգութ՟է վաւերական կմ՟ անվաւերական յիշատակարանաց:

Այս ինչ ստոյգ է, զի սր՟ն աննա լսէ զաղաչանս ամ՟ցն՝ որք հաւատով կարդան առ նա ը՟ ամ՟ տեղիս. մինչև ասել որինթեմիոսի արքայի. * Եթէ յաճախուն սքանչե-

„ լեաց

,, լեալ յորդորէ զոգիս 'ի պատուել զս՟ս , ամենամեծ
,, պատուոյ և մեծարանաց արժանի է ա՟մ իրօք սր՟ն Աննա, որ զորհանապազ այնչափ շնորհս առնէ ջերմեռանդն պաշտօնէից իւրոց, մինչ զի անհնար է ումեք
,, զա՟մն ը՟ թուով արկանել || ։ Ճոխագոյնս հաւաքէ Կոպեր Բոլլանդեան զվկայութիս մատենագրաց և յիշատակագրաց զբազմապատիկ հրաշից սր՟յն Աննայի ։

Մեզ շատ լիցի նշանակել զբան միոյ յերևելի հեղինակաց, որոյ խօսելով միայն զքանիցելեացն եղելոց 'ի Բրիտանիա Արմոռիկեան՝ ը՟հանրապէս զայս գումար առաջի առնէ 'ի վաւերական յիշատակաց • ասէ • 'ի ձեռն զօրաւոր բարեխօսութե՟ սր՟յն Աննայի՝ 12 մեռեալք 'ի կեանս դարձան • 60 հիւանդք վտանգեալք 'ի մահ՝ 'ի նոր կեանս վերադարձան • 12 կուրաց աչք բացան • 9 համերց լեզուք արձակեցան • 10 խլից ականջք բացան • 33 անդամալոյծք առողջացան • 13 գերիք և յանիրաւի պատժաւորք՝ ազատեցան • 13 ախտաժէտք անդարմանելիք առողջացան • 33 անձինք 'ի նաւաբեկութէ՟ կամ 'ի վտանգաց ծովու ազատեցան • 35 ոգիք յայլևայլ հեղձմանէ ջուրց փրկեցան • այլք հարիւրաւորք 'ի պէսպէս ցաւոց և 'ի խօթութեց առողջացան • յոլովք յազգի ազգի արկածից ապրեցան • ոչ սակաւ ամուլք որդեծնութն ընկալան, և ծննդականք 'ի վտանգէ երկանց անվնաս վերծան • որբք և անարգուք և անպատուհօղք սր՟յն Աննայի՝ բազմօրինակ պատժեցան ։ Այլ որպէս առաւելագոյն շնորհ է բժշկութի հոգւոց քան մարմնոց, սոյնպէս և յոլովագոյն մեղաւորք 'ի ձեռն սր՟յն Աննայի ընկալան զդարձ յապաշխարութի, զկատարելուղղութի վարուց, և զոգւոց փրկութի • զոր և մեզ պարգևեսցէ տր՟ բարեխօսութբ՟ ծնողաց ամենասբ՟ ծնողին իւրոյ ։

ՅԻՇԱՏԱԿ

Մե՟ Կանանցն Իւղաբերից ։

ՊԱՐԱԳԼՈՒԽ ՍՈՑԱ է ջերմ սիրելին և ժրագլուխ աղախինն ք՟նի Մարիամ մագդաղենացի ․ զոր ումանք նոյն համարին ը՟ կնոջն մեղաւորի՝ որ էօծ զոտսն յ՟նի 'ի տան սիմոնի բորոտի ․ ո՟պ և զնա նոյնացուցանեն ը՟ մարիամու քեռն մարթայի , և ղազարու ․ զորմէ ճոխագոյն տացուք տեղեկութ՟ի 'ի տօնի սբ՟յն ղազարու և քերց նորա ։

Գործակից մագդաղենացւոյն էր 'ի փոյթ խնկելոյ զմարմինն տ՟րունին՝ միւս Մարիամն որ և մարիամ յակովբայ , այս է քոյր մօր ին՟ կոչեցեալ , կին կղէովպայ և մայր յակովբայ արդարոյ եղբայր ին՟ կոչեցելոյ , ո՟պ և յովսեայ , յուդայի , և սիմոնի՝ ը՟ն շմաւոնի ագականին ք՟նի ։ Նա և երկոցունցն աջակից Սաղոմէ կին սաղոմէ մայր յակոբայ և յովհաննու որդւոցն զեբեդեայ , որ և դուստր նորին միւս մարիամու և կղէովպայ՝ ը՟ ստուգագոյն կարծեաց ։ Ընդ երիցս այսոցիկ յիշի 'ի սբ՟յն ղուկայ՝ և Յովհաննա կին քուզայ հազարապետին հերովդի , և այլ կանայք

ասէ

տաւէ ը՟ նմ՟. յորոց սակի է և Շուշան, զոր այլուր նշանակէ նա ինքն ղուկաս ը՟ կանայս՝ որք պաշտէին զտ՟րն յընչից իւրեանց:

Արդ սոցա ամենեցուն գովութ՟ի յաւետարանի անդ է, և գործ նց՟ անմոռաց յիշատակաց արժանի ը՟ ա՟մ աշ՟ մինչև 'ի կատարած աշ՟ի ը՟ խոստման տ՟ն առ մագդաղենացին: Եւ զի ոչ՟ զտ՟րն, նոյնպէս և զտիրամայրն պաշտեցին մինչև ցելս նր՟ յաշ՟է, նմին իրի զկնի վերափոխման կուսին՝ կատարի 'ի մեզ ճահողապէս տօն յիշատակի խմբի սոցա ը՟ յովակիմայ և աննայի ծնողաց ս՟բ ա՟ծածնի. որոց բարեխօսու՟բ լիցի և մեզ պաշտել զք՟ս ա՟ծ մեր և զա՟ծամայրն անուշահոտ վարուք առաքինութե՟ և խնկանուէր աղօթիւք. զի ը՟ նոսին հանդիպեսցուք քաղցր տեսոյն ք՟ի յարուցելոյն 'ի մեռելոց, և յարուցանողին զմեզ յանմահական 'ի կեանս:

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սրբոյն Բաբելայ հայրապետին, և Երից մանկանց՝ աշակերտաց նորին։

Տ. Յ. սեպտ. 4։ Լ. յունվար. 24։ Ճառընտ. Ա. երես. ձիը=ձլգ։ Բոլլանդ յովհաննես. 'ի Բ. հատ. յունվ. եջ. 569=581։ Մետափր. առ սուրիոսի։ Ոսկեբերան. ճառ Ա և Բ. 'ի վերայ սրբոյն Բաբելայ. հատ. Բ. եջ. 531=577. և այլք։ (1)

ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱպետն բաբէլ, որ և բաբեղաս, էր պատրիարգ աթոռոյն անտիոքայ ասորւոց 'ի ժամանակս կռապաշտ թագաւորաց. այս է՝ ըստ ոմանց առ փիլիպպոս կայսերաւ, և ըստ այլոց՝ յաւուրս յաջորդի նորա դեկոսի. այլ ըստ համօրէն վկայաբանից՝ կատարումն սրբոյն եղև յաւուրս նումերիանոսի կայսեր (որ և նոմերիանոս), 'ի խաղալ հռովմայեցւոց պատերազմաւ ընդդէմ պարսից՝ փոքր մի յառաջ քան զթագաւորելն տրդատայ։

Բանզի դէպ լինէր նումերիանոսի ինքնակալի ճանապարհ առնել ընդ քաղաքն անտիոքացւոց. և մտեալ անդ 'ի մեհեան կռոց իւրոց՝ զոհս դիւաց պղծոց մատուցանէր. ապա պա կամեցաւ և 'ի տունն տն՟ մտանել, թերևս սուտ պատճառանօք պատուելոյ և զեկեղեցի քրիստոնէից և զած՟ նց՟, այլ 'ի սրտէ խափանել կամելով կամ անարգել զպաշտօն սրբութե՟: Իսկ երիցս երանելին բաբեղաս՝ քաջ հովիւ հօտին քի՟, իբրև իրազեկ լինէր չարութե՟ կամաց թագաւորին, ձայն ամբարձեալ 'ի մէջ եկեղեցւոյն՝ ասէր ցհաւատացեալսն, որք շփոթեալ խորհէին ցըրուիլ և փախչիլ. Հաստատո՛ւն եղերուք ո՛րդեակք, և յաղօթս կացէք հաւատովք. վն՟ զի գայլ ապականիչ կամի մտանել 'ի տուն տն՟. եթէ ոչ ած՟ ժամանեսցէ մեզ, կորնչելոց եմք ամենեքեան. այլ ինքն տր՟ յամօթ արասցէ զչարն գործակցօք իւրովք: Եւ նց՟ լուեալ զայն՝ կացին մնացին 'ի ներքս. իսկ հայրապետն սբ՟ նստեալ առաջի դրացն՝ կայր 'ի պահպանութի՟ հօտին և տանն տն՟:

Եւ ահա մինչ այս մինչ այն՝ եկեալ նումերիանոս՝ ձեռնամուխ լինէր մտանել յեկեղեցին. իսկ ծառայն տն՟ բաբեղաս յառաջ մատուցեալ՝ արգել զնա տիրաբար. ո՛չ մտանես ասէ այսր պիղծ և շաղախեալ ձեռօք: Զայս ասաց արդեօք վն՟ զոհելոյ նր՟ մաղագոյն դից գարշելեաց. բայց ոսկեբերան տայ և զայլ պատճառ, զի սպանեալ էր նր՟ յանիրաւի զորքայորդին՝ որ 'ի պատանդի կայր առ նմա:

ՙՆումերիանոս թէպէտև խորհէր բռնի մտանել, այլ զարմացեալ ը՟ համարձակութիւն առն տն՟՝ յետս կասեցաւ. միանգամայն ակն-

ա.

ածեալ և 'ի համբաւոյ առն լաւութեան , զի գովելի էր և յաչս հեթանոսաց՝ որ 'ի քաղաքին , վ՟ն իմաստութե՟ն և առաքինութե՟ն իւրոյ , լուռ լինէր 'ի ժամուն . և հրաման տուեալ պահել զնա ա՟մ զգուշութ՟բ՝ ինքն յարքունիսն դառնայր լի ցասմամբ :

Եւ 'ի վաղիւն՝ անդր նստեալ յատեան՝ հրամայեաց ածել զնա առաջի ամենեցուն . և ասէ ցնա ահագին բարկութ՟բ . ա՛յ թշուառական այր , զի՞նչ զմտաւ ածեալ , և զի՞նչ առաջի աչաց եդեալ՝ իշխեցեր արգելուլ զիս . և ո՞չ գիտես՝ եթէ թագաւոր ինքնակալ խօսի ը՟ քեզ . գիտեն ա՟ծք՝ զի ոչ փախչիս 'ի ձեռաց իմոց . և տեսցուք՝ թէ օգնէ՞ քեզ ա՟ծն քո : Ետ պ՟խնի ս՟բն Բաբեղաս , և ասէ . ես այր տառապեալ էի , այլ ա՟ծ կամեցաւ առնել զիս հովիւ ժողովրդեան իւրոյ . վ՟յ տեսեալ իմ՝ եթէ գայր ապականիչ մտանէ 'ի հօտն ք՟ի , փութացայ ոչ առնել անտես . զի մի՛ կորուսից 'ի հօտէն , և համար տաց ա՟յ :

Նոմերիանոս ասէ . և արդ դո՞յլ համարեցար զիս , և ո՛չ թագաւոր : Բաբեղաս ասաց . ը՟ն ներելոյն ա՟յ ես դու թագաւոր , և ըստ մերոց մեղացն . դո՛ւնեա այնպէս խրատեալ՝ դարձցուք առ նա . այլ ես զքեզ ճշմարիտ թագաւոր ո՛չ ասեմ . վ՟ն զի ո՛չ գիտես զայն՝ որ ետ քեզ զպատի՛ւդ զայդ . զի եթէ գիտէիր , ն՟ա միայն երկիր պագանէիր , և զնա միայն պաշտէիր , և ոչ զարարածս ն՟ր . արդ այսպիսի գործովք բարկացուցանես զարարիչն քո, որ եած զքեզ 'ի չգոյուէ 'ի գոյ, և ետ քեզ պատիւ՝ զի փառաւորեսցես զնա ։ Ոսկեբերանս, զոր ամենեքեան գիտեն ․ եթէ ոք 'ի քոց պաշտօնէիցդ փախուցեալ երթայր 'ի քէն առ այլազգի թագաւոր, ո՞չ ցասնուիր արդեօք ․ այդպէս ա՟ծ զմտաւ և վ՟ս ա՟յ, որ արարիչն է երկնի և երկրի, և վրէժխնդիր լինի նախանձու փառաց իւրոց ․ քանզի և ինքն յորժամ դառնացոյց զա՟ծ, ասաց ը՟ն մարգարէի՟ն ․ դուք նախանձեցուցէք զիս չա՟ծովք, և ես նախանձեցուցից ըզձեզ չազգաւ, և ազգաւ անմտաւ զայրացուցից զձեզ ։ Արդ և դու եթէ բարկացուսցես զա՟ծ, և նա վաղվաղակի հանէ 'ի քէն զթագաւորութի՟դ քո, և տայ այլում, որում ոչ կամիս ․ զի գիտասցես՝ եթէ բարւոք է զա՟ծ խոստովանել, և ոչ զարարածս նր՟ ա՟ծացուցանել և երկրպագանել նմ՟ ․ զի գրեալ է, տ՟ն ա՟յ քում երկիր պագցես, և զնա միայն պաշտեսցես ։ (Եւ կատարեցաւ բան ս՟բյն ․ զի նումերիանոս ոչ յերկարեաց 'ի թագաւորութե՟ աւելի քան զտարի մի՝ մեռաւ չարաչար ․ այլ մեք 'ի կարգ վկայաբանութեանս դարձցուք) ։

Ասէ նումերիանոս ․ աղճատիս թշնամանելով զա՟ծս մեր և զմեզ ․ և արդ ո՞չ թուի քեզ՝ եթէ մեծին արամազդայ են գործ արարածք ա՟մ ․ միթէ այնպէ՞ս ինչ թուի քեզ՝ եթէ արարա՟ծ իցեն և դիքն ․ և կ՟մ թէ ո՞չ տեսանես զազդմունս նմ՟ և զյառաջադիմութի՟ զոր առնեն ։ Այլ ես կամիմ գիտել, թէ զո՞ր ազգ ասէ ՝գիրն ձեր՝ անմիտ․ զձե՞զ, եթէ զայլս․ վ̅յ եթէ ասասցես, ախորժելով լուծայց քեզ։

Ըստ պի̃նի բաբեղաս․ ա̅ծ զմարդն անմեղ հաստատեաց և իմաստուն․ իսկ սատանայ անկեալ յերկնից 'ի վերուստ, և փոխեալ 'ի փառացն՝ զոր ունէր յա̅յ, և նախանձեալ ը̅ ազգի մարդկան՝ յափշտակեաց զնախնիսն մեր 'ի վատթարութ̅ի խորհրդոց իւրոց չարաց․ և այնպ̅ս առհասարակ եղաք անմիտք․ Իսկ միածին որդին ա̅յ ճշմարիտն ա̅ծ երկայնամիտ եղեալ 'ի վ̅ր այնչափ կռապաշտութե̅ց, և տեսե̅լ 'ի կորստեան զստեղծուածն իւր՝ երևեցաւ մեզ, և ողորմեալ կոչեաց զմեզ 'ի մոլորութե̅ն․ և այսուհետև ոչ ևս եմք անմիտ․ վասն զի գիտեմք զա̅ծ, մանաւանդ զի գիտացաք 'ի նմանէ․ քանզի չի՛ք ոք յառաջագէտ, բայց միայն ա̅ծ։ Այլ այդ ա̅մ անուանք դիցդ՝ զոր ասէքդ, առասպելք են և իմաստք բանաստեղծաց․ անուամբ միայն անուանին ա̅ծք, և ոչ գոյութ̅բ․ քանզի եթէ չէր արուեստ առ մարդկան ('ի չինել զկուռս), ա̅ծս ոչ ունէիք։ Արդ եթէ կամիս լսել ինձ, և փախուցեալ 'ի մոլորութե̅դ՝ լինիս իմաստուն, ընդունի և զքեզ ա̅ծ․ ապա եթէ ոչ կամիս, կաս և մնաս 'ի դժնին անմտութե̅։

Սոմերիանոս ասաց․ ձեր գիրքն առասպելք են, այլ մերն՝ խորհուրդք, որ զճշմարտութե̅ օրինակ յինքեանս ունին․ զի ա̅ծեղէն զօրութ̅ի լի̅ է 'ի նոսա․ վ̅յ հրամայեմ քեզ արդ զոհել դից . և զայդ գիտեա՛ , զի եթէ ոչ լու՛իցես , անպատիժ ոչ լինիցիս . քանզի ոչ լաւ ես դու քան զայնոսիկ՝ որ յառաջ քան զքեզ յայդ եկին . զի թողին զքրիստոնէութ̃ի և ընկալան զդենս մեր , և այնպէս պատու՛ի մեծի արժանի եղեն : Պ̃խնի ետ սք̃ եպ̃սն Բաբեղաս , և ասէ . որք պարտեցանն , իբրև զմարդիկ պատրեցան . այլ զիս ո՛չ կարես խաբել անցաւոր բարեաց խոստմամբք , և ո՛չ՝ եթէ ստութ̃բ և զարքայութ̃ին երկնից ինձ խոստանաս՝ յորմէ օտարացուցանել զիս կամիս . որում դու ոչ ես արժանի , վ̃ն զի ոչ կամիս . այլ զտանջանս ունիս ժառանգել . քանզի պահանջէ 'ի քէն ա̃ծ զհոգիս մարդկան՝ զոր դու կորուսեր :

Նումերիանոս ասէ . զի՞նչ է ա̃ծ . զդոյն անուանդ իսկ ասա՛ ինձ , զի՞նչ մեկնի : Ասէ Բաբեղաս . զն̃յ մեծութ̃ին ոչ գիտես , թէև թևօք թռանիցիս . զն̃յ անուանն մի՛ խնդրեր , զի ո՛չ գտանես . քանզի ա̃մ անուն անուանեալ՝ 'ի լաւէ իմեքէ անուա՛նի . զի ոմն կոչիցէ , և ոմն լու՛իցէ . այլ ա̃մ որ կոչիցէ զա̃ծ՝ ա̃ծ , ո՛չ զանուն ն̃յ , այլ՝ զփառսն ն̃յ ասէ . արդ մի՛ ինչ խնդրեր՝ որ ն̃յ չէ՛ . ա̃ծ ճանապարհ իմաստութե̃ է , առանց հասանելոյ է . ա̃ծ է՝ որ զա̃մ ինչ արար վ̃ն մարդկան : Նումերիանոս ասէ . զի՞նչ է մարդ : Բաբեղաս ասէ . ընդունիչ կենաց , ըմբռնիչ եղելոց (ճանաչմամբ և վայելմամբ) :

Յայնժամ ասէ Նումերիանոս . երդու՛եալ յա̃ծն , զի 'ի կարգի ետուր զպ̃խնիդ , և կարի իմաստութ՟բ, ոպ՟ համբաւէր զքէն· այլ մի միայն պակաս է ՚ի քէն, գիտութիւն ա՟ծոցն· քանզի յայնժամ կարէիր բարի այր լինել։ Առ այս սուտ գովութ՟ի հրապուրանաց բռնաւորին խստի՟ արար պլինի ս՟բ հայրապետն, և ասէ· անզգա՛մ և ամպարիշտ և ամբարհաւա՛ճ բռնաւոր, պատի՟դ՝ որ ՚ի քէն է, այդ Թշնամանք են ինձ, և գովութ՟իդ քո անարգանք են ինձ· քանզի ես լի՛ եմ ա՟մ բարութ՟բ, վ՟ զի գիտեմ զա՟ծն իմ, և քարանց երկիր ո՛չ պագանեմ։ Ասէ Թագաւորն· գիտեա՛, զի անուր արկանեմ ՚ի պարանոց քո, զի ո՛չ համբերեմ քեզ, և կապանս յոտս իբրև չար ծառայի և Թշնամանողի զ՟որ իւր։ Նաբեղաս ասաց· ես զա՟ծ ունիմ ինձ իշխան և Թագաւոր· տէարս և եղբարս՝ զերկիւղածս ա՟յ· արդ հաւատա՛ դու յա՟ծ, և համբուրեմ զոտս քո· ապա Թէ ոչ՝ պատի՟ է ինձ այդ, զոր դուդ համարիս Թշնամանս առնել· այլև զայս չարչարանս կրելով՝ չև ևս եմ պիտանի ծառայ ա՟յ, այլ՝ անպիտան· բայց ՚ի նոյն իսկ ՚ի չարչարանս պարծիմ· քանզի երանելիք են՝ որ վասն ա՟յ չարչարին։

Յայնժամ ասէ Թգ՟րն ցբիկտորինոս դուքսն· կամիմ զնաբեղաս զվ՟պն անզգամաց քև խրատել, և անուր ՚ի պարանոց ն՟ր հրամայեմ արկանել, նոյնպէս և կապանս ՚ի յոտսն ՚ի Թշնամանս ն՟ր· ք՟զի ո՛չ եԹէ սակաւ ինչ Թշնամանեաց զմեզ։ Բիկտորինոս դուքսն ասաց· քոյով քաջութ՟բդ երդուեալ ա՟ր իմ, 'ի վաղուց հետէ կամեցայ հասուցանել 'ի լսելիս ահաւորութ՟եդ քո վ՟ն առնդ այդորիկ ամպարշտի, զի անօրէն և նոր օրէնս իմ՟ն ուսուցանէ, և բազում աշխատութ՟ի հասուցանէ մեզ՝ ստունգանելով հրամանաց մերոց հանդերձ ազգաւն ։ Նոմերիանոս ասէ ․ դու առ ժամս զհրամայեալդ քեզ արա՛ անհաւան բաբեղասայ ․ և ես յետ այսորիկ առ սակաւ սակաւ զազգդ զայդ ջնջեմ ։

Իսկ դուքսն եարկ զանուր 'ի պարանոց ս՟բյն և յոտսն, և հրամայեաց արտաքս հանել, զի տեսիլ լիցի ամենեցուն ։ Յայնժամ եկեն երից 'ի մանկանց աշակերտելոց առ սոսս ս՟բյն՝ փարէին զկապանօքն ն՟ր, և ոչ կամէին մեկնիլ 'ի նմանէ՝ ցանկանալով չարչարակից լինել նմա ․ իսկ դուքսն հեռացոյց զն՟ս ։ Եւ հայրապետն ուրախ լեալ ը՟ կապանս՝ որ վասն անուա՛նն ք՟սի, ասէր ցդուքսն ․ գոհանամ զա՟յ իմոյ՝ որ յայս պատի՛ւ հասոյց զիս խոստովանութ՟ս 'ի նա ․ այլ քեզ և թագաւորին քում շնորհ ոչ ունիմ ։

Իբրև լուա՛ւ Նոմերիանոս՝ եթէ աշակերտեն մանկունս ունի բաբեղաս, ասէ ․ կոչեցէ՛ք զբաբեղաս վ՟դպ տղայոց, որք անզգամութ՟բ վարին յ՟մ ժամ ։ Եւ իբրև եկն և հարցաւ 'ի թագաւորէն վ՟ն այնր բանի, պ՟խնի ետ ս՟բ հայրապետն ․ վ՟դպ եմ տղայոց, որ յիրս իրս տղայանան մտօք, և յիրս իրս իմաստութ՟բ պատահեն այնոցիկ՝ որ թիւրել կամին զճշմարտութիւնն ․ այլ անզգամաց և նմանեացդ քեզ չե՛մ վ՟դպ ։ Ասէ թ՟գրն ․ երդնում ՚ի դիս , զի վասն այդպիսի ստահակութեանդ գեղեցիկ վայելէ քեզ անուրդ և կապանքդ որ յոտսդ է : Բաբեղաս ասէ . դու անզգամութեամբ շարժեալ՝ խաղ առնես . այլ իմ երդուելոյ որդւոյն Աստուծոյ , այնչափ վայելէ ինձ այս , որչափ և ո՛չ քեզ թագդ՝ որ ՚ի գլուխդ կայ : Ցասեաւ Նումերիանոս և ասէ . ո՛վ թշուառական զոհեա՛ և զերծի՛ր ՚ի տանջանացդ , որ պահին քեզ . և մի՛ պարծիր մանկտւովդ՝ զոր ուսուցանես : Բաբեղաս ասէ . զի վարդապետ եմ տղայոց , ահա ասացի քեզ . այլ կամիս տեսանել , թէ զի՞նչ է սնունդ տղայոց և վարդապետութիւն աստուածեղէն , ունիմ ընդ իս և տղայս երիս՝ համածին հարազատս համամիտս ըստ Աստուծոյ սնեալ . հրամայեա՛ ածել զնոսա , և տեսանել զքաջութիւն նոցա , եթէ Աստուած ընդ նոսա է . զի թերևս իմով փորձիւս ոչ հաւատացեր , այլ իբրև ընդ աղձատեալ և ընդ շատախօս հայիս ընդ իս :

Հրաման ետ կայսրն հանել զԲաբեղաս արտաքս , և ածել զտղայսն՝ զորոց ասաց նա . և իբրև մտին , և ետես զնոսա դեռափթիթ հասակաւ , հարցանէր զնոսա , եթէ ունի՞ն մայր : Նոքա ասեն . այո՛ . այլ առաւել քան զմայրն մեր ունիմք զհայրն Բաբեղաս զսնուցիչն : Հրամայեաց և զմայր նոցա ածել . եհարց զնա , և ասէ . զի՞նչ անուն է քո , և զի՞նչ մանկանցդ : Եւ նա ասէ . անուն իմ՝ աղախին է Աստուծոյ . զի այս է թէոդուլէ . և մանկանցս՝ Ուրբանոս , Պրիլիդիանոս , և Եպողոնիոս : Ասէ թագաւորն . արդարև որդիք քո՞ են դոքա ։ Եւ նա ասէ . այո՛ ես ծնայ զդոսա , և ընծայեցուցի 'ի ձեռս հովուին իմոյ բաբեղայ 'ի վերստին ծնունդ ս՟բ աւազանին . և սա ուսոյց դոցա ա՟ծապաշտութ՟ի ։ Բարկացաւ կայսրն և ասէ ցպասաւորսն . ապտակեցէ՛ք զերեսս դորա սաստկագոյն առաջի մանկանց իւրոց . և ասացէ՛ք դմա , մի՛ յանդուգն բարբառիր ։ Իսկ տղայոցն տեսեալ զմայրն իւրեանց 'ի տանջանս , միաբան աղաղակեցին և ասեն . բռ՛նաւոր՝ մի՛ հարկաներ զմայրդ մեր 'ի զուր , քանզի անպա՛րտ է . և բարւոք ասայ՝ զոր ասացն . զի դա ծնաւ զմեզ , այլ սնոյց տ՟րն մեր բաբեղաս . և թէև դարձեալ ցասնուս , կրկին ևս ասեմք , տ՟ր մեր է . քանզի ա՟ծպաշտութիւն ուսուցանէ ։

Յայնժամ հրաման ետ Նոմերիանոս բարկութ՟բ , զի շալակեսցեն մի մի այր զմանկունս , և հարցին փոկով ըստ թուոյ ամաց հասակի իւրեանց ։ Եւ ասէ ցմայր ն՟ց . առաջին որդիդ քո քանի՞ ամաց է . և նա ասէ , երկոտասան . և երկրորդն քանի՞ . և նա ասէ , ինն , և երրորդն քանի՞ . և նա ասէ եօթն ։ Եւ իբրև հարին զն՟ս թուով ամացն , մանկունքն իբրև ընդ մի բերան ասացին . օրհնեալ է ա՟ծ , զի վ՟ն նորա չարչարիմք ։ Եւ մայր ն՟ց երջանիկ ձայնեաց ուրախութ՟բ , և ասէ . օրհնեալ է տ՟ր՝ մի ա՟ծ քրիստոնէից . զի ը՟ քանիոնութ՟ն ամաց իւրեանց այնպէս տանջեցան որդիք իմ վ՟ն ն՟ր , որ կատարէ զն՟ս և պսակէ ։ Ապա հրամայեաց Նոմերիանոս արտաքս հանել զմայրն նց՟ . իսկ զմանկունսն պահել, և ՚ի ներքս տանել առանձին զԲաբեղաս . և ասէ ցնա . վարդապետ անզգամաց և ուսուցիչ տղայոց, փորձեցի, և ահա զոր պարծէիր ՚ի ձեռն մանկտւոյն՝ սուտ գտար . քանզի եկեալ զառաջեաւ մանկտին՝ խոստացան զոհել ա՟ծոցն : Բաբեղաս ասաց . չար ստեցեր ՚ի քո գլուխդ, քանզի որդի ես հօրն քո սատանայի, որ հանապազ ստէ . և ո՛չ այլազգ կարէք յաղթել ումեք՝ ո՛չ դու և ո՛չ հայրն քո սատանայ, եթէ ոչ ստէք : Նոմերիանոս ասէ . երդուեալ իմ յասկղեպիոս, զի քամահեմ զբանս քո և զթշնամանս, և ոչ փաղփաղակի կարծեմ զքեզ ՚ի կենաց . այլ տանջանօք սակաւ սակաւ խոշտանգեմ զքեզ, եթէ ոչ հաւանեսցես և զոհեսցես . յետ այնր և զգլուխդ

ևս հրամայեմ հատանել :

Բաբեղաս ասէ . արդ և ծաղու արժանի էք բանիւքդ այդոքիւք . այլ ես պատրա՛ստ եմ ՚ի խաչ և ՚ի մահ վասն անուանն ք՟սի իմոյ : Նոմերիանոս ասէ . աղձատես, յորո՞ւմ եմք ծաղու արժանի : Բաբեղաս ասէ . եթէ լուիցեն այլ ա՟ծքն քո, եթէ զասկղեպիոս միայն անուանեցեր՝ զբժշկութ՟ե կարծեցեալ չա՟ծն, ցասնուլ ունէին քեզ, թո՛ղ թէ տալ կեանս և առողջութ՟ի . արդարև ես ամաչեմ ՚ի վերայ անզգամութ՟եդ ձերոյ . զի ո՛չ կարէք իմանալ, այլ երկիր պագանէք՝ որում և ո՛չ մանկունք հաւանեցան պագանել երկիր : Իսկ Նոմերիանոս ասէ . և արդ եթէ լուեալ ք՟սին քո՝ բարկասցի, զի ա՟ծ միայն անուանես՝ իբրև հայր ն՟ր , և զնա ոչ յիշես , զի՞նչ առնես ; Պլինի ետ ս՟ն և ասէ . ահա չես և ո՛չ իսկ լսելոյ արժանի զգիտութիւն քրիստոնէից . բայց սակայն վ՟ն ամբոխին՝ որ շուրջս կան , ասեմ, զի մի՛ քո անօրէնութեամբդ և դոքա զրկեսցին 'ի գիտութ՟է : Յորժամ քրիստոնեայք զորդի անուանեն , խոստովանին նովին և զհայր . և յորժամ զհայր անուանեն , խոստովանին և զորդի . քանզի ո՛չ են որոշե՟լ յիրերաց , ո՛չ հայր յորդւոյ , և ո՛չ որդի 'ի հօրէ : Եւ չէ՛ համեմատութ՟ի ա՟յ ընդ դևս , այս է ը՟դ դիս քո՝ որոց երկիր պագանես . զի գրեալ է , զի՞նչ հաղորդութ՟ի է լուսոյ ընդ խաւարի :

Յայնժամ վայրի հրաման ետ բռնաւորն , հանել 'ի կախաղան տանջանաց զբաբեղաս . ը՟դ նմին և զերիս մանկունսն . և նոքա միաբան յաղօթս կային և գոհանային զա՟յ . և հայրապետն ոչ դադարէր 'ի յանդիմանելոյ զմոլորութիւն հեթանոսաց : Ա՟եյ հրամայեաց նոմերիանոս խստագոյնս տանջել զբաբեղաս պէսպէս հարուածովք 'ի վ՟ր փայտին , ուր կայր պրկեալ հանդերձ կապանօք յոտն և անրով 'ի պարանոցին . և վ՟ն զի էին ծանր և ստուար շղթայքն՝ փտանգէին զնա զերկար ժամս : Իսկ ոմանք յայնցանէ՝ որ շուրջն կային , հեթանոսք և ուրացօղք և թերահաւատք , ո՟պ բարեկամի կարեկից զանձինս ցուցեալ՝ աւելին ը՟դ դահճաց . խոստովանեա՛ զոհել , և ապրեցիս 'ի տանջանացդ : Յայնժամ սաստեաց ն՟ց առաքինին նահատակն , և տալէ . ո՛չ այնչափ սգամ 'ի վ̅ր անզգամիդ՝ որ յաթոռ նստի , որչափ 'ի վ̅ր ձեր՝ որ դմայդ հաւանիք . որ և կորոյս ը̅ն իւր զկեանս ձեր և զհոգիս . և ես՝ որ դմա չհաւանիմ, ձե՞զ հաւանիմ արդեօք . քա՛ւ լիցի . տանջանքս այս կեանք են ինձ . քանզի նա՝ որոյ վ̅ս չարչարիմս , թեթևացուցանէ ինձ , և ո՛չ զգամ ամենևին :

Եւ իբրև ևս քան զևս սաստկացուցանէին զտանջանս ս̅բյն հրամանաւ թագաւորին , մանկունքն երանելիք ձայն բարձեալ ասէին . բռնաւո՛ր և ամպարիշտ՝ հի՞մ այդպէս զհ̅րդ մեր և զբարիոք հովի՛ւ առանց վնասու իրիք տանջես . վ̅ս զի զամենեցուն տ̅րն պաշտէ , և ահա զայդ առնելով՝ պատուի արժանի է մանաւանդ , և ո՛չ տանջանաց . երդնումք 'ի դորա փրկութ̅ի , զի ո՛չ փախչիս 'ի ձեռացն ա̅յ , այլ հրոյ գեհենոյն մատնելոց ես :

Ընդ այս ցասուցեալ Նումերիանոս՝ հրամայեաց և զն̅ն չարաչար տանջել . իսկ ս̅բ մանկունքն իբրև միով բերանով ասացին . ո՛չ ամաչես ո՛վ ա̅ծամարտ՝ 'ի մանկանց յաղթահարիլ առաջի այդչափ բազմութ̅եդ . վասն զի դու առաւել տանջիս քան զմեզ . երդուեալ յայն՝ որ ը̅ն հուպս կարող է հատուցանել քեզ , զի ո՛չ զգամք տանջանաց քոց :

Ապա հրամայեաց թագաւորն իջուցանել զբաբեղաս , և տանել թաքուցանել 'ի տուն , զի առանձինն հարցցէ միւսանգամ զմանկունսն . և սկսաւ ասել ցն̅ն . ո՛րդեակք հաւանեցարո՛ւք ինձ , և բազում պատիւս շնորհեմ ձեզ, զոր ոչ վճ̃պն ձեր, և ոչ այլ ոք կարէ ձեզ շնորհել։ Իսկ նք̃ իբրև միով ձայնիւ ասացին. խոտորամանկ և նենգաւոր՝ մի̃ խորհէիր մեզ մահ հոգւոյ՝ խոստմամբք մարմնաւորաց. ք̃զի ա̃մ շնորհք քո լի՛ են պատուով գեհենին. զի յորմէ հետէ ետ մեզ վճ̃պն մեր զտ̃րունական կնիքն, որով առաք զառհաւատչեայ երկնից արքայութե̃ն, կատարեալք եղաք, և ընկեցաք 'ի մէնջ զխորհուրդս չարութե̃ և ունայնութե̃. և հաւտատուն կերակրոյն հաղորդե̃լք՝ պատրաստ եմք 'ի մեռանել վասն անուանն քո̃։ Դու կարծէիր՝ թէ յորժամ մեկուսացուցանես 'ի մէնջ զվճ̃պն մեր, յաղթես մեզ. յորդին ա̃յ երդուեալ, որ կարող է հովուին մերոյ օգնել՝ ուր և է, և զմեզ ապրեցուցանել 'ի պիղծ ձեռաց քոց, և զժամանակս զայս չարչարանաց փոխել ը̃ հուպս յանվախճան ուրախութի̃ս, զի ոչ ուրացուք և ոչ յամօթ արասցուք զհովիւն մեր, որ աղօթս առնէ վ̃ս հօտին իւրոյ ։ Իսկ երանելին Բաբեղաս լսէր զայն ա̃մ 'ի տանն՝ ուր արգելեալն էր, և փառս վերառաքէր ա̃յ ։

Հրաման ետ անդրէն Նումերիանոս, և ասէ. ածցե̃ն զառաջնեաւ Բաբեղաս. և իբրև եկն, ասէ ցնա. մանկունքս այս որդիք են քո ։ Բաբեղաս ասաց. ը̃ ա̃յ արդարև որդիք իմ են. այլ ես վ̃ս ա̃յն իմոյ՝ յորմէ հետէ ծնայ, զկին ոչ գիտեմ։ Նումերիանոս ասէ. և զի՞ արդ նման են քեզ ամենեքին. (զայս ասէր հենգնելով զնա՝ ո̃չ թէ յամառ իցեն իբրև զնա)։

զնա) ։ Իսկ ս̀ր̄ն արար պ̄խնի ․ աղօթիւք խնդրեմ , զի ամենևին նմանեսցին ինձ՝ բաց
'ի մեղացն իմոց ։

Ասէ Թագաւորն մեղմ բանիւք հրապուրանաց ․ տասցի քեզ զերծանիլ 'ի տանջանացդ , որով հանդերձեալ ես և ևս չարչարիլ՝ և ոչ հաւանեցար ինձ ․ աղաչեմ զքեզ՝ հաճել զմիտս քո վ̄ն առաջին տանջանացն ․ միայն յայսմ հետէ չա́տ համարեա զտանջանսդ , և հաւանեցո́ զմանկունսդ ․ զի մի́ այդպէս տղայք ելցեն 'ի քաղցր կենացս ։ Իսկ սր̄ հայրապետն զայրացեալ 'ի յոգի իւր՝ ասէ ․ ո́վ անմիտ քան զա̄մ մարդ , և ամպարիշտ բռնաւոր , 'ի մեզ պարապեցեր՝ թողեալ զհոգ պատերազմաց և զմտածութի̄ , թէ ո́րպէս արժան է պատահել թշնամեաց ․ հաւատամ այ̄՝ թէ ո̄չ վանեալ հերքեցար 'ի մէնջ , և 'ի թշնամեաց քոց նոյնպէս յաղթահարեսցիս ․ այլ զխոստմունս քո տո́ւր որդւոց քոց , և զպարգևս քո կա́լ քեզէն ․ քանզի և ո́չ այնչափ կարես շնորհել մեզ , որչափ փութաս զրկել զմեզ ։

Յայնժամ ապա բարկացեալ թագաւորն՝ ետ նմա վճիռ մահու և երից մանկանցն ը̄ նմա ։ Իսկ երանելոյն բաբեղասայ առեալ զվճիռ գլխատմանն՝ բազում խնդութ̄ և սիրով՝ հանդերձ երեք մանկամբքն , յելանել անդ յերեսաց ատենին՝ երդմնեցոյց զմօտակայսն , և ասէ ․ երդմնեցուցանեմ զձեզ ա̄ծվ մերով որ զա̄մ ինչ տեսանէ , ընդ անուրս՝ հանդերձ կապանօքս որ յոտս , դի́ք զիս զկնի կատարման իմոյ 'ի վկայուն̃ բռնաւորին՝ որ յաւիտենից կապանօք տանջիլ ունի յանվախճան հուրն :

Եւ մինչդեռ ելանէր ը̃ դուռնն՝ սաղմոսէր այսպէս. փրկեցեր զմեզ 'ի թշնամեաց մերոց, և զատելիս մեր յամօթ արարեր. ընդ նմա սաղմոսէին և մանկունքն : Եւ իբրև հասին 'ի տեղի կատարմանն, աղաչեաց երանելին բաբեղաս զդահիճսն՝ որ հանդերձեալ էին գլխատել զնոսա, զի նախ զմանկունսն սպանցեն, և ապա զնա : Եւ կացուցեալ զս̃բ մանկունսն յաջմէ և յահեկէ իւրմէ՝ ասաց. ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ ա̃ծ : Եւ իբրև ետես զնս̃ վախճանեալ, ասէ. օրհնեալ տ̃ր ա̃ծ քրիստոնէից, որ արարեր ը̃ բազում ողորմութեան քում. զի արդարև 'ի բերանոյ մանկանց տղայոց հաստատեցեր զօրհնութի̃ս քո : Եւ ապա գլխատեցաւ և ինքն ս̃բ հայրապետն, և թաղեցաւ հանդերձ երեք մանկամբքն և շղթայիւքն, յամի տ̃ն 283. 'ի չորրորդ աւուր ամսեանն սեպտեմբերի. զոր այլք համարին 'ի իդ̃ յունվարի յաջորդ տարւոյն :

Յետ ոչ բզ̃մ ժամանակաց՝ յաւուրս քրիստոնէութե̃ երկու եկեղեցիք կ̃մ վկայարանք շինեցան յանտիոք յանուն ս̃բյն բաբելայ հայրապետի. մին 'ի տեղւոջ կատարման արտաքոյ դրան քաղաքին՝ յարոճարձանս նորա, յայնկոյս օրոնտայ գետոյն՝ յորոյ վ̃ր շինե̃լ է քաղաքն. և այս տաճար կայր յառաջ և քան զաւուրս յուլիանոսի, զորմէ զարմանայ ոսկեբերանն՝ զի ոչ քանդեաց զայն . մ՟նչ և Եւագրիոս պատմիչ աւանդէ զայն խնամոյութ՟ի՝ իբրև նոր շինութ՟ի 'ի յուլիանոսէ ։ Իսկ միւսն փոքր մի հեռագոյն 'ի հանգրուանս անտիոքայ 'ի տեղին դափնէ կոչեցեալ . զոր շինեաց գաղղոս կեսար եղբայրն յուլիանոսի , ո՟պ յիշատակեն բազումք ը՟ն ճոխագոյն աւանդութ՟ե ոսկեբերանի . այլ ճշդագոյն պատմէ սոզոմենոս (գիր՟ք . Ե . գլ . 18 .) ըստ օրինակիս ը՟ն այսմիկ ։

Դափնէ , այն է դաբնի՝ է երևելի հանգըրուան անտիոքայ , ուր ծառաստունկ բազում և մարգագետին ծաղկաւէտ , տեղի զբօսալի և ջրարբի , անուն առեալ ը՟ն հեթանոսական առասպելաց 'ի դաբնիդայ դստերէն լատոնայ գետոյն արկադիոյ . ո՟պ թէ 'ի փախչել նորա յերեսաց ապողոնի՝ 'ի համանուն ծառ դաբնոյ իցէ փոխեալ , և ապողոն 'ի թաւ ոստոյ անտի ծառոյն պսակ կազմեալ իւր մշտադալար՝ պատուեալ իցէ զտեղին . ուստի առ հեթանոսս անտառն այն դափնեան էր տեղի խենէշ արանց և կանանց , և ոչ ոք 'ի զգաստից կարէր երթալ անդր . գո՟յր անդ և երևելի արձան դափնեանն ապողոնի , և մեհեան մեծակառոյց , զոր ասեն շինեալ սելևկիոսի հօրն անտիոքոսի՝ որ զանտիոք շինեաց ։

Արդ՝ 'ի ժամանակին , յորում գաղղոս եղբայրն յուլիանոսի կարգեալ կեսար 'ի կոստանդեայ կայսերէ յամի տ՟ն 351 , եկաց զբաղում ժամանակս յանտիոք , քրիստոնեայ գոլով և պաշտօնասէր առ նահատակս քնի, կամեցաւ սրբել զայն տեղի 'ի հեթանոսական պղծութե̃ց և 'ի դայթակղութե̃ց ։ Այ̃ 'ի տեղւոջ մեհենին եկեղեցի շինեալ անդ 'ի դամնէ՝ ետ փոխադրել անդր զտապան սր̃յն բաբելայ , և երից մանկանցն ը̃ նմա (որպէս մեկն գրէ թէոդորետոս) ։ Եւ յայնժամ հետէ դադարեցին դիւախօսութի̃ք՝ որք լինէին յանտառի անդ ․ զի ոչ միայն զոհք դիւաց խափանեցան , այլև զօրութի̃ սր̃յն բաբելայ պապանձեցոյց զդևս ։ 'Ի մին իրի և 'ի նստիլ յուլիանոսի ուրացողի յաթոռ կայսերութե̃՝ թէպէտև յաճախել յաճախեցին անդ վերստին զոհք կուոց և դիւական պաշտամունք , այլ սակայն պատգամախօսութի̃ք դիւաց լռեալ կային իսպառ ։

Ընդ այս զայրացեալ՝ միանգամայն և զարմացեալ ուրացողին , եկն անձամբ 'ի տեղին , և խոստանայր դից իւրոց և դիւաց՝ առնել զո̃մ հաճոյս ն̃ց , միայն թէ յայտնեսցեն , զի՞ է՝ զի ոչ տան պատգամ յայնպիսի ականաւոր տեղւոջ ։ Եւ դեռ պատ'իպատ բանիւք խոստովան եղև 'ի լուր յուլիանոսի , թէ ո՛չ կարեմ խօսել՝ ցորչափ մերձ կան աստ դիականունք մեռելոց ․ մեռեալքն ասէ ո՛չ թողուն զիս բարբառել ․ հա՛պա խորտակեա՛ դու զտապանս , հա՛ն զոսկերս , 'ի բա՛ց տար զդիականունս ։ Յայնժամ քաջ 'ի վր̃ եհաս ուրացող կայսրն , թէ վս̃ մարմ̃նոյ սր̃ վկային բաբելայ և որոց ը̃ նմա՝ է բանն ․ վս̃յ հրամայեաց քրիստոնէից 'ի բաց տանել զտապան նր՟ 'ի տեղւոջէն . և նյ՟ ժողովեալ բազմութե՟՝ հանդիսապէս բարձին զնր՟ տապանն , և տարան անդրէն յառաջին տաճար սբյն՟՝ որ 'ի տեղւոջ վկայութե՟ նր՟ : Եւ յետ սակաւուց հուր անկաւ յերկնից , և այրեաց զմեհեանն ապողոնի՝ որ նորոգեալն էր 'ի դափնէս , և ծախեաց զարձան նր՟ :

Իսկ մարմին սբյ՟ Հայրապետին բաբեղայ յետ դարուց անցանելոյ ասի փոխադրեալ յարևմուտս 'ի գաղղիա անդրալբինեան . և անտի 'ի քաղաքն կրեմոնայ 'ի մայր եկեղեցին՝ յամի տն՟ 1460 . որ և ծածկեալ առ ժամանակ մի՝ վերստին յայտնեցաւ յամի 1543 : Եւ վերջին փոխադրութի՟ նորա 'ի նոր տապան 'ի նմին եկեղեցւոջ ը՟ այլ նշխարս սրց՟՝ եղև մեծահանդէս փառօք յամի 1614 . ը՟ յիշատակագրաց առ բոլլանդեայ :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ :

(1) [illegible]անդիսացեալ է յոյժ սբ՟ Հայրապետս անտիոքայ՝ բաբեղաս վկայ՝ երիւք մանկամբք աշակերտօք իւրովք , առ վկայաբանս և առ հարս և առ այլ մատենագիրս . և ը՟ միաբան ենթադրութե՟ ամենեցուն էր փոքր մի յառաջ քան զհալածանս դիոկղետիանոսի . այլ թէ երբ , բազում հակառակութի կրէ : Եթէ ոչ հայեսցուք յորոշումն ժամանակի՝ զոր հարևանցի դնէ եւսեբիոս առ դեկոսիւ , և ոչ յանորոշութի բանից ոսկեբերանի՝ որ 'ի ճոխութե՟ ճառից ոչ յիշէ զանուն թագաւորի , միաբան են յիւրեանս վկայագիրք առ հասարակ՝ որք յաւուրս նումերիանոսի դնեն : Գլուխ վկայագրաց՝ իբրև հնագոյն և լաւագոյն օրինակագիր ճանաչի ճառընտիրն ." Ա . զորոյ հետ գնայցաք անխոտոր .

տոր • զի ոչ միայն և Հ. Յ. Լ. զնոյն քաղեն, այլև երեքին հին վկայաբանութիք՝ զորս բերէ բոլլանդ 'ի հին թարգմանութեց 'ի յունէ 'ի լատին ըստ հին ձեռագրաց • են հետևողութիք ճառընտրիս մերոյ ըստ ամ բանի • յորս է որ երբեմն ընդարձակէ զբանս, և է որ համառօտէ • է որ ճոխացուցանէ բանիւք ոսկեբերանին՝ ոչ մետափրաստէս, և է որ պահէ զճշտութիւն ճառընտրիս մերոյ : Մինչ զի պարտ էր մեզ շատանալ մեօք՝ երբ այսպիսի ունիմք հարազատ պատմութի • այլ քանզի տարբերութի ժմկագրութե եւսեբի՝ որ չէր ինչ հեռի ժամանակաւ, և մթութի բանից ոսկեբերանի, աշխատ առնեն զամ քննիչս, հարկ է և մեզ սակաւուք վաստակակից լինել նց • իցէ՞ թէ դիւրեսցի դժուարութն : ;

Նախ լուիցուք՝ զինչ գրէ եւսեբիոս հարևանցի յիշատակութբ : 'Ի քրոնիկոն կանոնի իւրում ունի այսպէս • * Դեկոս • ամ ա • և ամիսս գ : Դեկոս զփիլիպոս
,, (կայսր) հանդերձ որդւովն սպանանէ • և վն նր քինին,
,, և մերուսն եւս կարգի հալածանս յարոյց : Դեկոս
,, հանդերձ որդւովն՝ յաբրիտոս սպանաւ : Անտիոքացւոց
,, եկեղեցւոյն ժբ երրորդ եպս եկաց բաբիղաս,
,, յետ որոյ ժգ • փաբիանոս || : Եւ յետ միջոցի իբր երեսուն ամաց գրէ, թէ թգրեաց * Կարոս հանդերձ
,, որդւովքն կարինեաւ և նումերիանոսիւ ամս
,, բ : 'Ի կարայ վախճանելն 'ի միջագետս, նումերիանոսի
,, առ նովաւ լինէր՝ սպանանիլ 'ի թրակ • և կարինոսի
,, նոյնպէս 'ի կռնակայ պատերազմին || : Իսկ 'ի պատմ • եկեղ • է • 39 • գրէ այսպէս (ըստ յն) • * Առլ
,, զփիլիպպոս՝ որ ամս եօթն թգրեաց, յաջորդէ դեկոս •
,, որ առ փիլիպպոս քինուն աղագաւ հալածումն
,, ընդդէմ եկեղեցեաց յարուցանէ • յորում 'ի կատարիլ
,, փաբիանոսի վկայութբ 'ի հռոմ, կուռնելիոս զեպիսկոպոսութիւն
,, յաջորդէ • և 'ի պաղեստին աղեքսանդրոս
,, երմացւոցն եկեղեցւոյ եպս՝ (յետ փառաւոր
,, նահատակութե) • • • 'ի բանտի ննջէ • և մազաբան
,, յաջորդէ • • • Հանդոյն աղեքսանդրոսի յանտիոք
,, բաբիլայ յետ խոստովանութե 'ի կապանս (կմ 'ի կապարանի
,,) փոխեալ, փաբիոս վերակացու կարգի
,, այնմ եկեղեցւոյ || :

Ուր ըստ մեզ մի միայն գլխաւոր տարբերութի կայ • զի առ դեկոսիւ դնի վկայական վախճան բաբիլայ, և ոչ առ նումերիանոսիւ, վն զի զոր այլք կարծեն տարբերիլ և յեղանակ կատարման, զի 'ի կապանս փոխեալ ասէ եւսեբիոս, և ոչ գլխատեալ, դիւրին է համարել համառօտագրութեն, փոխանակ պատմելոյ զհատումն գլխոյ և կթայումն կապանօք հանդերձ: Եւ սակայն վ͞ր այսպիսի պատճառանաց եդին հեղինակն աղեքսանդրեան ժամագրութե և կեդրենոս՝ երկուս բաբելաս անուամբ հայրապետս, զմին նահատակեալ առ դեկոսիւ, և զմիւսն առ նումերիանոսիւ: Ընդ այս համեցան և ոմանք ՚ի բոլլանդեանց և յայլոց քննչաց, մանաւանդ զի՝ ուր յոյնք զբաբելաս տօնեն ՚ի 4. սեպտ. լատինք տօնեն ՚ի յունվարի 24. և թէպէտ հաստատէ բոլլանդ՝ թէ մի և նոյն ս͞ր է տօնեալն յայլևայլ ժմկի ՚ի յն. և լտ. բայց երկբայաբար տայ տեղի, թէ գուցէ երկու համանուն հայրապետք լեալ իցեն յանտիոք: Այլ ը͞ հակառակն բարոնիոս այնպէս պնդէ, թէ մի միայն է բաբելաս, մինչ զի յետ դնելոյ զնա լինել առ դեկոսիւ ևեթ, նոյնացուցանէ և զբաբելաս ծերն նահատակեալ ՚ի նիկոմիդիա ձ͞դ աշակերտօք իւրովք՝ ընդ բաբելայ անտիոքացւոյ նահատակելոյ երեք աշակերտօք. զոր ոչ ոք ը͞ունի. ո͞պ և մեք ուրոյն տօնեմք՝ հանդերձ առանձին պատմութե͞բ.

Մի միայն գեղեցիկ գիւտ երևի ՚ի պահել զբանս եւսեբի և զվկաբանութես միանգամայն՝ ասել ը͞ ոմանց, թէ բաբելաս անտիոքայ հայրապետ նահատակե͞լ իցէ առ դեկոսիւ ՚ի նումերիանոս անուն դատաւորէ ումեմնէ անտիոքացւոյ, զոր վկայաբանք վրիպակաւ թագաւոր իցեն ձայնեալ: Բայց զայս ասել ոչ թողու մեզ ոսկեբերանն, որ քաջ գիտելով զաւանդութին քաղաքին իւրոյ անտիոքայ քան զեւսեբիոս և քան զայլս՝ զինքնակալ թագաւորէ խօսի. ժամ է լսել և զբանս ոսկեբերանի:

Ոսկեբերանն ՚ի քարոզելն յերիտասարդութե իւրում յանտիոք՝ յառաջիկայութե երիցագոյն քահանայից և փլաբիանոսի հայրապետին, այսպէս ասէ ՚ի ճառն ա͞. ՚ի վ͞ր ս͞բյն բաբելայ: * Խայտասցուք երանելւոյն բա-
» բեղայ ուղղութե͞ք: Արդ՝ թէ որպէս վերակացու-
» եալ առ մեզս եկեղեցւոյ, և զո͞բ զայս ապրեցոյց նաւ
» ՚ի ձմերանի, և ՚ի մրրկի, և յալիս, և զորպիսի առ
» թագաւորն համարձակութի եցոյց, և զիարդ զանձն
» եդ ՚ի վ͞ր ոչխարացն, և զերանելին զայն ընկալաւ
» զենումն. զայսոսիկ և զայսպիսիս՝ երիցագունիցն ՚ի
» վ͞դպաց, և հասարակաց մեր հօր թողցուք ասել.
» զի զհնագոյնս յիրաց ծերագոյնքն ձեզ կարող են բա-
» րիոք

,, ընոք պատմել ։ Իսկ որ միանգամ յարդիս եղև և առ-
,, մերովս հասակօք, զայդ ես նորահասակս ձեզ պատ-
,, մեցից ․ զոր յետ վախճանին ասեմ, զոր յետ թաղ-
,, մանն վկային, որ ինչ անցք անցին յարուձարձանի անդ ։
,, Եւ գիտեմ, զի ծիծաղեսցին զխոստմամբք մերովք
,, հեթանոսք, եթէ յետ վախճանի և թաղման թաղե-
,, ցելոյն և յաճախուն դարձելոյն՝ խոստանամք ասել զքա-
,, ջալութիւն ։ Բայց ոչ յայն սակս լռեսցուք, այլ՝
,, և վս̃ սորին այսորիկ մանաւանդ գոգցուք ․ ոմ̃ զի
,, զհրաշալիդ զայդ ցուցեալ ճշմարտութե̃՝ զծաղրն 'ի
,, նս̃ շրջեսցուք գլուխ||։ Ուր ահա տեսանես, զի թէև
անհամաձայն երևեսցի ը̃ իմիք ը̃ եւսեբեան բանից ասացուածն ոսկեբերանի, ոչ է անհամաձայն կարծելի ․ Իսկ ը̃ վկայաբանութե̃ս ոչ միայն ծագ 'ի ծագէ միաձայնի այս քաղուած ոսկեբերանի, այլև պատկէ զնոյն ․ Երանի թէ յիշէր և զանուն թագաւորին դեկոս կամ նումերիանոս, որով կամ զվկայագիրն ուղղագրեաք կամ զեւսեբիոս, և այնպէս վճարեալ լինէր ա̃մ ինչ ։

Ակնարկեսցուք և յերկրորդ ճառն ոսկեբերանի, որ և կոչի գիրք կամ բան յերանելին բաբեղաս՝ ը̃դէմ յուլիանոսի և հելլենաց ․ * Եղև (ասէ) թագաւոր առ
,, Նախնեօք մերովք ․ (ուր 'ի լուսանցս յունականն հին ձեռագրի միոյ եդեալ է՝ նումերիանոս ․ այլ մեք զոսկեբերանն կամիմք լսել, և ոչ զգրիչն) ․ և թէ այլով մա-
,, սամբ որպիսի ոք էր այս թագաւոր, ոչ ունիմ ասել ․
,, այլ զգործն՝ յոր յանդգնեցաւ, լուեալ գիտասջիք
,, և վս̃ այլ ժպրհութե̃ ընթացիցն ։ Եւ զի՞նչ գործն
,, էր ․ հաճոյ թուեցաւ ազգի ումեմն պատերազմողաց
,, ը̃ թագաւորին ը̃ այնմիկ, լուծանել զպատերազմն ․․․
,, դաշինս կռեցին, առին երդմունս և ետուն ․ հաւանե-
,, ցուցին և զթագաւորն իւրեանց՝ տալ զորդին իւր,
,, որ էր մանուկ փոքր, 'ի պատանդ հաստատուն հաշ-
,, տութե̃ ․ ․ ․ և ետ զորդին թագաւորն, որպս̃ ինքն
,, կարծէր՝ բարեկամաց և նիզակակցաց, բայց ոմ̃ կա-
,, տարածն եցոյց, անագորոյն գազանի քան զա̃մ ։ Քանզի
,, առեալ օրինօք բարեկամութե̃ և ուխտի զմանուկն
,, զայն թշ̃րական ․ ․ ․ ․ մատնէ 'ի ձեռս դահճի ․ ․ ․ և
,, զմարդասպանութի̃ն զայն կատարէ զանգութն քան
,, զա̃մ սպանութի ․ զի այս վատթարագոյն է քան զոր-
,, դեսպանութե̃ն ապիրատութի̃ ․ ․ ․ ․ ․ Այլ ես զևս
,, յանդգնագոյն այլ ասացից ․ զի զանօրէն ձեռսն զայն
,, այնպիսեաւ շաղախեալ արեամբ, և զնոր եղերանս

,, զոր-

գործեալ, ո̅պ թէ ոչինչ ամենեւին լրբեալ իցէ անա֊
,, մօթն և խստագոյնն քան զքարինս գլխովին, յեկեղե֊
,, ցին յարուցեալ գայր ա̅յ․․․․․

,, Դէպ եղև ընդ այն ժամանակս առն ումեմն մեծի և
,, սքանչելւոյ, եթէ պարտ իցէ զնա այր կոչել, զհով֊
,, ուութիւն յանձին կրել զմեր․ բաբեղաս էր անուն
,, նմա․․․ հոգւով եղիայի և յովհաննու․․․ որ ոչ ըզ֊
,, չորրորդապետ քաղաքաց սակաւուց, և ոչ զմիոյ ազ֊
,, գի զթագաւոր, այլ զայն՝ որ ունէր ը̅ ձեռամբ զա֊
,, ռաւելագոյն մասն տիեզերաց ա̅մի․․․ յեկեղեցւոյ
,, անտի արտաքսէր՝ այնպիսեաւ պնդութ̅բ և աներկե֊
,, ղութ̅բ, որով գոգցես հովիւ զոչխար ախտալից և հի֊
,, ւանդագին որոշէ 'ի հօտէն, արգելեալ՝ զի մի և յայլս
,, անցանիցէ հիւանդութի ախտացելոյն․․․ Անդէն և
,, անդ իշխանին հրամայէր իշխելին, և զինքնակալն բո֊
,, լորից դատէր հպատակն․․․․ ով անմեղկելի ոգւոյն,
,, և բարձրագոյն մտածութե̅ն․ ով երկնային սրտի, և
,, հրեշտակական սերտութե̅ն․ ո̅պ թէ յորմ գրեալ տե֊
,, սանէր զա̅մ զայն երևոյթ (զհանդէս թ̅ր̅ին և որոց
,, ը̅ Նիմա), այնպէս անվեհեր կատարէր զա̅մ այրն առա֊
,, քինի․ վ̅ս զի դաստիարակեալ էր յա̅ծային վ̅դպու֊
,, թե̅ց, եթէ ստուէր և երազ և քան զսոսին չնչին են
,, ա̅մ իրք Տիս ||․ եՆ ։

Ապա յետ բազմօք ը̅լյնելոյ զարիական համարձակու֊
թե̅ն սբ̅յն՝ այսպէս անցանէ 'ի հանդէս նահատակութե̅
ն̅ր․ * Հանդերձ այսորիւք և այլ ինչ ոչ նուաղ քան
◆ զայսոսիկ ուսոյց գեղեցիկ, եթէ իւրաքանչիւր զիւրն
◆ առնել պարտի, թէպէտև ոչ ինչ շահ յեղելոյն ընկա֊
◆ լեալ լիցի․ վ̅ս զի և ոչ շահեցաւ ինչ նա 'ի համար֊
◆ ձակութե̅ն յօգուտ թագաւորին, այլ զա̅մ զիւրն ելից,
◆ և պակասեցոյց և ոչինչ․ իսկ ախտացեալն առ իւրոյ
◆ անշահութե̅ն 'ի գերև եհան զճարտարութ̅ի արհես֊
◆ տաւորին, ցասմամբ մեծաւ զգեղն 'ի վերայ անտի 'ի
◆ բաց տարեալ ։ Զի ո̅պ թէ չէր բաւական յամպարշ֊
◆ տութ̅ին մարդասպանութե̅ն և անպատկառ գիժեցու̅մն 'ի
◆ տաճարին ա̅յ, յաւել 'ի սպանութ̅ի սպանութ̅ի այլ․․․․
◆ Առաջքն ողորմագոյն էր առաջինն (սպանութ̅մն) ման֊
◆ կան քան զերկրորդն, իսկ երկրորդս ապիրատագոյն
◆ քան զառաջինն, երանելւոյն ասեմ բաբեղայ․․․․
◆ ը̅դ̅էմ քահանայու̅ն կքբեալ․ և զո̅ն երկաթով կա֊
◆ պեալ, և 'ի բանտ արկեալ․․․․․ իսկ երանելին բան֊
◆ տարգելեալ խնդայր ը̅ կապանսն, այլ ցաւ էր նմա

ընդ

> է՟ կորուստ կապողին • • • • • Բայց չուառականն այն զսբ՟ն 'ի բանտէն հանեալ՝ 'ի մահ տանել հրամայեաց զկապեալն • • • Արդ հանդերձեալ երանելին գալ 'ի զենումն , հանդերձ երկաթովն զմարմինն թաղել պատուիրեաց , յայտ արարեալ՝ եթէ կարծեցեալքն 'ի նախատինս լինել , յորժամ վասն ք՟ի եղանին այդոքիկ • պատիւք են և պայծառութիք || ։

Յետ այսորիկ երկրորդէ զքանչելիս տապանի սբ՟յն 'ի փոխադրելն 'ի դափնէս , ո՟ր զխափանումն պատգամախօսութ՟եց դիւաց են ։ Եւ թէպէտ ինչ ոչ յիշէ աստ զերից մանկանց զաշակերտաց սբ՟յն , զի ոչ է նպատակ նր՟ զպատմութի վկայութեն գրել , այլ զթագաւորս խրատել և զհեթանոսս յանդիմանել , բայց 'ի սկիզբն յաջորդ ճառին՝ որ 'ի սբ՟ վկայսն յուբենտինոս և մաքսիմինոս նահատակեալսն առ յուլիանոսիւ , այսպէս յայտնաբարբառ քարոզէ բերանն ոսկի • * Երանելին բաբեղաս

> փոքր մի յառաջ (կամ ը՟ առաւօտն) զմեզ աստանօր հանդերձ մանկամբք երիւք ժողովեաց • այսօր զինուորացն սբ՟ց զոյգ՝ զք՟ի զինուորութն 'ի ճակատ եհան • երբեմն կառք վկայից (քառաձի), այժմ զոյգք վկայից • այլ և այլ հասակն , այլ մի հաւատքն • պէսպէս մըրցանքն , այլ նոյն արութի քաջութե • նո՟ք հինք ը՟ ժամանակին , սոքա նորք և թարմք • այսպիսի է եկեղեցւոյ գանձն , զնորս և զհինս ունելով մարգարիտս • այլ մի ամենեցուն գեղեցկութի || • և որ 'ի կարգին ։

Տեսաք աւադիկ , զի ոսկեբերանն ամ՟ ձևով բանից իւրոց միաձայնի ը՟ վկայաբանութեանս , յաւելուածով ևեթ միոյ բանի՝ որ յաղագս սպանութե թագաւորական մանկան միոյ յանիրաւի 'ի թագաւորէն • որ ոչ ը՟դէմ ելանէ մեզ , այլ բարւոք միաբանի ։ Տեսաք և զայն , զի ոսկեբերանն միաբանութ՟ վկայաբանութեանս ուղղագրէ զեւսեբիոս՝ որ զբաբեղաս 'ի բանտի վախճանեալ ադնէր ։ Բայց տակաւին ոչ գտաք զանուն թագաւորին ստոյգ , որ է մեր խնդրելին ։ Եթէ ը՟ այլոց զննեսցուք զգիրս եւսեբիոսի՝ համեմատութ՟ բանից ոսկեբերանի , թերևս ոչ դեկոս և ոչ նումերիանոս է ասելի , այլ փիլիպպոս • զի այսպէս գրէ զնմանէ եւսեբի • պատմ • Եկեղ • Զ • 33 • բաժ յն ։

* Վ՟ն փիլիպպոսի կայսեր • (զորմէ այլուր ասաց՝ թէ սպան զգորդիանոս) ։

> Իսկ յետ վեց ամօք ողջոյն վճարելոյ գորդիանոսի զհռոմայեցւոցն իշխանութի , փիլիպպոս հանդերձ որդւովն փիլիպպոսիւ զիշխանու-

«թեն յաջորդէ ։ Զամանէ աւանդի բան, թէ քրիստոնեայ գոլով, յաւուր վերջնոյ ամենագիշեր տքնութե զատկի՝ հաղորդ լինել կամեցաւ եկեղեցւոյն աղօթից բազմութե. և ոչ թողացուցեն յառաջնորդէ ժամանակին մտանել՝ յառաջ, մինչ չև լիցէ խոստովանեալ, և մկրտեալ զանձն ը̄ այնոսիկ, որք 'ի յանցաւորութեց սահմանի էին, և յապաշխարութե կարգի կային. ապա թէ ոչ՝ անմարթ գոլ այդմ լինել երբէք, եթէ ոչ զայդ առնիցէ, վ̄ս բազում վնասուց առ 'ի նմանէ գործեցելոց ։ Եւ հնազանդեալ յօժարութե ասի, զանկեղծ և զբարեպաշտ առ ա̄ծ երկիւղ առաջադրութե գործովք ցուցեալ || ։

Ապաքէն ը̄ խմուծս կարծեաց չէք և ոչ մի հանդիտութի այսր դիպուածոյ ը̄ վկայաբանութեւս և ը̄ բանից ոսկեբերանի, այլ՝ գեղեցիկ նմանութի ը̄ անցից մեծին թէոդոսի առ ամբրոսիոսիւ, որ եղև զկնի աւուրց եւսեբիոսի. վ̄ս եթէ առոյգ լիցէ եւսեբեան աւանդութին՝ զոր 'ի լրոյ պատմէ առանց հաստատութե, և առանց յիշելոյ զանուն առաջնորդի և քաղաքի, որպէս ամ̄է առոյգ է անցքն թէոդոսի և ամբրոսիոսի, ասելի է՝ թէ դարձեալ է և այլ ոք եպ̄ս քաջ հանդոյն ամբրոսիոսի և բաբեղայ. և այլ ոք թագաւոր երկիւղած և հնազանդ հանդոյն թէոդոսի ։ Բայց ոչ ինչ ունի յարմարութի բանս ը̄ թագաւորին՝ որ սպան զբաբեղաս վ̄ս այդպիսի համարձակութե. և ա՛յն զի կռապաշտ էր թագաւորն՝ ոչ միայն ը̄ վկայաբանից, այլև ը̄ եւսեբի՝ 'ի խօսելն զնահատակութե բաբեղայ առ դեկոսիւ ։ Եւ զնոյն իմանամք մեք նաև յընթացս բանից ոսկեբերանին. զի թէպէտև հռետորական ձևով ձևացուցանէ զթագաւորն իբրև տեղեակ ճանապարհին ճշմարտութե, կամ իբրև ոչխար անտառցեալ, կամ ոք աշակերտ անլուր բանից բաբեղայ, բայց տակաւին հեթանոս ենթադրէ զնա, և արդեամբք ցուցանէ հանդոյն վկայաբանութեւս գայլ լինել յափշտակիչ. միով բանիւ, դէմ ը̄դէմ եւսեբեան բանից ասէ ոսկեբերանն, թէ ոչ հնազանդեցաւ առաջնորդին, և անամօթաբար սպան զյանդիմանիչ իւր զս̄րբն բաբեղաս ։

Եւ սակայն տեսանեմք, զի աղեքսանդրեան ժմկագրութեն իբրև 'ի վկայութե ղևոնդի անտիոքացւոյ ժմկակցին եւսեբի՝ զդիպուածն փիլիպպոսի համարի լինել առ բաբեղաս հայրապետիւ. և 'ի նոյն հակամիտեցին կարծիս յոլովք ը̄ ենրիկոսի վաղեսիոսի՝ որ է քննիչ եւ-

եւսեբեան, և ը̅ մինափոկոնի բեւանարդոսի՝ որ ոսկեբերանին եղև քննիչ յետին ։ Զոր եթէ կամիցիմք և մեք ը̅ունել, հարկիմք ասել, թէ ուրեմն փիլիպպոս ոչ անսաց բաբեղայ հայրապետի, այլ՝ անսաստելապան զնա ։ ուրեմն բաբեղաս ոչ նահատակեցաւ առ դեկոսիւ, ոպ̅ կամին քննիչք ը̅ եւսեբի, այլ՝ առ նախընթացիւ նր̅ փիլիպպոսիւ ։ զայս եդեալ՝ դիւրին է մեզ այնուհետև պահել զվկայաբանութին մեր ամ̅ սարօք՝ լոկ փոխելով զանուն նումերիանոսի 'ի փիլիպպոս ։ և դուցէ ը̅ սովորութե̅ բազմանուն գոլոյ կայսերաց, կամ փիլիպպոս մականուանէր նումերիանոս, և կամ նումերիանոս՝ փիլիպպոս ։ և կամ մին յերկուց ունէր զմականուն դեկոս ։ և այնպէս եղև շփոթութին անուանց, որ ոչ սատէ զպատմութին իրական ։

Ահա մերս այս է, զինչ և ասիցեն քննիչք ։ յորս եթէ տեսանէաք զայլ լուծումն տարակուսանաց լաւագոյն, մտադիւր աշակերտեաք ։ Այլ թէ ոչ՝ կարի կշտամբութե̅ ներքոյ արկանէ զանձն յայս խնդիր երևելի այրն մինափոկոն, որ փոխանակ լուծանելոյ զկնճիռն՝ խզէ և փեռեկտէ ։ ոչ բոլլանդեան հարազատ վկայաբանութե̅ հաւանի, և ոչ յոսկեբերանէն ակնածէ, մինչև արձանագրել 'ի լուսանցս բանից նր̅ ։ հատ ։ բ̅ ։ երես ։ 542 ։ * պատմութին կայսեր ուրումն առասպելայօդ || ։ այլ յենու ամրութբ̅ յանհաստատ աւանդութեն՝ զոր յիշեաց եւսեբիոս զփիլիպպոսէ, և 'ի նոյն միտս հնարի ձգել զոսկեբերան ։ բայց անդրէն թողու զնա ։ զի չընդունի՝ թէ թագաւորն յանդիմանեալ 'ի բաբեղայ՝ իցէ նահատակիչ նորա ։ այլ յաջորդ նր̅ դեկոս ը̅ եւսեբի ։ Եւ անդրէն զառածանի 'ի բանս՝ երկբայական խոստովանելով զաւանդութին եւսեբեան ։ և այսպէս զամ̅ն բանս խաթարեալ՝ կարծէ թէ լաւ ինչ արար քան զամ̅ քննիչս ։ Այլ այս է անձնդիւրութին ևեթ՝ զդժուարինս ասել ։ և ոչ է ճշմարտախնդրութիւն, յոր բերի քննութին ։

'Ի վախճանի ձեռնարկեմք 'ի հաստատութին վկայաբանութե̅ս, այսպէս ։ Եթէ վկայաբան մեր է ժամանակակից գրիչ 'ի դիւանական յիշատակագրաց, ոպ̅ յայտ առնէ եղանակ գրչութե̅ն անպատրուակ, 'ի նոյն վերածելի են ուղղագրութբ̅ և բանք եւսեբի, և այլ որ և է գրչի ։ Ապա եթէ յետոյ է շարագրութիս քան զաւուրս եւսեբեայ, ևս և ոսկեբերանի, տակաւին հին գոլով քան զայլ ամ̅ մատենագիրս՝ յինքն վերածէ իրաւամբք զբանս եւսեբի և ոսկեբերանի միանգամայն. զի ինքն ոչ հարևանցի խօսեցաւ իբրև զնա իբրու ՚ի լրոյ համբաւոյ ևեթ, այլ ընդ լրոյ ունէր ՚ի ձեռին և զգիր վկայաբանական՝ ընդ որում յարմարէր զայլ աւանդս. մինչ զի զոր ասէ ոսկեբերան՝ թէ ծերագունից քան զինքն ա՛նկ է ճառել զնահատակուէ բաբելայ, աներկբայ իմանամք՝ թէ արդեամբք ևս կատարեցաւ. զի ճառեցին և՛ գրով և բանիւ. և ահա մի ՚ի նոցանէ է կամ վկայաբանս, և կմ հեղինակն՝ որում զհետ չոգաւ:

Զթեթև տարբերութիւնս վկայագրաց ոչ հարկ համարեցաք նշանակել, զի չկայր ինչ արժանի տեղեկուէ. զայս փորձիւ տեսաք, զի հայերէն թարգմանութի մեր՝ որ ՚ի ճառընտրի, է իբրև կեդրոն միութե զանազան լատին թարգմանութեց, և զգուշաւոր քան զիւրաքանչիւրսն առանձին առեալ:

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՏՕՆԻ

Սբ՟յն Գրիգորի Նազիանզացւոյ.

Ուր զարմանալ արժան էր, եւ միանգամ գտանեցի 'ի տօնացուցի ազգիս յիշատակ սբ՟յս, կրկին եւս զարմանամք՝ զի յօրինակս ինչ տօնացուցից եւ ճաշոցաց ո՛չ միանգամ, այլ երկիցս է եդեալ: Այլ զի որպէս յայտ է յընթացից կարգաւորութե՟ տօնացուցին մերոյ անդստին 'ի սբ՟ց թարգմանչաց, յետ աւուրց նոցա ո՛չ այլ ոք 'ի սբ՟ց յաւելեալ 'ի կարգս տօնելեաց, բայց միայն որ յազգի մերում, կամ 'ի կողմանս աշխարհին Հայոց նախապատուեցան, եւ կամ եղեն անուանիք սրբութե՟ 'ի մէջ ազգիս մինչեւ ցաւուրս շնորհալւոյն ներսէսի. Իսկ այլք 'ի սբ՟ց հեռաւոր աշխարհաց՝ 'ի կարգս յիշատակելեաց հասին ըստ յայսմաւուրաց: Նայեցուք՝ թէ ասացին բանիւ մեծանուն սրբութե՟ եւ նշանագործութե՟ յաւելեալ իցէ 'ի կարգ տօնելի սբ՟ց յետինս ժամանակս քան զթարգմանիչսն՝ սբ՟ Գրիգոր Նազիանզացի, որ 'ի սինկելեայ կղզւոյն յեօթներորդ դարու, սեպհական տեղի ն՟ր է 'ի միջոցի յիշատակաց՝ ըստ որում վախճանեալ յամսեանն նոյեմբերի. որպէս եւ դնեն անդ ամ՟ օրինակք տօնացուցից, ըստ կղեմայ հռովմայ հայրապետին, եւ ըստ բագարատայ տառամենոյ եպիսկոպոսի երբեմն գաւառակացի: Իսկ երկրորդելն աստանօր զանուն ն՟ր ըստ օրինակաց ինչ՝ է 'ի շփոթութե՟ իմեմնէ. եւ որպէս կարծեմ 'ի հայելոյ 'ի կարգ հին ճառընտրաց՝ որ ըստ այբուբենից. զի որովհետեւ զինի անուան Բարսեղայ, եւ բագարատայ գայ կարգ անուանս Գրիգոր, առընթեր երկուց անուանց եւս կրկնեալ են ոմանք 'ի գրչաց եւ զանուն Գրիգորի Նազիանզացւոյ.

ԿԱՐԳՔ ԵՒ ԿԱՏԱՐՈՒՄՆ

Մեծին Երեմիայ Մարգարէի :

Հ. Յ. Լ. Տայէս . I : Բոլլանդեանք , անդ : Հարք և քննիչք սբ̃ գրոց . Լա̃ : (1)

ՅՈՐՈՎ ԱՅ՛ՆԷ Ը՛ՆՏրեալ և՝ սրբեալ՝ հաւատարիմ ծառայ ա̃ն բազմավաստակ , սբ̃ մարգարէն Երեմիաս (որ թարգմանի բարձրութի̃ւն ա̃յ ,) էր յերկրէն բենիամենի յանաթովթ քաղաքէ քահանայից , որ էին երեք մղոնաւ հեռի յե̃րմէ , 'ի քահանայական ազգէ 'ի ցեղէն ղեւեայ , որդի քեղկեայ քահանայի · որ ը̃ բազմաց կարծի լինել քեղկիաս մեծ քահանայապետ՝ գտիչ գրոցն օրինաց յաւուրս յովսիայ արքայի յուդայ (2) : Եւ եղև երեմիա նշանաւոր անբիծ և անարատ վարուք անմեղութե̃ , և կուսակրօն մաքրութե̃բ , և քահանայական պատուո՛վ , և մարգարէական տեսութե̃բ՝ առաքելութե̃բ հանդերձ , ը̃ անընդմիջական առաքմամբ յա̃յ 'ի քարոզութի̃ 'ի մանկութէ̃ , և բազմաչարչար խոստովանութե̃բ և վկայական հանդիսի՛ :

Ըստ հասարակ իմացուածոյ վի̃պաց՝ կոչեցաւ

ցաւ 'ի մարգարէութ՟ն իբրև 'ի հնգետասան ամաց հասակի, և մարգարէացաւ նախ 'ի հրէաստան զամս խ՟ն, սկսեալ յերեքտասաներորդ ամէ յովսիայ արքայի և յաւուրս չորից յաջորդաց ն՟ր, մինչև ցառումն եր՟մի 'ի քաղդեացւոց ։ Եւ վ՟ն բանին ա՟յ, զոր աներկիւղ և անաչառ խօսէր ը՟ն մեծի և ը՟ն փոքու, բազմաց տարաւ հալածանաց և վշտաց․ և չորիցս և հնգիցս բանտարգել եղև երանելին յայլևայլ արգելանս և 'ի գուբ մահապարտաց․ ը՟ն որում գրեալ է 'ի գիրս նորա․ ուր Նախ՝ (Ի․ 2․) ասի․ * Եհար պասքուր (որդի եմմերեայ քահանայ՝ հրամանատար և իշխան տաճարին) զերեմիա մարգարէ, և արգել զնա 'ի վերնադրանն՝ որ է 'ի դրանն բենիամինի, 'ի վերնատանն՝ որ էր 'ի տան տ՟ն ‖ ։ Երկրորդ՝ (ԼԲ․ 2) ասի․ * Եւ յայնժամ զօր արքային բաբելացւոց պաշարեաց զեր՟մ․ և երեմիա մարգարէն կայր 'ի կալանս 'ի սրահի բանտին՝ որ էր յապարանս թագաւորին յուդայ․ յոր արգելն զնա արքայ սեդեկիա, և ասէ․ ը՟էր դու մարգարէանաս և ասես, այսպէս ասէ տ՟ր ‖, և որ 'ի կարգին ։ Երրորդ՝ (ԼԷ․ 14) ասի ։ * Եւ զայրացան իշխանքն 'ի վ՟ր երեմիայի․ գանհարին, և եդուն զնա 'ի տուն բանտի՝ յապարանս յովնաթանու դպրապետի … եկն երեմիա 'ի տուն գբոյն յայերինովթն․ և նստաւ անդ երեմիա զաւուրս բազումս ։ Առաքեաց արքայ սեդեկիա, և կոչեաց զնա … (և յետ հարցանելոյ առանձինն զպատգամ տ՟ն՝

դրձլ) հրամանն՝ ետ արքայ Սեդեկիա, և արկին զնա 'ի տուն բանտի. և տային նմա աւուրն նկանակ մի հաց 'ի հացարարացն. մինչև հատաւ ամենևին հաց 'ի քաղաքէն. և նստաւ Երեմիա 'ի սրահի բանտին ||: Զորրորդ՝ (ԼԷ. 6.) ասի. * Եւ առին զԵրեմիա, և ընկեցին զնա 'ի գուբն Մելքեայ որդւոյ Թագաւորին (կամ որդւոյ ամելեքայ), որ էր 'ի սրահի բանտին. և իջուցին զԵրեմիա պարանօք 'ի գուբն. և 'ի գբի անդ ջուր ոչ էր, այլ լոկ տիղմ. և կայր Երեմիա 'ի տղմին ||. մինչև եհան զնա անտի աբդիմելէք եթէովպացի՝ այր ներքինի՝ երկիւղած յայ. և ապա միւսանգամ նստաւ Երեմիա 'ի սրահի բանտին մինչև ցառումն Եէմի 'ի քաղդէացւոց: Յայնժամ կալան քաղդէացիք և զԵրեմիա, և կապեցին ձեռակապօք. այլ ած էարկ գութ 'ի սիրտ նաբուգոդոնոսորայ արքային բաբելացւոց, և ետ արձակել զԵրեմիա, և եթող զնա յԵէմ. ուր ողբս ցաւագինս առնոյր նա 'ի վր բեկման ժողովրդեան իւրոյ՝ վասն ոչ լսելոյ նց ձայնի տն Թագաւորաւն և իշխանօքն հանդերձ: Եւ եղև 'ի փախչել մնացորդաց արանց յուդայ յերեսաց քաղդէացւոց յեգիպտոս՝ բռնի ընդ իւրեանս առեալ տարան և զԵրեմիա: Անդ 'ի տափնաս, այն է քաղաք Թգրութե եգիպտացւոց 'ի հնումն (ուր առնէր մովսէս նշանս յանդիման փարաւոնի), մարգարէացաւ Երեմիա այլ ևս ամս չորս. մինչև լցան չորս ամք գերութե յուդայ. և 'ի յաջորդ ամի ըստ գուշակելոյ

երե.

երեմիայ՝ սպանաւ Վափրէս փարաւոն արքայ եգիպտացւոց 'ի Նաբուգոդոնոսորայ ։

Արդ՝ թողեալ զհրեական աւանդ մտացածին, թէ երեմիա կենդանւոյն փոխեալ իցէ, և դեռ կայցէ կենդանի՝ գալ ընդ եղիայի, հաստատութ՟բ աւանդեն մ՟ր հարք, թէ յորժամ բանիւ՛ տ՟ն սպառնայր մարգարէն երեմիա հարուածս եբրայեցւոց և եգիպտացւոց, յարեան 'ի վ՟ր նորա արք անօրէնք, և քարկոծ արարին զնա ․ և այնպէս վկայական մահուամբ կատարեցաւ 'ի տափնաս 'ի հասակի իբր եօթնասուն ամաց ․ և անդ թաղեցաւ 'ի տափնաս եգիպտոսի (3) ։ Իսկ ը՟ գրելոյ վկայաբանից՝ 'ի պատուի էր յոյժ գերեզման նորա առ եգիպտացիս ․ զի գիտէին զնա այր մարգարէ, և աղօթիւք նորա 'ի կենդանուե՟ նորին զերծեալ էին 'ի կոկորդիլոսաց մարդակերաց, և 'ի վիշապ օձից ․ և յետ մահու նո՟ր դիմէին 'ի գերեզման նո՟ր վ՟ս գտանելոյ զբժշկութի՟ առաւել 'ի հարուածոյ թունաւոր կենդանեաց ․ մինչ զի և յետ բարձման ոսկերաց մարգարէին, 'ի տապանէ նո՟ր առնուին հող հաւատացեալք 'ի փարատումն պէսպէս ցաւոց ։ Իսկ մարմինն բարձեալ էր 'ի վաղ ժամանակաց ․ քանզի լուեալ ասեն աղեքսանդրի մակեդոնացւոյ զսքանչելիս՝ որ լինէին 'ի գերեզմանէ մարգարէին ա՟յ 'ի տափնաս, ետ հանել զոսկերս նո՟ր և տանել յիւրակերտ քաղաք յաղեքսանդրիա եգիպտացւոց, և կառոյց շիրիմ փառաւոր 'ի վ՟ր նորա 'ի տեղին կոչեցեալ տետրապիւղոն, այս է չորեքդուռն․ ուր և բազում նպաստ լինէր նեղելոցն ՚ի պէսպէս ախտից յաւուրս քրիստոնէութե̃ ։

Նոյնպէս և յեէ̃մ ՚ի տեղի գրոյն՝ յոր արկա̃ երեմիա, շինեցաւ ասեն դշխոյն հեղինէ ուխտատեղի մեծաշէն․ կան և այլ տեղիք ուխտի ՚ի պաղեստին՝ ՚ի յիշատակ ՚սբ մարգարէից․ Թող զեկեղեցիս և զմարգարէարանս կմ̃ զվկայարանս կառուցեալս յանուն նր̃ ՚ի զանազան տեղիս․ յորս երևելի է և հոյակապ տաճար սբ̃յն երեմիայ՝ որ ՚ի վենետիկ ։

Յիշատակաց արժանի է այն՝ որ գրի ՚ի գիրս մակաբայեցւոց․ (Բ̃․ Մակ․ ԺԵ̃․ 13), թէ յուդա մակաբէ՝ յորժամ ետես ՚ի տեսլեան զոնիա քահանայապետ զայրն սքանչելի, ը̃ նմին ապա դարձեալ տեսանէր զայլ ոմն հրաշազարդ, զծերութի̃ փառաւորութե̃ սքանչելի և կարի վայելչութի̃ն, որ շուրջ զնովաւ բակ առեալ ունէր ։ Եւ ՚ի զարմանալ մակաբեայ՝ թէ ո՞ իցէ նա, ասէ ոնիա․ եղբայրասէրս այս սա՛ է՝ որ բազում աղօթս անպակաս յաճախ մատուցանէ ժղ̃յ՝ երեմիա մարգարէ ա̃յ ։ Եւ ձգէր զաջ ձեռն իւր երեմիա, և տայր ձեռն ՚ի ձեռն յուդա սուսեր մի ոսկեհանդերձ․ և ը̃ տալն ասէր այսպէս․ առ զսուսերդ զայդ ՚սբ պարգև ՚ի ա̃ծյ, զի դովաւ սատակեսցես զթշնամիս ժղ̃ի ։ Աստի ունիմք իմանալ, եթէ ՚սրբ՝ որչափ յաստիս եղբայրասէր գտան ը̃ մ̃ծխութե̃, ևս առաւել յետ ելից յաստեացս ջանան օգնել մեզ բարեխօսութե̃ իւրեանց․ և եթէ ՚ի հնումն

այս

այսպ՟ս՝ 'ի գոգն աբրահամու հանգուցեալք , քանի՞ոն այժմ՝ 'ի հանգչիլ ն՟ց յերկնից արքայուե՟ յօթևանս հօրն երկնաւորի ։

Երեմիա մարգարէն գրեաց զգիրս մարգարէուե՟ իւրոյ՝ կէս մի անձամբ , և կէս մի նոտարութ՟բ բարուքայ աշակերտին իւրոյ . որ և զօրութ՟բ սօնելի Ճանաչի ը՟ վ՟պին , ոպ՟ և գիրք բարուքայ յանուն երեմիայի կարգացեալ լինի յեկեղեցւոջ ։ Ըստ հերոնիմոսի , գիրք երեմիայ որչափ ը՟ բառիցն պարզ երևի և դիւրիմաց , այնչափ խորին է ը՟ իմաստիցն գերապանծութեան ։ Ա՛ն որ նմա ընծայեն զգրութ՟ի քանի մի գրոց Թագաւորաց , և կ՟մ զբոլորն . ոպ՟ և սաղմոսք ինչ զնորա անուն կրեն ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Որ օրինակ տօնացոյցք և վկայագիրք ամ՟ ազգաց գնեն զերեմիա մարգարէն յառաջին աւուր մայիսի , նոյնպէս էր և 'ի մեզ յառաջագոյն . ըստ որոյ հին Ճաշոցք առ հասարակ 'ի միջոցի յինանց՝ զհին Տօնամարան կիրակէին ունին այսպէս . * Մայիսի ամսոյ , որ օր ,, ա . Երեմիայի մարգարէի յանաթովթ || ։ Իսկ տօնացոյցն՝ որ 'ի միջոցի յինանց չունի զատօն սրբ՟ց , վերածեալ է զայն յայս միջոց ամառայնոյ . ոպ՟ և յառաջ և յետոյ 'ի կարգի սրբ՟ց նոր օրինաց սփռեալ են կամաւ հին նահապետք և մարգարէք . որովհետև չեն յայտնի աւուրք կատարման ն՟ց , այլ վ՟ն իրիք պատշաճողութե՟ կ՟մ յաւուր գիւտի նշխարացն ոմանց ոմանց 'ի նոցանէ սահմանեալ է օր տօնի ն՟ց յայսմ կ՟մ յայնմ վայրի ։ Ոմանք 'ի լատինս վկայաբանից յարեն ը՟ երեմիայ և զբարուք . զոր յոյնք ուրոյն տօնեն 'ի սեպտ . 28 . և յայն օր առաւել հպաւորի այժմ միջոցս այս տօնելոյ մեր զերեմիա , ը՟ որում

զօ

զօրութ՟ իմանամք և զբարուք․ զոր և ներգործութ՟ գնէ Հ․ 'ի մայիսի․ ա․ այսպէս․ * Տօն է երեմիայ մարգարէին, և աշակերտաց նորին՝ բարուքայ և աբիմելէքայ || ։ Այս է՟ առօրական օրինակաց․ բայց ո՟ր լինել զերեմիաս ևեթ յիշէ անդ․ և այն՝ երկու և երեք տողիւք բովանդակեալ զպատմութ՟ն․ յայտ է թէ ընդուշացեալ յաւելորդ բանից այլ օրինակագրաց ըստ անվաւերական աւանդից հրէից 'ի գիրսն որ կոչին մնացորդք երեմիայի ։ Վ՟յ այսպէս գնի 'ի միում հին օրինակի Հ․ * Մայիսի․ ա․ Յիշատակ մահուան երեմիայ մարգարէին, 'ի մնացորդաց || ։

Յայս հայի՝ զոր գրէ կոռնելիոս ալափիտէ մեկնիչ 'ի մուտս ԺԵ՟․ Երեմ․ * 'ի վատիկանեան գրատան տեսի ,, զգիրս մնացորդաց երեմիայ 'ի յոյն բարբառ․ ուր ,, կային թուղթք բարուքայ և աբդիմելէքայ եթէովպացւոյ առ երեմիա, և փոխադարձ պ՟խնիք երեմիայ ,, առ նոսա ։ Բայց քանզի զայսոսիկ թուղթս ոչ յիշեն ,, նախնիք, և ոչ իսկ վատիկանեան ձեռագիրն կոչէ 'ի ,, վկայութ՟ զեպիփան, զդորոթէոս, կ՟մ զայլ ոք 'ի հնոց ,, անտի, որոյ զայդ մնացորդս աւանդեալ իցէ յետնոց ,, կ՟մ հաւանեալ, նմին իրի զանց առնել զնոքօք ընտրեցի, քան եթէ զանստոյգս ը՟ ստոյգս խառնել || ։

(2) Զքեղկիաս քահանայապետ հայր լինել ասէ երեմիայ մարգարէի՝ ոչ միայն մխիթար գօշ, կամ մեկնիչն երեմիայի հայերէն, այլև կղեմէս աղեքսանդրացի, և հերոնիմոս՝ կ՟մ հեղինակն եբրայական խնդրոց 'ի Դ․ Թագ․ և 'ի յետնոց պօղոս բուրգացի, և մալդոնատոս՝ ը՟ ռաբբիս հրէից․ և ըստ այսմ երեմիա լինի եղբայր հաւուն եզրի․ քանզի եզրաս էր որդի սարայեայ որդւոյ ազարիայ որդւոյ քեղկեայ ։ Իսկ թէ ոմանք 'ի մեկնչաց չհաւանին այդմ, ոչ տան պատճառ բռնադատիչ, այլ լոկ պատճառանս իմն լուծանելիս ։

(3) Զվկայական կատարումն երեմիայ մարգարէի քարկոծմամբ՝ միաբան հաստատեն տերտուղիանոս, դորոթէոս, եպիփան, հերոնիմոս, իսիդորոս, և այլ ևս հարք և մեկնիչք․ որք 'ի վ՟ր երեմիայ իմանան զբանն պօղոսի՝ * քարկոծեցան ||, ա՟յ և զյաջորդն * սղոցեցան ||, 'ի վ՟ր եսայեայ ։ Միայն վիկտորինոս վկայն պէտ երթեւ հրէական աւանդից՝ համարի, թէ երեմիա կայ կենդանի 'ի դրախտի ը՟ եղիայի, հանդերձեալ գալ ը՟ նմին 'ի քարոզել յաւուրս նեռին և մաքառիլ ը՟ նմա ։ Զնոյն կարծիս յիշատակէ և սբ՟ն հիլարիոս 'ի կանոնն․ Ի․ 'ի մատթ․

այլովքն հանդերձ ։ Այսմ կարծեաց հիմն առեալ եղև ՚ի բանից անտի Երեմ. ա. 5. * մարգարէ ՚ի հեթանոսս ,, եդի զքեզ ||. մինչ զի և առ ք̃րիւ դպիրք որպ̃ զեղիա յիշէին լինել կենդանի, նոյնպէս և զերեմիա. նմին իրի և զյո̃ ոմանք ՚ի հրէից կարծէին. թէ երեմիա իցէ, և այլք՝ թէ եղիա. որպ̃ս պատմի ՚ի մատթ. ժզ. 14 ։ Եւ ը̃ այսմ յոսիպպոս որդի գորիոնի ՚ի ա̃ գիրս հրէական պատմութե̃ գրէ ը̃ թալմուտեանց, թէ յորժամ երեմիա մարգարէն ծածկեաց զտապանակն ա̃յ՝ որպ̃ պատմէ սր̃ գիրն ՚ի Բ̃. մակ. Բ̃. ասացեալ լիցի և զայս ինչ. * Ո՛չ ,, գիտասցէ մարդ, և ոչ ծանիցի տեղին, մինչև եկից ես ,, և եղիա մարգարէ. և յայնժամ դիցուք անդրէն ըզտապանակն ՚ի տեղի իւր ՚ի սրբութիւն սր̃ց ||։ Այլ սակայն միաձայն աւանդութի̃ հարց սր̃ց է միայն զգալստեանն ենովքայ և եղիայի. յոր հայի և բանն սիրաքայ. խդ̃. 16. և խը̃. 10 ։ զնոյն իմանամք և ՚ի բանից յայտնութե̃ն յովհաննու. ժա̃. 3 = 13 ։

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՏՕՆԻ

Սր̃յն Պիոնի քահանայի ։

Ընդպատճառաւ կրկնի աստանօր անուն սր̃յս բաց եղ̃ն օրէնաւորաց տօնացուցից, շփոթելով զաբդոնսեն՝ որ աստ, ընդ աբդաւայ՝ որ չէին առաջաւորաց. ուր է սեպհական տօն և պիոնի քահանայի. որպէս նշանակեցաւ անդանօր ՚ի ծանօթութիւնս. ուր և գտանես, զի թէպէտև ոմանք երկու վկայս պիոն անուն կամեցան որոշել, բայց առանց հիման և վկայութե̃ ։

Տես հատ. Ա. երես. 181 ։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սր̃յն Ստեփաննոսի ուլնեցւոյ, և որոց ը̃ն նմա։

Հ. օգոստ. 18։ Դաւընդ. Բ. երես.
ձկ̃ե = ձկ̃զ։ (1)

ՆԱԽԱՎԿԱՅԻՆ ՄԵծի անուանակիր, և նորին քաջ նահատակութ̃ե հանդիսի հետևօղ, երանելին Ստեփաննոս՝ Թորգոմական տանն պսակ, էր յաշխարհէ փոքուն հայոց, յաւուրս հալածանաց յուլիանոսի ուրացողի. և եղև ծագումն սր̃յն ը̃ն այսմ օրինակի։ Հայրն նորա ղազարոս անուն՝ պատուական և մեծազգի 'ի տանէ նախարարաց կողմանցն միջագետաց, 'ի մանկութ̃է ընակեալ յանտիոք քաղաք ասորւոց՝ 'ի ծածուկ ունէր զհաւատոն որ 'ի ք̃ս. զի տակաւին յետ դարձին կոստանդիանոսի և որդւոցն կային 'ի տեղիս տեղիս հեթանոսք հալածիչք քրիստոնէից 'ի հրամանէ լիկիանոսի ամպարշտի և արքանեկաց նր̃. և ղազարոս փախստեայ գրնայր յահէ անօրինացն. մինչև յետ ժամանակաց եկեալ գաղթէր 'ի կոկիսոն քաղաքի՝

քի՝ որ 'ի փոքրն հայս ։

Նա կացեալ անդ ամս երեք բարւոք կրօնիւք՝ ամուսնացաւ յե՟րի. և հանդիպեցաւ ամուսին նո՟ր նոյնպէս քրիստոնեայ և երկիւղած յա՟յ՝ մարիամ անուն. և կէին երկոքեանն 'ի միասին բարի վարուք յաւուրս խաղաղութ՟ե եկեղեցւոյ. Թո՛ղ զհալածանս արիանոսաց առ կոստանդ. կայսերաւ ։ Նա էր մարիամ ամուլ, և ոչ լինէր նո՟ց որդեակ. և խնդրեցին յա՟յ ուխտիւք՝ պարգևել նո՟ց որդի. և 'ի ձեռն պահոց և աղօթից ետ նոցա ա՟ծ զխնդրուա՛ծս նո՟ց, և ծնաւ նո՟ց արու զաւակ ։

Իբրև եղև ութ աւուր, տարան զնա 'ի տաճար սբ՟ ածածնի. ուր մկրտեաց զնա քահանայն ա՟յ կոստանդին, և անուանեաց ստեփաննոս. զոր և 'ի տղայ տիոց դաստիարակեալ ը՟ն ձեռամբ իւրով՝ ուսուցանէր կարգօք ա՟ծպաշտութ՟ե և յուսումն գրոց յեօթն ամաց հետէ. և հանապազօր մատուցանէր պատուական քահանայն զսբ՟ պատարագն յեկեղեցւոջ անդ, և յա՟մ կիրակէի հաղորդեցուցանէր ը՟ն այլ քրիստոնեայս և զմանուկն կենարար խորհրդոյ մարմնոյ և արեանն տ՟ն ։ Նա այնպէս աճէր և զօրանայր մանուկն ստեփաննոս լի իմաստու՟բ 'ի շնորհաց սբ՟ հոգւոյն ։ Նա իբրև եղև ամաց հընգետասանից, գտաւ ա՟միէ կիրթ յա՟ծային պատուիրանս և յա՟ծաշունչ գիրս. և լի հոգւով յորդորէր զհաւատացեալս յա՟ծպաշտութ՟ի՝ բանիւ և օրինակաւ ։

Նա

Եւ եղև հիւ՛անդանալ քահանային կոստանդեայ, և կոչեցեալ առ ինքն զծառայն այ՟ զստեփաննոս՝ ասէ ցնա. ո՛րդեակ պի՛նդ կաց 'ի հաւատսդ, և քաջալերեա՛ զսակաւ հօտդ, զի մի՛ երկմտիցեն 'ի հաւատոց. մինչև տացէ ա՟ծ տեսուչ ժողովրդեան: Զայս ասէր վ՟ս խռովութ՟ե ժամանակին. զի այն ինչ հասեալ էր համբաւ թագաւորելոյ անօրինին յուլիանոսի, և կռապաշտք անդրէն գըլուխ ամբարձեալ՝ սպառնային ջնջել զքրիստոնէութ՟ի: Ապա եդեալ կոստանդեայ ըզձեռս իւր 'ի վ՟ր ստեփաննոսի՝ ասէ մարգարէական հոգւով. տ՟ր ը՟ քեզ ծառա՛յ այ՟, և ընդ հաւատացեալ հօտսդ. և դու ո՛րդեակ յետ ոչ բազում աւուրց սակաւ արամբք փախստեայ լինիցիս 'ի լեռնակողմն, և կացցես անդ աւուրս սակաւ. և մատնեսցեն զքեզ անօրինաց. և ապա նահատակեսջիր. իսկ տեղի նահատակութ՟ե ձերոյ եղիցի 'ի բժշկութ՟ի ա՟մ ախտաժետաց. և անուն քո ելցէ ը՟ ա՟մ երեսս երկրի. և քև փառաւորեսցի ա՟ծ: Զայս ասացեալ՝ աւանդեաց զոգին. յայնժամ ժողովեալ քրիստոնէից բանի՛ւ ս՟բյն ստեփաննոսի՝ ամփոփեցին ըզմարմին ս՟բյ քահանային, և եդին բազում պատուո՛վ 'ի գերեզմանի. և եղև յոյժ տրտմութ՟ի ժողովրդոցն ը՟ մեռանիլ քահանային յայնպիսի աւուրս նեղութ՟ե. բայց մխիթարէին 'ի ծառայէն այ՟ ստեփաննոսէ, և հաստատէին նովաւ 'ի հաւատս, և զօրանային 'ի տ՟ր:

Դ. Իսկ

Իսկ իբրեւ անցին աւուրք սակաւք, եղեւ հալածումն քրիստոնէից, եւ բորբոքեցաւ հըրդեհ դառնութեան մինչեւ 'ի սահմանս կոկիսոն քաղաքի, 'ի ժամանակին՝ յորում եկն յուլիանոս 'ի կեսարիա, որոյ հայրապետ էր մեծն բարսեղ․ եւ սպառնացեալ նմա եւ ժողովրդոցն՝ ասէր անօրէնն․ յորժամ դարձայց 'ի պարսից, եւ ոչ հաւանիք կամաց իմոց, չարաչար մահուամբ մեռանիցիք․ եւ առաքեաց առս հանդերձ մեծամեծօք եւ ոստիկանօք՝ խնդրել զքրիստոնէայս քաղաքի քաղաքի․ զի եթէ հաւանեսցին ասէ, եւ ուրասցին զխաչելեալն, եւ երկիրպագանիցեն աստուածոց, պատուոյ արժանի արարէք․ ապա թէ ոչ՝ 'ի սուր սուսերի մաշեսջիք․ եւ ինքն իւրով բանակաւն չու արար գնաց 'ի պարս ։ Յայնժամ մի ոմն յոստիկանաց անտի նորա՝ սոկրատէս բդեաշխ կոչեցեալ, եկն եհաս 'ի կոկիսոն քաղաք հայոց, մրմռալով իբրեւ զառիւծ ընդդէմ քրիստոնէից, եւ սեւադէմ կերպարանս դաժանութեան յանձին բերելով, մինչեւ անկաւ ահ եւ դողումն 'ի սիրտս ամենեցուն ։ Եւ մինչչեւ էր նորա ձեռն մխեալ յոք, իմացեալ սրբոյն ստեփաննոսի զերկմտութիւն քրիստոնէիցն եւ զդողումն յահէ դատաւորին, ժողովեաց 'ի մի վայր զտուն հօր իւրոյ եւ զայլս 'ի ծանօթից․ եւ ասէ ցնոսա․ Եղբարք մի թերահաւատեսցուք, եւ մի զանգիտեսցուք յանօրէն դատաւորէն․ զի աստուած փրկեսցէ զմեզ 'ի ձեռաց նորա, որպէս փրկեաց զառաջին նահատակսն 'ի ձեռաց անօրինաց, եւ պսակեաց անմահականն փառօք ։ Արդ՝ յարուցեալ եղբարք ելցո՛ւք ՚ի քաղաքէս , և ընթացցո՛ւք զհետ ք՟ի , որպէս և զխո՛րդ առաջնորդեսցէ մեզ . զի ամենեքեան ո՛չ էք կատարեալք . քանզի են ՚ի ձեզ՝ որ դեռ տղայք են . դուցէ պատիր բանիւք հաւանեցուսցէ զոք ՚ի ձէնջ պաշտօնեայ չարին , ո՟ք յառաջինսն եղև , և փարատեսցէ զհօտս ընտիր ։ Եւ ն՟ք աւեն . տ՟ր է մեր յոյս , և մեք յումն՟ երկիցուք . արդ՝ կամք տ՟ն մերոյ եղիցի ։

Յայնժամ առեալ զն՟ս Ստեփաննոսի՝ եմուտ ՚ի մօտակայ տաճար ս՟բ ա՟ծածնին . և համբարձեալ զձեռն իւր յերկինս՝ ասէ . Տէ՛ր մեր և ա՟ծ , դու ես արարիչ մեր . զքեզ ծանեաք ՚ի ձեռն ս՟ց առաքելոցն , զի ո՛չ գոյ այլ ա՟ծ բաց ՚ի քէն . որպէս փրկեցեր զառաջին ընտրեալսն ՚ի ձեռաց անօրինացն , և կացուցեր զն՟ս աշտարակ ամուր և պարիսպ հաւատացելոց քոց . զի և մեք հայելով ՚ի ն՟ս՝ հաստատեսցուք ՚ի քեզ ուղիղ հաւատով . բարեխօսութ՟բ ա՟ծածնիս , և աղօթիւք ս՟յ քահանային կոստանդեայ՝ ընկա՛լ զաղաչանս ծառայից քոց՝ որք հաւատով կարդան առ քեզ , և առաջնորդեա՛ մեզ ՚ի ձեռն հրշ՟տկի քո . զի տարեալ հասուսցէ զմեզ ՚ի նաւահանգիստն , և պահեսցէ զմեզ աներկիւղ ՚ի հակառակամարտ և յանօրէն դատաւորէն . զի մի՛ օգտեալ ՚ի բանսարկուէն՝ ելցուք արտաքս ՚ի հօտէ քումմէ տ՟ր ա՟ծ մեր . ողորմեա՛ց մեզ տ՟ր , ողորմեա՛ց մեզ , և փրկեա՛ զմեզ . զի զքեզ փառաւորեսցուք երրորդութ՟ի ս՟բ՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Զայնժամ առեալ սր՟բն ա՟յ զարմն՝ որք միաբանեցան ը՟ նմա՝ անձինս երեսուն և երեք, յորս էին ընտանիք և բարեկամք, և եօթն կուսանք, հանդերձ հարբ իւրով ղազարոսիւ՝ որ էր հիւանդագին, ել՛ի գիշերի և գնաց ը՟ նոսա 'ի քաղաքէն : Եւ իբրև հեռացան ոչ փոքր 'ի քաղաքէ անտի կոկիսոնի, եհաս վախճան ա՟ծասէր առն ղազարոսի հօրն ստեփաննոսի . որ աւանդեաց զհոգին 'ի ձեռս տ՟ն՝ ամաց յիսուն և հնգից (կա՟մ վաթսուն և հնգից), բարիոք ծերացեալ ամբիծ վարուք և ճշմարիտ առաքինութ՟բ : Իսկ ծառայքն ա՟յ ամփոփեցին զմարմին երանելւոյն ղազարու փութանակի 'ի գիշերի . և աղօթս արարեալ 'ի վերայ գերեզմանին՝ կնքեցին նշանաւ սր՟բյ խաչին զպարկ բնակութ՟ն ն՟ր : Եւ ինքեանք կանխեցին 'ի լեառնն կոյս . և հասին 'ի քարանձաւ մի, զոր սր՟բյն բարսղի հայրապետի հաստատեալ էր եկեղեցի հրամանաւ տ՟ն՝ 'ի տեսանելն 'ի կեսարիոյ սիւն հրոյ ցոլացեալ 'ի վ՟ր լերինն այնորիկ . և խաչ օրհնեալ նշանագրով անուան իւրոյ՝ նուիրեալ էր զեկեղեցին յանուն ս՟բ ա՟ծածնի . ուր և աղբիւր ջրոյ քաղցրահամ բղխէր :

Անդ՝ իբրև հասին ծառայքն ա՟յ առաջնորդութ՟բ հրեշտակի 'ի տեղին յայն, ուրախ եղեն և գոհացան զա՟յ . և անդադար զցայգ և զցերեկ սաղմոսիւք և օրհնութ՟բ և երգօք հոգևորօք օրհնէին զա՟ծ՝ պարագլուխ ունելով զս՟բն ստեփաննոս, և զովաննային 'ի

շնորհաց մխիթարիչ ս՟բ Հոգւոյն. և էր կերակուր ն՟ց կանկառ լերինն. և այնպէս կացին
անդ անկասկած իբրև ամիսս երիս:

Իսկ մի ոմն 'ի ս՟բց անտի ստ՟մնաս անուն՝ ելեալ յաւուր միում 'ի պատճառս սպասաւորութե՟ եղբարցն՝ ժողովել 'ի կանկառոյն յետոյ կուսէ լերինն 'ի հովտաձև տափարակի. և ահա ետես զնա հովիւ մի՝ որ արածէր ըզհօտն 'ի լերինն. և ընթացեալ առ նա վաղվաղակի՝ եհարց և ասէ, ուստի՞ ես այր դու, և զի՞ գործես աստ: Եւ ս՟բն ստ՟մնաս ասէ. ծառայ ա՟յ եմ ես, և եկեալ եմ տանել ըզբանջարս զայս 'ի պէտս եղբարց իմոց և քերց: Ասէ ցնա հովիւն. և ո՞ւր բնակեալ էք, և զի՞նչ պաշտէք: Ասէ ս՟բն. յայրի անդ յայնկոյս բնակեմք, փախուցեալք 'ի սոկրատէ դատաւորէն. և պաշտեմք զխաչեալն ա՟ծ: Յայնժամ բարկութ՟բ լցեալ հովուին՝ կամեցաւ ըմբռնել զնա և սպանանել. իսկ ս՟բն ստ՟մնաս փախստեայ եղեալ՝ փութանակի գնաց առ ընկերսն, և պատմեաց ն՟ց՝ որ ինչ անցք անցին ը՟ նա. և ս՟քն յաղօթս ապաւինեցան, և յանձն արարին
զանձինս 'ի ձեռս ա՟յ:

Իսկ հովիւն չար տարեալ զհօտսն յընկերս իւր՝ ինքն փութապէս գնաց առ դատաւորն, և մատնեաց զն՟ս՝ թէ կան 'ի յայրին դէմ յանդիման մեզ արքն այնոքիկ, որք փախեան 'ի քաղաքէս: Իսկ դատաւորն իբրև լուաւ զբանս զայս, ուրախ եղև յոյժ. այլ հրամայեաց կապել զմատնիչն երկաթի կապանօք ․ ասէ ․ դուցէ արդեօք դու փախուցեր ըն՟դ 'ի քաղաքէս իմմէ , զի այդպ՟ս դիւրաւ գտեր ․ արդ՝ փութանակի տարցես ը՟դ զինուորսդ իմ առ ն՟մ , զի հաստուսցեն զնոսա առ իս ․ ապա թէ ոչ՝ սրով սպանանեմ զքեզ ․ և նա խոստացաւ կատարել յամ՟ սրտէ ը՟դ պատուէր դատաւորին ։

Մինչ չև եկեալ էր սյ՟ , սբ՟ն ստեփաննոս գուշակելով զլինելոցսն՝ եառ ը՟ իւր զեղբարսն զամենեսեան և զկուսանսն եօթանեսին , և մտեալ 'ի տաճար սբ՟ ած՟ածնին՝ որ յայլի անդ , ծունր եդին միաբան առաջի սբ՟յ նշանին , և ասեն ․ Օրհնեալ ես ած՟ ճշմարիտ , որ արժանի համարեցար զմեզ նահատակել 'ի ձեռաց անօրինաց ․ այո տէր կարող ես փրկել զմեզ 'ի ձեռաց նոցա ․ այլ կամիս զօգուտն և զբարին մեր 'ի փառս անուան քո սբ՟յ ․ իսկ մեք անգէտ գոլով կամաց քոց բարեսիրաց՝ փախեաք եկաք 'ի տեղիս յայս ․ և արդ՝ կամք քո լիցին տր՟ ած՟ ․ զի պատրաստ եմք 'ի մեռանել վս՟ անուանդ քո ․ մի թողուր զմեզ տր՟ զգինս արեան քո ․ և փառաւորեսցուք զամենազօր տր՟ութիդ ամենասբ՟ երրորդութեանդ՝ այժմ և յաւիտեանս ․ ամէն ։

Եւ իբրև կատարեցին զաղօթսն , ննջեցին սակաւիկ մի 'ի տրտմութ՟էն ․ յայնժամ առաքեաց տր՟ զհրեշտակ իւր առ ն՟ս ․ որ և ասէ ցն՟ս ․ մի երկնչիք , զի առաքեաց զիս տր՟ յօգնականութ՟ի ձեզ ․ և ոչ կարասցէ յաղթել ձեզ թշնամին ․ այլ դուք զօրացեալ տր՟ և 'ի գլուխ տարեալ զպաղթութիւն՝ ընկալջիք զպսակ փառաց . և նշխարք ոսկերաց ձերոց լիցի 'ի բժշկութի̃ երկրիս այսորիկ . և անուն քաջութե̃ ձերոյ եղիցի ը̃ ա̃մ երեսս երկրի ։ Եւ յանկարծակի զարթեան 'ի տեսլենէ հրեշտակին՝ որ քաջալերէր զնոսա . և ուրախացան յոյժ . և դարձեալ սկսան կալ յաղօթս ։

Իսկ անօրէն հովիւն գայր հասանէր համդերձ զինուորօքն , և էր կապեալ ձեռս յետս , և առաջնորդէր նոցա ։ Եւ իբրև մերձեցաւ առ սր̃սն , յանկարծակի հարաւ հովիւն յայսոյն պղծոյ , և անդէն չարաչար լլկանօք անկեալ սատակեցաւ ։ Իսկ զինուորքն զահի մեծի հարան , և կային պակուցեալ . զայն տեսեալ սր̃յն ստեփաննոսի և այլ սր̃ցն՝ փառաւորեցին զա̃ծ ։ Ապա ինքնին յառաջ մատեաւ սր̃ն ստեփաննոս , և ասէ ցզինուորսն . զի՞նչ խնդրէք , և կա̃մ վ̃ն որո՞յ իրի եկեալ էք ։ Նոքա ասեն . առաքեաց զմեզ իշխանն սոկրատէս աստ , զի տանիցիմք զձեզ առ ինքն . քանզի հովիւն եկն և մատնեաց զձեզ . արդ՝ եթէ կամ է ձեր , գնասցուք մինչև առ նա . ապա թէ ոչ՝ սպանանէ զմեզ դատաւորն ։ Ասէ սր̃ն ստեփաննոս , ո՛չ երկնչիմք գալ առ իշխանն ձեր . զի ահա տ̃ր յամօթ արար ըզթշնամին մեր , և մեք պատրաստ եմք մեռանել վ̃ն անուանն տ̃ն ։

Ապա ասէ սր̃ն ստեփաննոս ցընկերս իւր . եղբարք արիք երթիցուք , զի հասեալ է ժամ նահատակութե̃ մերոյ . զի ո̃չ կացաք 'ի կենցացաղումն միաբան , կացցո՛ւք միաբան և 'ի նահատակութեան մերում . զի մի՛ կորուսցէ 'ի մէնջ բանսարկուն և խնդասցէ 'ի վ՟ր մեր : Յայնժամ կրկնեցին ծունր առաջի սբ՟ ա՟ծածնին , և սկսան միաբան երգել զսաղմոսն . Տ՟ր հովուեսցէ զիս : Եւ 'ի կատարել զայն՝ ասէ սբ՟ն ստեփաննոս . տ՟ր առաջնորդեա՛ մեզ , և պահեա՛ զմեզ . զի 'ի քեզ ապաւինեցաք : Ապա յարուցե՟լ հանդերձ զինուորօքն՝ յուղի անկան , և եկեալ հասին 'ի դղեակ մի , որ յետոյ կոչեցաւ կանչի . զի անդ եկե՟լ էր դատաւորն սոկրատէս :

Եւ եղև իբրև կացուցին առաջի ն՟ր զսբ՟ն , սկսաւ նա մռնչել իբրև զառիւծ , և ասէ խրոխտալով . յո՞ փախուցեալ՝ կամէիք զերծանիլ 'ի ձեռաց իմոց : Յայնժամ զօրացեալ սբ՟յն ստեփաննոսի հոգւով՝ յամօթ արար զխրոխտումն իշխանին , ասելով . Մեք քանզի ծառայք եմք արարչին երկնի և երկրի , և օրինացն ն՟ր հպատակեմք , ոչ պարտիմք հաղորդիլ ը՟ անօրէնս . վասն այնորիկ 'ի լսել անդ՝ թէ եկն պաշտօնեայ անօրէնուե՟ , փախեաք յանուանէ քումմէ . զի և տեսութ՟բ անգամ հանդիպել քեզ՝ մեզ ամօթ և նախատինս համարեցաք :

Դատաւորն ասէ . զյամառութի՟դ 'ի բաց հան 'ի քէն , և հաւանեա՛ բանից իմոց ըստ կամս ինքնակալին , զի բարի լիցի քեզ և ընկերաց քոց . երդուեալ իմ յա՟ծսն , զի մեծ պատուոյ արժանի արարից զքեզ , և զարսդ՝ որ ը՟ քեզ են . և կացուցից զքեզ տ՟ր և իշխառն 'ի վ՟ր զօրաց իմոց : Ս՟բն ստեփաննոս ասէ. պարգեւք քո ը՟ քեզ լիցին 'ի կորուստ. զի ոչ կամիմք հաւանել կամաց քոց. զոր ինչ կամիս առնել՝ արա վաղվաղակի. զի պատրաստ եմք 'ի կապանս և 'ի բանտ և 'ի մահ վ՟ս անուան տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի : Դատաւորն ասէ. կախարդութե՟դ քո հաւանեցուցեալ ես զարսդ զայդոսիկ՝ որ շրջին ը՟ քեզ. արդ ես խորտակեցից զզօրութի՟ կախարդութե՟դ քո : Զայս ասաց, և անդէն հրամայեաց կապե՟լ զն՟ա ձեռս 'ի յետս, և հարկանել արջառաջլօք զորովայնս ն՟ց, զլանջսն, և զթիկունսն :

Արդ եկեալ զինուորաց՝ մխեցին զձեռս իւրեանց 'ի ս՟բն, և կապեցին զարսն. իսկ զկուսանսն և զմարիամ զմայրն ստեփաննոսի ոչ կապեցին, այլ արկին զն՟ա 'ի բանտ : Եւ զարսն կապեալս տարան 'ի դաշտ մի, և սկսան հարկանել 'ի վեց ժամէ աւուրն մինչև յտասն ժամն, փոփոխ դահիճս և պահապանս 'ի վ՟ր կարգելով : Իսկ ս՟բն ստեփաննոս համբարձե՟լ զաչս իւր յերկինս հանդերձ ընկերօքն, ասէր զսաղմոսն. ո՞ բնակեալ է յօգնութի՟ բարձրելոյն. և դարձե՟լ, ա՟ծ յօգնել մեզ նայեաց, և տ՟ր յընկերել մեզ փութա. և՝ դարձո զնեղութիս մեր 'ի թշնամիս մեր, և ճշմարտութե՟ քով սատակեա զն՟ա. զի դու տ՟ր ը՟ մեզ ես, և ոչ յաղթեսցէ մեզ թշնամին մեր : Եւ այսո՟ց սաղմոսիւք և աղօթիւք կատարէին զժամս տանջանացն. և ը՟ երեկս արկին զն՟ա 'ի բանտ.

և 'ի գիշերին յայնմիկ զօրացան սր̃քն յ̃յ ։ Իսկ սպասաւորք դատաւորին զարմացեալ և զարհուրեալ կային ։ զի առ ոչինչ համարեցան սր̃քն զնեղութ̃իս տանջանացն ։ վ̃յ իբրև առաւօտ լինէր, գնացին և պատմեցին դատաւորին, թէ արքն այն յոչինչ գրեն զհարուածսն՝ զոր ածաք 'ի վ̃ր ն̃ց ։ Յայնժամ հրամայեաց դատաւորն բերել զն̃ս զառաջեաւ, և ասէ ցն̃ս ։ ո՛վ չարք և ա̃ծոցն թշնամիք, մինչև յե՞րբ ներեցից ձեզ ։ արդ հաւանեցարո՛ւք կամաց իմոց, և զոհեցէ՛ք ա̃ծոցն ։ զի մի՛ չար տանջանօք կորուսից զձեզ ։ Ասեն սր̃քն ո̃պ 'ի միոջէ բերանոյ ։ մեք ա̃ծոց քոց երկիր ո՛չ պագանեմք, և ո՛չ կամաց քոց հաւանիմք ։ զի տ̃ր է մեր օգնական ։ ո՛չ երկնչիմք 'ի սպառնալեաց քոց ։ զի ահա մարմնոց մերոց ունիս իշխանութ̃ի ։ զոր ինչ կամիս առնել՝ արա՛ վաղվաղակի ։

Յայնժամ հրամայեաց բռնաւորն կախել զն̃ս, և քերել երկաթի քերչօք ։ և այնչափ քերեցին զն̃ս, մինչև կարմրահանդերձ երևիլ մարմնոց սր̃ցն յարենէ անտի՝ որ ոռոգանէր զանդամս ն̃ց, և հոսէր յորդութ̃բ յերկիր ։ Եւ յայն տանջանս մի ոմն 'ի սր̃ցն՝ որ դեռևս տղայ էր հասակաւ, աւանդեաց ըզհոգին ։ և անունն ն̃ր բագրատունի կ̃մ բագարատ ։ Զոր տեսեալ սր̃յն ստեփաննոսի՝ մինչդեռ տագնապէր 'ի նեղութ̃էն, ասէ ցնա ։ երթ որդեակ առ տ̃րն մեր ։ զի տանուտ̃րն յորժամ ձայն առնէ որդւոց իւրոց, զպատուհական կերակուրն յառաջ մատուցացանէ , արդ դու պատուիրական գոլով դասն՝ ամբիծ և անարատ գնասցես առ տ̃ր մեր խաղաղութ̃բ :

Իբրև այդ եղև դատաւորին մահ պատանւոյն , բարկացաւ 'ի վ̃ր դահճաց , զի ոչ կամէր՝ թէ ոք 'ի տանջելոյն փութով մեռցի . ապա հրամայեաց իջուցանել զսբ̃ան 'ի կախաղանէն . իսկ զմեռեալն ընկեցէ՛ք ասէ շանց : Իբրև ձեռնամուխ եղեալ արանց երկուց 'ի մեռեալ նահատակն՝ կամեցան քարշել զնա և ընկենուլ գազանաց , առժամայն կարկամեցան ձեռք նոցա , և լեզուք նոցա պապանձեցան , և ոչ կարէին խօսել : Տեսեալ այլոց 'ի զինուորաց զեղեալսն՝ յահի եղեն , և ընթացեալ պատմեցին դատաւորին : Ասէ միոյն յիշխանաց ցսոկրատէս դատաւորն . եթէ ոչ սպանանես զկախարդսն , կորուսանեն զզօրս մեր . զհովի՛ւն սպանին , և այժմ զերկուս պատուիրական արս անպիտան կացուցին :

Յայնժամ բարկութ̃բ լցեալ դատաւորին՝ ետ բերել զսբ̃ան առաջի իւր , և ասէ ցնոսա լի ցասմամբ . կախարդութ̃իդ ձեր յիմարեցոյց զձեզ . զհովի՛ւն իմ սպանիք , և ես անփոյթ արարի , զի թերևս հաւանեսջիք . արդ և զերկու պատուիրական արսն կիսամահ արարիք . երդուեալ իմ յա̃ձն ասկղեպիոն՝ թէ ոչ հաւանեսջիք կամաց իմոց և մոռասջիք զյամառութ̃իդ ձեր , չարաչար մահու՛ամբ սատակեցից զձեզ որպէս զմեռեալն զայն . ապա եթէ հաւանիք , 'ի բաց մոռանամ և ես զիրսն՝ զոր արարիք . միայն բանիւ՛ ասացէք՝ հաւատալ 'ի մեծ ա͞ծն ասկղեպիոն . զի նովաւ կեայ երկիրս մեր և մեք խաղաղութեամբ :

Յառաջ մատեաւ ս͞բն ստեփաննոս , և ասէ . որդի՛ սատանայի՝ զհովի՛ն քո դևք սպանին զորս ա͞ծս անուանես . ո՞ւր և ասկղեպիոսդ՝ դիւ՛աց բնակութ͞ի ճանաչի . արդ մեք անբանից անմտից դիւ՛աց երկիր ո՛չ պագանեմք : Իսկ ընկերս մեր՝ զոր կարծես մեռեալ , փոխեցաւ 'ի մահուանէ 'ի կեանս . զոր և պօղոս ասէ . եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք 'ի ք͞ս , ողորմելի եմք . և դարձեալ թէ՝ որ ննջեցին 'ի ք͞ս , կորեա՞ն արդեօք . արդ եղբայրս յորդորեաց զմեզ 'ի սէրն ք͞սի , և գնաց պատրաստեաց մեզ տեղի :

Սոկրատէս ասէ . խելագարութիւնդ քո ո՛չ տայ իմանալ զոր խօսիդ : Ստեփաննոս ասէ . խելագար դու ես , որ զձեռագործս մարդկան փայտս քանդակեալս և քարս կոփեալս՝ ա͞ծս անուանես . և ո՛չ գիտես՝ զի ո՛չ կարեն նոքա փրկել զքեզ 'ի յաւիտենական 'ի հրոյն . զի հոգւոյդ աչք կուրացեալ են , և ոչ տեսանես . այլ՝ մարմնական պատու՛ովդ զբօսանիս : Սոկրատէս ասէ . և ձեզ զի՞նչ շահ 'ի պաշտելոյ զխաչեալն . զի յառաջ քան զձեզ բազումք պաշտեցին զնա , և մեռան 'ի թագաւորացն : Ստեփաննոս ասէ . ո՛վ հակառակամարտ , ն͞ք պաշտօնեայք խաչելոյն 'ի մահուանէ 'ի կեանս փոխեցան , և անթառամ պսակացն արժանի եղեն : Սոկ-

րա

րատես ասէ. ես հաստուցանեմ զքեզ անթառամ պսակացն: Եւ հրամայեաց հարկանել զգլուխս ն՟ց դալար ջաղոտիւք. մինչև տասն այր տկարացան ՚ի հարկանելն:

Իսկ ստեփաննոսեանք համբարձեալ զձեռս իւրեանց յերկինս՝ ասէին. օգնեա՛ մեզ տ՟ր ա՟ծ ՚ի նեղութեան մերում. զի վ՟ն անուանն քո հարկանեն զգլուխս մեր՝ ծաղր առնելով, և նախատեն զանունն քո. զի մեք ծառայք քո զքեզ ծանեաք ՚ի ձեռն սբ՟ց առաքելոցն, զի ոչ գոյ այլ ա՟ծ՝ բաց ՚ի քէն տ՟ր. արդ՝ մի՛ տար զանունն քո հայհոյել անօրինաց, այլ՝ երևեցո՛ զսքանչելիս քո. զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ ա՟ծ, և փառաւորեսցեն հաւատացեալք զանունն սբ՟ քո:

Եւ իբրև կատարեցին զաղօթսն, ահա յանկարծակի փայլեաց լոյս սաստիկ, մինչև ոչ երևիլ արեգականն. և էջ առ նոսա տ՟ր, և ասէ. խաղաղութ՟ի ը՟ ձեզ սիրելի՛ք իմ, զի ը՟ ձեզ եմ յաւիտեան. և առժամայն բժշկեաց զն՟ս. և ինքն վերացաւ յերկինս: Յայնժամ իբրև տեսին սբ՟քն զսքանչելիսն, և զբժշկութ՟ի անձանց իւրեանց, ուրախացան յոյժ և գոհացան զա՟յ: Իսկ դատաւորն և իշխանքն պակուցե՟լ զարմացան. և որ անդն կային՝ հարան կուրութ՟բ. և ՚ի գեղջ եկե՟լ հաւատացին ՚ի տ՟ր արք իբրև ՃԾԵ. և ձայն բարձեալ՝ ասեն. և մեք պաշտեմք զա՟ծն ստեփաննոսի: Իսկ սբ՟ն ստեփաննոս եդե՟լ ձեռս ՚ի վ՟ր ն՟ց՝ բժշկեաց զն՟ս, և հաստատեաց ՚ի հաւատս ք՟սի:

Տե

Տեսեալ դատաւորին զկրօն՝ որում ակն ոչ ունէր, տրտմեցաւ յոյժ. ասէ մի ոմն յիշխանաց նորին. ասացի՝ եթէ փութով սատակեա՛ զդոսա, զի մի կախարդութբն իւրեանց սպանցեն զմեզ. արդ զոր ասացից քեզ՝ արա. հրամայեա՛ ածել զկուսանսն յառաջագոյն և սպանանել. և ապա զարսդ զայդոսիկ: Իսկ նա հրամայեաց ածել զկուսանսն զառաջեաւ. խօսել սկսաւ ընդ նց դատաւորն, և ասէ. խնայեցի 'ի գեղեցկութիդ ձեր, և ոչ տանջեցի զձեզ իբրև զընկերսն ձեր. արդ հաւանեցարո՛ւք կամաց իմոց, և զոհեցէ՛ք ածոցն. և ես երդմամբ ասեմ, զի արարից զձեզ տիկնայս իշխանաց մերոց, և բազում պատուո՛յ և մեծութե՜ արժանի արարից. ապա թէ ոչ՝ սրով սպանանեմ զձեզ:

Ասէ մարիամ մայրն ստեփաննոսի. ո՛չ են նուի՛րեալ կուսանքդ զանձինս իւրեանց երկրաւոր մեծութեաս կին առն, այլ՝ թագաւորին քի. արդ մի՛ պատիր բանիւք զօշաքաղեացես և բարբանջեսցես, զի յուսացեալ եմք 'ի տր, և ո՛չ երկնչիմք 'ի սպառնալեաց քոց. և աղօթիւք որդեկին մերոյ և ընկերաց նր՝ մերոց եղբարցն՝ օգնեսցէ մեզ տր, և փրկեսցէ զմեզ 'ի ձեռաց քոց: Յայնժամ հրամայեաց դատաւորն դահճաց առնուլ տանել զնս 'ի բաց, և անդ սպանանել. զի լիցին մարմինք նց ասէ կերակուր գազանաց երկրի: Իսկ առեալ դահճացն փութանակի ը այգն ընդ առաւօտն զըք կուսանսն եօթանեսին հանդերձ մարեմաւ՝ տանէին 'ի տեղի կատարտարման ։

Իսկ երջանիկն մարիամ իբրև ետես՝ եթէ տանին զինքեանս ՚ի նահատակել յառաջ քան զեղբարսն և զորդին իւր, սկսաւ ասել ցնծալից արտասուօք և բարձր ձայնի՛ւ առ ո՟րն ստեփաննոս, որ էր փոքր մի հեռագոյն ՚ի նոցանէ. Որդեա՛կ ստեփաննոս, դու գիտես՝ եթէ ո՛րպէս սնուցի զքեզ կրթիլ յա՟ծպաշտութի. արդ պի՛նդ կա՛ց ՚ի հաւատսդ, և քաջալերեա՛ զեղբարսդ, զի մի՛ ոք զարհուրեսցի ՚ի տանջանաց, և մի՛ զանգիտեսցէ և երկմտիցի, կամ ՚ի սպառնալեաց դատաւորին երկնչիցի. զի են՝ որ դեռ տղայք են. արդ՝ որ ոչն են հասեալ ՚ի տիս կատարելութե՟, յառաջեսցի՛ն ն՟ք քան զձեզ ՚ի նահատակութի՝ գնալ առ տ՟րն մեր սրբութե՟. այլ վ՟ն իմ և դստերաց իմոց աղօթեա՛ որդեա՛կ իմ ստեփաննոս, զի խաղաղութեամբ հասցուք առ անձկալին մեր ք՟ս ։ Իսկ նա ասէ ո՟րն ստեփաննոս. մարիամ մա՛յր իմ գնա՛ խաղաղութե՟, ո՟ր ը՟ քեզ և ընդ քորսդ իմ ։ Իսկ յաւել ասել յունարէն բարբառով. (զի զառաջինն թերևս հայերէն խօսէր.) Մա՛յր իմ մա՛յր, յառաջագոյն կուսանքդ արբցեն զբաժակ մահու, և ապա դու. զի դուցէ տղայք գոլով երկնչիցին ՚ի սրոյն տեսլենէն. և ես և եղբարքս իմ ՚ի սմին ժամու ՚ի սոյն աւուրս՝ զկնի եօթնեկի՝ ժամանեսցուք առ ձեզ ։

Արդ՝ իբրև տարան դահիճքն զեօթանեսին կուսանսն մարիամաւ հանդերձ ՚ի տեղի նահատակումն՝ հանդէպ ձորակի միոյ առ սառրատով լերինն , կապեցին զկուսանսն ձեռս 'ի յետս , և սկսան յանխնայ կոտորել զնս՟ • և նք՟ մի մի յառաջեալ առ դահիճսն 'ի զենումն՝ կնքեցին զանձինս իւրեանց նշանաւ խաչին : Իսկ մարիամ կայր յանդիման կուսանացն , և քաջալերէր զն՟սն՝ պինդ կալ 'ի հաւատսն , և համբերել տեառն քի՟ : Եւ իբրև գլխատեցին զնս՟ դահիճքն , հասին առ մարիամ մերկացուցեալ զսուսերս իւրեանց : Իսկ նա կայր ամբարձե՟լ զձեռս իւր յերկինս , զի ո՛չ էր կապե՟լ , այլ կայր մեկուսի , և աղօթէր ասելով • օրհնեալ ես թագաւո՛ր անմահ , որ արժանի արարեր զորդեակքս իմ անարատ ըմպել զբաժակ մահու : Եւ մինչչև էր կատարեալ զաղօթսն , մի ոմն 'ի դահճացն եհար զսուրն ը՟ կուրծս նր՟ • և առժամայն աւանդեաց զհոգին սբ՟ն մարիամ բարի խոստովանութ՟բ 'ի հայր և յորդի և 'ի սբ՟ հոգին , յամսեանն օգոստոսի՝ որ օր ժա՟ էր , յաւուր ուրբաթու 'ի է՟ ժամու :

Եւ կային սբ՟ մարմինք նոցա անթաղ , ոչ՟ և յառաջագոյն վկայեցելոյն բագրատունեայ : Իսկ ապա առե՟լ նոր հաւատացելոցն զնշխարս սբ՟յն բագրատունեայ գաղտ 'ի գիշերի , և տարեալ առ նշխարս սբ՟ց կուսանացն՝ ամփոփեցին 'ի մի վայր • և անյայտ արարին զգիրս հանգստեան նց՟ առ ժամանակ մի : Իսկ դահիճքն յետ կատարման սբ՟ցն գնացին առ դատաւորն , և պատմեցին զիրսն՝ զոր արարին : Յայնժամ դատաւորն հրամայեաց դարձեալ ածել առաջի իւր զստեփաննոս և զընկերս նորա , և ասէ ցն՟ս · մինչև յե՞րբ անսայցեմ ձեզ · զի կախարդութ՟դ ձեր դարձուցիք զժողովուրդս իմ 'ի ձեզ ։ Ս՟րբքն ասեն , զառ 'ի յա՟ծպաշտութե՟ն դառնալ կախարդութ՟ի՞ համարիս ։ Սոկրատէս ասէ · հրաման առեալ եմ 'ի թագաւորացն՝ զերիս և զչորս յանցուա՛ծս թողուլ ձեզ · արդ յայսմ հետէ հաւանեցարո՛ւք կամաց իմոց , և զոհեցէ՛ք դիցն · զի մի՛ չար ևս տանջանս ածից 'ի վ՟ր ձեր · և ո՛չ կարասցէ ա՟ծն ձեր փրկել զձեզ 'ի ձեռաց իմոց ։ Ասէ ս՟րբն ստեփաննոս · ո՛վ դատաւոր զիա՞րդ խարբալել ջանաս զծառայս ա՟յ · մեք պատրա՛ստ եմք 'ի տանջանս՝ զոր ինչ ածես 'ի վ՟ր · 'ի ձեռս քո են մարմինք մեր · արա՛ որ ինչ հաճոյ թուի՛ առաջի քո ։

Յայնժամ դատաւորն հրամայեաց պատրաստել հուր սաստիկ , և ընկենուլ զն՟ս 'ի ներքս · և զօրականքն արարին զհրամայե՟լն , և պատրաստեցին զհուրն սաստիկ յոյժ ։ Եւ յորժամ տանէին զս՟րբսն , նոքա սկսան զճանապարհայն 'ի բերան առնուլ և երգել զօրհնութի՟ն երից մանկանցն · և իբրև հասին յեզր հնոցին , յայնժամ զինուո՛րքն կապեցին զն՟ս ձեռս 'ի յետս , և արկին 'ի հուրն բորբոքե՟լ ։ Իսկ ս՟րբքն կային 'ի մէջ հնոցին ո՟պ է՟ հովանեաւ · զի խորանաձև եղև բոցն 'ի վ՟ր նոցա ։ Յայնժամ ս՟րբն ստեփաննոս սկսաւ ասել ընկերօքն հանդերձ · օրհնեալ ես թագաւո՛ր անմահ , որ ցուցեր զսքանչելիս քո այսօր 'ի միջի մերում · գոհեմք զքեզ սքանչելի՛դ ա՟ծ , և փառաւորեմք զանուն քո 'ի մէջ հնոցիս ։ Իսկ զինուորքն իբրև տեսին զսքանչելիսն, զարմացան և երկեան երկիւղ մեծ . և թողեալ զծերսն 'ի մէջ հնոցին՝ գնացին փութով առ իշխանն իւրեանց, և պատմեցին զոր տեսին ։ Ասէ դատաւորն . և դեռևս կենդանի՞ են 'ի մէջ հրոյն ։ Ասեն զինուորքն . խնդալով կան և փառաւորեն զա՟ծն իւրեանց . Յայնժամ սրտմտեալ դատաւորն իբրև զառիւծ՝ ասէ ցդահիճսն . փութով տարջիք ըղկախարդսդ 'ի հեղեղատն, և կոտորեսջիք զն՟ս սրով . զի մի՛ երևելով նոր պաշտօնէիցն՝ որ հաւատացին կախարդութե՟ ն՟ց, սպանցեն զիս . զի զօրքն իմ ո՛չ են առ իս ։ (Հասեալ էր 'ի նոյն աւուրս և լուր համբաւոյ սատակման յուլիանոսի 'ի պարսս, և թգ՟րելոյ յովիանոսի բարեպաշտի . վ՟յ փութացաւ անօրէն դատաւորն սոկրատ կորուսանել զծերսն . զի մի՛ եկեսցէ հրամանն արձակելոյ զկապեալ քրիստոնեայս ։)

Յայնժամ գնացին դահիճքն գաղտ, և հանին զստեփաննոսեանսն 'ի հրոյն ողջանդամս . զի կարողութ՟ն ա՟յ հրեշտակ տ՟ն պահէր զն՟ս . զի ամենևիմբ մազ մի 'ի գլխոյ իւրեանց ո՛չ էր խարշամեալ ։ Իսկ զայն տեսեալ դահճաց՝ զարմացան, և չիշխէին ձեռն մխել 'ի ն՟ս . այլ քանզի երկնչէին յոյժ յահէ դատաւորին, փութացուցանէին զվիմեանս տանել 'ի տեղի կատարմանն, և կատարել զհրաման դատաւորին . և մի ոմն 'ի դահճացն 'ի բաց ընկէց զկապանս ծերցն, զի դիւրաւ ընթացին. և այնպէս երթային զճանապարհայն ս՟րքն խնդութ՟բ մեծաւ. սաղմոսէին և ասէին, 'ի նեղութեան մերում մեք առ տ՟ր կարդացաք. տ՟ր փրկեաց զմեզ 'ի շրթանց նենգաւորաց և 'ի լեզու՛աց չարաց ։ Եւ կատարեալ զկանոնն՝ հասին 'ի տեղի կատարմանն, որ 'ի խորագոյն ձորակի միոջ՝ հանդէպ կուսանացն կատարելոց՝ հեռագոյն սակաւիկ մի ։

Եւ երբև փութացուցանէին դահիճքն զս՟բսն 'ի սպանումն, նոցա ծունր կրկնեալ միաբան՝ ասեն. Տ՟ր յո՛յս մեր, ապաւէն և փրկիչ, ա՟ծ ճշմարիտ, փառաւորեմք զմարդասիրութի՟դ քո, զի փրկեցեր զմեզ 'ի ձեռաց դատաւորին, և պսակեցեր զմիաբանութի՟ս մեր ամբողջ. զի ոչ ոք 'ի մէնջ երկմտեաց 'ի տանջանաց դատաւորին ։ Արդ՝ տ՟ր բարերար ընկա՛լ զաղաչանս ծառայից քոց. տ՟ր ա՟ծ՝ բարեխօսութ՟բ ս՟բ ա՟ծածնին մօր քո և կուսի ընկա՛լ զհոգիս ծառայից քոց մարդասէ՛ր տ՟ր. զի փառաւորեսցի անուն քո ։ Ձայն եղև յերկնից, և ասէ. եկա՛յք ծառա՛յք ա՟յ, և հանգերո՛ւք ը՟ այլ նահատակսն ։

Եւ յարձակեալ դահիճքն 'ի վ՟ր ս՟բցն՝ սկսան կոտորել. իսկ ս՟բն ստեփաննոս կայր մեկուսի՝ համբարձեալ զձեռս իւր յերկինս, և աղօթէր. բայց յորժամ ետես զեղբարսն՝ զի կոտորէին դահիճքն անխնայ, ասէ. զմանկունս տիօք յառաջագո՛յն կոտորեցէք ։ Իսկ դահիճքն հակառակեալ ը՟ բանս ս՟բյն՝ ըզծերսն յառաջ կոտորեցին ։ Եւ ծառայն ա՟յ ստեփաննոս քաջալերէր զմի մի 'ի նոցն՝ պինդ կալ սակաւիկ մի , և հասանել ընկերաց նահատակացն · զի ասէր · ահա երթամք 'ի հանգիստն՝ զոր պատրաստեաց Տր ծառայից իւրոց ։ Եւ այնպէս կատարեցին զամենեսեան առհասարակ · և կայր ստեփաննոս միայն ։

Եւ էին անուանք նոցն՝ որք կատարեցան անդէն բարի հաւատով , այսոքիկ · Մեն բագարատ , վեղուխոս , բասիլլիոս , սիմէոն կեսարացի · գրիգորիս կամ գրիգորիոս այր լի հաւատով 'ի քաղաքէն կոկիսոնի , և երկու որդիք նորա սմբատ և յովհաննէս · և ծերն պատուական ղևոնդէս երեք որդւովքն՝ դաւթիւ , ստեփաննոսիւ , և Թադէոսիւ · և ծեր մի այլ պատուական և մեծազգի յանտիոքէ չորիւք որդւովքն · և այլ ևս ոգիք (եօթնևտասն կամ ութուտասան) , որոց անուանք գրեալ են 'ի դպրութե կենաց ։ Իսկ նորին ստեփաննոս տակաւին կայր յաղօթս ջերմ արտասուօք · իբրև եկին առ նա դահիճքն , ասէ ցնոս · զի՞ յապաղէք , զի՞ կայք հիացեալ՝ անօրէնութբ արբեալ · զի՞ կուրացոյց սատանայ զաչս սրտից ձերոց · զի որ Թուիդ ձեզ՝ Թէ մեռան իսկ , նոքա 'ի մահուանէ 'ի կեանս փոխեցան , և կան 'ի հանգիստն՝ որ ոչ անցանէ · և եթէ գիտացեալ էր ձեր զվիճակ բարեմասնութե նց , նախանձաւոր լինէիք հետոց նց ։

Ասեն դահիճքն , որք էին երեսուն և ութ թուով · մեք գիտեմք և ծանեաք յիշխանէն մերմէ զկախարդութ՟իդ քո եւ զարանցդ՝ զոր կորուսաք. արդ կամիս եւ զմե՞զ նմանօղս առնել ձեզ, եւ տալ սպանանել դատաւորին: Իսկ սբ՟ն ասէ. այսպէս է գրեալ, որ ոչ կամիցի զօրհնութ՟ի տ՟ն, հեռի եղիցի ՚ի նմանէ: Եւ խնդրեաց ՚ի նոյանէ ներել սակաւիկ մի, զի կայցէ դարձեալ յաղօթս. եւ անկեալ ՚ի վ՟ր երեսաց իւրոց՝ ասէ. Ո՛վ ճըշմարիտդ ա՟ծ, էու՟ի անեղ, երրորդութիւն սբ՟, զոր օրհնեն զքեզ հրեշտակաց դասք անլռելի ձայնիւ՛, եւ քեզ երկրպագանեն ա՟մ արարածք, խոստովանելով զքեզ, եւ օրհնելով հանապազ զտ՟րութ՟իդ քո, եւ փառաւորելով զանուն քո տ՟ր. որ ետուր պարգեւ ամրութ՟ե հաւատացելոց զնշան սբ՟ խաչի քո. զի ՚ի կնքել մեր նովաւ զանձինս՝ յամօթ լիցի հակառակորդն, եւ ոչ կարասցէ յաղթել հաւատացելոց. յոր ապաւինեալ ծառայքս քո ՚ի նշան տ՟ր խաչի քո՝ զանձինս մեր ՚ի մահ մատնեցաք վ՟ս անուա՛ն քո սբ՟յ:

Եւ արդ տ՟ր գոհանամք զքէն, որ պահեցեր զմեզ աներկբայ հաւատովք՝ մեռանել վ՟ս անուա՛ն քո տ՟ր. արդ ընկա՛լ զբանաւոր պատարագս, զոր մատուցի քեզ, եւ համարեա՛ ՚ի թիւ՛ տ՟րց քոց. եւ գրեա՛ զանուն ս՟ց ՚ի դպրութ՟ի կենաց մարդասէր տ՟ր. եւ զիս ընկա՛լ տ՟ր, եւ խաղաղութ՟բ ժամանեցո՛ ՚ի նաւահանգիստն կենաց անվախճանից: Աղաչեմ զտ՟ր զանուն քո երրորդութ՟ի տ՟ր, ընկա՛լ զաղաչանս իմ, եւ զտեղի նահատակութ՟ե մերոյ արա՛ բնակութ՟ի քրիստոնէից. եւ զնոր հա-

հաւատացեալ հօտն օրհնեա՛ , և աճեցո՛ զնոսա օր ըստ օրէ ․ զի բազմանայցեն և օրհնեսցեն զանուն քո ․ և զհակառակամարտ դատաւորն սատակեա՛ , ո՟պ և զԹագաւորն ն՟ր սատակեցեր ՚ի ձեռն մերկիւռեայ վկային՝ աղօթելով ս՟բյ հայրապետին բարսղի ․ և կատարեցեր զխնդրուածս ն՟ր , և ապրեցուցեր զհաւատացեալս անուանդ քո ս՟բյ ։

Եւ այժմ դարձեալ խնդրեմք ՚ի քէն մարդասէր տ՟ր ․ օրհնեա՛ զհաւատացեալս անուանդ քո ս՟բյ ․ և զտեղի նահատակութե՟ս մերոյ արա՛ բժշկութ՟ի ախտաժետաց ․ զի որք դայցեն յանուն մեր ․ և աղաչեսցեն ըզքեզ ՚ի տեղիս յայս , օգնեսցես ն՟ց ․ և եթէ ախտս ինչ ունիցին կ՟մ ցաւս կ՟մ զի՛նչ և իցէ ցասումն , բժշկեսցես զն՟ս և ապրեցուսցես ․ զի փառաւորեսցեն զանուն ս՟բ քո ․ և զիս արժանի՛ արա ըմպել զբաժակ մահու ուրախութ՟բ ․ զի քեզ փառս մատուցից՝ հօր և որդւոյ և ս՟բ հոգւոյդ՝ յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Յայնժամ ձայն եղև յերկնից՝ որ ասէր ․ Ե՛կ վկա՛յ ք՟րի , և հանգի՛ր յուրախութ՟իս արդարոց ․ և զոր խնդրեցեր ՚ի տ՟նէ՝ եղիցի՛ քեզ ․ եթէ ոք եկեսցէ ՚ի տեղի նահատակութե՟ ձերոյ , զի՛նչ և խնդրեսցէ բարեխօսութ՟բ ձեր , տացի ն՟ց ՚ի տ՟նէ ։ Եւ նա ընծայեալ հոգւովն ս՟բվ սքանչելի երևէր , և փայլէր լոյս յերեսաց նորա ․ մինչև զահի հարկանիլ և դահճաց , որք կային փոքր մի հեռագոյն ․

գոյն. և կուտակեալք զմիմեամբք ահիւ և դողութեամբ՝ ո՛չ գիտէին թէ զի՞նչ արասցեն: Կոչեաց զն՟մ ՟րքն, և ասէ. եկա՛յք կատարեցէ՛ք զկամս հօրն ձերոյ սատանայի: Յայնժամ մի ոմն 'ի դահճացն առաւել անագորոյն իշխեաց յարձակիլ 'ի վ՟ր ՟րբյն 'ի զենումն. և մինչդեռ նա խոնարհեցուցեալ ըզպարանոցն՝ աղօթէր 'ի սրտի իւրում, պատահեաց նմա սուսերամբն, և եհատ զգըլուխ ն՟ր: Եւ անդէն մնաց ձեռն դահճին կարկամեալ հանդերձ սրովն. և այս դիւ՟ի պղծոյ հարեալ 'ի նա՝ անդէն արիւնախառն լեարդն ը՟ բերանն դարձաւ և սատակեցաւ: Իսկ այլ ընկերք ն՟ր փախստական եղեալ գնային փութապէս առ իշխանն իւրեանց. պատմեցին՝ զոր արարին, և զսատակումն ընկերին իւրեանց:

Յայնժամ դատաւորն կոչեաց զխորհրդակիցս իւր. և ասէ. արդարև ասեմ ձեզ, զի զկախարդսն զայնոսիկ սպանի, և զերծի զանձն իմ 'ի հոգոց. արդ ուրախացո՛ւք ուրախութ՟ի մեծ, ելցուք առ փոքր մի 'ի քաղաքէն. և ապա յետ սակաւ աւուրց դարձեալ եկեսցուք և կորուսցուք զարսն զայնոսիկ՝ որք հաւանեցան կախարդացն: Իսկ իշխանք ն՟ր ասեն ցնա. եկա՛յք վաղիւն զօհս մատուսցուք ա՟ծոցն, որ փրկեցին զմեզ 'ի նոցանէ. և հաճոյ թուեցաւ բանն անօրինին: Իբրև այգն զառաւօտն մերկանայր, կամեցեալ իշխանն յառնել 'ի դահոյից իւրոց, և ահա յանկարծակի անկաւ վէմ մի մեծ 'ի վ՟ր Ն՟ր, և սատակեաց զնա, ոչ գիտելով ուստի՞ անկաւ վէմն. և զօրք նորա հարեալ 'ի դիւաց մոլեգնէին ։

Իսկ մի ոմն յիշխանաց Ն՟ր կոստէ կամ կոստաանուն՝ զղջացեալ և եկեալ 'ի միտս իւր, ասէր. այս ա՟մ նեղութ՟իս՝ որ եկն 'ի վ՟ր զօրաց մերոց, վ՟ս ծառայիցն ա՟յ եղև՝ զոր յանխնայ կոտորեցաք ։ Եւ առեալ իշխանին զզինուորսն մոլեգնեալս՝ գնաց 'ի տեղին նահատակելոց վկայիցն. եդ ծունր ամենեքումբք հանդերձ, և ասէ. Ո՛վ ս՟բ վկայք, հաւատամք յա՟ծն ձեր՝ զոր դուք պաշտէիք. բարեխօսեցէք առ ա՟ծ, զի թողցէ մեզ զյանցանս մեր՝ զոր մեղաք ձեզ, և զցասումն՝ որ եկն 'ի վ՟ր մեր, բարձցէ 'ի մէնջ ա՟ծ. զի զոր արարաքն՝ ապաշխարեսցուք, և դարձցուք առ ա՟ծ ։

Իբրև զայս ասաց իշխանն, մոլեալքն 'ի դիւաց սկսան զգաստանալ. և միաբան ձայնիւ օրհնէին զա՟ծ ։ Եւ զի մարմինք ս՟բ վկայիցն կային անթաղ, յայնժամ միաբանեալ զօրքն՝ որ բժշկեցան, արք թուով իննսուն և հինգ, հանդերձ իշխանաւն, ժողովեցին զնշխարս ս՟բցն, և զհողն՝ ուր արիւն ն՟ց հեղեալ կայր. և փութանակի ամփոփեցին զամենեսեան ։ Յայնժամ ապա եկեալ և քրիստոնէիցն՝ որք յառաջագոյն հալածեալքն էին, առ իշխանն կոստէ, ուրախ եղեն ը՟ նմ՟. և տեսեալ զզինուորսն բժշկեալ՝ օրհնէին զա՟ծ. զի 'ի ձեռն ս՟բ վկայիցն եղև նոր ժողովուրդ ք՟սի ։ Եւ ասեն ցիշխանն.

սկիզբըն արարցուք շինել տաճար ս՟բ վկայից, և գիտուք զնշխարս նոցա ՚ի ներքոյ հիման տաճարին ։ Եւ շինեցին երեք վկայարանս. մին ՚ի վ՟ր ս՟բ կուսանացն, զոր անուանեցին ս՟բ կաթողիկէ. և զմիւսն ՚ի վերայ ս՟բյն ստեփաննոսի հանդէպ աղբերն, որ բղխեաց ՚ի պէտս բնակչացն և վ՟ս բժշկութ՟ե հիւանդաց. և անուանեցին զայն՝ ս՟բ ստեփաննոս. և կարգեցին սպասաւորս ս՟բյ տաճարին. և զերրորդ վկայարանն ՚ի վ՟ր բազմութ՟ե վկայիցն ։ Քանզի յայնմ հետէ եղև խաղաղութ՟ի եկեղեցւոյ առ թգրութ՟ե յոբիանոսի. և իշխանն կոստէ վերակացու եղեալ տեղեացն այնոցիկ՝ կոչեաց զքահանայս և զպաշտօնեայս ա՟յ, որք հաստատէին զհաւատացեալսն ՚ի ք՟ս. և օր ը՟ օրէ աճէին և բազմանային քրիստոնեայք ՚ի տեղւոջն յայնմիկ. և զօր նահատակութ՟ե ս՟բյն տօնէին ամ յամէ ։

Արդ՝ եղև կատարում՟ն ս՟բյն ստեփաննոսի և ընկերաց նորա՝ յամի տ՟ն 363. յամսեանն օգոստոսի, որ օր ժ՟է էր ամսոյն, և օրն ուրբաթ՝ յութերր՟դ աւուր զկնի նահատակութ՟ե մարիամու մօր ստեփաննոսի և կուսանաց որ ը՟ նմա ։ Եւ էին ա՟մ վկայք ս՟բ ստեփաննոսեանք՝ արք և կանայք, հարք և որդիք, թուով լ՟գ. և հանդերձ ստեփաննոսիւ, և հարբ ն՟ր ղազարոսիւ լինին լ՟ե, կ՟մ լ՟ը ։ Իսկ ս՟բն ստեփաննոս կոչեցաւ Ուլնեցի՝ յանուն տեղւոյն, ուր է գերեզման ն՟ր, այն է ուլնի քաղաք, ըստ յունաց յուլիուպօլիս երբեմն կոչեցեալ, ռամկօրէն զէյթունի · որ է 'ի փոքրն Հայս մերձ յեփրատ գետ՝ 'ի հիւսիսոյ մարաշոյ, 'ի սահման գղեկին՝ որ կոչեցուն հանչի · այլ ինքն փառաւոր վկայն էր ծննդեամբ 'ի կոկիսոն քաղաքէ · և ոպ՟ ցուցանէ կարգ պատմութեանն՝ 'ի ծաղկահասակ տիս կատարեցաւ առաքինի նահատակն, իմաստութեան ալեօք կատարեալ 'ի մանկութեան, և վրդպ՟ ծերոց և տղայոց գտեալ, իբր քսան կամ քսան և հինգ ամաց, և անուամբ և արդեամբք հանդիսակից և պսակակից սբ՟յ նախավկային ։

* * *

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Եւ այս տօն է մին 'ի տօնից սեպհական եղելոց հայաստանեայց եկեղեցւոյ · զի չիք յիշատակ նր՟ յայտնի 'ի վկայաբանութիւս այլոց ազգաց՝ գոնէ յայժմու ժամանակի · ապա թէ ոչ՝ 'ի հնումն գոյր յունական օրինակ վկայաբանութեան, ուստի թարգմանեցաւ և մերս · ոպ՟ յայտ է 'ի յիշատակարանէ թարգմանչին՝ Գրիգոր անուն կրօնաւորի, որ 'ի ճառընտրի անդ զայսօրինակ կարգէ զսկիզբն վկայաբանութեան · * Ես մեղաւոր և
,, յետին կրօնաւորս հանեալ 'ի տիս մանկութեան, և
,, հմուտ լեալ ամ՟այն պատուէրանաց, բազում անգամ
,, կանխեալ 'ի տաճար նր՟ վկային սբ՟յն ստեփաննոսի,
,, և տեսանէի՝ զի ոչ տօնէին զտօն նահատակութե՟ սբ՟ցն,
,, այլ՝ 'ի յիշատակի սբ՟յ նախավկային տօնէին և զնո-
,, ցայն ։ Հարցեալ իմ ը՟ բազում գիտնականս և ը՟ սբ՟
,, վրդպս, թէ գուցէ ուրեք պատմութի՟ սբ՟ցն · զի և զօր
,, նահատակութե՟ նց՟ իմանայցեմք՝ թէ յորում աւուր
,, կատարեցան · զի ձեռնամուխ լինիցիմ և գրիցեմ ըզ-
,, պատմութի՟ սբ՟ցն · զի ամ յամէ տօնիցեմք զյիշատակս
,, նց՟ ։ Եւ ոչ յումեքէ գտեալ պխնի · այլ մի ոմն ծա-
,, նօթ ինձ, եթէ յոյնք ունին զպատմութի՟ նց՟ ։ Եւ իմ

„ կանխեալ՝ եկի 'ի վանսն՝ որ կոչի կլայ. (ուր կամ
խմանայ զհռոմկլայն՝ նախ քան զլինելն ը̄ ձեռամբ Հայոց.
և կամ զվանս կենոլակայ՝ զոր շինեաց սբ̄ ստեփաննոս
վանական, զոր տօնեն յոյնք 'ի յունվարի. ժդ̄): Եւ
„ հարցեալ իմ մեծաւ քննութբ̄ վս̄ պատմութե̄ նց̄. իսկ
„ նք̄ ասեն ցիս. առ մեզ ոչ գոյ. բայց եթէ 'ի սբ̄յն
„ սիմէոնի վանսն: Եւ իմ յուղի անկեալ գնացի 'ի վանսն.
„ և հարցի դարձեալ ցնս̄. և նք̄ անգիտացան. և ասեն
„ ցիս. առ մեզ ոչ գոյ. բայց եթէ 'ի կոստանդինու-
„ պօլիս:
„ Եւ իմ յոյժ տրտմեալ վս̄ յերկարութե̄ ճանապարհին.
„ և յանցանել ամաց երկուց՝ եհաս ինձ ճանապարհ
„ գնալ 'ի կոստանդինուպօլիս: Եւ իբրև հասի խաղա-
„ ղութբ̄ 'ի քաղաքն, ուրախացայ յոյժ. և սկսայ քննել,
„ թէ իցէ՞ ուրեք պատմական և հաւատարիմ այր 'ի
„ քաղաքիս. զի ծանեայց 'ի ձեռն նր̄ զճշմարտութիւն:
„ Եւ հանդիպեցաւ մի ոմն 'ի քահանայից՝ անուն կա-
„ լոյժան՝ նիկէական ուղղափառ հաւատով, և ասէ ցիս.
„ այր դու՝ զի՞ հարցանես վս̄ հաւատարիմ մարդոյ, և
„ կմ̄ զի՞ եկեալ ես այսր. և ասեմ ցնա. վս̄ իրիք ինչ
„ խնդրոյ: Եւ առեալ տարաւ զիս յարկ տան իւրոյ.
„ և ասէ. զի՞նչ անուն է քո. և ես ասեմ. գրիգոր է
„ անուն իմ: Եւ ասէ. պատմեա ինձ, թէ զի՞նչ խնդ-
„ րես. և ես պատմեցի նմա զիմ պատճառս: Եւ նա
„ յոյժ ուրախացեալ՝ ասէ. առ իս ագիր, մինչև աղօ-
„ թիւք սբ̄ցն տացէ մեզ տր̄ ած̄ զխնդրուածս մեր, և
„ ցուցցէ մեզ: Եւ կացեալ իմ անդ ամիս վեց. և նր̄
„ յանձն առեալ աշխատութբ̄ մեծաւ. և ապա աղօթիւք
„ սբ̄ցն գտաք զպատմութիւս նց̄: Եւ յոյժ խնդութիւն
„ եղև 'ի միջի մերում. և սկսաւ կարգաւ պատմել ինձ
„ և թարգմանել. զի հմուտ էր այրն ած̄ային պատմե-
„ րանացն: Եւ արդ եղբարք ժողովեալք 'ի կատարել
„ զտօն սբ̄յն ստեփաննոսի և ընկերաց նր̄, ամենեքեան
„ ունկն դիք պատմութե̄ և չարչարանաց սբ̄ցն. զի բա-
„ րեխօսութբ̄ նց̄ ողորմեսցի տր̄ ած̄ մեր ամ̄ հաւատա-
„ ցելոց: 'Ի ժամանակս յուլիանոսի անօրինի էր հալա-
„ ծումն մեծ քրիստոնէից ||. և որ 'ի կարգին:

Արդ թէ ո՞ ոք էր և յորում ժամանակի այս գրիգոր կրօնաւոր բարեյիշատակ՝ հանդերձ վաստակակից յոյն թարգմանաւ կալոժանիւ, ունիմք գուշակել 'ի հանգամանաց ոճոյն և պատմութե̄ն՝ թէ փոքր մի յառաջ կմ̄ փոքր մի յետոյ էր քան զԳրիգոր վկայասէրն. (զի ոչ կա-

կարեմք նոյնացուցանել պարզապէս ընդ նմա): Այս յայտնի է՝ զի յառաջ էր ժամանակաւ քան զՇնորհալին • նախ՝ զի գրչութին իսկ Ճառընտրիս է հին, և ոչ շատ հեռի յաւուրց անտի • և երկրորդ՝ զի յետ Շնորհալւոյն չեղև այլ կարգաւորութի հին տօնացուցի • և ահա յայսմ օրինակս տօնացուցին կարգեալ կայ որոշ տօն սբ̅յն ստեփաննոսի սիւնեցւոյ զկնի վերափոխման՝ համաձայն վկայաբանութենս, որ 'ի ժզ̅ • օգոստոսի դնէ զկատարումն նր̅ • ուստի առեալ դնի և 'ի Հ • որ զնոյն վկայաբանութին քաղէ՝ պահմամբ և շարադրութեն: Ո՛չ վայրապար համարիմք և զայն, զի Ճառընտիրն զայս վկայաբանութի դնէ յառաջ քան զպատմութի սբ̅յն սարգսի զօրավարի, յայտ առնել կամեցեալ՝ թէ երկոքին այս վկայք հուշակաւորք յազգին յառաջնմէ լոկ ը̅ աւանդութեան՝ յետոյ ուրեմն հանդիսացան և ըստ գրաւոր վկայաբանութե̅ • գրիգոր կրօնաւոր խուզարկեալ 'ի լոյս էած զպատմութիւն սբ̅յն ստեփաննոսի սիւնեցւոյ, և շնորհալին յետ նորա զպատմութի սբ̅յն սարգսի զօրավարի :

Այլ ինչ յայժմուս չունիմք 'ի ծանուցանել • թող ընթերցողք ինքնին իմաստասիրեսցեն, թէ շնորհալին ոչ̅ զսբ̅յն սարգսի տօնն զարդարեաց շարականաւ, նոյնպէս թուի արարեալ և ը̅ սբ̅ն ստեփաննոս • զի նորին ոգւոյ է առաւել և սորայս շարական :

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սբ՟յն Աբդլմսեհի ։

Ի․ յուլիսի 13 ։ Ճառընտիր․ Ա․ երես․ ՇՃԹ = ՇԼԷ․
և Բ․ ՃԿԷ = ՃԿԸ ։ Ի Յայսմաւ․ արտաքեացուոյ․ ’ի Վա-
տիկանեան մատենեանն․ ԾԷ ։ (1)

ՅԱՆԿԱԼԻՆ Ի ՎԿԱՅՍ և երջանիկն ’ի մատաղատունկ նահատակս, սբ՟ մանուկն Աբդլմսեհ՝ Ճշմարիտ ծառայ Ք՟ի, որոյ առաջին անունն Ասեր, էր ’ի շինգար քաղաքէ արեւելեայց՝ որ ’ի սահմանս տէրութ՟ե պարսից, որդի առն հրէի՝ որում անունն էր ղևի, ’ի սկզբան թուականութ՟ե հայոց, մօտ ’ի վախճան տէրութ՟են սասանեանց և կրակապաշտ մոգութ՟ե պարսից․ յորում ժամանակի համարձակագոյն էին հրեայք ’ի շինգարացւոց երկրին ։ Այս էր ղևի մեծատուն յոյժ․ ունէր ստացուածս և ոչխար և անասուն բազում, և նախագլուխ էր հրէից ’ի ժամանակին յայնմիկ․ նր՟ էին որդիք բազումք․ յորս կրտսերագոյնն էր Ասեր՝ ամաց երկոտասանից․ զոր առաքէր արածել զխաշինս ’ի դաշտի, ո՟պ յեսսէ զդաւիթ ։ Այս լինէր՝ յորժամ արածէր Ասեր զհօյլս եզանց,

զանց , ածէր զն՟ ը՟ աւուր աւուր արբուցանել ջուր 'ի տեղին , ուր ամ՟ հովիւքն գային պատրաստել զարբումն խաշանց իւրեանց . և բազում հասակակիցք նր՟ գային և ժողովէին յայն տեղին ։ Ոմանք 'ի նոցանէ էին յորդւոցն քրիստոնէից , և ոմանք 'ի մոգուց . և մինչ բազում տուարածականք ուրոյն ուրոյն երախանս կազմել՝ նստէին ուտել հաց , քրիստոնեայք առանձինն , և սակաւիկ մի հեռագոյն որդիք մոգուցն , ասեր մ՟նայր միայնակ՝ մեկուսի յամենեցունց . զի ոչ գոյր հրէայ ընկեր նորին ։ Յանկայր հացակից լինել մանկանցն քրիստոնէից . այլ ոչ իշխէր մերձիլ առ նս՟ . զի գիտէր՝ թէ գարշ համարէին զնա յաղագս հրէութե՟ն ։ Իսկ մանկունք քրիստոնէից թէպէտև չառնուին յանձն կոչել զնա 'ի սեղան , բայց սիրէին զնա յոյժ . և քաղցրութ՟բ խօսէին ընդ նմա . և հնարս խնդրէին՝ թէ զիա՞րդ կարասցեն մերձեցուցանել զնա առ իւրեանս . և զօրհանապազ պատմէին նմա վն՟ ք՟նի հաւատոցն , և վասն ճգնութե՟ սր՟ց մարտիրոսաց , զոր լուեալ էին 'ի ծնողացն իւրեանց . և նա մտադիւր լսէր և 'ի միտ առնոյր զբանս նց՟ ։ Եւ եղև յաւուր միում՝ յորժամ ժողովեալ էին ըստ սովորութե՟ ուտել հաց , յարուցե՟լ ասերայ՝ փութապէս ընթացաւ առ նս՟ , և ասէ . ո՜վ եղբարք իմ սիրելիք , պատմեցէք՝ եթէ իբ՟ հնար է ինձ մերձենալ առ ձեզ , և ուտել կերակուր 'ի միասին , և ոչ լինել այլ ևս գարշելի յաչս ձեր ։ Պ՟խանի ետուն միաբան մանկունքն , և ասեն ․ եթէ հաւատաս բոլորով սրտիւ քով , և մկրտիս ջրով յանուն յի՟ քի՟ , առժամայն խառնիս 'ի գունդս մեր , և մերձենաս առ մեզ անյապաղ , և 'ի կերակուրս մեր և յըմպելիս և յամ ինչ ․ ապա թէ ոչ՝ անմարթ է քրիստոնէից ընդ հրէայս թշնամիս քսի՟ ուտել և ըմպել ։

Յայնժամ ասէ ասեր ․ ահա մերձ է ջրհորս և աւազան ջրոյ , ուստի ըմպեն խաշինքս ․ և ես պատրաստ եմ մկրտիլ ։ Ասեն մանկունքն ․ ոչ այդպէս , այլ պարտ է յեկեղեցւոջ 'ի ձեռն քահանայի մկրտիլ ․ Ասեր ասէ ․ այժմ մինչ եկեղեցի հեռագոյն է , և քահանայ ոչ գոյ ը՟ մեզ , զի՞նչ առնիցեմք ․ և այն զի ես յաղագս երկիւղի հօրն իմոյ և եղբարց իմոց յայտնապէս ոչ կարեմ մկրտիլ յեկեղեցւոջ ․ և ահա զրկեալ լինիմ 'ի միաբանութե՟դ ձերմէ , և լինիցին խորհուրդք իմ ունայն ․ եթէ արդարև ճշմարիտ է ած՟ն ձեր քս՟ , և մարդասէր տր՟ է՝ ոպ՟ ուսուցանէք զիս , ընդունի զհոգի խոնարհ և զպատարագ խորհրդոց իմոց , և ոչ անտես առնէ զյօժարութի՟ կամաց իմոց , և կարող է զիս 'ի ձեռն ձեր մկրտել ․ արդ մի՛ յապաղէք , այլ յարուցեալ նորին իսկ քսի՟ մեծազօրութե՟ և յուսով մկրտեցէք զիս յանուն նր՟ ․ և նա կատարեսցէ զա՟մ ։

Յայնժամ իբրև տեսին մանկունք զյօժարութի՟ նր՟ , և զկատարեալ հաւատսն՝ որ 'ի քս՟ , մերկացին զհանդերձսն՝ որ զնովաւ և իջուցեալ զնա յաւազանն ջրոյ որ առ ջրհո-

րովն

րոմն , ասէին այսպէս ․ մկրտի ծառայս քնի (այն է ըստ արևելեան բարբառոյ՝ աբդալմէսսիհ ,) յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սբյ ․ և երիցս ընկղմեցուցին զնա 'ի ջուրն , ըստ որում յառաջագոյն տեսեալ և ուսեալ էին ։ Իսկ յաղօթելն իւրեանց միաբան 'ի ժամ մկրտութեն ասէին ․ դու քս ած հաստատեա՛ զօրհնութիւն ամ , զոր ասեն քահանայքն 'ի ժամ լուսաւոր մկրտութեն ․ և ընկա՛լ զսա կատարեալ մկրտութբ ըստ ամ հաւատացեալս 'ի քեզ ։

Իսկ յորժամ հանէին զնա 'ի ջրոյն , մատուցեալք մի առ մի համբուրէին զնա ․ և վերամբարձեալ զնա 'ի գիրկս իւրեանց՝ գգուէին մեծաւ պատուով ․ նաև 'ի հանդերձից իւրեանց նորոց զգեցուցանէին զնա ․ և նրատան մեծաւ ուրախութբ ուտել կերակուր հանդերձնովաւ , և պատուէին զնա ոպ փեսայ յառագաստի , մանաւանդ թէ իբրև հրեշտակացեալ 'ի մարմնի ․ քանզի և երեսք նր պայծառացան սքանչելապէս , և լուսաւոր ճառագայթք հատանէին 'ի նմանէ ․ և հոտ անոյշ բուրէր 'ի նմանէ ․ զի յայտնի լինիցի՝ եթէ ընկալաւ զշնորհս սբ աւազանին վերածնութբ 'ի հոգւոյն սբյ՝ 'ի ձեռն բանից մանկանցն ․ և կոչեցին նմա անուն Աբդլմսեհ , որ թարգմանի ծառայ քնի ։ Եւ եղև բանս այս և առ այլ հովիւս՝ որք էին 'ի մանկանց մոգուց ․ և նքա ևս եկեալ՝ սքանչացեալ զարմանային ըստ հրաշալի գործն ․ քանզի և նք առին զհոտ անուշութեն ․ և ասեն ․

մեծ է խորհուրդս այս քրիստոնէից ։ Յետ այսորիկ մինչդեռ նստէին մանկունքն ցնծութ՟բ , պատուէր տային ծառային ք՟նի աբդլմնեհի՝ սրբութ՟բ և զգուշութ՟բ պահել զաւանդն , զոր էառ 'ի տ՟նէ , և մի՛ խառնիլ ը՟ հրէայսն և մի՛ 'ի կերակուրս նոցա . և նա հաւանեալ խոստանայ առնել զասացեալսն 'ի նչ՟է ջերմեռանդն սիրով յանուն ք՟նի ։ Մի՛ ոմ՟ն 'ի նոցանէ ունէր գինդ ոսկի յականջս իւր . նա ասէ ցընկերսն իւր . արդ մինչ զայսպիսի գործս հաւատոյ համարձակեցաք առնել , պա՛րտ է մեզ առանց երկիւղի հաստատուն կալ . ահա գիտեմք , զի հրէայք ո՛չ ծակեն զունկն ուստերաց իւրեանց , վ՟ս զի է նշանակ մշտնջենաւոր ծառայութ՟ե . արդ եկա՛յք բարձցո՛ւք զա՟մ վտանգ դառնալոյ սորա անդրէն 'ի հրէութ՟ի . ծակեսցո՛ւք զունկն սորա , զի ծառայ եղև ք՟նի , և արկցուք 'ի ներքս զգինդս ոսկի ։ Եւ հաճոյ թուեցաւ մանկանցն , և արարին ը՟ բանի ն՟ր . ծակեցին զաջոյ ունկն աբդլմնեհի , և արկին ըզգինդն ոսկի ։

Եւ այնուհետև յարեան ը՟ սովորութ՟ե արածել զհօտս իւրեանց . այլ հոգային 'ի մէջ իւրեանց , և ասէին , եթէ զի՞արդ հանդիպիլ ունի նա ծնողացն ։ Իսկ ծառայն ք՟նի՝ այն է աբդլմնեհ , ը՟ մտանել արևուն գայ 'ի տուն հանդերձ խաշամբքն . և իբրև ետես զնա զառաջինն մայր իւր , ամբարձ ըզձայն իւր հառաչմամբ , և ասէ . որդեա՛կ իմ ասեր զի՞ եղև քեզ , և զի՞նչ է այդ նշան ծառայութե՟ յականջս քո. ո՛վ խաբեաց զքեզ, և ածեր 'ի վ՟ր տան հօր քո զայսպիսի չարիս մեծամեծս. ո՞չ ապաքէն լռեալ էր քո յօրինացն մովսեսի, թէ մի՛ ծակեսցի ունկն արուե՛ի յինէլէ, բայց որ կամիցի ծառայ բնակել ը՟ տ՟ն իւրում. արդ՝ եթէ գիտասցէ հայր քո, նա ինքն լինի վրէժխնդիր օրինացն 'ի քէն. և թէ զի՞նչ արարից զքեզ՝ ոչ գիտեմ. զի անթաքչելի է նշանդ յականջս քո:

Յայնժամ սկսաւ ասել սբ՟ և իմաստուն մանուկն. մի՛ երկնչիր մայր իմ, և մի՛ խռովեսցեն զքեզ խորհուրդք քո վ՟ս այսորիկ. քանզի ես այժմ քրիստոնեայ եմ և ծառայ ք՟սի. և յաւիտեան պաշտեմ զնա. և նա է իմ տ՟ր և տ՟ծ: Օրէնքն մովսեսի ո՛չ պատժեն զծառայս՝ որք սիրենն զտեարս իւրեանց. այլ հրամայել հրամայեն զունկն ծակել առ դրան դաւթին, զի լիցի նշանակ ծառայելոյ տ՟ն իւրում յաւիտեան. սոյնպէս և ինձ պատահեաց յաւուր յայսմիկ. առ դրան մկրտութե՟ ծակեցաւ ունկն իմ, և հաստատեցաւ ուխտ իմ ը՟ ք՟սի տ՟ն իմոյ յաւիտեան: Ասէ ցնա մայրն իւր. զի՞արդ եղեր այդպէս փաղփաղուկ քրիստոնեայ, և կամ ո՞ արար զքեզ ծառայ ք՟սի. և կամ ո՞վ ուսոյց քեզ զայդպիսի բանսդ՝ զոր խօսիսդ: Սբ՟ն ասէ. որ ասաց ցաշակերտսն իւր, թէ որ հաւատայ յիս՝ մի՛ ամաչեսցէ յաւիտեան. և դարձեալ ասէ, յորժամ տանիցեն զձեզ և առաջի դատաւորաց, ես տաց ձեզ 'ի ժամուն յայնմիկ բան. նա է՝ որ ուսոյցն զիս, և խոստուեալ այլ ևս բազում ուսուցանել ։

Ապա սկսաւ պատմել կարգաւ մօր իւրում զա՟մ՝ զոր լուեալ էր 'ի մանկանցն քրիստոնէից ․ և թէ՝ զիա՛րդ մկրտեցին զնա ջրով , և որպէս վերացաւ 'ի նմանէ աղտեղութիւն նեխութե՟ , և բուրեաց հոտ անուշութե՟ 'ի ք՟ս ։ Իսկ մայր նո՟ր իմաստութ՟բ լսէր զասացեալսն 'ի նմանէ ․ և 'ի միտ առեալ սքանչանայր ը՟ն նորահրաշ տեսիլ դեղոյ նորա ․ և թաքուցանէր զնա 'ի տան իւրում սուրբ երեսուն ․ և խանդաղատէր զնովաւ , և հոգայր՝ թէ մի՛ գուցէ արդեօք գիտասցէ հայր նո՟ր , և կորուսցէ զնա յաղագս նախատանաց ազգին իւրոյ և երկիւղի հրէիցն ։ Իսկ սբ՟ մանուկն օրը՟օրէ կանխել ը՟ն առաւօտն երթայր 'ի դաշտն արածել զխաշինս ը՟ն ընկերս իւր ․ և հանապազ ուսանէր 'ի նոցանէ հաւատատուն կալ 'ի հաւատսն՝ որ 'ի ք՟ս , և ևս քան զևս զօրանայր 'ի նմ՟ր ․ և ը՟ն մութն երեկոյին դառնայր առ մայր իւր ․ և այնպէս ոչ 'ի վեր ել բանն առ ժամանակ մի ․ զի և հայր նորա զբաղեալ էր հոգովք Ծականօք տան իւրոյ , կամ շրջէր և արտաքոյ ։

Յաւուրսն յայնոսիկ ոմանք 'ի հարց մանկանցն այնոցիկ՝ որք առիթ եղեն փրկութե՟ աբդլմսեհի , պատահեցին 'ի վանս ուրեմն՝ որ 'ի լերինն շիգարայ , 'ի տօն սբ՟յն պօղոսի կմ՟ պաւլայի և երից մանկանցն որ ը՟ն նմա , և լուան զպատմութ՟ի սբ՟ցն այնոցիկ ․ և եկեալ պատմեցին 'ի տունս իւրեանց զնահատակութ՟ի սբ՟ցն , և օրհնէին զա՟ծ ։ Իսկ մանկանցն լուեալ զայն 'ի հարցն իւրեանց՝ խօսեցին առ միմեանս 'ի ժողովելն 'ի միասին • և ս՟բն աբդլմսեհ իբրև լսէր զայն , առաւել բորբոքէր 'ի սէրն ք՟սի • զի ծագեալ էր 'ի նա լոյսն ք՟սի , և 'ի միտ առեալ զճգնութի՟ ս՟բցն՝ աղօթէր սրբութ՟բ արժանի լինել պսակաց երանելեացն այնոցիկ :

Եւ եղև 'ի միում գիշերի՝ մինչդեռ ննջէր 'ի տան մօր իւրոյ , տեսանէր զինքն՝ ո՟պ թէ լինել 'ի գբի խաւարի , և տանջիլ ը՟ ժողովրդեանն դադանայ և աբիրոնի • անդ մռնչէր հառաչանօք , և լայր դառնապէս • և խորհէր ը՟ միտս՝ թէ զի՞նչ լինիցի • և ո՛չ գտանէր ելս հնարից • այլ յոյս իւր էր 'ի լոյսն ք՟սի , և յիշէր անձկանօք զբարի ընկերս իւր և զասացեալսն 'ի նոցանէ : Յայն տագնապ տարակուսի՝ յանկարծակի երևեցաւ նմա երիտասարդ մի լուսաւոր կերպարանօք , և իշխանաբար բախեաց զխաւարային գուբն , և կալեալ զաջոյ մանկանն՝ եհան 'ի գբոյն , և կացոյց զնա 'ի մէջ մատաղերամ մանկանց , որք շուրջ կային զնովաւ , և միաբան ձայնիւ օրհնէին զա՟ծ խնդալից բերկրանօք , և զանազանեալ փառօք :

Յայնժամ իբրև 'ի միտս եկեալ աբդլմսեհի՝ ասէ • ո՞վ ես տ՟ր՝ որ այսպ՟ս վերակացու եղեր ինձ 'ի նեղութե՟ս , և փրկեցեր զիս : Եւ նա ասէ • ես եմ ք՟սն , յոր յուսացար դու յիս , և կարդացեր զանուն իմ • արդ զօրացի՛ր և մի՛ երկնչիր • զի օթևանք պատրաստեալ են քեզ ը՟ մանկանցս այսոցիկ • և կան և պահին քեզ պսակք անապականք և յաւիտենականք . և յետ փոքր մի աւուրց ընկալայց զքեզ առ իս, և ցուցից քեզ զսէրն իմ, որովհետև զգեցար զիս 'ի ձեռն մանկանցս այսոցիկ, և արարից զքեզ ժառանգորդ արքայութ՟ե իմոյ : Իսկ ս՟րբն լցեալ ահիւ և խընդութ՟բ՝ անկաւ 'ի վ՟ր երեսաց իւրոց փառաւորելով զա՟ծ . և ասէ . գոհանամ զքէն ք՟ս՝ տ՟ր իմ և ա՟ծ իմ, որ փրկեցեր զիս 'ի խաւարային կապարանէն և 'ի չարաչար տանջանացն . այլ աղաչեմ զքեզ տ՟ր իմ, պատմեա՛ ինձ՝ թէ ո՞յք էին ն՟ք որք տանջէին ը՟ իս, և մնացին 'ի նմին վայրի . զի ահա ը՟ եղանելըն իմ 'ի գբոյն՝ դարձեալ կափոյց խորխորատն զբերան իւր անդրէն 'ի վ՟ր ն՟ց : Ասէ ցնա ք՟ս . նոքա են ազգ տան հօր քո՝ որք խաչեցինն զիս : Աբդլմսեհ ասէ . տ՟ր յ՟ս մի՛ հեռի առներ զծառայ քո յողորմութ՟է քումմէ . այլ հաստատեա՛ զիս՝ առնել զկամս քո, լինել քարոզ ճշմարտութ՟ե քում . զի տեսից և յագեցայց լուսով ա՟ծութ՟ե քո յերևիլ փառաց քոց :

Եւ մինչ զայս ա՟մ ս՟րբն խօսէր, զարթեաւ մայր ն՟ր 'ի բարբառ բանից նորա . զարթոյց զորդին իւր, և ասէ . զի՞ է քեզ որդեա՛կ իմ . և կմ՟ զի՞նչ են բանքդ՝ զոր իբրև ը՟ սիրելւոյ խօսիս : Պ՟խնի ետ ս՟բ մանուկն, և ասէ . յ՟ս ք՟ս՝ յոր հաւատացի և մկրտեցայ յանուն ն՟ր, եհան զիս 'ի գբոյ խաւարին և յանդնդոց դժոխոց և 'ի տանէ կապանաց . նա էր՝ որ խօսէրն ցիս : Ասէ ցնա մայրն իւր . և զի՞նչ կերպարանք էին նմանութե՟ն նր՟ ։ Այն աստ ․ երկնասարդ գեղեցիկ տեսլեամբ , զոր ոչ բաւեմ պատմել ․ և փայլատակունք հաստանէին յերեսաց նր՟ ․ և ձորձ իւր պատառեալ , և կողն խոցեալ , և ձեռք և ոտք իւր ծակեալ բևեռօք ․ և գիր ՚ի վր՟ նր՟ , թէ սա է քս՟ ած՟ , զոր հրէայքն խաչեցին յեղ՟մ , որ յանձն էառ զյանցանսն ադամայ , և սա՛ է գառն այ՟՝ որ բառնայ զմեղս աշ՟ի ․ և ինքն է օրէնսդիր և ժողովարան սբց՟ և պսակիչ նահատակաց ։ Եւ տեսի ես զհասակակիցս իմ շուրջ զինև , որք օրհնէին զնա , և ասէին ․ ո՛վ տր՟ փրկեա՛ , ո՛վ տր՟ առաջնորդեա՛ ․ օրհնեալ որ գաս յանուն տն՟ ․ ովսաննա ՚ի բարձունս , օրհնութի՟ որդւոյ դաւթի ։ Եւ ամենեքին նոքա զանազան պսակօք փայլէին ․ ոմանք ՚ի նցէ՟ ունէին ՚ի ձեռս իւրեանց ոստս արմաւենեաց ․ և այլք ՚ի նոցանէ ոսկի բաժակաւ մատուցանէին զարիւնս իւրեանց առաջի երկնաւոր թագաւորին ցնծալից ուրախութբ՟ , և ասէին ․ սա՛ է ած՟ մեր՝ յոր յուսացեալն էաք ․ ցնծասցուք և ուրա՛խ լիցուք ՚ի փրկութե՟ն սորա ։ Այնպ՟ս և ես՝ մա՛յր իմ , ցանկացայ դասակից լինել լուսոյ մանկանց առագաստին , և ը՟ նս՟ երգել երգս օրհնութե՟ ․ և ոչ տային ինձ առժամայն մերձենալ ՚ի նս՟ ․ և արդ խառնիլ ՚ի նս՟ կարօտի անձն իմ ․ և երանի՛ թէ մնացեալ էի ՚ի տեսլեանն՝ ուրախանալ ՚ի մէջ սբցն՟ այնոցիկ ․ առաւել քան զարթնութի՟ լաւագոյն էր քունն այն ․ զի եթէ ՚ի տեսլեանն այնպէս լուսաւոր և հեշտալի էր երեւումն այն՝, որչափ եւս առաւել՝ եթէ դէմ յանդիման լինիցի ինձ տեսանել զլոյսն աննուաղելի եւ անսպառելի. եւ ահա ստիպէ զիս բաղձանք հոգւոյս իմոյ՝ լինել ը՟ բազմութե՟ն ն՟ց. եւ յոյժ հարեալ եմ՚ի սէր ն՟ց. եւ լաւ էր ինձ մեռանել ը՟ նոսա՝ քան ստանալ զվայելչութի՟ն լայնատարած աշ՟խս:

Արդ յորժամ լուաւ մայրն զայս տ՟մ յորդւոյ իւրմէ, տագնապեալ պղտորեցաւ սիրտ ն՟ր վ՟ն բանիցն այնոցիկ. եւ ջանայր թաքուցանել զբանն, զի մի լուիցէ հայրն եւ եղբարք ն՟ր. եւ ասէ. որդեակ՝ մի արդեօք պատրանք ինչ իցեն. զի շատ եւ այն են երազք, որ սուտ են: Տէ՟ն ասէ. այլ զոր ա՟ծ կամիցի յայտնել, ամենեւին ճշմարիտ է. որպէս եւ բազմաց ՚ի հարցն մերոց առաջնոց տեսիլք ցուցան ՚ի տ՟նէ, առաւել յովսեփայ եւ դանիէլի. որոց եւ հանճար տուաւ մեկնելոյ զերազս. եւ ահա ես դէմ յանդիման տեսի զսքանչելիսն, զոր տ՟ր յ՟ս ք՟ս ինձ յայտնեաց: Արդ դու եղիցես սկիզբն քարոզութե՟ն իմոյ ո՛վ մայր իմ. հաւատա՛, յոր եսն հաւատացի, եւ պատրաստեցի զիս մեռանիլ ը՟ նմա:

Զայն իբրեւ լուաւ մայրն, գիտաց այնուհետեւ՝ եթէ ՚ի մահ ունի մատնիլ զաւակն իւր անտարակոյս. եւ սկսաւ լալ յորդ արտասուօք: Ասէ ցնա տ՟րն. մի լար ո՛վ մայր իմ, եւ մի խռովեսցի սիրտ քո. զի մահն՝ որ ը՟ տ՟յ եւ վ՟ն տ՟յ, կեանք է անմահական. ահա ոսկերքն յովսեփայ փոխձանելոյ պարիսպ ամուր եղեն ազգի իւրում. եւ թէ ոչ էին կեն-

դա

դանիւք աբրահամ և սահակ և յակոբ , ո՛չ ասէր ա͞ծ ցմովսէս , ես եմ ա͞ծ աբրահամու և սահակայ և յակոբայ . և ո՛չ է ա͞ծ մեռելոց , այլ՝ կենդանեաց . արդ՝ ճշմարիտ կենդանի են առ ա͞ծ , որք մեռանին յուսով նորա . արդ աղաչեմ զքեզ մա՛յր իմ, լո՛ւր բանից իմոց , և հաւատա՛ 'ի ք͞ս , և մկրտեա՛ց յանուն նորա . և փրկեսցիս 'ի չարաչար տանջանաց անտի այնոցիկ՝ որ խաչեցինն զնա . և կատարեալ լիցի անուն քո առ որդի քո ընկերանօք յանանցական ցին , լինելով ինձ մայր սիրելի յերկուսին յաւիտեանս : Արդ՝ մի՛ թողուր 'ի մտաց քոց և յետ ելից իմոց զբանս իմ . այլ հաւատա՛ ճշմարտութե͞ն ա͞յ՝ որ 'ի վեր է քան զա͞մ զմիտս և զխորհուրդս :

Յայնժամ ծագեաց լոյս ա͞ծգիտութեան 'ի խաւարեալ միտս կնոջն . և պ͞խնի տուեալ որդւոյն ասէ . հաւատամ յա͞ծ՝ յոր դու հաւատացեր որդեա՛կ իմ . և 'ի պատշաճ ժամանակի արդիւնացուցից զբանս իմ . առ այժմ ծածկեսցին խորհուրդք մեր 'ի հօրէ քումմէ և յեղբարցդ . զի մի՛ լուիցեն և սպանցեն զիս և զքեզ : Ապա 'ի վաղիւն անդր առեալ ո͞րդյն զմախաղն և զցուպն հովուութե͞ իւրոյ՝ ասէ . ողջ լեր մա՛յր իմ . յանձն առնեմ զքեզ ք͞սի . ես գնացեալ երթամ առ ընկերս իմ . և եթէ յապաղեմ, եկեսջի՛ր և դու զկնի իմ : Զայս ասէր՝ նշանակեալ զմահ իւր և զհաւատս մօրն . և ելեալ գնայր ը͞ս սովորութե͞ զկնի հօտից իւրոց . և իբրև մեկնեցաւ սակաւիկ մի , տնտեսութե͞ն ա͞յ հանդիպեցաւ նմա ծերունի եպս մի. և ընթացեալ սբն անկաւ առ ոտս նորա, և ասէ. աղաչեմ զքեզ տր իմ, օրհնեա զիս և կնքեա նշանաւ քի խաչին. և ձեռն եդեալ կատարեա զմկրտութիւն իմ։

Զայս ասէր փափաքանօք ընդունելոյ զդրոշմ՝ առ ՚ի քաջութք նահատակին. քանզի լուեալ էր յընկերաց իւրոց, թէ ձեռն դնեն և դրոշմեն քահանայք զճակատ մկրտելոյն. որ լինի հաստատութի քրիստոնէութե և զօրավիգն ամրութե հոգւոյ ՚ի հաւատս։ Ասէ եպսն. ուստի՞ ճանաչես զիս. և կամ ո՞ պատմեաց քեզ զինէն. զի ահա ոչ ունիմ զզգեստ եպսութե։ Ասէ Աբդլմսեհ. որ զիս քեզ յայտնեաց, և կարգեաց քեզ ճանապարհ գալ առ իս, նա ծանոյց զքեզ ինձ։

Զարմացեալ եպսն՝ ասէ ցնա. և իմ առեալ պատուէր՝ օրհնել զքեզ նախ քան զպսակին քո նահատակութք՝ եկի առ քեզ. և արդ եղիցիս օրհնեալ. և եդեալ զաջ ձեռն իւր ՚ի վր գլխոյ նր՝ աւանդեաց ՚ի նա զշնորհս հոգւոյն սբյ. և ասէ. երթ ՚ի խաղաղութի անուամբ տն մերոյ քսի՝ հաճոյ եղեալ առաջի նր, և արժանի լեր չարչարանաց մահուն քսի. և մանկունքն՝ որ մկրտեցին զքեզ, հրաւիրեալ եղիցին ՚ի կարգս հրեշտակաց. և այսպէս արարեալ ծերոյն՝ գնաց զճանապարհս իւր։

Իսկ սբն գնաց առ մանկունսն ընկերակիցս իւր, և պատմեաց նոցա զտեսիլն իւր՝ զոր ետես՝ և զիմ եղեալսն. և զարմացան ընդ սքանչելիսն. և լցան երկիւղիւ և ուրախութբ թե՟ 'ի վ՟ր այնոցիկ՝ զոր լուծանն . և խնդակից լինէին նմա . և այնուհետև ոչ ևս ինքեանք քաջալերէին զծառայն ք՟ի, այլ 'ի նմանէ քաջալերութի՟ ընդունէին, որ զգեցեալն էր բոլորովին զզօրութի՟ն ք՟ի ։

Եւ էր օրն այն ուրբաթ . և տօն մեծ էր հրէից . և առնէր հայր ն՟ր զևի ուրախութի՟ մեծ յաւուր յայնմիկ, հրաւիրեալ զազգատոհմն իւր և զսիրելիսն յընթրիս . առաքեաց կոչել և զորդին իւր զասեր ը՟ այլ եղբարսն՝ ժողովել 'ի շաբաթամտին 'ի հրաւիրեալ տեղին ։ Իբրև մօտ եղև ասեր՝ այն է աբդլմեհ, խոտորեցաւ մտանել 'ի տուն մօր իւրոյ . և հետամուտ եղեալ ծառայքն՝ բռնադատեցին զնա, և առեալ տարան 'ի ժողովն հրէից ։ Յայնժամ 'ի մտանելն ն՟ր՝ տեսեալ հօրն նորա հանդերձ բազմութ՟բ հրէից զգինդն յականջս որդւոյ իւրոյ, խռովեցաւ բարկացաւ և ասէ ցնա . ասեր ո՞վ խաբեաց զքեզ, և արար այդպէս խայտառակ . ո՞չ ապաքէն այդ կերպարանք ծառայից են, որ ինքնակամ թողլին զազատութի՟ իւրեանց, և գրեցան 'ի ծառայութի՟ ։ Ը՟ն ասէ . մի՛ խռովիր հա՛յր իմ, քանզի գիտեմ զասացեալդ . զի ահա և ես գրեցի զանձն իմ ծառայ ք՟ի, և քրիստոնեայ եմ ։ Իսկ յորժամ լուաւ զայս հայրն, զայրացեալ լի ցասմամբ՝ եհար զերեսս նորա, և ընկեցեալ 'ի մէջ բազմութե՟ն յերկիր՝ կոխէր ոտիւքն ։ Յարեան թափել զնա ժողովեալքն, և ասեն ցղևի . մի՛ իսպառ բարկանար եղբայր, զի մանուկ է . և ունի զշջանալ և գալ յուղղութ՟ի · մանաւանդ յաւուր յայսմիկ թոյլ տուր դմա, զի մի խափան լիցի ուրախութ՟ե մերում · քանզի զատիկ մեծ է օրս ։ Ապա իբրև եղև լռուի, և նստան յուտել և ըմպել և ուրախ լինել, կոչէին զասեր ողոքանօք, զի կերիցէ ը՟ ն՟ս ։ Իսկ նա ասէ ցն՟ս · մի խաբիք, զի ես քրիստոնեայ եմ · և ոչ է արժան քրիստոնէի ուտել ը՟ հրէի ։ Յայնժամ ամօթալից եղեալ հայրն յաղագս բանիցս այսոցիկ՝ յարեաւ դարձեալ հարկանել զնա, և ոչ թողին ։

Ասեն միւսանգամ ցմ՟կն · եկ որդեակ՝ կեր ը՟ մեզ, և ցածո զսրտմտութ՟ի հօր քո · քանզի թողաք քեզ զարհամարհանս պատուիրանացն մովսէսի վ՟ն այդորիկ՝ որ յականջոդ քո է, հայելով ՚ի տղիտութ՟ի քո և ՚ի պատիւ տօնիս · արդ լուր որդեակ, և եկ կեր ընդ մեզ ։ Մ՟ն ասէ · եթէ գիտէիք զեղե՟ն սքանչելիսն՝ զոր եցոյց ինձ տ՟ր, և թէ զիա՞րդ այց արար ինձ ա՟ծ և լուսաւորեաց զիս, ոչ բռնադատէիք զիս ուտել ը՟ ձեզ · այլ զի դեռ նոյն առագաստ օրինացն մովսէսի կայ ՚ի վերայ սրտից ձերոց, վ՟ն այնորիկ խորհիք զայդ ։ Իսկ ն՟ք իբրև լուան, զարմանային ը՟ կորովութ՟ի բանիցն, և ասէին ցմիմեանս · միթէ տեսի՞լ ինչ եղև դմա · զի այդպիսի բանք ոչ են մանկան տղայոյ · այլ ոչ տկարանայ այդ առաջի ա՟յ · քանզի բազում փառաւորութ՟ի եղև առ մարգարէսն ՚ի մանկու՟ե ժամանակի · ապաքէն ոչինչ է մեծ, եթէ լինիցի այնպիսի ինչ և այժմ յազգի մերում · զի և մեք ոչ աննշանք ոմանք եմք 'ի մէջ իէ̃լի. և օրէնքն ա̃յ՝ պարծանք մեր ։ Ասէ ցնս̃ ո̃քն. զոր խաչեցին հարքն մեր յե̃մ, զնա տեսի. և դիտեմ, զի նա՛ է գառն ա̃յ, յորոյ վերայ վկայեաց յովհաննէս 'ի յորդանան. և ես մկրտեցայ յանուն նր̃. և փոխանակ ճշմարտութե̃ նր̃ մտադիւր մեռանիմ. և դուք եթէ ոչ քաւիցիք մկրտութբ̃ նր̃, պարտականք էք գործոց հարցն ձերոց. քանզի արիւն արդար հեղին, և ինքեանք կորեան յանօրէնութե̃ իւրեանց. իսկ որք հաւատացին 'ի նա, փրկեցան. աՀա ասացի ձեզ. 'ի բա՛ց առէք զպատրուճակդ՝ որ կայ 'ի վերայ սրտից ձերոց, և հաւատասջի՛ք և մկրտեսջի՛ք, և քաւեսցին մեղքն ձեր ։

Յայնժամ լցան ամենեքին ցասմամբ վս̃ բանիցս այսոցիկ, և գրգռեցին զհայր նորա՝ զի կորուսցէ զնա. իսկ ծառայքն իբրև տեսին զաղմուկն, թողին զն̃րն՝ զի փախիցէ ։ Յայնժամ յարուցեալ զեւ հայր նր̃՝ լի գազանութբ̃ և դառնացեալ սրտի̂, էառ զդանակն 'ի սեղանոյն, և ընթացաւ զհետ նորա. և մանուկն երթայր առաջի նր̃ արագ արագ, դէմ եդեալ գնալ մինչև 'ի ջրհորն՝ ուր մկրտեցաւ. և էր ը̃ երեկս ։ Եւ մինչդեռ հեռագոյն էր հայր նր̃, դարձաւ մանուկն և աղաղակեաց առ հայրն՝ ասելով. ո՜վ գազան արիւնարբու՝ պահեա՛ զշաբաթ քո, դարձո՛ զսուր քո 'ի տեղի իւր. եթէ աշակերտ ես մովսեսի, մի՛ լինիր օրինազանց. ապա եթէ քրիստոնեայ իբրև զիս, մի՛ շաղախեր զձեռն քո յարեան ծառայիս քոյ. ո՛չ եթէ վ՟ սպանման իմոյ ասեմ զայս, այլ զի մի՛ լինիցիս դու որդի գեհենի։ Իսկ յորժամ լսէր հայր նորա զայս ամ՟, առաւել ևս զայրանայր, և կրճտէր զատամունս իւր ՚ի վ՟ն նր՟։

Իսկ ս՟բն կանխագոյն հասեալ ՚ի տեղին՝ ուր մկրտեցաւ, ծունր կրկնեաց լալով և աղօթեաց ասելով. Ո՛վ ք՟ս, յոր հաւատացի, ընկա՛լ զիս ՚ի թիւ մկրտելոցն յանուն քո ս՟բ. և ՚ի վ՟ն ջրհորոյս այսորիկ բա՛ց ինձ դուռն՝ մտանել առ վկայսն քո, և խառնիլ ՚ի դասս նահատակաց քոց. ահա մատուցանեմ քեզ զարիւնս իմ պատարագ ս՟բ, զի եղիցի հաճոյ ա՟ծութե՟ քում ՚ի հոտ անուշից. և ՚ի թիւ ընկերացն իմոց՝ զոր ցուցեր ինձ, զի փառաբանեցին զքեզ, արժանաւորեա՛ և զիս՝ փառաւորել զքեզ, և մտանել առաջի սեղանոյ ա՟յ իմոյ, որ ուրախ առնես զմանկութիւն իմ. խոստովան եղէց քեզ օրհնութ՟բ ա՟ծ ա՟ծ իմ։ Իսկ թշո՛ւառական հօր իմոյ մի՛ համարիր զայս մեղս. զի ո՛չ գիտէ՝ զի՞նչ գործէ. և մօրն իմոյ պարգևեսցես չարչարակից լինել ինձ ոգւով, և պսակակից հատուցմանց քոց. և ո՛յք կատարեն զյիշատակ իմ, և յիշեն զիս ՚ի նեղութ՟ե, լո՛ւր և ողորմեա՛, և օգնեա՛ նց՟ ՚ի կարիս հոգւոյ և մարմնոյ։ Ահա զխորհուրդս սրտի իմոյ և զարիւն իմ մատուցից քեզ պատարագ, փոխանակ զի անուանեցեր զիս եղբայր քեզ, և հաներ զիս ՚ի գբոյն տղմոյ, և ցուցեր ինձ զճշմարտութի՟ քո. և արարեր զիս քարոզ անուանդ քո, և ոչ դար-

ձեչեցար 'ի հայրենի պղծութ՟է իմմէ ․ ահա ո՟պ գառն 'ի սպանդ մատուցեալ եմ ես, և վ՟ն քո յօժարամիտ տամ զպարանոց իմ ը՟դէմ սրոյ, եղեալ օտար յեղբարց իմոց, և հեռացեալ յորդւոց մօր իմոյ ։

Եւ արդ՝ ո՞ւր էք եղբա՛րք իմ սիրելիք՝ հարազատք ը՟ հոգւոյ՝ եղբայրակցութ՟ն ք՟սի ․ եկա՛յք տեսէ՛ք զպատերազմն իմ՝ փոխանակ քարոզութ՟ես ձերոյ ․ եկա՛յք ուրա՛խ լերուք ը՟ պտուղ վ՟դպութ՟ե ձերոյ ․ ահա այժմ արդեամբք կատարեմ զճանապարհս իմ՝ զոր հորդեցիք ինձ ․ եկա՛յք զուա՛րճակի՛ց ինձ եղերուք յաւուր փեսայութ՟ե իմոյ ․ և ուրախացուք 'ի գլխման արեանս իմոյ՝ որ հեղու 'ի վ՟ն ս՟բ անուա՛նն ք՟սի ։ Ընկերակի՛ցք իմ և սննդակի՛ցք, ո՞վ թաքոյց 'ի ձէնջ զօր պսակման իմոյ ․ ա՛յս է ժամանակ յայտնի լինելոյ սիրելեաց՝ միմեանց, և որք ճանաչէնն զեղբայրս ․ ո՞վ ցուցցէ ձեզ զհեղումն արեանս իմոյ, և նահատակակիցս առնիցէ ճգնու՟ես ։ Ողջ լերուք այժմ, և աղօթեցէ՛ք արժանի լինել ինձ տեսանել զձեզ յառագաստի թ՟գւորին ։ Ողջ լեր մա՛յր իմ՝ որ ծնար զիս, և 'ի գիրկս քո կրեցեր զիս ։ Ողջ լերուք եղբա՛րք իմ՝ որդիք մօր իմոյ ․ երանի՛ թէ յարգանդէն կենաց լեալ էիք եղբարք ինձ ։

Եւ մինչ ս՟բն զայս ա՟մ խօսէր, յանժամ գազանաբար յարձակեալ հայրն 'ի վ՟ր ն՟ր, և խոնարհեցուցեալ զս՟բյն զգլուխն 'ի վ՟ր վիմին՝ որ կայր յափն ջրհորոյն, խողխողեաց զնա, և եհեղ զարիւնն 'ի վ՟ր վիմին ։ Եւ ս՟բ մանուկն ո՟չ զգառն անարատ թաւալեալ ընդ արիւն անձին իւրոյ՝ ասէր 'ի ժամ աւանդման հոգւոյն, տ՟ր իմ յ՟ս ք՟ս 'ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։ Իսկ հայրն որդեսպան յետ վախճանելոյ ս՟բյ զաւակին գնացեալ 'ի տուն իւր՝ յիմարեալ մտօք աւետիս տայր մօրն և եղբարցն վ՟ն մահուանն ասերայ. և ցուցանէր ն՟ց զսուրն թաթաւեալ յարեան ս՟բյն. զոր իբրև լուան և տեսին, կոծ մեծ արարին 'ի վ՟ր ն՟ր։

Իսկ մայրն թէպէտև դառնացեալ էր սգով 'ի վ՟ր մահուան սիրելի զաւակին իւրոյ, սակայն քաջալերեալ մխիթարէր զկինքն բանիւքն՝ զորս լուեալ էր յորդւոյն իւրմէ. և խորհէր ժամ գտանել, զի հաւատասցէ և մկրտեսցի 'ի ք՟ս, և յուսայր հաւատով ս՟բյն արժանի լինել տեսլեանն՝ որ երևեցաւ. ո՟չ և եղև իսկ. զի յետ սակաւ աւուրց շինեցաւ 'ի քրիստոնէից վկայարան 'ի վերայ ս՟բյն. և մկրտեցաւ մայրն 'ի ծածուկ առ գերեզմանի որդւոյն իւրոյ։

Ր.ԺԼ յառաջ քան զայս ա՟մ՝ յետ կատարման ս՟բյն աբդլմեհի 'ի վաղիճ անդր իբրև եկին հովուակիցք ն՟ր մանկունք ե՟ սովորութե՟ 'ի տեղին յայն, ոչ գիտելով զեղեալսն, տեսեն զմարմին ս՟բյն թաթաւեալ յարեան, համբարձին զձայնս իւրեանց, և լային դառնապէս. և պատառեալ զհանդերձս՝ ծեծէին զերեսս իւրեանց, և 'ի ձայն ողորմ կողկողելով ասէին. Ո՛մնք դառն քո՟ի՝ ո՟վ նախանձեցաւ ե՟ գեղեցկութի՟ քո, կամ ո՟վ

աապականեաց զպայծառութ՟ի գեղոյ քո. ո՛վ շաղախեաց զձեռն իւր յարիւն քո եղբա՛յր մեր, և կ՟մ ո՛վ զրկեաց զմեզ յեղբայրութ՟է քումմէ։ Ո՛վ ծնունդ քարոզութ՟ե մերոյ, և ծաղիկ ցանկալի ուսման մերոյ, պատարագ կանխեալ ձեռամբ մերով։ Արդ՝ ճշմարտու՟ե գիտեմք, զի հաճեցաւ տ՟ր ը՟ պատկերդ քո, որ եհան զքեզ ՚ի գբոյ տղմոյն, ո՟չ պատմեցեր մեզ, և վերացոյց ՚ի դասս երջանկաց. ահա անդ եղբարք բ՟զմ են քո, զորս դուն տեսեր. և այժմ մեք անջատեալ մնացաք ՚ի քաղցր տեսոյ քումմէ, և զրկեալ են լսելիք մեր ՚ի լսելոյ զքաղցրաբարբառ բանս քո։ Աւա՛յ քն՟ի աբդլմսեհ և վկայ ճշմարիտ՝ աղաչեա՛ վասն մեր զնա, առ որ այժմ դու մերձ ես, արժանաւորիլ տեսլեան քում՝ ՚ի վերինդ Եդեմ, և ցնծալ ը՟ քեզ ՚ի տեսանել զքեզ խառնեալ ՚ի դունդս նահատակաց, և ը՟ առաջ ելանել գալստեան փրկչին ա՟մ պատրաստութ՟բ և յաղթական պսակօք։ Բազում և այլ այսպիսի բանիւք լային և կոծէին զնա. ապա առեալ իւրաքանչիւր ըզցուպ իւր՝ բրեցին զերկիր, և թաղեցին ըզմարմին երանելւոյն. և ժողովեալ զհողն արիւնախառն՝ արկին ՚ի գերեզմանն. և հառաչմամբ հայէին ը՟ երկինս, և ասէին. արդ համարձակեալ վստահացաք ք՟ո կարդալ առ քեզ. լո՛ւր այժմ և կատարեա՛ ՚ի վերայ թաղման ս՟բյս զօրհնութ՟իս՝ որ լինին ՚ի վերայ հրաւիրելոց ՚ի ձեռն քահանայից. Եւ եղեալ կափարիչ զվէմն՝ յորոյ վ՟ր զենաւ ծառայն ք̃ի, գնացին տրտմագին 'ի տեղւոջէ անտի. և իբրև չոքան 'ի տունս իւրեանց, ոչ ոք 'ի նոցանէ իշխեաց պատմել ումեք զեղելոյն. զի մի ասիցեն՝ թէ դուք եղէք պատճառ մահու նորա. այլ ինքեանք օր ը̃ օրէ գային 'ի հանգիստ ս̃բյն, և լային ողբով մեծաւ:

Իսկ յետ սակաւ աւուրց գային անցաւոր վաճառականք հանդերձ ուղտուք իւրեանց, և երթային յարևելից յարևմուտս կոյս. և 'ի գիշերի հասեալ մօտ 'ի դիրս հանգստի ս̃բյն՝ տեսանէին, զի հուր վառե̃լ կայր 'ի վ̃ր գերեզմանի ս̃բյն, և լուսաւորէր զամենայն վայրսն: Յայնժամ ոմանք 'ի նոցանէ՝ որք քրիստոնեայքն էին, խոստովանեցան տեսանել զմեծ սքանչելիսն. և եկե̃լ 'ի գերեզմանն անդր՝ տեսանէին, զի 'ի ներքոյ կափարիչ վիմին երանէր լոյս սաստիկ որպէս զճառագայթս արեգական. և հոտ անոյշ բուրէր 'ի տեղւոջէ անտի առաւել քան զա̃մ խունկս անուշունս. ը̃ որ սքանչացեալ զարմանային յոյժ յոյժ:

Եւ 'ի միտս եկեալ՝ ասեն. զանձ մեծ է այս, և անշուշտ ո̃մն 'ի ս̃բց վկայից. և ոչ յայտնեցաւ բնակչաց տեղւոյս այսորիկ. եկա՛յք առցո՛ւք զդա, և տարցո՛ւք յշ̃ն մեր, և ստասցուք շահս հոգևորս 'ի ք̃ս. քանզի նա առաջնորդեաց մեզ 'ի տեղիս յայս, և կամեցաւ շահաւէտ առնել զմեզ պատուական ոսկերօք վկայիս: Յայնժամ 'ի բաց առարին զվէմն և զհողն, և հանեալ զմարմին ս՟բյն արիւնաթաթախ, և տեսեալ զմանկագոյն տիսն, գիտացին՝ եթէ առ ժամայն է կատարեալ նահատակն. և սփռեալ հանդերձս պատուականս՝ պատեցին զնա. և առեալ գնացին առ ընկերս իւրեանց, աւետիս տալով՝ եթէ գանձ մեծ գտաք յաւուրս յայսմիկ. և առ խնդութե՛նն ո՛չ հետևէին 'ի տեղիսն՝ յոր երթալոց էին, այլ՝ դարձան յ՟ն իւրեանց :

Ա.յր ոմն էր 'ի նոցանէ՝ հաւատացեալ, յոյժ մեծատուն բազում ստացուածովք, և անուն նր՟ Նսլթեր կմ՟ եսլթայոս. և կին նորա ամուլ էր. սա ուխտեաց յայտնապէս առաջի ընկերացն իւրոց, և ասէ. եթէ տացէ ինձ ա՟ծ աղօթիւք ս՟բյս այսորիկ զաւակ արու, և մխիթարեսցէ զիս և զամուսինն իմ, շինեցից սմա տուն աղօթից յընչից իմոց, և պատուեցից 'ի նմա զոսկերս սորա զա՟մ աւուրս կենաց իմոց. և զարդարեցից ա՟մ երևելի սպասուք՝ որ ինչ պէտս է նմա. և զինքս զո՟բս արարից ինձ որդի և ժառանգորդ փոխանակ ծննդոց իմոց. և յորժամ ստուգեցից վ՟ն անուան սորա, անուանեցից զվկայարանն 'ի յիշատակ անուան իւրոյ. և կոչեցից զորդին իմ, զոր տացէ ինձ ա՟ծ 'ի ձեռն աղօթից ս՟բյս յանուն դորա. և եղիցի ս՟բդ ինձ որդի, և ես եղէց աշակերտ և ծառայ դորա. և հանցէ ք՟ն ինձ ը՟ դմա մասն յանանցական ծ՟ին :

Ա.րդ յորժամ հասին յ՟ն իւրեանց, առեալ այրն զմարմին ս՟բյ վկային՝ եդ 'ի տան իւրում րումն մեծաւ պատուո՛վ. և ցուցեալ ընտանեաց իւրոց՝ պատմեաց զուխտն, զոր արար առաջի ա՟յ յանուն ն՟րյն. և եբաց ա՟ծ զարգանդ կնոջ ն՟ր, և յղացաւ. և եղև ուրախութ՟ի մեծ ՚ի տան նորա : Յայնժամ այրն հաւատացեալ փութացաւ վկայարան շինել ն՟րյն. և վաղվաղակի կատարեաց, և զարդարեաց պէսպէս սպասուք. և կանխե՟լ ինքն և ընտանիք իւր անդ՝ յաղօթս կային, և աղաչէին զա՟ծ, զի շնորհեսցէ զկատարումն խնդրոյ իւրեանց, և գիտացեն զանունն նահատակին ք՟սի :

Իսկ մանկունքն ընկերք ն՟րյն՝ յորժամ եկին ը՟ստ սովորութ՟են ՚ի գերեզմանն ն՟ր ողբալ, տեսին զվէմն թաւալեալ, և զգերեզմանն ունայն ՚ի մարմնոյն. բայց միայն հողն կայր արիւնախառն, և հոտ անոյշ բուրէր ՚ի տեղւոջէն. հիացան երկիւղի՛ մեծաւ առհասարակ, և մեծաբարբառ հառաչէին. ոմն ասէր, թէ գազան յափշտակեաց. այլ ոմն՝ թէ ծնօղք իւր եկեալ բարձին զնա. այլք թէ քրիստոնեայք գողացան. և ոչ կարէին կալ ՚ի վ՟ր իրացն. և սքանչացեալք գնացին ՚ի տունս իւրեանց, և պատմեցին զա՟մ եղեալսն՝ ՚ի մկրտութ՟է անտի աբդլմեհի մինչև ՚ի թաղումն. այլ այժմ մարմին նորա չէ՛ ասեն ՚ի միջի : Իսկ զի կանխեալ էր յառաջագոյն համբաւ ՚ի քաղաքին, եթէ զևի սպան զորդի իւր զասեր, յայտնի եղև նահատակութ՟ի ն՟ր մանկանն :

Յայնժամ յարեան հաւատացեալքն՝ որք

ծնօղք էին մանկանցն հովուեաց , և այլք բազումք ընդ նմա , և գնացին ջերմեռանդն հաւատով 'ի տեղի կատարման սրբոյն . և գըտին զվէմն ներկեալ արեամբ նորա , և զգերեզմանն թափուր 'ի մարմնոյ : Եւ տեսեալ հետս կարաւանի այն ինչ անցելոյ առ տեղեաւն՝ գուշակէին , եթէ անցաւորք բարձին . այլ թէ յո՞ տարան՝ ոչ գիտէին . ասեն . արդարև զանձ մեծ հեռացաւ յաշխարհէս մերմէ : Եւ ինքեանք փութացեալ շինեցին մատուռն փոքր 'ի վերայ գերեզմանի նահատակին , և եդին զվէմն զայն 'ի մէջ վկայարանին . և զնշան տէրունական խաչին 'ի վերայ վիմին կանգնեցին , և գրեցին 'ի նմա , թէ այս տեղի է կատարման վկային Քրիստոսի սրբոյն աբդըլմսեհի : Եւ այնուհետև ընթանային հաւատացեալք աշխարհին այնորիկ 'ի կողմանց կողմանց 'ի վկայարան անդր սրբոյն , և բժշկէին յախտից իւրեանց . և փառեցաւ համբաւ սքանչելեացն՝ զոր առնէր Աստուած 'ի ձեռն սրբոյն , ընդ ամենայն աշխարհն արևելից :

Եւ 'ի գալ միւս տարւոյն եկեալ վաճառականացն այնոցիկ ընդ նոյն ճանապարհ առ գերեզմանաւ սրբոյն , և տեսեալ անդ մատուռն կանգնեալ , հարցին և գիտակ եղեն կատարման սրբոյն և անուան նորա . և ինքեանք պատմէին՝ թէ որպէս բարձին ըզմարմինն և տարան յաշխարհն իւրեանց : Իբրև լըւան զայս սպասաւորք մատրանն , աղաչեցին զբարեպաշտ վաճառականն՝ որ առ իւր ունէր զպատուական գանձն յիւրում վկայարանի, գէթ մասն մի շնորհել նց՟ 'ի նշխարաց ս՟բյն 'ի պատիւ և այս վկայարանիս՝ որ 'ի տեղւոջ կատարմանն. և նա կատարեաց զխնդիր նց՟ 'ի դառնալ իւրում 'ի տուն իւր: Որ և եգիտ զկին իւր ծնեալ զաւակ արու գեղեցկատեսակ և զուարթ երեսօք. և առեալ զորդին՝ ետ մկրտել 'ի վկայարանի նշխարաց ս՟բյն. և անուանեաց զանուն նր՟ աբդլմսեհ առ 'ի յիշատակ ս՟բյն. և արար ուրախութի մեծ յաւուր յայնմիկ ա՟մ ժողովրդեանն:

Յայնժամ պատմեաց և կինն առն իւրում, թէ յետ մեկնելոյ քո աստի երևեցաւ ինձ ա՟րն ա՟յ 'ի տեսլեան, և ասէ ցիս. ահա ծնցիս որդի ը՟ նմանութե՟ կերպարանաց իմոց, և կոչեսցես զնա յանուն իմ: Եւ ես ասեմ. իսկ ո՞վ ես դու տ՟ր իմ, որ կոչեցից յանուն քո զորդին իմ: Սբ՟ն ասէ. յորժամ դառնայ այրն քո 'ի Ճանապարհէն, և գայ խաղաղութ՟բ յաշ՟է անտի՝ ուր եսն եմ սնեալ, նա պատմեսցէ զանուն իմ. և կատարեցաւ ա՟մն ը՟ բանի ս՟բյն: Եւ եղև այս ա՟մ յուրախութ՟ի ա՟մ հաւատացելոց արևելեան կողմանցն. և անուն ս՟բյն հռչակեցաւ ը՟ ա՟մ աշ՟ն պարսից և ասորեստանեայց և միջագետաց և հայոց. և սքանչելիք նր՟ քարոզեալ լինէր առ ամենեսին. և պանծալի Ճգնութ՟ի վկայութ՟ե նորա լսելի լինէր յա՟մ բերանոյ առաւել քան զյաղթողական հանդէս զօրավարաց և թ՟գրաց. և ա՟մ քրիստոնեայք պարծէին նովաւ առաջի հրէից և հեթանոսաց:

Իսկ զնա հայր նր̅ 'ի ծերութե̅ ժամանակին տագնապէր 'ի դիմաց . և 'ի միում աւուր ըկեալ յոյժ՝ զարկոյց զնա զգետնի . և իբրև յոգիս ապաստան եղև՝ գոչէր զնա ողորմագին , և ասէր . որդեա՛կ իմ ասէր՝ մի՛ ը̅ր արժանեաց իմոց ընկալայց հատուցումն 'ի քէն : Զայն լուեալ որդւոց նր̅՝ բարձին աւժամայն զհայրն իւրեանց , և ածեալ 'ի մատուռն սբ̅յն՝ կապեցին առ վիմին , որ ներկեալ էր արեամբ ծառային քն̅ի . և անդէն փութապէս ընկալաւ զբժշկութի̅ . և հաւատաց 'ի քն̅ և 'ի ծառայ նորա , և մկրտեցաւ ամ̅ տամբ իւրով յաւազանի անդ ջրհորոյն՝ ուր մկրտեալ իսկ էր և ինքն աբդլմսեհ : Եւ այսպէս որսայր սբ̅ վկայն զամենեսեան 'ի քն̅ . քանզի և այլք բազումք 'ի հրէից և 'ի մոգուց գային առ սբ̅ն հաւատով, և ընդունէին զառողջութի̅ հոգւոյ և մարմնոյ :

Եւ այնչափ մեծացաւ անուն սբ̅յն , զի և հագարացիք՝ որք յետ սակաւուց զօրացան յարևելս , պատիւ մեծ առնէին ծառային քն̅ի , և ուխտս դնէին յանուն նր̅ : Որպէս զմիոյ 'ի նոցանէ՝ որ էր 'ի տաճկաց մեծագունից , պատմի՝ թէ կորուսեալ երբեմն զերամակս հազարաւոր ուղտուց իւրոց յահագին անապատին , և անկարացեալ գտանել՝ ուխտեաց ասելով . ծառայ քն̅ի և վկայ սբ̅՝ եթէ դարձուսցես յիս զկորուստն իմ, մի 'ի տասանց տաց քեզ տասանորդս . և յորժամ դարձաւ այրն 'ի տուն իւր , ահա ուղտք նր̅ հանդերձ կողմամբքն հասեալ կային առ դուրս . և ոչ կորեաւ ՚ի նմ̃է և մի։ Եւ յորժամ թուեաց զն̃ս, ուրախ եղև յոյժ. և անդէն սորջացաւ ը̃ խոստումն իւր. զի ՚ի տասանորդելն՝ ունէր բաղում ուղտս հանել յընծայ սբ̃յն. այլ ասէ, բաւական է սբ̃յն տասն ուղտ միայն. զի ոչ աշխատեցաւ ՚ի ժողովելն, և ո՛չ ինչս ծախեաց վ̃ն ն̃ց։

Ասեն ցնա բարեկամքն իւր. ո՛չ այդպէս ո՛վ մեծդ, այլ զոր խոստացար՝ հատո՛ նմա. զուցէ այլ ինչ պատահիցէ քեզ, և կարդացես, և ոչ օգնեսցէ քեզ. բայց նա ոչ լուաւ ն̃ց. այլ միայն տասն ուղտ առաքեաց ՚ի վկայարան սբ̃յն՝ որ ՚ի շիգար քաղաքի։ Եւ եղև յետ ոչ բաղում աւուրց ՚ի հանել զուղտսն ա̃մ յարօտ, ն̃ք ը̃ երանելն ՚ի դաշտ՝ առժամայն ցրուեցան, վարելով և զծառայսն՝ որ հեծեալ էին ՚ի ն̃ս. և հետք ն̃ց ոչ ևս ուրեք յայտնեցան։ Եւ լուեալ առնն զկորուստ ուղտուցն և զծառայից, զգեցաւ զամօթ. և սկսաւ աղաչել զբարեկամսն՝ երթալ առ սբ̃ն և երաշխաւոր լինել վ̃ն կատարման ուխտին։ Իբրև մերձ եղեն ն̃ք ՚ի շիգար, տեսին ՚ի հեռաստանէ՝ զի ուղտերամակքն ամենայն գունդագունդ հաւաքեալ գային ՚ի վկայարան սբ̃յն։

Յայնժամ զահի հարեալ և սքանչացեալ՝ ասեն ցսպասաւորս վկայարանին. արդարև մեծ և զօրաւոր է նահատակս այս. փոխանակ զի ստեաց իշխանն ուխտի ն̃ր, ահաւասիկ զա̃մ ուղտսն առ ինքն ամփոփեաց. և արդ աղաչեցէք, զի առցէ զիւրն ը̃ առաջինն խոստմանն, և թողցէ զմերն՝ գալ զկնի մեր. և որոշեցին և ետուն տասանորդս յամէ . և 'ի ծառայիցն թողլին արածել զուղտսն . և ապա կարդալով զանուն սբյն՝ ասեն . ով տր ծառայ քսի և քաջ նահատակ, առ զքոյդ, և արձակեա՛ զմերն զհետ մեր . և այնմ դարձուցեն զմնացելոց ուղտուցն զերեսս իւրեանց՝ երթալին զկնի նց ։ Բազում և այլ սքանչելիս առնէր տր 'ի ձեռն սբյն աբդլմսեհի, և փառաւորէր 'ի նմա տր անունն քսի 'ի մէջ հաւատացելոց և առաջի անհաւատից . և յիշատակ տօնախմբութե նր կատարի 'ի մէջ արևելեայց յաւուրց անտի նր մինչև ցայժմ՝ 'ի փառս քսի այ մերոյ ։

* * *

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Զերիս օրինակս պատմութե սբյս ունիմք առ մեզ . առաջինն՝ ընդարձակագոյն և կարգաւորագոյն 'ի Ճառընտ . Բ . զոր և մեք օրինակեցաք դոյզն պարզաբանութբ ։ Երկրորդն 'ի Ճառընտ . Գ . փոքր մի համառօտ քան զառաջինն, իբր քաղեալ 'ի նմանէ, յաւելել պարզութի ոճոյ վերածելով ։ Եւ երրորդն 'ի Հ . որ է կարճառօտ բովանդակութի բանիցն Ճառընտրաց ։ Առ յոյնս և առ լատինս ոչ գտանեմք զյիշատակ սբյս . բայց կայ առ արևելեան ազինս . ըստ որոյ և սիմոն ասսեմանի յարևելեան մատենադարանի իւրում . հատ . Գ . Երես . 285 . 'ի կարգի արաբացի գրոց նշանակէ զայս ինչ . * Ասեր որդի զևեայ, որ 'ի հրէական աւելապաշտութե 'ի քրիստոնեական հաւատս եկեալ՝ Աբդալմեսիխ
,, անուն ընկալաւ . (վկայաբանութի նր կայ)'ի ձեռագիրն արաբ . վատիկան . 55 ||: Եւ յայտ է թէ յայնպիսի արևելեան բարբառոյ թարգմանեալ է և մերս վկայաբանութի 'ի վաղ ժամանակաց ։ Իսկ դրութի ան-

ուան սբյս 'ի տօնացոյցն մեր երևի լինել 'ի ձեռն մեծին մովսէսի կթղկսի յաւուրս նորոգութն յաբեթական տոմարի. զի այն ինչ լեալ էր նահատակութիւն աբդլմսեհի, և հանդիսացեալ սքանչելիք նր ը ամ արևելս. որպս և պարսիկ վկայք ժամանակին՝ գրիգոր ռաժիկ, և յիզտիբուզտ ածատուր՝ 'ի ձեռն նորին մովսեսի եդան 'ի տօնացուցի :

Կարօտիմք ստուգել զորոշ տարի կատարման սբյն աբդլմսեհի, որ վրիպակ գրչութբ իմիք խրթնացեալ տեսանի 'ի Ճառընտիրն Բ, այսպէս. * Յամին չորրորդի
,, առաջներորդի Թուականին հայոց, մինչև խապաւնը-
,, ուայեալ էր մոգութն իշխանութեանն պարսից, և
,, հրէայք համարձակագոյն էին 'ի չէգարացւոց Ցին.
,, Այր ոմն էր հրէայ 'ի չէգար քաղաքէ . . . զևի || . ևն :



ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ

Սրբոյն Անդրէի զօրավարին , և բանակի նորին ։

Հ. Յ. Լ. օգոստ. 19 ։ Ճառընտ. Ի. յծէ=յկէ ։
Բոլլանդեանն պինիոս . 'ի Գ . հատ . օգոստ . էջ .
720=726 ։ Սէպատէր . ատ սուրբոսն ։ Բարոնեոս
յամ . 301 . Թւ ։ (1)

ՄԵԾ ԵՒ ՀՌՉԱԿԱՒՈՐ վկայն ք͞սի ս͞բն անդրէաս զօրավար , կամ ստրատելատ ը͞ս յունականին , էր մի 'ի զօրագլխաց կայսերական գնդի եղելոյ յերկրին ասորւոց ը͞ն ձեռամբ անտիոքայ արևելեան սպարապետի , յաւուրս անօրէն թագաւորացն դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի . որոց սադրեալ 'ի դիւէն՝ 'ի ձեռն անձն հրամանաց ջանային շիջուցանել զլապտեր հաւատոյ , և բառնալ զպաշտօն քրիստոնէութեան , յորդորելով և ստիպելով զա͞մ հաւատացեալս՝ և նախ զզօրականացն դասս , 'ի խաւարային պաշտամունս կռոցն ։

Արդ՝ յայնպիսի դառնութեան ժամանակի երիցս երանեալ քաջ նահատակն անդրէաս փայլէր իբրև զվարդ 'ի մէջ փշոց , և երևելի լի-

լինէր կրկնակի զինուորութե՟բ ը՟ս մարմնոյ և ը՟ս հոգւոյ . վ՟ն զի էր քաջայաղթ 'ի մարտս պատերազմի առաքինի արութե՟բ ը՟դէմ բարբարոսաց , մինչև անուանի լինել քան զանուանիսն 'ի զօրագլուխս . և միանգամայն փայլէր բարեպաշտութե՟բ ք՟նական հաւատովն . և այն' չև ևս մկրտեալ . զի կամ 'ի զինուորութե՟ն հաւատոց , և մնայր դիպող ժամու առ ընդունել զկնիքն ն՟բ , և կէ՟մ ը՟ս սովորու՟ե ոմանց ոմանց 'ի ժամանակին' 'ի վերջին աւուրս խորհէր մկրտիլ : Այլ քանզի բոլորով սրտիւ հաւատացեալ էր յ՟ած կենդանի , և ամրացեալ ա՟ծային յուսով , ոչ միայն զանձն իւր հաստատուն պահէր 'ի ք՟ս , այլ և զինուորաց' որ ընդ ձեռամբ իւրով էին , առանձինն քարոզէր զաւետարանական բանն , և ձգէր 'ի հաւատս ճշմարտութե՟ն :

Իսկ սպարապետն անտիոքոս' այր կռամոլ և դժնդակ բռնաւոր , քանզի ինչ ոչ գիտէր զհաւատոցն անդրէի , հայեցեալ 'ի գործս քաջութե՟ն ն՟ր և 'ի հաւատարիմ ծառայութի՟ յիրս արքունի , սիրէր զնա առաւել քան ըզբազումս . սոյնպէս և այլք 'ի մեծամեծաց և 'ի գործակալաց մեծարէին զնա ը՟ս կարգի իւրեանց մոլար օրինացն :

Եւ եղև յաւուրսն յայնոսիկ յարեան թշնամիք հակառակ թագաւորութե՟ն հռովմայեցւոց 'ի կողմանս արևելից , այս է պարսից . և ստուար գունդ մի 'ի ն՟ցէ դիմեաց մօտ 'ի սահմանս ասորւոց . ուստի անկաւ երկիւղ մեծ 'ի վ՟ր բնակչաց երկրին , և էին 'ի տագ-

նապ

նայ մեծ : Յայնժամ ասէ Անտիոքոս զզօրավարն իւր Անդրէաս · արութեան և քաջութեան անուն քո ամենայն ուրեք քարոզեալ է · զի վանումն ամենայն պատերազմաց 'ի ձեռն քո ծանուցաւ ամենայն մարդկան , վասն որոյ և յայդպիսի պատիւ վերամբարձար · և այժմ առաւել ցուցցես զքաջութիւն յաղթութեան քո յայսմ պատերազմի , զի առաւել պատուեսցիս : Ապա այրն Անդրէաս յուսացեալ յԱստուած՝ որ խորտակէն ըզպատերազմունս , կամակար յանձին կալաւ զհրաման իշխանին , և ընտրեալ իւր արս հինգ հարիւր իննսուն և ինն , զորոց գիտէր զլաւութիւն , դէմ եդեալ խաղաց գնաց ընդառաջ թշնամեացն 'ի հանդիպումն մեծի պատերազմին : (2)

Եւ տեսեալ զբազմութիւն հակառակամարտիցն՝ յորոց զանգիտել սկսան իւրքն սակաւթուով , քաջալերեցաւ յանձն իւր՝ մարտակից ունելով զԱստուած · խօսել սկսաւ ընդ զօրս իւր , և ասէ · Եղբարք այժմ է ժամանակ աստուածածանութեան՝ դառնալ 'ի մոլորութենէ կռոցն , և հաւատալ յԱստուած երկնի և երկրի , յորոյ 'ի ձեռն է ամենայն յաղթութիւն , և 'ի վերին օգնականութենէ բարձրելոյն հայցել զփրկութիւն անձանց մերոց · քանզի նա է Աստուած կենդանի և կենդանարար , արարիչ ամենայնի և անյաղթելի թագաւոր , և օգնական լինի ամենեցուն՝ որ կարդան առ նա , և փրկէ յամենայն նեղութենէց : Արդ այսուհետև հաւատացէք յամենասուրբ երրորդութիւն՝ 'ի հայր և յորդի և 'ի սուրբ հոգին · և այնպէս միջամուխ լիցուք 'ի պատե-

րազմն. և գիտեմ վստահութբ 'ի մարդասիրութն այն իմոյ, զի գթասցի իբրև յիւր հաւատացեալ ժողովուրդ. և զօրավիգն լինելով մեզ՝ մատնեսցէ զթշնամիսն 'ի ձեռս մեր, և հալածական արասցէ զբանակ նց առաջի մեր. զի կոխեսցուք զնս ոպ կաւ գուեհից՝ ըստ
մարգարէական բանին:

Զայս լուեալ զօրացն յառաջինն զօրավարէն իւրեանց՝ բոլորով սրտիւ ընկալան զբանս նր. քանզի ծագեաց 'ի նս լոյս ածգիտութեան, և լուսաւորեցան միտք նոցա. և անդէն 'ի տեղւոջն ոպ 'ի միջէ բերանոյ աղաղակեցին, և ասեն. հաւատամք և մեք՝ ոպ միշտն քարոզէիր, 'ի հայր ամենակալ և յորդին միածին և 'ի սբ հոգին՝ 'ի մի ած. որ փառօք և զօրութբ և իշխանութբ օրհնեալ գովի և փառաւորի յերկնաւորաց և յերկրաւորաց. և օգնական լինի հաւատացելոց իւրոց. նր զօրութբն աներկբայ յաղթեսցուք
թշնամեաց:

Եւ այնպէս առհասարակ զինեալք հաւատովք, և յոյժ ապաւինեալք՝ զօրացան յանձինս իւրեանց. և քաջալերեալ զմիմեանս՝ այր զարամբ եղանէին յարձակիլ 'ի վր հակառակորդաց: Եւ իբրև խմբեցաւ պատերազմն, ետ տր յաղթութի մեծ յաւուր յայնմիկ մեծին անդրէի և իւրոց հաւատացեալ զօրականացն. զի զամ զօրս թշնամեացն վանեալ խորտակեցին. զբազումս 'ի նոցանէ սպանին, և զմնացեալսն ցրուեալ յիւրաքանչիւր տեղիս փախստական վարէին. և ինքեանք ողջանդամ դարձ առնէին 'ի տեղի Ճակատուն յաջողեալք և բարձրացեալք ձեռամբ հզօրին այ, որ յամօթ արար զմարտուցեալսն ըդդէմ սբ բանակին, և փառաւորեաց զյուսացեալսն 'ի նա 'ի փառս անուան իւրոյ ։

Եւ յետ յաղթութեն ասէ սբն անդրէաս ցհաւատացեալ զօրսն իւր • տեսի՞ք զմեծամեծս այ, ո՞րպէս արար փրկութի այսօր • այսուհետև հաստատուն կացէք 'ի տր, զի արժանաւորք լիցուք յաւիտենական երանութեցն՝ որ պահին 'ի նա հաւատացելոց ։ Իսկ բանսարկուն մախացեալ ը յաջողութի բանից և գործոց ծառային այ անդրէի՝ մեքենայէր չարաչար խարդաւանել զնա • վսյ կերպարանեալ զինքն 'ի հրեշտակ լուսոյ՝ եկաց յեղակարծ առաջի սբյն անդրէի, և սկսաւ բանս առ նա խօսել հաւանելիս՝ որպէս թէ յերկնից եկեալ ։ Իսկ նա իմացեալ շնորհօքն քսի՝ ասէ • ո՛վ բարիատեաց և ամ ճշմարտութե թշնամի՝ ո՛չ դադարես 'ի խորամանկութէ, որ վն այդորիկ յերկնայնոց դասուցն անկար 'ի վիհ կորստեան ։ Յայնժամ զամօթի հարեալ բանսարկուին 'ի կշտամբութէ առն այ՝ ասէ • ո՛չ կացից յետս փորձել զքեզ մինչև ցգլխաճան ։ Իսկ սբն անդրէաս սաստեաց նմա, և ասէ • դարձցիս յետս քսի զօրութբն ։ (3)

Յետ այսորիկ չու արար առաքինի զօրավարն անդրէաս զօրօք իւրովք դառնալ առ մեծ սպարապետն անտիոքոս • և 'ի ճանա-

պարհի՝ Է օր և անցանէին, զյաղթուն գովութին՝ Քսի ընծայէին: Եւ լուեալ Անտիոքայ յարանց ումանց չարաց գրգռեալ 'ի սատանայէ, թէ Քսի տան զփառս յաղթութեն զչարեցաւ յոյժ (4). սակայն զչարութի խորհրդոց իւրոց 'ի սրտի իւրում պահեալ՝ առաքէ զօրականս երկերիւր ը առաջ Անդրէի՝ սպասաւորել նմ մեծարանօք 'ի պատիւ քաջութեն, զոր գործեաց. միանգամայն և գիտել՝ վասն որոյ լուաւն, թէ արդարև զՔս փառաւորէ հանդերձ զօրօքն իւրովք, և
զԱծս նր և զպաշտօնեան արհամարհէ:

Եբրև հասին առ նա, և հարցին զողջունէ նր, նա ընկալաւ զնս խնդութբ մեծաւ. և յետ պատմելոյ նց զյաղթութին՝ զոր շնորհեաց նմա Տր, սկսաւ խօսել ը նս վս ճշմարտութե և զօրութե հաւատոց ամենասբ երրորդութեն, և վս յարութե մեռելոց, և հատուցման արդարոց և մեղաւորաց: Եւ եղև ահ մեծ 'ի վր նց, և հաւատացին յԱծ. վս զի ազդեցաւ նց 'ի մերուստ Ածգիտութե շնորհն. և օրհնէին և գովէին և փառաւորառնէին զԱծ հանդերձ ը բանակաւն և զօրավարաւն Անդրէիւ:

Եբրև եկն սբն 'ի քաղաքն իւրովք ը զօրականօքն, յանդիման եղեալ իշխանին՝ պատմեաց նմա զյաղթութի պատերազմին և զկործանումն թշնամեացն: Եւ նա 'ի լսել անդ՝ տայր զգոհութի կռոցն իւրոց. իսկ սբն Անդրէաս ըդդէմ կայր, և տայր զփառս ամենասբ երրորդութեն, և Քսի տայր զյաղթութին:

թի՟ն ։ Այլ անտիոքոս հակառակէր , և հնարէր դարձուցանել զնա 'ի ճշմարիտ խոստովանութե՟նէն . և յետ բազում պայքարելոյ՝ ասէ ցանդրէաս . ո՞չ գիտես , թէ քանի՞ բազմութիւք ո՞րպիսի տանջանօք կորեան . ո՞րչափ մաշեցի զն՟ս՝ որք 'ի ք՟ս հաւատացին , և ոչ ումեք ողորմեցայ . և արդ դու զի՞ այդպէս յամառեալ պնդիս 'ի վ՟ր խաչեցելոյն՝ ա՟ծ զնա խոստովանելով , և նովաւ լինել զյաղթութի՟ն հռչակեցուցանես , որ ոչ փրկէ զհաւատացեալս իւր 'ի ձեռաց իմոց ։ (5)

Իսկ ս՟բն անդրէաս ասէ . ա՟մ ս՟բք՝ որ վ՟ս անուա՟ն ք՟ի չարչարեցան և մեռան , դարձեալ վերստին նորոգին , և պսակին յաւուր յայտնութե՟ն և գալստեանն ք՟ի . այսմ յուսոյ ես ցանկացեալ սպասեմ , թերևս արժանի գտայց ը՟ արժանաւորացն յաւուրն այցելութեան ։ Բարկութ՟բ և սրտմտութ՟բ լի եղև բռնաւորն . այլ ակնածեալ յառնէն՝ հրամայեաց գնալ նմա յերեսաց իւրոց , զի խորհեսցի՝ թէ զի՞նչ արասցէ վ՟ս ն՟ր ։ Յայսմ վայրի գրեն այլք , թէ բռնաւորն 'ի տանջանս մատոյց զանդրէաս՝ տարածելով զնա 'ի վ՟ր հրացեալ մահճաց , և զոմանս 'ի գործակցաց ն՟ր 'ի փայտ բևեռեաց . այլ մերս վկայաբան որ 'ի Ճառընտիրս , առանց յիշելոյ զայլ տանջանսն՝ 'ի վ՟ր բերէ զառաջիկայ պատմութի՟ քաջ նահատակութե՟ ն՟ց ։ (6)

Ապա 'ի խորհրդածութ՟է չարին կամեցաւ իշխանն հալածել զանդրէաս հանդերձ ամենեքումբք՝ որք միաբանեցան ընդ նմա , 'ի հեռաբնակ ծ̅ ։ Հրամայեաց երկուց հազարաց զինուորաց հանել զս̅բ բանակն 'ի քաղաքէն, և ցրուել յանդարձ օտարութիւն. զի գիտաց զանփոփոխելի միտս ամենեցուն. միանգամայն և ակն ունէր, թէ նոքա առ ահի վտարանդութե̅ և տառապագին կենաց զղջասցին և յօժարեսցին դառնալ իւրաքանչիւր յազգ իւր և յերկիր ։ Իսկ նոքա յանձն առին զչարչարանս վ̅ս արքայութե̅ն երկնից՝ քան առ ժամանակ մի վայելել 'ի մեղս և յապականացու կեանս ։

Եւ իբրև հեռացան հարուստ մի 'ի քաղաքէն, ամբարձ զձայն իւր ս̅բն անդրէաս, և ասէ ցս̅բ բանակն. Յիշեցէք զաւետարանական բանն՝ զոր ասաց ք̅ս փրկիչն ծ̅աց. երանի ասէ՝ որ հալածեալ իցեն վ̅ս արդարութե̅, զի ն̅ց է արքայութի̅ն երկնից. արդ մի ոք 'ի ձէնջ խորհրդոմ̅ թիւրեսցի, և վրիպեսցի յայնմ երանութե̅. զի անսասանելի է, և անքակտելի՝ կեանքն այն, և ոչ երբէք լուծանի. այլ կայ և մնայ յաւիտեան ։ Զայսոսիկ լուեալ ս̅բ բանակին 'ի բերանոյ ս̅բյն անդրէի, որ հոգւով ա̅յ խօսէր, առհասարակ զուարթացան քաջացան յանձինս իւրեանց. և յոյժ խրախուսեալք ուրախութ̅բ սրտի գոհանային զա̅նէ. և ցնծալից բարբառով փառաւորէին զմի միայն ճշմարիտն ա̅ծ՝ զհայր և զորդի և զս̅բ հոգին ։

Իսկ երկուց հազարացն զայս ա̅մ տեսեալ և լուեալ՝ զղջացան յանձինս իւրեանց շնորհօք ս̅բ հոգւոյն. և յարտասուս եղեալ աղաչէին զամենակալն ած՝ ընդ որս բանակին 'ի թիւ անկանիլ հաւատով յորդեգրութեան շնորհ. և միաբանել ամենեքեան՝ բարձրացուցանէին զօրհնութի 'ի բարձունս ամենասբ երրորդութե. և եղև ուրախութի անպատմելի առաքինի զօրավարին և ամ զօրուն. և այնպէս միով ոգւով դէմ եդեալ գնային՝ յոր ուղղեալն էին, 'ի սահմանս կիլիկեցւոց, ոչ կամեցեալ ուրուք այլ դառնալ առ անտիոքոս ։

Եհաս բանս այս վաղվաղակի 'ի լսելիս չարախորհուրդ իշխանին անտիոքու. խռովեցաւ և զարհուրեցաւ յանձն իւր. և ոչ գիտէր՝ թէ զինչ արասցէ, կամ զիարդ գտանիցէ ելս իրացն ։ Կոչեաց առ ինքն զանկղիտոսն և զխորհրդականսն ամ. և խորհեալ նոքօք՝ գրէր նամակ առ վերակացու կողմանցն կիլիկեցւոց օրինակ զայս. Անտիոքոս մեծ՝ հռչակելի և յաղթող, իշխեցող և հրամանատար ամ նահանգի կողմանց ասորւոց, սիրելի եղբօր մերոյ սելևկիոսի՝ մեծի կուսակալի՝ խնդալ ։ Որպէս զի ոչ անգիտասցի քոյին զօրութիդ յաղագս անդրէի զօրավարին մերոյ. որ մեծաւ պատուով պատուել 'ի մէնջ, ապստամբեալ արհամարհեաց զպատիւ մեր և զածսն, հաւատացեալ առ խաչելեալն քս ։ Այլ հալածեալ 'ի մէնջ՝ զբազումս յինքն յարեցոյց, ամենեքումբք խոստովանել զքս՝ ած և թագաւոր յաւիտենից, հակառակ ինքնակալ թագաւորացն խորհելով ։ Արդ յայսմ երևեսցի քաջութի եղբօր մերոյ , զի ո՛ւր և հանդիպեսցիս՝ մաշեսցես զնոսա սրով սուսերի • ո՛ղջ լեր քա՛ջդ սելևկիոս :

Եւ երբ տարեալ եղեւ Թուղթն , և ընթերցան առաջի նր̃ , առժամայն երբև զգազան չար զայրացեալ 'ի միտս իւր՝ լի Թունովք դառնութե̃ , 'ի խորհուրդ մտեալ հնարէր՝ թէ որո՛վ կերպիւ կա՛մ ո՛րպիսի հնարիւք կարասցէ որսալ զնս̃ • պատրաստէր զինքն , և ամենայն զօրաց իւրոյ պատրաստ լինել հրամայէր :

Իսկ երանելի զօրավարն անդրէաս հալածական եղե̃լ ս̃բ բանակաւն յաղագս ք̃սի յանտիոքայ մայրաքաղաքէ ասորւոց , եկն նախ յաղեքսանդրիա • և ճանապարհ կալե̃լ առ ծովեզերբն ովկիանոսի ը̃ սահմանս կիլիկեցւոց գաւառին՝ հասանէ իւրովքն հանդերձ 'ի տարսոն կիլիկեցւոց : Ուր հանդիպեցան պետրոսի եպիսկոպոսին տարսոն քաղաքի , և նոննոսի եպիսկոպոսի բերիայ քաղաքի • և մկրտեցան 'ի նոցանէ զօրավարն անդրէաս և զօրքն ա̃մ առհասարակ՝ 'ի հայր և յորդի և 'ի ս̃բ հոգին , և լուսաւորեցան լուսով ա̃ծգիտութե̃ն • և նոյնժամայն յայտնապ̃ս երևմամբ տեսին զլոյս 'ի վր̃ անձանց 'ի վերուստ 'ի ջուրսն մկրտութե̃ , և զնահատակուե̃ պսակն՝ որում հանդիպելոց էին առաջակայ երանութե̃ն : Եւ ողջունեալ օրհնեցան 'ի ս̃բ եպ̃սացն , և ճանապարհ կալան ը̃ կողմ̃ն տարսոսի :

Սոյն երբև տեղեկացեալ լսէր սելևկիոս ,

տալս այնուհետև այլադունեաց զդէմս իւր ո՟պ զառիւծ մռնչօղ և յափշտակօղ, և զհետ մտեալ հալածէր զն՟բ բանակն ։ և ուր և հասանէին, գազանաբար յարձակէր 'ի վ՟ր մեծաձեռն գնդաւ՝ յանխնայ կոտորել կամէր զամենեսին ։ Սակայն ս՟բցն օգնականութի 'ի վերուստ ընկալեալ, և քաջութ՟բ 'ի դիմի հարեալ թշնամեացն հաւատոյ՝ յաղթահարէին զն՟ս ։ մինչ զի ոչ զօրէին զդէմ ունել զերանելի նահատակացն, և խափանել զընթացս ն՟ց ։ վասն զի հոգին ն՟բ առաջնորդէր ն՟ց մինչև 'ի սահմանեալ տեղին յ՟ոյ, ուր և կատարելոցն էին ։ Եւ հասեալ մինչև 'ի տարմեղինէ և 'ի կողմն եքսոնի (ը՟դ այլոց՝ 'ի տամաղմէ գաւառ և յամուրն որքեսոն մօտ 'ի մելիտինէ հայոց), եկին բանակեցան 'ի տեղւոջն՝ որ կոչիւր քափսորիոս և քարափաթոն, (կամ կողմանք քաւսորիոյ և քարաւաթացւոց), 'ի դժուարին վայրս 'ի հովտի միում 'ի մէջ լերանց, գետի փոքու ը՟դ մէջ անցանելով ։ Եւ սելևկիոս պնդեցաւ զհետ ն՟ց ։ և հասեալ 'ի նեղուցս քափսարայ (կ՟մ կապսորայ յանդրոկաղոն գաւառի), պաշարեաց զն՟ս ։ Իսկ ս՟բ բանակն դիմեալ առհասարակ յերկիւղս և 'ի զէնս իւրեանց՝ սկսան պատերազմել ը՟դ ն՟մ ։ Զայն տեսեալ սելևկեայ՝ եթէ չկարէ մարտիւ յաղթահարել զնոսա, դադարեաց առ ետեղ, և կալաւ զանցս լերանցն ։ իսկ քաջ նահատակքն բանակեցան 'ի ձորամիջի ո՟պ զբանակս ո՟յ ։ (7)

Յայնմ վայրի սկսաւ ս՟բ զօրավարն անդրէաս

քաջալերել զզօրս իւր , և ասէր այսպէս · եղբա՛րք իմ սիրելիք և քաջ նիզակակիցք իմ , ահաւասիկ ժամ արիաբար քաջանալ, ո՛չ մարմնով, այլ՝ հոգւով, և հաճոյ գտանիլ երկնաւոր Թագաւորին · ահաւասիկ ժամ մարտի և յաղթութեան՝ ո՛չ երկրաւոր զինուք, այլ՝ սպառազինութեամբ հոգւոյն սրբոյ , տալով զանձինս կամակար յօժարութեամբ 'ի մահ վասն քրիստոսի · զի ոչ ևս է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան , այլ՝ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ աշխարհակալս խաւարի այսորիկ չարութեան , որք խորհին սպանանել զհոգիս՝ քան եթէ զմարմինս ։ Ապա հաւատով և յուսով և սիրով ամրացեալք , մի՛ երկիցուք յառժամանակեայ մահուանէ , այլ՝ անվեհեր տացուք զմարմինս 'ի զենումն վասն սիրոյ փրկչին մերոյ , որ զանձն իւր մատնեաց 'ի սէր մեր · զի և անթառամ պսակացն արժանասցուք ։

Այսուհետև հաստատուն կացէք 'ի հաւատս տեառն մերոյ յիսուսի քրիստոսի · պինդ կալջիք զշնորհն՝ որ ընձեռեցաւ ձեզ · յիշեցէք զերանաւէտ պարգևսն զխոստացեալսն ձեզ 'ի տեառնէ յիսուսէ քրիստոսէ ։ Մի՛ ոք 'ի ձէնջ խորհրդովն թիւրեսցի 'ի շնորհացն՝ յոր կոչեցայք · մի՛ ոք երկրաւոր կենացս ցանկացեալ՝ 'ի յաւիտենական կենացն զրկեսցի · 'ի դուռն դաւթի հասեալ կամք , մի՛ ոք արտաքս դարձցի , և 'ի հարսանեաց առագաստէն վրիպեսցի ։ Ո՛ բարւոք պատերազմ պատերազմեցայք , զընթացսն կատարեցայք · և ահաւասիկ պատրաստեալ կամք վարձուցն հատուցման ․ և Թագաւորն մե՛րձ է երկնային փառօքն պսակել զմեզ ։

Պարտ է մեռանել վս՟ անուան տն՟ մերոյ յի՟ քի՟ , զի ը՟ նմա կենդանասցուք , և փառաւորեսցուք յանձառ և յանապական բարիսն ։ Պարտ է փոխանակել զայս սնոտի և զապականացու կեանս ը՟ անմահական կենացն ։ Պարտ է ուրանալ զժ՟ական մեծութ՟իս , զի զհանդերձելոցն շահեսցուք զբազմապատիկ արդիւնացեալսն , ը՟ միոյն երեսուն , ը՟ միոյն վաթսուն , ը՟ միոյն հարիւր ․ նաև առաւել ևս՝ որ ոչ է թուով անկանի ։

Զի և փոխանակ հալածական լինելոյ մեր յերկրաւոր թագաւորաց՝ երկնաւոր թագաւորին մերձաւորք լիցուք , և ը՟ նմա թգ՟րեսցուք ․ և փոխանակ երկրական սիրելեաց՝ եղբարց և ազգականաց , զորս թողաք յերկրի , ը՟ զուարթունս երկնից խառնել միանամք , և ը՟ նս՟ զուարճացեալ պարեմք յանձառելի ուրախութ՟ին ․ և փոխանակ հայրենի ժառանգութ՟եցն՝ յորոց անջատեալ 'ի բաց կացաք , զարքայութիւն երկնից ժառանգեսցուք , և յանպատում բարութ՟իս վայելեսցուք 'ի քս՟ յս՟ 'ի տր՟ մեր ։

Զայս և առաւել քան զսոյն խօսեցաւ զօրավարն առաքինի՝ սբն՟ անդրէաս ցզօրս իւր ․ և նց՟ քաջալերեալ շնորհօքն քսի՟՝ զօրացան 'ի հոգիս իւրեանց ․ և դիմեցին առ հասարակ ը՟դէմ սորոյն յօժարութ՟բ՝ մեռանել վս՟ մեծի յուսոյն , որում ակն ունէին ։ Իսկ սեըեկիոս զայրացեալ ցասմամբ մեծաւ՝ հրաման տայր իւրոցն, մի խնայել ումեք 'ի նոցանէ, և մի ապրեցուցանել զոք, այլ չարաչար կոտորել զամենեսեան ։

Եւ 'ի ժամ կատարմանն այսպէս ասէր ս̃բ զօրավարն Անդրէաս հանդերձ ս̃բ բանակաւն․ Տէր ա̃ծ ամենակալ՝ որ կոչեցեր ըզմեզ յորդեգրութե̃ շնորհս, և զօրացուցեր զմեզ 'ի կամս ողորմութե̃ քո, արժանաւորեա՛ զմեզ ս̃բոցն դասուց․ զի վ̃ն քո մեռանիմք՝ ածեալք ո̃պ զոչխարս 'ի սպանումն ։ Մի՛ թողուր զմեզ 'ի քումմէ բարերարութե̃դ՝ զյուսացեալքս և զապաւինեալքս 'ի քեզ ։ Տո՛ւր տ̃ր զողորմութե̃ շնորհս 'ի տեղի հանգըստեանս մերոյ, և բժշկեա՛ զցաւս ախտաժետաց՝ ը̃ս իւրաքանչիւր հայցուածոց հոգւոյ և մարմնոյ․ և արա՛ հալածումն այսոց պըղծոց․ և յա̃մ վտանգից զերծո՛ զհաւատացեալս 'ի քեզ․ զի փառաւորեսցի անուն քո ս̃բ ։ (8)

Եւ զայս ասացեալ՝ առ հասարակ սպառեցան 'ի սուր սուսերի՝ բարի խոստովանութե̃ 'ի փառս ամենաս̃բ երրորդութե̃ն ։ Այն բարբառ 'ի վերուստ՝ որ ասէր․ եկա՛յք ընկալջի՛ք զմխիթարութի̃ յարարչէն ամենեցուն․ և 'ի տեղւոջ հեղման արեան ձերոյ բղխեսցէ աղբիւր բժշկութե̃, առ ա̃մ վտանգելոց առողջութի̃ յիւրաքանչիւր ախտից, և 'ի հալածումն այսոց պղծոց ։ Այսպէս կատարեցան ս̃բ նահատակքն ք̃սի 'ի ժ̃թ օգոստոս ամսոյ (յաւուր կիւրակէի՝ ը̃ս ոմանց, յերկրորդ ժամու) . և էր Թիւ սր̄ բանակին հանդերձ ո̄ք զօրավարաւն՝ երկու հազար և ութ հարիւր , ը̄ անվրէպ հաշուի հարազատ վկայաբանութե̄ս :(9)

Իսկ անօրէն Թագաւորքն 'ի խնդիր եղեն երանելի եպ̄սացն պետրոսի և նունոսի՝ որք մկրտեցին զսր̄ բանակն . և նոքա փախստական եղեն հանդերձ պաշտօնէիւքն իւրեանց երկիւղածօք ա̄յ , եկին մինչև 'ի տեղի կատարման սր̄ցն . և տեսեալ զաղբիւր բժշկուե̄ , և զնշխարսն սր̄յ բանակին , մխիթարեցան 'ի տր̄ . և ամփոփեցին զնոսա 'ի տեղի հանգստեան անյայտաբար՝ փառաւորելով զա̄ծ . և դարձան յիւրաքանչիւր տեղիս , երբ զիջաւ հալածումն (10) . և յետ ոչ բազմաց իսպառ դադարեաց 'ի Թագաւորել մեծին կոստանդիանոսի . և հաւատացեալքն տօնախմբէին զյիշատակ վկայուե̄ սր̄ցս ամյամէ , որոց կատարումն եղև յամի տ̄ն իբր 300 :(11)

* * *

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Որ միանգամ քաջ միտ դնէ նահատակուե̄ անդրէի զօրավարի և բանակի նորին , տեսանէ զգեղեցիկ համեմատութի̄ ը̄ երևելի զօրավարաց հանդիսացելոց յազգի մերում . քանզի նախընթաց վարք և քաջութիւն սր̄յն անդրէի՝ ոչ ինչ ը̄հատ է 'ի գործոց սր̄յն սարգսի զօրավարի . և նահատակութի̄ն՝ յարևնման ըստ մասին սր̄ց վարդանանց զօրավարաց , և ը̄ մասին՝ սր̄ց ատովմեանց զօրավարաց : Եւ որպ̄ ո̄ք մեծանուն հանդիսացան յազգիս , նոյնպէս և մեծն անդրէաս յառաջ քան զնո̄՝ 'ի

մեզ և յայլս: Վ՟յ և պինիոս բոլլանդեան առէ 'ի սկիզբն քննութ՟ե վարուց անդրէի զօրավարին. յերես. 720. * Թէ քանի՞ մեծայիշատակ իցէ անուն այսր ամենա_
,, հռչակ վկայիս և ընկերաց իւրոց. և որչափ օրհնութ՟
,, մեաց առ յետինս, Ճոխագոյնս վկայեն հին յիշատա_
,, կարանք, որք զնոցանէ աւանդեցան մինչև առ մեզ||: Մեծ է առ մեզ այս վկայութիւն հանրական՝ տուեալ 'ի բազմայոյզ խուզարկուէս. Թող այնուհետև 'ի մասնաւոր բանս ը՟վայրաքննութ՟ե դիմախօսել երևեցի. ոչ ունիմք յիշատակել յընթացս ծանօթութեցս՝ անաչառ քննութ՟ե:

Զարմանալի դիպուած համարեսջի՛ր զայն, զի որպէս 'ի մեզ ս՟բն վարդան՝ Քջ անուամբ մեծարի յարգեանց, նոյնպէս և առ այլս ս՟բն անդրէաս՝ Քջ կոչի իրաւամբ. ը՟ որոյ և Ճառընտիրն մեր անուանէ զնա * երիցս երա_
,, նեալ մեծ և հռչակաւոր վկայ ս՟բն անդրէաս զօրա_
,, վար||: Եւ ահա յայսպիսի կոչմանէ՝ ոչ 'ի մեզ անանուն որդւոյ քաջին վարդանայ ՄԱԳՆՈՍ անուն ընծայի 'ի պատմագրաց ոմանց, (որ կամ Քջ թարգմանի, և կամ ՄԱԿԵԴՈՆԷԱՆ է թարգմանելի), այնպէս և ոմանք յարևմտեան նոր վկայագրաց ը՟ գալեսինոսի՝ ասացին. Թէ նահատակակից անդրէի զօրավարի եղև և մագնոս ոմն կապադովկացի, կ՟մ մագնոս եպ՟ս անագնինայ. և այլք՝ Թէ մականուն անդրէի էր մագնոս (որ թարգմանի մեծ). գուցէ լաւ ևս լինէր յունարէն մեգաղէ կոչել (որ է մեծ). բայց այսպիսի ասացուածք չունին հիմն 'ի ստոյգ վկայաբանութեց. յորս զայսպիսի երևելի վկայս կոչեն մեգալօմարտիւ, ի՟ մեծավկայ. որ է ստոյգ:

Խնդրելի է այժմ, թէ այն իցէ ստոյգ վկայաբանութ՟ի ս՟բյս, կ՟մ ստուգագոյն 'ի մէջ զանազանից՝ որ առ մեզ և առ այլս գտանին: Բայց 'ի բազմօրինակ վկայագրաց՝ զորս յիշատակեն քննիչք լինել առ յոյնս և առ լատինս, իբրև միաձայն ը՟ գլխաւոր հանգամանաց պատմութ՟ե, և միայն ը՟ ոճոյն տարբերեալ, տեսանեմք՝ զի ամենեքին իբր հնագոյն և լաւագոյն օրինակ յառաջ բերեն զայն, որ կայ առ սուրիոսի յանուն մետափրաստեսի. որոյ քաղուած երևի լինել և որ ինչ աւանդի 'ի Հ. Յ. և Լ. պէսպէս օրինակաւ: Զնոյն տպագրէ և պինիոս բոլլանդեան, և քննէ ը՟ սովորութ՟ե իւրում, ինչ ինչ իրաց (թէպէտև անհաւանելեաց) հաւան զինքն ցուցեալ, և բազում ինչ իրաց (թէպէտև հաւանելեաց) անհաւան: Այլ բարոնիոս այնչափ անստգիւտ գտանէ զայն վկայաբանութի, մինչև ընտրէ ասել՝ թէ գուցէ առաջին հեղինակ նորա իցէ պետրոս եպս տարսոնի, որ մկրտեացն և թաղեաց զսբն անդրէաս · զոր մեք այսպէս ունիմք իմանալ, թէ մետափրաստէս առաջի աչաց ունելով զհին զայն վկայաբանութի՝ եթէ 'ի պետրոս եպսէ և եթէ յայլմէ ժամակից անձնէ աւանդեալ, ըստ իւրական ոճոյ է յարմարեալ, և գուցէ նաև յայլոց հեղինակաց բաղադրեալ · ապա թէ ոչ՝ անտարակոյս մեզ երևի, թէ օրինակն ճառընտրիս մերոյ՝ որում անգէտ են քննիչք, կամ է նախկին յօրինուած ժամակից գրչի, և կամ հարազատ հետևորդ նորին՝ անխառն յայլոց անստոյգ աւանդից և 'ի նշանակաց խարդախանաց, իբրև պարզապէս անկեղծ և յստակ քան զամ օրինակս, և ստուգագոյն քան զամենեսին · վսյ և մեք զնոյն զայն 'ի մէջ բերաք, թողեալ զայլոցն տարբերութիս նշանակել 'ի կարգի ծանօթութես :

Ընթացք շարագրութե մերումս վկայաբանութե պահեցաւ 'ի մէնջ՝ գոյզն մի պարզաբանութբ ևեթ ուրեք ուրեք · բաց 'ի ճառօրէն նախաբանութէն՝ զորով զանց արարաք ըստ մերումս սովորութե · որ և ունէր զայս ձև օրինակի 'ի ճառընտրի · * Զածայինն զանճառելի և զան-
,, իմանալի խորհուրդն, զանհասանելի և զանպարա-
,, գրելի զսքանչելիսն, զանյաւ և զանպատմելի բարե-
,, րարութին, զանբաւ նր մարդասիրութեն զողորմու-
,, թին, զսքանչելի և զառատաձիր պարգևսն՝ ո՞ բաւա-
,, կան լիցի պատմել և իմանալ · · · (ուր յետ նկարագրելոյ՝ թէ որպէս սբք ամ սիրովն այ վառեալք, և զհետ երթեալք կոչման կենարարին՝ ակնկալութբ հանգերձեալ բարեաց անճառից՝ թողին զամ, և զանձինս ևս ետուն 'ի մահ վն ան՝ միանալով ընդ այ, սկիզբն առնէ վկայաբանութեն՝ այսպէս)· Սակայն այժմ ոչ վն
,, բազմաց է պատմութիս, այլ՝ յաղագս երից երա-
,, նեալ մեծի և հռչակաւոր վկային՝ սբյն անդրէի զօ-
,, րավարի և զօրաց իւրոց ածազանից ընտրելոց մար-
,, տիրոսաց · որ 'ի ժամանակս անօրէն և ամպարիշտ
,, թգրացն դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի || են :

(2) Ուր միաձայն ընթանան ցայս վայր վկայագիրք ամ ընդ ճառընտրի մերում և ընդ մետափրաստեսի, զի թէ սբն անդրէաս նախ քան զմկրտելն գնաց յայս պատերազմ, սկիզբն առնէ պինիոս ընդ քննութբ արկանել զպատմութիս՝ զարմացմամբ, և զարմանալի ձեռնարկութբ, ասելով յերես · 726 · * Զարմանք են, զի արդէն ընկալեալ

,, լեալ զհաւատս ք̃ի, բայց չև ես մկրտեալ՝ զանձն 'ի
,, վտանգ մահու լցէ եդեալ. եթէ ոչ ընթացցիս առ
,, սքանչելիս՝ որով նախագէտ լեալ լցէ յաղթութե̃,
,, զոր և Թումի նշանակեալ 'ի բանի անդ || Յայս ը̃դի-
մութի այնչափ յառեալ են խորհուրդք գրչիս, զի և 'ի
յառաջաբանական ծանօթութիւնս իւր՝ յերես. 721.
զնոյն 'ի դէմս ածէ բարոնիոսի՝ 'ի ցուցանել ը̃դէմ նո̃,
թէ չէ վկայաբանութիւս անստգիւտ: Ո՛չ առաքէն բանք
են, և այն՝ վայրապար. զիարդ իմանայ արդեօք իմաս-
տուն քննիչս զնմանօրինակ անցս այլոց բազմաց 'ի սր̃ց
զօրավարաց և 'ի Թագաւորաց. ո՛չ առաքէն և կոստան-
դիանոս և Թէոդոս մեծն 'ի բազում պատերազմունս
մտին՝ յառաջ քան զմկրտիլն, թէպէտև մին կանխաւ էր
հաւատացեալ, և միւսն 'ի քրիստոնեայ ծնողաց ծնեա̃լ.
ոչ է իմաստնոյ չափել զգործս նախնեաց ը̃ վիճակի
յետնոց. և ոչ արդարանայ քննիչն 'ի հեգնել անդ ճար-
տարութե̃ զընթերցօղս, ո̃ք թէ առ սքանչելիս ունի-
ցին ընթանալ յոչ կարելն իբրև զինքն ուղիղ իմանալ
զգործս սր̃ց:

Զայսոսիկ ասեմ՝ ո՛չ 'ի գովել զայն սովորութի̃ նախ-
նեաց, զի յոլովք յամեցուցանէին զմկրտութիւն (ո̃ք և
ա̃ծաբանն գրիգոր ո՛չ գովեցաւ 'ի մէնջ յայսմ մասին,
նոյնպէս և որք 'ի բանակի վարդանանց կային դեռ
անկնունք, և 'ի վերջնում գիշերի մկրտեցան), այլ 'ի
ցուցանել՝ թէ որպէս սխալեն յետինք, երբ կամին՝ զի
վարս սր̃ց յայնժամ հաւանելի դատեսցեն, յորժամ ո՛չ
ը̃ եղելոցն գրեսցին, այլ ը̃ կերպին՝ որ գովելի է ըն-
թերցողին 'ի յետին դարս:

(3) Ո՛չ օտարանայ 'ի ճառընտրէն, քան որչափ մեկնա-
բանիչ լինի յաւելուածով, Հ. յասելն. * Սր̃ն ան-
,, դրէաս աղօթեաց առ ա̃ծ 'ի մէջ զօրացն. և կնքեալ
,, զինքն ք̃ական նշանաւն՝ եմուտ 'ի պատերազմն, և
,, մեծաւ քաջութե̃ յաղթեաց զօրացն պարսից || : Նոյն-
պէս և յասելն. * և երևեցաւ սատանայ 'ի միում ժա-
,, մու գ̃ անգամ՝ ո̃ք զհրեշտակ ա̃յ, և դարձեալ իբր
,, զօրական. և նա նշանաւ ս̃ խաչին և անուամբն ք̃ի
,, սատակեաց նմ̃, և անյայտ արար || : Իսկ սուրբս զե-
րևումն և զհալածումն դիւին փոխաբերէ 'ի դիւահարս.
քանզի գրէ, թէ սր̃ն անդրէաս * ունէր զշնորհս հա-
,, լածելոյ զդևս, և օր ըստ օրէ ազատէր զբազումս
,, ըկեալս յայսոց չարաց. և այնպէս կարեվէր խոցէր
,, զբանսարկուն, և մեծապէս նկուն առնէր զմախա-

ցող

,, ցօղ և զամբարտաւան թշնամին || ։ Ուր լուռ ևեթ
կայ քննիչն ․ մեք շատանամք բանիւ վկայաբանիս մերոյ ։

(4) Դարձեալ մեկնաբանել երևի Հ ․ զմիտս Ճառըն-
տրին՝ այսպիսի յաւելուածով ․ ✱ և գնաց սատանայ
,, առ անտիոքոս իշխանն 'ի կերպարանս դպրի , և ա-
,, սաց՝ թէ անդրէաս ծ՟մ զօրօքն ապստամբեցաւ 'ի
,, 'ի քէն , և հաւատաց 'ի խաչելեալն || ։ Իսկ սուրբիս
այնպէս ձևացուցանէ զբանն , որպէս թէ ոմանք 'ի զօ-
րացն անդրէի մատնեցին զնա ․ զոր պարտ է իմանալ
արտաքոյ թուոյ սբ՟ բանակին ․ այլ թէ ոչ՝ ոտ՟ Ծ ․
նոյնպէս և այլ վկայագիրք յայտ առնեն , թէ ծ՟մ նի-
զակակիցք սբ՟յն միաբան կային ը՟ նմա մինչև 'ի նահա-
տակութի ։

(5) Սուրբիս յանուանէ յիշէ և զմին 'ի վկայից՝ 'ի բե-
րանոյ գտ՟ուորին այսպէս ․ ✱ ո՛րպէս և ո՛րպիսի տանջա-
,, նօք բարձի 'ի կենաց զեւտիքիոս զորդի պօղիկտոսի ․
,, և զբազումս 'ի ն՟ցէ՝ որք ը՟ նմա խոստովեցան զկնի
,, հաւատոցն քն՟ի || ։ Այս մեզ անծանօթ մնայ ․ և ո՛չ
իսկ հաւան եմք ը՟ գուշակութիւն սինիոսի , որ ասէ՝
թէ որովհետև պօղիքտոս վկայն (զորմէ խօսի 'ի փետր․
13 ․) նահատակեալ 'ի մելիտինէ հայոց՝ ունէր կին և
որդիս , գուցէ մի 'ի նոցանէ իցէ եւտիքիոսս այս ․ ա-
պաքէն կին սբ՟յն պօղիքտոսի էր հեթանոս ․ և մանկունք
նր՟ դեռահասակք 'ի կատարման հօր իւրեանց՝ չունէին
նշանակ քրիստոնէութե ․ վն՟ յանստոյգ իրաց անստոյգ
լինի մակաբերութի ։

(6) Աստ է գլխաւոր և երևելի տարբերութիւն այլոց
վկայագրաց առհասարակ 'ի Ճառընտրէ մերմէ , ուր
չիք նշմարանք նախընթաց ինչ տանջանաց սբ՟յն անդրէի՝
զորմէ այլք գրեն ։ Կարօղ էաք ասել , թէ հատուած
ինչ բանից 'ի բաց անկեալ իցէ յօրինակէ մերմէ ․ բայց
տեսանեմք՝ զի որք պատմենն զտանջանս , զայլ պարա-
գայս ևս պատմութեն ոչ սակաւ այլափոխեն ․ գլ՟ 3 ․
ունի այսպէս ․ ✱ Ինքն (անդրէաս) 'ի վ՟ր երկաթի
,, հրացեալ մահճի տարածեցաւ ․ իսկ ընկերաց նորա
,, ձեռք բևեռօք պնդեցան 'ի չորեքկուսի փայտս ։ Ապա
,, այլ ևս հազարք հրամանաւ անտիոքոսի տարագրեցան
,, 'ի սահմանաց տ՟ին ․ զորս խրատել սբ՟յն՝ դարձոյց 'ի
,, հաւատս քն՟ի ։ Զայն իբրև գիտաց անտիոքոս , զհետ
,, մտեալ ն՟ց իւրովքն հանդերձ՝ 'ի սուր սուսերի մա-
,, չեաց զամենեսին , և յետ ամենեցուն զանդրէաս զփա-
,, ռաւոր վկայն քն՟ի և զմեծահռչակն 'ի նահատակս || ։

Եւ Հ. այսպէս. * Յայնժամ հրամայեաց տարածել
,, զանդրէաս մերկ 'ի վր̅ հրացեալ մահճաց: Եւ մօ-
,, տեալ սատանայ՝ ասաց. եկի փարատել 'ի քէն զցաւս
,, տանջանացդ. յայնժամ սաստեաց նմա սբ̅ն, և ան-
,, յայտ արար. և նոյնժամայն ձայն եղև առ նա յերկ-
,, նից, և ասաց. եղիցի զսատանայ 'ի ներքոյ ոտից քոց.
,, և դու յաղթեսցես նմա ով քաջդ անդրէաս: Եւ յետ
,, բազում տանջանաց՝ գանից և բանտից, ողոքանաց և
,, սպառնալեաց, իբրև ոչ հաւանեցաւ անդրէաս ու-
,, րանալ զքս̅, և պաշտել զկուռսն, հրամայեաց ան-
,, ախողքս բռ̅ զօրականաց, զի տարեալ ցրուեսցեն և
,, կորուսցեն յարևելս զզօրսն անդրէասի, և զինքն
,, սպանցեն: Իսկ սբ̅ն անդրէաս դարձոյց զնս̅ 'ի հա-
,, ւատս քս̅ի. և ամենեքեան սրով կատարեցան բարի
,, հաւատով 'ի քս̅||:

Ժամ է լսել և զաղբիւրն այսց աւանդից՝ զմետափրաս-
տեան գրութին մե̅ յառաջ բերելոյ սուրիոսի: * Հրա-
,, մայեաց կապել զնա և ածել առաջի իւր. և 'ի լուր
,, ամենեցուն հարցանէր զնա, զի յայտնապէս խոստո-
,, վան լիցի, արդեօք հրամանին ինքնակալին անսալ
,, կամի, եթէ ոչ̅ իւրում: Եւ նա առաջի մարդկան և
,, հրեշտակաց և համօրէն երևելի և արարածական բնու-
,, թեան՝ պարզ և յայտնի և համարձակ խոստովան եղև
,, զքս̅: Այլ սէգ և հպարտ դատաւորն դառնադառն
,, տանջանս ը̅դէմ նր̅ մեքենայէր. և հեգնելով իմն
,, ասէ. քանզի բազում աշխատութն կրեաց անդրէաս
,, 'ի մարտի, և ոչ դոյզն յաղթութե̅ պսակեցաւ, դիւ-
,, րութեան և հանգստեան հնարս հնարեցուք նմա:
,, Այնուհետև հրաման ետ կազմել մահիճ պղնձի. և
,, իբրև սաստիկ վառեցաւ, հրամայեաց դնել զայրն
,, սբ̅ զանդրէաս 'ի վր̅ նր̅: Իսկ նա զուարթագին յօ-
,, ժարութե̅ վազեաց 'ի մահիճ անդր իբրև յանկողին
,, փափուկ, և տարածեցաւ 'ի վր̅ նր̅. ուր անհնարին
,, չարչարանս յանձն ը̅ռնէր, մինչև խանձողել բովան-
,, դակ մարմնոյն, և յամ̅ կողմանց բոցակիզել 'ի հրոյն
,, բորբոքելոյ: Բայց իսկ և իսկ մե̅ ջերմ հաւատոց իւ-
,, րոց հանդիստ և սփոփանս գտանէր. զի հուրն թու-
,, լացեալ մեղմացաւ:

,, Ետ ածել անօրէն դատաւորն և զոմանս 'ի քաջ նի-
,, զակակցաց նր̅՝ որք սերտի̅ հաւատացեալ էին յա̅ծ.
,, և հրամայեաց բևեռել զձեռս նց̅ 'ի փայտս չորեք-
,, կուսիս. և ծիծաղելով հարցանէր ցնս̅, եթէ հեշտա-
,, լի՞

„ ըր՞ թու՛իցին արդեօք նչ՟ իրքս : Եւ նչ՟ վաղվաղակի
„ զուարթութ՟ի ակնի տուեալ, եթէ ամի՛ զբօսալի և
„ զուարճալի են մեզ տանջանքս, 'ի վր՟ բերին · իցէ՞
„ թէ քնի՟ լիցուք նմանօղք, որ վս՟ մեր բեւեռեցաւ 'ի
„ խաչափայտն : Այնուհետև բռնաւորն առ անդրէաս
„ երանելին փոխեալ զդէմս հարցման՝ փորձել իմն կա-
„ մէր զնա, թէ արդեօք զփորձ առեալ այնպիսի չար-
„ չարանաց՝ փոխեալ իցէ զմիտսն, և յետս դարձուցե՟լ
„ զկամս 'ի քրիստոնէից հաւատոց : Եւ յաւել նր՟, թէ
„ ես այնմ պսակի սպասեալ մնամ յո՟յ, զոր ստանան՝
„ որք մինչև իսպառ համբերեն, և ոչ երբէք խոտորիմ
„ 'ի ճշմարիտ և յանդրդուելի օրինաց, հրաման ետ
„ բռնաւորն բառնալ զանդրէաս 'ի տեղւոջէ անտի, և
„ տանել պահել զգուշութ՟ 'ի բանտի, առ երեսս այն-
„ պէս ցուցեալ՝ ոպ՟ թէ ժամանակ տայ վկային խոր-
„ հել զիւր օգուտն, և փոխել զկարծիսն · բայց ինքն
„ զայս առնէր, զի մարթասցի առնուլ տեղեկութիւն
„ յինքնակալէն, եթէ զի՞նչ կամք իցեն նր՟ վս՟ անդրէի
„ և այլոց քրիստոնեայ զօրականաց :

„ Ապա վաղվաղակի նամակ առնէր առ մաքսիմիանոս,
„ և զիրսն նմին նշանակէր : Մաքսիմիանոս իբրև երա-
„ զեկ լինէր 'ի նամակէ անտի սակս անդրէի և որոց ը՟
„ նմա, խորհեցաւ՝ թէ ոչ փոքր աղմուկ և խռովութի՟
„ 'ի վր՟ հասանէ, եթէ զայնպիսի ականաւոր և երևե-
„ լի զօրավար զօրաց, և զայնչափ և զայնպիսի զօր ըն-
„ տիր՝ որ ը՟ նմ՟, ը՟ սուր հանել հրամայեսցէ : Գրեաց
„ անդրէին առ անտիոքոս · զի իմիք հնարիւք կմ՟ ճար-
„ տարութ՟ որսասցի լռելեայն զարսն 'ի կատարումն
„ կամաց իւրոց, և մի՛ տացէ առիթ խռովութե՟ կամ
„ ապստամբութե՟ բովանդակ զօրուն . . . և յաւել ա-
„ սել 'ի հրովարտակի անդ առ անտիոքոս · Հաճոյ
„ թուի ինձ զայդպիսի այրս ազատել 'ի բանտէ, ոպ՟
„ թէ առաջնոց յանցանացն թողուի առնելով · և յետ
„ սակաւուց, եթէ ոչ զգաստասցին, իբրև 'ի պատ-
„ ճառս այլոց վնասու ծանունս պատուհասել զնս՟ :

„ Արդ առեալ անտիոքու զայս հրովարտակ 'ի մաքսի-
„ միանոսէ՝ արար ըստ հրամանի ինքնակալին · եհան 'ի
„ բանտէ կապանաց զնշանաւոր ծառայն այ՟ զանդրէաս
„ և զամենեսին որ ը՟ նմա, և թողացոյց ազատօրէն և
„ համարձակութե՟ կեալ : Բայց սբ՟ ծառայն այ՟ ըստ
„ յայտնելոյ նմա յածուստ՝ 'ի միտ էառ զնենգն · և ա-
„ ռեալ ը՟ իւր զվաստակակիցս իւր, որք խրատուք նր՟
„ ե-

,, եկեալ էին յա՟մծածանութե՟ն, խոյս ետ ՚ի կիլիկիա ՚ի
,, մայրաքաղաքն տարսոն ||. այլովքն հանդերձ, որք միաբանին ը՟ Ճառընտորի, մինչև մի առ մի նոյնօրինակ նշանակել և զտեղիս իջաւանաց:

Այս ա՟մ թերևս ՚ի լրագրոյն օրինակաց վկայաբանութե՟ս առեալ՝ ոչ է մեզ անհաճոյ. այլոց ո՟չ կամք լինեն՝ ը՟ունել. ուր և պլինիոս չհանէ տարակոյս այլ, բայց միայն անհնար համարի զառանց հրամանի անտիոքու զչու անդրէի և որոց ը՟ նմա. այսպէս ըստ այդմ ևս Ճահողագրոյն է ասել ը՟ ծ. թէ անտիոքոս ինքնին տարագիր արար զնոսա: Բայց մեք ունիմք զայլ տարակոյս, ո՟չ տեսցի վաղվաղակի:

(7) Ո՛չ գիտեմ, ը՟ օրինակին մետափրաստեան երկուացուք առ սուրիոսի և առ պլինիոսի, եթէ ը՟ նոյն ինքն ը՟ քննիչս պլինիոս զարմացուք: Ընդ առաջինն երկուանալ ասեմ, զի որ զա՟մ կարգ վկայաբանութե՟ս մերոյ պինդ ունի, և այն՝ յաւելուածով, զիարդ յայսմ վայրի թողու զանց առնէ զայս կարևոր հատուած, թէ բանակին անդրէի նախ ՚ի դիմի հարաւ թշնամեաց հաւատոյ, և ապա ՚ի պաշարմանն ինքնակամ նահատակեցաւ. մինչ զի կարէ ոք կասկածել, թէ գրիչն ոչ հաւանեալ ը՟ բախումն ս՟ր բանակին, զի կամաւոր լիցի մահն, թողեալ է զայն հատուած ՚ի բաց. միանգամայն և ոչ բաւական վարկուցեալ առ մարտիրոսութե՟ն զայսպիսի քաջ նահատակութի՝ կամեցեալ իցէ պատճառաւ զնախընթաց զայն տանջանս յաւելուլ, զոր տեսեր ՚ի նախընթաց ծանօթութե. ապա թէ ոչ՝ պարտ է ասել, թէ հատուած մի յանհոգութե՟ գրչաց անկեալ է ՚ի բաց յօրինակէ յն. կ՟մ լտ:

Իսկ ը՟ քննիչն ասեմ զարմանալ. զի որ զայլ իրաց ըստ կամի և յաւելորդս ծանօթաբանէ, որպէս աստանօր զկարևորագոյնն լռէ. ք՟ թէ յորում հաստատեալ իցէ մարտիրոսութի անդրէի և բանակի նորին, որք ը՟ ընթացից պատմութե՟ն պատերազմական օրինօք կոտորեցան՝ թէպէտև ՚ի պատճառս քրիստոնէութե: Եւ թէպէտ մերս վկայաբանութի չտանի այնչափ դժուարութի, զի անտիոքոս՝ որ աքսորեաց և հալածեաց զն՟ո վ՟ն անուանն ք՟ի, նոյն և զօրս արձակեաց զկնի ՚ի ձեռն սելևկիոսի, և ետ սպանանել. բայց վկայաբանն սուրիոսեան՝ զոր պլինիոսն յանձն առնու քննել, ունի առանձին դժուարութի. ըստ որում ասէ զանդրէաս խոյս տուեալ հանդերձ բանակաւն յերեսաց անտիոքոսի, որ

լև

լինէր ը՟ իմիք փախչիլ 'ի նախատակութենէ կմ՟ ապստամբութենէ տալ զնշանակ . Թող զի յետ պատմելոյն՝ թէ անդրէաս եդաւ 'ի վ՟ր հրացեալ մահճի , և ընկերք նր՟ խաչանման բևեռեցան , զիարդ էր նոցա 'ի ճանապարհ հեռի երթալ , եթէ ոչ 'ի սքանչելիս ապաւինեսցի քննիչն . բայց նա 'ի դժուարին խնդրոյ խուսէ , և 'ի դիւրինս հանէ զդժուարութին . ոպ՟ տեսաք ցարդ , և ունիմք ևս տեսանել 'ի մօտոյ :

(8) Զայսպիսի մաղթանս՝ որ սովորական էր սր՟ նահատակաց 'ի մխիթարութիւն հաւատացելոց , նովին իմաստիւք հանդոյն ճառընտրի մերում երկրորդէ և օրինակն մետափրաստեան . զնոյն 'ի մէջ բերէ և բարոնիոս առանց ը՟ բանս ինչ ածելոյ . բայց լո՛ւր զի՞նչ դրէ ընդդէմ նորա մտայոյզ քննիչն պլինիոս . * Աղօթքն այն (առէ) է սուտ առեղծաբանութիւն . զի ոչ ոք այլ կարէր լսել զայն՝ բաց 'ի նոցունց վկայից , որոց չեղև ժամ պարապոյ պատմել զայն և այլոց : Յաւելու զայն , զի ո՛չ ը՟ բաւականին յանկաւոր երևի քրիստոնէական խոնարհութե . որ պարտի փայլել 'ի վկայս || : Առաջին պատասխանն է բանաւոր , այլ ոչ իմաստուն կրիտիկի յանկաւոր . իսկ երկրորդն՝ սուտ է գլխովին . և երկաքանչիւրն իսկ ո՛չ է պատասխան , այլ՝ պատասխանք և բարբաջանք :

Վս՟ զի նախ՝ դա ինքն պլինիոս ընթեռնու յօրինակի իւրում , թէ կային անդ ոմանք 'ի ժառանգաւորաց եկեղեցւոյ՝ զհետ երթեալք սր՟յ բանակին . և ը՟էր ապա ժխտէ՝ թէ ոչ ոք կարէր լսել զբանս աղօթից սր՟ց . գիտեմս ը՟է՞ր . վս՟ զի և զայն անվայել համարի՝ թէ եկեղեցականք 'ի բանակի գտանիցին առ 'ի գիտել զվախճան սր՟ցն : Ահա այսպէս որմզորմայն ը՟հարկանի 'ի խախտել զշինուածն անքակտելի , զոր կարծէ շինուած մարդոյ . բայց իւր ձեռնարկութին է խախուտ : Քանզի երկրորդ՝ ո՞ ոչ գիտէ , թէ լի են պատմութիւնք սր՟ք և անսր՟ք այսպիսի բանիւք , յորս ո՛չ յիշի ներգործութ՝ թէ ո՞ լուաւ կմ՟ ո՞ պատմեաց . բայց միշտ իմանան ընթերցօղք , թէ բազմօրինակ յաջողուածով հանդիպելին լսօղք այնպիսի բանից՝ արտաքոյ ակնկալութե քննչաց . միթէ ոչ ո՞ք գտաւ 'ի տեղւոջ բանակին 'ի բնակչաց երկրին . միթէ ոչ ո՞ք 'ի սպանողաց սր՟ցն պատմեաց զեղանակ կատարման նոցա . միթէ ոչ ո՞ք 'ի սր՟ բանակին գտաւ արտաքոյ թուոյ զինուորութե՟նց , ևն . դուցէ եթէ և քննիչն անդ լինէր՝ առանձնանայր 'ի խորշ մի տեսանել

նել և լսել զնմ՛ բան, զի լիցի ի՛քն սուտագրաւն պատմիչ։ Իսկ վերջին բանն պինիոսի չէ՛ արժանի պնդելոյ, որով հետև ստգտանէ յանիրաւի զվայելչական և զգովելի գործ սբ՟ց առ հասարակ, որք յելս իւրեանց ընդ մեր մաղթեցին հոգևոր և մարմնաւոր բարիս. որ է գործ սիրոյ և ծծամերձ ընտանութե՟, և ոչ պակասութեան խոնարհութե՟, ո՟պ պակասամիտք կարծեն. վ՟յ թուէր թէ զայդ անտեղի ը՟դիմութի 'ի դիմաց տխմարաց առնէ այրն իմաստուն։ Ապա թէ ոչ՝ պարտ էր առն կրետիսի փորձառական գիտութի ստանալ՝ անձամբ մարտիրոսանալով. զի յայնժամ անշուշտ քաջ իմանայր, թէ քանի՜ վայելչական են 'ի ժամուն մաղթանք այնպիսիք՝ 'ի հաստատութիւն հաւատացելոց. զի յիշատակ սքանչելեաց սրբ՟ցն ո՟յ է ամրացուցիչ հաւատոյ և յուսոյ քրիստոնէից մնացելոց, ո՟պ և օրինակ նց՟ յորդոր կենդանի սիրոյն ա՟յ. այլ զայս լեզու սբ՟ց ոչ դիւրաւ իմանայ Ծ։

(9) Այսպէս դնի որոշ թիւ՛ համարոյ սբ՟ցս 'ի վախճան վկայաբանութե՟ մերոյ ը՟ Ծ. ո՟պ և 'ի խորագրի եդեալ էր. * Նահատակութի անդրէի զօրավարի և
• զօրաց նց՟ երկու հազար և ութ հարիւրեցն, որոց
• անուանքն դրեալ են 'ի դպրութի կենաց ||։ Զնոյն յայտ առնէ և յընթացս պատմութե՟ն, ուր գրի՝ թէ սբ՟ն անդրէաս գնաց 'ի պատերազմ 599 արամբք, որք զօրավարաւն հանդերձ լինին 600. ապա յարեցան և ը՟առաջ եկեա՟լ զօրք 200. ո՟պ և զկնի՝ վարիչք նց՟ 2000. որոց գումարն է 2800։ Իսկ այլ օրինակք յոյն և լատին վկայագրաց դնեն 2597, կմ՟ 2593. յայտ է թէ 'ի մոռացօնս ունելով զերկերիւրսն. ո՟պ և 'ի Հ. առաւել սխալագրութբ՟ դնի բռ՟ և չէ՟։

(10) Լրագոյն և ճոխագոյն օրինակի հետևողութբ՟ հաստատէ և զվերջին բանս ճառընտրին մերոյ՝ ընթերցուածն մետափրաստեան առ սուրիոսի այսպս. * Իսկ
• պետրոս եպս տարսոն քաղաքի, որ սրբեաց զնա սբ՟
• աւազանաւ մկրտուե՟, նոննոս եպ՟ բերիացւոց, թէո-
• դուլոս և սինեսիոս սարկաւագունք, մարիանոս և
• նիկողայոս, եւսեբիոս և լամպրիոն դրակարդացք,
• զհետ գնային 'ի բացուստ՝ յորժամ հանդերձե՟լ էին
• նահատակիլ անդրէաս և որք ը՟ նմա, ցանկանալով
• գիտել զվախճան նց՟. զոր և գիտացին իսկ զմիահա-
• մուռ կատարումն ամենեցուն նոցա 'ի տր՟. զորոց և
• զպատուական նշխարս ամփոփեցին արժանաւոր պատ-
• ուով։

◆ ռէով ։ Տեսին և զհրաշալի աղբիւրն սքանչելարար ,
◆ որ բղխեաց 'ի հոսելոյ արեան արդարոյն և մեծ
◆ վկային ․ զի աղբիւրն այն իսկ և իսկ ը՟ բղխելն եցոյց
◆ զշնորհ բժշկութե՟ց ․ քանզի անդէն վաղվաղակի զմին
◆ յընթերցողաց անտի յիշատակելոցն՝ զլամբրիոն , որ
◆ տագնապէր 'ի չար այսոյն պղծոյ , և չև էր ազատել
◆ մինչև յօրն յայն , նախ զառաջինն բժշկեաց ․ և այն֊
◆ պէս ողջ առողջ դարձաւ ը՟ այլ ընթերցօղս ․ վ՟յ և
◆ ն՟ք օրհնեցին զա՟ծ երգովք , որ ճշմարտապէս փա֊
◆ ռաւորեալն է 'ի սբ՟ս իւր ։ Բայց ոչ ևս կամեցան
◆ դառնալ 'ի կիլիկիա ․ քանզի սելևկոս ունել կամէր
◆ զպետրոս տարսոնի եպ՟ս վ՟ս մկրտելոյ ն՟ց զնահատակն
◆ անդրէաս և զընկերս ն՟ր ․ այլ գնացին ա՟ծային առաջ֊
◆ նորդութեամբ յիսաւրիա , օրհնելով և գովելով զտ՟ր
◆ յս՟ քս՟ || ։

Ուր պինիոս լռէ զերօք՝ որոյ կարէր դիմախօսել , և
դիմախօսէ անհակառակելի իրաց ։ Նախ՝ ասէ ․ ✱ Առա֊
„ ւել հաճոյ էր ինձ , եթէ ասէր հեղինակն , թէ զհետ
„ երթային և ուղեկից լինէին սբ՟յն և ընկերաց ն՟ր առ
„ 'ի զօրացուցանել զն՟ս 'ի հաւատս և կազմ յօրինել 'ի
„ մարտիրոսութիւն , քան թէ առ 'ի դիտել զվախճան
„ նոցա ․ զի զի՞նչ բարի օգուտ լինէր 'ի բացուստ եր֊
„ թալն նոցա վ՟ս այնր պատճառի || ։ Երկրորդ՝ ասէ ,
✱ դիցուք թէ պետրոս ունէր զպատճառ իմն գնալոյ
„ յիսաւրիա , իբր զի սելևկոս կամէր ըմբռնել զնա՝
„ եթէ հաւատասցուք վկայագրին ․ բայց առ 'ի մէ՞ ըղ֊
„ նոյն արարին և նոննոս եպ՟ս բերիոյ և այլ կղերք ,
„ և ոչ յաւէտ դարձան 'ի տեղի իւրեանց || ։ Տեսանես ,
թէ որպիսի բանիւք սնոտեօվք լնուն քննիչք զէջս
թղթոց , և կարծեցուցանեն՝ թէ ընտրեցին զբարի բա֊
րին յամենս , և զխոտանն 'ի բաց ընկեցին ։ Թո՛ղ փո֊
խան մեր տացեն ընթերցօղք պինի այսպիսի բանա֊
կրկիտ արանց ․ զի մեր չիք ժամանակ ժամավաճառ լի֊
նելոյ ․ ապա թէ ոչ՝ ը՟ միոյ գո՛նէ տասն ունէաք 'ի
դէմս ածել պինի ։

(11) Եթէ ստոյգ իցէ օր կիրակէի նշանակեալ առ մե֊
տափրաստեսի , ո՟չ ստոյգ թուէի ժթ՟ օր օգոստոսի առ
ա՟մ վկայաբանս , կիրակէն յօգոստոսի ժթ՟ երկիցս հան֊
դիպեցաւ առ դիոկղետիանոսիւ ․ ի՟ յամի 294 ․ և 305 ․
վ՟ս որոյ մին 'ի թուականացս ունի լինել ա՟մ նահատա֊
կութե՟ ․ թո՛ղզի բարոնիոս ընտրէ դնել յամի 301 ․ և
պագիոս յամի 303 ․ և այլք այլազգ ։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սր՟յն Կալլինիկոսի ։

Հ· յուլիսի · 27 ։ Յ· և Լ· յուլիսի · 29 ։ Ճառընտ· Բ· · մժէ = մժը ։ Մետափր · առ սուր ։ Բոլլանդեանն պինիոս · ՚ի Է հատ · յուլ · էջ · 39 = 42 ։ (1)

ԲԱՐԵՅԱՂԹ ԵՒ ՔԱջայաղթ է անուամբ և է արդեամբ՝ որ վկայն ք՟սի Կալլինիկոս, կ՟մ Կալլինիկոս, է յունաց գալլինիգօս, որ յաւուրս կայսերութեանն ամպարշտ արքային Դիոկղետիանոսի, հայրենեօք՝ որպէս ասի՝ Կիլիկեցի, այր արդար և ա՟ծապաշտ, ճշմարտեալ հաւատով և առաքինի վարուք. որ և առ ծածուկ ունելոյ զքրիստոնէութ՟ին ՚ի ժամանակի անդ հալածանաց, և ձեռնտու լինելոյ հաւատացելոց ՚ի բազում իրս, առնէր վաճառականութ՟ի ձիթոյ յ՟երն գաղատացւոց. և անտի եկեալ յանկիւրիա քաղաք՝ դիւրագին տայր, մանաւանդ քրիստոնէից. իսկ յեկեղեցիսն ա՟յ առանց գնոյ ։ Նաև ուր և գտանէր առիթ դիպօղ, ուսուցանէր զհեթանոսս յա՟ծգիտութ՟ի ճշմարիտ. քանզի եռայր հոգւով, և իբրև իմաստուն վաճառական հնարէր 'ի պատճառս անցաւոր վաճառու ցուցանել ամենեցուն զանանց մեծութ՟ի ։ Օ այս իմացեալ կուապաշտ վաճառականաց՝ որք կային յանկիւրիա , առ նախանձու մատնեցին զնա իշխանին՝ որ զվերակացութ՟ի քաղաքին և ծին ունէր . և անուն նորա ը՟ ոմանց՝ սակերդոն (2) ։ Եւ նա հրամայեաց ածել զայրն, և առէ ցնա իշխանն . կալլինիկէ՝ թէ արդարև արհամարհես դու զա՟ծն , ո՟պ լսեմ, և պաշտես զա՟ծ քրիստոնէից զք՟ս . այլև զբազումս ուսուցանես անարգել զդիս , և ոչ պաշտել զկուռս ։ Ասէ սր՟բն . այո՛ ճշմարիտ են ասացեալքդ վ՟ո իմ . պաշտեմ զա՟ծ ճշմարիտ , և ոչ զդևս . և այլոց զնոյն ուսուցանեմ ճշմարտութ՟ի .

Յայնժամ բարկացեալ իշխանին ը՟ համարձակ պնդնիմն՝ հրամայեաց ջալոտիւք հարկանել զերանելին . և նա առ ոչինչ գրէր ըզհարուածս , ո՟պ թէ ինչ ոչ զգալով առ սէրն ք՟սի . այլ ուրախութ՟բ օրհնէր զա՟ծ ։ Ասէ իշխանն . արդ չզոհիցես ։ Կալլինիկոս ասէ . ո՛չ . այլ ա՟յ ամենակալի զբանական պաշտօն մատուցանեմ, որ արարիչն է արարածոց ։ Եւ 'բռնաւորն առաւել բարկացեալ՝ հրամայեաց երկաթիւ քերել զկողս նորա . իսկ նահատակն ուրախ էր 'ի տանջանսն . և արիւնն հոսէր իջանէր և լնոյր զվայրսն ։ Դարձեալ հարցանէր իշխանն . արդ արասցես զկամս թագաւորին յետ մատնելոյդ յայդպիսի տանջանս ։ Իսկ սր՟բն առաւել եւս խստագոյն ետ պղնձի՝ արհամարհելով զգլուխ նր՟, և անշարժ կալով 'ի խոստովանութե՟ ճշմարտութե՟ :

Զայն տեսեալ քրմաց՝ խրատ ետուն իշխանին, և ասեն ցնա. մի՛ հակառակիր. դա ո՛չ զանգիտէ 'ի տանջանաց և 'ի մեռանելոյ. այլև այլոց ևս տայ համարձակութի՟ արհամարհել զդիսն. այլ տո՛ւր 'ի մեզ զայրդ, և մեք քաղցր քաղցր բանիւք հաւանեցուսցուք զդա պաշտել զդիսն, երևեցուցեալ նմա՝ թէ ո՛չ անշունչ պատկերք են ա՟ծքն՝ ո՟ր կարծէ, այլ՝ ոգի կենդանի է 'ի ն՟ս: Եւ իբրև հաւանեցաւ ը՟ այն իշխանն, առին տարան քուրմք զս՟րն 'ի մեհեանն: Եւ նր՟ մտեալ 'ի ներքս՝ կարդաց առ ա՟ծ, և բուռն հարեալ զպատկերէ կռոցն՝ կործանեաց 'ի գետին, և ասէ. տեսէ՛ք զանզգայ և զսնոտի պաշտամունս ձեր: Յայնժամ զահի հարեալ քրմաց՝ գնացին պատմեցին իշխանին զեղեալսն կոծելով. և եղև աղաղակ և աղմուկ մեծ վ՟ն այնր :

Ընդ որ ցասուցեալ իշխանն և զայրագնեալ 'ի դիմէ՝ հրամայեաց բևեռս երկաթիս վարել ը՟ ներբանս ս՟բյն ա՟յ, կ՟մ ը՟ այլոց՝ կօշիկս երկաթիս բևեռել յոտս նր՟, և ընթացուցանել ը՟ մէջ քաղաքին անկիւրեայ՝ առաջի զօրականին, որք հեծեալ էին յերիվարս, և այնպէս տանել մինչև 'ի գանգրեայ քաղաք պափղագոնիոյ (այն է ռամկօրէն չանղըրը), որ սահմանակիցն է գաղատիոյ. և անդ հրով այրել զս՟րն՝ յահ և յերկիւղ ա՟մ քրիստոնէից :

Եւ զինուորացն առեալ գնացին . իսկ ս՟բն կաղինիկոս սիրով և խնդութե՟բ տանէր զանհնարին ցաւս տանջանաց յա՟մ ընթացս ճանապարհին . մինչև զարմանալ զինուորաց , և կարեկից լինել նմա . ոմանք ևս առ իւրեանց տխմարութեան ասէին ցնա . զի՞ կորուսանես զառատամտութի՟ քո , և ոչ խնայես 'ի պատուական անձինդ . որ այդպէս չարաչար վշտագնի , և ունի ևս 'ի հուր մատնիլ : Իսկ երանելին ասէր . ո՛չ խնայեմ ես 'ի տանջանս և 'ի մահ , զի գտանեմ զայն՝ որ նորոգէ զիս նոր 'ի կեանս անմահս . և յաւել խօսել առ նմ՟ բազումս վ՟ն յուսոյն յաւիտենից . մինչև յապուշ կրթիլ լսողացն : Եւ զի էր 'ի ժամանակին ջերմ սաստիկ յամենայն յուլիսի , և զօրականքն յանցանելն ը՟ անջրդի վայր՝ պապաքէին 'ի ծարաւոյ , ասէին ցս՟բն . եթէ ճշմարիտ են ասացեալքն 'ի քէն , հանցես մեզ ջուր յանջրդւոյս՝ խնդրելով յա՟յն քո , զոր ասես արարիչ ա՟մ արարածոց : Յայնժամ ս՟բն աներկբայ հաւատով յա՟ծ ապաւինեալ՝ եդ ծունր , և կայր յաղօթս հանդերձ արտասուօք անբարբառ : Եւ անդէն բղխեաց ջուր ցուրտ և բարեհամ յանջրդւոջ երկրի յապառաժ վիմէ 'ի տեղւոջն՝ որ կոչիւր մատրիկէ . և զօրականքն արբին և զովացան , և գոհացան զս՟բյն . և ոմանք 'ի նոցանէ հաւատացին յա՟ծ :

Իբրև հասին 'ի սահմանել տեղին , չիշխէին ձեռն արկանել 'ի նա , և մատնել 'ի հուր , յիշելով զերախտիս ն՟ր ։ Իսկ ս՟րն ա՟յ ստիպէր զն՟ս՝ կատարել զհրաման իշխանին ՚ի վերայ իւր. զի փափաքէր ելանել ՚ի մարմնոյ, և մտանել առ ա՟ծ. ոչ թէ ասել, եթէ դուք զովանալ կամեցայք ջրով, և ես պասքեալս սիրոյն ա՟յ՝ նովաւ փափաքեմ զովացուցանել զանձն իմ ՚ի մէջ հրոյ. և նոքա իբրև ՚ի հարկէ, առ ահի բռնաւորին կատարեցին զասացեալսն. և հուր բորբոքեալ ՚ի հրապարակի գանգրեայ՝ այրեցին զս՟րն ա՟յ զքաջայաղթն կալինիկոս, ՚ի յուլիսի ամսոյ իթ՝ յամի տ՟ն իբր 303, այս է ՚ի ժամանակի մեծ հալածանացն դիոկղետիանոսի ։ (3)

Իսկ բարեպաշտ կին ոմն առեալ զնշխարսն՝ եդ ՚ի պահեստի, մինչև դադարեցին հալածանքն. ապա շինեաց վայելուչ վկայարան ՚ի քաղաքի անդ գանգրացւոց. և եդ անդ զնշխարս ս՟րյն. յորում տեղւոջ ոչ սակաւ բժշկութիւնք կատարէին ։ Որպէս և վ՟ն աղբերն՝ զոր բղխեցոյց ս՟րն աղօթիւք ՚ի վերայ ճանապարհի, ասէ հին վկայաբանն՝ թէ կայ մինչև ցայսօր ժամանակի, և բժշկութիւնս կատարէ ։ Շինեցաւ և այլ վկայարան մի կ՟մ երկու ՚ի կոստանդնուպօլիս յանուն ս՟րյն կալինիկոսի յաւուրս քրիստոնեայ թագաւորաց. և մեծաւ պատուով տօնախմբեալ լինէր յիշատակ ս՟րյ վկային յաւուր կատարման նորին՝ ը՟ ա՟մ տեղիս ։ (4)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) ՚Ի կարգի հին և հարազատ վկայաբանութեանց փայլէ այս օրինակ մեր՝ զոր ունիմք ՚ի նշանակեալ ճառընտրի․ ուր ոչ ժամանակն որոշ նշանակի առ դիոկղետիանոսիւ, նոյնպէս և պատմութիւն պարզ և անպաճոյճ առաջի դնի ըստ գրելոցս։ Ուր այլք ՚ի վկայագրաց ընդ մետափրաստեսի՝ թէպէտև զգոյացութիւն պահեն պատմութեան, բայց պէսպէս զարդաբանութեամբ և կուտակութեամբ օտարանան ՚ի հին ոճոյ․ թող զի և զժամանակն ոչ ստուգեն․ վասն ՚ի լուսանցս տպագրութեան սուրիոսի գուշակութեամբ դնի յամի տեառն 250․ առ դեկոսիւ․ որպէս և առ բարոնիոսի եդեալ է ըստ կամի՝ յամի 254․ ուստի և պինիոս բոլլանդեան կայ մնայ ՚ի տարտամ միտս․ որում ընծայ մեծ լինէր՝ եթէ մատուցանէր ոք զմերս օրինակ։

(2) Զոր ինչ ոչ նշանակէ մերս Ծ․ անդանօր խորհրդով առեմք, ըստ ոմանց, կամ ըստ այլոց․ վասնզի կիլիկեցի լինել սրբոյն կալլինիկոսի ծննդեամբ․ և անուն քաղաքապետին անկիւրիոյ՝ սակերդոն․ զոր մետափրաստէս կոչէ սակերդոնիոս․ և ՚ի Հ․ ըստ օրինակաց ինչ գրի ոսկերգոն․ իսկ սուրիոս վերածեալ է ՚ի լատին անուն սաչէրտօս․ որ թարգմանի քահանայ կամ քուրմ։ Զանուն տեղւոյն ևս՝ ուր բղխեաց աղբիւրն, ըստ մետափր՟ յաւելաք՝ մատրիկէ։ Իսկ զչափ ասպարիզաց ընթացից սրբոյն ոչ նշանակեցաք, զի ամենայն օրինակագիրք պէսպէս վրիպակ գրչութեան ՚ի մէջ բերեն․ Ծ․ ասպարէզս հինգ ասէ․ առանց որոշելոյ՝ ցորվայր․ Հ․ դնէ Դ միլոն․ որպէս թէ յանկիւրիոյ մինչև ՚ի տեղի աղբերն բղխելոյ․ և անտի ՚ի գանգրա՝ Ժ միլոն ասէ․ ուր ոմանք ընդհանրապէս Ճ ասպարէզ գրեն․ և այլք Կ․ որպէս և ոմանք՝ ձիոյ արշաւանս Է։ Այս ինչ յայտնի է, զի գանգրա չէ՛ շատ հեռի յանկիւրիոյ․ և մի ՚ի դրանց քաղաքիս առ գերեզմանոցաւ կոչի՝ չանղրը գաբուսու, այսինքն դուռն գանգրեայ․ ընդ որ անցուցին անշուշտ և զսուրբն կալլինիկոս։

(3) Վրիպակաւ գրչի դնի ՚ի Ծ․ * իթ յունիսի ամսոյ || ․ փոխանակ գրելոյ՝ յուլիս․ որպէս յայտ է յամենայն վկայագրաց և ՚ի յայսմաւուրաց, և ՚ի սովորութենէ աւուր տօնախմբութեան․

ԹԷ. որ է Ճ տարւոյ ՚ի ԻԹ յուլիսի, և Ճ մեղ ՚ի միջոցի ծածանի կմ̃ օգոստոսի:

(4) Զվկայարան ս̃բյն կալինիկոսի ՚ի կոստանդինուպօլիս՝ այսպէս նշանակեն յոյնք. * Կատարի տօնախմբութի „ սորա ՚ի տեղի կամրջաց յուստինիանոսի և ՚ի պետրիոն „ ||: Յիշեն այլք ՚ի տեղագրաց զգուռն մի յանուն ս̃բյն կալինիկոսի ՚ի կոստանդինուպօլիս. որպէս և կամուրջն ասեն մօտ ՚ի վկայարան ն̃ր՝ կոչիւր կամուրջ կալինիկոսի. և զայս վկայարան՝ որ առ կամրջին շինեալ ՚ի յուստինիանոսէ, վերստին նորոգեաց վասիլ կայսր արշակունի. ոպ̃ պատմէ Թոռն ն̃ր պերփերուժէն: Իսկ զոր ՚ի պետրիոն վկայարան՝ կամ իւր նոյն, և կամ այլ յառաջնոյն լինի իմանալ: Նշխարք ս̃բյն հանդերձ եկեղեցեաւն՝ որ ՚ի գանդրա, յիշատակին առ պատմագիրս մինչև ՚ի հինգերորդ դար. այլ զկնի չիք յիշատակութիւն:

ԿԸ-

ԿԱՏԱՐՈՒՄՆ

Սրբոյն Դիոմիդեայ բժշկի ։

Հ. օգոստ. 17 ։ Յ. և Լ. օգոստ. 16 ։ Դա-տընդ. Ա. Դկ=Ծհէ. և Բ. Ճկ=Կէ ։ Բոլլանդեանն պէնետոս. 'ի Գ հատ. օգ. էջ. 266=270 ։ (1)

ԽՈՍՏՈՎԱՆՈՂ ՎԿԱՅՆ Ք՟նի մեծն Դիոմիդէս բժշկապետ (2) ՝ էր յաւուրս անօրէն կայսերացն Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի, ծնեալ և սնեալ 'ի Տարսոն Կիլիկեցւոց, քրիստոնեայ կրօնիւք, յազգէ ազնուական, մեծատուն յոյժ, բարեպաշտօն և երկիւղած այ՟, զարդարեալ ամ՟ առաքինութբ՟ և ծրիւք հոգւոյ և մարմնոյ, և զիմաստութի՟ իբրև զզարդ անձին արկեալ զիւրև․ որոյ վ՟ն և պատուական երևէր յաչս ամենեցուն ։ Քանզի և էր երիտասարդ առոյգ տիօք և վայելչազարդ պատկերաւ․ իսկ հանճար մտացն և կորովութի՟ հոգւոյն սքանչելի ։ Տեղեակ և հմուտ էր բժշկականին 'ի մանկութէ իւրմէ՝ առաւել քան զամ՟ հելլենացի իմաստասիրացն մանկունս․ ո՟չ զի ըզբոլոր արուեստս բժշկութեան՝ զոր նոքայն պատմէին, լի կատարեալ գիտէր, զասկղեպեայն, և զՀիպոկրատեայն, և զԴիմոկրատեայն, և զմեծին Գաղիանոսի (յ̄ Գաղենոսի) ։

Նա շրջէր ա̄մ ուրեք առ հիւանդս կարօտեալս, և զամենեսեան առհասարակ ձրի բժշկէր ․ և տ̄ր ետ նմա զշնորհս բժշկութեան, զի ոչ այնչափ մարդկային արուեստիւն կատարէր նա զբժշկութիւնս, որչափ զօրաւոր հաւատովքն իւրովք՝ կարդալով 'ի վ̄ր իւրաքանչիւր ումեք զանունն տ̄ն մերոյ յ̄ի ք̄ի, որպէս ստուգապէս աշակերտեալ ք̄սի երկնաւոր բժշկին ։ Եւ վ̄նկ ոչ զմարմինս ևեթ դարմանէր, այլ առաւել զհոգիսն բժշկէր, ուսուցանելով զամենեսեան հաստատուն և անշարժ կալ 'ի հաւատս ճշմարտին ա̄յ, և առ ոչինչ համարել զկուռս անմռունչս, և ոչ զանդիտել յառժամանակեայ մահուանէ ․ արհամարհել զփառս անցաւորս, և յաւիտենականին միայն սպասել ․ և խոստովանել զք̄ս աներկիւղ առաջի դատաւորաց և թագաւորաց ։

Եւ երբև այսպիսի քաջալերութբ̄ և մխիթարական վ̄պութբ̄ զբոլոր ա̄ն կիլիկեցւոց ելից երանելի այրս այս Դիոմիդէս՝ յաւուրս հալածանաց, ապա 'ի մտի եդ գնալ հասանել յա̄ն բիւթանացւոց ․ զի և անդ կալանաւորաց եղբարցն՝ որք վ̄ն ք̄սի մեծաց նեղութեանց համբերէին, սպաս տարցի 'ի ձեռն բժշկական և քաջալերական բանից ․ և եկեալ 'ի մայրաքաղաքն Նիկիայ՝ կամեցաւ բնակել անդ ․ քանզի ցանկալի թուեցաւ յաչս նորա

դեր

դէր քաղաքին իբրև զհոյակապն տաճարն՝ յորում մնեալ էր ։ Նա և կալեալ անդ բնակութ՟ն՝ 'ի վայր արկանէր զարուեստն իւր , շրջելով 'ի հրապարակս քաղաքին ․ և համբաւ բարեզարդութ՟են և յոյժ հմտականութ՟ն արհեստին հասանէր 'ի լուր ամենեցուն ․ և ք՟ կամելոյն ա՟յ՝ յոր ինչ և ձեռն արկանէր , ա՟մ 'ի բարիս մատակարարէր ․ և յառաջադէմ և անուանի լինէր 'ի մէջ հանդիսական ժողովոցն ։

Նայն՟ր դուզնաքեայ և յոչինչ համարեալ զմարմնական բժշկութիւն՝ առաւելագոյն փոյթ տանէր հոգևորականին 'ի ձեռն անկեղծ հաւատոյն և սիրոյն , զոր ունէր առ ք՟ս ․ և այնպէս առանձինն և 'ի հրապարակի աներկիւղ համարձակութ՟բ զք՟ս քարոզէր , ոչ միայն 'ի քաղաքի , այլև յա՟մ գաւառն բիւթանացւոց ։ Նա քանզի 'ի բանտի արգելեալք էին բազումք քրիստոնեայք և խոստովանող վկայք , ինչս բազումս տուեալ բանտապահացն , և համարձակութիւն առեալ՝ յա՟մ ժամ մտանէր առ կապեալսն , սպասաւորէր և բժշկէր զհարուածս վիրաց ն՟ց ․ և ա՟մ ուրեք շրջէր և ժողովէր ինչս բազումս , և այնու դարմանէր զն՟ս ․ և հանդերձ սպեղանեօքն մարմնականաւ՝ զհոգևորական դեղն ներգործէր յամենեսեան ։

Զքաջասիրտսն յօժարեցուցանէր և յորդորամիտս առնէր 'ի հանդէս նահատակութ՟ե զուարթագին բանիւք ․ միանգամայն և աղաչէր աղօթս առնել 'ի վ՟ր ինքեան , և 'ի վր ամ աշխի . որոյ զի անցցէ խռովութի կռապաշտութեն , և բարեպաշտութեն հաւատս համարձակ քարոզեսցի ընդ ամ աշխս : Իսկ զվատասիրտսն քաջալերէր և զօրացուցանէր քաղցր բարբառով՝ ասելով . յիշեցէք եղբարք , զի առ ժամանակ մի են տանջանքդ , և յաւիտենական՝ պսակքն . յուշ լիցին ձեզ սբ վկայքն , որ նախ ք զձեզ բազում չարչարանս չարչարեալք կատարեցան ՚ի քս . և յիշատակ բարի թողին ամենեցուն յայսմ աշխիս , և ՚ի հանդերձեալ կեանսն ժառանգորդք եղեն երկնից արքայութեն ը տն իւրեանց , յորոց վր եդին զանձինս իւրեանց : Յուշ առնէր նոցա և զտրունական սպառնալիսն , եթէ ամ՝ որ ուրացի զիս առաջի մարդկան , ուրացայց և ես զնա առաջի հօր իմոյ՝ որ յերկինսն է : Եւ դարձեալ զյորդորականսն , եթէ մի երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմինն , և զոգին ոչ կարեն սպանանել : Ընդ նմին և զառաքելականն , եթէ չեն արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են ՚ի մեզ : Եւ այլ ևս բազումս այսպիսիս քաջալերական բանս ՚ի սբ գրոց առաջի առնէր նոցա ՚ի մխիթարութի . զի քաջ գիտակ էր ածային տառից , և խելամուտ ամ հոգևոր վդպութե . և այնպէս վառէր հրով հոգւոյն զմիտս երանելեացն խաչակից լինել հասարակաց արարչին , և հաղորդ փառաց նորա :

Իսկ ապա իբրև տեսին զնա ոմանք ՚ի հեթանոսականացն , որ այսպէս զամենեսեան սրտապնդէր , երթեալք 'ի նիկոմիդացւոց քաղաքն՝ պատմեցին մաքսիմիանոսի թագաւորի , և ասեն . այր ոմն քրիստոնեայ՝ անուն դիոմիդէս՝ յարուե՛ստէ բժիշկ , բնակէ 'ի նիկիացւոց քաղաքին . և պատճառանօք բժշկութե՟ն շրջի ը՟ ա՟մ աշ՟ս բիւթանացւոց , և կախարդական հաւանութ՟բ զբազումս 'ի բաց դարձուցանէ յա՟ծոցն , ասելով՝ թէ չեն ն՟ք ա՟ծք , այլ՝ կուռք անմռունչք . և զայլ ոմն խաչեալ ա՟ծ ասէ , և զամենեսեան նմա աշակերտէ . և թէ ոչ երագ ժամանեսցես և ըմբռնեսցես զնա արքայ քաջ , զաշ՟ս զայս ապստամբեցուցեալ յինքնակալու՟էդ ձերմէ՝ հակառակ ը՟դէմ քո յարուցէ ։

Իբրև լուա՛ւ զայս թագաւորն , լի եղև սրտմտութ՟բ , և իբրև հրով այնպէս բորբոքեցաւ տապով նախանձու . ք՟զի և յառաջագոյն այսպիսի համբաւ մ՟ո ս՟բյն հասեալ էր 'ի լսելիս ն՟ր . բայց իբրև բժիշկ մեծանուն 'ի թագաւորութե՟ն իւրում և պիտանի այր՝ լինէր ցայնվայր , և սպասէր որսալ զնա հնարիւք 'ի ձեռս իւր ։ Յայնժամ յայտնապէս առաքեաց դահիճս հանդերձ բազում զօրօք . որպէս զի վաղվաղակի կալցեն զնա , և ածցեն երկաթի կապանօք առ ինքն ։ Եւ եկեալ դահճացն 'ի քաղաքն նիկիայ , և ըմբռնեալ զերանելին՝ մինչդեռ ուսուցանէր 'ի մէջ հրապարակին , վաղվ՟ղկի կապեցին զնա ձեռս յետս ը՟ արքունի հրամանի , արկին և անուրս զպարանոցաւ ն՟ր , և կալեալ եդին զնա կապանօք 'ի վերայ գրաստու . և 'ի չուան անկեալ՝ ճանապարհ արարին 'ի Նիկոմիդիա քաղաք ։

Իսկ ս՟բ այրն ա՟յ թէպէտև յոյժ ցանկութի՟ւն ունէր վ՟ն ք՟սի տանջանս ըն՟ունել, սակայն հոգայր վասն այնոցիկ՝ որոց բարուոք տնօրինէր ․ զուցէ ոք 'ի վատասրտացն անհամբեր գոլով՝ ուրասցի զք՟ս, և գայթակղե՟լ անկցի 'ի վիհս կռապաշտութե՟, կերակուր լեալ չար վիշապին ։ Եւ իբրև յուղի անկանէր երանելին այսպիսի տխրութե՟ք և հոգալով վ՟ն այլոցն՝ որ 'ի տանջանսն էին վ՟ն ք՟սի, դարձե՟լ այլ հոգ անհնարին զնովաւ պատէր վ՟ն անգիտելի ելից իրացն ․ քանզի որչափ զանձն յօժարամիտ տեսանէր առ նահատակութի՟ 'ի սէր փրկչին, նոյնչափ և կասկածէր՝ թէ թագաւորն խնայեսցէ 'ի նա առ ուսալոյ 'ի ցանց խաբէութե՟ ․ այլ և զօրականքն զնոյն ասէին, թէ զայդպիսի գեղեցկութի՟ և զազնուականութի՟ ոչ կորուսանէ արքայ՝ որ գիտէ և զպիտանութի՟ առնդ ։ Ընդ որ առաւել տխրէր երանելին, և կարեվէր խոցէր 'ի սրտի իւրում ․ մի՛ արդեօք արքանեակն չարին պահեսցէ զմարմին ն՟ր 'ի կորուսանել զհոգին ։

Արդ յորժամ կենդանի նահատակն յայսպիսի հնոցի սիրոյ և երկիւղի անձամբ զանձն խորովէր, իբրև հասին 'ի տեղի մի՝ որ ոչ էր հեռի 'ի քաղաքէն՝ ուստի ելին, աղաչեաց զդահիճն, այլ զի իջուցեալ զնա 'ի գրաստէն՝ սակաւիկ մի ներեսցեն նմա յաղօթս կալ ․ և խոնարհեալ ն՟ց յաղաչանս ն՟ր՝ թոյլ

ե֊

ետուն նմա, որ՟պս և կամեցաւ ․ զի պատկառէին 'ի շքեղ առն դիմաց և մեծարէին զնա։ Այլ ն՟ր մեկնեալ 'ի ն՟ցէ իբրև քարընկեց մի եդ ծունր կապանօքն հանդերձ, և եկաց յաղօթս ․ զոր և լսէին ոմանք 'ի զօրականէն և 'ի սպասաւորացն, զի ասէր ․

Տ՟ր իմ Յ՟ս Ք՟ս՝ որդի բարձրելոյ Հօր, ա՟ծ հրեշտակաց և մարդկան և ա՟մ անուան անուանելոյ յերկինս 'ի վեր և յերկիր 'ի խոնարհ ․ օրհնեմ զքեզ՝ որ արժանի արարեր զիս խոստովանողական վկայութ՟ն ը՟ունել վ՟ս քո ․ աղաչեմ զքեզ Թագաւոր իմ և ա՟ծ, ընկալ զպաղատանս իմ, և կատարեա՛ 'ի բարի ըղխնդրուածս իմ, զոր հայցեմ 'ի քէն 'ի ժամուս յայսմիկ՝ իբրև 'ի կատարած կենաց հասեալ և յոգիս ապաստան ․ մի՛ թողուր զիս 'ի ձեռանէ քումմէ, զի մի՛ թակարդապատ եղեալ 'ի մենքենայից բանսարկուին՝ անկայց 'ի պատրանս խաբէութե՟ն ն՟ր ․ մի՛ տար թոյլ խոցոտել զիս հրացեալ նետոց իշխանի աշխարհիս այսորիկ ։ Մի՛ ծածկեսցեն զիս յորձահոս մրրկեալ ալիք կենցաղոյս ․ օգնեա՛ ինձ երկնաւոր նաւապետ տ՟ր իմ Յ՟ս ․ զի մի՛ անդնդասոյզ եղեալ ընկղմեցայց 'ի խորս յաւիտենից այսորիկ ։ Փրկեա՛ զիս յորովայնէ վիշապին, և կորզեա՛ զիս 'ի ժանեաց արիւնախանձ գազանին, որ շուրջ գայ գոչէ և կամի կլանել զիս ․ վ՟ս զի դու ստեղծեր զիս յորովայնէ մօր իմոյ, և զնկարակերտութ՟ի պատկերի իմոյ դու յօրինեցեր ․ և ես քեզ խոստացայ պահել զսա անարատ գեղեցկայարմար՝

ստեղծողիդ իմոյ և տ՟ն ։

Արդ՝ պահեա՛ զսա անշարժ ա՟մ անդամօք 'ի վր՟ վիմիդ հաւատոյ , յորում 'ի սկզբանց անտի հիմնացեալ հաստատեցայ ․ յորոյ վր՟ և զարիւնդ քո զանապական հեղեր ․ պարզապեա՛ զիս աջովդ այդ՝ որ տարածեցեր 'ի վր՟ խաչին ․ և վս՟ զի մարմին և անդամ քեզ անուանեցեր , հաստ՛ զսա անարատութ՟բ 'ի գերագոյն գլուխդ՝ որ կայ ը՟ աջմէ ա՟յ ։ Կառավարեա՛ առ իս զկամն քո բարեգութ ․ և ո՟չ կամք քո նախախնամողական կամիցի զօգուտն իմ , այնպէս կատարեա՛ զընթացս իմ 'ի բարի ։ Զի ոչ եթէ յառժամանակեայ մահուանէս յայսմանէ զանգիտեմ ինչ , այլ՝ քեզ ամենագիտողիդ յանձն առնեմ զպահպանութ՟ի հոգւոյ իմոյ ․ ո՟չ զի անապական ընկալայց զսա միաւորեալ ը՟ անեղծ մարմնոյ 'ի միւսանգամ գալստեանդ քո ․ և յարազուարճ բերկրանօք ը՟ ա՟մ սբ՟ս քո փառաւորեցից զքեզ հանդերձ հարբ և ամենասբ՟ հոգւովդ յաւիտեանս յաւիտենից , ամէն ։ Եւ իբրև կատարեաց երանելին զաղօթս զայս , և ասաց զամէնն 'ի ձայն բարձր , անդէն կնքեալ զինքն նշանաւ սբ՟ խաչին՝ աւանդեաց զհոգին իւր 'ի ք՟ս ։

Իսկ զինուորացն կացեալ մնացեալ յետ դադարելոյ ձայնին՝ կարծէին , եթէ յարուցել գայ դիմիդէս առ ն՟ս ․ և իբրև յամեաց հարուստ մի ժամ , առէին , գուցէ փախիցէ ․ և ընթացել 'ի տեղին՝ տեսին զկապեալ ձեռս ն՟ր լուծեալ 'ի շղթայից , և տարածեալ 'ի բարձունս . և նայեցե̃լ 'ի սքանչելիսն յայն՝ զարհուրեալք լինէին . ապա հպեալք առ նա՝ կային պշուցեալք . և 'ի տեսանելն զնա անշարժ՝ համարեցան , եթէ ննջէ . և մատեան 'ի զարթուցանել զնա , և ահա վախճանե̃լ էր : Յայնժամ զարմացան և տխրեցան ընդ իրսն . և 'ի վարանս անկեալ՝ խորհուրդ 'ի մէջ առնուին , թէ զի՛նչ արասցեն , զի մի՛ կարծեսցի դաւ ինչ լինել 'ի վ̃ր առն այնպիսւոյ , եթէ ինքեանք փախուցին զնա , և պատուհաս կրեսցեն յարքայէ . վ̃ոյ միաբան հաստատեցին հատանել զգլուխ մեռելոյն , և տանել առ թագաւորն :

Եւ զի տակաւին չէին հեռի 'ի քաղաքէն նիկիացւոց , ազդ արարին իշխանի քաղաքին վ̃ն մարմնոյ սր̃յն . և ինքեանք առեալ զհատեալ գլուխն՝ փութանակի չոգան առ թագաւորն , և պատմեցին նմա զոր ինչ եղեն : Բայց ասի՝ թէ արքն , որոց հատեալ էր ըզգլուխ առն ա̃յ , հարան կուրութ̃բ . և այնպէս եկին ը̃ այլս 'ի Նիկոմիդիա , և յանդիման եղե̃լ Մաքսիմիանոսի՝ պատմէին զանցս իւրեանց : Իսկ իբրև ետես զայն թագաւորն և լուաւ զա̃մ եղելոցն , տրտմեցաւ յոյժ ո՛չ այնչափ վ̃ն արանցն կուրացելոց , որչափ վ̃ն մահու դիոմիդեայ . զի և լուր տեսութ̃ի գլխոյ մեռելոյն ապշեցոյց զնա , և ցաւեաց նմա յոյժ վ̃ն այնչափ վայելչութե̃ նկարագրի պատկերին , որ ոչն ժամանեաց առ նա կենդանւոյն : Եւ սովիմբ յայտնի եղև խնամք բարձրելոյն 'ի վ̃ր ծառային իւրոյ , զոր կան֊

խաւ առ ինքն կոչեաց , զի մի՛ լիցի նմա ՚ի գայթակղութի՟ գգուանք և սէր Թագաւորին ։

Ապա նոյնժամայն հրաման ետ Թագաւորն նոցին իսկ զինուորաց , զի տարցին անդրէն զգլուխն՝ ուր մարմինն էր , և դիցեն ը՟ մարմնոյն ՚ի շիրմի ․ զի մի՛ յիշատակ այնպիսի առն կորիցէ ։ Եւ նք՟ առեալ զգլուխն նր՟՝ դարձան ՚ի տեղին ը՟ հրամանի Թագաւորին ․ և տեսին անդ սքանչելիս կրկին ․ զի երեք աւուրք ՚ի վ՟ր անցեալ էին , յորմէ հետէ գլխատեալ կայր մարմին սր՟յն ․ և ահա յառաջնմէ օրէ անտի ագռաւ մի հասեալ անդր՝ պահէր զպատուական մարմինն ․ և ոչ թողացուցանէր զայլս ՚ի թռչնոցն մերձենալ առ նա ․ մինչև եկեալ զօրականաց՝ գտին զմարմինն անարատ և, յարեցին ը՟ նա զգլուխն ։ Եւ նոյնժամայն շնորհք ա՟յ եղեն ՚ի վ՟ր արանցն , և բացան աչք կուրացելոց , և ս առաւել աչք սրտից նց՟՝ ՚ի տեսանել զճշմարիտ լոյսն ք՟ս ․ և անդէն ՚ի բաց եդեալ զզինուորական պատիւն՝ աշակերտեցան ճշմարիտ հաւատոյն , և եղեն սպասաւորք նր՟ նշխարացն՝ զոր ամփոփեցին ՚ի նիկիա ․ և ոչինչ զանգիտեալք յահագին սպառնալեաց Թագաւորին՝ աներկիւղ զք՟ս քարոզէին ․ և զբազումս ՚ի զինուորակցաց իւրեանց յորդորէին միանալ ը՟ ամենահեշտ լծոյն ք՟սի , որպէս և նոքայն ։ (3)

Եւ էր կին մի մեծատուն ՚ի սեբաստէ՝ պատրոնիա անուն (4) , որ ՚ի բազում ժամանա-

կաց

կայ հետէ տանջեալ լինէր ախտիւ՛ որովայնի իւրոյ . և ծախեալ ինչս բզ՟մս 'ի բժիշկս՝ չէր ինչ օգտեալ ։ Սա մատուցեալ առ իշխան քաղաքին ինչս բազումս՝ խնդրեաց ըզմարմին ս՟բ վկային դիոմիդեայ բժշկի . և առեալ զնա եօծ անոյշ իւղովք , և ն՟բ կտաւովք պատեալ՝ եդ 'ի պատշաճ տեղւոջ . որ և անդէն վաղվաղակի եգիտ զառողջութի՟ . և յայնմհետէ բազում բժշկութի՟ք լինէին 'ի տապանէ ս՟բյն ։

Արդ՝ այսպ՟ս կատարեցաւ ն՟բ խոստովանող վկայն դիոմիդէս 'ի ճանապարհի մերձ 'ի մայրաքաղաքն բիւթանացւոց նիկիա յամսեանն օգոստոսի (5) , յամի տ՟ն իբր 303 ։ Իսկ ապա յետ սակաւ ինչ ժամանակի՝ յորում ծագեաց աստղն լուսոյ ք՟սապսակէ՟ կայսրն կոստանդիանոս , և 'ի բաց բարձեալ զա՟մ զաւակս ամպարիշտ թագաւորացն՝ ծաւալեցոյց ը՟ ա՟մ տիեզերս զհաւատս բարեպաշտութե՟ , և բազմացոյց զեկեղեցիս , յայնժամ հրաման ետ թագաւորն , զի շինեսցեն երիս եկեղեցիս կ՟մ վկայարանս յանուն ն՟բ և մեծափառ վկային դիոմիդեայ . մի՝ 'ի մայրաքաղաքն նիկիա . և մի 'ի հռչակաւորն նիկոմիդիա . և միւս ևս 'ի նորակերտ ձեռակերտն իւր 'ի նորն հռովմ , այս է 'ի կոստանդինուպօլիս . մասնաւորեալ յերիս եկեղեցիս զնշխարս ս՟բյն . միանգամայն և պատուէ՛ր եդեալ ամ յամէ զօր յիշատակի նորա տօնախմբել 'ի վերջտասանն օգոստոսի . որ էր օր կատարման ն՟ր , և կ՟մ թաղմանն ։

Իսկ զտաճար սբյն զշինեալն 'ի մեծէն կոստանդիանոսէ 'ի Թագաւորեն քաղաքի անդ՝ վերստին նորոգեալ մեծացոյց և հոյակապ կառոյց, և բազում սպասուք զարդարեաց բարեպաշտ կայսրն վասիլ արշակունի. նոյնպէս և զմերձակայ մենաստան՝ որ յանուն սբյն. քանզի և պարտական ճանաչէր զանձն սբյն գրիգորեայ, որոյ հրաշալի տեսլեամբ գուշակեցաւ ամբարձումն իւր յաթոռ կայսերութե. ոպ̃ ճոխագոյն գրէ թոռն նորին վասլի կոստանդին կայսր պերփերոուժէն, այս է ծիրանածին, 'ի վարս հաւուն իւրոյ. գլ. ը̄. և հզ̄: Իսկ յետ ժամանակաց երևելի մասն նշխարաց սբյն գրիգորեայ փոխադրեցաւ յարևմուտս յՏ̃ն իտալացւոց: (6)

* * *

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Երկին օրինակ վարուց սբյն գրիգորեայ գտանի 'ի ճառընտիրս մեր՝ թարգմանեալ 'ի յունականէ: Մին 'ի ճ. Ա. վսեմ և պանծալի ճոխաբանութբ ը̄ ձևոյ ճառաբանից, ընտիր ընտիր խորհրդածութբք. և միւսն 'ի ճ. Բ. սոսկ պատմողաբար՝ ճիշդ և վայելուչ կարգաբանութբ. որում առաւել զհետ գնացաք և մեք. թէպէտև յերկոսեանն մի և նոյն պատմութի բովանդակի: Յիշատակէ և պլինիոս բոլլանդեան զայլևայլ հին վկայաբանութիւնս յունաց, յորս է որ պատմողաբար, և է որ ներբողաբար ճառագրէ զվարս սբյս. և վկայէ՝ թէ յամենեսին նոյն է իսկութի պատմական. և ինքն առ խորշելոյ յերկարութէ զմին 'ի համառօտագրաց 'ի մէջ բերէ. որ և գեղեցիկ համաձայնի ը̄ մեզ:
Թող զայլ կարճառօտ քաղուածս նոյն պատմութե 'ի յայսմաւուրս իւրաքանչիւր ազգաց, յորոց չէ մարթ

իմանալ զկատարեալ տեղեկութիւն վարուց սորա: Ուր թողից, զի ՚ի Լ. համառօտագրութեանն յինքն բերէ և զվրիպակ կարծիս, որպէս թէ գլխատմամբ նահատակեալ եղէ սուրբն Դիոմիդէս. ուր յայտ է յոմանց հին գրչաց, թէ խաղաղութեամբ աւանդեաց զոգին, և ապա գլուխ նորա հատաւ և բերաւ առ Թագաւորն: Այլ պնդինս առ արդարացուցանել զխաղանս զայս՝ հաւանական համարի ըստ ոմանց, թէ կայցէ և այլ վկայ Դիոմիդէս անուն սրով վախճանեալ. այլ զայս թողումք ընտրութեան լատին հեղինակաց. որ ոք կամի՝ տեսցէ առ Բոլլանդեանս յօգոստ. 16. և ՚ի յունիսի. 9: Խիթալի է ինձ, թէ խղճահարք ոմանք առ չհամարելոյ բաւական առ մարտիրոսութիւն զխոստովանողական վախճան սրբոյն Դիոմիդեայ մեծանուն վկայի՝ յայնպիսի կարծիս են երկփեղկեալ. զորմէ մեզ չէ փոյթ:

(2) Տիոմիտիս ըստ յն. յորմէ ՚ի լտ. տիոմէտէս, (որ մարթի ստուգաբանիլ՝ հոգածու, քաջախորհ. դիւցախօս, կամ աստուածախորհուրդ), ուղիղ գրի որպէս ՚ի ճառընտիրս, նոյնպէս և յընտիր օրինակս տօնացուցից՝ Դիոմիդէս կամ Դէոմիդէս. այլ ՚ի Հ. ոչ ուղիղ, Դամեդոս կամ Դամեդիանոս, Դամետոս կամ Դամետիանոս. որպէս և ՚ի սխալագիր տօնացուցս ինչ եդեալ է՝ Դեմետրեայ կամ Դեմետրի. որ է անուն այլոյ սրբոյ:

(3) Առ առնուլ զճաշակ պերճաբանութեան Ա. ճառընտրի, արժան է ընթեռնուլ զհատուածն որ վերայ տագնապի սրբոյն, և աւանդման հոգւոյն:

Բայց չէ պերճախօսութիւն հռետորական, այլ պատմական հաւաստիք, զոր գրէ նոյն Ճ. Ա. Ճոխագոյն, թէ զիարդ հարան կուրութեամբ այրքն՝ որք հատին զգլուխ սրբոյն. որպէս և զկնի ՚ի վերայ բերէ զերկնային բացումն աչաց նոցա՝ այսպէս. * Լուսաւորեցան աչք նոցա առաւել քան
„ զառաջինն. ըստ նմին և հալածեալ եղև ՚ի սրտից նոցա
„ աղջամղջինն այն հելլենականն անգիտութեան խաւար.
„ զի ՚ի բանալ աչաց մարմնոյն՝ բացան և աչք մտացն
„ մոլորելոց յերկնային ճանապարհէն ||: Որ Ճ. Բ. առ համառօտութեան արդեօք լոկ զայն յիշէ, թէ բացան աչք սրտից նոցա: Առ ապացոյց բանիս և ՚ի բասիլեան յայսմաւուրացն Յ. ուր մեկն գրի այսպէս. * Եւ ՚ի
„ լինել այսր, ասի՝ թէ նոյն ժամայն զինուորքն՝ որք
„ բերին զայն (զի զգլուխ սրբոյն առ մարմինն), ընկալան
„ զներգործութիւն աչաց իւրեանց, զոր կորուսեալ էին՝
„ յորժամ հատին զգլուխ սրբոյն ||: Եւ ահա և զայս

յայտնի բան՝ ՚ի յունէ ՚ի լատին այնպէս թարգմանեաց Հռադերոս, մինչև անյայտ կացուցանել զկուրութիւն աչաց արանց և զվերստին բացումն. վ̃յ և Պինիոս բոլլանդեան իրաւամբք կշտամբէ զթարգմանութիւն նր̃, և հաստատէ նաև յայլոց յունական վկայաբանութեանց զստուգութիւն սքանչելեացս :

(4) Պատրոնիա, գրի յոմանց Պետրոնիա, և յայլոց Պատրոնիկէ. նոյնպէս և քաղաք նր̃՝ ը̃ ոմանց Սեբաստէ, ը̃ այլոց ասի գաւառ Սեբաստացւոց. զոր չէ պարտ իմանալ զՍեբաստիոյ Հայոց, այլ՝ որ յԱ̃ին բիւթանիացւոց. զի ո̃ղ Ակուսդա անուամբ լատիներէն, նոյնպէս և Սեւաստէ կոչմամբ՝ որ զնոյն նշանակէ յունարէն, զանազան քաղաքք գտանին ՚ի զանազան տեղիս :

(5) Համաձայն Յ. և Լ. ը̃ իմիք և Հ. որ կատարման
սբ̄յն դնի ՚ի Ճ. Ա. ՚ի վերնագրի. * յամսեանն օգոս-
,, տոսի. ժզ̄ ||. ո̃ղ և ՚ի Ճ. Բ. * յամսեանն օգոստոս,
,, որ օր ժզ̄ էր ամսոյն ||: Եւ սակայն յերկոսին ձա-
ռընտիրս իսկ դարձեալ ընթեռնումք ՚ի կարգի պատ-
մութե̃ն, * յառաջ քան զերիս կաղանդացն օգոստոս
,, ամսոյ ||. որ լինէր յուլիսի. Լ̃. այս ՚ի միաբանել ը̃
առաջնոյն՝ պարտ է և աստ ընթեռնուլ. * յետ երից
,, իդոսացն օգոստոսի ||. որ է 16 օգոստ: Եւ զայս ևս
այլով օրինակաւ առաջի առնէ մին ՚ի յունական օրինա-
կաց՝ յասելն. * կատարեցաւ ՚ի մայրաքաղաքի նիկիաց-
,, ւոց բիւթանիոյ՝ յառաջ քան զերիս իդոսացն օգոս-
,, տոսի. այն է օգոստոսի. ժա̃. իսկ մարմին նր̃ ամփո-
,, փեցաւ ՚ի չիրիմի՝ ՚ի ժզ̄ ամսեանն օգոստոսի ||:

(6) Գրէ ուգելլոս ՚ի Է. հատորն սրբազան իտալիոյ՝ վ̃ն
ամալֆիտայ քաղաքի, թէ * արտաքոյ քաղաքին յաջմէ
,, կողմանէ կայ աբբայարան սբ̄յն պետրոսի կանոնի-
,, կեան ՚ի կարգէ կիստերսեանց. զոր հանդերձ եկեղե-
,, ցեաւն ՚ի պատիւ գլխոյն առաքելոց շինեաց և ձօնա-
,, ցոյց նա ինքն բարեպաշտ կարդինալն (այն է պե-
տրոս կապուանցի՝ որ մեռաւ յամի տ̃ն. 1209)... ուր
,, պահի գլուխ սբ̄յն դիոմիդեայ վկայի... և այլ ևս
,, երևելի նշխարք սր̃ց, զորս ետ բերել յարևելից նոյն
կարդինալ ||:

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սբ̄յն Ադրիանոսի , և կնոջ նր̄ Անատոլայ · և որոց ը̄ նոսա ։

Հ· և Յ· Օգոստ · 26 ։ Լ · սեպտ · 8 · և մարտ · 4 ։ Բոլլանդեանն սաէլլաէնգ · Գ̄ · հատ · սեպտ · երես · 209=255 ։ (1)

ՊԱՏՈՒԱԿԱՆՆ Ի ՎԱ-կայս սբ̄ն ադրիանոս կամ՝ անդրիանոս , և սքանչելին 'ի կանայս՝ սբ̄ ամուսինն իւր անատոլա , որ ը̄ այլոց նատալիա (2) , էին 'ի նիկոմիդիայ քաղաքէ բիւթանացւոց · այրն հեթանոս ծնողաց զաւակ , և կինն հաւատով քրիստոնեայ և երկիւղած յա̄յ , յաւուրս կռապաշտ կայսերն մաքսիմիանոսի գաղերեայ , որ յարոյց հալածումն մեծ 'ի վր̄ քրիստոնէից , և մանաւանդ եղելոցն 'ի քաղաքին նիկոմիդացւոց և 'ի սահմանս նր̄ ։ Ընդ ա̄մ տեղիս յաճախեալ էին բագինք կռոց , և 'ի ծխոյ և 'ի հոտոյ զոհից գարշելեաց լցեալ էին քաղաքք և աւանք · քարոզք կարգային հրապարակաւ՝ պատուիրելով յարքունի հրամանէ , զի ամենեքին եկեսցեն 'ի զոհել չա̄ծոց · և որ ոչն զոհէ , մահու սպանցի ։ Կարգեղէլին և խնդրակք 'ի հետազօտել զքրիստոնեայս , և գուշակք 'ի մատնել զն̃ս ։ Ազդ եղև վերակացուաց գործոցն անօրէնութ̃ե , թէ արք ոմանք թաքուցեալ կան յայրի միում արտաքոյ քաղաքի ․ և 'ի գիշերի լսելի լինի ձայն բարբառոյ նց̃ , որով օրհնեն զա̃ծն քրիստոնէից ։ Յայնժամ առաքեցին նք̃ զօրականս , որք կալան զերանելիսն , և ածին մուծին զն̃ս 'ի Նիկոմիդիա յայնմ պահու՝ յորում երթայր կայսրն 'ի մեհեանն շքով մեծաւ նստեալ 'ի կառս՝ զոհել դիցն իւրոց ։ Յայնմ վայրի ձայն բարձեալ պատուէրակաց՝ ասէին ․ արքա́յ քաջ , յածել մեր ը̃ ամ̃ քաղաքս և ը̃ սահմանս սորա՝ գտաք զամենեսին հաւատարիմս 'ի դիցն պաշտօն և հլու հրամանաց ձերոց ․ միայն սք̃ անհընազանդ եղեն և ապախտ արարին զբանիւք քովք , և անարգու գտան դից ։

Իսկ կայսրն հրաման տուեալ կացուցանել զկառսն՝ մօտ կոչեաց զկալանաւորսն , և ասէ ցն̃ս ․ ասացէք ինձ , ուստի՞ էք դուք ․ բնակք տեղւոյս , եթէ օտարք ։ Եւ նոքա ասեն ․ բնակք եմք հայրենեօք , այլ հաւատով գալիլեացիք ։ Թագաւորն ասէ ․ եթէ ո՞չ գիտէք , զի՞նչպիսի պատուհաս 'ի վերայ եդեալ է՝ որոց յայն օրէնս իցեն ․ և կմ̃ ո՞րպիսի վախճան ընկալան՝ որք միանգամ 'ի ձեռս անկան ։ Նք̃ ասեն ․ այո́ գիտակ եղաք և ծաղրեցաք զանմիտ հրամանաւն և զանմտութ̃ե հրամանատուին ․ և ևս առաւել այպանեցաք զսատանայ , որ ներգործէ յորդիսն կորստեան , որոց դուդ առաջնորդես :

Լի եղև բարկութեամբ Թագաւորն , և ասէ . անմիտ կոչել իշխեցիք և զիս և զիմ Հրամանս . երդուեալ ՚ի մեծ Աստուածսն , եթէ ոչ դառն դառն չարչարանօք կորուսից զձեզ : Եւ զայս ասացեալ՝ ետ տանել զնոսա ՚ի տեղի երևելի , ուր կազմ կային տանջանարանք . և ինքն ՚ի նմին իսկ աւուր եկեալ բազմեցաւ անդ ՚ի բեմի ատենին . և նախ Հրամայեաց յորսայս արկանել զնահատակսն , և Հարկանել ջալոտիւք . ասէ . Թո՛ղ եկեսցէ Քրիստոսն նոցա , և ազատեսցէ զնոսա ՚ի ձեռաց իմոց : Եւ իբրև ուժգին գանեցին զնոսա , ապա Հրամայեաց բռնաւորն և այլոց ՚ի սպասաւորաց իւրոց՝ Հարկանել զնոսա Հաստ բրօք : Իսկ սուրբ վկայքն Քրիստոսի ասէին ՚ի տանջանս . յաւէ՛լ , եթէ ունիս , և զայլ ևս չարչարանս՝ ո՛վ Աստուածամարտ . զի որչափ յաճախես զտանջանս մեր , այնչափ առաւելուս մեզ պսակս :

Բռնաւորն ասէ . այժմ բարձից ՚ի ձէնջ ըզգլուխս ձեր և դուք պսակաց մնայք . օ՛ն անդր ՚ի բա՛ց թողէք զայդպիսի կարծիս , և մի՛ ՚ի զուր կորուսանէք զանձինս : Սուրբքն ասեն . ՚ի կորուստ դու ունիս գնալ ո՛վ բռնաւոր և թշնամի ճշմարտութեան . զի զծառայսն Աստուծոյ՝ որք ոչն արարին ինչ չար , այդպէս անողորմ տանջես : Իսկ անօրէն արքայն ևս քան զևս մոլեալ ՚ի բարկութիւն՝ ասաց Հարկանել զծնօտս նոցա գնտաձև քարամբք : Եւ նոքա ասեն . ո՛վ ամպարիշտ , որպէս թէ ՚ի չարագործութեան զմեզ ըմբռնեալ՝ Հրամայես այդպէս խոշ-

տան

տանդել զանպարտականս . Հարկանելոց է զքեզ Հրեշտակ ա̅յ և զա̅մ տունս քո . զի ոչ յագեցար որպէս արեան ծարաւի՝ առաջին տանջանօք . և ոչ ածեր զմտաւ , եթէ նոյն մարմին է՝ զոր և դուդ ունիս . և այն՝ զի քոյդ պղծեալ անօրէնութբ̅ , իսկ մերս պահեալ անարատութբ̅ . այլ որ ամենեցուն տ̅րն է՝ նա կարող է և ևս պահել զյուսացեալքս ՚ի նա . ապաթէ ոչ՝ ո՞չ արդեօք և զքարինս մաշէին այսչափ բազմութիւնք հարուածոց , թո՛ղ թէ զմարմին մարդոյ :

՚Ի վ̅ր այսորիկ առաւել սրտմտեալ բռնաւորին՝ ասէր . զլեզուս ձեր տամ հատանել . զի ՚ի կրից այտի ձերոց ուսանիցեն մարդիկ չդիմախօսել տ̅րանց իւրեանց : Ս̅բքն ասեն . և արդարև ատելով ատեմս զստահակեալս ը̅դէմ տ̅րանց : Թագաւորն ասէ . ո՛չ եթէ ատեմ ևեթ , այլև պատուհասեմ զնոսա : Յայնժամ ասեն ս̅բ վկայքն . գէթ քոյին բանից դու ինքնին լինիջի՛ր լսօղ . զի թէ դու ատեաս և պատուհասես ևս զանհնազանդեալսն ծ̅իկ տերանց , զիա՞րդ ստիպես զմեզ ստունկանող լինել հրամանաց երկնաւոր թագաւորին՝ տ̅ն մերոյ և փրկչին յի̅ քի̅ . բայց զի կամիս կցորդս զմեզ առնել պատժոյ պատուհասին՝ որ պատրաստեալն է քեզ ը̅ հօրն քում սատանայի :

Ասէ բռնաւորն . և զի՞նչ ինձ պատրաստեալ կայցէ , ո՛վ անզգամք , դոգջի՛ք : Ս̅բքն ասեն . հուր անշէջ , որդն անքուն , տանջանք անվախճան , պատիժ մշտնջենաւոր , դուք կորստեան , խաւար արտաքին , ուր լալ աչաց է և կրճել ատամանց ։ Թագաւորն ասէ . ո՛ն և ո՛ն արտասցեն ինձ դիքն , եթէ ոչ՝ ո՟պ ասացի , տաց կտրել զլեզուս ձեր . զի թերևս այսու օրինակաւ կարճեցից զառանցանս ձեր ։ Իսկ ՟նքքն ասեն . ա՛նմիտ՝ թէպէտև զգործի մարմնեղէն 'ի բաց հատանիցես , կարող է հեծութ՟ի սրտից մերոց մեծաբարբառ գոչել առ ա՟ծ . զի և արիւն մեր անպարտ հեղեալ՝ բերան ունի իբրև փող քաջահնչօղ , որ հնչէ 'ի լսելիս ա՟յ կենդանւոյ՝ որոյ վ՟ն զայսոսիկ կրեմք ։

Յայնժամ ասէ Թագաւորն . նշանակեցէք մի առ մի զանուանս դոցա . և պարաւանդե՟լ զա՟մ մարմինս ն՟ց շղթայիւք՝ տարա՛յք արկէք կապանօք 'ի բանտ մահապարտաց . և զա՟մ ազգ տանջանաց կուտեցէք 'ի վ՟ր նոցա . զի ոչ լոկ սրամահ սատակման են արժանի , այլ մեծ ևս պատժոց . զի պարտ է սոքօք զգաստացուցանել և զա՟մ մերձաւորս և զհեռաւորս ։

Մինչև մեկնեալ էր ՟նքա յերեսաց ատենին , յայնմ վայրի ադրիանոս՝ որ մի էր 'ի վերակացուաց զինուորական դասուն , տեսեալ զհաստատութ՟ի և զքաջասրտութ՟ի երանելեացն 'ի տանջանս և 'ի հարցափորձի , մատեաւ առ ն՟ս , և ասէ լուելեայն . երդմնեցուցանեմ զձեզ յա՟ծն ձեր , զի ասասջիք ինձ զճշմարտութ՟ի , զի՞նչ փոխարէնք իցեն վարձուց՝ որոց ակն ունիք փոխան չարչարանաց , որոց համբերէքն . զի այնպէս ինձ թուի՝ եթէ մե-

մեծամեծք լիցեն և սքանչելիք յոյժ յոյժ ։ Լսելով լուեալ էր իմ 'ի կնոջէ իմմէ՝ քանզի քրիստոնեայ է, եթէ մեծ է յոյս քրիստոնէից հաստատեալ գրովք սրբովք ․ արդ ես և յարդեանց գործոց ձերոց հաւատարիմ համարիմ զայդ ։

Ասեն ցնա ս՟րքն ․ ոչ բերանք մեր բաւական լինին պատմել քեզ տիրապէս վ՟ն նոցին իրաց, և ոչ դարձեալ լսելիք քո բաւեն տանել ։ Ասէ ցն՟ն ադրիանոս ․ ոչի՞նչ արդեօք լուեալ է ձեր զիրացդ յօրինաց կի՟ն 'ի մարգարէից և յայլ ևս մատենից ։ Ս՟րքն ասեն ․ և ոչ իսկ մարգարէքն լիով հասու եղեն իրացս՝ ո՟չ պարտն է գիտել ․ զի և ն՟ք մարդիկ էին ․ և որքան ինչ միանգամ մարթացան ը՟նունել 'ի հոգւոյն ս՟յ, զնոյն և խօսեցան ․ զի գրեալ իսկ է ․ զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զայն պատրաստեաց ա՟ծ սիրողաց իւրոց ։

Զայսոսիկ լուեալ ադրիանոսի՝ փաղեաց փաղփաղակի 'ի մէջ ատենին, և ասէ ցդպիրսն ․ գրեցէք աղաչեմ և զիմ անուն ընդ ս՟րց արանցս ․ քանզի և ես քրիստոնեայ եմ ։ Իսկ կայսրն՝ որ քաջ ճանաչէր զադրիանոս, իբրև ետես զնա 'ի մէջ վկայից, համարեցաւ՝ եթէ եկեալ է ամբաստան լինել զնոցանէ ․ վ՟յ և ասէ ցատենադպիրս ․ գրեցէք փաղփաղակի և զամբաստանութիւն՝ զորս յառաջ մատուցանէ հաւատարիմն ադրիանոս ։ Իսկ դըպրապետն ասէ ցարքայ ․ քրիստոնեայ զանձն ասէ լինել դա, և աղաչէ գրել և զիւր անուն

նուն ը̅ մահապարտսդ ը̅ այդոսիկ : Յայնժամ զամօթի հարաւ բանաւորն , և դոյն երեսաց նո̅ր շրջեցաւ . և ասէ ցնա . խնդրեմ յինէն զթողութի̅ն , և ասա՛ յանդիման բազմաւե̃ս , թէ յայլոյ խելս խօսեցայ . և ջնջեցից զանուն քո 'ի համարոյ մահապարտաց : Ադրիանոս ասէ . զա̅ծն իմ յայսմ հետէ աղաչեմ շնորհել ինձ թողութի̅ն վ̅ս անարժան վարուց իմոց 'ի մանկութե̅ն և յանցանացս ցայսվայր գործելոց : Ընդ այս սրտմտեալ մաքսիմիանոսի՝ հրամայեաց կապել զնա երկաթեօք և տանել 'ի բանտ ը̅ նո̅ցն , սահմանեալ օր լսելոյ նց̅ միւսանգամ :

Յայնժամ մի ոմն յընտանի ծառայից Ադրիանոսի ընթացաւ վաղվաղակի 'ի տուն , պատմեաց կնոջ նո̅ր անատոլեայ , և ասէ . տե̅ր իմ Ադրիանոս կապեալ շղթայիւք 'ի բանտ արկաւ : Իսկ նո̅ր անգիտացեալ զպատճառն՝ յարեաւ պատառեաց զհանդերձ իւր , ճչեաց մեծաձայն , և ասէ լալագին ցծառայն . զի՞նչ վնաս իցէ , որ վ̅ս բանտարկեցաւ տե̅ր իմ : Ասէ մանուկն . ետես զոմանս չարչարեալս վ̅ս նորա՝ որ ք̅ն կոչի , զի չառնուին յանձն զոհել դից . և ինքնակամ 'ի նս̅ յաւելեալ՝ ասաց դպրաց գրել և զանուն իւր 'ի թիւ համարոյ նց̅ . զի և ես մտադիւր մեռանիմ ասէ ընդ սոսա : Ասէ կինն . և ո՞չ գիտացեր՝ թէ է՞ր վ̅ս մտանէին 'ի չարչարանս արքն այնոքիկ : Պ̅խնի ետ ծառայն . ասացի քեզ , թէ վ̅ս զի ոչ կամեցան զոհս մատուցանել ա̅ծոց :

Յայն

Յայնժամ ուրախ եղև յոյժ անատոլս . և յարուցեալ փոխեաց զպատուեալ հանդերձն իւր . և փութացաւ չորքաւ 'ի բանտ՝ տեսանել զայր իւր 'ի կապանս ։ Եւ մտեալ 'ի ներքս՝ անկանէր յոտս այրիանոսի , և համբուրէր զկապանս ն՟ր , և ասէր . երանի՛ քեզ ո՟վ իմ այրիանոս , զի գտեր՝ զոր ոչն թողին քեզ 'ի ժառանգութ՟ն ծնօղք քո . Ճշմարտի՛ այսմ՟իկ օրհնեա՛լ եղիցի ա՟մ մարդ՝ որ երկնչի 'ի տ՟նէ ։ Այժմ ո՟՛վ իմ անհոգ գնաս յայն [illegible] , առաքելով քո առաջի զմեծութ՟իս՝ զորս գտցես 'ի կարևոր ժամուն , յորժամ մեծատունք աղքատասցին , և չքաւորք լցցին անկապուտ փարթամութ՟բ . յորժամ չկայցէ այլ ևս ժամանակ փոխ առնլոյ ուստեք և տոկոսեօք . ոչ ոք փրկեսցէ զոք , և ոչ մի ինչ ազատեսցէ զոք 'ի պատուհասէն . ո՛չ մեծութ՟իք զստացիչս իւրեանց , ո՛չ ծառայք ըզտեարս , և ո՛չ բարեկամ զբարեկամ . զի իւրաքանչիւր զիւր բեռն բարձցէ ։ Իսկ դու ո՟վ իմ զքոյդ ընդ քեզ առեալ երթաս , բերելով 'ի քեզ զլրում՟ն խոստմանց , և մնալով վարձուց բարութե՟ն յարդար դատաւորէն ։ Մի՛այն հաստատո՛ւն կաց 'ի կոչմանդ . մի՛ դրդուեցուսցեն զքեզ հրապոյրք թշնամւոյն , և մի՛ յետս քեցեսցեն մնոտի պատրանք կենցաղոյս ։ Ի սոսա՛ հայեա՛ց միշտ ո՟վ իմ՝ 'ի ս՟բ ծառայքս ա՟յ . սոցին նմանօղ լեր արիութե՟ , և երթ զհետ համբերութե՟ն ն՟ց . և մի՛ լիցի քեզ զարհուրիլ 'ի տանջանաց և 'ի սպառնալեաց մարդոյ հողեղինի . զի ո՟վ ա՟ծ քո ը̄ քեզ է, և ը̄ քեզ եղիցի ։

Օ այսոսիկ և զոր սոցին նման լուեալ ադրիանոսի 'ի բարեպաշտ ամուսնոյ իւրմէ՝ լի եղև ուրախութը̄, և ասէ ցնա ․ գնա՛ դու այժմ տի՛կին 'ի տուն, և ա՛նդ մնասջիր ․ և յորժամ գիտասցիս զժամ կոչման մերոյ յատեան, կոչեսցիս զքեզ, և առաջիկայ գտցիս կատարման մերում ։ Ապա յարուցեալ անատոլայ՝ շրջէր 'ի տուն բանտին, և համբուրէր զշղթայս միոյ միոյ 'ի նց̄ կապելոց, որք էին թուո՛վ քսան և երեք (3) ․ և աղերս արկեալ նց̄՝ ասէր ․ աղաչեմ զձեզ տեա՛րք, ողնակա՛ն լերուք ոչխարին քի̄ ․ ուսուցէ՛ք նմա զպտուղ համբերութե̄ ․ սա է պտուղ վաստակոց ձերոց, և ծնունդ առաքինի նահատակութե̄ ձերոյ ․ պարտական ստասջիք զքս̄ վասն սորա ․ դո՛ւք եղէք սորա հոգևոր ծնօղք՝ մարմնաւորացն փոխանակ, որք օտար էին 'ի հաւատոցն բարեպաշտութե̄ ։ Յետ այսորիկ վերստին եկեալ առ ադրիանոս՝ որ 'ի ներքնումն 'ի բանտի պնդեալ էր 'ի կոճեղս պրկոցաց, կրկին ևս քաջալերեաց և զուարթացոյց զնա, յուշ առնելով չհայել՝ թէ զինչ մարմինն կրէ, այլ թէ զինչ կայ պատրաստեալ վն̄ հոգւոյն ․ և այս ողջունեալ զնա՝ դարձաւ սրտիւ բերկրեցելով 'ի տուն իւր ։

Իսկ եղև յետ աւուրց տեղեկացեալ ադրիանոսի՝ եթէ մերձեցաւ ժամանակն տանելոյ զնոսա յատեան, ասէ ցերանելին նահատակակիցսն ․ ներեցէ՛ք ինձ, զի երթեալ ածից

զա

զաղախինն ձեր զքոյր իմ, զի մերձ լիցի վըկայութեան մերում. քանզի զայդ խոստումն խոստացայ նմա։ Եւ առեալ հաւանութի՟ 'ի նոց՟ն՝ ետ ինչս բազումս բանտապանաց (որոց և ծանօթ լինել էր), և յերաշխի կացուցեալ զոք՟ն՝ գնաց։ Եւ յերթալն նորա զճանապարհայն՝ տեսեալ զնա ուրումն 'ի ծանօթից՝ ընթացաւ վաղագոյն եկն 'ի տուն աւետիս տալ անատոլեայ. ասէ. արձակեցաւ տ՟ր ադրիանոս, և ահա մերձեալ գայ, և չէ՛ ինչ հեռի 'ի տանէս։ Բայց նա ոչ իւիք հաւատայր. ո՞ արձակէ ասէ զնա 'ի կապանաց անտի, և կամ հնար ի՞նչ իցէ որոշիլ նմա 'ի նոց՟ն գնդէ։ Եւ մինչդեռ նա զայն խօսէր, ահա այլ ոմն յընտանեաց եկն 'ի պատմել, թէ տ՟ր մեր արձակեալ՝ գայ այսր։ Յայնժամ խռովեցաւ անատոլա՝ կարծեցեալ զնա փախուցեալ 'ի մարտիրոսութե՟. և յարտասուս հարեալ՝ սկսաւ կոծել անմխիթար։

Եւ իբրև ետես զնա՝ զի գայր, փութացաւ փակեաց զդուրս տանն, և ասէր մեծաձայն 'ի ներքուստ. Ի բա՛ց կացցէ յինէն՝ որ 'ի բաց եթող զա՟ծ, և ստեաց տ՟ն ա՟յ իւրում. մի՛ լիցի ինձ խօսել ը՟դ բերանոյ՝ որ ուրացաւ զա՟ծ իւր, կա՛մ լսել զխօսս լեզուի՛ որ նենգաւորեաց առաջի արարչին իւրոյ։ Եւ ապա առ նա ինքն դարձուցե՟լ զբանն՝ ասէր խիստ բարբառով. ո՛վ հեգդ քան զա՟մ մարդ, ո՞ ստիպեաց զքեզ բուռն հարկանել 'ի գործ, զոր ո՛չն կամէիր կատարել. կա՛մ ո՞ որոշեաց զքեզ 'ի գեղեցիկ նաւահանգստէ · զիա՛րդ զէնընկեց փախեար 'ի պատերազմէ՝ չև ըզթշնամին տեսեալ քո · և ո՞րպէս կարէի՛ր խոցեցար առանց ընդունելոյ զնետ ։ Ա՛յ ինձ , զի չեղէ արժանի կոչիլ կին մարտիրոսի , այլ գտայ լծակից դասալքի ուրացողի · առ փոքր մի ժամանակ եղև ինձ պարծիլ , և յաւիտեան մնասցեն ինձ նախատինք · առ վայր մի երանելի երևեցայ 'ի մէջ կանանց , և ահա ամօթալից գտայ 'ի նոցա միջի ։

Իսկ երանելին Ադրիանոս իբրև զայսոսիկ լսէր , կայր մնայր երկայնմտութեամբ · զի հեշտալի թուէին նմա բանք նորա · այլ առաւել փութայր դառնալ կատարել զընթացս իւր՝ որում անձկացեալն էր ։ Միանգամայն զարմացեալ էր ընդ արիութիւն սրտի կնոջն , որ զայնպիսի բանս բարբառէր առնացի ոգւով · և այն զի մանկամարդ էր հասակաւ , և չև էին լցեալ երեքտասան ամիսք ամուսնութեան նոցա ։ Արդ իբրև ետես զնա 'ի ձախողակ կարծիս անկեալ միտս իւր , ձայնեաց և ասէ · բա՛ց ինձ տիկի՛ն անաստողա · ո՛չ որպէս դուդ կարծես՝ 'ի մարտիրոսութենէ փախուցեալ եմ ես · քա՛ւ մի՛ լիցի · այլ եկի 'ի հրաւիրել զքեզ , զի տեսօղ լինիցիս կատարման մերոյ , ո՛չ ժամադիր եղաք 'ի մերում միջի ։ Բայց նա տակաւին անհաւատանայր նմա · զի ոչ ունէր ակն՝ եթէ անձամբ գայցէ 'ի կոչել զնա ։

Յայնժամ ասէ Ադրիանոս · բա՛ց ինձ քոյր , զի մի՛ առանց տեսանելոյ զքեզ մեկնեցայց աստի , և դու լինիցիս քեզ անփարատելի

զ՟մ՝ աւուրս կենաց քոց . զի ոչ իսկ է ինձ յամենայ աստ . քանզի երաշխաւորս կացուցեալ է իմ զք՟սն մ՟ն ժամուս . և եթէ յետ այնորիկ խնդրեսցեն զիս դահճիք և ոչ գըտանիցեն, ինքեանք ՛որ վկայքն ունէին կրել և զիմ տանջանս 'ի վ՟ր տանջանաց իւրեանց . ուր նոքա հասեալ են 'ի դրունս մահու գըրխուղխն յերեսաց անհնարին խոշտանգանաց՝
զոր 'ի վ՟ր էած ն՟ց բռնաւորն ։

Զայս իբրև լուաւ անատոլա, փութացաւ եբաց զդուրսն ուրախութ՟բ . և գիրկս արկեալ ողջունեցին զմիմեանս ։ Եւ ասէ ցնա ադրիանոս . երանելի՛ ես քոյր 'ի մէջ կանանց . զի դու միայն գիտացեր օգտել առն քում, եղեր ճշմարիտ այրասէր . արդ բա՛րձր արասցէ զքեզ տ՟ր, և տացէ քեզ պսակ յաղթողական իբրև իւրոց վկայից առանց չարչարանաց ։ Ապա առեալ զնա ը՟դ իւր՝ երթայր խնդամիտ 'ի բանտ . և 'ի ճանապարհի ասէ ադրիանոս ցանատոլա . զի՞նչ ետուր հրաման մ՟ տան ։ Իսկ նա ասէ . մի ինչ ածեր զմտաւ տէր իմ վ՟ ժամանակեայց և անցաւորաց . զի մի նսեմացուսցեն զմիտս քո անոտիք սնոտեաց . զմի եւեթ հոգասցես, զի զոր սկսարն՝ զնոյն և կատարեսցես . մոռա՛ զերկրաւորս, և խնդրեա՛ զերկնաւոր զանանցական բարիս, որ պահեալ են քեզ և
՟որցն որ ՟է քեզ ։

Իբրև հասին 'ի բանտն, մատուցեալ անատոլայ առ ՟որսն՝ համբուրէր զկապանս ն՟ց . այլ տեսեալ զնոսա տրորեալ 'ի հարուածոց, մինչև եռալ որդանց 'ի նեխեալ մարմինս նց՟, զալարեցան աղիք նորա 'ի վերայ ծառայիցն տյ՟. և առաքեաց փութանակի զնաժիշտս իւր, և ետ բերել զառաւել մեծագինս 'ի պատու՛ական պատարուաց և յազնիւ՛ կտաւոց. և առեալ զնս՟՝ պատատաւէր 'ի ծրւ՛էնս, և սրբեալ զխղխայթեալ վէրս մարմնոց ս՟րցն՝ պատէր զձեռս և զոտս նց՟, որք հերձոտեալք էին 'ի շղթայից ։ Եւ այնպէս եկաց երանելին անատոլա 'ի բանտի անդ զաւուրս եօթն, յա՟մ սրտէ ծառայելով ս՟րց մինչև 'ի կոչել նց՟ յատեան ։

Յետ այսորիկ եկեալ դահճաց արքունի հրամանաւ 'ի բանտն՝ առին զս՟րբսն, և բարձին զնս՟ 'ի վր՟ մերկ գրաստուց՝ առ հասարակ 'ի մի շղթայ կապեալ և պնդեալ. զի ամենեքին լուծեալք էին յանդամոց. իսկ երանելին ադրիանոս հետի ընթանայր՝ ձեռսյետս կապեալ ։

Իբրև մերձեցան 'ի տեղի ատենին, ազդ արար արքայի ոստիկանն, եթէ ահա առ դուրս հասեալ կան մահապարտքն ։ Ասէ բռնաւորն. մո՛յծ այսր զնոսա միահամուռ անարգականն ձևով մահապարտաց. զի 'ի հարցանել և 'ի տանջել զմի մի 'ի նոցանէ՝ իւրաքանչիւր ոք տեսցէ զվիշտ վտանգի ընկերացն, և հաւանեսցի ուրանալ զդենս իւր ։ Իսկ ոստիկանն ասէ. որք կանխաւ տանջեցանն, առ յետին հարուածոյն անկարօղք են այժմ 'ի հարցուփորձ մատչել. միայն ադրիանոս ողջանդամ կայ, և կարօղ է տանել ա՟մ տանջանաց • ուր այլոցն փտեալ են գլխովին անդամք , մինչ կողիցն անդամ երևիլ • վա՜յ բարւոք թուէր թողուլ զն͞ո աւուրս քանի մի , մինչև զօրասցին , և այլ ևս չարչարեսցին • ապա թէ ոչ՝ եթէ յայժմուս տանջանք ինչ յաւելցին 'ի ն͞ա վ͞ր , հեշտեաւ վճարին 'ի կենաց • սմին իրի եթէ կամք իցեն տ͞րուեդ , ադրիանոս մատուսցի յատեան ։

Հաճոյ թուեցաւ բանն առաջի բռնաւորին , և հրամայեաց բերել զադրիանոս զառաջեաւ 'ի ձև մահապարտի ։ Յայնժամ մերկացուցին զնա դահիճքն , և բարձին փայտ յուս ն͞ր՝ տանել և մուծանել 'ի տեղի ատենին ։ Օ այն տեսեալ ընկերաց ն͞ր ս͞րբ͞ց՝ ասեն • ահաւասիկ ադրիանէ արժանի եղեր բառնալ զխաչ քո , և գնալ զհետ տ͞ն • տե՛ս , զի մի՛ իւիք խոտորեսցիս 'ի հետոց ն͞ր • զի մի՛ կապտեսցէ բանսարկուն զգանձ հոգւոյ քո • մի՛ երկնչիր՝ յորոց տեսանեսն , այլ հայեա՛ց՝ որոց ակն ունիս • արհամարհեա՛ զբռնաւորն • զի ո՛չ են արժանի չարչարանք ժմկիս՝ հանդերձելոցն փառաց , որ յայտնելոցն են 'ի մեզ ։

Եւ երանելին անապաղա մատուցեալ առ կենդանի նահատակն՝ ասէր • տէր իմ՝ առ տ͞ծ անդր միայն յառեսջի՛ր զակն քո • մի՛ զարհուրեցուսցէ զսիրտ քո տեսիլ տանջանացն • սակաւ և առժամայն է աշխատութի՛ն , մեծ և յաւիտենական՝ վարձքն • սուղ ինչ՝ չարչարանքն , և մշտնջենաւոր՝ հանգիստն • յերկրի նահատակութի՛ , և յերկինս պսակ ։

Օ՜ի եթէ յորժամ զ͞ք մարմնոյ զինուորեալն էիր ,

էիր, բազում այն էր՝ զի վ̄ն աւօրեայ թոշակի խոշտանգանս կրէիր 'ի պետաց և 'ի վերակացուաց, ո՞րչափ ևս առաւել արժան է տանել չարչարանաց 'ի վ̄ր հասելոց, զի զերկնից ժառանգեսցես զթագաւորութ̄ի յաւիտեան, և յաւիտեան և ևս ։

Արդ իբրև ածին մուծին զերանելին Ադրիանոս յատեան, հայեցաւ ը̄ նա Թագաւորն, և ասէ. դեռևս կաս մնաս 'ի յիմարութ̄ե̄դ թշուառական ։ Վ̄նի ես սբ̄ն Ադրիանոս. այժմ 'ի բաց եդի զա̄մ յիմարութ̄ի, և փութամ ձգնիլ, զի մի կորնչիցի հոգի իմ ։ Ասէ ցնա բռնաւորն. ա՛ղէ արդ լուր ինձ, և մատուցեալ զոհեա՛ ա̄ծոց մեծաց, և երկիր պագ՝ որպէս ամենեքին մեք. ապա թէ ոչ՝ մատնեսցիս 'ի տանջանս ահագինս, զորս չիցէ քո լուեալ ։ Սբ̄ն Ադրիանոս ասէ. ո՛վ թագաւոր՝ զմէ՞ մոլորիք դուք երկրպագանելով անշունչ և անմռ կռոց, թողեալ զա̄ծ կենդանի, որ արարն զերկինս և զերկիր, զծով, և զա̄մ որ 'ի նմ̄. այլ ես չասեմ զնոսա ա̄ծս երբէք, և ոչ իմ՛իք հաւանիմ երկիր պագանել խլից և համերց և անզգայ քարանց՝ քոց նմանեաց. հա՛պա զինչ կամիս՝ վաղվաղակի արա՛ ։

Ի սրտմտութ̄ի բարկութ̄ե բորբոքեցաւ թագաւորն. և հրաման ետ չարաչար հարկանել զնա ջաղոտիւք ։ Լու եղև երանելւոյն Անատոլեայ, եթէ տանջեն զԱդրիանոս. ընթացաւ առ ս̄րբսն, պատմեաց նց̄, և ասէ. ա̄րն իմ սկիզբն արար հանդիսի վկայութ̄ե.

և նց̃ լու՛ծեալ զա՛յն՝ սկսան աղօթել վն̃ նր̃ ։ Եւ այնպէս անխնայ և յերկար տանջեցին զս̃բն ադրիանոս, մինչև մարմնոյ նր̃ պատառ պատառ անկանիլ յերկիր, և վտականալ արեանն ։ Ասէ ցնա բռնաւորն ․ անշուշտ մոլորեցուցիչքն այն՝ ո՛վ թշուա՛ռական, ուսուցին քեզ զանմտութ̃իդ զայդ ։ Սբ̃ն ասէ ․ զի՞ մոլորեցուցիչ կարդաս զայնոսիկ, որք առաջնորդեն 'ի յաւիտենից կեանսն ․ ընդդապէս դո՛ւք էք մոլորեցուցիչք, որսօղք մարդկան և մատնիչք 'ի կորուստ ։

Զայրացեալ բռնաւորին՝ հրաման տայր գա՛նել զնա և նս քքովք ։ Իսկ սբ̃ն ասէ ցնա ․ որքան յաճախես յիս զտեսակս տանջանաց, այնչափ առաւելուս ինձ զվարձս մրցանաց ։ Այլ զո̃մ՝ զոր լսեր 'ի բերանոյ բռնաւորին, և զպխ̃նիս ադրիանոսի, պատմէր սբ̃ցն երանելին սնատոլա ։ Դարձեալ ասէ թագաւորն ցադրիանոս ․ խնայեա՛ յառոյգ տիս մանկութե̃ քո ո՛վ հիգացեալդ, և մի՛ վայրապար զանձնդ կորուսաներ ․ երդուեալ 'ի դիս՝ տեսանեմ զվայելչութ̃ի պատկերիդ, և գթամ յոյժ 'ի վերայ քո ։ Պխ̃նի ետ սբ̃ն ․ յայդմ իսկ խնայեմ ես յիս, զի ոչ զոհեմ ։ Բռնաւորն ասէ ․ խոստովանեա՛ զա̃ծս, և քաւիչ լինին քեզ ․ և մեք մեծարեսցուք զքեզ մեծապէս, և կացուսցուք յառաջին կարգի պատու՛ոյդ ․ զի ազնու՛ագի ես դու, և մեծատուն ծնողաց որդի ․ իսկ ընկերք քո՝ որք դռեհիկք, ծնեալք 'ի շինականագոյն և յաղքատ ծնողաց ։ Սբ̃ն ասէ ․

ասէ ․ գիտեմ, զի գիտես զտուն հօր իմոյ և զբարեպաշտութի̃ն իմ և զիմոց նախնեաց ․ բայց թէ ծանուցեալ էր քո և զընկերաց իմոց զհայրենիս և զճոխութի̃ս և զազնուատոհմութի , դու ինքնին աղաչէիր զն̃ա աղօթս առնել վս̃ քո , զի ազատեսցիս 'ի դառն գերուէ̃ դիցդ քոց , և արժանի լինիցիս կցորդ լինել պայծառութե̃ նց̃ և փառաւորութե̃ :

Յայնժամ առաւել բարկացեալ բռնաւորն հրամայեաց , զի հարցեն զփոր նր̃ արք չորք ․ և իբրև այնչափ հարին , մինչև տեսանել անօրինին զաղիս նր̃ յերկիր վայթեալ , ետ ապա թողացուցանել զնա 'ի տանջանաց ․ զի էր ծաղկահասակ և փափկամարմին ․ և ցնա ասէ ․ տեսանես , որչափ խնայեմ 'ի քեզ ո̃ղրմանէ , և դու ոչ առնուս 'ի միտ զիմ սէր , և ոչ կամիս ապաշաւել ․ և արդ կարդա՛ զա̃ծս , և ես տաց հրաման կոչել զբժիշկս , և բուժեսցեն զմարմին քո ․ և եղիցիս ը̃դ իս 'ի պալատանն : Առ այս ետ պ̃խնի Նահատակն առաքինի՝ ծաղրելով ․ քանզի խոստացար ինձ բժշկել զիս 'ի ձեռն բժշկացդ , և 'ի պատիւ հանել , և տանել 'ի պալատդ արքունի , ա՛ղէ յառաջագոյն ասասցեն ինձ ա̃ծքն քո , թէ զի՞նչ հանդերձեալ են առնել ինձ ․ զի գիտացից՝ եթէ զօրութի̃ ինչ է 'ի նոսա :

Ասէ կայսրն ․ ա̃ծքն չտան պատգամս , և ո՛չ խօսին : Սբ̃ն ասէ ․ արդ որովհետև ո՛չ ամպարիշտ՝ չա̃ծքն քո ո՛չ խօսել գիտեն , և ո՛չ պատգամս տան , է՞ր վս̃ զոհես նց̃ և երկիրպագանես ․ և ոչ միայն անձամբ զայդ առնես, այլև զմեզ զբանիւ պատուէրքս հարկեցուցանես զոհել նմա ։ Յայնժամ զամօթի հարեալ բռնաւորին՝ ետ տանել զսուրբսն առհասարակ կապանօք անդրէն 'ի բանտ , կարգեալ զայլ օր պնդագոյն ևս հարցափորձել զնոսա ։ Իսկ առեալ զօրականաց զսուրբսն՝ ածէին 'ի բանտ , էր զոր դեռ յուժի կային՝ չարաչար ձգձգելով , և էր զոր լուծեալս 'ի տանջանաց և անկարօղս ոտն յոտանէ փոխել՝ ընդ երկիր քարշելով իբրև կոճեղս անշունչս ։

Իսկ երանելին անատօլա կազդուրէր զսուրբն ադրիանոս՝ եդեալ զձեռն 'ի ներքոյ պարանոցի նորա ․ և ասէր ցնա զճանապարհայն ․ երանի է քեզ տէր իմ ադրիանէ , զի ահա արժանի եղեր համարիլ 'ի թիւ սրբոցն , և չարչարիլ վասն նորա՝ որ վասն քո չարչարեցաւ ․ ահա գնաս 'ի տեսանել զփառս նորա ․ զի որ միանգամ կցորդ լինին չարչարանաց նորա , հաղորդ եղիցին և փառաց նորա ։

Եւ իբրև հասին 'ի դուռն բանտին , 'ի մի վայր եկեալ սրբոցն միաբան՝ ողջունէին զերանելին ադրիանոս ․ մինչև խորտակելոցն անդամ անդամօք՝ սողոսկիլ ձեռօք և խաղաղութիւն տալ նմա ողջունիւ 'ի համբոյր սրբութեան ․ յորում վայրի և երանելին անատօլա սրբէր ձեռօք իւրովք զարիւն նորա , և օծանէր զմարմինն իւղով ։ Իսկ սուրբքն յողջոյն տալ իւրեանց՝ այսպէս ասէին ․ ուրախ լեր 'ի տէր եղբայր , զի անուն քո գրեալ է ընդ կատարելոց սրբոց մարտիրոսաց ։ Եւ երանելին ադրիանոս ասէ ․ ուրա՛խ լերուք և դուք յա̄մ ժամ ․ այլ աղօթս արարէք վ̄ն իմ, զի մի՛ ինչ 'ի վնասակարաց սերմանեսցէ յիս սատանայ ․ զի յոյժ եմ նուաղեալ ։ Ասեն ցնա սբ̄քն ․ զօրացի՛ր եղբա՛յր ադրիանէ , ոչ ևս իշխէ հակառակ քո չարն ․ զի 'ի փախուստ դարձաւ` զահի հարեալ 'ի քումմէ համբերութենէ ․ քանզի և մեք խիթայաք վասն քո` ցորչափ մարդ տկար էիր ․ այլ յորմէ հետէ գեր 'ի վերոյ հանդիսացար քան զմարդկեղէն բնութի̄ն, վստահ եմք 'ի տ̄ր` զի ոչ այլ համարձակի ը̄դդէմ քո չարն ․ վ̄յ մի՛ երբէք զանգիտեր , և մի՛ երկմտիր ամենևին ։

Գային ստէպ 'ի բանտն ընդ անատոլեայ և այլ բարեպաշտ կանայք ազնուականք և սարկաւագուհիք` պաշտել զսբ̄սն ․ ոմն զթարախս վիրացն սրբէր , ոմն զխանձողեալ մարմինս դարմանէր ․ այլ ոմն զտեղի դանիցն սփոփէր ․ և առհասարակ բաժանեալ 'ի սպաս սբ̄ցն` խնամարկէին և յանձանձէին զնոսա ։ Երբև եհաս բանն յականջս բռնաւորին , թէ կանայք պատուականք յաճախեն 'ի բանտս , բարկացաւ յոյժ , պատուիրեաց չթողուլ զոք 'ի կանանց մտանել 'ի բանտ ։ Զայն տեսեալ երանելւոյն անատոլեայ` կտրեաց զհերս իւր , և զգեցեալ ձև առնացի` այնպէս մտանէր և ելանէր , և ծառայէր սբ̄ցն ամենեցուն , և դարմանէր զն̄ց թեթև կերակրովք ․ զի տկարացեալ էին յոյժ և նուաղեալ 'ի սաստիկ հարուածոց և 'ի տանջանաց ։

'Ի միում նուագի նստեալ առ ոտս սբ̄յն ադ-

րիա

րիանոսի՝ աղերս արկանէր նմա, և ասէր. աղաչեմ զքեզ տէր, յիշեա՛ զլծակից քո, զի գործակից եղէ քեզ 'ի մարտիրոսութե̅դ, և օծի զքեզ իբրև ըմբիշ 'ի մրցանս պատրաստեալ, և խրախուսեցի զքեզ առ պսակն. արդ աղաչեմ զտ̅ր ք̅ս, զի ընկալցի զիս ընդ քեզ. զի ո՛չ հաւասարորդ գտաք յաղցաւոր և 'ի մեղսասէր կենցաղս յայս, սոյնպէս և երանելի և անաշխատ ժառանգութե̅ն այնմ հաղորդակից լիցուք 'ի միասին. և այս եղիցի երեխայրիք խնդրուածոցդ. քանզի գիտեմ՝ եթէ տացէ քեզ ք̅ս զխնդիր քո զայս. վ̅ս զի սիրէ զայսպիսի խնդիրս ։ Քանզի ո՛չ ես անգիտակ տ̅ր իմ անառակութե̅ քաղաքիս և ամպարշտութե̅ թագաւորին. գուցէ առեալ բռնաւորին՝ տացէ զիս 'ի լծակցուե̅ միում յա̅նածից անտի, և մատնեսցի սրբասէր ամուսին քո 'ի ձեռս առն անզգամի. արդ քեզ ա՛նկ է պահել զիս, ո՛չ և ուսար յառաքելոյ. և արդ շնորհեա՛ ինձ 'ի վարձ պարկեշտութե̅ իմոյ զը̅դ քեզ մեռանելն. և ուսցին կանայք բարիս առնել արանց իւրեանց, տեսանելով զքո առ իս բարեսիրութիւն ։

Իսկ այլոց կանանց բարեպաշտից իմացեալ զոր արարն Նատալիա, 'ի նախանձ բարի բերեալ՝ զգեցան և նք̅ հանդերձ առն, և հատին կանայք ազնուականք զհերս իւրեանց. և այնպէս համարձակ մտանէին և պաշտէին զս̅րբսն ը̅ս փափաքանաց իւրեանց ։ Իբրև զայն ես իմացաւ բռնաւորն, զարմացաւ յոյժ, և ինչ ոչ տասց: Ապա 'ի վերայ հասեալ, թէ մերձ են 'ի մեռանիլ նահատակքն 'ի սաստկութէ հարուածոց և ցաւոց, հրաման ետ դնել սալս պղնձիս ը՟ ոտիւք ն՟ց, և երկաթի նգօք խորտակել զբարձս ն՟ց. ասէ. մի զհասարակաց մահ մեռանիցին:

Արդ յորժամ գային դահիճքն 'ի բանտ, և բարձեալ բերէին զգործիսն, ը՟ առաջ ընթացաւ ն՟ց երանելին անատոլա, և հայցէր 'ի ն՟ցէ ասելով. աղաչեմ զձեզ, զառաջինն սկիզբն արարէք յադրիանոսէ: Զայս ասէր՝ երկնչելով, զի մի 'ի տեսանել ն՟ր զս՟բսն յառաջ քան զինքն յայն դառն տանջանս, 'ի զարհուրանս ինչ անկանիցի: Իսկ յորժամ եդաւ սալն, կալեալ երանելւոյն անատոլայ զոտս ադրիանոսի՝ տարածեաց 'ի վ՟ր սալին. և դահիճքն հարին ուժգին, և հատին զոտս ն՟ր, ջախջախելով միանգամայն և զսրունսն: Ապա ասէ ցնա անատոլա, աղաչեմ զքեզ ծառայ ք՟ի, մինչդեռ տակաւին շունչ քո 'ի քեզ է, դու ինքնին ձգեա՛ զձեռն քո, և հատցին 'ի քէն. զի և յայսմիկ նմանօղ լինիցիս ս՟բցն. քանզի և նոքա բազմօք աւելի քան զքեզ տանջեցան: Իսկ ս՟բյն տուեալ նմա զձեռն՝ եդ 'ի վերայ սալի. և դահիճքն հարին և կտրեցին զայն. և նոյնժամայն աւանդեաց երանելին զհոգին 'ի ձեռս այ՟ն: Իսկ դահճացն մատուցեալ առ մի մի 'ի ս՟բցն՝ խորտակեցին զսրունս ն՟ց, որք ինքնակամ կանխէին պարզէին զոտս իւրեանց, և ասէին մեծաձայն. տ՟ր յ՟ս ք՟ս ընկալ զհոգիս մեր.

և այսու օրինակաւ աւանդեցին երանելիքն առ հասարակ զհոգիս իւրեանց 'ի ձեռս ա՟յ ։ Իսկ անօրէն կայսրն հրաման ետ 'ի հուր արկանել զմարմինս ս՟րբցն ․ ասէ ․ մի՛ գուցէ եկեալ գալիլեացւոց՝ առցեն զն՟ս, և պաշտօնեսցեն իբրև ա՟ծս ։ Յայնժամ վայրի երանելին անատոլա բառնայր գաղտ զձեռն ս՟րբյն ադրիանոսի, և պահէր ։ Իսկ յորժամ տանէին դահիճք զմարմինս ս՟րբց յայրումն՝ 'ի տեղին, ուր բորբոքեալ կայր հնոց մեծ, գնայր մօտ և անատոլա ընդ ն՟ս, և առեալ ձեռօք զկաթուածս արեան ս՟րբցն՝ օծանէր զանձն ։ Որպէս և այլք 'ի կանանց բարեպաշտից թացեալ մաքուր կտաւս և ծիրանեգոյն բեհեզս յարիւն ս՟րբց նահատակաց՝ թաքուցանէին 'ի ծոցս իւրեանց ․ և ոչ այսչափ միայն, այլ և տուեալ ոսկի բազում և ականս պատուականս՝ գնեցին և զհանդերձս դահճաց զթաթաւեալս արեամբ վկայից ։ Արդ իբրև հասին 'ի տեղի հնոցին, առեալ դահճաց զմարմինս ս՟րբցն՝ արկանէին 'ի հնոցն ընդ վերնաբերանն ․ իսկ ա՟ծասէր կանայքն կացեալ մեկուսի՝ մռնչէին արտասուօք և ասէին ․ յիշեցէ՛ք զմեզ տեա՛րք 'ի հանդիստ ձեր ։ Իսկ առաւել երջանիկն 'ի կանայս անատոլա՝ կենդանի նահատակն և հրով հոգւոյն վառեալն, յայսկոյս յայնկոյս ընթանայր հեծեծանօք՝ ուխտիւք փափաքելով նահատակակից լինել ս՟րբցն, և եթէ հնար ինչէր՝ ըղձանալով արկանել զանձն 'ի հնոցն ․ գոչէր 'ի սերտ սրտէ, և ասէր ․ ընկա՛լ և զիս

Ը

ը̅քեզ երանելւոյդ Ադրիանէ, և մի՛ թողուր զիս յաղցաւոր կեանս Ծիս. և զայս ասացեալ՝ լուռ լինէր իբրև անբարբառ ։

Եւ եղև յետ արկանելոյ զմարմինս պատուական վկայից 'ի հնոցն՝ յանկարծակի որոտացին երկինք սաստիկ շառաչմամբք և ահագին փայլատակմամբք. մինչև սասանիլ երկրի և բովանդակ քաղաքին. և էջ հեղեղ անձրևաց, և շիջոյց զհնոցն. և դահճացն պակուցեալ յերկիւղէ՝ կէսք 'ի փախուստ դառնային 'ի տեղւոջէն, և ոմանք անկեալ 'ի վերայ երեսաց՝ չնչասպառ սատակէին ։

Այնժամ փութապէս ընթացեալ մերձակայ քրիստոնէից հանդերձ երանելեաւն Անատոլեաւ և այլովք բարեպաշտ կանամբք՝ գողացան զպատուական մարմինս փառաւոր վկայիցն, գտեալ զն̅ս ողջ անդամովք գլխովին. զի և ոչ մազ մի 'ի գլխոյ ն̅ց վնասեալ էր 'ի հրոյ անտի ։

Իսկ այր ոմն ազնուական և ա̅ծասէր՝ Եւսեբիոս անուն ն̅ր, եկեալ 'ի Բիւզանդիոյ 'ի Նիկոմիդիա հանդերձ կնաւ իւրով, անկեալ յոտս երանելւոյն Անատոլեայ և այլոց հաւատացեալ եղբարց՝ աղաչէր զն̅ս, և ասէր. մեք յառաջագոյն բնակեալ հուպ 'ի քաղաքս. այլ տեսեալ մեր զամպարշտութիւն յարուցեալ 'ի սմին՝ 'ի բազմաց հետէ չուեցաք գնացաք 'ի Բիւզանդիոն, թողեալ զա̅մ ինչ մեր ։ Արդ՝ տո՛ւք մեզ զս̅բսդ, և դիցուք զն̅ս 'ի նաւ, և տարեալ ամփոփեսցուք 'ի տեղիս բնակութե̅ մերոյ՝ մինչև ցօր մահուան անօրէն Թագաւորին . և ապա զկատարեալ փոխադրութիւն կատարեսցուք նմ պատուով և պաշտմամբ աղօթից . քանզի այս իսկ է մեր սովորութիւն ։ Օ ի թէ աստանօր կամիցիք ամփոփել զնս , 'ի վր հասեալ անօրէն բռնաւորին՝ հանէ զնս , և միասանգամ հրոյ մատնէ . և դուք լինիք մատնիչ որդցն , զորս ած ահագին նշանօք անարատ պահեաց ։ Հաճոյ թուեցաւ ամենեցուն բանս . վոյ առեալ եդին զորդսն 'ի նաւ . և խաղացուցին 'ի բիւզանդիոն՝ 'ի շնչել յաջողակ հողմոյ ։ Բայց երանելին անատոլա պահեաց առ իւր զձեռն որդյն ադրիանոսի . քանզի ասէր . դուցէ իբրև 'ի յայտ գայցեն մարմինք որդց վկայիցն , ես ինքնին մատնիչ գտայց լինել յուսոյ իմոյ . զի և սա ը նոսին մատնի ։ Սոյ առեալ զպատուական զայն ձեռն՝ պատեաց 'ի ծիրանիս հանդերձ խնկօք և անոյշ իւղովք . և եդ 'ի սնարս մահճին իւրոյ՝ առանց ուրուք գիտելոյ ։

Եւ եղև յետ աւուրց ինչ այր ոմն 'ի քաղաքէն նիկոմիդացւոց՝ ը պատուոյ հազարապետ , մատուցեալ առ Թագաւորն՝ խնդրէր առնուլ իւր 'ի կնութի զանատոլա , հարել 'ի սէր ընչից նր և 'ի գեղ նր . և յղեաց ևս առ նա զոմանս 'ի կանանց ծանօթից՝ խօսել վն բանիս այսորիկ ։ Իսկ երանելին անատոլա խաբանօք ետ պխնի՝ որոց առաքեցանն 'ի նմանէ , և ասէ . և ես ուրախ եմ ը այդ . այլ տուք ինձ զամիսս երիս , զի պատրաստեցայց . զի ոչ գռեհիկ ոք է՝ որ խնդրէն զիս ։

Օ այս

Զայս ասացեալ՝ արձակեաց զեկեալսն· և ինքն պատրաստէր փութալ փախչել լռելեայն 'ի բիւզանդիոն՝ 'ի տեղին, ուր փոխեցան մարմինք նոցին ։

Արդ մատուցեալ 'ի գլուխ մահճացն՝ ուր պահէր զձեռն նորին Ադրիանոսի, անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց, յաղօթս եկաց արտասուօք, և ասէ· Տէր Աստուած իմ, մխիթար վշտագնելոց և զօրավիգն սրտից բեկելոց, Նայեաց յաղախին քո, և մի տար 'ի պղծութիւն զլծակիցն և զմի մարմինն ընդ Ադրիանոսի ծառայի քո ։ Ողորմած տէր՝ միթէ մոռասցիս զջարդումն ոտից նորա և զհատումն ձեռւին· ողորմած տէր՝ միթէ ունայն արասցես զցաւն, որում ժուժկալեցին ծառայք քո վասն անուան քո սրբոյ· յիշեա տէր զհամբերութիւն և զժուժկալութիւն նոցա, և ազատեա զիս 'ի շաղախմանէ ատելեաց քոց· մի պղծեսցէ, մարդասէր տէր՝ այր կռապաշտ զանկողինս ծառայի քո Ադրիանոսի· այլ փրկեա զիս յակնկալութենէ և 'ի դարանակալութենէ պղծոյն և ամպարշտին· զի դու ես Աստուած բարեգութ և բազումողորմ· և քեզ վայելէ փառք յաւիտեանս· ամէն ։

Զայս ասացեալ՝ 'ի քուն եղև 'ի բազում հոգոց և 'ի տրտմութենէն· և ահա մին 'ի սրբոց երևեալ նմա՝ ասէր· խաղաղութիւն ընդ քեզ Անատոլեա՝ աղախին Աստուծոյ· արդ քաջալերեաց, զի ոչ անտես արար զքեզ Աստուած· և ոչ մեք մոռացաք զվաստակս քո՝ զոր վաստակեցեր վասն մեր· այլ իսկ և իսկ ընդ երևիլ մեր քոյ՝ միջնորդ նորա եղեաք վ՟ն քո գալ առ մեզ ։ Ասէ ցնա երանելին անատոլա . և տ՟րն իմ ադրիանոս երևեցա՞ւ ք՟նի ձեօք հանդերձ ։ Եւ նա ասէ. այո՛ . և յառաջ իսկ քան զմեզ երևեցաւ . այլ դու արի՛ մուտ՚ի նաւ , և նաւարկեալ եկեսցես առ մեզ . զի անդ այց արասցէ քեզ տ՟ծ , և հանգիցես ը՟ մեզ ։

Յայնժամ զարթեաւ անատոլա ուրախութ՟բ , և գոհացաւ զ՟այ . և թողեալ զ՟ամ ինչ՝ էառ ընդ իւր միայն զձեռն ս՟բյն ադրիանոսի . և մտեալ ՚ի նաւակ՝ չու արար փութապէս , դէմ եդեալ ՚ի տեղի հանգստեան ս՟բցն ։ Եգիտ և ուղեկիցս ոչ սակաւ ՚ի քրիստոնէից , որք փախչէին յերեսաց ամպարիշտ թագաւորին մաքսիմիանոսի , և նաւեաց նոքօք հանդերձ ։ Ազդ եղև հազարապետին՝ եթէ փախեաւ անատոլա . մատեաւ առ թագաւորն՝ խնդրել ՚ի նմանէ օգնականութ՟ի . և առեալ բազմութ՟ի զօրականաց՝ եմուտ փութանակի ՚ի նաւ՝ հասանել զհետ ն՟ր ։ Այլ յետ վարելոյ զնաւն ասպարէզս ոչ սակաւ՝ յարեաւ հողմն ՚ի տ՟նէ հակառակ անօրինացն , և դարձոյց զն՟ս յետս . թո՛ղ զորս ծովահեղձոյց եղեն յերեսաց ալեկոծութ՟ե ։

Իսկ բանսարկուն սատանայ երևեալ զհասարակ գիշերաւ՝ որոց նաւէինն ընդ անատոլեայ , հնարէր յետս դարձուցանել զն՟ս կ՟մ կորուսանել ՚ի ծովու . քանզի երևեցոյց զանձն իբրև ճարտար նաւապետ նստեալ ՚ի նաւի միում հանդերձ քաջ նաւավարօք , և հուպ եղեալ ՚ի նաւն անատոլեանց՝ հարցանէր , ուստի՞ գայք , կա՛մ յո՞ երթայք ։ ՚Նք՟ ետուն պխ՟նի · ՚ի Նիկոմիդեայ ելաք , և ՚ի բիւզանդիոն նաւեմք ։ Ասէ ցնս՟ սուտ նաւապետն · մոլորիք , զի ո՛չ այս ճանապարհ է՝ ընդ որ գնայցէք ՚ի դէմ եդեալ տեղիդ · այլ ՚ի ձախակողմն կոյս դարձջի՛ք ։ Եւ նոցա կարծեցեալ՝ եթէ արդարև զուղղորդն ցուցանէ ճանապարհ , յարեան կազմեցին զառագաստն՝ ուղղել յայն կողմն անդր , զոր ասաց նոցա պիղծ ոգին մոլորութե՟ ։

Յայնժամ երևեցաւ նմ՟ յանկարծակի սր՟բն ադրիանոս՝ իբրև ՚ի մէջ նաւակի · ձայն ետ , և ասէ · բարւո՛ք ընթանայք · մի՛ լինէք չար խրատատուէ՞իդ , որ կամի զձեզ կորուսանել · և նոյն ժամայն անհետ եղև այսն չար ։ Յարեաւ երանելին անատոլա , և ետես զս՟րբն ադրիանոս , զի գնայր առաջի իւրեանց · լցաւ ուրախութե՟ , ձայն եբարձ , և ասէ · ահա՛ և տէ՟րն իմ ադրիանոս · և այլ ոչ ևս երևեցաւ նմ՟ ս՟րբն ։ Իսկ նմ՟ նաւեալ աջողակ հողմով՝ եկին նախ քան զլուսանալ առաւօտու յարկիւռոպօլիս , որ է յանդիման բիւզանդիոյ · և իբրև հասին ՚ի տեղի նշխարաց ս՟րբցն՝ ելե՟լ երանելւոյն անատոլեայ ՚ի ցամաք , մատեաւ փափաքմամբ և ողջունեաց զպատուական և զճգնազգեաց մարմինս վկայից · և առեալ զձեռն՝ որ էր ը՟ նմա , եդ առ մարմնոյ ս՟րբոյն ադրիանոսի · և ծունր եդե՟լ աղօթեաց զօգուտ ժամս ։

Ապա եկե՟լ ողջունէր զա՟մ եղբարս և զքորս , աղաչելով զնս՟ աղօթս առնել վս՟ իւր · զի հասցէ զկնի ս̄բյն․ քանզի էր անդ ՚ի տան Եւսեբիոսի առն բարեպաշտի բազմուե̄ հաւատացելոց․ որք և աղաչէին զնա, զի հանգիցէ սակաւ մի քնով․ քանզի էր խոնջեալ յոյժ։ Այլ ահա երևեցաւ նմա ՚ի տեսլեան ս̄բն ադրիանոս, և ասէ․ խաղաղութի̄ ընդ քեզ աղախին ա̄յ, և դուստր և քոյր մարտիրոսաց․ արդ եկ ա՛ռ զվարձս վաստակոց քոց ը̄ արժանեաց։ Եւ նոյնժամայն աւանդեաց զհոգի իւր ՚ի ձեռս տ̄ն։

Այլ յորժամ մատեան եղբարքն զարթուցանել զնա ՚ի քնոյ, գտին վախճանեալ ՚ի ք̄ս․ և արարեալ աղօթս արտասուօք հանդերձ՝ ամփոփեցին զնա բազում պատուով ը̄ երից երանելի վկայից ս̄բց․ և միաբանեալ հաստատեցին զտունն Եւսեբիոսի իբրև վկայարան և տուն աղօթից․ քանզի էր իսկ շինեալ բոլորշի գմբեթաձև կամարակապ․ և բազումք յարանց և ՚ի կանանց թողին զա̄մ ինչս իւրեանց, և արարին ՚ի տեղւոջն բնակութի̄՝ պարապեալ աղօթից և պահոց, ծառայելով տ̄ն և ս̄բց նր̄ ա̄մ զուարթութե̄։

Կատարումն ս̄բյն ադրիանոսի և ընկերաց նր̄ մեծայաղթ վկայից ք̄ի՝ եղև ՚ի քսաներորդ վեցերորդ աւուր օգոստոսի, յամի տ̄ն իբր 305, կամ 310․ ՚ի Նիկոմիդիա քաղաքի․ և երջանիկ փոխումն անատոլեայ նահատակակցի նոցուն՝ աւուրբք ինչ զկնի ՚ի բիւզանդիա։

Ս̄բն ադրիանոս է մին ՚ի նշանագործ վկայից․ որոյ բազմապատիկ են սքանչելիք առյիշատակագիրս . եւ 'ի մասնաւորի է բարեխօս վ՟ն ըմբռնելոցն 'ի ժանտախտէ : Սրբելի նշխարք ն՟ր ասին լինել այժմ 'ի Հռոմ, 'ի սպանիա , 'ի լուսիտանիա . այլ առաւել նշանաւոր 'ի բեղգիա փլանդրացւոց . ուր կայ վանք ն՟յն ադրիանոսի՝ ուխտատեղի փայլեն՟ բազում հրաշիւք . մինչեւ կոչել զայն ոմանց ադրիանուպօլիս , կ՟մ ն՟ր ադրիանոս փլանդրացւոց : Տես զայսցանէ եւ 'ի կարգն ծանօթութ՟ն : (4)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Զունիմք տարակոյս , թէ 'ի հնոց անտի թարգմանեալ գտանի 'ի մեզ առաջիկայս վկայաբանութ՟ն ընտիր . զոր չունելով մեր 'ի ճառընտիրս՝ որ առ մեզ , նորոգ թարգմանութ՟բ առաք 'ի յոյն բնագրէ գովութ՟ յառաջ բերելոյ 'ի տիլլեմոնդայ բոլլանդեան . որ առանձին խնամով աշխատասիրեաց յայսմ մասին . նախ՝ բազում հետազօտութ՟բ 'ի ձեռս բերելով զյունական օրինակ հին . ուր այլք յառաջ քան զնա՝ զլատին օրինակ եւեթ ունէին , թէպէտ եւ այն հին . բայց յայտ է թէ միշտ նախապատիւ է սկզբնագիրն . թող եւ զքաղուածս նոյն պատմութ՟ն առ այլ վկայագիրս , որ՟պ եւ 'ի յայսմաւուրս Յ . Լ . եւ Հ : Երկրորդ՝ առանձին քննութ՟ն 'ի մէջ մատուցանելով 'ի հաստատութ՟ն ստուգութ՟ գործոյս , որ վ՟ն ունելոյ զպարագայս ի՟նչ զարմացուցիչս՝ բ՟ դատաստանաւ էր անկեալ ոմանց 'ի համարձակախօս կրիտիկաց : Զի թէպէտեւ բարոնիոս՝ հարազատ վկայեաց գոլ զայս վկայաբանութ՟ն , եւ փլորենտացին յաւել 'ի գովութ՟ն՝ թէ է զգածեցուցիչ սրտի ընթերցանելեաց , որ՟պ եւ է իսկ յիրաւի . բայց տիլլեմոնտ եւ բայիլլէտ համարձակախօսք բ՟ վայր հարին զ՟ խելաց իւրեանց :

Արդ Ը՟դէմ այսպիսեաց այսպէս սկսանի խօսել տիլլեմոնդ .

տինգ · յերես · 210 · յօդ · ա · * Խիստ քննիչքդ այդ ոչինչ
‚ ակն ածեն ասել, թէ վկայաբանութիւնս այս երեւի
‚ լինել ծնունդ մտաց պարապորդ առն, որ կամեցե̅լ
‚ իցէ զգրիչ իւր 'ի գործ արկանել ։ Բայց արդ՝ դիմախօսութիւնք
‚ տիլլեմոնտի և բայլլետայ չունին արդեօք
‚ այնչափ արժողութիւն, զի ստխալեցայց այնպիսի
‚ արատ դնել վկայաբանութեանս, որ հինն է, և հաճոյ
‚ գտեալ ագուշխի, և լատին Թարգմանչաց հնագունից
‚ քան զագուշն ... վա՜յ ժամ է քննել զձեռնարկս տիլլեմոնտի ||։

Ապա դնէ յօդ · Է · 'ի կշտամբութե̅ն առարկութեանց Նր̅ · և քաջ յաղթահարէ զն̅մ պատճառանս Նր̅ · զոր ոչ է հարկ երկրորդել աստանօր · տեսցես զայն բանս ստիլտինգայ ոսկեգրով դրոշմեալ՝ եդեալ 'ի մէնջ 'ի յառաջաբանական ճառի · որովհետև տայ պնդի հանրական և գլխաւոր առարկութեանց աւելախնդիր խուզարկուաց առհասարակ · որով և զանձն իւր ըմբերանէ, կա՛մ յետս կոչէ զտարադէպ բանս իւր, ուր ուրեք ոչ վարեցաւ ուղիղ օրինօք · որ̅պ 'ի վարս լուսաւորչին · զի թէ՝ և նշխարք լուսաւորչին մերոյ լինէին յերկրին ստիլտինգայ՝ որպ̅ս ասին լինել ագրիանոսի, գէթ առ ջերմեռանդութե̅ առաւել յարգ ցուցանէր և առ պատմութե̅ ագաթանգեղոսի ։ Ոչ բերեմք աստ և զգրեալսն 'ի ստիլտինգայ 'ի յօդ · Գ̅ · ուր լիով ցրէ զնմանաւոր առարկութիւնս՝ որ վ̅ն առաջիկայս վկայաբանութե̅ · որ ոք կամի, տեսցէ առ նմա · մեզ չէ՛ արժան ժամավաճառ լինել վ̅ն հաճելոյ զե̅վայրաքննինս և զվայրախօսս ։

Միայն ինչ մի 'ի մէջ առից, զոր և ստիլտինգ ծածանմամբ իմն խորհրդոց յուշ առնէ · * Չիմանամ (ասէ),
„ թէ ուստի՞ գիտացին հաւաստացեալք զտեսիլն ագրիանոսի
„ և զբանս Նր̅, եթէ նոյնժամայն փոխեցաւ
„ անատոլս ։ Տեսեալ լատին Թարգմանչին՝ զի դժուարութի̅ն
„ կրէ բանս, յաւել ինչ մի, կա՛մ թէ գտե̅լ իցէ
„ զայն թերևս յիւրում ձեռագրի · ուստի ա̅ մամբրիտիոսի
„ յետ տեսլեանն յարի այս բան · և առժամայն
„ զարթուցեալ պատմեաց ամենեցուն, և անդրէն
„ ննջեաց · և իսկոյն արձակեաց զոգին ս̅բ̅ն անատոլս ։
„ Եւ արդարև այսու օրինակաւ կարէր 'ի յայտ գալ
„ տեսիլն · բայց թէ Թարգմանիչն ոչ եգիտ աւելի ինչ
„ յիւրում յունական օրինակի՝ քան զոր կայ յաւուր
„ յայսմիկ յիմումս, անհաւատարիմ Թարգմանութի̅ է ||։

Իմաստութ̅ք խօսի ստիլտինգ · բայց կարծեմ թէ և խղճա-

հա

հարութե̃, զի անաչառ ցուցցէ զանձն իմաստնոց առաջի : Վ͞ս զի նախ՝ եթէ յիրաւի անկեալ իցէ տող ինչ յօրինակէն Ստիլտինգայ, որ թերևս կայր յօրինակի թարգմանչին, ահա վճարեալ է բանն. յորմէ իմանամք, թէ բազում խնդիրք վայրապար ծագեն 'ի գրչացն անհոգութե̃ : Երկրորդ՝ եդեալ թէ թարգմանիչն յաւել զայն համառօտ, այն անհաւատարիմ ցուցաւ, բայց և անշուշտ ստուգաբան. զի զայն ինչ ասաց, զոր և բուն վկայաբանն ենթադրէ. և արդարև եթէ գիտէին հեղինակք՝ թէ յետագայք ոչ իմաստասիրեն զայսոնի պարագայս լռելոյ, զա̃մ գործածս կրկին և երեքկին ունէին յերկարել : Վ͞յ առաւել է երրորդ, թէև ոչ հաւանեսցուք մեկնութե̃ թարգմանչին (զոր և մեք չառաք յանձն՝ վ͞ս չգտանելոյ 'ի յունական օրինակի առ Ստիլտինգայ), պարտական եմք զնմանօրինակ մեկնութ ինչ 'ի վ͞ր բերել մտօք. զ͞ի թէ՝ կամ յետևառաջութե̃ բանից կամի ասել հեղինակն, թէ յառաջ յաղօթելն ետես անատոլա զայն տեսիլ, և յողջունելն զեղբարս՝ պատմեաց ն͞ց, ո͞չ յայտ է թէ պատմեաց զտեսիլն՝ որ 'ի նաւուն. և ապա 'ի ննջելն աւանդեաց զոգին ը̃ հրաւիրմանն ադրիանոսի. և կա̃ որովհետև յետ զայլ տեսիլս և զգործս պատմելոյ՝ աղօթս խնդրեաց անատոլա 'ի հաւատացելոց փափաքանօք հասանելոյ զկնի ս͞րբյն ադրիանոսի, ընդ տեսանելն եղբարց՝ թէ առ օրին և առժամայն աւանդեալ է զոգին, յայտնապէս իմացան՝ թէ ս͞րբն ադրիանոս հրաւիրեաց զնա. և յայս միտս խօսի և վկայաբանն, Եւ կամ թէ զհակիրճ բանս տեսլեանն իբրև յերազի խօսեալ լուան մերձակայք. ըստ այսմ և այլ բազմապատիկ եղանակք մարթին լինել յայտնութե̃ անյայտ կարծեցեալ բանից : Եւ որ մեծն է՝ պատմողն յորժամ ո՛չ տարակուսի, այլ պարզապէս պատմէ զի̃նչ եղեալ՝ որ ոչ է անկարելի, աւելորդ է ընթերցողին վարանիլ ը̃ զիա̃րդ լինելն. զի թէ անլինելի գիտէր գրողն, գրէր իսկ ոչ. ապա հի̃ն տմի է հաւատարմութիւն գրչին, որ լռել երևի յա̃մ բանս իւր :

(2) 'Ի Հ. անխտիր գրի **ադրիանոս** կամ **անդրիանոս**. և երկրորդս այս է առաւել գործածական 'ի տօնացոյցս. ը̃ որում սովորու̃թ է առ նախնիս մեր երբեմ̃ն զվանկն յունական՝ **ադ**, վերածել 'ի հայումս **անդ**, քան թէ **ադ**, զ͞ի անդամանդ, անդրիանուպօլիս, անդրիանոս կայսր և այլն. որ են 'ի բարբառ յունաց և հռովմայեցւոց՝ ադա-

մաս, ադրիանոպօլիս, ադրիանոս. ե՛ն : Իսկ անատողայն՝ 'ի յն. և 'ի լա. է Նատալիա, կամ Նադալիա. այլ թէ զիարդ յաւելաւ 'ի մեզ նախընթաց տառն ա, և 'ի միջի եդաւ ո, չունիմ ասել, զի կամ այնպէս գտին յեւրեանց օրինակս յունականս, կամ այնպէս ընթերցան իբրև ծանօթագոյն հնչումն՝ հանգոյն արևելեան ձայնից, անատօլի (արևելք), և անատօլիոս (անուն մարդոյ). և կամ գրիչք կրկնեցին զտառդ ա, և փոխանակ գնելոյ * կնոջ նորա նատողայ ||, գրեցին՝ կնոջ նորա անատողայ :

Յուշ առնէ ստիլտինգ 'ի յօդ. Ջ. թէ կայ և այլ ոմն վկայ ադրիանոս անուն, զոր չփոխեն տիլլեմոնտ և բայլլէտ. ուր լատինք զմին տօնեն յօգոստ. 26. և ըզմիւսն 'ի սեպտ. 8. կամ ըստ այլ օրինակաց 'ի մարտի. 4. բայց յոյնք զերկոսեան ևս տօնեն 'ի 26. օգոստ. որ է նշանակ այլևայլ լինելոյ երկուց սրբոց. ապա թէ ոչ՝ ոչ լինէր կրկնել զմի սուրբ 'ի նմին աւուր. Թող զոր այլք՝ երրորդ ևս ադրիանոս կարծեցին լինել վասն պէսպիսութեան օրինակաց լատին տօնացուցից. և այլք ասացին՝ թէ մարմինք երկուց սրբոց ադրիանոս կոչեցելոց 'ի միասին թաղեցան, և զայս առնուն արդեօք 'ի տօնելոյ յունաց զերկոսին 'ի մի օր. և այլ ևս անստոյգ մակաբերութիւնք, որոց չունիմք մեք կարօտութիւն :

(3) Ընկերք սրբոյն ադրիանոսի յոմանց ասին լինել թուով լդ. յոմանց լգ. յայլոց իբ. նմն և 'ի Հ. իզ. բայց ուղղագոյն դատեալ է լինել իդ, զի այսպէս գնի 'ի բնագրի յոյն վկայաբանութեան, և 'ի զանազան վկայադիրս նոցա. նմն և առ լատինս հին վկայաբանք բեդա, ադոնն, և ուսուարդոս զնոյն թիւ պահեն հաստատուն :

(4) Հռոմայեցիք 'ի վաղուց հետէ պինդ ունին, ոչ թէ առ իւրեանս են երևելի նշխարք սրբոյն ադրիանոսի 'ի բորեան հրապարակի 'ի ներքոյ աւագ բեմի եկեղեցւոյն, զոր շինեաց յանուն սրբոյն ադրիանոսի ոնորիոս Ա հռոմայ հայրապետ յեօթներորդ դարու : Եւ որպէս գրէ անաստաս գրապետ՝ պապն ադրիանոս Ա զնորին սրբոյ զվկայարանն նորոգեաց և զարդարեաց. բայց են՝ որ ասեն, թէ միւս ևս վկայարան յանուն սրբոյն ադրիանոսի շինեցաւ 'ի հռոմ, և անդ եդաւ մարմին սրբոյն, տեսանի ըստ մասին կամ ըստ բոլորին փոխադրեցաւ այլուր : Սպանիացիք ասեն, թէ մարմինք սրբոյն ադրիանոսի և անատողայ փոխադրեցան 'ի հռոմայ 'ի սպանիա յիններորդ դարու, և այժմ ասեն պահեալ կան յաբբայարանն սրբոյն պետրոսի կաստոնկեան՝ 'ի կարգէ բենեդիկտեանց՝

տեանց' 'ի Թէմն լեգիոնեան. որպէս և 'ի նմին Թեմի 'ի վանս սրբոյն կլոդիոսի բենեդիկտեան' ասի լինել բազուկ մի ադրիանոսի, և մի բազուկ անատոլեայ. և զեղանակ փոխադրութեան ճոխագոյն գրեն մատենագիրքն. որք և յիշեն զշինութիւն եկեղեցւոյ և վանից 'ի սպանիա 'ի պատիւ սրբոյն ադրիանոսի և անատոլեայ' յամի. 920: Են որ կարծեն' թէ 'ի վաղուց բերեալ իցեն այն նշխարք յարևելից. և յեօթներորդ դարու հանդիսացեալ. և են որ վիճեն' վասն ամբողջ կամ ընդ մասին անդր փոխադրելոյ. հանդերձ նշխարօք ոմանց յընկերացն ադրիանոսի:

Լուսիտանացիք ևս համարին առ իւրեանս ունել ըզնշխարս սրբոյն ադրիանոսի և անատոլեայ և մետասան ընկերաց նորա' ոչինչ հեռագոյն յուլիսիպպոն քաղաքէ 'ի վանս սրբոյն փելիքսի, որ է կուսաստան դոմինիկեանց 'ի ձորն յաքելլեան կամ տէ քելլաս. այլ առանց յիշատակի որոշ փոխադրութեան: Իսկ առաւել հանդիսական է' ասէ սոլլոնիգ' աւանդութիւն նշխարաց սրբոյն ադրիանոսի անյիշատակ հնութեամբ 'ի նահանգի մերում 'ի բեղգիա ֆլանդրացւոց, 'ի վանսն' որ երբեմն գերարգեայ լեառն ասիւր, և այժմ վանք սրբոյն ադրիանոսի. և թէ քանի հռչակաւոր ուխտատեղի իցէ պայծառացեալ սքանչելեօք' ընդարձակ գրէ, գնացեալ և անձամբ յամի տեառն 1748. յուխտ պատուական այն նշխարաց. որ և զձև արծաթի ոսկեզօծ տապանին' յորում հանգչին նշխարք սրբոյն ադրիանոսի, որպէս և զայլ ոսկեր միոյ եդելոյ 'ի բազուկ արծաթի' փորագրեալ դնէ 'ի կարգի ծանօթութեանց: Գրէ և յերկար, թէ քանիցս անգամ յերեսաց հալածանաց և յարձակմանց կալվինեանց այսր անդր փոխադրեցան այն նշխարք. և անդրէն յաւուրս խաղաղութեան եդան 'ի նոյն վանս սրբոյն ադրիանոսի:

Հուսկ յետոյ ճոխագոյնս ճառէ ըստ պէսպէս յիշատակարանաց զբազմապատիկ հրաշից եղելոց անդանօր բարեխօսութեամբ սրբոյն ադրիանոսի. յորս բազումք այն են' որք 'ի ժանտախտէ զերծան, շատք ևս 'ի մահաբեր հիւանդութեանց ապրեցան. բազումք 'ի ջուր հեղձեալ' կենդանացան, մանաւանդ մանկունք անկեալք 'ի ջրհորս և 'ի գետս. որպէս և վայրանկեալք 'ի սանդղոց և 'ի բարձր տեղեաց' կենդանի պահեցան. դօսացեալք և անդամալոյծք բժշկեցան. մանկաբերք 'ի վտանգէ մահու ազատեցան, և մեռեալ ծնունդք կենդանացեալ' արժանի եղեն մկրտութեան. զորոց և զնշանակս պահէին 'ի տաճարի անդ սրբոյն:

Այլ է և մարմին այլոյ ուրումն սբ՟յն ադրիանոսի, որ պահի աստն ՚ի գանտաւ. քաղաքի: Թո՛ղ և զայլ մասնաւոր նշխարս յանուն սբ՟յն ադրիանոսի ՚ի զանազան տեղիս • ք՟թ այլևայլ բազուկք, գլուխք, ատամունք • ևն՟ • յորս է՛ զի այլևայլ սբ՟ց անուանք չփոթին, և է՛ զի ՚ի բազկաձև և ՚ի գլխաձև ամանս ամփոփե՟լ մանրիկ մասունք, ՚ի մասնէ անտի բոլորական անուն ժառանգեն• ոմ՟ և երբեմն մարմին ասի՝ փոխանակ մասին ինչ նշխարաց: Այլ որ զարմանալին է, յիշի և ՚ի գերմանիա սուսեր սբ՟յն ադրիանոսի՝ պահե՟լ ը՟ երկար ժամանակ իբրև յիշատակ պանծալի • զոր և ը՟ մէջ իւր էած ասեն սբ՟ն Ենրիկոս կայսր ՚ի խաղալն ը՟դէմ բոհեսլաւայ դքսին բոհեմիոյ, և վանեաց զթշնամին, տեսանելով և զսբ՟ն ադրիանոս և զսբ՟ գէորգ և զսբ՟ լաւրենտիոս զիւր բարեխօսս, զի գնային ը՟ հրեշտակի այ՟ առաջի բանակին իւրոյ:

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սբ՟յն Թէոդորոսի ստրատելատի արակլացւոյ ։

Հ․ յունիս․ 8 ։ Յ․ փետր․ 8․ և յունիս․ 8 ։ Լ․ փետր․ 7 ։ Ճառընտ․ Ա․ երես․ նխ=նխբ ։ Բոլլանդ յովհաննէս․ Է․ հատ․ փետր․ էջ․ 23=37 ։
Մետափր․ և այլք ։ (1)

ՄԵԾԱԶՕՐ ԵՒ ԳԵՐԱպայծառ նահատակն քս՟ի ս՟բն Թէոդորոս Ստրատելատ (որ թարգմանի՝ ա՟ծապարգև զօրավար), ծնեալ 'ի քրիստոնեայ և յա՟ծասէր ծնողաց 'ի գիւղն եւխայիտայ՝ որ 'ի սահմանս ամասիոյ պոնտացւոց , քեռորդի էր քաջայաղթ զինուորին քս՟ի՝ ս՟բյն Թէոդորոսի տիրոնի , որոյ յիշատակն կատարի յառաջին շաբաթու աղուհացից ․ և թերևս յանուն քեռւոյն իւրոյ առ կենդանութե՟ իսկ նր՟ կոչեցեալ Թէոդորոս ։ Որ և սնեալ և վարժեալ ա՟մ բարեկարգութե՟ 'ի քս՟, և զարգացեալ հասակաւ և իմաստութե՟՝ կրթեալ լինէր 'ի հրահանգս ա՟ծպաշտութե՟ ․ և հասեալ 'ի տիս երիտասարդութե՟՝ երևելի լինէր 'ի զինուորական հանդիսի , յոր դրեցաւ կա-

կամաւ կմ՟ ակամայ. զի էր առոյգ և զուա՛րթագին տեսլեամբ, և ամենիմաստ հանճարով առլցեալ. մինչև ծանօթ ևս լինէր թագաւորաց և բռնաւորաց ժամանակին, ոպ՟ մեծին կոստանդիանոսի այն ինչ թգ՟րելոյ, և որոց առ նովաւ ինքնակալաց հեթանոսաց: Քանզի և ’ի պատերազմունս բարբարոսաց անպարտելի և յաղթող երևեալ ամենագով ս՟բն և առաջինի նահատակն՝ երթալով երթայր և զօրանայր. վ՟ոյ և զառաւելագոյն պատիւ զօրավարութե՟ ընկալեալ ստրատելատ կոչմամբ՝ մեծաշուք իշխանութբ՟ պատուեալ լինէր, արարեալ իւր բնակութի՟ ’ի հերակլիա քաղաքի կապադովկացւոց՝ ուր կարգեալ էր իշխան բազմութե՟ զօրաց, որ և առակլիա պոնտոսի կոչի. յորմէ և զարակլացին անուն ընկալաւ: Ուրանոր քաղցր և մարդասէր բարս ցուցեալ առ բնակիչս քաղաքին, և բովանդակ նահանգին և ազգին մարիանդացւոց՝ որ ը՟ իշխանութբ՟ նր՟ էին, և բազում բարիս առատաձեռնեալ ամենեցուն, սիրելի լինէր յաչս մեծի և փոքու՝ հաւատացելոց և հեթանոսաց. յորոց և ըզբազումս ածէր ’ի հաւատս ք՟սի, առաւել ’ի գնդէ զօրաց իւրոց. զի էր այր լի հոգւով ս՟բվ, բանիբուն գիտութբ՟, և հզօր բանիւք և արդեամբք յա՟մի ը՟ յաջողութե տ՟ն:

Ը՟ այնու ժամանակաւ՝ յամի տ՟ն իբր 310. գաղերիոս մաքսիմիանոս կայսր՝ ը՟ խորհրդոյ դիոկղետիանոսի որոշելոյ ’ի կայսերութե՟՝ արար կեսար զլիկիանոս դակիացի կիսթրա-

կա

կացի զիւր բարեկամ վաղեմի . և տուեալ նմա օգոստոսական անուն՝ մեծարեաց ինքնակալ իշխանութ̅բ . և զկնի իբր երից ամաց նաև կոստանդիանոս մեծն ետ զքոյր իւր կոստանդիա 'ի կնութ̅ի նորին լիկիանոսի ։ Արդ իբրև զօրացաւ լիկիանոս յիշխանութ̅ե իւրում, գնաց զհետ օրինակին մաքսիմիանոսի և դիոկղետիանոսի՝ զինեալ զանձն հակառակ ազգին քրիստոնէից , և օտարացեալ 'ի սիրոյն կոստանդիանոսի և մերոյն տրդատայ ։ Յարոյց հալածանս ը̅ ա̅մ տեղիս՝ յորս հասանէր ձեռն ն̅ր . քանզի ունելով զաթոռ իւր յարքայանիստն նիկոմիդիա բիւթանացւոց՝ առաքէր հրովարտակս առ իշխանս և դատաւորս գաւառաց և քաղաքաց սաստիկ հրամանաւ , զի ը̅ ա̅մ տեղիս բարձցի պաշտօն քրիստոնէու̅ե , և ա̅մ մարդ զոհեսցէ դից հեթանոսաց . և այնպէս հաւատացեալք այն ինչ զերծե̅լք 'ի հալածանաց մեծաց՝ միւսանգամ վերստին 'ի նոյն մատնէին 'ի փորձութ̅ի . և բազումք արիաբար նահատակէին վ̅ս անուա́նն տ̅ն . յորոց սակի են և քառասուն մանկունք սեբաստիոյ՝ այլովքն հանդերձ ։

Սու ահա յայնպիսի դառնութ̅ե ժամանակի փայլէր իբրև աստղ լուսապայծառ և զամբար ճառագայթարձակ 'ի կողմանս առակլիոյ ս̅բն Թէոդորոս ստրատելատ՝ յա̅մի քաջն և նախամարտիկ զօրականն անյաղթ Թագաւորին ք̅սի ։ Քաջ գիտակ էր և ինքնին անօրէնն լիկիանէ՝ ը̅ մարմնոյ արու̅ե և քաջութ՟ե Թէոդորոսի և մեծամեծ գործոց նր՟ ․ այլ անգէտ էր գլխովին առաքինութ՟ե հոգւոյ նր՟ և հաստատուն հաւատոցն ամրութ՟ե որ 'ի ք՟ս յս՟ ։ Արդ՝ ոմանց 'ի չարասէր արբանեկաց բանսարկուին մատուցեալ յունկն թագաւորին՝ ըզգացուցանէին վս՟ սբ՟յն , թէ ոչ միայն ինքն քրիստոնեայ է , այլ և ամ՟ աշխարհն և քաղաքն՝ որ է՟ ձեռամբ նր՟ , հանդերձ զօրօքն հրապուրեալք 'ի նմանէ՝ դարձան 'ի կռոցն երկրպագութ՟է , անհաւան լինելով հրամանաց ձերոց , և զխորհրդական տօնս ած՟ոցն ոչ կատարելով , և ո՛չ 'ի նուիրական զոհից նց՟ ճաշակելով ։

Իբրև զայս լուաւ թագաւորն , յիմարեալ և սաստեալ լի ցասմամբ , վարանէր 'ի խորհուրդս իւր՝ թէ ո՛րպէս կարասցէ ըմբռնել 'ի վարմ մահու զայնպիսի երևելի այր (2) ։ Գրել և կոչել առ ինքն անպատշաճ վարկանէր ․ զի մի՛ զխորհուրդ նենգութ՟ե իմասցի , և զարհուրեալ ընդոստուցեալ ընդդիմասցի ասէ հրամանաց մերոց ։ Խորհէր 'ի մտի , զի յաղագս պատերազմական գործոյ պատճառս եղեալ՝ երթայցէ զկողմամբք կապադովկացւոց , և 'ի նմին իսկ քաղաքի յառակլիա ըմբռնեսցէ նենգաւ զերանելին ․ և յայս խորհուրդ մտաց եղեալ անօրէնին՝ կամեցաւ առաքել զոմանս 'ի պատուաւորաց նիկոմիդիայ քաղաքին հանդերձ զօրօք յառակլիա , ուր բնակութ՟ի էր երանելւոյն , գրեալ առ նա թուղթ մեծարանաց և պատուոյ ․ Զի թէ հաճոյ թուեսցի ասէ կամաց քոց գալ տեսանել զմեզ և երկրպագութ՟ի մատուցանել փառաւոր ա՟ծոց մերոց 'ի քաղաքիս Նիկոմիդացւոց, եկեսցես բազում ճոխութ՟բ և երևելի փառօք ․ ապա եթէ պատճառք ինչ լինիցի՝ և արգելցիս, արժա՛ն մեզ գալ տեսանել զկողմանսդ զայդոսիկ, և զքաղաքդ՝ յորում բնակեալ ես ․ զի յոյժ ցանկացեալ եմք տեսանել և վայելել 'ի սէր քո ։

Եւ յորժամ հասին առ նա զօրագլուխքն, և մատուցին զգիր հրամանաց հրովարտակին, առեալ ընթերցաւ, և ոչինչ երկմտեցաւ ․ այլ ուրախացեալ գոհանայր զա՟յ երանելին, զի զոր ինչ յառաջագոյն խորհէր 'ի սրտի իւրում՝ յայտնի լինել յաղագս ա՟ծպաշտութ՟ե, և վկայ լինել ք՟սի, վաղվաղակի արդեամբք կատարէին կամք հաճոյից ն՟յ ։ Ապա յայնժամ մեծաշուք պատուով ընկալեալ զարսն՝ պարգևս շնորհէր ն՟ց ․ և զիւրոյ գալստեանն անկարութ՟ի առ թագաւորն պատճառեալ յաղագս պիտոյից ե՟ին, աղաչէր զարսն և հաւանեցուցանէր՝ խոստանալով ն՟ց և ինչս, զի երթեալ յորդորեսցեն զարքայն՝ հանդերձ բազմութ՟բ ա՟ծոց իւրոց գալ 'ի քաղաքն առակլիա ․ ո՟պ այն թէ տեսանելով զայն՝ ա՟մ բազմութ՟ի քաղաքին և գաւառին՝ ուրախացեալ ցնծասցեն, և տօն մեծ կատարեսցեն հանդերձ զօհիւք և երկրպագութ՟բ ։

Իսկ արքն այնոքիկ եկեալ առ թագաւորն՝ մատուցին անգէտ խորհրդով զպ՟խիս պատ-

գադամաց և հրովարտակին. զոր առեալ արքայն ընթերցաւ. և իբրև զմանուկ մի անմիտ խաբեալ դարշելի ալևորն՝ կամեցաւ չուեալ 'ի կողմանսն յայնոսիկ. համարէր անօրէնն՝ եթէ ա՟մ խորհուրդ իւր յանդ ելեալ կատարեցաւ։ Այնուհետև առեալ զբազմութ՟ի հեծելազօրացն իւրոց (զոր ոմանք ութ հազար արանց ասեն), գայ հասանէ 'ի քաղաքն առակլխա։ Եւ լուեալ սբ՟յն Թէոդորոսի զմերձենալ թագաւորին՝ պատրաստէր զանձն ելանել 'ի փողոց՛ անդր ը՟առաջ նր՟ մեծաշուք պատուով և ճոխութ՟բ. զի և ինքն իսկ թ՟գրակերպ սպաս և փառս ունէր։ Եւ յայնժամ գիշերի՝ մինչդեռ ննջէր 'ի տան իւրում երանելին, տեսանէր 'ի տեսլեանն, զի ձեղունք տանն վերացան, և կայծակունք հրոյ փայլատակեալ իջանէին 'ի վ՟ր նր՟. և ձայն լսելի եղեալ՝ որ ասէր ցնա. զօրացի՛ր և քաջալերեա՛ Թէոդորէ, զի ես ը՟քեզ եմ։ Եւ զարթուցեալ սբ՟յն՝ պատմէր մերձակայիցն զտեսիլն, և ասէր. հաճեցաւ ա՟ծ, զի 'ի տեղւոջս յայսմիկ հեղցի արիւն իմ վ՟ս անուանն ք՟ի։ Ապա եդ ծունր, և յաղօթս եկաց հանդերձ արտասուօք՝ գոհանալով զա՟յ. և իբրև կատարեաց զաղօթսն, յարուցեալ լուանայր զգեղեցկութ՟ի պայծառատեսիլ երեսաց իւրոց, և զգենոյր հանդերձս մեծագինս բեհեզեայս։ Ապա հրամայեաց հանդերձել զոսկիակազմ երիվարս իւր. և հեծ՟եալ հանդերձ զօրօք իւրովք՝ գնաց ը՟առաջ թագաւորին։ (3)

Եւ տեսեալ զարքայն՝ երկիր պագանէր նմա ը՟ օրինակի Թագաւորաց ողջունելով և ասելով. ողջոյն քեզ հզօր և ինքնակալ Թագաւոր՝ յա՟յ առաքեալ ։ Իսկ Թագաւորն իբրև լուաւ զայն, և ետես զմեծանձնուե՟ սբ՟յն, փաղփաղակի գիրկս արկեալ մեծաւ գթով, և սիրով ընկալեալ՝ համբուրէր զնա, և ասէր. ողջոյն ը՟ քեզ արեգակնատեսիլ Թագագլուխ. զի պա՛րտ է և քեզ Թագաւորել ընդ իս ։ Եւ 'ի մտանել արքայի 'ի քաղաքն հանդերձ բազմութ՟ն, որ ելին ը՟ առաջ նորա, իջավանս տայր նմա մեծն Թէոդորոս յառանձին ապարանս իւր՝ կազմեալ ը՟ օրինի արքունի պաղատանն, և արկեալ գահոյս և աթոռս Թագաւորին ։

Զոր տեսեալ Լիկիանեայ՝ ուրախացաւ յոյժ, և գովեաց զքաղաքն և զքաղաքացիսն. և հրամայեաց Թէոդորոսի նստել. և ասէ ցնա. ահաւասիկ ը՟ գրեցելոցն աղաչանաց առ 'ի քէն ո՛վ Թէոդորէ՝ հիւրաբար մեծարանս առնելով եկի 'ի տեսանել զքեզ և զքաղաքս քո, բերելով ը՟ իս զպատուականագոյնս և զփառաւորագոյնս յա՟ծոց մերոց, զի երկիրպագանիցէք և զոհս նոցա մատուցանիջիք ։ Պատասխանի ետ սբ՟ն Թէոդորոս, և ասէ. ո՛վ յաղթող և մեծ Թագաւոր՝ բարիոք արարեր, զի կատարեցեր զխնդիրս ծառայի քո, ուրախացուցանելով զմեզ գալստեամբդ քո. Եւ առաւել պատուեցեր զմեզ բերմամբ ա՟ծոցն, զի տեսանելով զնս՟՝ հաստատեսցին ամենեքին 'ի հրամանս ա՟ծպաշտութե՟ ։ Արդ՝ աղաչեմ զմեծութիւնդ քո , զի փոքր մի հանգիցես յաշխատութ̃եց ճանապարհիդ . և տացես յիս զփառաւորագոյն զա̃ծսն ա̃մ . զի տարեալ 'ի տուն իմ՝ օծից իւղովք անուշիւք , և կնդրուկ մատուցեալ խնկեցից նոցա . և երկրպագեալ զոհս մատուցից՝ որպէս և գիտեմ՝ 'ի տան իմում առանձնական . և ապա զկնի այսորիկ բերեալ 'ի հրապարակս առաջի ամենեցուն՝ զօրինաւորն մատուցից զոհ . զի հայելով և տեսանելով զայն՝ ամենեքեան յորդորեսցին 'ի նոյն նախանձ բարեպաշտութ̃ե :

Իբրև լռեաւ զայս թագաւորն՝ հաճոյ թուեցան նմա բանք ս̃բյն յոյժ . քանզի չէր տեղեակ խորհրդոց նր̃ , և հաւատայր ասացելոցն 'ի նմանէ : Վ̃ոյ հրաման տայր բերել և տալ 'ի ձեռս նր̃ զա̃մ կուռս զոսկեղէնս և զարծաթեղէնս . զոր առեալ ս̃բյն՝ տանէր յապարանս իւր . և յարուցեալ 'ի գիշերին յայնմիկ՝ խորտակէր մանր զա̃մ ա̃ծսն , և հանեալ բաշխէր աղքատաց և կարօտելոց . և ինքն պէսպէս հնարիւք տատանէր զմիտս անմիտն լիկինոսի առ ժամ մի :

Իսկ յաւուրն երրորդի հրամայէր արքայն առ ինքն կոչել զմեծն թէոդորոս . և ասէ ցնա . ով ազնուականդ և փառաւորեալդ 'ի թագաւորացն՝ որ յառաջ քան զիս էին , որ և առաւել մեծարեալ և պատուեալ եղեր յիմմէ մեծութ̃էս . արդ ցոյց զյօժարութ̃ե սէր քո՝ որ առ ա̃ծսն մեր և առ մեզ . և մատուցեալ առաջի ա̃մ ժողովրդեան քաղաքիդ՝

զօրհեա՛ նյ՟ · զի սոքա ամենեքեան տեսանելով զքեզ՝ մեծաւ յօժարութ՟բ կատարեսցեն զհրամանս մեր ։

Եւ մինչդեռ կամէր ս՟բն պ՟խնի առնել Թագաւորին , ոմն մի յաւուրց եկաց յիշխանացն՝ որում անուն էր Մաքսենտիոս կմ՟ Մաքսենտենէս , և ասէ · ո՛վ արքայ քաջ՝ ո՞չ իմացեր ծանեար զդաւաճանութի՟ւն ամպարշտ ստրատելատիդ , թէ որպէս ստեալ խաբեաց զմեծուի՟դ քո յաղագս բարեյաղթ ա՟ծոյն · քանզի յեռանդեան գիշերին ելանելով իմ յապարանից իմոց՝ տեսի աղքատ զոմն , զի գայր խնդալով , և ունէր 'ի ձեռին իւրում զոսկիակուռ գլուխ մեծի ա՟ծուհւոյն մերոյ արտեմիդեայ ։

Զայս իբրև լուա՛ւ Թագաւորն , յոյժ 'ի զարմացման եղեալ հիանայր , և ոչ հաւատայր ասացելոցն 'ի նմանէ ։ Ասէ ցս՟բն , թէ արդա՞ր են ասացեալքս այսոքիկ ։ Պատասխանի ետ ս՟բն , և ասէ · այո՛ ճշմարիտ և արդար են , ո՛չ ուրանամ · քանզի արդար արարի՝ զոր արարի · արդ եթէ ա՟ծք քո ինքեանց օգնել ոչ կարացին , քեզ զիա՞րդ կարասցեն օգնել ։ Յայնժամ այլագունեցան երեսք Թ՟գւորին 'ի բարկութ՟էն , և լցեալ ամօթով և ցասմամբ՝ ասէր ցծառայս իւր · վա՜յ ինձ , զի խաբեցայ իբրև զմանուկ մի տղայ , և ծաղր եղէ յաչս ամենեցուն · արդ զի՞նչ արարից կմ՟ զի՞նչ գործեցից՝ ո՛չ գիտեմ · զի ես այր Թագաւոր և իշխան գոլով այնքան զօրաց և ազգաց , հանդերձ բազմութ՟ք զօրուս խաբեալ եկի յոտս անօրինիս այս ․ և եղէ նախատինք գաւառիս և քաղաքիս՝ կորուսանելով զբարեյաղթ օծման այ՟ ։ Ասէ ցնա քաջն Թէոդորոս ․ ո՛վ անմիտդ և լցեալդ ամ՟ անօրէնութ՟ք յիմարութե՟ , զայդ ոչ ածէիր զմտաւ յառաջագոյն , եթէ ես քրիստոնեայ գոլով և ծառայ ք՟ի՝ զիա՞րդ խաբեցայց 'ի պատրողական և 'ի կորստական հրամանաց քոց ․ այլ զոր գործեցիդ՝ նուին յայտ արարի քեզ զտղայամտութիդ քո ․ զի և ցուցի քեզ զտկարութի ածոց քոց , և յամօթ արարի զամպարշտութի քո ․ որ անոտի և անցաւոր մեծութ՟ք հպարտացեալ ես , և ոչ ունիս յոյս և ակնկալութի անանց մեծութեն և մշտնջենաւոր կենացն ․ և ոչ ճանաչես զայն՝ որ ետ քեզ զառժամանակեայ մեծութիդ ․ այլ՝ նանրացեալ ես խաբէութ՟ բանսարկուին , և խաւարեալ 'ի լուսոյ փառաց միածնի որդւոյն այ՟ ․ և ամբարհաւաճեալ չարին ազդեցութ՟՝ ո՛չ գիտես զինչ խօսիս ։ Իսկ ես զամ՟ արարածոց զփառս զայսոսիկ՝ որք օտարացուցանեն յայ՟ , սնոտիս համարիմ , զի զյաւիտենական կեանս ժառանգեցից , զոր ակն ոչ ետես , և ունկն ոչ լուա՛ւ , և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ , զոր պատրաստեաց ած՟ սիրելեաց իւրոց ․ բայց ձեզ և ածոց ձերոց նիւթեալ պահի հուրն յաւիտենական , որ պատրաստեալն է սատանայի և զօրաց նր՟ ։

Թագաւորն ասէ ․ ո՛յ հպարտ և ամենաչար ամբարշտաւան Թէոդորէ , զիս թէ անարգես, Թերևս համբերերից · զի յաղագս անսալոյ իմոյ եկեսցես 'ի լաւութ՟ի · իսկ զսրծսն ընդէ՞ր անարգեցեր և կորուսեր ։ Որդի ես 'ք՟ն , և ասէ · այդ իսկ է ցուցումն անմտութեան քո , զի յետ տեսանելոյ զոչնչութ՟ի գի՛ւաձոյլ պատկերաց քոց՝ դարձեր յանդգնելով ա՟ծս անուանես զնոսա , որք են տարրեղէնք կոփեալք 'ի ձեռաց ճարտարաց , և գիւտք չարադև մտաց , անշունչք և անիմաստք իբրև զանբանս զձիս և զջորիս , զի ոչ գոյ 'ի նո՟ իմաստութ՟ի · այլ առաւել անմտագոյն դուք՝ որք պաշտէք զանուանեալ ա՟ծսդ ։ (4)

Յայնժամ Թագաւորն լցեալ սրտմտութ՟ե բարկութ՟ե՝ ասէ · յայսմ հետէ ոչ համբերեցից քեզ · 'ի չարաչար տանջանս մատնեմ զքեզ ։ Եւ հրամայեաց դահճացն մերկացուցանել զնա , և տարածել զձեռսն և զոտսն քառակուսի պրկմամբ · և դալար արջառաջլօք անխնայ հարկանել զթիկունսն և զլանջսն և զորովայն նո՟ ։ Եւ այնքան հարին զերանելին , մինչև անա՟ծ տանջիչքն տկարացեալ լինէին · և մարմին նո՟յն գզեալ լինէր 'ի չարաչար հարուածոյն , և արիւն յորժ հոսէր 'ի նմանէ ։ (5)

Դարձեալ հրամայէր բռնաւորն կապարեայ մրճօք հարկանել զպարանոց նո՟յն անխնայաբար ։ Եւ յետ այնր տանջանաց հրամայեաց, զի հանցեն 'ի կախաղան , և զա՟մ մնացեալ մարմին նո՟յ վկային քերեսցեն երկաթի եղնգամբք · և ապա հուր մատուցեալ՝ խանձողեսցեն զա՟մ վէրս մարմնոյն · և արարին զա՟մ ըստ հրամանի Թագաւորին ։ Իսկ առաքինի նահատակն առաւել քան զառաւել համբերէր զուարթութբ՟ անհնարին նեղութեանցն . և գոհանայր զայ՟ , զի ցանկութիւնք նր՟ կատարեցան ։ Եւ ոչ առ ոչինչ համարեալ զայնպիսի անըմբերելի տանջանսն՝ ասէր ցԹագաւորն . ո՛վ սպասաւոր և արբանեակ սատանայի և Թշնամի ամ՟ արդարութե՟ ո՞չ տեսանես՝ զի սպասաւորք քո տկարացեալ եղեն , և յանդգնութի՟ ամբարհաւաճութե՟ քո նկուն եղև , և բռնութի՟ քո յաղթեցաւ , և հայրն քո սատանայ յամօթ եղև . այլ ես հաստատեալ կամ յած՟ն իմ կենդանի , զի տր՟ է իմ օգնական և զօրավիգն . և որքան արտաքին մարդն իմ ապականի 'ի տանջանաց քոց , այնքան ներքին մարդս իմ նորոգի տբ՟ 'ի կեանսն յաւիտենից ։

Իսկ Թագաւորն դառնացեալ յանձն իւր՝ հրաման ետ զինուորացն , զի բարձցեն յաջաց իւրոց և տարցեն 'ի բանտ զերանելին . մինչև խորհեսցի վ՟ն նորա , թէ որո՛վ մահուամբ սպանցէ զնա ։ Եւ յետ աւուրց ինչ ետ հանել 'ի բանտէ և ածել առաջի իւր . և բազում բանիւք հարցափորձեալ՝ ոչինչ կարաց հաւանեցուցանել զերանելին ։

Տայ հրամայեաց , զի տարցին զնա 'ի տեղի երևելի , և հանցեն զնա 'ի խաչ , և նետաձիգ լինիցին 'ի նա ամ՟ բազմութի՟ զօրացն . և պէսպէս լկանօք չարչարեսցեն մահուչափ ։ Եւ նոցա առեալ տանէին զնա . իսկ վկայն ք՟սի մեծաւ ցնծութբ՟ երթայր զկնի զինուորացն . և եկեալ 'ի խաչն՝ կապեցին զձեռս և զոտս նորա , և հանեալ կապեցին զնա ը՟ խաչափայտն . կ՟մ ո՟պ այլք ընթեռնուն , պնդեցին զնա բևեռօք ը՟ ձեռս և ը՟ ոտս և ը՟ գլուխն . և բազմութ՟ի զօրացն կամ մանկանց զինուորելոց՝ եդեալ զնա իբրև 'ի նշաւակ նետաձգութեան՝ արձակէին 'ի նա զնետս իւրեանց , և առաւելապէս հարկանէին զերեսս և զաչս ն՟րն : Իսկ նահատակն ք՟սի յայնպիսի անհնարին աղէտս անտրտում ուրախութ՟բ համբերելով՝ փառս վերառաքէր ա՟յ . և առ ոչինչ գրէր զա՟մ վիշտս նեղութ՟եցն առ սէրն ք՟սի :

Ապա մատուցեալ յետ այսորիկ անօրինացն՝ հատին զառնացի անդամս ն՟ր . և բազմութ՟ին՝ որ շուրջ կացեալ էին , լային ամենեքեան կարեկցաբար : Անդ էր և աբգար սպասաւոր և նոտար ն՟րն՝ որ զայսոսիկ պատմէ . և 'ի վ՟ր բերէ . Ես աբգարոս՝ ծառայ և դպիր գոլով ն՟րն , որ հրաման առեալ էի մի ը՟ միոջէ գրել զա՟մ , իբրև տեսի զայնչափ նեղութ՟իւն , 'ի բաց ընկեցի զքարտէսն 'ի ձեռաց իմոց . և երթեալ անկայ առ ոտս ն՟ր լալով դառնապէս : Եւ տեսեալ ն՟րն զարտասուսն իմ՝ ասէ ցիս նուաղ և տկար ձայնիւ . ո՛վ աբգարոս մի՛ տրտմիր , և մի՛ հեղգար 'ի գործոյդ քումմէ . այլ զոր սկսար՝ կատարեա՛ . և անսա՛ սակաւիկ մի , զի տեսանելով քո զվախճան կատարածի իմոյ՝ գրեսցես : Եւ զայս իբրև ասաց , համբարձ զաչս իւր յերկինս , և ասէ . Հա՛յր տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի՝

ա՟ծ իմ, որ անճառելի բարերարութ՟ քո մատակարարես զա՟մ, որ և 'ի ձեռն միածնի որդւոյ քո և ճշմարիտ ս՟բ հոգւոյդ պարգևեցեր ինձ համբերութ՟ի . զի դու տ՟ր յառաջագոյն խոստացար ինձ, և ասացեր, թէ ոչ թողից զքեզ, այլ յա՟մ ժամ եղէց ը՟ քեզ, և փրկեցից զքեզ : Եւ արդ ը՟է՞ր թողեր զիս ա՟ծ իմ, և հեռի արարեր զգթութ՟ի քո յինէն . քանզի վայրենաբարոյ գազանք գիշատեցին զմարմինս իմ . վ՟ն սիրոյ անուանդ քո բիբք աչաց իմոց արտաքս ելին յինէն . մարմինք իմ հալեցան 'ի հրոյ, և մատունք իմ փշրեցան . և երեսք իմ այլագունեալ՝ արտաքոյ եղեն մարդկային բնութ՟ես . և անձն իմ սասանե՟լ դողացաւ յերկիւղէ չարչարանաց խաչիս : Եւ արդ՝ տ՟ր իմ և ա՟ծ, վ՟ն քո համբերեմ այսմ ա՟մի, տարեալ սրոյ և հրոյ և բազում նեղութ՟եց . վ՟յ աղաչեմ զքեզ . ընկա՛լ զհոգիս իմ վաղվաղակի, և հանգո՛ ը՟ հաճոյից քոց . զի դու կարող ես յա՟մի :

Եւ զայս իբրև ասաց, լռեաց . քանզի ներգևեալ էին ա՟մ անդամք մարմնոյ վկային . և յօշեալ տրորեալ էր գոգ որովայնի նորա 'ի քերանացն և յողորածեծն առնելոյն . Յետ այսորիկ կարծեցեալ անօրէն և ամպարիշտ բռնաւորին լիկիանեայ՝ թէ մեռաւ ը՟ն, հրամայեաց պահապանս կացուցանել 'ի տեղւոջն, զի զօրն և զգիշերն ողջոյն 'ի վերայ խաչին ագցի մարմինն, և մի անկցի 'ի ձեռս քրիստոնէից : Իսկ յառաջին պահու գիշերոյն առաքեցաւ հրեշտակ յա՟յ . և իջուցեալ զնահատակն 'ի խաչէն՝ առողջացոյց ամենեքին զմարմին նր̅ ․ և ասէ ․ ուրախ լեր և զօրացի՛ր , զի տր̅ ը̅ քեզ էր և է և եղիցի յաւիտեան ․ և ը̅է՞ր ասացեր , թէ հեռացար յինէն ․ այն՝ որ զօրացոյցն զքեզ յա̅մի ․ և արդ կատարեա՛ զընթացս ճգնութե̅ քո ․ և դու երթաս առ յս̅ փրկիչն ․ և ընկալցիս զանապական պսակն յարքայութե̅ արդարոց ․ և զայս ասացեալ՝ վերացաւ յերկինս ։ Իսկ ս̅րբն Թէոդորոս տեսեալ զմարմին իւր ամենեքին բժշկեալ 'ի վերայ անտի՝ ամբարձ զձեռն իւր յերկինս , գոհանայր զա̅նէ , և ասէր ․ բարձր առնեմ զքեզ ա̅ծ իմ և թագաւոր իմ , և օրհնեմ զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ․ և 'ի բազում ժամս աղօթեալ՝ առաքեաց զամէնն ։

Եւ ը̅ այգն ը̅ առաւօտն կոչեաց թագաւորն երկուս ոմանս 'ի պատուաւորաց , որոց անուանք էին անտիոքոս և պատրիկիոս , և ասէ ցն̅ս ․ երթա՛յք հանդերձ զօրականօքդ՝ իջուցէ՛ք 'ի խաչէ անտի զչարամեռ մարմին խաբողին այնորիկ , և բերջիք առաջի իմ ․ զի հրամայեցից դնել 'ի կապարեայ տապանի և ընկենուլ 'ի խորս ծովուն ․ զի մի՛ յափշտակել̅ քրիստոնէիցն՝ առել̅ պատուեսցեն ը̅ սովորութե̅ իւրեանց ։ Գնացին զօրագլուխքն ը̅ հրամանի արքային ․ և մինչ դեռ 'ի բացեայ էին , տեսին զխաչն ունայն 'ի մարմնոյ սր̅յ վկային , և հիացեալ զարմանային ։ Յայնժամ ասէ անտիոքոս ցպատրիկիոս ․ արդեօք ճշմարիտ է՝ զոր ասեն քրիստոնեայք , եթէ խաչելեալն ք՟ս յետ երից աւուրց յարեաւ ՚ի մեռելոց · քանզի և այժմ ստուգեալ տեսանեմք զն՟յ բանն ՚ի վերայ պաշտօնէի խաչեցելոյն ։

Յայն բան ընթացաւ պատրիկիոս առ խաչն · և տեսանէր զս՟բ վկայն Թէոդորոս նստեալ մերձ առ խաչին ամենևին առողջ մարմնով և զու՛արթ դիմօք · և զի պատմէր ևս բազմութե՟ ամբոխին՝ որ ժողովե՟լ կային ՚ի տեղին, զմեծամեծ սքանչելեացն ա՟յ՝ որ եղեն առ նմա ։ Յայնժամ աղաղակե՟ն երկոցունց իշխանացն մեծաւ ձայնիւ՛ ասեն · մե՛ծ է ա՟ծն քրիստոնէից, և չիք այլ ոք ա՟ծ բաց ՚ի նմանէ ։ Եւ երթեալ անկանէին առ ոտս ս՟բյն հանդերձ զինուորօքն, որք է՟ն նոսա, Թու՛ով ութսուն և երկու · և ասէին՝ Թէ և մեք քրիստոնեայք եմք, և ք՟ի ծառայք · աղաչեմք զքեզ, ընկա՛լ զմեզ զտգիտացեալքս մինչև ցարդ ՚ի ճանապարհէն ճշմարտութե՟ · և աղաչեա՛ վասն մեր զարարիչն ա՟ծ, զի և զմեզ արժանի արասցէ ողորմութե՟ շնորհաց իւրոց ։

Զայս լու՛ե՟լ Թագաւորին՝ բարկացաւ յոյժ · և հրամայեաց բդեշխին՝ որում անուն էր կեստոփն, զի առցէ ՚ի զօրականացն անձինս երեքհարիւր, որք երթե՟լ կոտորեսցեն զն՟ս ։ Եւ իբրև գնացին, է՟ն աջողելոյն ա՟յ տեսե՟լ զսքանչելիսն ա՟յ՝ հաւատացին և ն՟ք ՚ի ք՟ս ։ Եւ եղև ժողով բազմութե՟ ամբոխին, որք աղաղակէին մեծաձայն բարբառով, և ասէին · մե՛ծ է ա՟ծն քրիստոնէից, այն՝ որ այս-

պիսլխաի սքանչելիս արար . նա միայն է ած . արդ եկայք քարկոծ արասցուք զանօրէն լիկիանէս .. զի Թագաւոր մեր ած է՝ զոր Թէոդորոս քարոզեաց ։ Եւ 'ի լինել այսպիսի խառնակութե և խռովութե ը նոր հաւատացեալս և ը հեթանոսս 'ի տեղւոջ անդ արտաքոյ քաղաքին , յաւելան և այլք 'ի քաղաքացւոց յերկուց կողմանց յուզմամբ անկարգութե . յորմէ և արիւնհեղութի լինէր 'ի մէջ խառնիճաղանջ ռամկին ։

Ընդ մի ոմն յանօրինացն՝ որում անուն էր լէանդրոս , հանեալ զսուսեր իւր՝ ընթացաւ 'ի վե սբյն Թէոդորոսի , զի սպանցէ զնա ։ Եւ տեսեալ զայն կեսառոնիայ բդեշխի՝ ձգեաց զձեռն իւր , և կորզեաց զսբն 'ի նմանէ . և զլէանդրոս սպան ։ Իսկ այլ ոմն՝ որում անուն էր մերպաս (ըստ ոմանց՝ 'ի հոնաց ազգէ) , ելեալ ը մէջ ամբոխին՝ յարձակեցաւ 'ի վե բդեշխին , և հարեալ սրով սպան զնա (6) ։ Իբրև ետես երանելին Թէոդորոս զբազմութեն խռովութե , մտեալ 'ի մէջ նց՝ աղաչանօք խաղաղացուցանէր զամբոխն ը իւրում իմաստութե . յայտ արարեալ՝ թէ չէ արժան որոց զհետ երթան քի , խռովութի և ապըստամբութի սիրել , և ոչ նուաճել զոք սրով , այլ՝ սիրով հոգւոյն և հեզութբ ։ Յայնժամ առեալ բազմութե հաւատացելոց զսբն՝ դարձան 'ի քաղաքն բազում ուրախութբ ։

Եւ մինչդեռ անցանէին ը մէջ քաղաքին , և մերձ եղեն 'ի դուրս բանտին , ուր էին արգելեալ կալանաւորքն ամ 'ի հրամանէ

լիընկղմանեսցի՝ իբրեւ ձայնակիցք Թէոդորոսի, աղաղակեցին ամենեքին 'ի բանտէն, եւ ասեն. ողորմեա՛ մեզ ծառայ Ա՟յ բարձրելոյ ։ Իսկ ժողովուրդն իբրեւ լուա՛ն, ասեն ցերանելին. Հրամայեա՛ մեզ, զի խորտակեսցուք վաղվաղակի զդուրս բանտին, եւ ազատեսցուք զարգելեալսն՝ որ 'ի նմին։ Իսկ ս՟բն արգել զն՟ս 'ի խորհրդոցն. եւ ինքն մերձ եղեւ առ դուրսն՝ աղօթեաց առ Ա՟ծ, եւ կնքեաց նշանաւ խաչի՛ն. եւ ահա ինքնին բացեալ եղեւ դուռն, եւ կապանք ն՟ց լուծան. եւ ելեալ արտաքս՝ անկանէին առ ոտս ն՟ր. եւ գոհանային զԱ՟յ եւ զս՟բյն ։ Իսկ նա ասէ ցն՟ս. երթա՛յք խաղաղութ՟բ յիւրաքանչիւր տեղիս. եւ մի՛ ինչ վ՟ս իմ խռովութ՟ի առնիջիք ։ Որոց Ա՟ծ եւ այլ բազում սքանչելիս 'ի ձեռն ս՟բյն յաւուր յայնմիկ. զի հի՛անդք եւ ախտաժէտք եւ այսահարք բժշկէին աղօթիւք նորա ։

Իսկ տեսեալ անօրինին ընկղմանէի, զի բազմութի՟ք հելլենացւոց ուրացեալ 'ի բաց կացին յկռոցն պաշտամանէն եւ հաւատացին 'ի ք՟ս, յանհնարս եմուտ, զի ոչ կարէր սակաւաձեռն գնդաւ նուա՛ճել զնոսա. այլ առաքեաց զերեւելի զօրականս 'ի զինուո՛րացն, զի երթիցեն գաղտ յամբոխէն 'ի տուն բանտին, եւ հատցեն զգլուխ ս՟բյն. որք եկեալ վաղվաղակի կատարէին զհրամանս ն՟ր՝ հատանելով սուսերաւ զգլուխ երանելւոյն ։ Իսկ այսպէս կատարեցաւ յաղթօղ եւ մեծ նահատակն ք՟սի ս՟բն Թէոդորոս ստրատելատ՝

լատ՝ յամսեանն օգոստոսի, որ օր ի՟ղ էր ը՟ Ճաւընտրին, յամի տ՟ն իբր 315. կ՟մ 320։ Արդ յետ կատարման ս՟բյն, ըստ հրամանի նորին՝ ո՟պ յառաջագոյն պատուիրեալ էր Աբգարու ծառայի իւրոյ, առեալ զպատուական մարմինն պատեցին ս՟բ կտաւօք և անուշահոտ խնկօք, և եդեալ 'ի տապանակի՝ տարեալ հանգուցին 'ի ժառանգութ՟ի ն՟ր հայրենի 'ի գեղջն Եւխայիտայ ։ Եւ զի մեկնեալ էր փութով Լիկինոս 'ի կողմանց անտի առ ահի ժողովրդեան, գնացին զկնի նշխարաց ս՟բյն Թէոդորոսի բազմութ՟ի ժողովոյն առակլիայ քաղաքին՝ մոմեղինօք լուցելովք և խնկօք անուշութ՟ե և երգօք հոգևորօք ը՟ սովորութ՟ե քրիստոնէից. և եդին յիւրում հանգստարանին՝ առընթեր քեռւոյն իւրոյ և անուանակցի՝ ս՟բյն Թէոդորոսի զինաւորի ։ Եւ բազում սքանչելիս կատարեաց ա՟ծ 'ի վերայ գերեզմանի ս՟բյն, որոց միանգամ հաւատով մերձենային 'ի նա. և յօր յիշատակի վկային լինէր բազմութ՟ի ժողովոց յա՟մ ազգաց, որք մեծաւ պատուով և ընծայիւք կատարէին զյիշատակ ն՟ր ։ (7)

Յայս վայր հին վկայաբանն Ճաւընտրաց՝ իբրև 'ի բանից նախկին ականատես և հաւատարիմ գրչի, Աբգարու ասեմ դպրի ս՟բյն Թէոդորոսի. որ և զգրուածն իւր եդ 'ի պահեստի յեկեղեցւոջ՝ որ շինեցաւ յետ սակաւուց առ Կոստանդիանոսիւ յանուն ս՟բյն յԵւխայիտա. ը՟ որում նշանակի 'ի ժամագիրս յունաց ։ Եւ ո՟չ 'ի մ՟ր բերեն այլ ա՟մ վկայագիրք,

գիրք, ն՟րն Թէոդորոս ստրատելատ՝ զորօրինակ 'ի կենդանութեան, նոյնպէս և յետ մահուան փայլեաց ազգի ազգի սքանչելեօք. և առաւելագոյն երագահաս օգնական է 'ի պատերազմի՝ որոց կարդան զնա յօգնականութիւն ը՟դէմ թշնամեաց հաւատոյ: Բայց ը՟ որում ասացաք 'ի վարս Թէոդորոսի զինուորի, որում հետև երկաքին համանուն ն՟ք տոհմակիցք և համանմանք առաքինինահատակութ՟բ՝ 'ի միում տեղւոջ Թաղեցան, ք՟ 'ի գիւղն Եւխայիտայ, անմարթ է որոշել՝ թէ զո՞ յերկուց առաւել յօգնութ՟ն կարդային հաւատացեալք, ն՟ Թէոդորոս կամ ն՟ Թորոս կոչմամբ. զի անխտիր զերկոսեանն իսկ Թուէին իմանալ միով անուամբ: Սոյնպէս միօրինակ անկ է երկոցունց յաղթութ՟ն այն չմշկիկ կայսեր ը՟դէմ ռուսաց, որ յաջողեցաւ բարեխօսութ՟բ ն՟րյն Թէոդորոսի. որոյ վ՟ն և կայսրն նորոգեալ զԵւխայիտա՝ կոչեաց Թէոդորուպօլիս, շինեալ անդ և նոր տաճար յանուն ն՟րյն:

Սոյն սա յովհաննէս չմշկիկ հայկազն ինքնակալ յունաց 'ի կոստանդինուպօլիս, ըստ աւանդելոյ գրչաց պատմութ՟ն բիւզանդիոյ՝ եղև կա՛մ հեղինակ և կ՟մ նորոգիչ գեղեցիկ սովորութ՟ն կրելոյ քրիստոնէից 'ի դրօշակս և 'ի խաչվառս զպատկեր ս՟ր զօրավարաց և վկայից բարեյաղթ կամ քաջայաղթ անուանելոց. զորս 'ի Թափոր հանէին յեկեղեցւոջ 'ի ժամ պատարագի, և 'ի պաշտաման կիրակամտի և երեկոյի կիրակէին:

Բռա

Առաջին խաչվառն՝ մեծ զօրավար ձայնէր , էր պատկեր սբ՟յն միքայէլի հրեշտակապետի . երկրորդն էր սբ՟ց հայրապետաց՝ հոգևոր զօրագլխաց , ութոտանի՝ յութեակ վերջաւորս . երրորդն էր ամենայաղթ նշան սբ՟յ խաչի , յորոյ 'ի չորեսին թևս կային պատկերք չորեցունց քաջ նահատակաց , սբ՟ դեմետրի , պրոկոպիոսի , թէոդորոսի ստրատելատի , և թէոդորոսի զինաւորի . չորր՟դն էր սբ՟ գէորգ հեծե՟լ յերիվար . հինգե՟րդն՝ վիշապանկար . և վեցերորդն՝ պատկեր կայսեր ձիաւոր . և իւրաքանչիւր սք՟ զոյգ զոյգ . սբ՟ վեց զոյգք դրօշակաց , կամ երկոտասան խաչվառք :

'Ի կարգի բազմապատիկ նշանագործութե՟ց սբ՟յն թէոդորոսի առաջնոյ կմ՟ երկրորդի անխտիր՝ երևելի է հրաշքն այն , զոր գրէ սբ՟ն յովհան դամասկացի 'ի Ճառն գ՟ . յաղագս պատկերաց , բանի՛ սբ՟յն անաստասայ սինէացւոյ . որ ունի այսպէս . * Զորս մղոնաւ հեռի 'ի դամասկոսէ կայ տեղի կոչեցե՟լ կարսատաս , ուր է տաճար սբ՟յն թէոդորոսի : Յայս տաճար մտե՟լ սարակինոսաց՝ պղծեցին զայն ամ՟ գործովք անարժանութե՟ . . . և 'ի միում յաւուրց՝ յորժամ բազմութի՟ նստէին անդ և զբանիւք անկանէին , մի ոմ՟ն 'ի նոցանէ նետաձիգ եղև 'ի պատկեր սբ՟յն թէոդորոսի , և խոցեաց զաջոյ ուս նր՟ . և առ ժամայն բղխեաց արիւն , և հոսեաց մինչև 'ի ստորին սպառուածս պատկերին . և զայս ակն յայտնի տեսին ամենեքին՝

քին՝ որ անդն կայէին, զնետսն ասեմ մխեալ յուս ս՟րբյն, և զարիւնն ՚ի դուրս բղխեալ. այլ ոչինչ զգաստացան ՚ի տեսիլ ահագին հրաշիցն. ոչ որ նետաձիգն եղև՝ եկն ՚ի զեղջ, և ոչ այլ ոք ՚ի նոցանէ շարժեցաւ ՚ի սրտէ. ոչ ՚ի տաճարէն մեկնեցան, և ոչ ՚ի պղծելոյ զայն դադարեցին. և սակայն ՚ի վախճանի յանձինս ընկալան զպատիժ պատուհասին։ Քանզի քսան տունք էին՝ որք ՚ի տաճարի անդ օթէին ընտանեօք. և ահա ՚ի սակաւ աւուրս ժանտ ախտիւ՛ մահու ջնջեալ՝ բնաջինջ եղեն առհասարակ. և այն զի ոչ ոք այլ ՚ի նոցանէ յեղելոցն ՚ի տեղւոն յայնոսիկ մեռաւ յայն աւուրս՝ բաց յօթագայելոցն ՚ի տաճարի անդ։ Եւ այս պատկեր նետահար (ասէ ս՟րբն անաստասիոս՝ որ էր ՚ի վախճան վեցերորդ դարու) կայ մնայ տակաւին, և ունի զխոցուա՛ծ նետին, և զհետս արեան։ Եւ յոլովք իսկ ՚ի նոցանէ՝ որք տեսօղ եղեն իրացն, գոլով ՚ի ժամանակի անդ՝ յորում այս հրաշք գործեցան, տակաւին կենդանի են։ Եւ ես գլխովին տեսօղ եղէ նորին պատկերի. և զոր տեսի՝ ՚ի գրի դրոշմեցի առ յիշատակէ ||։

Իսկ պատուա՛կան մարմին ս՟րբյն Թէոդորոսի ստրատելատի՝ զկնի ժամանակաց փոխադրեցաւ յարևմուտս ՚ի պանծալին վենետիկ քաղաք իտալիոյ. ուր և ցայժմ տեսանեմք հանգուցեալ յեկեղեցին՝ որ կոչի ս՟բ փրկիչ։ Ստոյգ է և այն՝ զի յառաջ ժամանակաւ առաջին պաշտպան վենետիկեան ազնուաոճապետութե՟ն էր ս՟բն Թէոդորոս , և յանուն ն՟ր շինեցաւ ՚ի Ներսիսէ պատրկէ Հայկազնոյ ՚ի մեծ զօրավարէ յունաց մայր եկեղեցին , որ յետոյ եղև հոյակապ տաճար , և կոչեցաւ ս՟բ Մարկոս՝ յորժամ բերաւ անդր մարմին ս՟բյ աւետարանչին , և ծանուցաւ գլխաւոր պաշտպան քաղաքին և տ՟րունէ ։ Այլ ՚ի մեծի հրապարակի կանգնեցին ՚ի վ՟ր երկուց մեծամեծ կճեայ սեանց զարձան յիշատակի երկոցունց պաշտպան ս՟բյս ․ յորոց մին է առիւծ թևաւոր՝ որ է նշանակ ս՟բյն Մարկոսի ․ և միւսն՝ զօրական վահանաւոր ենիզակաւոր , նշանակ ս՟բյն Թէոդորոսի ․ Թէպէտ և ՚ի վ՟ր վիշապի կոխեալ , զի զսպանումն վիշապի ՚ի ս՟բյն Թէոդորոսէ տիւռոնէ՝ աբեմոնեայք շփոթութ՟ք ընծայեն ս՟բյն Թէոդորոսի ստրատելատի ․ ո՛չ և վ՟ր մարմնոյն՝ որ ՚ի Վենետիկ , են որ առաջնոյ , և են որ երկրորդին Թէոդորոսի լինել ասեն ․ բայց զօրացեալ է կարծիքն՝ որ վ՟ր ստրատելատի ։ (8)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Զոր օրինակ տեսաք ՚ի վկայաբանութեան Թէոդորոսի առաջնոյ , զի չիք ստուգագոյն և անստգիւտ քան զօրինակն մեր՝ որ ՚ի Ճառընտիրս , նոյնպէս և առաջինկայս վկայաբանութե՟ն ստրատելատի ը՟ն նշանակեալ Ճառընտրի մերում՝ է նախապատիւ քան զայլ օրինակաց եղելոց առ յոյնս և առ լատինս ։ Զի Թէպէտև համօրէն վկայագիրք սկզբնաբար առեալ իցեն ՚ի միոյ աղբերէ՝ ց՟ յԱբգարէ ակնատես դրչէ , որ սպասա-

ւորն էր և դպիր սբ̅յն Թէոդորոսի երկրորդի, բայց յայտ է անաչառ տեսութ̅բ 'ի համեմատութ̅է բանիցն ամենեցուն, զի ոչ ոք այնչափ հաւատարմութ̅բ երևի պահեալ զբանս աբգարու, ո̅պ ճառընտիրն. վ̅յ և մեք զնոյն կալաք մեզ առաջնորդ. թող զներբողական յառաջաբանութ̅ին, որ սկսանի այսպէս. * Զանքնին և
,, զզարմանալի երկնաձիր 'պարգևսն մեծահրաշ սքանչելեացն
,, արարչին առ դասս սբ̅ց վկայիցն, և զներգործութ̅ին
,, համբերատար հանդիսիցն, և զանազան
,, առաքինութեցն պատմութ̅իւն, ո՛չ է հնար ասել համօրէն
,, բանակացս (կամ թերևս բանականացս) . . .
,, Արդ՝ այսուհետև զյիշատակ գերապայծառ վկային
,, քս̅ի սկիզբն արասցուք պատմել՝ զսբ̅յն Թէոդորոսի.
,, թէպէտև ո՛չ եմք բաւական զա̅մ քաջութ̅ի արիութ̅են
,, պատմել, սակայն խուն մի 'ի բազմաց ճառեսցուք.
,, թէ ո՞վ ոք էր կա̅ ուստի՞, կա̅ որպէս սկիզբն եղև և
,, կատարած վկայութ̅ե նր̅. և զժամանակս հալածանաց
,, նորա պատմեսցուք: Եւ զի ո՛չ էր սա տիւրոնն
,, Թէոդորոս, որոյ յիշատակն կատարի յառաջին շաբաթուն
,, քառասնորդաց պահոցն, այլ՝ սա քեռորդի
,, գոլով նր̅՝ պատուեալ եղև 'ի թագաւորացն ստրատելական
,, իշխանութ̅բ. զի նա վկայեաց առ մաքսիմիանոսիւ
,, թագաւորաւ 'ի յամասիայ քաղաքի 'ի կապադովկացւոց
,, գաւառին, (իսկ սա առ լիկինէիւ
'ի հերակլիա պոնտացւոց), ո՛չ հեռի 'ի միմեանց գոլով
,, ժամանակաւ և ազգակցութ̅բ: Արդ 'ի ժամանակս
,, անօրէն և ամպարիշտ թգ̅րին լիկինէի ||, ևն:

Իսկ որ առ այլս գտանին վկայաբանութ̅իք սբ̅յս՝ յերիս օրինակս գլխաւորս վերածին ըստ բոլլանդայ. մի մետափրաստեսին անուանեալ, որ առ լիպոմանոսի և սուրիոսի. երկրորդ՝ անանուն լատին հեղինակի, որ հնագոյն թարգմանութ̅ի է 'ի յունէ, և իբր լաւագոյն, ը̅ իմիք նման առաջնոյն և ը̅ իմիք աննման. և երր̅դն. բոնիտոսի լատին հեղինակի՝ կիսասարկաւագի եկեղեցւոյն նէապօլսոյ իբր 'ի ժբ̅ դարու. որ ը̅լայնէ ևեթ զբանս առաջնոյ՝ ո՛չ այնչափ գովելի զարդաբանութ̅բ, չասացից թէ անպիտան ճարտասանութ̅բ: Եւ յերեսին իսկ գոյացութ̅ի պատմութ̅ե է նոյն, և միաձայն ընդ մեզ, բաց 'ի միոյ յայտնի վրիպակէ, զի զպատմուն վիշապին սպանելոյ 'ի տիւրոնէ՝ ընծայեն ստրատելատին. զոր լիով ուղղագրեցաք 'ի ծանօթութ̅իս վարուց առաջնոյն Թէոդորոսի. վ̅յ չէ հարկ աստէն երկրորդեղ զայլ բան ։ Զի՛ հարկ ցուցանել և զմիաձայնութիւն Հ· և Յ· ըստ մեզ· զի զնոյն պատմութիւն ճառընտրին համառօտեն երկոքեանն ։ Յոյնք 'ի փետր· 8· պատմեն ըզնահատակութիւն սրբոյն· և 'ի յունիսի 8· զփոխադրութիւն մարմնոյն 'ի հերակլեոյ յեւքայիտա, կրկնելով և զպատմութիւն նահատակութեան ։

Նիկեփորոս կալլիստոս, գիրք· Է· գլ· 44· յետ ուղիղ համառօտելոյ զվկայաբանութիւն ճառընտրին, բարւոք առնէ ծանուցանել՝ թէ այլ է և սուրբ թէոդորոս տիւրոն հրով նահատակեալ յամասիա առ մաքսիմիանոսիւ· և դարձեալ այլ որ թէոդորոս խաչեալ 'ի պերգէ պամփիւլեայ· զոր տօնեն յոյնք յապրիլի 19· և լատինք 'ի սեպտ· 20 ։ Դու յաւել, թէ այլ է և որ թէոդորոս կեսարացին՝ փառաւոր վկայ հայոց· որոյ պատմութիւն գրի 'ի ճառընտ· Բ· երես· պկե· այլ զայսմանէ 'ի կարգս յիշատակաց ։

(2) Զայս նախընթաց վարանս թագաւորին, և զյետագայ հարկաւոր հնարս երթալոյ առ նա պատճառանօք պատերազմի՝ զանց առնեն լատին վկայագիրք ընդ մետափրաստեսի· որով փոքր մի դժուարանայ չու լիկինեայ 'ի հերակլեա անպատճառ ։ Այլ զի մի՛ զայսպիսի հանգամանս բանից ածից միշտ 'ի բաղդատութիւն, զայս միայն ասեմ, բազմօք կարգաւորեալ է ընթացք վկայաբանութեան ըստ ճառընտրաց՝ քան ըստ այլոց ։

(3) Անանուն գրիչն լատին դնէ աստ զայս պատուհաս· * հեծաւ 'ի դարդանոս երիվար իւր մեծաշուք, որով ,, և զվիշապն սպան ||· զնոյն բազմօք նկարագրէ և բոնիասս երկարաբանն· որ է չփոխել զանուն թէոդորոսի զինուորի ըստ ստրատելատի· զի երկոքին ևս յոյնաբար՝ զօրավար կոչին ։

(4) Մետափրաստեան պատուհաս է՝ և զոր յարմարեն աստ այլք 'ի բերանոյ սրբոյն ստուգաբանել զանուն իւր՝ աստուածպարգև, կամ պարգև աստուծոյ· և զլիկիանոսին՝ հողմավար կամ հոսիչ· ոմն և ծին թրակեոյ յարմարել զբառդ անթռաքս, որ է կայծակն կամ հրատ· ևս և ասել, թէ դու պաշտես զսերապիս չաստուածն, և ես զ'ի վերայ սերոբէիցն· Աստուած ։

(5) Թւոյ հարուածոց ոչ նշանակի 'ի Ճ·, եթէ չիցէ անհոգութիւն գրչի 'ի բաց անկեալ· ուր 'ի Հ· ասի, հարին զլանջսն և զթիկունսն համարով ՃՃ· և զորովայնն Ծ ։ 'ի Յ· Ժմ· առաջինն դնի 700· և երկրորդն՝ 50 ։ Իսկ անանուն լտ· զառաջինն ասէ 600· և զերկրորդն՝ 50·

այլ առ մետափր. փխնկ գրելոյ 50. եդեալ է 500 :

(6) Զկեսարոն բդեշխ զայսօրինակ մեռեալ 'ի պատճառս պաշտպան կալոյ սբյն Թէոդորոսի՝ բռնիդոս ասէ վկայ եղեալ քնի. և բոլլանդ. իսկ ոչ ըդէմ դառնայ : Իսկ 'ի Յ. Բս. և Ժմ. ասի, թէ երկու զօրագլուխք անտիոքոս և պատրիկիոս, 83 կմ 48 արամբք, նահատակեալ իցեն. զնոյն երկրորդէ և կանիխիոս. ուր բարւոք ասէ բոլլանդ., թէ չիք այդմ նշանակ առ վկայագիրս. կարէր ևս ասել՝ թէ ըդէմ ելանէ պատմութեն, զի կեսարոն՝ որ եկն 'ի կատարել զնա, ինքն ևս հաւատաց 'ի քս. ապա ուրեմն ինչ ոչ վնասեաց նմ :

(7) Բացայայտ գրի 'ի Ճ. կատարումն սբյն 'ի ԺԲ օգոստոսի. և յետ սակաւուց երևի լինել փոխադրութիւն մարմնոյն յեւքայիտ. ուր մետափրաստէս դնէ զկատարումն 'ի փետր. 8. և զփոխադրութեն 'ի յունիսի. 8. թող զի բռնիդոս դնէ զկատարումն 'ի փետր. 7. և անանուն պատմիչն 'ի նոյեմբերի 9. * Թերևս (ասէ բոլլանդ.) օրինակագիր ոք մուծեալ իցէ զայլայլութի 'ի ,, ձեռագիրն, գիտելով զի տօն սբյն Թէոդորոսի վկայի ,, անկանի (Ճ լատ'') յիններորդ օր նոյեմբերի. բայց ,, այն է տիրոնին, և ոչ ստրատելատն ||: Կարօղ էաք և մեք ասել, թէ որովհետև յայսպիսի շփոթութեց մտեալ է և այն շփոթութի կարծեաց՝ որով զանցս վեշապին գրեն 'ի վերայ ստրատելատին, դուցէ և ամիսն փետրվարի՝ և օր շաբաթուն, որ առաւել անկ է տիրոնին կատարմանն, փոխաբերեալ է 'ի ստրատելատն : Այլ բոլլանդ. յետ ենթադրելոյ զկատարումն ստրատելատի 'ի փետր. 7. յանձն առնու և զօրն լինել շաբաթ՝ Ճ մետափրաստեսի. և Ճ այնմ չափեալ զմիջոց Թգրութեն լիկինոսի, որ նստաւ յամի 308 մինչև 'ի 324. ասէ՝ թէ փետրվարի 7. դիպաւ յօր շաբաթու յամի 313, և 319. և զերկրորդս զայս առդնէ լինել Ժմկ նահատակութե ստրատելատին. զոր բարոնիոս դնէ յամի 316. և այլք այլազգ. այլ այսպիսի մակաբերութք են 'ի կամս իւրաքանչիւր աղաստան :

(8) Փոխադրութե մարմնոյ սբյն Թէոդորոսի 'ի վենետիկ՝ ասի լինել 'ի ԺԲ, կմ 'ի ԺԳ դարու, յաւուրս յովհաննու կայսեր կալոժան պերփիռուժէն կոչեցելոյ. կմ որդւոյ նր կիոմանուէլ կայսեր, որպս թէ 'ի քիոյ կղզւոյն բերեալ Ճ ոմանց, և Ճ ոմանց՝ 'ի մեսեմբրիայ քաղաքէ ստորին միւսիոյ : Իսկ վն շինութե տաճարին որ 'ի վենետիկ՝ միաբանին պատմիչք ասել ընդ բեռնար-

դի.

դինոսի յուստինեայ 'ի Ղ̄ գիրս վենետիկեան անցից, Թէ
* կամեցեալ ներսեսի (պատրիկի 'ի վեցերորդ դարու)
„ կատարել զուխտ իւր՝ որ առ ած, շինէ յաւարէ պա-
„ տերազմին զվկայարանս 'ի հռովմ և 'ի հռաւեննա․ և
„ ոչ մոռացեալ նաև զուխտ իւր առ վենետիկեցիս, փոյթ
„ տանի կառուցանել և անդ երկուս վկայարանս 'ի տե-
„ ղին կոչեցեալ ռիճալդօ (ք՛ բարձր կմ՛ խորին առու,
որ և ջրանցք ծովու) 'ի յիշատակ անցից իւրոց Է̄ այն․
„ զմին յանուն Թէոդորոսի վկայի, անդ՝ ուր է այժմ
„ եկեղեցի սրբոյն մարկոսի, այն՝ որ զառ 'ի ներքսէ շէ-
„ նեալ տաճարն Թէոդորոսի 'ի մէջ իւր փակէ այժմ
„ ը̄արձակ շինուածով՝ յետ փոխադրութե̄ մարմնոյ երա-
„ նելի աւետարանչին 'ի վենետիկ․ և միւս ևս յանուն
„ մինասայ և գեմինիանոսի ||։ Զերկրորդս զայս՝ որ էր
հանդէպ սրբոյն մարկոսի, բարձին 'ի հիմանց յաւուրս
յայսոսիկ, և արարին այլ շինուած հանդէպ երկուց
կողմանց մեծի հրապարակին ։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սբ̃յն Թիւրսոսի , եւ որոց ը̃ նմա ։

Տ. Յ. դեկտ. 14 ։ Լ. յունվար. 28 ։ Բոլլանդ. յունվ. 'ի բ̅ հատ. յուն. եջ. 808—832 ։ Մետափր. առ սուր. հատ. զ̅. 1000—1016 ։ (1)

ԲԱԶՄԱՉԱՐՉԱՐ եւ բազմահանդէս վկայն ք̃ի Թիւրսոս էր 'ի բիւթանիոյ ասիացւոց , 'ի կեսարիա անուն քաղաքէ պրոպոնտոսի 'ի կողմանս նիկիոյ եւ պրուսայոյ (2) , 'ի ժամանակս հալածանաց դեկոսի կայսեր , զաւակ հեթանոսի 'ի ծածուկ քրիստոնեայ ․ որ եւ յառաջ քան զմկրտիլն եռայր հոգւով , եւ փութայր հեղուլ զարիւն իւր վ̃ն սիրոյն ք̃ի յուսով կենացն յաւիտենից ։ Նա եւ եղեւ՝ զի ոմն 'ի գործակալաց դեկոսի կոմբրուտիոս կ̃մ կումբրիկիոս անուն եկեալ դատաւորական իշխանութ̃բ յասիա՝ շրջէր ը̃ քաղաքս քաղաքս , 'ի նիկոմիդիա , յապամիա եւ 'ի կեսարիա ․ զոհէր դիցն իւրաքանչիւր քաղաքի , եւ ստիպէր զամենեսին 'ի զոհել ․ զի յայտնի լիցին քրիստոնեայք , եւ յոչն հաւանիլ՝ մահու դատեսցին ։

Յայնժամ այր մի 'ի քրիստոնէից կեսարիոյ լեւկիոս անուն՝ պատուական եւ իմաստուն, մատեաւ առ իշխանն, եւ յանդիմանեաց աներկիւղ համարձակութբ զգործս անարժանունե նորա՝ պաշտօնեայ լինելով արարածոց փոխանակ արարչին, եւ յարիւն անպարտ ձեռն մխելով 'ի գիշատել գազանաբար զհաւատացեալս քսի ։ Իսկ բռնաւորն փորձեաց զնա դանիւք եւ քերանօք. եւ ոչ կարացեալ ձգել զնա 'ի կամս իւր՝ ետ հրաման հատանել զգլուխ նր. եւ նա ուրախութբ եւ արիաբար մատոյց զպարանոց իւր սրոյ, եւ այնպէս կատարեցաւ 'ի քս. եւ այն եղեւ քաջալերութն սրտի ամ հաւատացելոց, եւ յորդոր բարի 'ի վկայութն վս անուանն այն. եւ առաւել եւս քաջին Թիւրսոսի՝ 'ի յայտնի առնել զանձն փութայէս ։

Ապա յելանել դատաւորին յետ երկուց աւուրց ընդ դուռն կեսարիոյ ելլեսպոնտեան անուանեալ՝ ը առաջ ել նմա Թիւրսոս, եւ ասէ. ողջոյն մեծի կուսակալիդ ։ Կոմբրուտիոս ասէ. ողջոյն եւ քեզ բարեկամիդ մծոյ ։ Ասէ Թիւրսոս. եթէ օրէն իցէ ասել ումեք համարձակ զճշմարտութին՝ զոր գիտէ, լուր ինձ աղաչեմ ։ Իշխանն ասէ. եւ կարի իսկ քաջ. եւ ես գլխովին պատրաստ եմ՝ 'ի լսել ։ Յայնժամ ասէ Թիւրսոս. մի եւ ճշմարիտ ած բարձրեղ պատուիրէ ինքեան միայնոյ երկրպագանել, եւ զնա միայն պաշտել. ապա չէ արժան խոտորիլ զհետ այլոց պաշտամանց մնոտեաց, եւ բռնի խոտորեցուցանել զմարդիկ զկնի այնպիսի մոլորութե՟ ։

Իշխանն ասէ․ և զիա՞րդ թուի՛ քեզ ա՛յր դու․ միթէ անիրաւ ի՞նչ իցեն հրամանք ինքնակալաց, կամ թէ մոլորութի՞ւն իցէ պաշտել զբարերար ա՟ծս ։ Ասէ Թէուդաս․ մի՛ խաբիր իշխա՛նդ քաջ․ դիք հեթանոսաց կուռք են անշունչք՝ ձեռագործք մարդկան․ ո՛չ չար ինչ առնել կարող են, և ո՛չ բարի ։ Բարկացաւ իշխանն, և ետ ունել զնա և ածել ընդ իւր 'ի տուն ատենին․ խօսել սկսաւ ը՟ նմա, և ասէ․ զի՞նչ էր բանդ՝ զոր լուա՛յ 'ի քէն․ ո՞չ ապաքէն յանդգնութի՟ քո այդ յայտ առնէ, թէ յաղանդոյ անտի քրիստոնէից ես դու․ ապա թէ ո՛չ՝ փութա՛ 'ի զոհել իբրև զպաշտօնասէր․ և մի՛ շատախօս լինէր, զի մի՛ չարաչար կորիցես ։

Պ՟խնի ետ ս՟բն, և ասէ․ եթէ եդեալ է քո 'ի մտի ահ արկանել ինձ, զայս գիտեա՛, զի յա՟յ ճշմարտէ և եթ երկնչիմ, վ՟յ և ո՛չ անսամ քեզ․ իսկ յերեսաց և 'ի սպառնալեաց առն մահկանացու՛ի ինչ ոչ զանգիտեմ․ և ո՛չ շատախօս լինիմ, ուր զճշմարտութի՟ խօսեցայ և խօսիմ․ իսկ շատախօսն ո՛չ է ճշմարտախօս ։ Ասէ իշխանն․ ե՛րթ խորհեա՛ 'ի գալ 'ի միտս առողջս․ զի մի՛ յետ տանջանաց զգաստասցիս ։ Ս՟բն ասէ․ վաղու ես խորհեցայ, և զգաստ միտօք եղէ քեզ յանդիման․ զի 'ի բազում ժամանակաց քննեալ զպաշտամունս ձեր՝ ծիծաղեցայ 'ի վ՟ր ն՟ց․ և ընտրեցի զիտութի՟ խորհրդոյ զճշմարտութի՟ն ք՟ի․ յորոյ վ՟ր մեռանիլ ես պատրաստ եմ, որ է ինձ կեանք ։

կեանք :

Այնուհետև հրաման տայր կոմբրուտիոս հարկանել զնահատակն բռնցի և աքացի , և ծեծել զնա կապարեայ կռանօք , մինչև ցճմլումն և 'ի խորտակումն անդամոց : Իսկ նա ասէր 'ի գանս անդ . ոչինչ զարհուրեցուցանեն զիս առժամանակեայս տանջանք . այլ դու երկե՛ր 'ի մշտնջենականէն . և մի՛ յիս խնայեր , այլ 'ի սպասաւորս քո՝ որք խոնջեցան 'ի հարկանելոյ ծանր կռանօք : Բռնաւորն ասէ . անամօթ ըմբիշն թէև յաղթեացի՝ մինչ 'ի վախճան կամակորի . այլ իբրև արտաքս ընկեսցի յասպարիզէ , յայնժամ ծաղր լինի ամենեցուն . սոյնպէս և դու յամառիս անհաւանութ̃բ , մինչև յօշեսցին ա̃մ անդամք քո , և արկցիս 'ի կերակուր շանց : Ասէ վկայն . ինչ մի ճշմարիտ խօսեցար աշակերտեալդ ստութե̃ . քանզի արդարև ըմբիշ եմ ք̃ի՝ օծեալ աներևոյթ զօրութ̃բ , և հզօրացեալ տ̃ր ը̃դէմ ուսուցչին քո սատանայի . մինչև տեսից զքեզ նովաւ հանդերձ նկուն
եղեալ յերեսաց ամենակալին :

Յետ այսորիկ կապեցին զմատունս ձեռաց և ոտից ն̃բյն բարակ չուանօք , մինչև ճարճատիլ ոսկերացն . իսկ նա յոչինչ գրէր ըղմիշտումն , և գրգռէր զդատաւորն՝ մեծ ևս չարչարանս պատրաստել : Ասէ դատաւորն . դու չես 'ի բնէ քրիստոնեայ . վ̃ոյ և ո՛չ առ մարտիրոսս կալցին զքեզ նազովրացիք : Ս̃ն ասէ . ո՛վ անմիտ , մարտիրոս զիս գրեաց ք̃ս 'ի ժամէն յայնմանէ՝ յորմէ հետէ ես ինձ վկայ լինել ա՟ծութե՟ն ն՟ր չարչարանօք ։ Ասէ բռնաւորն․ հա՛պա յաւելցի՛ն չարչարանք ՚ի վ՟ր դորա․ բերէ՛ք ձանկս, և քանցեցէ՛ք զարտևանունս աչաց, զի անչքասցի և անքուն հայեցիւք մորմոքեսցի ընդ չարիսն՝ զոր անձամբ անձին հասոյց չուառականն ։

Իսկ երբև ոչ կարաց լուծանել զպնդութիւն քաջ նահատակին, ետ պղնձի գնտօք հարկանել զծնօտս ն՟ր, և թափել զատամունս․ իսկ նա ասէր․ որովք զիս խոշտանգել համարիս, նովիմբք փառաւորես առաջի երկնի և երկրի ։ Իշխանն ասէ․ զոհեա՛ դից ո՛վ Թիւրսէ, և թո՛ղ անդր զաղձատանս բանիցդ ։ Թիւրսոս ասէ․ զորս ծանեայ դևս գոլ, ոչ կարեմ զոհել նոցա․ և եթէ դուք անօրէն հրամանի թ՟գրայ ձերոց լսէք, մեք ոչ կարեմք անլսօղ լինել հրամանաց ճշմարտութե՟ն և արդարութե՟ն թ՟գրին երկնի և երկրի ։

Հրաման ետ բռնաւորն, և բերին սան պղնձի, և արկեալ ՚ի նա կապար՝ հալեցին իբրև զջուր․ և զԹիւրսոս տարածեցին ՚ի վ՟ր երկաթի մահճաց՝ հեղուլ զկապարն եռացեալ ՚ի վ՟ր թիկանց ն՟ր ։ Յայնժամ կարդաց երանելին առ տ՟ր, և ասէ․ ա՟ծ երկնից փառաւորեալ ՚ի դասուց հրեշտակաց, որ տարագրեցեր յերեսաց փառաց քոց զիշխանն կորստեան, մի՛ թողուր զանձն՝ որ խոստովան առնի առ քեզ․ և մի՛ իշխեսցէ սմա չար բռնաւորն՝ զոր յամօթ արարեր կամօք քո մինչև ցայժմ․ զքեզ կարդամ յօգնութի՟ն լո՛յս կենաց իմոց․ փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց

ա՟ծ,

տ՟ծ, և դարձո՛ զչարիս ն՟ց 'ի գլուխս նոցա․ զի տեսցեն հեթանոսք զփառս քո, և ծանիցեն՝ թէ անուն քո տ՟ծ է ։

Եւ ընդ ասել զայս ս՟բյն, այն ինչ կալեալ դահճաց զունելեաց կաթսային՝ հեղուլ կամէին միանգամայն զանձամբ ս՟բյն, յանկարծակի եռաց կապարն 'ի վեր, և զեղեալ զդահճօք՝ իսկ և իսկ լափեաց զնոսա ։ Յայնժամ աղաղակեաց բազմութ՟ի հանդիսին․ մե՛ծ է տ՟ծն քրիստոնէից․ և վկայն ասէ ցբռնաւորն․ ասա՛ զճշմարիտն, դէ՛թ անագան աւե՞ր 'ի միտ, զի տ՟ծ թագաւոր է յերկինս, որ արար այսօր զսքանչելիս առաջի աչաց քոց․ որպէս և գրեալն է․ արդարն փրծանի յորսողաց, և փոխանակ ն՟ր մատնին ամպարիշտք ։

Սոմբրոնտիոս ասէ․ եթէ համարիցի՛ս Թի՛ւրսէ յաղթել կախարդութ՟ք քով մեզ, և կի՛ ասկղեպիոսի․ երդնում 'ի դիս, զի այսօր քև հաշտեսցին ը՟ դ՟ի, յորժամ տեսանիցեն զարիւն քո հեղեալ 'ի պատիւ իւրեանց ։ Վկայն ասէ․ հեղցի՛ արիւն իմ վ՟ս ք՟սի ա՟յ իմոյ, որ յառաջագոյն եհեղ զարիւն իւր ս՟բ 'ի փրկութ՟ի մեղաւորացս․ այլ դ՟քեզ և զասկղեպիոսն քո ընկալցի հուրն անշէջ՝ հանդերձ ամենեքումբք, որ ձեզդ լսեն ։

Յայնժամ ասէ բռնաւորն․ բերէ՛ք սուսեր, և խաղացուցէ՛ք ը՟ պորտ նորա․ և այնպէս թրածեծ առնէին զերանելին ։ Իսկ նա ասէր․ յայսմ ստուգապէս մահուչափ ճգնիմ․ ո՞վ զի մարմինս իմ մեղանչական տանջեսցի, և հոգի իմ պահեսցի տ՟ն իմոյ · այլ դու տ՟ր ա՟ծ իմ, նայեա՛ց առ իս, և մերկեա՛ զիս յապականացու մարմ՟նոյ աստի · և ցո՛յց ինձ զորդիդ քո միածին զտէրդ իմ, ոյր վ՟ս զայսոսիկ կրեմ: Յայնմ վայրի լոյս ծագեաց 'ի վերուստ, և պայծառացան երեսք ս՟բյն սքանչելի փայլմամբ · և հնչեաց բարբառ ա՟յ 'ի միջոյ ամպոյն, զի ասէր · քաջալերեա՛ց Թիւրսէ, ես եմ՝ վասն որոյ չարչարիսդ · մի՛ վհատիր նահատա՛կդ իմ առաքինի · օգնեցի, և օգնեցից քեզ:

Եւ եղև յանկարծակի շարժումն մեծ զկնի ձայնին, և դղրդեցաւ տեղի ատենին · իսկ անօրէն իշխանն ասէ · զօրացան արհեստք մոգութե՟ կախարդիս, մեկնեսցո՛ւք 'ի տեղւոջէս · տարա՛յք զդա կապանօք 'ի բանտ, և արկէ՛ք պահ զգուշութեան, մինչև կոչեցից զդա 'ի Նիկոմիդիա, ուր եսն երթամ: Իսկ երանելին Թիւրսոս կացեալ 'ի բանտ գիջին և խաւարչտին՝ խորհէր գտանել զոք, որ մկրտեսցէ զնա, և ոչ գտանէր: Եւ եղև խնամօքն ա՟յ, զի գտաւ ս՟բ եպ՟ս ոմն փիլէաս կամ փիլէնաս անուն, որ կայր 'ի Թաքստի մերձ 'ի տուն բանտին, կ՟մ ը՟ն այլոց՝ 'ի պահեստի էր յայլում բանտի · և առաջնորդութե՟ հրեշտակի մկրտեցաւ 'ի նմանէ վկայն, և ընկալեալ զկնիք սրբութե՟՝ հաղորդեցաւ պատուական խորհրդոյ մարմ՟նոյ և արեան տ՟ն · և ա՟մ հոգևոր օրհնութե՟ լցեալ՝ զուարթացաւ և զօրացաւ յոյժ յոյժ:

Յաւուրսն յայնոսիկ եկն փոխանակ կոմբրատայ

տայ այլ դատաւոր ասխակողման՝ սիղու՛անոս կոմս կարգացե՟լ. և իբրև զգացոյց նմա կոմբրուտիոս վ՟ն կապելոյն Թիւրսոսի՝ ետ ածել զնա զառաջեաւ 'ի քաղաքի անդ կեսարիոյ բիւթանացւոց, կ՟մ ը՟ այլոց 'ի նիկոմիդիա։ Հարցանէր զնա սիղու՛անոս. զի՞նչ անուն է քո, և զո՞ր դենն պաշտես։ Պ՟խնի ետ ա՟րն. անուն իմ Թիւրսոս կոչի, և հաւատովս քրիստոնեայ եմ, ո՞չ քաջ գիտէ իշխանակլիցդ քո կոմբրուտիոս։

Սիղու՛անոս կոմսն ասէ. գիտակ եղէ և ես ա՛յ թշու՛առական և թշնամի ա՟ծոց. և ընդէ՞ր ոչ զոհես ն՟ց, որովք եղեն ա՟ծն։ Թիւրսոս ասէ. և որո՞ց ասես զոհել իբրև ա՟յ։ Կոմսն ասէ. սիղու՛անու և ապողոնի դից։ Թիւրսոս ասէ. ես զսիղու՛անոսդ մարդ տեսանեմ, և ոչ ա՟ծ. իսկ զապողոնն բնաւ իսկ ճանաչեմ ո՛չ։ Բարկացաւ կոմսն, և ասէ ցսպասաւորսն. հարէ՛ք ը՟ պարանոցս խստապարանոցիդ, զի մի՛ ծաղրեսցէ զմեօք։ Եւ իբրև հարին, ասէ վկայն. լո՛ւր ինձ կո՛մս, որ զճշմարիտն ասեմ քեզ. ես ինքնին 'ի դմին կայի մոլորութե՟ յաւուրս անգիտութեան՝ համարելով ինչ զկուռս և զդիս հեթանոսաց. այլ 'ի ծագել լուսոյ ա՟ծգիտութեան՝ փարատեցաւ յինէն այն խաւար 'ի բաց, և այժմ իբրև աչօք բացօք պայծառ տեսանեմ, զի խաղք դի՛ւաց և ցնորք պատրանաց են այդ ա՟մ չար պաշտամունք. քանզի մարդիկ են՝ որ ճարտարեն ինքեանց ձեռօք ա՟ծս 'ի զանազան նիւթոց. և արհեստագործն է՝

որ կերպարանէ զկուռս, որպէս և հաճի․ ապա եթէ անհաճոյ թուի, խորտակէ զնոյն։ Ասէ ցնա կոմսն․ ո՞ կացոյց զքեզ քննիչ բընութեան աստուածոցն․ ո՛չ ծնօղք քո դիցապաշտք էին, և դու հի՞մ օտարացար 'ի դենէդ։ Պատասխանի ետ վկայն․ եթէ ծնօղք մեր պատագրոսք լինէին կամ ձեռնատք կամ կոյրք, միթէ արժան ի՞նչ էր և մեզ փութալ նմանել նոցա․ և եթէ զմարմնաւոր նոցա տկարութիւնս չառնումք յանձն, զիա՞րդ յանձին կալցուք զհիւանդութիւն հոգւոց․ ա՛յն զի լաւ է մարմնով անառողջ լինել, և հոգւով քաջառողջ։ Իսկ կոմսն ետ ածել զնա բռնութեամբ 'ի մեհեանն․ գնաց և ինքն հանդերձ բազմութեամբ 'ի զոհել․ և եղև 'ի կարդալ սրբոյն առ տէր՝ ցուցանել զաքանչելիս իւր, յանկարծակի շարժեցաւ բագինն, և կործանեալ փշրեցաւ արձանն ապողոնի․ և ասէ երանելին․ տեսէ՛ք զսին պաշտօնդ ձեր, և 'ի միտ առէք զյիմարութիւն կռապաշտութեան։

Յայնժամ զամօթի հարեալ կոմսին՝ ետ տանել զնա ծանր շղթայիւք 'ի բանտ․ և յայլ օր հարցափորձեալ զնա յատենի՝ ետ գլուխ 'ի վայր կախել 'ի մէջ ջրալից անօթոյ միջով չափ․ յորմէ ել նա անվնաս։ Ապա պատրաստեաց մեքենայ ահագին սրալից մօտ առ պարսպին․ զի ընդ արկանել զնա 'ի ներքս՝ յօշոտեսցի չարաչար․ բայց հրեշտակք Աստուծոյ յափշտակեցին զնա, և կացուցին 'ի վերայ պարսպին․ ուր սկսաւ երանելին սաղմոսել, և ասել․ 'ի տէր յուսացայ․ ո՞րպէս ասիցէք ցանձն իմ, փոփոխեալց 'ի լերինս ոսկ՟ ձրնձղուկ: Ապշեցաւ կոմսն, և ասէր ցկոմբրուտիոս. զի՞նչ արասցուք դմա, զի կարասցուք յաղթել. և նա ասէ. մոգութե՟ համարեաջի՛ր զիրսդ: Իսկ մի ոմն 'ի դահճաց վիտաղլոս անուն՝ մինչդեռ սանդուղս եդեալ կամէր իջուցանել զո՟քն 'ի վայր, անկաւ 'ի վ՟ր մեքենային. և նոյնժամայն կտրատեալ 'ի սուսերաց և 'ի բևեռաց՝ յօշ յօշ պատառեցաւ. և վկայն սաղմոսելով ասէ. որոգայթ պատրաստեցին առաջի երեսաց իմոց. փորեցին խորխորատ առաջի երեսաց իմոց, և ինքեանք անկան 'ի նոյն:

Կոչեաց սիղուանոս զԹիւրսոս. և ասէ. մինչև ցե՞րբ ոչ դադարես 'ի մոգութե՟դ. և ո՟քն յանդիմանեաց զնա վ՟ս խստասրտութե՟ն. զի զսքանչելիսն ա՟յ կախարդուե՟ի առդնէր: Յետ այսորիկ 'ի չոքել կոմսին ը՟ կոմբրուտայ յապամիա՝ տարաւ ը՟ իւր և զԹիւրսոս կապանօք. և 'ի ճանապարհի ոչ դադարէր 'ի ստիպելոյ զնա դառնալ 'ի դիցն պաշտօն: Իսկ ս՟բն սաստեաց նմա. և ասէ. եթէ տակաւին 'ի դոյն միտս մոլորութե՟ կաս դու և կոմբրուտիոս ը՟ քեզ, 'ի մօտոյ հասցէ ձեզ սատակումն 'ի տ՟նէ երկնից. և 'ի ծիծաղիլ նոցա զբանիւք ս՟բյն՝ չարաչար օրհասաւ կորեան երկոքեանն յապամիա 'ի տեսիլ և յարհաւիրս ա՟մ հեթանոսաց. մինչև բազմաց 'ի ն՟շէ անկանիլ յոտս ս՟բյն, աղաչելով ողորմիլ նոցա վ՟ս սիրոյ ք՟ին իւրոյ, զի մի և ինքեանց հասցէ չար ինչ. և արքն՝ որք պա-

հեհէին զվկայն 'ի պահեստի բանտին մինչև 'ի գալուստ այլում դատաւորի, ակն ածէին 'ի նմանէ։

Բաւդոս ոմն լիբէացի յետ աւուրց եկեալ յապամիա իշխանութ̅բ, կոչեաց զկապեալն Թիւրսոս առաջի իւր, և ասէ ցնա· լո՛ւայ և ընթերցայ զա̅մ անցս ստահակութ̅ե քո ընդդէմ ա̅ծոցն և ինքնակալաց· այսուհետև զգօ՛ն լեր, և շահեա՛ զկեանս քո, զոհելով դից՝ զոր ինքնակալն և իշխանք ն̅ր պաշտեն· ապա թէ ոչ՝ մի՛ ակն ունիցիս ապրել 'ի ձեռաց իմոց։ Նա պ̅խնի նահատակն, և ասէ· ոչինչ աւելի ասեմ քեզ՝ քան զոր լուա՛ն առաջինք քո· քրիստոնեայ եմ, և ո՛չ կարեմ զոհել դիւա՛ց· այլ պատրաստ եմ 'ի մահ սրոյ և հրոյ վ̅ս փառաւորեալ անուա՛ն տ̅ն իմոյ յ̅ի ք̅ի։

Յետ այսց բանից և այլ ևս պ̅խնատուո՛ւե̅ց՝ տեսեալ բռնաւորին զանվանելի ամրութ̅ի ոգւոյ վկային, ետ տարածել զնա յորսայս, և ջարդել բրօք զանդամս ն̅ր, և ապա պընդել շղթայիւք ձեռս յետս, և կծկեալ իբրև գնտակ՝ դնել 'ի քուրձ մի, և կարեալ ըզբերանն և օծել կապարաւ՝ հրամայեաց ընկենուլ 'ի խորս ծովու։ Իսկ ս̅բն Թիւրսոս ասէր· լո՛ւր տ̅ր և նայեա՛ց ա̅ծ իմ· 'ի միոյ վկայի վերայ պատրաստին տանջանք աւելի քան զանդամաթի՛ւս մարմնոյն։

Արդ իբրև տարան զերանելին նաւակաւ, և արկին յանդունդս ջրոյ, յանկարծակի իջին հրեշտակք, և հանին զնա 'ի վեր, և ե-

դեալ

գեալ 'ի ծովեզրն՝ քակեցին զքուրձն, և ողջացուցին զնա բոլորովին . և ասեն ցնա սիրով ողջունի . զօրացի՛ր քա՛ջդ Թիւրսէ , զի տ̃ր առաքեաց զմեզ յօգնականութ̃ի քեզ . քանզի և մեք պաշտօնեայք եմք նորա՝ զոր դուդ պաշտես ։ Իսկ ժողովուրդն՝ որ կայր անդ նաւավարօք և զինուորօքն հանդերձ , տեսեալ զսքանչելիսն՝ յահի եղեն , և փառաւոր առնէին զա̃ծ քրիստոնէից . և ոմանք ընթացան և պատմեցին դատաւորին զեղեալսն . և ասեն . զօրականք օտարք և հաւորք եկեալ են 'ի թիկունս օգնականութ̃ե Թիւրսոսի ։

Եւ նա փութապէս յղեաց զհազարապետն հանդերձ գնդաւն . և ինքն ևս եհաս զկնի . և տեսեալ զնահատակն ք̃ի ողջանդամ և զուարթ , զարմացաւ . և ասէ ցնա . իսկ արդ ո՞ւր են Թիւրսէ զօրականք օտարք՝ որք հանին զքեզ 'ի ծովէ . զի ոչ երևին ։ Թիւրսոս ասէ . եթէ յստակ աչս ունէիր , կարող էիր տեսանել և դու ։ Իսկ անօրէնն բաւդոս ասէ . գիտեմ , զի բազում ինչս խոստացար կմ̃ ծախեցեր 'ի նաւավարս . և նք̃ ապրեցուցին զքեզ 'ի ծովէ ։ Բայց արդ անսա՛ ինձ և զոհեա՛ . ապա թէ ոչ՝ եթէ այլք ծովու չընկալան զքեզ , ընկալցին ժանիք գազանաց ։ Թիւրսոս ասէ . ո՛վ գազան անմարդի , մինչև յե̃րբ չառնուս 'ի միտ զզօրութ̃ին ա̃յ . և ոչ իմանաս՝ զի որ փրկեաց զիս յանդնդոց , կարող է պահել և 'ի բերանոյ գազանաց . զի նոյն տ̃ր է , որ զյոնան ապրեցոյց 'ի փորոյ կիտին ,

տին , և զդանիէլ 'ի գբոյ առիւծուց ։ Յետ աւուրց եկն բաւդոս 'ի կեսարիա , բերեալ ընդ իւր և զկապեալն Թիւրսոս ․ ուր և կրկին հարցափորձեալ զվկայն՝ հրաման ետ հարկանել արջառաջլօք զթիկունս և զփոր նորա ։ Եւ եղեն անդ զարմանալիք ․ զի դահիճքն՝ որ հարկանէին , եկեալ յոտս դատաւորին՝ բողոք բառնային ասելով ․ խնայեա՛ 'ի մեզ աղաչեմք , խնայեա՛ ․ զի յոգնիս ապաստան եղեաք , և ոչ ևս կարեմք ձեռս ամբառնալ 'ի վերայ առնդ ․ քանզի հարուածեն զմեզ բուռն զօրութեամբ սպիտակահանդերձ զօրականք հրեղէն գաւազանօք ։ Իսկ անօրէնն ասէ ցնահատակն ․ ա՛յ կախարդասար այր՝ եթէ կորուսանե՞լ կամիցիս մոգութեամբ քով զսպասաւորս իմ , մինչև է քո 'ի կորուստ երթեալ ․ ո՛չ այդպէս , տարա՛յք զդա 'ի բանտ ․ և պատրաստեցէ՛ք զտեղի ասպարիզին , զի գազանաց արկից զնա կերակուր յանդիման քաղաքիս ։

Եւ արարին այնպէս ․ այլ յորժամ արձակեցին զգազանսն 'ի վերայ սրբոյն , եկեալ նոցա յոտս սրբոյն՝ քծնէին զնովաւ , և լեզուին մեղմով զվէրս նորա ։ Յայնժամ աղաղակեաց բազմութիւն , արձակեա՛ զայր արդար ո՛վ դատաւոր , զի ոչ ուղիղ դատեցար ։ Եւ իբրև ակնարկեաց սուրբն 'ի գազանսն յանուն Տեառն՝ երթալ խաղաղութեամբ 'ի տեղիս իւրեանց , և նոքա գնացին , վերստին ամբարձաւ գոչիւն աղաղակի բազմութեան , զի ասէին ․ մե՛ծ է Աստուածն քրիստոնէից ․ երանի՜ որոց պաշտեն զնա և յուսան 'ի նա ։ Եւ հաւատացին յաւուր յայնմիկ բազումք 'ի նր՟ · ը՟ որս և Կալլինիկոս քուրմ՝ այր երևելի և խորհրդական ատենի, քաջ խելամուտ օրինացն քրիստոնէից ։

Իսկ դատաւորն կորագլուխ դարձեալ յապարանս՝ սկսաւ քաղցրութբ՟ ողոքել զԹիւրսոս, զի թէ յանձն առցէ զպաշտօն կռոց, 'ի մեծ աւագութի՟ ելանիցէ ։ Եւ 'ի հերքել ն՟րյն զհրապուրանս նր՟, ետ տանել զնա բռնութբ՟ 'ի մեհեան · ուր բանիւ՛ վկային անկաւ բագինն դիոնիսեայ չ՟ոյն · վ՟յ ետ հարկանել զնա դատաւորն չարաչար գանիւք, և արկանել խեցիս 'ի պատառուածս վիրացն ։ Եւ առեալ սրբոյն յարենէ իւրմէ՝ ցանեաց 'ի դատաւորն կոյս, և ասէ · արիւնս այս զոր հեղում վ՟ն անուանն ա՟յ և ք՟սի նր՟, լիցի քեզ 'ի վկայութիւն 'ի դատաստանի ։ Յայնժամ երևեցաւ ն՟րյն հրեշտակ տ՟ն, և ասէ · Թիւրսոս եղբայր, մի՛ երկնչիր, աւասիկ եմ · փոքր մի ևս և ելանեմք աստի 'ի միասին · այլ մնայ քեզ յետ երից հարցափորձից և 'ի չորրորդումն հանդիսանալ ։

Եւ եղև չորրորդ ատեան ն՟րյն յապողոնիա քաղաքի · ուր եկն բաւդոս հանդերձ կալլինիկոսիւ, որ էր 'ի նմին քաղաքէ ։ Ընդ ասէր դատաւորն ցվկայն · քաղաքս այս՝ ոչ մի, այլ չորս դիս ունի մեծամեծս 'ի հոյակապ մեհենի · ս՟ք են մեծն ապողոն, հերակլէս, սիղուանոս, և ափրոդիտէ · արդ եթէ զոհես նց՟, երդուեալ 'ի փառս ինքնակալաց՝ պատուով ար-

արձակեմ զքեզ ։ Թիւրսոս ասէ ․ որպէս կարծեմ ո՛վ դատաւոր , հաճոյ թուի դից ձերոց մեկնիլ 'ի ձեռն իմ յԱստուծէն յունաց ․ արդ եթէ փոյթ ինչ է ձեր , գէթ զմին պահեցէք , զի մի՛ անպաշտօն մնայցէք ․ ապա թէ ո՛չ՝ եկա՛յք երթիցուք տեսանել և զնոսա օգնականութեամբ բարձրելոյն ։

Եւ իբրև մտին 'ի տաճար կռոց բազմութեամբ , կարդաց սուրբն յերկինս , և ասէ ․ Տէր իմ գոհանամ զքէն , զի հրաման ետուր ինձ անուամբ քով սրբով բառնալ զկուռս հեթանոսաց ․ իցէ՞ թէ զո՛ր օրինակ կործանեմ զնոսա զօրութեամբ քով , նոյնպէս և զկռապաշտս դարձուցանէի առ քեզ ։ Եւ զոյգ ընդ բանի սրբոյն դղրդեցան և անկան չորեքին բագինքն , և մանր խորտակեցան որպէս փոշի ։ Յայնժամ եղև խռովութիւն մեծ յամբոխին և հերձուած ․ կէսքն աղաղակէին ․ մեծ է Աստուածն քրիստոնէից , զոր Թիւրսոս քարոզէ ․ և կէսք բողոքէին առ դատաւորն , բա՛րձ զկախարդդ 'ի միջոյ ․ զի չէ՛ արժան դմա կեալ ։

Եւ իբրև կամէր Բաւդոս տալ վճիռ մահու ընդդէմ սրբոյն , մատեաւ Կալլինիկոս քուրմ հաւատացեալն 'ի սրտէ , և ասէ ․ հաւատա՛ ինձ ո՛վ դատաւոր , ո՛չ կախարդութեամբ ինչ արուեստական կամ դիւական տեսաք յայդ՝ որ մինչև ցայսօր մնաց կենդանի , այլ որպէս ինձ թուի՝ զօրութեամբ ինչ մեծ Աստուծոյ է 'ի նմա , իշխօղ և 'ի վերայ աստուածոց բոլորեցունց ։ Բաւդոս ասէ ․ թո՛յլ տուր և 'ի բա՛ց գնա յինէն 'ի ժամուս ․ զի դառնացեալ է ինձ կեանք իմ , և

Հաշխիմ 'ի տրտմութենէս ։ Կալլինիկոս ասէ ․ մի տր̃ իմ մի , եկ հաւատասցուք յա̃ծն Թիւրսոսի ․ և անդէն փարատին 'ի մէնջ ա̃մ հոգք և տրտմութի̃ք ․ զի զի՞նչ ցայսվայր շահեցաք 'ի 'ի կռոց անտի , բայց զի և զն̃մ կորուսաք ։ Յայնժամ այլազգունեցան երեսք բաւդոսի , և ասէ ցԿալլինիկոս ․ և զքե՞զ ևս ո՛վ չուառական խաբեաց ուրեմն կախարդութ̃ի Թիւրսոսի ․ զի իշխեցեր ասել բան զայդպիսի յատենիս ։ Կալլինիկոս ասէ ․ մի՛ յադենար բարկուք̃ ո՛վ դատաւոր ․ այլ համբե՛ր սակաւիկ մի , և արբցես զարիւն իմ ․ և ապա հանդարտեսցիս 'ի մոլեգնութե̃դ ։ Մռնչեաց դատաւորն իբրև զգազան , և ասէ ․ տեսէ՛ք զանօրէն մահապարտդ , որ մինչև ցայսօր համարեալ էր քաջարար ա̃ծոց , և հաւատարիմ խորհրդական իշխանաց , թէ զիա՞րդ վաղվաղակի 'ի բանս եղև Թիւրսոսի մոլորեցուցչի ։ Իսկ Կալլինիկոս ասէ ․ ո՛չ զիս Թիւրսոս ձգեաց զկնի իւր , այլ ք̃ս ա̃ծ կենդանի՝ զոր Թիւրսոսն պաշտէ , նա ազդեաց յիս , զի թողեալ զունայնութ̃իս՝ ճշմարտութե̃ն զհետ ընթացայց , և զանձն իմ գլխովին նուիրական պատարագ մատուցից ճշմարտին ա̃յ ։ Յայնժամ ասէ բռնաւորն ցդահիճս իւր ․ առէ՛ք տարա՛յք 'ի բաց զչարագործդ , և զա̃մ ազգ տանջանաց հեղէ՛ք զդովաւ , և մի՛ թողուցուք մասն ողջ 'ի մարմնոյ դորա ․ եթէ տանջանք կարճեցին զնա 'ի կենաց , ապա յաղթեցաք նմա ․ և եթէ տոկայցէ մարմինն , ցաւք տիրեսցեն նմա ։ Նուք̃ ձգեցին պերճանելին, և քարշէին տանէին ընդ փողոցս չարաչար լլկանօք և պէսպէս կոտտանօք · իսկ նա զուարթութբ̄ փառս մատուցանէր ա̄յ · զի արժանի եղև չարչարակից լինել և նահատակակից մեծի վկային թիւրսոսի ։

Եւ իբրև անցուցանէին զնա առաջի դրաց մեհենին ասկղեպիոսի, որ կանգնեալ էր 'ի վր̄ սեանց հարիւրոց, ասէ կալլինիկոս ցդահիճս · անկցի գութ իմ առաջի ձեր, զի ահա կիզանօղ տապ արևուն քաղէ զնուաղեալ ոգիս · տարայք զիս 'ի սրահ անդր մեհենին, զի 'ի հովանւոջ փոքր մի ոգի առից · և նք̄ լուան նմ̄ ։ Իսկ կալլինիկոս ը̄ մտանել ընդ յարկաւ տաճարին, ձայն ետ առ բագինն ասկղեպիոսի, և ասէ · տո՛ւր փառս ա̄յ · քա՛ջ գիտեմ, զի դև ես դու, և ո՛չ ա̄ծ · դու միայն մնացեր՝ որ թաքեար յերեսաց թիւրսոսի ծառայի տ̄ն · արդ տ̄ր հրամայեաց ինձ այսօր բառնալ 'ի միջոյ՝ զոր նա թողացոյց · և ետ ինձ նշան, զի ը̄ անցանելն իմ ընդ այս տեղի, անկցիս 'ի կայից քոց ամենայաղթ զօրութբ̄ն ք̄ի՝ որ դատաւորն է կենդանեաց և մեռելոց ։

Եւ ը̄ ասել նր̄ զայս՝ անկաւ կործանեցաւ ասկղեպիոս, և փշրեալ մանրեցաւ · զոր տեսեալ՝ հաւատացին 'ի ք̄ս հնգետասան քուրմք, որք ծանօթ էին կալլինիկոսի ։ Ազդ եղև դատաւորին՝ որ ինչ եղեն · և յղեաց հրաման հատանել վաղվաղակի զգլուխ կալլինիկոսի · իսկ երանելին ուրախութբ̄ մատուցեալ զպարանոց իւր սրոյ՝ ասէր. յառաջընթաց առաքեցեր զիս ով երանելիդ Թիւրսէ. փութա՛ ժամանել զկնի իմ, զի ՚ի միասին մտցուք առաջի ք՟ի ուրախութ՟։ Ընդ նմին կատարեցան ը՟ ոմանց և հնդետասան քուրմք, որք դարձան առ տ՟ր. այլ զմարմին ս՟բյն կալինիկոսի եառ ոմն ՚ի քրիստոնէից՝ աքողիոս անուն։

Սոյնպէս և վ՟ն ս՟բյն Թիւրսոսի հրաման տայր բռնաւորն առ օրէն չարաչար մահու կարճել ՚ի կենաց՝ սղոցելով զնա ը՟ մէջ ՚ի մէջ մամլոց. և այնպէս կատարեցաւ ՚ի ք՟ս։ Բայց այլք գրեն, թէ ա՟ծ որ պահեաց զնա յայնչափ տանջանս, ոչ եթող մեռանիլ և այսու չարչարանօք. զի թէպէտև աշխատ եղեն յոյժ երկու դահիճք վիտաղիոս և սաբինոս ՚ի վ՟ր ս՟բյն, այլ ոչ կծեաց ՚ի նա սղոցն ամենևին։ Յայնժամ վայրի երկինք որոտացին, և եկն ձայն՝ որ ասէր առ ս՟բն. մո՛ւտ Թիւրսէ յուրախութ՟ տ՟ն ք՟ո. զի զօրացար իբրև քաջ նահատակ ՚ի պատերազմի, և վանեցեր զսատանայ. ահա պատրաստեալ է քեզ պսակ փառաց. այսօր ը՟ իս լիցես ՚ի դրախտին։ Եւ անդէն աւանդեաց երանելին զհոգին իւր ՚ի ձեռս ա՟յ ուրախութ՟՝ յամի տ՟ն իբր 250. ՚ի քաղաքն ապողոնիա, կմ՟ ը՟ այլոց ՚ի մերձակայ քաղաքն մելիտոս անուն։ Յաւուր յայնմիկ հարաւ ՚ի տ՟նէ չարաչար հարուածովք բաւդոս. և ասէր. վ՟ն ծառայէն ա՟յ տանջիմ ես։ Ա՟յ և յաղաչել զնա փիլիպպոսի առն երևելւոյ ՚ի մէջ հաւատացելոց վ̅ մարմնոյ ս̃բյն, ետ հրաման բառնալ թաղել զնա համարձակ. և եկն կեսարիոս եպս̃ և լաւոդիկ քահանայ հանդերձ պաշտօնէիւք. և տարեալ ամփոփեցին յայրի միում ՚ի տեղին կոչեցեալ դափնէ՝ մօտ ՚ի ծովեզերեայ քաղաք կարիացւոց ՚ի մէլիտոս (ռամկօրէն՝ մէլասսօ). ուր բազում նշանք եղեն բարեխօսութ̅բ բազմայաղթ նահատակին Թիւրսոսի ։

Զկնի ժամանակաց յաւուրս քրիստոնէութե̅ համարի փոխադրեալ մարմին ս̃բյն Թիւրսոսի ՚ի կողմանց բիւթանիոյ ՚ի բիւզանդիա ։ Քանզի գրէ սոզոմենոս յամի տ̅ն իբր 197. (Գիրք. Թ̅. Գլ. 2), թէ * Կեսարիոս այր երևելի և հզօր ՚ի ժամանակին յայնմիկ, որ և հասեալ իսկ էր ՚ի պատիւ հիւպատոսութե̅ և նախարարութե̅, շինեաց հոյակապ տաճար ա̅յ ՚ի պատիւ ս̃բյն Թիւրսոսի վկայի՝ արտաքոյ պարսպին կոստանդնուպօլսոյ .... (ուր կային ծածկեալ և նշխարք ինչ քառասուն մանկանց սեբաստիոյ) ։ Յետ ամաց ինչ երևեցաւ սքանչելին Թիւրսոս երիցս՝ պողքերայ Թագուհւոյ քեռն Թէոդոսի կայսեր փոքու. և նշանակեալ զծածկեալսն է̅ հողով՝ հրաման ետ բերել զն̅ա առ ինքն, զի նմին տեղւոյ և պատուոյ կցորդ լինիցին. նոյնպէս յայտնեցին զանձինս և ինքեանք ս̃բ քառասունքն երևել̃ք ՚ի հանդերձս պայծառս ... (և ՚ի գտանել զայն ս̃բ նշխարս) ընթացան ՚ի վկայարանն Թագուհին և եպս̃ քաղաքին ։ Յայնժամ Թագուհին փառս մատուցանէր Ա՟յ վ՟ն արժանի առնելոյ զնա այնպիսում մեծի յայտնութե՟ : Ապա առեալ զգտեալ նշխարսն , և պատուեալ զվկայսն փառաւոր տապանակաւ՝ հանդերձ առընթեր երանելւոյն Թիւրսոսի՝ մեծահանդէս տօնախմբութ՟բ , ո՟պ վայելէր , վայելուչ շքով և փառօք՝ հանդերձ երգովք սաղմոսաց . յորում հանդիսի առաջիկայ գտայ և ես ինքնին գլխովին . . . Եւ ունէր յայնժամ զաթոռ եկեղեցւոյն կոստանդնուպօլսոյ պրոկղոս || . այն է ս՟բն պրոկղ՝ որ նստաւ յամի Տ՟ն .

434 :

Յիշէ պրոկղոսս շինեալ և զայլ եկեղեցի ՚ի յաջորդ դարու ՚ի կոստանդինուպօլիս ՚ի մեծէն յուստինիանոսէ կայսերէ : Եւ որպէս կարծի՝ ՚ի կոստանդնուպօլսոյ փոխադրեցան յարևմուտս նշխարք ինչ ս՟բյն Թիւրսոսի , որք յիշին ՚ի գաղղիա յեկեղեցին լեմովկեցւոց . ո՟պ և ՚ի սպանիա ասի լինել ձեռն ս՟բյն Թիւրսոսի ՚ի տաճարի ս՟բյն ստեփաննոսի՝ որ ՚ի բալնէոլեան վանս գերունդեան Թեմի . և այլ մասունք յայլ տեղիս , և զանազան եկեղեցիք յանուն ս՟բյն : (3)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ :

(1) Թիւրսոս անուն համաձայն յունականին , որ և Թիրսոս կմ՟ Թերսոս , հո՟րկօրէն ՚ի տօնացոյցս մեր պակասութ՟բ միոյ տառի գրի Թիւրոս . զոր և յետինք ոմանք ը՟ կամի գրեցին ԵւԹիւրոս . այնպէս և որ ուղիղ գրեալն է լեւկիոս , ՚ի Հ. դնի լիւկիոս . ո՟պ և առ լատինս

վրիպակաւ լուկիոս կմ՟ լեւաւիկոս կմ՟ ղեւոնդիոս և կամ սեղեւկիոս. իսկ որ բարուք գրի 'ի մեզ կալլինիկոս՝ համաձայն յունին գալլինիքօս, 'ի լտ՟. է զի դնի գալլինիքուս, և է զի գալէնիքուս. ևն:

Ցաւ է մեզ, զի չունիմք 'ի ճառընտիրս մեր զվկայաբանութի մեծի վկային թիւրսոսի և նահատակակցաց նր՟. իսկ 'ի Հ. հարեանցի եւեթ նշանակի այսպէս. * 'Ի ,, նմին աւուր կատարեցան սրով սբ՟ վկայքն քսի՟ թերսոս, ,, լեւկիոս, և կալլինիկոս, յամս դիոկղետիանոսի (ընթերցիր, դեկոսի) ամբարիշտ արքայի: Սբ՟ն թերսոս ,, յետ բազում չարչարանաց՝ 'ի մամուլս հիւսանց սղոցեալ ,, կատարեցաւ 'ի քս՟: Եւ լուկիոս կախեալ ըղ,, փայտէ՝ քերեցին զամ՟ մարմին նորա, և ապա հատին ,, զգլուխ նր՟: Իսկ սբ՟ն կալլինիկոս քուրմ էր կռոց. և ,, հաւատացեալ 'ի քս՟՝ կատարեցաւ սրով 'ի քաղաքին ,, յապամիա՝ 'ի փառս քսի՟ ||: Որ ուրուականն պատմութեաս քաջ նշմարի. թող զի շփոթեալ է անուն դեկոսի ը՟ դիոկղետիանոսի՝ վն՟ 'ի միասին տօնելոյ յունաց ը՟ թիւրսոսեանց զփիլեմոնեանս, որք կատարեցան առ դիոկղետիանոսիւ:

Արդ թէպէտև ոչ պակասին մեզ լիակատար վկայաբանութիւնք 'ի յոյն և 'ի լատին բարբառ, բայց ցանկալի էր գտանել զհայերէն հին թարգմանութի, որ հասարակօրէն հնագոյն և լաւագոյն օրինակաց է հետեւօղ. և առ 'ի չգոյէ այսմ՝ հարկ եղև մեզ նորոգ թարգմանութբ՟ առնուլ յայլոց, ընտրանաւ քաղելով 'ի չորից օրինակաց. յորոց առաջինն է մետափրաստեսին՝ յունական, որ և 'ի լատին յեղեալ առ սուրիոսի. և այլ երրեակ հին գրութիւնք 'ի լատին բարբառ, թէպէտև ը՟ հիմանն 'ի յունաց առեալք. զորոց այսպէս վկայէ յովհաննէս բոլլանդ այր հաւատարիմ և զգօն. * Երրեակ ,, վկայաբանութիս գտաք՝ ծմին արժանահաւատս, և ,, տիրապէս հաստատունս, թէպէտև ահագին սքանչե,, լեօք լիս ||: Զսքանչելեացն յաճախութի թէպէտև գժուարահաւատալի գիտէ, բայց ինքն ոչ թերեհաւատէ, այլ արժանահաւատ դատի. և մեզ իսկ չէ անկ դատաւոր լինել ստուգութե կմ՟ անստուգութե հրաշից, որք կախին զկամացն այ՟. շատ է թէ չկայցէ նշանակ անհաւատարմութե 'ի գրիչս. և զի զայդ ոչ նշմարէ բոլլանդ, և մեք չկամիմք լինել սրատեսք քան զնա: Միայն զայս ասեմք անաչառութբ՟. եթէ 'ի ձեռս յետնոց 'ի բոլլանդեանց անկանէր այդ պատմութի, ոչ տայի՛ն զայս բարուոք վկայութի, այլ ծայրէ 'ի ծայր ը՟ խարտոցաւ գրչի անցուցանէին առաւել քան զվարս այլոց բազմաչարչար և նշանագործ վկայից. և ը՟ հակառակն՝ իցէ՞ թէ 'ի ձեռս իտոհական գլխոյ նց՟, սորին յովհաննու ասեմ բոլլանդայ՝ անկանէր վարք լուսաւորչին մերոյ. զի յայնժամ անտարակոյս եմք, թէ նա ոչ ոպ՟ զյովհաննէս ստիլտինգ խօսէր ը՟վայր հարկանելով, այլ ամե՟ն արդարացուցանէր և դնէր 'ի վերոյ ամբառնայր՝ գոնէ առ համեմատութե՟ վկայաբանութե՟ս Թիւրսոսի, զոր արժանահաւատ և հաստատուն ասել ոչ ամօթ համարեցաւ: Պատճառն է, զի թէ հնարաւոր դատիոք զայսչափ բազմութի՟ հրաշս և զչարչարանս վ՟ն միոյ առանձին մարտիրոսի, յորմէ չեղև երևելի այցելութի դարձի՝ բաց 'ի սակաւուց ոմանց, և չէք իսկ զնմանէ հանրական աւանդութի ինչ գէթ առ գաւառակիցս, քանի՞ն արժանահաւատ ունի գրել զանցս ս՟բ հօրն մերոյ. որոյ հրաշալի հանդէս վկայութե՟ն կարգեալ էր յա՟յ 'ի դարձ ազգի և ծ՟ի միոյ ողջոյն. և պատմութի նր՟ այսչափ հաստատուն աւանդութե՟ իջանէ 'ի մէջ նոյն ազգին, մինչև զի յետ ք՟նի լուսաւորիչն է ծանուցեալ պաշտելի: Զայս յայն սակս յուշ արարի, զի մի՛ կարծիցեն ընթերցօղք, թէ մեք՝ որ առաք 'ի բոլլանդայ զառաջիկայս վկայաբանութի սբ՟յն Թիւրսոսի, այնչափ ստոյգ համարիմք զայս՝ որչ՟ս զվարս լուսաւորչի. այլ միայն զարժանահաւատ դատեալն 'ի բոլլանդայ և մեք իբրև հաւանական պատմութի քաղեցաք. և այն՝ թօթափելով յերկարապատում բանից, և ը՟ կարի ընտրելով զառաւել տանելին 'ի մէջ չորից նախայիշե՟լ վկայաբանութե՟ց. է՛ զի այսմ, և է՛ զի այնմ հետևօղ լինելով, զի մի՛ օտարասցուք 'ի հաւանականութե՟ շաւղէ. ապա թէ ոչ՝ 'ի բազում դժուարութիւնս մատնէաք, եթէ ոչ զանձինս, գոնէ զգրիչս. որք թէպէտև 'ի գոյացութե՟ պատմութե՟ միաբանին, այլ յեղանակն բազմօք տարբերին. թո՛ղ զի զատենախօսութիւնս այր իւրաքանչիւր պէսպէս օրինակաւ յարմարէն: Ինչ մի զարմանալի մեզ թըւեցաւ, զի ուրեք ուրեք և 'ի տարբերե՟լ տեղիս գլխովին՝ տողք տողք բանից բառ առ բառ միաձայնէին. որ է նշանակ՝ թէ 'ի միոյ աղբերէ են առե՟լ, և ը՟ ոճոյ իւրեանց յերիւրե՟լ: Թերևս եկեսցէ ժամանակ, զի բուն աղբիւրն 'ի վեր երևեսցի. առ այժմ շատ է մեզ, զի 'ի միաբանութե՟ անմիաբան գրչաց մարթացաք բովանդակել զիրսն իբրև ստոյգ ըստ գոյացութե՟. որ միայն է խնդրելին ։

(2) Մետափրաստէս գրէ, թէ Թիւրսոս՝ ոչ և Լևակիոս և Կալլինիկոս, էին յաշխարհէն բիւթանացւոց՝ 'ի քաղաքէ անտի, * որ կեսարիա կոչեցաւ յանուն ուրումն 'ի ,, հին կայսերաց ||. այն է՝ կեսարիա յիշատակեալ 'ի պտղոմեան Աշխարհագրութե., և յոմանց՝ առ որոշելոյ 'ի համանուն քաղաքաց՝ անուանեալ կեսարիա զմիւռնեան, կմ զմիւայլին ։ Չայնակից լինին այսմ և այլ վկայաբանք, ըստ որում միաբան պատմեն՝ թէ այս ամ անցք Թիւրսոսեանց գործեցան 'ի քաղաքին բիւթանացւոց, 'ի կեսարիա, յապամիա, յապողոնիա և 'ի մելիտոս, 'ի սահմանս նիկիայ և նիկոմիդիայ ։ Այլ 'ի զուր է ոմանց յարևմտեայց գնել զսբն Թիւրսոս նահատակեալ 'ի սպանիա, վս ունելոյ տօլետացւոց զնշխարս նոյն և կմ համանուն սբյ. և թէ զիա՞րդ, թողեալ զայլ տարբերութիս վկայաբանից՝ զորոց շատ լիցի ասացեալս ըհանրապէս վերագոյնդ, լո՛ւր զառաջիկայդ ։

(3) Ըստ նշանակելոյ բոլլանդոսի, յիշի 'ի Ժմկագրութե լուիտպրանդոսայ 'ի համարն. 251. թէ գոյր հին մենաստան յանուն սբյն Թիւրսոսի 'ի տօլետոն սպանիոյ. որոյ աբբայն ագապիոս անուն՝ իբրև փոխանորդ եղիպանդոսի հայրապետին տօլետայ գտաւ յամի տն 786. յէօթներորդ տիեզերական ժողովն նիկիոյ՝ որ ըդէմ պատկերամարտից ։ Եւ յառաջ քան զայս պատմի 'ի համարն. 128. թէ 'ի ժամանակին՝ յորում վամբա արքայ վիսեգոթայ մեծացոյց զարքայանիստն տօլետոն, և պատեաց պարսպաւ՝ յամի տն 676. զհիւսիսային դուռն նուիրեաց *յա,, նուն սբյն Թիւրսոսի՝ տօլետեան քաղաքացւոյ, և ,, վկայի նահատակելոյ արտաքոյ ||. ըստ պաշտպանի քաղաքին. զի որպս և զսբ յակոբ առաքեալն կոչեն սպանիացիք վէ՛ռնուլուս, ըստ համհարզ, կմ համշիրակ իւրեանց իբրև պաշտպան, նոյնպէս և զսբն Թիւրսոս՝ է զի վէ՛ռնուլուս կոչեն, և է զի չի՛ւիս, ըստ քաղաքացի. այլ նոյն ինքն լուիտպրանդ՝ որ վկայեաց, թէ նա նահատակեցաւ արտաքոյ, այլուր 'ի համարն. 233. մեկն գրէ նահատակեալ գոլ յապողոնիա յունաստանի. վսյ չիք յայսմ դժուարութիւն. և վայրապար կարծեցին ոմանք՝ թէ սբն Թիւրսոս սպանիացի իցէ ազգաւ, այլ 'ի յունաստան նահատակեալ ։

Այլք յարևմտեայց պատմեն 'ի վարս սիղոնի արքային ովետայ և աստուրիացւոց, թէ գոթացիք շինեցին մօտ 'ի մեծ եկեղեցին տօլետայ տաճար յանուն սբյն Թիւրսոսի, ուր էին նշխարք նորա փոխադրեալք յոստրոգոթացւոց. և թէ՝ նշխարքս այս պահեալ կային 'ի տոլետոն, մինչև էր մաւրիտանացւոց առեալ զքաղաքն. այլ առ երկիւղի արշաւանաց ն՟ց՝ ուրբանոս արքեպ՟ս տոլետայ փոխադրել՟ իցէ զնոսին յովետոն, ուր նստան առ ժամանակ մի գոթացի թագաւորք աստուրիացւոց։ Իսկ մինչև ցայսօր՝ ասէ բոլլանդ, ը՟ գրելոյ փրանկիսկոսի պիշայի՝ պահին 'ի քաղաքի անդ ովետոնի ս՟բ նշխարքս թիւրսոսի տապանակաւ. և վ՟ն այսր իսկ կանգնեալ առեն 'ի նմին քաղաքի զվկայարան յանուն ս՟բյն թիւրսոսի արքայն ալփոնսոս կաստոս. ը՟ նմին օրինակի և այլ բազում վկայարանք շինեցան 'ի պատիւ նորին սրբոյ 'ի նոյն ովետեան թեմի. և մինչև ցարդ մեծապէս պատուի յիշատակ ս՟բյն թիւրսոսի և ընկերաց նորա 'ի վիճակն աստուրեան. ո՟պ և այլ եկեղեցի ս՟բյն թիւրսոսի ասի լինել 'ի քաղաքն պրակատայ, և այլ ևս յայլ տեղիս։

Իսկ զեկեղեցին՝ որ 'ի տոլետոն, շինեաց կ՟մ նորոգեաց յամի տ՟ն իբր. 777. առ սիղոնիւ արքայիւ կիքսիլլա եպ՟ս քաղաքին. որոյ յիշատակին և ոտանաւոր բանք ինչ 'ի գովեստ ս՟բյն թիւրսոսի, կ՟մ ը՟ այլոց հատուած ինչ 'ի տաղս ս՟բյն թիւրսոսի՝ յօրինեալս յառաջագոյն, ո՟պ առեն, 'ի ս՟բյն իսիդորոսէ։ Աւերակք այդր հին եկեղեցւոյ 'ի վեր երևեցան յամի. 1595. 'ի հիմնարկութ՟ե իրիք շինուածոյ։ Զայս ա՟մ տեղեկութ՟ի առեալ է բոլլանդեան 'ի ձեռն աշխատասիրութ՟ե յովհաննու եւսեբիոսի ներիմբերգացւոյ՝ իւրումն կարգակցի. այն է հեղինակն գրոց՝ որ կոչի կշիռ ժամանակի։

ՎԱՐՔ ՍՐԲՈՑՆ

Թովմայի առաքելոյն ։

Տօ. օգոստ. 22. եւս եւ հոկտ. 6 (յօրինակս էնչ) ։ Յ. հոկտ. 6 ։ Լ. դեկտ. 21 ։ Ճառընտիր. Ա. ՆԷԵ=ՆԸԷ ։ Սեպտէր. առ աւուր. դեկտ. 21 ։ Ա. ռեճան. հատ. Գ. էջ. 25=35. եւ յայլ բազում տեղիս ։ Բոլլանդեանս յամ. տն. 44. եւ 57. եւ այլն ։

ԹՈՎՄԱՍ ԱՌԱՔԵԱԼ մին յընտրելոց երկոտասանից, անուանեալն երկուորեակ, համարեալ է համածին եղբայր սրբոյն Թադէոսի Հայոց առաքելոյն՝ որ մին է յեօթանասնից ։ Անունս Թովմաս՝ կարծի յոմանց նոյն լինել ընդ անուանակոչութեանս երկուորեակ, որ եբրայեցերէն թէօմ ասի, և յունարէն դիդիմոս. և որք զայս ասեն, դնեն՝ թէ բնիկ անուն նորա էր յուդաս (1) ։ Իսկ ըստ այլոց՝ բուն անուն նորա է Թովմաս, ծագեալ յեբրայական ձայնէս թէհէմ, որ թարգմանի խորք. իսկ երկուորեակն է մականուն 'ի գործոյ առեալ. որպէս և յուդաս՝ անուն տանն և ազգատոհմի. վասն յոմանց դրի Թովմաս յուդայեանց ։ Ազգաւ էր իէլացի՝ գիտեմք , այլ քաղաքաւ և գաւառաւ՝ եղ̅մացի՞ իցէ արդեօք , կամ գալիլեացի որպ̅ս զայլ առաքեալս , չունիմք 'ի գրոց : Են՝ որ ծննդեամբ անտիոքացի առ դնեն զԹովմաս , Թէպէտև յեբրայեցի ծնողաց ծնեալ , և 'ի պաղեստին բնակացեալ . զանուն հօր նորա կոչեն դիոփանէս , և մօրն՝ հռոա . և համածին քոյր նո̅ր ստեղծանեն զոմն լիւսիա կամ ասիա անուն . որ են անստոյգ բանք :

Եւս առաւել անստոյգ և անհիմն ճանաչին՝ զոր միանգամ աւանդեն զքարոզու̅է Թովմայի ասորիք և արաբայիք , յորոց ածանցե̅լ է ինչ ինչ և 'ի յոյնս և 'ի հայս , առե̅լ յերկարապատում և 'ի ստայօդ գրուածոց ուստեք , որ կոչի շրջագայութի̅ կամ պատմութի̅ ն̅բ առաքելոյն Թումայի . զոր և ն̅բ հարք առաջինք անընդունելի դատեցան՝ իբրև խիթալի կազմութի̅ անհաւատարիմ մարդոց աղանդաւորաց . զորմէ տեսցես 'ի կարգի ծանօթութե̅ց : Այլ որ ինչ ստոյգ և հաստատուն բանք իցեն զսբ̅յն Թովմայէ , կէս մի յաւետարանէ անտի , և կէս մի 'ի միաձայն աւանդութէ̅ ն̅բ վ̅դպաց , բովանդակին յառաջիկայս : (2)

Երևելի յիշատակ բանից սբ̅յն Թովմայի յաւետարանի՝ է այն բարբառ նո̅ր երկդիմի առ աշակերտակիցս իւր . * ( )'ն եկայք և մեք , զի ը̅ նմա մեռցուք || . զոր ոմանք 'ի վ̅դպաց համարեցան լինել ասացուած երկչոտ մտաց . բայց այլք յոլովագոյնք 'ի մեծանուն հարց սբ̅ց և 'ի մեկնչաց իրաւամբք 'ի գովելի միտս

առ.

առնուն • զի սբ՟ աւետարանն ոչ վայրապար ՚ի մէջ առնու զայն բանն Թովմայի, այլ ՚ի յայտնի առնել, թէ ուր այլ աշակերտք զանգիտէին երթալ միւսանգամ ՚ի Հրէաստան՝ յերեսաց հալածանաց հրէից, Թովմաս միայն համարձակեցաւ խրախոյս տալ եղբարց իւրոց՝ երթալ անվեհեր ը՟ տն՟ իւրեանց և վրդ՟պի, թէև մեռանել ևս հասանիցէ ը՟ նմ՟. ուր որչափ երկիւղ մահու նշանակի, նոյնչափ և աներկիւղութ՟ի ՚ի մահուանէ ցուցեալ լինի • արդ չէ՛ արժան՝ զոր ինչ ՚ի բարւոք միտս է իմանալ, յոչ բարին մեկնել:

Յայտնի է և անաչառ հարցուածն այն Թովմայի ՚ի վերջին ընթրիս • * Տէ՛ր, ո՛չ գիտեմք յո՞ երթաս • և զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել ‖ • որում արժանի եղև ը՟ունել ՚ի տ՟նէ պ՟խնի բարձրագոյն ՚ի կարևոր ուսում՟ն անձին իւրոյ և ընկերացն և ամ՟ աշակերտելոց ճշմարտութ՟ե • զայն՝ թէ * Ես եմ Ճանապարհ, և Ճշմարտութ՟ի, և կեանք • ոչ ոք գայ առ Հայր, եթէ ոչ ինև ‖:

Այլ առաւել նշանաւոր և ծաքարող բան և գործ Թովմայի հանդիսացաւ յաւուրս յարութ՟ե փրկչին, յորժամ յանձին Թովմայի աւանդեցաւ կանոն ամ՟ հաւատացելոց՝ հաւատալ անտեսանելի խորհրդոց, և ոչ տեսանելեաց • մինչ զի կարծեցեալն թերեհաւատութ՟ի Թովմայի՝ հաստատութ՟ի եղև հաւատոյ ամ՟ քրիստոնէից: Փափաքանաց և կարօտանաց էր ձայնն • * եթէ ոչ տեսից ՚ի ձեռս նր՟ զնշան բեւեռացն , և արկից զմատունս իմ 'ի տեղիս բեւեռացն , և մխեցից զձեռս իմ 'ի կողս նր՟ , ոչ հաւատամ ‖ ։ Այս կիրք են բնութե՟ս · դժուարաւ հաւատալ ուրախալի աւետեաց՝ քան տրտմական լրոյ · ես առաւել անհաւան լինել կցորդելոցն մեծաց բարեաց՝ յորոց զուրկ ոք զանձն տեսանէ , ուր և ինքեան հասանէր այնմ կցորդ լինել ։ Ապաքէն չէր Թովմաս տեսող խաչելութե՟ անձամբ , զի փախեաւ ը՟ այլ աշակերտսն · բայց զի ետես զտ՟րն ըմբռնեալ , և լուաւ զբեւեռելն 'ի խաչ և զխոցումն կողին , ոչինչ թերեհաւատեաց · զի տրտմական էին կիրքն , յորոց և միշտ կասկածէր՝ ը՟ նախապատմելոյ տ՟ն իւրոյ և վ՟դպի · այլ զյարութե՟ աւետիս բերկրաւէտ՝ զոր 'ի նոյն ականատեսից և յառաւել բազմութե՟ վկայից լսէր , և նոյնօրինակ ակն ունէր ը՟ յառաջագոյն ասելոյ տ՟ն , դժուարանայր հաւատալ · յայտ է թէ առ առաւելութե՟ փափաքանաց տեսութե՟ն և 'ի գեղեցիկ բարենախանձութե՟ · ոչ ասէր ցաշակերտակիցսն , թէ դուք չասէք զճշմարիտն , այլ թէ ես ոչ հաւատամ · էր մտ՟ · զի դուք տեսիք , և ես ոչ · դուք վայելեցիք , ես զուրկ մնացի · և ահա մեռանիմ յերդիծանաց սրտիս , եթէ ոչ տեսից և ես ։

Առ այս 'ի դէմս ածելին արդեօք առաքե՟լք · զի՞ գործես Թովմաս · եթէ ընտանիդ և աշակերտդ անհաւատանաս , զիա՞րդ հրեայք և օտարք հաւատասցեն · եթէ առաքեալդ և սիրելիդ չընդունիս զլուր յարութե՟ն , ի՟բր ընկալցին զայն խաչահանուք և թշնամիք . և եթէ մեք զաշակերտակիցդ մեր չկարեմք հաւանեցուցանել , ո՞ւր տեղի գտանիցեն բանք մեր 'ի լսելիս հեթանոսաց և արտաքնոց առհասարակ . ո՞չ յիշես զայնչափ սքանչելիս երկնաւոր վրդ՟պին մերոյ . ո՞չ նոյն տ՟ր է՝ որ զմեռեալս յարոյց , և զղազար չորեքօրեայ զիւր բարեկամ և զմեր , և զանձնէ վկայեաց յառնել յաւուր երրորդի . և ահա բանքն արդիւնք եղեն , զոր և աչօք մերովք տեսաք և ձեռօք շօշափեցաք . և դու դժուարի՞ս 'ի հաւատալ :

Հաւատարիմ են բանքդ՝ ասէր Թովմաս , այլ ես չկարեմ հաւատալ . մի՛ համարիք զիս կամակոր և անլսող , այլ տո՛ւք իրաւունս փափաքանաց սրտիս . տո՛ւք իրաւունս և բանից իմոց 'ի պ՟տնի բանից ձերոց . ո՞չ ապաքէն դուք դովին այդո՛ւրիկ ունիք հաւանեցուցանել զհրէայս և զհեթանոսս , զի ականատես վկայս ասէք զանձինս յարուե՟ վրդ՟պին տիեզերաց , և շօշափօղս ձեռօք 'ի վ՟ր բանին կենաց . իսկ ինձ ո՞ հաւատայցէ , երբ 'ի լրոյ խօսեցայց՝ առանց տեսոյ և շօշափման . և միթէ ես միայն յետնեալ գտայց քան զա՟մ առաքեալս . արդ որ՟պ դուք տեսիք և հաւատացիք , որով և զայլս համարձակիք հաւատացուցանել , նոյնպէս և ես կամիմ տեսանել՝ զի հաւատացից և հաւատացուցից : Եւ եթէ տ՟րն իմ և վրդ՟պ համարի զիս իւր աշակերտ՝ որ՟պ զձեզ , լցցէ աներկբայ և զփափաքումն սրտի իմոյ . և ցուցցէ ինձ զդէմս իւր քաղցր , և զնշանակ կենարար վիրաց և խոցուածոյն . զայս առէք և յորդ արտասուօք

Թախանձէք զլրումն տենչանաց սրտին :

Զայսպիսի ըղձափափաք և բարի տենչումն Թովմայի գիտելով և երկնաւոր վդ՟պին , յետ զեօթնեակ մի խորատելոյ զնա անտեսութ՟՝ զի ուսցի չմնալ արտաքոյ միաբան ժողովոյ եղբարց , և ոչ անլուր լինել միաձայն վդ՟պութե՟ աշակերտաց իւրոց , եկից տիրաբար զկարօտ նր՟ յաւուրն ութերորդի . և առէ ցնա առաջի առաքելոց . * բե՛ր զմատունս քո , և ա՛րկ այսր . և տե՛ս զձեռս իմ . և բե՛ր զձեռն քո , և մխեա՛ 'ի կողս իմ . և մի՛ լինիր անհաւատ , այլ՝ հաւատացեալ || : Ո՜ ո՞ կարէ պատմել զայնր ժամու կիրս խնդութե՟ և սիրոյ զեղե՟լ զԹովմայիւ . որ ոչ ամօթոյ ինչ իրս վարկանէր զՏ՟ն յանդիմանութի՟ , այլ սիրողապէս ը՟ունէր ո՟պ պապաքեալ ծարաւի՝ զզովացուցիչ աղբիւրն կենդանութե՟ . և անդէն վաղվաղակի իբրև ծառ ոռոգեալ և դալարացեալ՝ զարդիւնս անգամ պտղաբերէր կենդանի հաւատոյ , գոչելով սրտիւ և բերանով . * Տ՟ր իմ , և Ա՟ծ իմ || : Այս է , հաւատացի և հաւատամ , զի նոյն Տ՟ր ես՝ որ կամաւ յանձն առեր զմահ խաչի տնօրինաբար , և յարեար անդրէն Ա՟ծաբար . ոչ ես յերկուանամ ը՟ յարութի՟ քո՝ յարութի՟ մեր և կեանք , այլ աներկբայ հնչեցուցանեմ զփող յարուե՟ իբրև ականատես 'ի լսելիս համօրէն տիեզերաց :

Իսկ փրկիչն 'ի վ՟ր՟ եած ․ * այդ զի տեսերդ զիս , և հաւատացեր ․ երանի՛ որոց ոչ իցէ տեսեալ , և հաւատասցեն ‖ ։ Որով բանիւ՛ կրկին խրատ լուսաւորութ՟ե ընկալաւ հաւատարիմ աշակերտն 'ի բերանոյ երկնաւոր վ՟դ՟պին՝ վ՟դ՟պել 'ի մխիթարութ՟ի մեզ հաւատացելոցս ․ քանզի և զայն բան իբրև զէն զօրաւոր 'ի ձեռին ունէր այնուհետև երանելին Թովմաս առ 'ի հաւատարիմ առնել ամենեցուն զառաքելականն քարոզութ՟ի ․ զի թէ չէր տ՟ն զայդ ասացեալ , կարօղ էին լսօղքն յարու՟ե 'ի Թովմայէ՝ 'ի դէմս ածել նմա , եթէ որպ՟ս դու նախ տեսանել կամեցար , և ապա հաւատալ , նոյնպէս և մեզ տու՛ր տեսանել նախ զք՟ն , և ապա հաւատասցուք ։ Այլ Թովմաս ուսեալ 'ի տ՟նէ զարժանաւոր պ՟խ՟նին՝ զնոյն երկրորդէր ․ երանի՛ ձեզ՝ երբ առանց տեսութ՟ե ընծայէք հաւատս , ը՟ անսուտ վկայութեան տ՟ն իմոյ և վ՟դ՟պի ․ քանզի և հաւատք գլխովին՝ է յանդիմանութ՟ի աներևից ․ հոգւոյ աչաց է տեսանելի , և ո՛չ մարմ՟նոյ ․ ապա այն անցք՝ որ ը՟ իս անցին , 'ի խրատ և 'ի վ՟դ՟պութ՟ի են հասարակաց ․ և նոյն տ՟ր՝ որ ասաց ցմեզ , երանի՛ աչաց ձերոց՝ որք տեսանեն զիս , և ականջաց ձերոց՝ որք լսեն զբանս իմ , ասաց և առ իս 'ի դէմս բոլորեցունց ․ երանի՛ որոց ո՛չ իցէ տեսեալ , և հաւատասցեն ։

Իսկ արդ՝ ո՛վ տ՟մ ք՟ի , նոյնպէս և տ՟մ առաքելոց՝ քարոզչաց բանին , մեծամեծ բարեաց առիթ եղև այն անցք Թովմայի ․ զի առաւել հաստատեցան 'ի հաւատս յարութե̄ , և առաւել ուսան զօրինակ հաստատելոյ զայլս 'ի նոյն հաւատս ճշմարտութե̄ : Այլ ոչ անգոսնեսին զերանելին Թովմաս վ̄ իրացն եղելոց , այլ առաւել շնորհ ունէին նմա . զի նորին պատճառաւ արժանացան կրկին տեսութե̄ փրկչին , և լսելոյ զկենարար վ̄դպուն̄ նր̄ . Թող զի առաւել շահ եղև աշակերտաց լսելն 'ի բերանոյ Թովմայի զբազմայայտ խոստովանութ̄ի գեղեցիկ դաւանութե̄ս , * տ̄ր իմ և ա̄ծ իմ|| , քան զկարծեցեալ զայթակղութ̄ի նր̄ ընդ անագան հաւատալ նր̄ բանի յարութե̄ :

Այլ նա ինքն ս̄բն Թովմաս՝ որ առ ժամ̄ն երևեցաւ իբրև տկարագոյն քան զայլ առաքեալս , յայնմհետէ ցուցաւ զօրագոյն քան զամենեսին . և ետ զանձն 'ի քարոզութիւն աւետարանին յետ ընդունելութե̄ հոգւոյն ս̄բյ՝ ա̄մ համարձակութ̄բ և անխոնջ վաստակասիրութ̄բ . զի ոչ ոք իբրև զԹովմաս շըրջեցաւ յաշխարհս հեռաւորս և բազումս :

«Քանզի ը̄ միաբան աւանդութե̄ հարց և վկայագրաց՝ յորժամ վիճեցան առաքեալք ը̄ ազգ ա̄մ 'ի քարոզել զաւետարանն ա̄մ արարածոց ը̄ իւ̄ն բանի , եհաս վիճակ ս̄բյն Թովմայի գնալ 'ի Հնդիկս . ուստի պէտք եղեն նմա յածիլ քարոզութ̄բ ը̄ բազում ազգս անծանօթս 'ի սահմանս արևելից . վ̄յ ասի , թէ քարոզեաց պարթևաց և մարաց , պարսից և կրմանաց , բակտրիացւոց և մոգուց կամ բնակչաց երկրին մարգաստանի , և ա֊

բևեռեան Հնդկաց մինչև ՚ի սինէացիս ․ ընդ ամ տեղիս առնելով նշանս և արուեստս անուամբն քի , և դարձուցանելով զբազումս , և կարգելով պաշտօնեայս ՚ի տեղիս տեղիս ։ Շրջեցաւ ասեն և յեթէովպացւոց ՚ն , որ և Հնդիկք կամ խափշիկք կոչին ․ գնաց ասեն և ՚ի գաւառս երից թագաւորաց , զի երջանիկ մոգուց եկելոց յերկրպագութիւն ծննդեանն քի ․ և գտեալ զնս մկրտեաց ․ և աշակերտեալ ինքեան՝ արար գործակիցս իւր ՚ի քարոզութի աւետարանին ․ և այս թերևս յառանձին հրամանէ փրկչին ․ զոր օրինակ և զմասնաւոր խոստումն տն առ աբգար հաւատացեալ արքայ հայոց՝ սա ինքն սբն Թովմաս փութացաւ լնուլ՝ իբրև նոտար և գործակալ տն իւրոյ և վրդպի ․ զի որովհետև ՚ի ձեռն Թովմայի գրեաց տրն մեր զպխնի Թղթոյն աբգարու , նա ինքն սբն Թովմաս խնամ կալաւ անյապաղ կատարել զբան տն՝ առաքելով յեդեսիա զեղբայր իւր զսբն Թադէոս ։ Սա ինքն իսկ Թովմաս էանց ընդ այն տեղիս՝ ընդ միջագետս հայոց և ասորւոց , և ճանապարհ արար ընդ ՚ն ասորեստանեայց ՚ի գնալ իւրում ՚ի խորին արևելս մինչև ՚ի Հնդիկս , հաստատելով ՚ի զանազան տեղիս եկեղեցիս և քահանայս ․ որոյ վն իսկ ասորիք և քաղդէացիք կոչեն զաթոռ պատրիարգութե իւրեանց իբրև աթոռակալութի սբ առաքելոյն Թովմայի , զոյգ ընդ Թադէոսի և բարթողիմէոսի լուսաւորչացն հայաստանեայց ։ Այլ առաւել իրաւամբք Հնդիկք ճանաչեն

զսբն

զսրբն Թովմաս իբրև սեպհական առաքեալ իւրեանց . զի անդ կատարեաց զընթացս քարոզութե իւրոյ . և անդ կատարեցաւ յաւուրս մժդեհի արքայի հնդկաց՝ խոցեալ գեղարդեամբ 'ի չորից զինուորաց , ոպ դնեն ամ վկայագիրք՝ 'ի քաղամիդիս կամ 'ի կաղամինայ քաղաքի , որ և մալապուր քաղաք 'ի նարսինգայ գաւառի հնդկաց՝ քանի մի մղոնաւ հեռի 'ի մադրասայ , երևելի ուխտատեղի գերեզմանի սբ. առաքելոյն մինչև ցայսօր , կոչեցեալ քաղաք սբյն Թովմայի (3) ։ Բայց թէ զիա՞րդ գտաւ 'ի յետին ժամանակս յիշատակ նր գրեալ 'ի վաղուց 'ի հրաշաւոր խաչի , արձանագրեաց արժանահաւատ պատմաբանն հնդկային անցից՝ հերոնիմոս օզորիոս լիզբոնացի՝ եպս սիլվայ , այր երևելի՝ կիկերոն լուսիտանացւոց կարդացեալ , որ մեռաւ յամի տն 1580 . և այս բանք են նր՝ յառաջ բերեալ 'ի բարոնիոսէ յամի . 57 . համար . ճժէ ։

* 'Ի նմին քաղաքի՝ որ ը ասացելոցս մալիպուր կոչէր , և այժմ յետ սկսանելոյ լուսիտանացւոց յաճախել անդր՝ քաղաք սբյն Թովմայի կոչի , շինեալ կայր մատուռն մի 'ի բլրին . քանզի հաստատէին բնակիչք տեղւոյն , թէ 'ի նմին վայրի սպանեալ իցէ Թովմաս 'ի թշնամեաց կրօնի ։ Եւ էր այս ինչ օրէնք հանդիսացեալ , զի 'ի նմին մատուռն՝ ութ աւուրբք յառաջ քան զծնունդ քսի ժողովէին քրիստոնեայք ամ , և մատչէր ածային պատարագ ։ Եւ էր գտեալ հնգետա-

տասան ամօք յառաջ ՚ի նոյն բլուր՝ խաչ մի վիմափոր. յորոյ ՚ի գագաթան կայր պատկեր աղաւնւոյ. իսկ պատուանդանն էր ՚ի նմանութ՟ի մարգագետնոյ. և ոպ՟ գագաթն՝ նոյնպէս և թևքն և պատուանդանն շուշանաձև վերջաւորօք ։ Եւ շուրջ պատէր զխաչն ողջոյն կամար աղեղնաձև ՚ի նմին քարէ. իսկ ՚ի կամարի անդ փորագրեալ կային նշանագիրք, զորս ոչ ոք բաւական լինէր ընթեռնուլ ։ Այս կազմած բովանդակ՝ որ ունէր զբաւական մեծութ՟ի, ՚ի ձեռն բազմութ՟ե բարձեալ կանգնեցաւ ՚ի վ՟ր խորանի նոյն մատրան. և էր տեսանել ՚ի խաչի անդ երևելի նիշս արեան ։

Արդ՝ դէպ եղև, զի յաւուր՝ յորում ժողովեալն հաւատացեալք ՚ի տօնախմբել ՚ի նմին եկեղեցւոջ զաւետաբեր ողջոյն հրեշտակին առ ամենասուբ՟ կոյսն, ութ աւուրբք յառաջ քան զծնունդն քն՟ի, այն ինչ քահանայն՝ որ պատարագէր, սկիզբն արար աւետարանի, խաչն ՚ի գոյն թուխ յեղափոխէր, և աւիշկ իմն անհաւատալի յորդութ՟բ բղխէր ՚ի նմանէ. ապա գոյն սեւութ՟ե յերկնագոյն կապուտակ դարձաւ. իսկ ՚ի տեղիսն՝ յորս նիշք արեան կային, մարգագոյն փայլումն նշողէր ։ Եւ յայնհետէ ամյամէ նոյն սքանչելիք երևելին միշտ ՚ի նմին աւուր. քանզի՝ որ մեծամեծս զարմանս բերէր, ոչ յայլ օր երևէր նշանս այս ՚ի խաչի անդ. և քանզի առժամանակ մի դադարեաց, զարմանք կալաւ զամենեսին ։

Իսկ յամի 1561 · յորժամ ժողովեցան քրիստոնեայք 'ի նոյն տեղի նովին հանդիսիւ և տօնախմբութե՟ , յայնմ աւուր՝ յորում խաչն սովոր էր ցօղել զշիթս , 'ի ժամ պատարագի 'ի սկզբան աւետարանի , որ և այն էր զարմանալի՝ զի ոչ երբէք նախ քան զընթերցուած աւետարանին լինէր փոխումն այն խաչին , սկսաւ յանկարծակի խաչն 'ի վէր երևեցուցանել բիծս սեաւս , բայց լուսափայլս · մինչև առ փոքր փոքր ծաւալեալ գունոյն՝ ողջոյն թխատիպ լինէր · և այնպէս շողայր՝ ոպ՟ թէ խուղովիցէ օծել : Ապա սկսան շիթք հոսել 'ի նմանութի՟ ցօղոյ · որք երթալով երթային և յորդէին , մինչև զխաչն բովանդակ տամկացուցանել առատութ՟ խոնաւութե՟ : Կատարեաց քահանայն զպատարագն արտասուօք և ստէպ հառաչանօք · յետ այնորիկ ել 'ի խորանն , և որք կտաւօք սրբեաց զխաչն · և ահա կտաւքն ներկեցան արիւնագոյն պիսակօք : Յայնժամ սկսան խիստ քաղաքին և մեծ բազմութի՟ ժողովելոցն ձեռս յերկինս ամբառնալ , և կարդալ զանունն ք՟ի , թողութի՟ խնդրել յանցանաց , և յեռանդն մեծ բորբոքիլ ա՟ծպաշտութե՟ : Իսկ խաչն յետ բղխելոյ զաւիշկ բազում՝ սկսաւ առաւել պայծառանալ , և գոյն արեան ևս քան զևս յայտնի լուսափայլէր : Նշանս այս շարժեաց զքաղաքապետն և զաւագ քահանայն՝ 'ի խնդիր լինել փութով պնդութե՟ , եթէ գտանիցի ոք՝ որ կարող իցէ թարգմանել զայն նշանագիրս :

Ըսեն ընակքն. 'ի տ͞րութե͞ Նարսինգայ կայ բրահմին ո͞մն գերազանցեալ քան զա͞մ բրահմանս գրով եւ հմտութ͞բ, որ գիտակ իսկ է լեզուաց բազմաց: Կոչեն վաղվաղակի զայրն, եւ հարցանեն' եթէ ճանաչիցէ՞ արդեօք զայն տառս: Նա ետ պ͞խնի. այս նշանագիրք են վաղեմի, որովք վարէին իմաստունքն առաջինք. այլ առ պղերգութե͞ մարդկան կորեաւ ծանօթութի͞ ն͞ց: Թող զի եւ զբարբառն' որով գրեալ են, առ կարի սակաւս է գտանել: Յայնժամ ասացին բրահմանին' 'ի խորանն եղանել: Նա ը͞դդէմ դարձաւ, եւ անարժան գործ ապիրատութե͞ ասէր լինել' կոխել ոտից մարդոյ 'ի սեղանն, յորում ա͞ծայինն կատարի խորհուրդ: Բայց բռնադատեալ 'ի հարկէ իրացն' միջամուխ եղեւ, եւ ընթերցաւ զնշանագիրսն, որոց այսպիսի է ասէ գրութի͞, զի մի նշանագիր դնի փոխան տասն եւ հնգետասան եւ քսան տառից (այս է' փոխանակ ամբողջ բառի' ո՞չ առ սինէայցիս). իսկ իմաստ գրենոյն այն է, թէ Թովմաս ա͞ծարեալ այր առաքեցաւ յորդւոյն ա͞յ, որոյ էր աշակերտ, 'ի կողմանս յայսոսիկ' 'ի ժամանակս սեգամայ արքայի, ուսուցանել ազգացն այնոցիկ զգիտութի͞ մեծին ա͞յ. եւ տաճար կառոյց աստանօր, եւ գործս սքանչելիս գործեաց. եւ 'ի վախճանի' յորժամ ծունր եղեալ առաջի խաչին' աղօթս մատուցանէր առ ա͞ծ, 'ի բրահմանէ ումեմնէ խոցեցաւ գեղարդեամբ. եւ մնաց խաչս այս ներկեալ արեամբ ս͞բյ առն 'ի յաւերժական յիշատակ առաքելութե՟ նր՟ ։ Այս իմաստ էր բովանդակեալ 'ի նշանագիրս անդ ։ Առաւել եւս հաւատարմացոյց զիրսն և այլ ոմն այր 'ի նոյն աղանդոյ՝ որ այլուստ կոչե՟լ եղև, հին աւուրց և մեծանուն յիմաստութե՟ մասին · ք՟զի և նա 'ի նոյն միտս թարգմանեաց զայն տառս ։ Արդ՝ զայսր խաչի զօրինակ ունիմ առ իս (ասէ վիպասանն), փորագրեալ 'ի վերայ նոյնպիսի փայտի՝ յորմէ շինե՟լ է ասեն եկեղեցին այն, հանդերձ վաւերական թղթովք և կնքովք վկայութե՟ նորանց բազմաց ։ Իր՟ւ իրացս հաւատարմութ՟ի այնչափ ցուցակութե՟ք հետազօտեալ եղև յայնժամ, մինչ զի անմարթ է ումեք երկուանալ ընդ այնչափ յայտնի և հաստատուն յիշատակս ճ՟մարել տան ‖ ։

Վ՟ն նշանաւոր խաչի և արձանագրի սբ՟ առաքելոյն Թովմայի գտելոյ 'ի Հնդիկս՝ այսչափ ։ Իսկ յաղագս մարմնոյ նր՟ միաբան աւանդեն ամ՟ վկայաբանք և մատենագիրք, թէ զառաջինն թաղեցաւ անդ 'ի Հնդիկս 'ի կաղամինա կչ՟ 'ի մալապուր քղ՟քի · բայց 'ի նոյն իսկ աւուրս աշակերտ առաքելոյն քսանթիկոս անուն եբարձ զայն անտի, և բերե՟լ ամփոփեաց 'ի միջագետս յեդեսիա քաղ՟քի · և անդ էր 'ի չորրորդ դարու, ոպ՟ վկայեն ականատես պատմաբանք, յեկեղեցին շինեալ յանուն նորին սբ՟յն Թովմայի ։ Բայց քանզի գերեզմանն նր՟ էր 'ի Հնդիկս, նաստուռի բնակիչք Հնդկաց կարծէին և դնչխարս սբ՟յն անդ լինել · և նովին սուտ կարծեօք լուսիտանացիք ումանք յանցեալ դարու բարձին ոսկերս ինչ յանուն Թովմայի, և տարան 'ի գոա կղզի. զոր ոչ ոք յիմաստնոց վաւերական գրէ. իսկ այլ մատենագիրք անյիշատակ թողուն, թէ ստոյգ նշխարք նորին Թովմայի յետ փոխադրութեան 'ի Միջագետս՝ զի՞նչ արդեօք եղեն յապա ժամանակս ։ Եւ ահա առ մեզ միայն գտանի հին յիշատակ իրացս ընդարձակ պատմութիւն՝ որ 'ի Ճառընտիրս, թէ մարմին սուրբ առաքելոյն փոխադրեալ եղև զկնի յերկրէն Միջագետաց յերկիրն Հայոց (4). արդ ժա՛մ է լսել զբանս Ճառընտրաց ։

ԳԻՒՏ ԵՒ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Նշխարաց սուրբ առաքելոյն Թովմայի ։

Ճառընտր. Ա. Նշէ=Նիս ։ և Բ. յՃԿ=յԷ ։

Մի ոմն յաշակերտաց սուրբ առաքելոյն Թովմայի՝ Քսանթիկոս անուն, որ ընդ իւր իսկ երթեալ էր 'ի Հնդիկս, այր բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ, ազգաւ ասորի 'ի Միջագետաց, և սարկաւագ ձեռնադրեալ յառաքելոյն, և չարչարակից լեալ նմին յամենայն անցս, յետ կատարման նորին Թովմայի՝ առեալ 'ի գիշերի զսուրբ և զպատուական նշխարս նորա՝ գնաց փախստեամբ յերկրէն Հնդկաց, և եկեալ բնակեցաւ 'ի Միջագետս ասորւոց՝ ընդ իւր ունելով զգանձն պատուական. և սպասաւորէր 'ի ծածուկ սուրբ ոսկերացն, որ վա-

վայելէր նր՟ սրբութե՟ն ։

Ապա յետ ժամանակի փոխի յաշխարհէս քսանթիկոս բարի խոստովանութբ՟՝ թողեալ զնր՟ նշխարսն հաւատարիմ և սրբազան քեռն իւրոյ և այլոց կանանց , որք ծածկաբար սպասաւորէին նր՟յն ։ Մինչև յետ դարուց անցելոց՝ առ մեծն կոստանդիանոսիւ 'ի փայլել տիեզերաց քրիստոնէութբ՟՝ յայտնեցաւ զօրութիւն հրաշալի նշխարաց սր՟ առաքելոյն Թովմայի . և առնէր մեծամեծ սքանչելիս ամենեցուն՝ որք հաւատով մերձենային առ նա . վ՟յ և հաւատացեալքն ևս քան զևս մեծարեցին զտեղի բնակութե՟ն նր՟ (յեդեսիա քաղաքի) . վանս կանանց շինեցին , և կարգեցին 'ի նմա կուսանս սր՟ս՝ սպասաւորել սր՟յ առաքելոյն ։

Շինեցին և եկեղեցի 'ի վկայարան նր՟յն , և շքեղազարդ պայծառացուցին զնա մեծագոյն սպասուք ։ Եւ մեծ հայրապետն սր՟ն յակովբ մծբնայ իւրովի իսկ եկեալ 'ի տեղին՝ երկիրպագանէր սր՟ և պատուական նշխարաց առաքելոյն , և յորդորէր զամենեսեան պատուել զնա ըս՟ արժանւոյն . (ոպ՟ և սր՟ն եփրեմ աշակերտ նր՟՝ որ զբազում ժամանակս զտեղի կալաւ յեդեսիա և 'ի սահմանս նր՟) ։

Եւ եղև 'ի սատակման յուլիանոսի ուրացողին 'ի պարսս՝ զօրքն պարսից յարձակեցան մինչև 'ի միջագետս ասորւոց ։ Եւ մի ոմն 'ի զօրագլխաց պարսից հանդիպեալ գտանէ զնշխարս սր՟ առաքելոյն Թովմայի եդեալ 'ի պատուական զզրոցի՝ ծածկեալ մեծագին հանդերձիւ • համարեցաւ զանձ պատուական զտանել կամ մարգարիտ գեղեցիկ • և 'ի խնդութենէ ոչ եբաց զայն առժամայն մինչև ցերեկոյն • և իբրև նսեմացաւ՝ խնդրեաց լոյս, և եբաց զգուշութ՟բ ։ Եւ իբրև ետես զս՟ր ոսկերսն, տրտմեցաւ յոյժ • և սրտմտեալ բարկութ՟բ մեծաւ՝ ընկէց զոսկերսն յոտս երիվարացն • և ինքն տրտմու՟բ նիրհեալ 'ի քուն եմուտ ։

Իսկ երիվարքն սկսան ամբոխել, և միմեանց կիցս ընկենլով զմիմեանս վիրաւորէին, խրխինջս առնէին, և դափր հատանէին, և ոչ կարէին հանդարտել և ուտել զգարմանս իւրեանց ։ Եւ էր այր մի յայլազգեացն յովսէփ (կմ՟ եուսուփ) անուն՝ դարմանիչ երիվարացն • սա իբրև ետես զեղեալսն, զարմացաւ էջ յոտս երիվարացն, և զննէր՝ թէ զի՞նչ է ամբոխիլ ն՟ց • ապա նկատե՟լ՟ե զետինն՝ տեսանէ լոյս սաստիկ ծագեալ 'ի ս՟ր ոսկերացն ։ Ապա ազդեալ նմա ո՟ճ յո՟յ՝ խոնարհեալ ժողովէր զս՟ր ոսկերսն 'ի դոյլն ինչ կապերտ • և ինքն զարհուրեալ մտախորհ լինէր, թէ զի՞նչ իցէ ահագին երևումնն ։

Եւ իբրև 'ի քուն մտանէր, տեսանէ զերկինս բացեալ զարմանալի հրաշիւք • և հրեշտակ մի ահեղակերպ տեսլեամբ 'ի նմանութ՟ի բոցոյ հրոյ իջեա՟լ կայր առ նա • կարդաց զանուն ն՟ր հեզաբար և ասէ • տես և 'ի մի՛տ առ զմեծամեծս ա՟յ, և հայեա՛ց 'ի զօրութ՟ի

ս՟ր

՚րք ոսկերացդ՝ որ կան Է՟ անարս քո ։ Յայնժամ համբարձ զաչս իւր , և տեսանէր սիւն մի հրեղէն մերձ առ իւր 'ի վերայ ոսկեղէն խարսխի՝ ահագին բարձրութ՟բ մինչև յերկինս , և խաչ մի լուսեղէն 'ի վր՟ նր՟ 'ի նմանութ՟ի ական շափիղայ . և հեռագոյն 'ի նմանէ երևէին այլ սիւնք մետասանք նոյնպէս հրեղէնք և սքանչելիք յոյժ . որոց խարիսխք հաստատեալ կային 'ի վերայ երկրի՝ իբրև զկարծր ապառաժ վէմս անշարժս և հաստատունս յոյժ . և 'ի վերայ իւրաքանչիւր սեանց երկնաբերձ երևելոց մի մի խաչ լուսեղէն յականց շափիղայ . և կամարք սքանչելատեսակք 'ի միմեանս կապեալք՝՝ 'ի գոյն զարդու սպիտակութ՟ մարգարտի . և 'ի վր՟ կամարացն այլ ջրեղէն կամար երկնագոյն , կապուտակ սառնաձև իբրև զամպ մածուցեալ՝ լի բազմութ՟բ խաչազգեստ լուսափայլ մարդկան ։

Եւ 'ի վերայ ջրեղէն կամարացն կառք ա՟ծակառք՝ զարմանատեսք՝ անիմանալիք . և որ նստէր 'ի վերայ նր՟՝ անձառելի և անպատմելի փառօք զարդարեալ . որոյ տեսիլն ըզհրեղէնսն զարհուրեցուցանէր . և սրովբէք կային շուրջ զնովաւ վեցթևեանք , որոց թևքն էին իբրև զբոց հրոյ բորբոքելոյ . և քրովբէք բազմաչեայք կային զարքունական աթոռովն՝, որք նայել ոչ իշխէին 'ի փառս ա՟ծային երևմանն ։ Եւ երկոտասան առաքեալքն երկոտասան աթոռովք նստեալ յաջմէ և յահեկէ կառացն . և յառաջին սեանէն եղանէր լոյս ահեղակերպ 'ի նմանութիւն շողոյ, եւ սլանայր յարեւելս կոյս։

Եւ հրեշտակն՝ որ իջեալ կայր առ յովսէփայ, ասէ ցնա. տեսե՞ր զսքանչելիսդ՝ որ երեւեցաւ քեզ։ Եւ նա ասէ. աղաչեմ զքեզ տէր, պատմեա՛ ինձ, զի՞նչ է ահագին եւ զարմանալի տեսիլս երեւեալ։ Ասէ ցնա հրեշտակն. սիւնդ առաջին՝ զոր տեսեր մերձ առ սնարս քո, այդ քարոզութիւն առաքելոյն Թովմայի է, որ աշակերտեաց զհնդիկս եւ զաղուանս եւ զհայս. որոյ ոսկերքն կան ընդ սնարս քո. եւ մետասան սիւնքն՝ զոր տեսեր, իւրաքանչիւր առաքելոցն քարոզութիւն է յիւրաքանչիւր վիճակս հաստատեալ։ Եւ կամարքդ լուսեղէնք 'ի վերայ սեանցդ՝ այդ ընդհանրական եկեղեցիք են՝ շինեալ 'ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից։ Եւ ջրեղէն կամարքդ երկնագոյն՝ կապուտակ՝ ամպատեսիլ՝ լի անբաւ բազմութեամբ խաչազգեցից, այդ մկրտութիւն սուրբ աւազանին է. զի լուսաւորեալքն սուրբ աւազանաւ՝ մաքրազարդ փայլեն 'ի կամարս երկնից 'ի դասս վերին Երուսաղէմի։

Եւ կառքդ ահեղակերպ՝ զոր տեսերդ, այդ Աստուածութիւն է՝ հանգուցեալ 'ի վերայ նոր մկրտելոցն եւ քարոզութեան առաքելոցն. եւ նստեալն 'ի մէջ կառացն Քրիստոս է որդին Աստուծոյ. եւ երկոտասան առաքեալքն նորա բազմեալք 'ի դատողական աթոռս, ընդ խոստմանն Տեառն՝ որ առ նոսա։ Եւ լոյսն ցոլացեալ յառաջին սիւնէդ յարեւելս կոյս, այդ քեզ առաջնորդէ յարեւելս

տա

տանել զնշխարսդ՝ որում դու արժանաւորեցար հանդիպել. և սպասաւորեսցես դմա մինչև յօր ելից քոց յաշ՟էս. և ուրանօր դադարումն առնու լոյսն ցոլացեալ յարևելս, այն է տեղի բնակութ՟ե ս՟բ. առաքելոյն. և յորժամ մերձեսցիս յաշ՟ն հայոց, մկրտեսցես յանուն հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ ։

Եւ զարթուցեալ այրն՝ հիացեալ զարմացեալ կայր իբրև զարբեալ, և ոչ գիտէր՝ թէ զի՞նչ առնիցէ ։ Ապա լոյսն՝ որ 'ի սիւնէն ցոլացաւ, յայտնապէս երևէր՝ առաջնորդել նմա. և նա յարուցեալ վաղվաղակի անյապաղ փոյթ ը՟ փոյթ գնայր զհետ լուսոյն ցոլացելոյ՝ հանդերձ ս՟բ նշխարօքն ։ Եւ իբրև եհաս լոյսն յաշ՟ն հայոց 'ի գաւառն աղձնեաց՝ 'ի տեղի մի, որ է մերձ 'ի բերդն սեղմ (կ՟մ սեմղ) կոչեցեալ, որ էր ը՟ իշխանութ՟բ տաճկաց, և առ գեղջն հողց կոչեցեալ, և անուն տեղւոյն պալի (կ՟մ պաղ) կոչի, անդանօր դադարումն առնու լոյսն. և գիտաց այրն՝ եթէ անդ է բնակութ՟ի ս՟բյն ։

Եւ էր 'ի տեղւոջն յայնմիկ եկեղեցի մի, և սպասաւոր եկեղեցւոյն քահանայ մի բարեպաշտօն և երկիւղած յա՟յ ։ Զայն տեսեալ առնն՝ յա՟յ եղեալ զպատահումն համարեցաւ. ապա մկրտեցաւ 'ի քահանայէն յայնմանէ. և կոչեցաւ անուն նր՟ յովսէփ՝ ը՟ ձայնելոյ զնա հրեշտակին. և զգեցաւ կրօնաւորական զգեստ, և բնակեցաւ 'ի տեղւոջն հանդերձ ս՟բ նշխարօքն. և անուանեցաւ տեղին պալի վանս ։ Եւ այրն յովսէփ սպասաւուորէր ՟սբյն ՚ի տեղւոջն յայնմիկ ամս վեց սրբութ՟բ և կրօնաւորական կերպիւ ։

Ապա յետ ամացն այն անցելոյ՝ նոյն տեղիւ երևէր նմա ոպ՟ զառաջինն, լոյս ցոլացեալ ՚ի նշխարացն յարևելս. և նա յարուցեալ առնոյր զնշխարսն, և գնայր զկնի լուսոյն՝ մինչև ցբլրակ մի, որ կայ հանդէպ մանակերտոյ՝ ՚ի վերայ գեղջն, որ կոչի բծիծս (կմպծիծս) ։ Եւ անդ էր բնակեալ միայնակեաց մի հրեշտակակրօն վարուք. և բնակեցաւ առ նմա այրն յովսէփ հանդերձ ՟սբ առաքելովն. և կրօնաւորէ՟ն ՚ի միասին՝ սպասաւորէին ՟սբյն արժանապէս մինչև ցօր մահուան իւրեանց ։

Եւ նախարարք ՟տէին՝ որ էին ՚ի մեծ տանէն արծրունեաց, վանս շինեցին զտեղին. և կարգեցին ՚ի նմա քահանայս հանդերձ կրօնաւորօք. և փառաւորեցին զտեղին առաւելապէս. յորում տեղւոջ բժշկութիւնք բազումք լինին ՚ի փառս ամենասբ՟ երրորդութ՟են յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Թողեալ զանվաւերական վկայութի անյայտ գրոց, ուր ասէ, սբ՟ն Թովմաս առաքեալ՝ կոչի միանգամայն և յուդա, անժխտելի կարծի վկայութի եւսեբի կեսարացւոյ, որ ասէ գոնէ ՟ը օրինակաց ինչ՝ ՚ի պատմ. եկեղ. ՟ա. 13. կմ՟ յերես. 33. ՟ը ասեմ. Թէ *յետ համբարձման
„ յ՟սի ք՟սի, յուդաս՝ որ և Թովմաս անուանեալ, առա-
„ քեաց առ աբգար զԹադէոս առաքեալ զմին յեօթա-

,, նամնից ||։ Զոր՝ ոչ կարծեմ, փոքր մի այլազգ վերծանեալ ումանց՝ անկան յայն կարծիս, թէ Թադէոս առաքեալն Հայոց իցէ մին յերկոտասանից՝ յուդաս լեբէոս անուն, որ անուանեցաւ Թադէոս։ Բայց հաստատէ զնախագրեալ ընթերցուած Եւսեբեայ և սբ̄ն Եփրեմ, որ 'ի տաղս հաւատոյ՝ առ աստւածմանեայ. հտր. ա̄. երես. 101. այսպէս նուագէ. * Հարիւրապետն հաւա-
• տաց, յուդաս Թովմաս շօշափել և զննել կամեցաւ.
• զնա գովեաց տ̄րն, զսա յանդիմանեաց վ̄դպն || Այլ գրէ ասսեման. յերես. 318. * սմին իրի բարձցի խիղճն
• Վաղեսիոսի, որ զպատմութիւն Եւսեբեան զառ 'ի դի-
• ւանէ եդեսացւոց փոխագրեալ՝ սովին պատճառա-
• նօք 'ի կասկած արկանէ, 'ի մ̄ջ ածեալ և զայն՝ թէ,
,, այլ թերևս զայս վրիպակ ասասցուք լինել Եւսեբեայ,
,, որ ընծայեալ իցէ Թովմայի զմականունն՝ զոր պարտ
,, էր տալ Թադէի։ Բայց (ասէ ասսեման) Թովմասն
• ոչ էր անուն, այլ՝ մականուն առաքելոյն Հնդկաց.
• որ նշանակէ երկուորեակ. ոչ յայտ է հմուտ եղելոց
• եբրայական և ասորի լեզուաց ||. այն է՝ որ յունարէն դիդիմոս ասի։

(2) 'Ի բազմապատիկ բանից անտի վիպաց և հին մատենագրաց և վկայաբանից կամ ճառընտրաց յայտնապէս ունիմք իմանալ, թէ կրկին էին սուտայօդ պատմութիւնք 'ի վերայ սբ̄յն Թովմայի 'ի վաղուց 'ի վեր երևեալք։ Առաջինն էր գործ աղանդաւորաց մանիքեցւոց՝ լի ոչ միայն ստապատում կեղծեօք, այլև յայտնի մոլորութեամբք և հայհոյութեամբք ընդդէմ ճշմարտութեան ուղղափառ դաւանութեան։ Իսկ երկրորդն էր գործ զտեալ 'ի ձեռն ուղղափառաց՝ թօթափմամբ 'ի մոլար վիպութեանց, բայց պահեալ ըստ պատմական մասին՝ նոյնպիսի անհեթեթ և երազապատում բանիւք։ Արդ՝ ոչ առաջինն էր դատապարտելի, նոյնպէս և երկրորդն անընդունելի՝ դասեալ ընդ երկբայական գիրս, որ ծածուկք կամ անյայտք կոչին. և սա է՝ որ գտանի ըստ մասին փոխանցեալ առ զանազան պատմիչս այլևայլ ազգաց, ոչ և 'ի ճառընտիրս մեր. յորոց ինչ ոչ կամեցաք առնուլ յայսմ մասին։ Այլ միայն դիցուք աստ զդատաստան հարց և մատենագրաց, որք զերկոցունց տեսակաց նախանշանակելոց իբրև զմիոյ խօսին ընդհանրապէս։

Սբ̄ն Աթանաս, 'ի համառօտութեան ս̄բ գրոց. հտր. բ̄. երես. 154. 'ի կարգի հակառակելի և անյայտ գրոց նորոյ կտակի Թուէ զայսոսիկ. * Շրջագայութիւնք պետրոսի. շրջ

,, ջագայութիւնք յովհաննու · շրջագայութիւնք Թովմայի ·
,, աւետարան ըս̅ Թովմայի · վկ̅այութիւն առաքելոց · կղե_
,, մեայք, յորոց Թարգմանեցան ինչ ինչ ճշմարտագոյնք
,, և ա̅ծաշունչք · այն իսկ են վերծանեալքն ||:

Սբ̅ն օգոստինոս, 'ի վ̅ր բանից տ̅ն 'ի լերին · Գիրք ա̅· համար · 65· այն է հատ· գ̅· մասն ը̅· երես· 194· խօսելով առ մանիքեցիս՝ ասէ · * Գէթ յայն գիրս՝ որոց ինքեանք
,, ընծայեն զմեծ հեղինակութիւն, 'ի միտ առցեն՝ զոր
,, ասեմքս · ուր գրեալ է, թէ առաքեալն Թովմաս
,, խնդրեաց ումեմն՝ յորմէ ապտակեալն էր, զպատիժ
,, դառն մահու, այլ պահելով շնորհի ն̅ր՝ զի խնայեսցի
,, նմա 'ի հանդերձեալն · զորոյ՝ իբրև սպանաւ յառիւ_
,, ծէ, զձեռն քանցեալ 'ի միացել̃ մարմնոյ՝ եբեր շունն
,, 'ի սեղան անդր, ուր ճաշէր առաքեալն : Այսմ գրոց
,, չէ 'ի դէպ մեզ հաւատալ · զի ոչ է 'ի կաթուղիկէ
,, կանոնի · բայց նք̅՝ քանզի ընթեռնուն զայն, և իբր
,, անվթար և ամ̃ին ճշմարիտ յարգեն, չգիտեմ որպիսի
,, կուրութբ̅ զայրագնին ը̅դդէմ մարմնաւոր վրէժխնդ_
,, րութեանց եղելոց 'ի հին կտակարանի, անգիտացեալք
,, գլխովին՝ թէ որով ոգւով յորպիսում ժամանակի
,, գործեցան ||,

Զնոյն պատմութիւն ապտակահարութե̅ (զոր գտանեմք և 'ի ճառընտիրս ինչ) 'ի նոյն անյայտ գրոց ը̅ունելեալ առ մանիքեցիս՝ երկրորդէ նա ինքն օգոստինոս յայլևայլ տեղիս, միշտ կոչելով զայնպիսի գրուածս՝ կարկատուն առասպելս յօդեալս յանուն առաքելոց 'ի մանիքեցւոց, և տարագրե̅լս յեկեղեցական կանոնէ սբ̅ գրոց:

Գելասիոս հռովմայ հայրապետ յաւանձին ժողով եօթանասուն եպ̅սաց՝ յամի տ̅ն · 494· վ̅ս որոշման ս̅բ գրոց յանյայտից, այսպէս ունի 'ի է̅ հատ· ժողովոց · երես· 150· * Գործք յանուն Թովմայի առաքելոյ՝ գիրք · ժ̅ · ան_
,, յայտք · · · · Աւետարանն յանուն Թովմայի՝ որով_
,, վարին մանիքեցիք, անյայտ · · · · Գիրք ա̅մ՝ զորս ա_
,, րար լեւկիոս (կմ̅ լուկիոս) աշակերտն սատանայի,
,, անյայտ · · ·, Յայտնութի̅ն՝ որ կոչի Թովմայի առա_
,, քելոյ, անյայտ || · Նոյնպէս թուէ և զայլ գործս և զաւետարանս յանուն այլոց առաքելոց, և զայլ գրուածս ինչ պատմականս, զորոց չէ աւելորդ ասել:

Ըստ պատմելոյ սբ̅յն եպիփանու 'ի հերձ· կէ· և կ̅ա, ըս̅ և թէոդորետոսի և այլոց, (զորս յիշէ ասսեման· հատ· գ̅· երես· 28·) մանի առաջնորդ մանիքեցւոց չար աղանդոյն՝ ժողովեաց իւր աշակերտս երկոտասան, կամելով

անօ_

անօրէնին իբրև զկապիկ՝ զօրինակ յանձին բերել ջանի , միանգամայն և մխիթարիչ հոգի զինքն կարդալով պատրել զպարզամիտս . և զի արևելեայք առաքեալ իւրեանց ճանաչէին զս՟բն Թովմաս և զս՟բն Թադէոս , որ է ասորւոց Ադդէոս , երկոցունց 'ի սուտ առաքելոց իւրոց անուն եդ՝ Թովմաս և Ադդաս . և յղեաց զն՟ս 'ի տեղիս քարոզութե՟ն համանուն առաքելոց , այսինքն 'ի միջագետս և յասորեստան՝ մինչև 'ի հնդիկս : Եւ այս սուտանուն Թովմաս մանիքեցին ասի լինել հեղինակ սուտ աւետարանին , զոր յանուն Թովմայի առաքելոյ ունէին մանիքեցիք :

Փոտ 'ի ՄԱՏԵՆԱԳՐ . ՃԺԴ . ԵՐԵՍ . 291 . յիշէ զգիրս Լեւկիոսի կամ Լուկիոսի Քարինոսի , որ կոչիւր ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆՔ ԱՌԱՔԵԼՈՑ . ուր կան ասէ գործք (այսինքն վարք) պետրոսի , յովհաննու , անդրէի , և Թովմայի՝ լի յիմարական և ը՟դիմաբան պատմութե՟ք . զոմանս մոգ կոչէ (ասէ) չար ա՟ծ հրէից , և զք՟ս բարի . զոր համարի միանգամայն հայր և որդի . ոչ եղև ասէ ճշմարիտ մարդ , այլ առ աչօք , և այն 'ի պէսպէս կերպարանս երևեալ , երբեմն մանուկ , երբեմն ծեր , և այլ երբեմն երիտասարդ . մերթ կարճահասակ , և մերթ երկայն մինչև յերկինս . ա՟պ և ոչ համարի զք՟ս խաչեալ , այլ զայլ ոմն փոխանակ ն՟ր . մերժէ զօրինաւոր ամուսնութի՟ . զա՟մ որդեծնութի՟ չար ասէ . զմարդկան և զանասնոց յարութիւն պատմէ ծաղրականս . և արհամարհ ցուցանէ զպատիւ պատկերաց . * Եւ պարզաբար ասել . բովանդակ մատեանն յինքեան բովանդակէ բիւր բանս տղայականս և անկարծելիս , չարարուեստս , սուտս , յիմարականս , միմեանց հակառակս , ամպարշտականս և անա՟ծս . զոր թէ ոք աղբիւր և մայր ամ՟ հերձուածոց ասիցէ , ոչ վրիպէ արդեօք 'ի ճշմարտութե՟ || :

Որ տեսանես , զի փոտ զբուն աղանդաւոր գիրսն է 'ի ձեռս բերեալ , և զայնմանէ խօսի . իսկ հարք և այլ մատենագիրք հնրկօրէն զմիւս տեսակ գրոցս ակնարկեն , որ թօթափեալ էր 'ի մոլորութե՟ց , և գրեալ ըստ պատմական մասին , զորոց զնշմարանս է տեսանել առ բազումս , բայց առաւել առ ասորիս : * Լուիցուք արդ ,, ասորւոց (ասէ ասսեման ասորի . հատ . Գ . եր . 30) : ,, Ամ՟ ուրեք հաստատեն , թէ Թովմաս քարոզեաց հնդկաց . միայն թէ 'ի շրջագայութե՟ց ն՟ր յօդելոց 'ի ղուկայ կամ 'ի ղեւկիոսէ կարինոսէ ինչ ինչ առասպելս ,, փոխադրեցին 'ի գիրս իւրեանց : Զոր օրինակ այն ,

,, ղի ասի, թէ Թովմաս 'ի ք՟է վաճառեալ իցէ ումեմն
,, աբանոսի վաճառականի, և ը՟ նմա երթեալ 'ի Հնդիկս.
,, և թէ յանձին կալեալ իցէ շինել պալատ արքային
,, Հնդկաց. և որ 'ի սոցին սակի. որք ոչ միայն յասորւոց,
,, այլև 'ի յունաց ժամագիրս. 'ի հոկտ. 6. յարամրի
,, 'ի ներքս մտին ||. Նոյնպէս և առ արաբացիս, մառոնիս,
և հայս: Յաւելու Ասեմանն, թէ * ասուի է
,, ծագումն առասպելաց ձողոյն կ՟մ քանոնի հիւսանց,
,, որով սովոր են պատկերահանք նկարել զսբ՟ն Թովմաս ||.
կարէր ևս ասել. թէ չփոխեալ են ը՟ գեղարդեանն՝ որով խոցեցաւ սբ՟ առաքեալն. որ ը՟ունելին է
ամենեցուն:

(3) Միաձայնին հարք և մատենագիրք վ՟ս գնալոյ սբ՟յն Թովմայի 'ի քարոզութ՟ն 'ի հեռաւոր սահմանս արևելից մինչև 'ի Հնդիկս, ուր կատարեցաւ. ո՟պ սբ՟ն դորոթէոս գրէ. * Թովմաս առաքեալ՝ պարթևաց և մեդացւոց
,, (ո՟պ մարաց) և պարսից և գերմանացւոց (ո՟պ կրմանաց)
,, և բակտրիացւոց և մոգուց քարոզեաց զաւետարանն
,, ք՟ի: Կատարի 'ի քաղաքի Հնդկաց, որ կոչի
,, բաղամիդիս ||: Եւ հիւպողիտոս. * Թովմաս՝ պարթևաց,
,, մարաց, պարսից, վրկանաց, բակտրացւոց,
,, մոգուց քարոզեալ, տիգահարեցաւ ը՟ չորեսին կողմանս
,, իւր 'ի կալամինա քաղաքի Հնդկաց. և անդ թաղի ||: Այնպէս խօսին և այլք 'ի նախնեաց, առաւելապէս զՀնդկաց աշխ՟ն յիշելով. ո՟պ գրիգոր ա՟ծաբանն,
պաւղինոս, հերոնիմոս, ևն:

'Ի յետին մատենագրաց միջի համաձայն են բանք պագիոսի 'ի ծանօթութ՟իս բարոնիոսի, յամի 327. համար. 9. ուր ասէ. * Նաւարկութ՟ք նախընթաց դարու գտաւ, զի
,, սբ՟ն Թովմաս՝ ոչ միայն յաշխ՟ն պարթևաց և արտաքին
,, Հնդկաց, այլև 'ի ներքին Հնդիկս անդր քան զտապռոբան
,, քարոզեալ է զաւետարանն. ուր մարմին նր՟ 'ի
,, մալապուր քաղաքի առ գանգէսեան ծոցով գտեալ
,, եղև ... Մալիապուր քաղաքն՝ յորում վախճանեալ
,, ասեն վկայագիրք զսբ՟ն Թովմաս առաքեալ, անծանօթ
,, էր նախնի աշխարհագրաց .... Մարմին նր՟ փոխադրեցաւ
,, յեդեսիա. ո՟պ վկայեն հռուփինոս, որ գնաց
,, յերկիրն ասորւոց յամի 371. և եկաց անդ զամս ի՟է.
,, 'ի գիրսն. բ՟. գլ. 5. սոկրատ. դ՟. 14. սոզոմ. զ՟. 18. և
,, այլք յոլովք զկնի այդց պատմագրաց. որոց ձայնակցին
,, և բազում վկայաբանք ||: Ուր ոչ գիտեմ, զիարդ ասէ պագիոս 'ի կարգի անդ բանից իւրոց, թէ * նա_
,, հա_

,, հատակուն ն՟ր եղև 'ի կողմանս պարթևաց և մարաց ,
,, որք նաև հնդիկք կոչին ||· զի այդ չմիաբանի ընդ այլ
բանս իւր , որ՟պ և ոչ ե՟ բանս այլոց հին և նոր մատենագրաց · և եթէ զառաջինսն հեգնելով խօսի , իւր կարծիքն լինի ծաղրելի ։

Լուծիցուք և զաւանդութիւս արևելեան կողմանց ը՟ս ասեմանւոյ · որ 'ի հատ· Բ· երես· 387· ասէ · * Վ՟ս Թովմայի
,, առաքելոյն արևելից՝ հաստատուն աւանդութի՟ն է ասորուց՝
,, եթէ ուղղափառաց , և եթէ յակոբիկեանց
,, և նեստորականաց , զոր 'ի մէջ բերէ բարեբրէյոս ,
,, թէ զառաջինն 'ի միջագետս , և յ՟ետին քաղդէացւոց և
,, ասորեստանեայց և պարսից քարոզեաց զաւետարանն ·
,, և թէ երթեալ յետոյ 'ի համատարած ծ՟ս հնդկաց՝
,, կատարեցաւ մարտիրոսութ՟բ 'ի կալամինա ։ Արդ
,, որովհետև 'ի նախկին դարուց անտի եկեղեցւոյ՝ քրիստոնեայքն
,, արևելից , քաղդէացիք ասեմ և պարսիկք ·
,, որ էին ը՟ տ՟րութ՟բ թագաւորացն պարսից , ունէին
,, եպ՟սունս · և նախագահ և գլուխ նոցա այն էր , որ
,, նստէր 'ի թ՟զրական քաղաքսն 'ի սղակ և 'ի տիսբոն ,
,, այլ ներքոյ անկեալ անտիոքայ պատրիարգին , սորին
,, վ՟ն եթէ յակոբիկք և եթէ նեստորականք 'ի կամիլն
,, գրել զգաւազանագիրս այն՟ց աթոռակալաց , որք յետոյ
,, յարմարեցին անձանց անուանս պատուոյ պատրիարգ
,, և մաֆրիան կոչմամբ (որ 'ի վայր էր ք՟ն զպատրիարգ ·
և 'ի վեր ք՟ն զմետրապօլիտ) , անդստին 'ի թովմայէ
,, առաքելոյ և յայլոց ևս աշակերտաց առաքելոց
,, սկիզբն առնեն , որ՟պ թէ նորին աթոռոյ ն՟ց դոքա ժառանգք
,, իցեն ||։

Բարեբրէյոսն յիշատակեալ յասեմանւոյ՝ գրէ 'ի ժամանակագրութ՟ե իւրում· հատ· գ՟ · գլ· 1 · թէ թովմաս առաքեալ յորժամ անցանէր ընդ միջագետս՝ կամելով գնալ 'ի հնդիկս , քարոզեաց այլևայլ ազգաց , ը՟ն պարթևաց , մարաց , պարսից , ևն · և յայնժամ ասէ դարձոյց 'ի մոգութէ 'ի հաւատս ք՟սի զպահապանս սահմանաց թ՟գրութ՟են պարսից՝ կարգեալս յարտաքոյ արքայէ 'ի տագրիտ քաղաքէ · և էր ասէ անուն գլխաւորի ն՟ց բարհադբեսիաբ ։ Զայս բան դժուարանայ իմանալ և մեկնել ասեմանի · այլ մեզ անտարակոյս երևի , զի բարեբրէյոս պատուհասեալ է զիւրսն չփոթութ՟բ 'ի պատմութէ ս՟րց սուքիասանց եղելոց յաւուրս արտաշէսի հայոց արքայի՝ եկելոց 'ի գրանէ ալանաց · զորս դարձոյց ս՟բն թադէոս եղբայր թովմայի · և գլխաւոր նոցին բահադրաս կամ բարհատաս՝ սուքիաս կոչեցաւ. ապա թէ ոչ՝ չգիր յայնժամ արտաշիր անուն արքայ պարսից:

Հ. Սուքիաս վ̃րդն մեր աղամալեան, որ գնաց ՚ի մատրաս ը̃ Հ. Մանուէլ վ̃րդին մերոյ բերխացւոյ յամի տն̃ 1770. այսպէս նկարագրէ զուխտատեղի սբ̃յն Թովմայի ՚ի մայլապուր. * Գոն հեռի ՚ի մատրասէ իբրև երկու „ ժամաւ՝ երկու բլրաձև լերինք, մին մեծ, և միւսն „ փոքր. յորոց վ̃ր գոն եկեղեցիք ուխտատեղիք սբ̃յն „ Թովմայի առաքելոյն... Առեալ տարան զմեզ բարեկամք ՚ի լեառն մեծ, ուր տեղի նահատակութեան է „ տեառն սբ̃յն Թովմայի: ՚Ի գագաթ լերինն էր եկեղեցի մի, յորում էր հրաշագործ պատկեր ս̃բ Ածածնին, „ և խաչ մի փորագրեալ ՚ի վ̃ր վիմի, զորմէ ասեն փորագրեալ ՚ի սբ̃յն Թովմայէ. և անդ նստի հանապազ „ փատրի մի օգոստինեան: ՚Ի ստորէ լերինն արարեալ „ է սանդուխս ընդարձակս ՚ի կոփածոյ վիմաց, այլև „ կամուրջ մի մեծակառոյց առ ճ̃պհաւն՝ հանգուցեալ „ այրն պետրոսն ուսկանեան՝ ՚ի դիւրութի̃ն ուխտաւորաց. յորոց ՚ի շինուածս ծախեալ է երեսուն հազար „ ոսկի: Եւ ք̃զի եհաս ՚ի վ̃ր մութ գիշերոյն՝ (այն օր) „ ոչ ժամանեցաք երթալ ՚ի լեառն փոքր, ուր տեղի աղօթից է սբ̃յն Թովմայի. այլ եկեալ ագաք ՚ի Լոյսն „ անուանեալ տեղւոջ առ փատրի մի փրանկիսկեան. „ ուր գոյ եկեղեցի շինեալ յանուն ս̃բ Ածածնին: Եւ „ յառաւօտու յարուցեալ եկաք անտի ՚ի մելափու ՚ի „ սբ̃ն Թովմաս՝ ողջոյն տալ եպ̃սին, որ բ̃զմ սիրով ընկալաւ զմեզ՝ ո̃պ յառաջն ||:

(4) Վ̃ս վերջին փոխադրութե̃ նշխարաց սբ̃յն Թովմայի ՚ի միջագետաց ՚ի հայս՝ չունի ինչ տեղեկութի̃ ասսեման. բայց շատ է մեզ, զի հաստատէ բազմօք զառաջին փոխադրութի̃ն ՚ի հնդկաց յեդեսիա միջագետաց. տ̃ս ՚Ի հատ. ա̃. Էրէմ. 49. յետ պատմելոյ ՚ի վարուց սբ̃յն եփրեմի, թէ նա բժշկեաց զանդամալոյծ մի յեդեսիա ՚ի գաւթի եկեղեցւոյ սբ̃յն Թովմայի, գրէ ՚ի ծանօթութե̃, թէ վ̃ս տաճարիս այս՝ այս բանք գրին յեդեսեան ժմկագրութե̃ ՚ի մատեանն մեր ասորի ժ̃ը. * Յամի 705. (այն է ամ յունաց կամ եդեսացւոց կոչեցեալ, որ լինէ ամի տն̃ 394.) ՚ի ի̃ը աւուր օգոստոսի մուծին զտապան սբ̃յն „ Թովմայի առաքելոյ ՚ի տաճարն մեծ նուիրեալ նմա „ յաւուրս սբ̃յն կիւրոսի եպ̃սի ||, քսան և մի (կամ հնգետասան) ամօք զկնի մահուան սբ̃յն եփրեմի: Դար-

ձեալ գրի 'ի նոյն եդեսեան ժամագիրս. * Յամի 753.
(այն է ամ տն. 442) անատոլիոս զօրավար արար տա-
,, պան արծաթի 'ի պատիւ ոսկերաց սբյն Թովմայի ա-
,, ռաքելոյ ||: Վյ ասէ ասսեման. 'ի ծան''. Էրէս. 399.
* Զփոխադրեալ գոլն սբ մարմնոյ նր յեդեսիա՝ վկայէ
,, նաև հռուփինոս. գիրք. Բ. գլ. 5. որում ձայնակ-
,, ցին հերոնիմոս, և այլ ևս վկայաբանք: Եւ աստուստ
,, քաջ կշտամբին նեստորականքն հնդկաց, որք զրաբա-
,, նեյին՝ թէ զորին սբ առաքելոյ մարմինն մինչև յան-
,, ցեալ դար առ իւրեանս ունէին. ոպ քաջ ծանուցա-
,, նէ պագիոս յամն 327. համար. 10 ||:

Բերէ և 'ի հատ. Գ. Էրէս. 306. զասելն նեստորական հե-
ղինակի ուրուք պարծանօք 'ի դիմաց թմ արևելեայց.
* Առ մեզ են . . . մարմինն եզեկիելի մարգարէի 'ի զա-
,, բա, մարմինն դանիէլի մարգարէի 'ի շուշան. մարմինն
,, սբյն թովմայի առաքելոյ 'ի հնդիկս. սբյն թադէի 'ի
,, քաղաքն եդեսիա. նաթանայէլի (որով իմանայ զբար-
,, թուղիմէոս) 'ի հայս ||. ևն: Իսկ 'ի հատ. Բ. Էր. 46.
բերէ 'ի յիշատակարանաց ասորի գրոց, թէ գոյր վանք
սբյն թովմայի 'ի սելևկիա մօտ յեդեսիա. և յէրէս. 365.
յիշէ զեկեղեցի սբյն թովմայի 'ի մծբին՝ զանկեալն 'ի
ձեռս այլազգեաց. որպէս և այլուր՝ զայլ եկեղեցի 'ի
տագրիտ, այլ 'ի նփրկերտ. և զայլ եկեղեցի 'ի բաղտատ.
յէրէս. 254:

Եւ դարձեալ 'ի հատ. Գ. Էր. 33. բերէ զբանս բարեբ-
րեյոսի ասորւոյ, որ գրէ վն սբյն թովմայի, թէ յետ
քարոզելոյն 'ի հնդիկս, * Թագաւորն եհան զթովմաս
,, 'ի բանտէ, և հաւատաց ինքն և եղբայր նր, և բա-
,, զումք յաւագանւոյն. զորս մկրտեաց թովմաս. և
,, սկսաւ համարձակ քարոզել զաւետարանն: Այլ եւ
,, 'ի լեառն մի քարոզել անդ զաւետարանն տն. և յոր-
,, ժամ մի ոմն 'ի հեթանոսաց բնակելոց 'ի լերին անդ՝
,, խոցեաց զկողս նր տիգաւ, զսբ մարմինն նր բարձեալ
,, թաղեաց անդ (թագաւորն): Եւ ապա փոխադրեցաւ
,, յեդեսիա. և եդաւ 'ի մեծ եկեղեցին՝ որ յանուն նր
,, շինեցաւ. ոպ պատմէ երևելին կոստաս որդի ղու-
,, կասու ||:

Իսկ յէրէս. 34. բերէ յամրոսէ մատթէոսեան զաւան-
դութն նեստորականաց, թէ * գերեզման նր կայ 'ի
կղզւոջն մեյլան (այսպէս կոչեն արաբացիք զմալիապուր)
,, 'ի հնդիկս՝ յաջմէ սեղանոյն 'ի վանս նր ||. և 'ի վր
բերէ ասսեման. * Քանզի նեստորականք պնդեն մինչև

,, ցայսօր, թէ առ իւրեանս էր մարմին Թովմայի առա_
,, քելոյ 'ի մալիապոր մինչև յանցեալ դար . յորում ժա_
,, մանակի փոխադրեալ իցեն զայն լուսիտանացիք 'ի
,, գոա . . . Զայսմ աւանդութէ նեստորականաց, և ըղ_
,, բարեպաշտական դիւրահաւանութէ լուսիտանացւոց
,, չէ' տեղւոյս վիճել . միայն յուշ առնեմ, զի յայսմ մա_
,, սին ը̃դէմ դառնան լուսիտանացւոց նախնի մատե_
,, նագիրք ասորւոց, յունաց, լատինացւոց և նեստո_
,, րականաց . քանզի գրեն՝ թէ մարմին ս̃բյն Թովմայի
,, անդստին 'ի չորրորդ դարէ ք̃նի փոխադրեալ եղև յե_
,, դեսիա միջագետաց . և անդ 'ի պատիւ ն̃ր կանգնե_
,, ցաւ վկայարան հոյակապ, ուր զխմբին հաւատացեալք
,, 'ի հեռաւոր տեղեաց վ̃ն բարեպաշտութե || : Արդ՝ ո̃պ այս դրութի է անտարակուսելի, նոյնպէս և փոխադրութին յեդեսիոյ 'ի հայս չերևի իմիք տարակուսելի . զի ուր կայ առ մեզ աւանդութի պատմական՝ որոյ չիք հակառակն առ այլս, մնայ իրաւունքն ըստ իրաւաբանից՝ 'ի ձեռս ժառանգողին :

ՎԱՐՔ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ

Մեծին Մեսրոպայ վրդպի ։

Տ. փետր. 19. ևս և սեպտ. 19 ։ Կորեան. Խորենացի. Փարպեցի. և այլ ամ պատմագիրք հայոց ։

ՄԵԾ ՐԱԲՈՒՆԱՊԵՏՆ ամ հայոց՝ որն մեսրոպ կմ մեսրովբ, ճշմարիտ այր այ և առաքելաշնորհ վրդպ, անմահական յիշատակաց արժանի և երիցս տօնելի, էր ծննդեամբ 'ի տարօն գաւառէ՝ (որ և մուշ), 'ի հացեկաց աւանէ, որ և հացիկք, որդի առն ածասիրի և երանելւոյ՝ վարդան կոչեցելոյ ։ Եւ էր առաջին և սովորական անուն նր վարդապետիս՝ մաշտոց կամ մաշթոց. իսկ մեսրոպն անուն եղև յորջորջումն յաւելեալ իբրև մականուն, թերևս զկնի վրդպութեն, ոչ թէ ըստ բառին ստուգաբանելի, կամ [illegible] ։

Արդ՝ երանելիս այս 'ի մանկութեան տիսն սնեալ ամ երկիւղածութբ և բարեպաշտութբ, և վարժեալ հելլենական դպրութբ ընդ ամ կարգի գրաւորական իմաստից, միանգամայն և ասորի և պարսիկ գրոց լեալ խելամուտ՝ առ 'ի չգոյէ հայերէն դպրութն 'ի ժա-

ժամանակին յայնմիկ , աշակերտեցաւ սրբ Հայրապետին մերոյ մեծին Ներսեսի Պարթևի , և եղև նր նոտար ։ Որոյ և մահուանն առաջիկայ գտեալ՝ լսօղ եղև և մարգարեական գուշակութեց նորին . ըն որում' ի վարս անդ սրբյն Ներսեսի ըն Ճառընտրայ յայտնապէս նշանակի 'ի բերանոյ նորին մաշտոցի , ըն մեսրոպայ . վոյ և առաջին արձանագրող անցից և գուշակութեց մեծին Ներսեսի սա ինքն երանելին մեսրոպ Ճանաչի , զոր յետ ժամանակաց այլ ումն մեսրոպ անուն երէց անցոյց 'ի կարգս երկարապատում գրոց իւրոց ըն բուզանդեան ոճոյ ։

Եւ եղև յետ փոխման մեծին Ներսեսի յՏէ՝ գնաց մաշտոց 'ի դուռն արքունի , և եկաց յարքունական դիւանին 'ի ժամանակս Թագաւորացն Հայոց՝ վարազդատայ , արշակայ և վաղարշակայ , և խոսրովու վերջնոյ՝ որք սակաւ ամօք կեցին , յաւուրս Հազարապետութե առաւանայ մեծի իշխանի . և կարգեցաւ դիւանադպիր Թագաւորաց՝ վն իւրոյ բազմահմուտ գիտութե և գրաւոր Ճարտարութե . Թող զի և յաջողակ իսկ էր յամ 'ի գործս՝ սպասաւորել արքայատուր հրամանին ։ Եւ այնպէս կացեալ 'ի դրան ամս իբր եօթն՝ մինչև ցերրորդ ամն խոսրովու , քաջահմուտ և կիրթ լինէր ամ կարգի Թագաւորութե , և վարժ 'ի մարդս զինուորութե . մինչև ցանկալի լինել զինուորական արուեստին իւրոց զօրականաց , և սիրելի յաչս Թագաւորին և աւագանւոյն , ամ պատրաստու-

Թե

թ՟ճ զանձն յարդարեալ 'ի գլուխ տանել զոր ինչ և յանձն առնէին նմա 'ի գործս թագաւորութե՟։

Նաև որ մեծն է, և ա՟մ գովութե՟ց արժանաւոր, յայնպիսի ալէկոծ ժամանակի տ՟րուե՟ հայոց աշխ՟ին, և յանպարապ զբաղմանս ատենադպրութե՟ և զինուորութե՟, ոչ ի՟իք կասեցաւ երանելին մաշտոց 'ի փութոյ ա՟ծպաշտութե՟ և հոգևորական կրթանաց. այլ անդէն 'ի դրան ուշ եդեալ փութով պնդութե՟ ընթերցուածոց ա՟ծեղէն գրոց՝ որ 'ի յոյն և յասորի բարբառ, ժա՟մ պարապոյ գողանալով զցայգ և զցերեկ՝ անխոնջ դեգերէր 'ի կատարեալ հմտութ՟ի ա՟ծատուր հրամանաց. որով միշտն լուսաւորեալ պայծառանայր օր քան զօր հոգւով գիտութե՟։

Ապա ը՟ ա՟ծային գաղտնի ազդեցութե՟՝ յորմէ առ մեծամեծս էր սահմանեալ, զգուշացեալ անձին՝ զի մի՛ իշխանական փառաց և պատուոյ յորդութ՟ի յաշխ՟ի խափան լինիցի հոգւոյն ընթացից և ձոխութե՟, եդ 'ի մտի տալ զանձն բոլորովին 'ի ծառայութ՟ի երկնաւոր թագաւորին և մարդասիրին ա՟յ՝ ըստ կատարեալ չափու աւետարանական կատարելութե՟, այս է՝ մտանելով 'ի կարգ կրօնաւորական։

Մերկանայր այնուհետև զը՟ աշխ՟ի զինուորութ՟ին և զիշխանակիր ցանկութ՟իսն, և հրաժարէր յա՟մ աշխազբօս երկրաւոր զբաղմանց. և առեալ զխաչն պարծանաց՝ ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն. և հաճեալ դեգեցիկ խրատու տ՟րունեան հրամանաց՝ քաղցր լծով և թեթև բեռամբ փրկչին՝ 'ի խաչակիր գունդն ք՟սի խառնէր : Եւ վաղվաղակի 'ի վանական կարգ մտանէր 'ի մենաստան ուրեք , որ 'ի գողթան գաւառի 'ի վերնակողմն վասպուրական աշ՟ի . և ընկալեալ զկերպարանս վանականութե՟ 'ի մէջ բազմութե՟ եղբարց՝ լինէր ընտիր յա՟մի և երևելի , կիրթ յառաքինութի՟ս և փորձ յա՟մ բարեկրօնութի՟ս : Եւ ձեռնադրեալ 'ի քահանայութի՟ յա՟ծային կոչմանէ՝ առաւելոյր հրեշտակակրօն սրբութ՟ք 'ի ջերմ ծառայութիւն և 'ի պաշտօն տ՟ն ա՟յ իւրոյ . մինչև լինել ամենեցուն կենդանի օրինակ սքանչելի վարուց :

Ապա ը՟ կատարեալ կարգի յառաջադիմութե՟՝ յառաւելագոյնս միշտ բերեալ վերնապարգև շնորհօքն ա՟յ , ցանկացաւ միայնանալ յանապատ ուրեք , և առանձին ճգնել . և այնպէս յանապատական կրօնս փոխեալ՝ կատարեալ միանակեաց լինէր , և քան զա՟մ միանձունս զարմանալի երևէր և հռչակաւոր , բնակեալ 'ի քարանձաւս խստամբեր վարուք և մեծապէս առաքինուք՟ . ը՟ որում գրէ ձեռասուն յաշակերտս նորա երանելին կորիւն . ասէ . * Բազում և ազգի ազգի
,, վշտակեցութ՟ի ը՟ աւետարանին կրէր ա՟մ
,, իրաց , ա՟մ կրթութ՟ք հոգևորացն զանձն
,, տուեալ միաւորութ՟ք լեռնակեցութե՟ ,
,, քաղցի և ծարաւոյ և բանջարաճաշակու-
,, թեց , արգելանաց անլուսից , խարազնազ-
,, գեստ և գետնատարած անկողնոց . և բա-

,, զում անգամ զհեշտական հանգիստ գիշե-
,, րոյն և զհարկ քնոյ յոտանաւոր տքնուե՟ն
,, 'ի թօթափելական վճարէր . և զայս ա՟մ
,, առնէր ոչ սակաւ ժամանակս : Եւ գտեալ
,, եւ զամենս՝ յինքն յարեցուցանէր , աշա-
,, կերտեալ նմին սովորական աւետարանու-
,, թե՟ն . և այնպէս ա՟մ փորձուե՟ց 'ի վերայ
,, հասելոց կամայական քաջութ՟բ տարեալ,
,, և պայծառացեալ՝ ծանօթական և հաճոյ
,, լինէր ա՟յ և մարդկան || :

Եւ քանզի խորհուրդ մի կարևոր և օգտակար տնկե՟լ էր ա՟յ 'ի սիրտ երանելւոյն մաշտոցի՝ ձեռնտու լինել կրկին լուսաւորութե՟ ազգին իւրոյ գրաւոր վ՟դպութ՟բ և առաքելական քարոզութ՟բ , սիրով ժողովէր առ ինքն զինքնայօժար եղբարս եկեալս 'ի նմանօղ լինել առաքինակրօն վարուց նորա բարենախանձ եռանդեամբ ա՟ծպաշտութ՟ե . և այնպէս օր քան զօր բազմացուցե՟լ զաշակերտս՝ հրահանգէր զն՟ս 'ի կատարեալ վարս առաքինութ՟ե , և 'ի լուսաւոր կարգս ա՟ծեղէն իմաստութ՟ե :

Եւ իբրև ետես երանելին , եթէ յաջողեաց նմա ա՟ծ զառաջարկութ՟ի խորհրդոց իւրոց , տալով ինքեան վաստակակիցս 'ի մշակութ՟ի հոգւոց արս ընտիրս , այնուհետև անյապաղ դիմեալ իջանէր յանապատէ անտի իւրմէ աշակերտօքն հանդերձ 'ի մերձակայ տեղիս գողթան գաւառի . ուր գտանէին անձինք տխմարք և բարբարոսամիտք՝ անկարգ և անդարման կենօք՝ ը՟ առաջին գնացից հեթա-

նո

նոսութե՟ . և ոմանք ոմանք 'ի նմին իսկ 'ի կռապարիշտ օրէնս շաղեալ կային՝ դիւ՛աց և դիւ՛ական բախտից պաշտօն մատուցանելով ։ Յայնժամ ը՟ առաջ եկանէր երանելւոյն իշխանն գողթան՝ այր երկիւղած և ա՟ծասէր ը՟ աշակերտութե՟ հաւատոցն ք՟սի , և մեծաւ խնդութ՟բ օրհնէր զգալուստ ս՟բյն յայցելութ՟ի իւրոյ գաւառին ։

Իսկ երանելւոյն մաշտոցի առաւել խնդամտեալ ը՟ այն՝ վաղվաղակի զաւետարանական արուեստն 'ի մ՟էջ առնոյր , և ձեռն արկանէր զգաւառոմն՝ հանդերձ միամիտ սատարութ՟բ իշխանին , և գործակցութ՟բ աշակերտաց իւրոց , քարոզել զբանն կենաց , խրատել և ուսուցանել . և այնպէս փութանակի գերեալ զամենեսին 'ի սնոտի աւանդից հայրենեաց և 'ի սատանայական դիւ՛ապաշտ մոլորութ՟էն՝ 'ի հնազանդութ՟ի ք՟սի մատուցանէր , զպակասուն՟ ս՟բ լուսաւորչին լցեալ յանձին , և իբրև լուսաւոր աշխ՟ի երևեալ . քանզի և ո՟ր ինքնին ձեռնկալու էր ծառային իւրոյ մաշտոցի . և նշանք մեծամեծք երևէին ակնյանդիման բնակչաց գաւառին . զի ո՟պ երբեմն յաւուրս ս՟բյն գրիգորի , նոյնպէս և յայնժամ աղօթիւք ս՟բյն մաշտոցի և զօրութ՟բ ամենայաղթ նշանի խաչին՝ կերպակերպ նմանութ՟բ փախստական եղեալ դիւ՛աց՝ անկանէին 'ի կողմանս մարաց ։

Րյսոցիկ այսպէս եղելոյ մ՟ն յաջողութ՟բ՝ խղձ լինէր երանելին մաշտոց վասն գրաւորական պայծառութե՟ հայաստան աշխ՟ի . զի ուր լոյս աստուածգիտութեան ծաւալեալ էր ճ ամս երկիրն Հայոց ՚ի սրբոյն Գրիգորէ հետէ, առ ՚ի չգոյէ հայերէն դպրութեան՝ անընտել մնային ժողովուրդքն ամենայն լսողութեան աստուածային տառից, որք ընթերցեալ լինէին յեկեղեցիս յոյն և ասորի բարբառով· զոր գիտնաւորաց էր իմանալ, և ոչ բազմութեան ռամկին· ևս առաւել առանց կրթանաց գրոց գիտութեան՝ զօրանայր խակամտութիւն, և խամրանայր մարդկութիւն և աստուածպաշտութիւն ։ Ամին իրի յարուցեալ գնաց առ սուրբ կաթուղիկոսն Հայոց մեծն Սահակ Պարթև, որ այն ինչ նստեալ էր յաթոռ հայրապետութեան· և էր մտերիմ իւր և սիրելի անդստին ՚ի մանկութէ, երբ ինքն դպիրն էր հօր նորա մեծին Ներսեսի· և հրամանն առեալ ՚ի նմանէ՝ շրջէր այսր անդր ՚ի քարոզութիւն իւրովք ընկերօք· և ուր և հասանէր՝ ընթեռնոյր ՚ի լսելիս նոցա զգիրս սուրբս, և հայերէն մեկնաբանէր ։

Բայց բազում վաստակեալ ՚ի սոյն, և սակաւ սփոփանս մատուցեալ բազմութեան անհամար ժողովրդոց, հոգ ՚ի մտի արկանէր՝ զի Տէր ինքնին այց արասցէ ազգին՝ լնուլ զգրաւոր կարօտութիւն նոցա կարևոր· և վասն ստէպ հնարս զմտաւ ածէր, այլ առաւելապէս յաղօթս կանխէր մշտնջենամռունչս, և ՚ի բազկատարած պաղատանս առ Աստուած և յարտասուս անդադարս· և զառաքելականն երկրորդէր, տրտմութիւն է ինձ, և անպակաս ցաւք սրտի իմոյ վասն եղբարց իմոց և ազգականաց, զի մի մնասցեն յանգիտութեան դպրութեան, և զուրկ

՚ի

'ի գրոց մխիթարութե՟ ։

Եւ երբեւ աւուրս բազումս յայս միտս վարանէր, եթէ որպիսի արդեօք եւս իրացն գտանիցէ, յարուցեալ այնուհետեւ 'ի հինգերորդ ամի վռամշապհոյ հայոց արքայի՝ միւսանգամ հասանէր առ ս՟բ կթ՟ղկոս սահակ ։ Եւ երբեւ ծանոյց նմա զիւր խորհուրդս, եգիտ զնա առաւել քան զինքն փափաքօղ այնմ, եւ պատրաստական 'ի նոյն փոյթ գովելի ․ եւ այսպէս փորձս փորձեալ վ՟ս գիւտի գրոյ ե՟ յարմարութե՟ հայկական հարուստ բարբառոյ՝ չգտանէին ինչ առ ժամն ըստ ըղձանաց իւրեանց ․ վ՟նյ եւ երկոքեանն հանդերձ ընդակից աշակերտելովք յաղօթս մեծամեծս կանխէին առ ա՟ծ՝ վասն հասանելոյ խնդրոյ իւրեանց, զոր գիտէին լինել ամենայն ոգւոց պատճառ ք՟աբեր փրկութե՟ ․ եւ զայն առնէին աւուրս բազումս ։

Եւ յորժամ ազդ արարին վասն սոցին իրաց նաեւ բարեպաշտ արքային հայոց վռամշապհոյ, յայնժամ պատմէր նմ՟ արքայն վ՟ս ուրումն ասորի եպ՟սի երեւելւոյ՝ դանիէլ կոչեցելոյ, թէ լուայ զնմանէ յիջանել իմում 'ի միջագետս՝ եթէ ունի առ իւր նշանագիրս իմն ալփաբետաց հայերէն լեզուին, գտե՟լս ուստեք կ՟մ յարմարեալս ։ Զայս երբեւ լուան 'ի թագաւորէն, անյապաղ փափագմամբ յօժարեցին զարքայ՝ փոյթ առնել վ՟ս պիտոյիցն այնոցիկ ․ եւ նա առաքէր դեսպանութե՟ զայր ոմն յաւագաց վահրիճ անուն յազգէ խադունեաց՝ հանդերձ հրովարտակաւ առ վանական ոմն Հաբէլ երէց կոչեցեալ, որոյ ասացեալ էր յառաջագոյն ցՎռամշապուհ արքայ վասն իւրացս. որ և մերձաւոր էր Դանիէլի եպիսկոպոսի՝ առ որում նշանագիրքն կային ։ Յայնժամ փութապէս գնաց վանականն առ եպիսկոպոսն. և անձամբ տեղեկացեալ 'ի նմանէ զկարգ նշանագրացն՝ առեալ ածէր ընդ Վահրիճայ յերկիրն Հայոց. և եղև ուրախութիւն մեծ թագաւորին և սրբոյ Հայրապետին Սահակայ և երանելւոյն Մաշտոցի ։

Ապա առեալ երանելի Հոգաբարձուացս զյանկարծագիւտ խնդրելին, խնդրէին ևս յարքայէ մանկունս մատաղս՝ առ 'ի դիւրաւ ծաւալել զուսումն այս դանիէլեան նշանագրաց ։ Եւ յորժամ բազումք 'ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր թագաւորն ամենայն ուրեք նովին կրթել՝ ընդ ընդհանուր վերակացութեամբ և վարժապետութեամբ երանելւոյն Մաշտոցայ, զոր յայսմ հետէ Մեսրոպ անուանեմք. քանզի և 'ի նմին ժամանակի ընկալաւ զաստիճան վարդապետութեան 'ի սրբոյն Սահակայ Հայրապետէ, և ծանուցաւ մեծ րաբունն ամենայն Հայոց ։

Արդ իբրև ամս երկուս կարգեալ երանելւոյն Մեսրոպայ զվարդապետութիւն իւր դանիէլեան նշանագրովք, և նովիմբք վարեալ 'ի գրաւոր վերծանութիւնս և 'ի քարոզութիւնս Հայերէն բարբառոյ, 'ի վերայ եհաս տիրապէս՝ թէ չեն բաւական նշանագիրքն այն ողջ և անթերի բաղյօդել զվանկս և զկապս Հայկական լեզուոյն. մանաւանդ թէ և հետազօտեալ

տեալ եգիտ , զի ՝այն նշանագիրք յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան · զի կամէին ալփաբետք խառն 'ի յունէ և յասորւոյ՝ անբաւականք մերում լեզուի , և կիր առ նախնեօք Հայոց երբեմն հնարեալք իբրև նշանագիծս , և խափանեալք ամ̃ մթինս և անյաջողակս ։ Նմին իրի անդրէն 'ի նոյն հոգս գիւտի նոր նշանագրաց դառնայր հանդերձ սբ̃ն սահակաւ · և նմին եւս խնդրէր ժամանակ ինչ ։

Ապա աշխատութի̃ յանձն առնոյր սբ̃ վրդ̃պն մեսրոպ երթալ անձամբ առ դանիէլ եպս̃ն ասորւոց , զի թերևս աւելի ինչ տեղեկասցի 'ի նմանէ · վ̃ոյ առեալ դաս մի մանկտւոյ 'ի ձեռնասուն աշակերտաց՝ հրամանաւ արքայի և միաբան հաւանութ̃ սբ̃յն սահակայ , խաղաց գնաց 'ի միջագետս · և հանդիպեալ դանիէլի՝ ոչինչ աւելի եգիտ 'ի նմա ։ Յայնժամ 'ի վարանս անկեալ երանելւոյն մեսրոպայ՝ շրջեցաւ և առ այլ եպս̃ունս ասորւոց և յունաց , զի թերևս ցուցցեն նմա զայր մի ճարտար 'ի դրագիտութե̃՝ յաջողակ 'ի գիւտ իւրում̃ խնդրոյ · գնաց առ ռաբելոս եպս̃ եդեսիոյ՝ որ և իրաբօս , նոյնպէս և առ ակակիոս եպս̃ ամթայ · և ոչինչ նպաստ եգիտ 'ի նոցանէ · զի թէպէտև բազում մեծարանօք և սիրով ընկալան զնա , և փոյթ կալան վ̃ն նորին խնդրոյ , բայց չեղեն իմ̃իք ձեռնհաս ։ Տեսեալ մեսրոպայ՝ թէ 'ի զուր կորուսանէ զժամանակ , յերկուս դասս բաժանեաց զաշակերտսն՝ զորս բերեալ էր ը̄ իւր ·

և եդ 'ի դպրոցս յոյն և ասորի ուսմանց 'ի
կողմանս միջագետաց ։

Այր յեդեսիա երևելի Ճեմարան ուսման՝ իբրև դիւան ամ̃ դպրութեց յաւուրց անտի հեթանոսութե ․ և 'ի ժամանակին յայնմ էր իշխան և վարժապետ դիւանին՝ պղատոն ոմն ճարտասան հեթանոս՝ այր անուանի ։

Առ սա չոգաւ սբ̃ վդ̃պն մեսրոպ , և յայտնեաց զփափագ իւր ․ և նր̃ խնդութբ̃ ընկալեալ զերանելին՝ փորձ փորձեաց վս̃ գիւտի իրացն ․ զի զոր ինչ միանգամ 'ի միտ առնոյր քան հայերէն՝ վերածեալ 'ի պէսպիսութի այլևայլ հնչմանց տառից , հնարէր ամփոփել 'ի կարգ ինչ աթուեթայից , և ը̃ այնմ նշանագիրս յարմարել ․ և շատ ջանացեալ և ոչ օգտեալ՝ տգիտութի խոստովանեաց հռետորն ․ զի չէին կամք ա̃յ մարդկեղէն ճարտարութբ̃ վճարիլ իրացն , այլ վերնատուր շնորհօք տալ կատարել զայն մեծին մեսրոպայ ։ Այնժամ պատմեաց պղատոն մեսրոպայ , թէ գոյր իմ վդ̃պ մեծանուն՝ վերակացու դիւանիս յառաջ քան զիս՝ եպիփանիոս անուն հեթանոս ․ որոյ առեալ յետոյ զճարտարացն գրեանս 'ի դիւանէս աստի եդեսեայ՝ գնաց զկնի համբաւոյ մեծին եպիփանու կիպրացւոց եպսի , և 'ի քս̃ հաւատաց ․ և այժմ առանձնացեալ է յանապատ ուրեք ․ զնա խնդրեալ գտցես ․ զի թերևս
նա կարողասցի լնուլ զփափաքդ քո ։

Զայս լուեալ մեսրոպայ՝ եկն անդրէն առ բաբելոս եպս եդեսիոյ ․ և ստուգագոյնս տեղեկացեալ վ՟ն այնր եպիփանիոսի իմաստասիրի և միայնակեցի՝ լուաւ , եթէ վախճանեալ է այն սակաւ ինչ աւուրբք յառաջ . միայն կայ ասէ աշակերտ մի ն՟ր հռուփանոս անուն քրիստոնեայ և եկեղեցական այր , հրաշալի արուեստիւ հելլեն գրչութ՟ե . որ նստի միայնացեալ 'ի սամոս , այս է 'ի քաղաքն սամոսատ ։ Ոչինչ դանդաղեցաւ ս՟բն մեսրոպ գնալ և անդր 'ի քաղաքն սամոսատացւոց՝ քանի մի աշակերտօք . ուր և մեծապատիւ մեծարեալ լինէր յեպ՟սէն և յեկեղեցւոյն . և գտեալ զհռուփանոս , և յայսմ եւս անշահ մնացեալ , այնուհետև խապառ անյոյս եղև 'ի մարդկային օգնականութ՟ե , և յա՟ծ միայն ապաստան արար զիւրսն , զամոլորականն 'ի ձեռս առե՟լ զաղօթս և զտքնու՟ի և զպաղատանս արտասուալից , զխստամբերութ՟իս , և զհոգս ծահեծս , յիշելով զասացե՟լն՝ եթէ յորժամ հեծեծեսցես , յայնժամ կեցցես ։

Եւ այնպէս բազում աշխատութ՟եց համբերեալ վ՟ն բարւոյ ազգին և ծին , արժանի լինէր 'ի վերին շնորհաց ը՟ունել զխնդրելին՝ առաւել քան զոր խնդրէր և իմանայր . և պարգևեալ լինէր նմա վիճակ յամենաշնորհողէն ա՟յ՝ հայրաբար ծնանել յիւրմէ ծնունդս նորոգ և սքանչելի , և ինքնին աջով իւրով գծագրել նշանագիրս հայերէն լեզուին՝ դրոշմեալս աջով հզօրին 'ի սրտի նորուն 'ի ձեռն երկնաւոր տեսլեան . մինչև բաւական լինել այնուհետև ոչ միոյ ազգի , այլև այլոց անգիր լեզուա՛ց գիր ստեղծանել ։

Բանզի մինչդեռ կայր յաւուր միում յաղօթս անդէն ՚ի սամոս՝ խոնարհ աղերսիւք հեղլով զանձն տ̄ն առաջի, տեսանէ՝ ո՛չ ՚ի քուն երազ, և ո՛չ յարթնութ̄ե տեսիլ, այլ ՚ի սրտին գործարանի երևութացեալ հոգեղէն իմն թաթ ձեռին աջոյ գրելով ՚ի վ̄ր վիմի, և իբր խորագոյնս դրոշմելով ՚ի քարն՝ ո̄պ եթէ մատամբ ոք ՚ի ձիւն կակուղ ներգործեսցէ զձևս տառից. և ոչ միայն երևութացաւ, այլև հանգամանք ա̄մին ո̄պ յաման ինչ ՚ի միտս ն̄րյն հաւաքեցաւ ։

Յայնժամ յարուցեալ յաղօթիցն՝ լի զուա՛րթութ̄բ և անպատմելի ուրախութ̄բ՝ գոհացաւ զվերնատուո՛ղ̄ն ա̄մ պարգևաց. և անդէն վաղվաղակի արդեամբ ստեղծանէր ըզնշանագիրս ա̄ծատուրս՝ նշանակե̄լ զօրինակ տառիցն ՚ի մագաղաթի, անուա՛նե̄լ և կարգեալ յօրինուա՛ծովք սիղոբայից և հեգենայից ։ Եւ երթեալ առ Հռուփանոս՝ ցուցանէր նմա, եթէ այսու օրինակաւ բովանդակին հնչմունք հայերէն բարբառոյ ընդգրով. և գործակցութ̄բ ն̄ր և միաբան խորհրդով ՚ի կարգ դպրութ̄ե և ՚ի ձև վայելուչ յերիւրէր զա̄մ, ուրոյն ուրոյն որոշե̄լ զա̄մ ընտրութ̄ի նշանագրացն, զնրբագոյնսն և զթանձրագոյնս, զկարճ̄ն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, մեսրոպայ կերպաձևե̄լ զգիրն առ ձեռն պատրաստ, և Հռուփանոսի ճարտար գրչութ̄բ համաձևեալ, փոխադրելով զհայերէն աթութայսն ընդ շարադասութե յունական ալփաբետաց · յորմէ և կանոն տառադարձուե և լծորդատառից, և ա՟մ հանգամանք քերականական և քերթողական արուեստից ։

Եւ անդէն վաղվաղակի պատուէր յղէր ս՟բ վ՟դպն մեսրոպ առ աշակերտս իւր՝ որ 'ի մօտակայ քաղաքաց դպրոցս, փութանակի առ ինքն ժողովել · և ինքն ոչ ծարաւի ոգւով առ աղբիւր դիմեալ զովացուցիչ՝ իսկ և իսկ 'ի թարգմանութի ա՟ծաշունչ տառից ձեռն արկանէր հոգւոյն ս՟բվ, հանդերձ երկու հասուն աշակերտօք իւրովք՝ որք առ նմա կային, յովհան եկեղեցացի, և յովսէփ պաղնացի · եղեն սկիզբն խորհրդաբար նախ յառակացն սողոմոնի՝ 'ի պէտս աշակերտեալ մանկանց ա՟ծային դպրութե · որ 'ի սկզբանն իսկ ընծայեցուցանէ ամենեցուն ծանօթս իմաստութեն լինել · այս է, Ճանաչել զիմաստութի և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, այսովքն հանդերձ · որ և գրեցաւ գեղեցիկ գրչութբ 'ի ձեռն հռուփանոսի ճարտար գրչի ։ Ձեռն էարկ անդէն ս՟բն մեսրոպ և 'ի թարգմանութի նոր կտակարանաց · որ կարևորագոյնն է քան զա՟մ գիրս ս՟բս · միանգամայն և 'ի հրահանգել զաշակերտսն 'ի նոր դպրութի անդր հայերէն · քանզի և աւուրքն էին ձմերայնոյ՝ անյաջող 'ի ճանապարհորդել փութով 'ի հայս ։

Եւ եղև գիւտ գրոյն հայոց 'ի վախճան Թըւականութեն ք՟նի 406 · ոչ ասի՝ յամսեանն նոյեմբերի, որ օր իե էր․ այն ամ եօթնետասներորդ էր կթղկսուե սբյն սահակայ, և հնգետասաներորդ ամ վռամշապհոյ հայոց արքայի, յետ տասն ամաց իջանելոյ սբյն մեսրոպայ յանապատէ 'ի քարոզութի․ որ և սքանչելի իմն խորհրդով եկաց զկնի այսորիկ ամս երեսուն և հինգ կամ երեսուն և վեց, ոչ թէ պարգևեալ նմ այ այլ ևս ամս ցկատարումն թուոյ տառից շնորհելոցն 'ի վերուստ ։

Արդ իբրև ժամ լինէր ուղղոյն յաջողութե 'ի սկիզբն ամի տն 407, եկն նախ շնորհազարդ սբ վրդպն մեսրոպ իւրովքն հանդերձ յայցելութի եպսաց, առ որս դիմեալ էր յառաջագոյն վս գիւտի իրացն․ և առաջի արկեալ նց զնշանագիրս ածատուր՝ պատմեաց, եթէ այս է գործ աջոյն բարձրելոյ․ և որք լուանն՝ փառս ետուն այ, և ուրախ եղեն յոյժ․ և բազում պատուով արձակեցին զերանելին ։ Եւ այնպէս ը ամ տեղիս յաջողութբ և հոգելից ուրախութբ ճանապարհորդեալ՝ եկեալ հասանէր 'ի հայաստան և 'ի կողմանս այրարատեան գաւառին առ սահմանօք նոր քաղաքին, այն է արքայանիստն և գահանիստն վաղարշապատ, ուր է սբ էջմիածինն ։

Եւ իբրև ազդ լինէր բարեպաշտ թագաւորին հայոց վռամշապհոյ և սբյ հայրապետին սահակայ, առեալ նց զամ նախարարադունդ աւագանւոյն բազմութի հանդերձ ուխտիւ եկեղեցւոյ և խուռն ամբոխիւ ժղվրդեան, պատահէին երանելոյն զափամբ ռահ գետոյն. և զցանկալի ողջոյնն միմեանց տըւեալ՝ ընդունէին զայրն այ զմեսրոպ իբրև զերկրորդ մովսէս իջեալ 'ի լեռնէն այ ածատուր տախտակօք: Եւ լուեալ զսքանչելիսն այ՝ որ եղեն առ նա, և տեսեալ զնշանագիրսն և զթարգմանութին գրեալ նորատեղծ հայկական տառիւք 'ի հայրենի բարբառ Հայաստան աշխին, անպատում ուրախութբ զեղուին սիրտք նց. և այնպէս բարբառօք ցնծութե և երգօք հոգևորօք և բարձրագոյն օրհնութբ 'ի քաղաքն դառնային. և զաւուրս տօնական ուրախութբ անցուցանէին:

Այնուհետև արքունի հրամանաւ ժողովեցան մանկունք, և բացան դպրոցք հայերէն դպրութե. և սկսաւ ծաղկիլ Հայաստան աշխ իբրև զդրախտ այ ազգի ազգի տնկօք գրաւորական իմաստութե: Եւ թէ որպէս եղև թարգմանութի ածաշնչին և այլ բազմապատիկ մատենից հարց սբց և արանց իմաստնոց 'ի ձեռն սբյն սահակայ պարթևի՝ գործակցութբ սբյն մեսրոպայ և աշակերտաց նց, ահա գրեալ է 'ի վարս մեծին սահակայ, բաց 'ի տօնէ թարգմանչաց:

Աստ զայն նշանակել արժան է, զի որովհետև ծիսարան եկեղեցական պաշտամանց հաւաքեալ 'ի ձեռն աշակերտաց սբց թարգմանչաց՝ 'ի սբյն մեսրոպայ կարգաւորեցաւ և յօրինեցաւ, յանուն նորա և գիրքն այն Մաշտոց անուանեցաւ յաւուրց անտի նորա

մին

մինչև ցայժմ. Թող զի և յայլ ամ բարեկարգութիս եկեղեցւոյ Հայաստանեայց՝ որ եղեն 'ի ձեռն սբյն Սահակայ, համավաստակ գործակից և աջակից էր սբն Մեսրոպ. որ և երկոքեան կրկին լուսաւորիչք ազգիս ճանաչին ։

Իսկ իբրև լուեալ Վիրք զածատուր շնորհս՝ որ տուեալ մեծին Մեսրոպայ ստեղծանել գիր Հայոց, առաքեցին և ինքեանք հրաւիրակս առ երանելին՝ հանդերձ աղերսական թղթով մեծի իշխանին կամ արքային իւրեանց Բակուրայ, և եպսպետին կմ կթղկսին Մովսեսի, լնուլ և զիւրեանց կարօտութի. քանզի և նոքա չունէին գիր առանձին, այլ յունականաւ և այլ ևս օտար նշանագրօք վարէին ։ Յայնժամ առեալ Մեսրոպայ ը իւր թարգման զոմն Ջաղայ անուն՝ քանի մի աշակերտօք հանդերձ, գնաց 'ի Վիրս. և արար նց նշանագիրս՝ ը յատկութե բնիկ բարբառոյ նց. այն գիր է՝ զոր վարեն եկեղեցական մատեանք Վրաց մինչև ցայժմ. ուր սովորական գրչութի ռամկաց ունի խտիր ոչ սակաւ. ոպ և որ 'ի մեզ երկաթագիրն անուանի՝ է հարազատ գիր մեսրոպեան. յորմէ դիւրութի արագագրութե դարուց 'ի դարս ձևացոյց զբոլոր գիրն, և զկնի զնօտրագիրն իբր նօտարագիր ։

Ըստ նմին օրինակի յետ ամաց ինչ գնաց սբն Մեսրոպ և յԱղուանս, աղաչեցեալ յԱրսվաղենայ արքայէ նոցա և յԵրեմիայ եպսպետէն. և ստեղծ և նոցա նշանագիրս առանձինն .

ձինն. և նովին գրով արար երեմիա կթ͞ղկսն աղօ́անից զթարգմանութ͞ի ճաշոցի 'ի բարբառ աղօ́անից: Այլ այսմ͞ երեցունց միանգամայն սահմանակից ազգաց՝ մեծաց բարեաց, որ անմոռաց յիշատակաց արժանի, դպրութ͞ե ասեմ պատճառ եղև ա͞մ ս͞բ վ͞դպն մեսրոպ: Որ և զսովորականն 'ի կիր արկե͞լ զք՛րոզութ͞ի աւետարանական՝ զա͞մ աւուրս կենաց իւրոց պարապէր յուսուցանել և 'ի խրատել զամենեսին բանի́ և գրով և օրինակաւ իւրով:

Բանզի այսմ͞ բաժանեցին 'ի մէջ իւրեանց երկոքին ամոլք հաւատոյ զհոգ եկեղեցեաց. զի ս͞բն սահակ հայրապետն զարարատեան աշխ͞ին հայոց և զերևելի վիճակաց զհոգևոր խնամս ունիցի. և ս͞բ վ͞դպն մեսրոպ հանդերձ առաքինի մշակօք զբանն կենաց սերմանեսցէ առաքելական քարոզութ͞բ. մանաւանդ ուր ուրեք կային 'ի ծագս հայոց աշխ͞ին մնացուածք հեթանոսութ͞ե կամ բարբարոսական աղանդոց, տարածելով և ըզթարգմանութ͞ի գրոց ս͞բց, առաւել զնոր կըտակարանին: Այլ նախ երթե͞լ իջանէր մեսրոպ 'ի գողթն գաւառ՝ յառաջին դաստակերտն իւր, ուր զառաջինն քարոզեաց ըզբանն կենաց. և անդ ընդելական սովորութ͞բ 'ի կիր արկեալ զվ͞դպութ͞ին՝ լի առնէր զգաւառն ողջունի́ աւետարանին ք͞սի. և կարգէր յա͞մ գիւղս գաւառին դասս ս͞բց վանականաց, և յիւրոց անտի վերակացուս 'ի վերայ ն͞ց:

Անտի 'ի սահմանակից գաւառն սիւնեաց եղեալ՝ ուր կային վայրենագոյն բնակիչք 'ի տեղիս տեղիս, ժողովէր մանկունս առ 'ի նիւթ վրդպուեն · և այնչափ փոյթ 'ի նոցա վր ցուցանէր՝ դայեկաբար սնուցանելով և խրատելով, մինչև 'ի նոցունց իսկ 'ի վայրենեացն ընտրեցան անձինք արժանաւորք յեպիսկոպոսուի · զի շնորհք հոգւոյն բղխեալ 'ի բերանոյ հոգելից վրդպին մեսրոպայ՝ յայլ այլ շրջէր զաշակերտեալսն · և զերկիրն սիւնեաց դասուք վանականաց լնոյր ։ Զնոյն արար երանելին և 'ի մերձակայ սահմանս վրաց աշխին · յորում միճակի եպս կարգեցաւ և սքանչելին կորիւն՝ մին յաշակերտաց նրյն մեսրոպայ՝ պատմօղ բանիցս ։

Եւ ապա դարձ արարեալ մեսրոպայ յայրարատ, և պատահեալ սահակայ հայրապետին՝ պատմէր նմա զեղելոցն ողջոյն, փառաւոր առնելով զմեծ և զհզօր անունն քրի այ մերոյ ։ Եւ դարձեալ ելանէր շրջէր հանգոյն պօղոսի յայցելութի աշակերտելոցն ընդ աշխն հայոց, զուարթացուցանել՝ նորոգել և հաստատել · և յորժամ այնպէս ընդ ամ տեղիս լի առնէր զբն աւետարան ային, և ամենեցուն առաջի առնէր 'ի հայ բարբառ և 'ի գիր զպատգամս ային, և խելամտեցուցանէր զկենաց ճանապարհն վարելոյ, գայր այնուհետև խորհուրդ 'ի մէջ առնոյր ընդ հայրապետին սահակայ վս կէս ազգին հայոց, որ էր ընդ իշխանութե թագաւորին հոռոմոց · քանզի և նրն սահակ 'ի բաժին անդր յունաց չուեաց առ ժամանակ մի վ̃ խռովութեանն՝ որ 'ի բաժնին պարսից: Եւ զի բնակիչք յունական բաժնին անկեալ էին ընդ առաջնորդութ̃ յոյն եպ̃սապետին կեսարիոյ կապադովկացւոց, վերակացուք յունաց չետուն զարժանաւոր պատիւ ս̃բյն սահակայ. և ոչ յօժարէին թողուլ զս̃բն մեսրոպ ուսուցանել հայոց եղելոց յայնմ բաժնի զհայերէն դպրութի̃.

Յայնժամ առաքեաց ս̃բն սահակ զմեսրոպ վ̃դպ և զվարդան զօրավար 'ի կոստանդինուպօլիս հանդերձ թղթով առ կայսրն թէոդոս փոքր, և առ ատտիկոս պատրիարգ քաղաքին: Եւ ն̃ց բազում մեծարանօք ընկալեալ զս̃բ վ̃դպն մեսրոպ՝ զորոյ զհամբաւն լուեալ իսկ էին, կատարեցին զա̃մ խնդիր ն̃ր և զս̃բյն սահակայ, հրաման տալով հովուել և համարձակ ուսուցանել ը̃ ա̃մ տեղիս հայոց՝ որ 'ի բաժնին յունաց. և ել հրաման 'ի կայսերէ վայելուչ մեծարանօք կոչել զս̃բն մեսրոպ ակումիտ, այն է ը̃ յունաց ագիմիդիս. որ թարգմանի աննինջ կ̃մ տըքնօղ կ̃մ անհանգիստ. զի զայս անուն տային երևելի վ̃դպաց անձանձիր պարապելոյ 'ի քարոզութի̃ բանին, ո̃պ և հսկօղ միանձանց. ո̃պի էին բնակեալքն 'ի վանս անհանգստից, յորոց ելին արք երևելիք իմաստութ̃ և սրբութ̃: Որ̃պս և զվարդան կարգեաց կայսրն ստրատելատ, այս է սպարապետ զօրաց նաև յիւրում բաժնի, հրաման տալով շինել և քաղաք նոր 'ի գաւառին կարնոյ, որ կոչեցաւ

ցաւ Թէոդուպօլիս . այն է արզրում :

Իսկ ատտիկոս պատրիարգ կոչեաց զմեսրոպ՝ եկղեսիաստիկոս . որ էր անուն պատուոյ 'ի նշանակ կատարելութե՟ յեկեղեցական ուսման , և յայտ առնէր զքանիբուն վ՟րպ ժողովօղ բանից և քարող օրինաց : Այլ յայսր ա՟մի վ՟ր մեղադիր եղև սիրով , թէ ը՟է՞ր այնչափ աշխատ եղեր շրջիլ յասորիս առ 'ի գիւտ գրոց , և ոչ եկիր առ մեզ 'ի կոստանդինուպօլիս՝ ուր ծաղկեալն էր բերանն ոսկի ս՟բն յովհան . և նա անձամբ և կամ 'ի ձեռն այլոց 'ի յունաց աստի կարօղ էր լնուլ զփափաք քո . բայց ուրախ եմք ասեն , զի ա՟ծ ինքնին լցել է զկարօտութի՟ ձեր : Զայսպիսի բանս գրեաց ատտիկոս և 'ի թուղթն առ ս՟բն սահակ . և յաւել յորդորել զնա՝ ո՟պ և զս՟բն մեսրոպ , զի փոյթ տարցին՝ եթէ եկեղեցական իշխանութե՟ և եթէ ա՟ական սաստի՛ ուղղել զազգն բարբարոսաց , որ էին անազգիք ոմանք աղանդաւորք սփռեալք յանծանօթ վայրս փոքուն հայոց 'ի բաժնին յունաց :

Արդ յետ կալոյ ս՟բյն մեսրոպայ հանդերձ վարդանաւ 'ի թ՟գրական քաղաքի զժամանակ ինչ բազում պատուո՛վ և արքունի դարմանովք , ապա յետ պասեքին ելին անտի արքունատուր կառօք և բազում շքով . և եկեալ յա՟ն հայոց՝ որ 'ի բաժնին յունաց , 'ի գլուխ տարան զա՟մ գործ՝ ըստ կարգելոյ կայսերն իւրով հրովարտակաւ առ անտիոքոս սպարապետ արևելից : Ժողովեցին և

մենմանկունս Հայոց 'ի բաժնէ անտի յունաց, և եդին 'ի դպրոցս․ յորոց մի՟ կարգեաց սբ՟ն մեսրոպ զգլխաւորս յաշակերտաց իւրոց․ և ինքն երանելին զասորական վ՟դպութի՟ 'ի կիր արկեալ՝ քաղցրացուցանէր 'ի լսելիս ժողովելոցն ։ Ապա յետ այնորիկ ձեռն արկանէր քննել և զդժպատեհ և զկամակոր բարբարիանոս աղանդն․ և իբրև ոչինչ գտանէր հնարս յուղղութի՟ ածելոյ, յ՟ական ատենի ձեռս տայր․ և յոչ նուաճիլ նց՟՝ յ՟էն գլխովին 'ի բաց հանէր խարանօք դրոշմեալս․ զի ամ՟ուրեք ծանիցի վատթարութի՟ նց՟, և մի՟ ոք յարեսցի 'ի նս ։

Եւ ինքն ը՟ սբյն սահակայ 'ի վ՟դպութի՟ սեպհական հօտին դառնայր․ և բազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցւոյ ստացեալ՝ ծովացուցանէր զվ՟դպութեն խորութի՟, և լցեալ զեղոյր ամ՟ բարութ՟ք․ և անձանձրոյթ շրջեալ զամ՟ աշակերտօքն՝ պատուիրէր կալ 'ի ճշմարտութե՟, և որ քան զօր յառաջադէմ լինել 'ի բարիս կարգօք ա՟ծպաշտութե՟ և ուսմամբ ա՟ծիմաստ գիտութե՟․ և անդրէն դառնայր յայրարատ, ուր եկե՟լէր և սբ՟ն սահակ 'ի բաժնէն յունաց ։

Ապա յետ դարձեալ այնպիսի առաւել և բարձրագոյն վարդապետութեն (աստ կորիւն՝ հանգոյն ասացելոցն ագաթանգեղոսի զսբյ լուսաւորչէն), * Սկսեալ երանելոյն
,, մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիւրա-
,, պատումս, շնորհագիրս, բազմադիմիս, 'ի
,, լուսաւորութե՟ և 'ի հիւթոյ գրոց մար-
,, գա-

,, զարէականաց՝ կարգել և յօրինել, լի ամենայն
,, ճաշակօք աւետարանական հաւատոցն
,, ճշմարտութեան․ յորս բազում նմանութիւնս և օրինակս
,, 'ի յանցաւորացս աստի՝ առաւել քան
,, յարութենական յուսոյն առ 'ի հանդերձեալսն՝
,, յերխիւրեղ կազմեալ․ զի հեշտընկալք
,, և դիւրահասոյցք տխմարագունիցն
,, և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին ,
,, առ 'ի սթափել և զարթուցանել, և հաստահիմն
,, առ 'ի խոստացեալ աւետիսն քաջալերել
,, ||։

Եւ եղեւ յետ աքսորանաց սրբոյն Սահակայ 'ի պարսս 'ի պատճառս արտաշրի վերջին թագաւորին հայոց արշակունւոյ, յորում ժամանակի սրբոյն Մեսրոպ էր՝ որ ընդր յանձին զփոխանորդութիւն քաջ հովուին, յորժամ դարձաւ յաթոռ իւր մեծն Սահակ, և վախճանեցաւ 'ի խոր ծերութեան յամի տեառն 440, կալաւ զաթոռ նորա տեղապահութեամբ նա ինքն սուրբն Մեսրոպ, որ և յայնժամ ալեւորեալ իսկ էր ։ Եւ զի առանձինն մնաց երանելին՝ բաժանեալ 'ի համաշունչ ընտրելակցէ իւրմէ, 'ի սուգ անհնարին պաշարեալ լինէր․ և թէպէտև միայնաւորութեան տրտմութիւն ոչ տայր նմա զուարթանալ, սակայն զաւետարանական ընթացսն և զվերակացութիւն սրբոյ եկեղեցւոյ շնորհօքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր ։ Եւ հայեցեալ 'ի վիճակ ազգին՝ յորմէ բարձաւ այնուհետեւ թագաւորութիւն արշակունեաց, և սպառեցաւ քահանայական զարմ 'ի ցեղէ սրբոյ լուսաւորչին, զմեծ փոյթ

'ի

'ի մէջ առնոյր՝ զի մի՛ վարատեսցի հօտն ք̄նի 'ի գայլոց ապականչաց․ խնամէր տնտեսէր հայրաբար զամենեսին, և հոգելից բանիւք յորդորէր 'ի լաւ անդր․ մերձաւորաց առ իւրև եղելոց զհոգևոր եռանդն զեղոյր, և առ հեռաւորս բզ̄մ թուղթս խրատագիրս և զգացուցիչս առաքէր ը̄ ա̄մ գաւառս ։ Նաւ զցայգ և զցերեկ պահօք և աղօթիւք և ուժգին խնդրուածովք կանխէր առ ա̄ծ․ և զոր յուշ առնէր ամենեցուն իբր բարձրագոյն բարբառով զա̄ծադիր պատուիրանացն հրամանս, յանձն իւր տանէր առաւելապէս զգժուարագոյն վարուց կրթութիւն՝ խաչակրօն մեռելութե̄ իբրև կենդանի նահատակ ք̄նի ։ Նաւ զոր ա̄մ զմտաւ ածեալ զոր վախճանին անյագ փափաքմամբ առ անձկալին իւր ք̄ն՝ չտայր քուն աչաց, և ոչ նիրհ արտեւանաց, մինչև 'ի հասանել 'ի հանգիստ տ̄ն ։ Նաւ ահա յետ ամսոց վեցից անցելոց զկնի վախճանելոյ երանելւոյն սահակայ, յորժամ էր ս̄բ վ̄րդպն մեսրոպ 'ի հայրապետանոցի կ̄մ 'ի մերձակայ ապարանս ուրեք 'ի վաղարշապատ քաղաքի՝ նովին հոգեկրօն վարուք, հասանէր ս̄բյն ք̄նակոչ կատարումն՝ յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութե̄ն, յերեքտասաներորդում ամսեանն մեհեկանի, յամի տ̄ն 441․ այն է 'ի ժը փետրվարի՝ ը̄ համեմատութե̄ տարւոյն այնորիկ․ կ̄մ ըստ յայսմաւուրաց՝ որ հայի 'ի համեմատութի̄ աւուրց թարգմանութե̄՝ 'ի ժթ․ փետրվարի ։ Նաւ յորժամ հանդերձեալ էր փոխիլ երանելին , թէպէտեւ չէին առ նմա յոլովք 'ի կրտսեր աշակերտաց՝ որք առաքեցանն յուսումն 'ի հեռաւոր դպրոցս և յաթէնս , բայց առաջիկայ գտան երիցագոյն աշակերտք ձեռնասունք , յորս երեւելի էին ս՟բն յովսէփ և ս՟բն թաթիկ , հանդերձ այլ եւս բազմութ՟բ աւագաց ։

Արդ իբրեւ յանձին զգաց այրն ա՟յ ս՟բն մեսրոպ , եթէ հասեալ է կէտ կոչման իւրոյ՝ որոշիլ յիւրոցն և խառնիլ 'ի գունդն ք՟սի , թեթեւացեալ և սթափեալ 'ի ցաւոցն՝ կանգնեալ նստաւ 'ի ժողովոյն միջի . և բացեալ զձեռսն հանապազատարած յերկինս՝ յանձն արար շնորհացն ա՟յ զա՟մ մնացեալսն , հայցելով վ՟ն նոցա օգնականութիւն 'ի տ՟նէ ։ Եւ մինչդեռ ձեռք ս՟բյն է՟ երկինս կարկառեալ էին , տեսիլ սքանչելի խաչանման լուսաւոր շողաւոր ձեւացեալ երեւէր 'ի վ՟ր ապարանիցն , յորում էր երանելին . և այն այնպէս յայտնի և ակներեւ , մինչեւ ա՟մ ուրուք ինքնատես եղեալ , և ոչ առ 'ի յընկերէ պատմեալ , խուռն դիմեալ գային 'ի տեղի անդր ։ Եւ յայնմ վայրի զվերջին ողջոյն տուեալ ս՟բյն ժողովելոցն առ նա , և զսէր և զմիաբանութ՟ի իբրեւ կտակ անջնջելի աւանդեալ ն՟ց , աւարտեաց զբանս իւր յօրհնութ՟ի՝ օրհնութ՟բ պսակելով զմերձաւորս և զհեռաւորս . և այնպէս զհաճոյական աղօթս 'ի ք՟ս հասուցեալ՝ նոյնժամայն աւանդեաց զհոգին իւր ս՟բ 'ի ձեռս փրկչին ։

Յայնժամ եղեւ սուգ և ողբումն մեծ ամենեցուն վ̃ն որբանալոյն 'ի հասարակաց հօրէն , զոր ոչինչ ը̃ հատ ճանաչէին 'ի լուսաւորչէն հօգւոյ ։ Այլ և առ անձուկ սիրոյն՝ սաստիկ վէճ յարուցանէին վ̃ն ժառանգորդ լինելոյ պատուական նշխարաց նորին . և նախ բնակիչք վաղարշապատու չկամեցեալ հանել զանգին զայն գանձ 'ի ձեռաց՝ անդէն յէջմիածին 'ի հանգիստ ս̃բցն ամփոփել պնդէին . այլք 'ի համատոհմից և 'ի գաւառակցաց ասէին տանել 'ի բնիկ գաւառ իւր 'ի տարօն . և կէսք յաշակերտելոց վ̃դպութ̃ե ն̃ր ասէին թաղել 'ի գողթն գաւառի՝ իբրև յառաջին դաստակերտ քարոզութ̃ե իւրոյ , 'ի վանսն՝ որ շինեալ էր անդ 'ի նմանէ . որ և ը̃ յայսմաւուրաց մատրեվանք կոչի , այս է մեսրոպայ վանք ։

Այլ յաղթեաց ամենեցուն վահան ամատունի՝ մեծ հազարապետ հայոց աշխ̃ին , և առեալ տարաւ 'ի գիւղն իւր ոշական (իբր երեք ժամաւ հեռի յէջմիածնէ) , միաբանութ̃բ երանելւոյն հմայեկայ մամիկոնենի եղբօր ս̃բյն վարդանայ , հանդերձ աշխ̃ագումար բազմութ̃բ եկեղեցականաց և աշխ̃ականաց , սաղմոսիւք և օրհնութ̃բ և հոգևոր ցնծութ̃բք , կանթեղօք վառելովք և ջահիւք բորբոքելովք , և ա̃մ լուսաճաճանչ զարդուք յերկրէ և յերկնէ . քանզի և երկնային նշանն լուսաւոր խաչաձև յառաջախաղաց լինէր ընդ ա̃մ ճանապարհն 'ի վերայ դագաղացն ։ Այլ իբրև հասին յաւանն ոշական , և անդ 'ի վկայարան ս̃բյ ամփոփեալ զպատուական մարմին

մին առն ա̃յ՝ կատարեցին զօրհնաւոր յիշատակն, ապա և նշանն աներևոյթ լինէր ։ և այր իւրաքանչիւր 'ի տեղիս իւրեանց դառնային ։ Եւ զի այսպիսի երևելի նշան եղև յա̃յ 'ի նշանակ սրբութեան երանելւոյն Մեսրոպայ՝ ճշմարիտ վկայի ճշմարտութեան, բազումք յանհաւատից տեսօղ լեալ սքանչելեացն՝ դարձան 'ի ս̃բ հաւատս, և մկրտեցան 'ի քահանայից հայոց ։

Իսկ յետ երից ամաց անցելոց յաջողեցաւ վահանայ ամատունւոյ ք̃սասէր իշխանի խորան սքանչելի կանգնել 'ի վկայարանի անդ տաշածոյ վիմօք քանդակելով, և 'ի ներքսագոյն խորանին զհանգիստ ս̃բյն յօրինել ։ ուր և սպասս վայելուչս՝ գունագոյնս՝ պայծառատեսիլս՝ ոսկւով և արծաթով և ակամբք պատուականօք 'ի յիշատակարան սեղանոյն կենդանարար մարմնոյ և արեանն ք̃ի պատրաստեաց ։ և ա̃մ պանծալի զարդուք շքեղացոյց զայն վկայարան՝ հանդերձ բազմութ̃բ նշխարաց խաչակրօն ս̃բ վկայից ք̃ի ։ յորոց միջի հանգչէր պատուական մարմին ս̃բյն Մեսրոպայ, որ և Մաշթոց ։ Օ որոյ և զձեռնասուն աշակերտն զերանելին Թաթիկ կարգէր 'ի վերակացութիւն տեղւոյն ։ այն որ յետոյ եղև ե̃պս բասենոյ, և ապա վկայական մահուամբ կատարեցաւ յաւուրս ս̃րց ղևոնդեանց ։ ո̃մ և ս̃բն յովսէփ 'ի վայոց ձորոյ՝ որ զաթոռ հայրապետութեան կալաւ, նահատակեցաւ ընդ ղևոնդեանց ։ և 'ի խնդրոյ և 'ի հրամանէ նորին ս̃բյն յովսեփայ գրեաց սքանչելին կորիւն զվարս ս̄բյն Մարիամայ . յորմէ և մեք առաք՝ համեմատութ̄ բանից երանելւոյն Մովսեսի խորենացւոյ . որ վ̄ն յաթենս գոլոյն՝ ի ժամանակին՝ չեղև առաջիկայ փոխման երկոցունց հրեշտակատիպ հարց և վարդապետաց իւրոց . վ̄յ և ողբս ցաւագինս եառ ՚ի վ̄ր գերեզմանաց ն̄ց , և նոյնօրինակ ողբովք կնքեաց զգիրս պատմութե̄ իւրոյ . այլ արժան է լսել՝ զոր ասէն յղ̄գս ս̄բյն Մարիամայ . (Գիրք . Գ . Գլ . 67 .)

* Գերազանցեալ քան զա̄մ որք զայնու ժա-
„ մանակաւ էին առաքինիք . քանզի ամբար-
„ տաւանութի և մարդահաճութի ՚ի նորա
„ վարս տեղի գտանել երբէք ոչ կարացին .
„ այլ՝ բարեխորհուրդ , հեզ և լաւակամ
„ գոլով , և երկնայնոցն զարդարեալ սովո-
„ րութ̄բ՝ զինքն բոլորիցն ցուցանէր : Զի
„ գոյր տեսլեամբ հրեշտակական , մտօք
„ ծննդական , բանիւք պայծառ , գործովք
„ ժուժկալ , մարմնով արտափայլե̄լ , սրբա-
„ սիւք անձառ , խորհրդակցութ̄ մեծ , հաւա-
„ տով ուղիղ , յուսով համբերող , սիրով ան-
„ կեղծաւոր , ուսուցանելով անձանձրոյթ ‖ :

Որում լիցի և մեզ կցորդ լինել՝ ոչ աշակերտութ̄ յուսմունս ճշմարտութե̄ , նոյնպէս և նմանութ̄ առաքինափայլ վարուց . զի և երջանիկ մասին ն̄ր հաղորդս լինել արժանասցուք ը̄ որս ա̄մ յանանց ուրախութիս ՚ի ք̄ս յ̄ս ՚ի տ̄ր մեր :

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ՄԵՐՈՑ

Եղիշէի, Մովսէսի քերթողի, և Դաւթի անյաղթ փիլիսոփայի։

Տ. փետր. 27. և սեպտ. 17։ Տօնապատճառք, յիշատակարանք, և պատմագիրք հայոց։

ԳԵՂԵՑԻԿ ԽՈՐՀՐԴՈՎ է մեծի րաբունապետի տանն Թորգոմեան նոյն մեսրոպայ տօնախմբէ և յիշատակ երից րաբունեացս գլխաւոր աշակերտաց նորին, որք փայլեցին առաքինի սրբութեամբ և մեծիմաստ գիտութեամբ, և եղեն լուսաւոր վարդապետք եկեղեցւոյ հայաստանեայց։ Որ թէպէտև բազում եղեն աշակերտք նոցա թարգմանչաց սահակայ և մեսրոպայ, և ինքեանք իսկ թարգմանիչք անուանեցան իբրև գործակիցք վարդապետաց իւրեանց, այլ երեքին սոքա նշանաւորք եղեն առաւել գրով և բանիւ և օրինակաւ, և անմահ յիշատակ թողին յաւիտենի, մնեալք 'ի տղայ տիոց առ ոտս հոգեկիրթ վարժողաց 'ի վարս կատարեալ առաքինութե՟ , և լցեալք հոգւով իմաստութե՟ և հանճարոյ , կատարեալք յարտաքին և յն՟ձային դպրութի՟ս , և ՚ի հմտութի՟ս արևելեան և արևմտեան լեզուաց , և ՚ի հրահանգս աթենական ուսմանց և փիլիսոփայական և ն՟ձաքանչական իմաստից ․ լցին զպակասութի՟ հարց իւրեանց , և յաւելին թարգմանութի՟ս յոլովս ՚ի բանից նախնի վ՟դպաց և մեծանուն իմաստասիրաց ․ և ինքեանք ևս յաճախութե՟ յօրինեցին ճառս և մեկնութի՟ս , և ազգի ազգի մատեանս և պիտանութի՟ս բանասիրականս , քերթողականս , վիպասանականս , խրատականս և կանոնականս ։ Լիակատար պատմութե՟ վարուց երից երանելեացս առաւել փափաքօղ գտանիմք՝ քան ստացօղ ․ այլ որ ինչ առանձինն տեղեկութիւնք կայցեն զմիոյ միոյ , տեսցուք փոքր ՚ի շատէ ։

Ս՟բ հայրն մեր և վ՟դպն եղիշէ՝ որ և եղիշաճգնաւորն , ասի լինել դպրապետ ս՟բյն վարդանայ հայոց սպարապետի ․ և ո՟չ կարծի՝ մերձաւոր իսկ ն՟ր ը՟ մարմնոյ ՚ի տանէ մամիկոնեանց ․ որ և անձամբ առաջիկայ գտեալ անցից անցելոց ընդ ազ՟ն հայոց առ ժամանակօք նահատակութե՟ ս՟բց վարդանանց զօրավարաց և ս՟բց ղևոնդեանց քահանայից , գեղեցիկ արձանագրեաց զլիակատար պատմութի՟ նոցա , ՚ի խնդրոյ պատուական երիցու դաւթի մամիկոնենի , այն՝ որ գտաւ ՚ի ժողովին արտաշատու ․ և հաւանական իսկ է՝ թէ և նա ինքն ս՟բն եղիշէ է այն , զոր ՚ի նմին ժողովն յիշատակէ, ինքնին երանելին ընդանու՛ամբս՝ եղիշա եպ՟ս ամատունեաց․ ո՟պ և այլք յընտրելոց աշակերտաց բազում մասամբ եղեն եպ՟սունք և կաթողիկոսունք ժամանակին։

Օ եպիսկոպոսական աստիճան ս՟բյն եղիշէի յայտ առնեն և կանոնադրութիւք ն՟ր խրատականք, որք գտանին 'ի կանոնագիրս․ ը՟ որում և յայսմաւուրք երկրորդեն զնմանէ, թէ արար գիրս կանոնականս համեղ և ախորժ բանիւք։ Արար երանելիս և զմեկնութ՟ի արարածոցն գրոց լուսաւոր և պարզ բանիւք․ ո՟պ և զգրոցն յեսու՛այ և զդատաւորաց, գուցէ և զայլոց․ նոյնպէս և զմեկնութ՟ի հայրմերին հոգելից իմաստիւք, և ճառս ընտիրս վ՟ս ողորմութ՟ե, և վ՟ս չարչարանաց ք՟ի և թաղման և յարութ՟ե․ և սքանչելի խրատ միանձանց։ Յորս զոյգ ընդ հոգեկիր հանճարոյ և ճարտար կարգաբանութ՟ե փայլէ և հարազատ հայկաբանութիւն անխառն 'ի հելլենախօսութ՟է։

Իսկ ը՟ գեղեցիկ քաղաքավարութ՟ե էր իբրև զու՛արթուն 'ի մարմնի, մեռեալ ա՟հի և որոց յա՟հի։ Առժամանակ մի կրօնաւորեալ բնակեցաւ ս՟բն եղիշէ յառանձնութ՟ե մեծաւ ճգնութ՟բ 'ի վանս և յանապատս․ և առ ժամանակ մի հարկեալ 'ի սիրոյ՝ օգնական եղև ժողովրդեանն ո՟յ այցելութ՟բ և վրդ՟պական քարոզութ՟բ։ Նա ապա միւսանգամ զամայութիւն խնդրեաց՝ բնակեալ 'ի լերինս և 'ի յայրս․ և անտես 'ի մարդկանէ լեալ՝ խստա-

Ճարակ լինէր 'ի լերինս մոկաց , և վայրի բանջարօք շատանայր ․ մինչև յետ ժամանակաց գտեալ զնա հովուաց ոմանց յայրի միում նքողեալ և ճնշեալ 'ի խստակրօն վարուցն՝ համբաւեցին զերանելին և զտեղի ճգնութե նորա ։

Իսկ սբն եղիշէ խոյս տուեալ անտի՝ եկն նստաւ 'ի հանդարտութե 'ի գաւառն ռշտունեաց նոյն անձաւամուտ և միակեցական վարուք առանձնութե 'ի փապարս լերանց ․ ուր և ածամերձ ընտանութբ վախճանեալ փոխի 'ի քս ։ Յետ բազում աւուրց եկեալ ոմանց 'ի տեղին՝ գտին անապական զմարմին սբյն ոսկ 'ի քուն , և զարմացան ․ և հարցափորձիւ 'ի վր հասեալ տեղեկացան և ծանեան զնա , որ սբն եղիշէ ճգնազգեացն է՝ գտեալն երբեմն 'ի հովուաց 'ի գաւառն մոկաց ․ և շինեցին յանուն նորա եկեղեցի , և փոխեցին անդ զսբն 'ի հանգիստ ։ Իսկ իշխանն մոկաց եկն յետոյ , և եառ զգլուխ սբյն և զաջն ․ և տարեալ եդ յառաջին խուցն , շինեալ 'ի վր նր վայելուչ եկեղեցի ․ և այնպէս յերկուսին ճգնարանս , ուր երանելին փառաւորեաց զած 'ի միայնութե , փառաւորեաց և զնա ած բզմ նշանօք՝ զոր առնէր 'ի ձեռն պատուական նշխարաց նր ։

Առաւել պայծառ ցուցաւ 'ի նմին ժամանակի հանդիսիւ քաջափայլ առաքինութե և կատարեալ իմաստութե՝ այրն այ սբն մովսէս խորենացի , մականուանեալն քերթող կամ քերթողահայր , այս է բանահիւս և գլուխ բանաստեղծից . զի 'ի գրաւորական մասին զկնի վ՟դպաց իւրոց սահակայ և մեսրոպայ մի միայն գտաւ սա , թէպէտև հելլենաբանութ՟ ուրեք ուրեք մթնացեալ , այլ և 'ի հայկաբանութ՟են ոչ վերջացեալ . նոյնպէս և մ՟ր քաղաքավարութ՟ և հոգևոր վ՟դպութ՟ սքանչելի :

Նա և էր ինքն հայրենեօք 'ի խորնի աւանէ տարօնոյ , վ՟ոյ և մովսէս տարօնեցի և խորենացի կոչի անխտիր , գաւառակից և տոհմակից գլխովին համարեալ ս՟բյն մեսրոպայ , և աւաւել ընտանի ձեռնասուն 'ի մէջ աշակերտաց զկնի գիւտոյ հայերէն գրոց , և մի 'ի գլխաւորաց առաքելոց յաթենական ուսմունս : Որ և շրջեալ ը՟ ա՟ն յունաց և հռովմայեցւոց մինչև 'ի մեծն հռովմ , ո՟պ և 'ի բիւզանդիա , 'ի պաղեստին և յասորիս դեգերեալ , զա՟մ՝ հմտութ՟ի յանձին ժողովեաց , և ա՟մ՝ հնութ՟եց եղև քաջ խելամուտ . զօրաւոր գրչաւ և հզօր բանիւ՛ . և սրբակրօն վարուք փայլեալ՝ յոգունց գերազանց : Օ որոյ զարժանաւոր գովութ՟ի սուղ բանիւ՛ տիրապէս նշանակեաց սահակ արծրունի երևելի իշխան հայոց 'ի վասպուրական , կոչելով զնա 'ի թղթի իւրում՝ որ առ նա . * Հրեշտակ և սպասաւոր մեծութ՟եցն ք՟ի՝ յերկրի երկնայինդ ցուցեալ այր երկնակենցաղ , և լուսաւորիչ խաւարելոցս . . . . որ տուա՛րդ մեզ Երկրորդ սահակ և մեսրոպ յետ գնալոյ ն՟ց առ տ՟ծ || , այլովքն հանդերձ :

Նա զի այսպիսի ոք էր ծանուցեալ առ ամե-

նե.

նեսին, և անմարթ՝ էր թաքչել տան՝ որ 'ի մ՟ջ լերանց Հայոց, կամ դնիլ ճրագի ը՟ գըրուանաւ, եդաւ 'ի մ՟ջ աշտանակի եկեղեցւոյ 'ի լուսատու լինել դիտապետութեամբ. քանզի յետ վախճանի երջանիկ աշակերտակցին իւրոյ եզնրկայ կողբացւոյ՝ որ մին էր յառաջին թարգմանչացն, կարգեցաւ յաթոռ ն՟ր յեպ՟սութ՟ի բագրևանդայ և արշարունեաց, այն է երկիրն կամսարականաց. և հովուեաց հօտի իւրում ա՟մ արթնութ՟բ և իմաստութ՟բ ը՟ ժամանակս երկայնս, անխոնջ վաստակեալ 'ի հոգևոր երկասիրութ՟ս բանի՛ և գրով մինչև ցխորին ծերութ՟ի և ցալիս հնութ՟ե. որ և բազմօք յառաջ քան զվախճան իւր՝ ասէ՛ զանձնէ լինել այր ծեր և պարապեալ 'ի թարգմանութ՟իս. իսկ ը՟ մկայելոյ թովմայի արծրունւոյ՝ ասի կեցեալ զամս հարիւր և քսան, իբրև ը՟ չափու հասակի վարդապետին իւրոյ ս՟բյն սահակայ պարթևի:

Արդ 'ի բիւրապատիկ գրուոց վաստակոց երանելւոյն մնացին մինչև ցարդ քանի մի յիշատակք ն՟ր. ը՟ Պատմագրութ՟ի հայկազեան տոհմիս 'ի սկզբանէ մինչև ցաւուրս իւր, 'ի խնդրոյ երանելոյն սահակայ ասպետի բագրատունւոյ, այն՝ որ յաւուրս մեծին վահանայ եղբօրորդւոյ ս՟բյն վարդանայ եհեղ զարիւն իւր 'ի պատերազմի ը՟դէմ կրակապաշտ պարսից: Աշխարհագրութ՟ի ճիշդ և կարևոր: Հռետորական գիրք պիտոյից 'ի խնդրոյ թէոդորի ուրումն աշակերտի: Բե-

րա

րականական և քերթողական հատուածք պէսպէս ։ Ճառ ներբողական 'ի սր̃ կոյսն Հռիփսիմէ ․ և պատմութ̃ի ճանապարհորդութեան հռիփսիմեանց 'ի Հռովմայ մինչև 'ի Հայս՝ յայլ առանձին ճառ ։ Շարականք հրաշալի յօրինուածով ․ թող զթարգմանութիւս յոլովս ․ որպ̃ և զվերջին լրումն թարգմանութ̃ ա̃ծաշնչի որին ընծայել չէ ինչ տարադէպ ։

Այլ առանձին յիշատակաց է արժանի նամակն երանելւոյս գրեալ 'ի պճ̃նի թղթոյն սահակայ արծրունւոյ ․ ուր առաջի դնէ ըզպատմութիւն սքանչելագործ պատկերի սր̃ ա̃ծածնին , որ կայր 'ի հոգւոց վանս՝ բերեալ 'ի սր̃յն բարթուղիմեայ առաքելոյն , համդերձ ստորագրութ̃բ ազգատոհմի տիրամօր կուսին , և վերափոխման նր̃ ։ Որդ 'ի գրեանդ փայլէ ոչ միայն կատարեալ խոնարհութ̃ի առն այդ և ծուրացութ̃ի նր̃՝ 'ի հրաժարելն 'ի գովութ̃ե ընծայելոյ նմ̃ և 'ի հրաւիրանաց պատուոյ , այլև առաքելաշնորհ մեծանձնութ̃ի , և մարգարէական հոգետեսութ̃ի , յասել անդ իւրում ․ * Քեզ ասեմ իշխանդ արծրունեաց ․ եցոյց ինձ տր̃, զի յորդւոց քոց երեք եղբարք վս̃ ք̃ի 'ի մահ մատնեալք՝ երկուքն արեամբ վկայք լինին ք̃ի , և միւն վրիպեալ 'ի նոցանէ՝ և ոչ յայսմ վայելէ ։ Այլ նց̃ ա̃ծ զթագն թագաւորին սենքերիմայ յորդիս քո դարձուցեալ՝ յերկարաձգէ յերկրի ։ Իսկ բագրատունւոյդ ասեմ, յիշէ տ̃ր զբանն իւր առ աբրահամ, եթէ թա-

Թագաւորք 'ի քէն՝ ելցեն․ և Թագաւորէք 'ի դուռն ։ Եւ այլ ինչ ունիմ ասել ձեզ, յորժամ տացէ տ՟ր տեսանել ‖ ։

Եւ կատարեցաւ ամ՟ն ը՟ս բանի ն՟րյն․ զի յարծրունեաց անտի էին փառաւոր նահատակքն ք՟ի երկոքին ընտրել հարազատք, ս՟բն Սահակ և Համազասպ իշխանք հայոց․ որոց եղբայրն երրորդ՝ Մերուժան անուն՝ անկեալ 'ի հաւատոյ՝ փութով սպանաւ 'ի գաւթէ Մամիկոնեանց․ և Արծրունեաց թ՟գրուն կանգնեցաւ յետ ժամանակաց 'ի Վասպուրական ծի, ո՟պ և Բագրատունեացն 'ի դուռն ։ Եւ այն զի՝ այս գործք գործեցան բազում դարուք զկնի յաւուրց անտի Խորենացւոյն․ մինչև չ՟ալոյ երկբայութե 'ի վերայ ա՟ծազդեցիկ մարգարէութե ն՟րյն ։ Իսկ ինքն երանելին լցեալ զաւուրս իւր երկայնս՝ լի արդեամբք և գովութ՟ ը՟ ա՟յ, հանգեաւ խաղաղութ՟ 'ի ք՟ս ։

Իսկ երանելին Դաւիթ՝ անյաղթ փիլիսոփայ կոչեցեալ յարդեանց, ասի լինել քեռորդի ն՟րյն Մովսէսի Խորենացւոյն, ծնընդեամբ 'ի Հարք գաւառէ և 'ի Ներգին աւանէ՝ որ առ սահմանօք Տարօնոյ․ վ՟յ և կոչի Ներգինացի, համարեալ 'ի վերջին դասուց Թարգմանչաց, և հելլենական ուսմամբ գերազանցեալ զամենեքումբք․ վ՟յ և ան՟ նորա առաւել յունական ։ Նա անխտիր փայլեաց 'ի մէջ հայոց և հելլենացւոց՝ իմաստասիրութ՟ և ա՟ծսիրութ՟․ որ վ՟ն և 'ի յունարէն օրինակս փիլիսոփայական գրուածոց

նր՟

ն՟ր տեսանեմք զնա պատուեալ ա՟ծասէր անուամբ, կամ ը՟ս յունականին գերադրական կոչմամբ՝ դաւիթ Թէոփիլէսդադոս , այս է ամենա՟ծասէր ։ Այր վ՟ս ասէ առաքել վ՟րդ սիւնեցի , թէ յոյնք հնարին զերանելիս ըզդաւիթ յիւրեանս ձգել 'ի պարծանս ազգի իւրեանց · յայտ է թէ վ՟ս գտանելոյ գրուածոց ն՟ր և 'ի նոցին բարբառ · զի միօրինակ աջողակ էր յերկոսին դպրութ՟իս , և անխըտիր կարօղ էր գրել հայերէն և յունարէն՝ որչափ ինչ գտանեմք յիմաստասիրական բանից ն՟ր · զի բաց 'ի քերականութ՟է՝ գրեաց գիրս սահմանաց և էակաց , և զվերլուծութ՟իս ներածու՟եցն պորփիւրի , և ստորոգութ՟եցն արիստոտէլի · զորոց և գիրս վերածեալ 'ի հայ բարբառ ։

Շարագրեաց և այլ բազմապատիկ ճառս վսեմ ոճով · յորս յանուանէ յիշատակին ներբողեան 'ի ծնունդ տ՟ն , և բարձրացուցէքն 'ի ս՟բ խաչն ա՟ծընկալ · որ և կայ մինչև ցայսօր հանդիսացեալ առ ամենեսին , առաւել յետ գրելոյ ս՟բյն ներսեսի շնորհալւոյ ըզպատճառս և զմեկնութ՟ի ն՟ր · որ և երկբան իմն կարծիս յիշատակէ , ասել ոմանց՝ թէ առաջի յունաց իցէ խօսեցեալ զայն , և այլոց՝ եթէ առաջի հայոց · և զերկրորդս զայս աւանդութ՟ի հաստատէ ոչ միայն այն , զի զճառ խաչին չգտանեմք յունարէն , այլ միայն հայերէն , այլև որպէս և իցէ յիշատակարանն պատմական գտեալ 'ի տօնապատճառս հայոց · զոր երկրորդեմք ստա-

նօր՝

Նոր՝ առ չունելոյ զայլ ստուգագոյն տեղեկութ̃ի զվարուց և զգործոց դաւթի անյաղթի. Է̃ որ ողբայ իրաւամբք ա̃մ իմաստուն։ Բ.րդ. այս բանք են տօնապատճառին. * Յաւուրս վերադիտողութե̃ հայոց տ̃ն գիւտոյ եկին արք ոմանք 'ի Նահանգէն անտիոքայ (ասորւոց), 'ի գեղջէն՝ որ կոչի օղին (կամ աւլին). որոց անուանքն կոստանդին և պետրոս և թէոդորէ, խարազնազգեստք, բոկագնացք, պահօղք և կերծաւորք . . . . 'ի ցոյց մարդկան. որք ասէին ոչ դոլ զմարիամ ա̃ծածին, և ոչ զխաչն՝ ա̃ծընկալ, այլ՝ դողոց պատժարան։ Իբրև լուաւ գիւտ զգալն դաւթի (և զընկերացն), բերկրեցաւ և մխիթարեցաւ յոգի. և գրեաց առ դաւիթ

(Նամակ, որ ունէր օրինակ զայս)։

,, Երկնաւորին ցանկացեալ մեծութե̃՝ գասող գանձի, և ա̃ծային լրութե̃ յուսոյն. որ ձգեալ հասեր 'ի տիրապէս տենչումն, 'ի գերակայ և 'ի պատարուն պայման գտեալ և ծածկեալ, բացայայտեալ բոց բարեաց բարետրապէս բարուց քոց. զոր 'ի վարժ վաճառի քում խնդրելի մեզ վ̃դպութե̃ խուզողացս խօսել խորհրդով 'ի խաչն ք̃ի. զնորին երախտեացն հատուցանել որ առ 'ի մէնջ գոհութե̃ փրկելոցս՝ փրկաւէտ փայտին փառաց փեսայլին։ Օի պաշտելի է և պատուելի մեզ, և պանծալի ըստ պօղոսի պարծել 'ի պատուականն պսակն ք̃ի, և 'ի թագ նորոյս սիոնի. զի բարձցի սերմ հերձուածոյ հերեսիովտացն հայհոյչաց, և խլեսցի յադաւ.

գարակաց փուշք փառաւորանք՝, և որոմն սատանայական սերմանն , որք 'ի մարդ յուսան , և ոչ յա՟ծ ։ Պռիւտ՝ դադաշեալ դարշապար գերեզմանի՝ մահու մերձաւոր , դրուատ հայցեմ , հայոց հովուապետ և վերադիտող տանս արշարունի (կամ արշակունեաց) ․ ընկալ զթուղթդ թախանձանաց դաւիթ ,, ։

Եւ նա առնէ անդրէն պ՟խնի անդրադարձութ՟ք ․ ,, Ո առ 'ի յա՟ծուստ պատուեալ զերիցս երջանիկ և զմեծի հայրապետի և զաթոռակալի ս՟բյն գրիգորի , հայոց մեծաց վերադիտողի , զա՟ծահրաման խնդիր հարկապահանջութ՟ե եկեղեցական գործառնութ՟ե , զոր հրամայեցեր մերումս կրտսերութ՟ե՝ գրով դրոշմել 'ի քարտիսի մատենագրութ՟ե , (ընկալայ) ․ զի կացցէ 'մնասցէ 'ի յարձանի՝ անջրելի և անջնջելի յիշատակ զկնի՝ ազգաց եկելոց ․ զոր ոչ այլաբար ինչ թուի (ասել) , քան թէ իշխանութ՟եդ քումդ գերազանցութ՟ե պատուոյ՝ զհարկեցուցիչ և զանհնարին հրամանաց ծանրութ՟ե ։ Սակս որոյ սարսեալ սարսափեմ , և երկեղ ոչ դուզնաքեայ յիս բերէ ․ զի գտանի քան զկար մեր գերազանց խնդիրդ ․ և զի հարկ 'ի վերայ կայ աւետարանել հնազանդութ՟ք , զի մի՛ վայն վիճակեսցի ։ Սակայն սատարեսցէ սրբամատոյց աղօթք ձեր սարտուցելոցս ․ զի բանն ա՟ծ տացէ բան բանի մերոյ մաքին , և հանճար հմտութ՟ե հոգին ս՟բ՝ խորհել խորհրդով և խօսել ,, ։

Արդ եթէ հարազատ իցեն այս նամակագրութիւնք, եթէ յայլոց ումանց իմաստակաց պաճոյճ բառիւք յարմարեալ՝ մանաւանդ նոյնատառիւք 'ի դէմս գիւտայ, ես ոչ գիտեմ․ այլ զայս գիտեմ, զի ճառ խաչին է դերապանծ և վսեմ յօրինուած՝ աթենական ոգւոյ ցուցակ․ յորմէ իմանամք, թէ՝ և այլ բազմագիտի գործք երանելւոյն դաւթի և ընկերաց նորա պարտին լինել, որք այժմ չերևին 'ի միջի ։



ՎԱՐՔ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ

Գրիգորի Նարեկացւոյ ։

Հ̃մ. փետր. 27 ։ և յիշատակարանք ։

ՀՐԵՇՏԱԿՆ Ի ՄԱՐՄՆԻ՝ անուամբ և արդեամբք հսկօղն զուարթուն՝ տ̃րն գրիգոր Նարեկացի, հոգեկիր հաւտոր և ա̃ծարեալ րաբուն՝ ընտրեալ 'ի բիւրուց, էր 'ի վասպուրական շ̃է յանձեւացեաց գաւառէ, որդի երանելւոյն խոսրովու մեծի՝ անձեւացւոց եպ̃սի, գեղեցիկ շառաւիղ 'ի բարի արմատոյ, ծնեալ 'ի Թուին Հայոց իբր ն̃. այս է յամի տ̃ն 951. 'ի ժամանակս աշոտոյ ողորմածի Հայոց արքայի 'ի տանէ բագրատունեաց, և աբուսահլի արծրունւոյ առանձին Թագաւորին վասպուրականի, և տ̃ն անանիայի կթ̃ղկսի ։

Արդ զառաջինն սնաւ երանելին գրիգոր ը̃ աւագ եղբօր իւրում յովհաննու, և սահակայ կրսերոյ, 'ի տան բարեպաշտ ծնողացն ա̃մ կարգօք ա̃ծպաշտութ̃բ. և ապա առ ոտս երանելւոյն անանիայի Նարեկացւոյ, որ էր հօրեղբայր մօր իւրոյ, և առաջնորդ վանիցն Նարեկայ՝ որ 'ի գաւառին ռշտունեաց առվանայ ծովուն ։ Քանզի առեալ Անանիայ վրդպի առ իւր զերկոսին որդիս դստեր եղբօր իւրոյ՝ զՅովհաննէս և զԳրիգոր՝ վարժեաց զնս յուսումն ածային գրոց 'ի վանս անդ Նարեկայ, հանդերձ հրեշտակական վարուք առաքինութե ։ Եւ եղեն երկոքին հարազատք մի քան զմի յառաջադէմ 'ի սրբութե և յիմաստութե . վս զկնի վախճանի տն Անանիայի՝ ընտրեցաւ յառաջնորդութի ուխտին աւագ եղբայրն Գրիգորի Յովհաննէս վանական . Իսկ ինքն Գրիգոր ձեռնադրեալ 'ի քահանայութի՝ էր ոչ վարժապետ միանձանց և գործակից եղբօր իւրոյ, առաւելեալ յոյժ յոյժ եռանդեամբ հոգւոյն, և գերազանցեալ շնորհօք գիտութե քան զբնաւս ։

Այլ որ մեծն է՝ ըստ առաւելութե շնորհացն որ 'ի նմա, զարդարեալ էր երանելին Գրիգոր ամ խոնարհութբ, իբր նուաստ ունելով զանձն քան զամենեսին . և քանզի հանգիստ այ է խոնարհն հոգւով, տիրապէս եղև ընդունարան հոգւոյն այ, և վառարան ածայնն սիրոյն . որով բորբոքեալ օր քան զօր՝ ետ զանձն բոլորովին 'ի հայեցողական տեսութի ածայնոց, և յաղօթս մշտամռունչս, և յանդադար վերծանութիւնս ածեղէն տառից, հանդերձ ճգնողական վարուք պահեցողութե և խստամբերութե, և կատարեալ մրցանօք առաքինի նահատակութե ըդդէմ պատերազմաց աներևոյթ թշնամւոյն ։ Հրաշալի էր և յածաբանական վրդպութե և յատենախօս

խօս քաղցրութե՟ն , պերճ և առատ բանիւք և քաղցրաբուղխ շրթամբք . նոյն և յաջողակ 'ի գիր՝ և զօրաւոր , որով զարմացուցանէր զմերձաւորս և զհեռաւորս . և քարոզեալ լինէր համբաւ սրբութե՟ն և իմաստութե՟ն նր՟ ը՟ ամ՟ն հայոց առաջի թգ՟րաց և կթ՟ղկսաց ժամանակին :

Մինչդեռ տակաւին նորընծայ քահանայ էր երանելին գրիգոր՝ իբրև 'ի քսան և վեցերորդ ամի հասակի իւրոյ , գուրգէն արքայ արծրունի՝ որդի աբուսահլի և եղբայր աշոտոյ և սենեքերիմայ՝ յղեաց առնա պատուէր խառն ընդ աղերսանաց , գրել զմեկնութիւն երգոց երգոյն սողոմոնի : Նա այրն ա՟յ անդիմադարձ գտեալ արքունի հրամանին՝ որպ՟ս թէ յա՟յ հրամայեալ , յանձին կալաւ ամ՟ խոնարհութ՟բ , և կատարեաց զխնդիրն գործակցութ՟բ հոգւոյն ս՟բյ , որչափ համառօտ՝ նոյնչափ և բազմիմաստ տեսութ՟բ . և այնպիսի պարզ և վայելչական յօրինուածով՝ մինչև չէք իբրև զնա գեղեցիկ թարգման այնր դժուարին և գաղտնի մատենի . և այս գործեցաւ 'ի թուականութե՟ն հայոց նիզ . այն ամ տ՟ն է 977 :

Յայնմ ժամանակի անդ 'ի վասպուրական էր վտարանդեալ վահան հարազատ կաթողիկոս հայոց . որոյ փոխան նստաւ ստեփաննոս ոմն , և ապա խաչիկ . զի կայր խնդիր հակառակութե՟ն 'ի մէջ եպ՟սաց և վ՟դպաց վ՟ն պէսպ՟ս իրաց , և վ՟ն բանի քաղկեդոնականաց : Իսկ երանելին գրիգոր ստուգութ՟բ 'ի վ՟ր հասեալ, եթէ տարապարտ և վնասակար պառակտութիւն է եկեղեցւոյ, ուր երկպառակելոց ընդ ձայնին՝ նոյն երևէր ողջմտութի՛ն 'ի վարդապետութեան, յորդորէր զամենեսեան հոգւով հեզութեան և խաղաղութեան 'ի սէր և 'ի միաբանութիւն․ և զորս տեսանէր պնդեալս 'ի բանակռուութիւն յոչինչ պէտս 'ի կործանումն լսողաց՝ խրատէր և յանդիմանէր, և զանհաւանս 'ի բաց պարուրէր․ և զոր ինչ միանգամ արժանի ուղղութեան և բարեկարգութեան գիտէր, խնամով փոյթ առնէր 'ի գլուխ տանել։

Նաև զի ըստ այսմ օրինակի ջան և փոյթ էր սրբոյն (ասեն յայսմաւուրք) վասն միաբանութեան եկեղեցեաց, զի զեղծեալ և զանփոյթ արարեալ կարգս եկեղեցւոյ 'ի ծուլից և 'ի մարմնասէր առաջնորդաց կամէր հաստատել և վերստին նորոգել, վասն որոյ այպանէին զնա բիրտ և սոպռ մարդիկ, և համբաւէին զնա ծայթ․ որ էր անուն նախատանաց իբր հռոմացելոյ և հաւատափոխ եղելոյ․ և այն զի՝ այսպիսի կոչմամբ թշնամանել լինէին այնպիսի անձինք ևեթ, որք ճշմարտութեան զուղղութիւն և զբարեկարգութիւն ազգին խնդրէին․ որպէս և անձամբ փորձ գոլով իրացս՝ աւաղէ երանելւոյն խոսրով հայրն սրբոյն գրիգորի 'ի մեկնութեան ժամագրքի ընդ ձեռագիր օրինակաց։

Նաև եղև իբրև բազմացան չարախօսք սրբոյն գրիգորի, յայնժամ ժողովեալ 'ի մի վայր եպիսկոպոսունք և վարդապետք՝ հանդերձ ազատ իշխանօք և տանուտերօք, սկսան խորհուրդ առնել

վասն

վ՟նր․ և յղեալ կոչեցին զնա՝ առ ՚ի դատել և յանդիմանել յատենի, և պատուհասել կ՟մ աքսորել զնա որպէս զհերձուածող ։ Իսկ իբրև եկին առ ս՟բն հրաւիրակքն՝ զի տարցին զնա, եւ ընդ առաջ նոցա այրն ա՟յ զուարթ ուրախ և անայլայլակ դիմօք․ և գիտացեալ զխորհուրդ կոչման իւրոյ՝ կամեցաւ իմաստութ՟բ յանդիմանել զանմտութ՟ի ն՟ց, որք խնդրէին զանձն ն՟ր ։ Ասաց ցեկեալսն․ Նախ կերիցուք հաց, և ապա գնասցուք ։ Իսկ ետ տապակել աղաւնիս՝ այն որ զհեզութ՟ի ունէր աղաւնւոյ, և իսպառ հրաժարեալ էր յա՟մ խորտկաց․ և բերեալ եդ առաջի նոցա սեղան, զի կերիցեն․ և օրն էր ուրբաթ ։ Ընդ որ առաւել ևս գայթակղեալ եկելոցն՝ ասեն ցնա․ վա՛րդապետ՝ ո՞չ է օրս ուրբաթ ։ Իսկ նա յանդէտս եղեալ՝ ասէր․ Թողութ՟ի արարէ՛ք ե՛ղբարք, ես ո՛չ գիտացի զաւուրս պատկեր ։ Յայնժամ ասէ ցտապակեալ աղաւնիսն․ արի՛ք գնացէ՛ք ՚ի տեղիս ձեր և յերամս, զի պա՛հս է օրս այս ։ Իսկ նոյնժամայն ընդ ասել ս՟բյն՝ կենդանացան աղաւնիքն, և թեւս առեալ թռեան առաջի ամենեցուն ։

Իսկ ն՟ց տեսեալ զզարմանալի սքանչելիսն՝ որ եղև, լցան ահի՛ւ մեծաւ և ափշութ՟բ․ և յարուցեալ անկան յոտս ս՟բյն և երկիրպագին․ և թողութ՟ի անձանց հայցելով՝ փառս տային ա՟յ ։ Իսկ ոչ համարձակեալ այնուհետև ձեռն արկանել յայրն ա՟յ, դարձան ՚ի ժողովն՝ ուստի առաքեցան․ և պատմեցին ամենեցուն զհրաշսն՝ որ եղեն. և նք՟ լուեցին 'ի խորհրդոցն. և անուանեցին զն՟րն գրիգոր վ՟ն նշանագործութե՟ն երկրորդ սքանչելագործ. ոչ՟ և այլք յաղագս լուսաւոր վ՟դպութե՟ն երկրորդ լուսաւորիչ կարդային։ Եւ նա այսպիսի սքանչելեօքս և ճշմարտասէր մտօքն, խստակրօն վարուքն և ա՟ծաբան քարոզութ՟բն փայլեաց յ՟ծխս ոչ՟ զարեգակն. և ը՟ աւանդութե՟ ազգիս, զոր և լուին իմն խորհրդաբանութ՟բ թու՛ղի ակնարկել ինքն ն՟րն ո՟յ յաղօթագիրս իւր, արժանի եղև տեսանել և զմանկացեալն ա՟ծ՝ բազմեալ 'ի վ՟ր գրկաց ամենօրհնեալ ա՟ծածնի, յանդիման վանաց նարեկայ՝ 'ի վ՟ր աւտեր կղզւոյ ծովուն աղթամարայ։ Եւ ոչինչ են զարմանք. քանզի իսպառ ընկղմեալ էր հանապազորդեան խորհուրդ սրտի ն՟րյն 'ի հրաշալի խորհուրդս տնօրէնութե՟ բանին 'ի մ՟մնի, և զեղեալ ընտանի սիրով փրկչին, հանդերձ ջերմ և առանձին ընտանութ՟բ 'ի սէր ն՟ր ա՟ծամօրն. ոչ՟ յայտյանդիմանութ՟բ ցուցանեն աղօթք և ճառք և գանձք և տաղք հոգեկիր հռետորիս։

Գլուխ և պսակ գործոց երանելւոյն՝ որ բազմապատիկ բանս յօրինեաց հոգելիցս, վկայեալ է յամենեցունց լինել՝ աղօթամատոյց ն՟ր աննման, Նարեկ կարդացեալ յանուն վանաց ն՟րյն. գործ սքանչելի սեպհական այնպիսում հրեշտակահանգէտ աղօթականի և ա՟ծիմաստ բանահիւսի. զոր շարագրեաց յամի տ՟ն 1002. և 'ի թուականիս հայոց՝ նմա. զ՟ հայցման ն՟ց միանձանց, և զ՟ ակնարկութե՟ եղբօր իւրոյ յովհաննու. զոր և առ յետին խոնարհութե՟ իւրոյ էառ իբրև գործակից 'ի լրումն այնր մատենի. վ՟ոյ և զանուն նորա յաւել 'ի յիշատակարանն իբրև գործակցի ։

Նազմօք յառաջ յօրինեալ էր և զպատմութի՟ն ս՟բ խաչին ապարանից՝ որ բերաւ 'ի յունաց 'ի հայս յամի 983. ն՟լ՟բ. 'ի խնդրոյ պըսակաւորին ստեփաննոսի եպ՟սին մոկաց, 'ի նոյն յարելով և ներբողեան 'ի ս՟բ խաչն ըստ այբուբենից տառից՝ խրթին ոճով վսեմութե՟. և ներբողեան առանձին առ ս՟բ ա՟ծածինն՝ գերապանծ և գեղապանծ բանիւք և հրաշալի հոգւով ։

Նորա դարձեալ և ճառս ներբողականս ընտիրս 'ի ս՟բ առաքեալսն, և 'ի ս՟բն յակովբ մծբնայ հայրապետն. և գանձս քարոզականս 'ի խորհուրդ տ՟րունական տօնից, և 'ի պատիւ ս՟բց մարտիրոսաց, հանդերձ մեղեդեօք և տաղիւք. զի էր կատարեալ քերթող, և հռետորաց հռետոր ։ Նորա և ըզմեկնութի՟ն ո՛վ է գայլն՝ որ 'ի գիրս յոբայ. թո՛ղ զայլ գործս՝ որ չերևին 'ի միջի ։

Յետ կատարման աղօթագրոց՝ 'ի նմին ամի երևի վախճանեալ յովհաննէս վանականն անդրանիկ եղբայր ս՟բյն գրիգորի. յետ ն՟ր և ինքն երանելին նոյն վանից նարեկայ վանական՝ ոչ յերկարեալ 'ի մարմնի, փոխեցաւ առ ցանկալին իւր ք՟ս, և խառնեցաւ հրեշտակն երկրաւոր 'ի դասս երկնաւոր զուճարթնոց, 'ի հասակի յիսուն և մի՝ կամ յիսուն և երկու ամաց, յամի տ̄ն 1003. և 'ի թուին հայոց նծբ. 'ի մեհեկի ի̄ա. որ յայն ժամանակս էր՝ հոկտեմբերի 6. կմ̄ ը̄դ յայսմաւուրաց՝ փետրվարի. 27. 'ի կաթողիկոսութե̄ տ̄ն սարգսի: Իսկ սրբասնեալ մարմինն մաքուր եդաւ 'ի վանս անդ նարեկայ՝ հուպ եկեղեցւոյ սրբուհւոյն սանդխտոյ:

Յետ ամաց անցելոց իբրև տասնևութից, յորժամ սենեքերիմ արքայ վասպուրականի չու արար 'ի սեբաստիա՝ առեալ ը̄ իւր և զվարագայ ս̄բ նշանն, յամի 1021. նհ. ասի՝ թէ գնացին ը̄ նմա և բազումք 'ի միաբանից նարեկայ. և շինեալ վանս բնակուե̄ 'ի գիւղ ուրեք մօտ ակնայ՝ նարեկ անուամբ, անդ հանգուցին զնշխարս ս̄բյն. ուր և ցարդ պատուի գերեզմանն ս̄բյն 'ի տեղւոջն՝ որ կոչի գիւղ արակայ. ո̄պ և 'ի բնիկ հանգստարանի և 'ի ճգնարանի ս̄բյն՝ որ է ուխտատեղի հաւատացելոց, երևին զօրութիւք սքանչելեաց ս̄բյն 'ի սկզբանէ հետէ: Յորում կարգի է և միւս ևս հրաշք մ̄ի ձագուց յարուցելոց, զոր յիշատակէ յայսմաւուրքն լեալ 'ի վանս նարեկայ:

'Ի յետին ժամանակս (ասէ) քուրդ մի տիրէր նարեկայ. և քուրդն այն ետ հաւ մի 'ի շինականն իւր, որ էր կին աղքատ, 'ի թուխս դնել. և եդ կինն զհաւն 'ի թուխս, մինչև ելին ձագքն. և շրջէր հաւն ձագերովն աւուրս երիս. և ապա երթեալ յահէ անձրևի՝ եմուտ ձագուքն հանդերձ 'ի ներքոյ եր-

երկանաքարի, որ յեցեալ էր յորմն կոյս. և յազդմանէ չարին անկանի երկանաքարն, և ջարդէ զհաւն և զձագս նր̃ ։ Յայնժամ 'ի հոգս և 'ի վարանս անկաւ կինն տառապեալն, զի ահաբեկ լինէր 'ի ցասմանէ քրդոյն. ապա յուսացեալ յա̃ծ և յաղօթս ս̃բյն գրիգորի, որ զաղաւնիսն խորովեալս կենդանացոյց, դնէ զմեռեալ հաւն և զխորտակեալ ձագսն 'ի մաղ մի փոկեայ. և առեալ հաւատով տարաւ եդ առ գերեզմանն ս̃բյն գրիգորի. և ինքն դարձաւ 'ի գործ իւր տառապագին. և 'ի մտս իւր աղաչէր զա̃ծ և զս̃բն գրիգոր ։ Եւ իբրև ժամ մի եկաց 'ի վ̃ր, ետես զի գայր հաւն գրգալով. և 'ի խնդութենն մեծաձայն քարոզեաց բազմաց զսքանչելիսն. և նոցա հիացեալ փառս ետուն ա̃յ, և ձագյարոյց ս̃բյն գրիգորի ։

Եւ արդ եթէ 'ի վ̃ր անբանից եցոյց սքանչելիս գրիգոր զզօրութի̃ իւր 'ի կենդանութե̃ և յետ մահուն, զի յօգնութի̃ հասցէ բանաւորաց 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր կարիս, քանի̃ ևս անպակաս ձեռնտու լինիցի՝ որոց հաւատովք դիմեսցեն 'ի բարեխօսութիւն նր̃ 'ի պէտս առողջութե̃ հոգւոյ և մարմնոյ. ոչ̃ և աղօթք նր̃ հաւատովք կարդացեալ՝ յոլովից եղեն և լինին անդադար 'ի փրկութ̃ յա̃մ ախտից հոգևորաց և մարմնաւորաց ։ Եղէ̃ թէ աղօթք ս̃բյն երկրորդեալք 'ի մէնջ՝ նորին հոգւով ելցեն առաջի ա̃յ. զի և գործովք նմանօղք լիցուք հրեշտակային սրբութե̃ նր̃ ։

ՎԵՐՋ

ՎԱՐՔ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ

Ներսեսի կլայեցւոյ՝ Շնորհալի հայրապետի ։

Հ· օգոստ· 9· ըստ ջէռ· կամ ըստ այլ, օգոստ· 5· և յունիսի· 13 ։ Գործք շնորհալւոյն ։ Լամբրոնացի 'ի ներբող շնորհ ։ և այլ պատմագիրք և յեղատաճարանք ։

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, որ և Ներսէս շնորհաց կարդացեալ՝ 'ի լնութէ հոգւոյն իւյ, և կլայեցի վերաձայնեալ՝ 'ի հայրապետական աթոռոյն հռոմկլայու, պսակ պարծանաց համօրէն հարց և վդպաց հայաստանեայց, առաջնորդ եկեղեցւոյ լուսաւոր ոչ զլուսաւորիչ, և բարեզարդ կարգաւորիչ ոչ զմեծն Ներսէս, պայծառացուցիչ գրաւոր իմաստիւք ոչ զթարգմանիչսն, և հրեշտակային վարուք հրահանգիչ մերձաւորաց և հեռաւորաց ոչ զնարեկացին, էր 'ի պարթևական զարմէ սբ լուսաւորչին մերոյ՝ ըստ տոհմին սերելոյ 'ի դստերէ մեծին սահակայ պարթևի 'ի մէջ ցեղին մամիկոնեանց. քանզի եկաց մնաց մինչև ցայն դարս 'ի մէջ ազգիս հայոց սերունդ զարմի սորին վարդանայ քաջ նահատակի, որ հայրենեօք էր մամիկոնեան, և մայրենեօք պահլաւունի արշակունեան 'ի պարթևական ծննդոց ս՟բյն գրիգորի ․ յորոյ 'ի պատիւ ընտրեցին և յետինք առաւել անուանիլ մայրենի ազգաւ՝ քան հայրենեաւ ։

'Ի տանէ անտի էր բարեպաշտ և մեծանուն իշխանն հայոց գրիգոր մագիստրոս՝ հայրն ս՟բյն գրիգորի վկայասիրի, և նախահաւն ս՟բյն ներսեսի կլայեցւոյ՝ 'ի կողմանէ հանւոյն ․ քանզի 'ի դստերէ մագիստրոսի ծնան ուստերք չորք ․ ապիրատ, վահրամ, վասակ՝ փառաւոր իշխանք, և գրիգորիոս ե՟պս կողմանցն եգիպտոսի ։ Իսկ իշխանն ապիրատ՝ որ էր տ՟ր ծովք դղեկի 'ի կողմանս խարբերդոյ, ծնաւ և ինքն ուստերս չորս ․ յ՟ր են վասիլ իշխան, շահան՝ զօրավար անուն, գրիգորիս կաթուղիկոս՝ պահլաւունի և փոքր վկայասէր կոչեցեալ յոմանց, և ներսէս կ՟թղկս, որ կլայեցի և շնորհալի անուանեցաւ ։

Արդ երանելիս ներսէս ծնաւ յամի տ՟ն իբր 1100, և 'ի թուին հայոց շ՟խթ, և կամ եւս յառաջ՝ մի և երկու ամօք ․ և սնաւ ընդ հարազատին իւրում գրիգորիսի ա՟մ ա՟ծապաշտ կարգօք 'ի տան բարեպաշտ ծնողացն, և ը՟ւ հովանեաւ մեծին գրիգորի վկայասիրի, որ էր քեռի հօրն՟ց յ՟ր եղբայր մօրն ապիրատայ ․ և վարժեցաւ յուսումն ա՟ծեղէն գրոց և արտաքին իմաստից առ ոտս գիտնաւորին ստեփաննոսի՝ առաջնորդի կարմիր վանաց 'ի սեաւ լերին․ որում աշակերտեալ էին և իգնատիոս մեկնիչ ղուկասու, և սարգիս մեկնիչ կաթուղիկեայց։

Նա և որ քան զօր աճեցեալ ներսեսի առաւելութք՟ գիտութե՟ քան զհասակակիցս և զերիցագոյնս, և զարգացեալ եօթնարփին շնորհօք հոգւոյն սբյ՟՝ սքանչելի գտաւ 'ի կատարելութե՟ իմաստից և առաքինութե՟։ Նա և եղև յորժամ ընտրեցաւ յաթոռ կաթողիկոսութե՟ աւագ եղբայր նր՟ երանելին գրիգորիս կամ գրիգոր, ձեռնադրեաց զկրտսեր եղբայր իւր 'ի քահանայութի՟, և անուն եդ նմա տր՟ ներսէս (զի առաջին անունն այլ էր)․ զի տեսանէր 'ի նմա զշնորհս նախնւոյն իւրոյ մեծին ներսեսի պարթևի․ և յետ փոխադրելոյ աթոռոյն 'ի հռոմկլայ՝ եօծ զնա եպս՟։

Նա և էր սբ՟ եպսն՟ ներսէս շնորհազարդ՝ գործակից եղբօր իւրում սբ՟ հայրապետին գրիգորիսի յամ՟ 'ի վաստակս հովուական պաշտաման․ արթուն և տքնող յամի 'ի վր՟ հօտին՝ առ առաջնորդել ամենեցուն 'ի ճանապարհն կենաց և փրկութե՟․ քարոզ և վկ՟պ ճշմարտութե՟ և ուղղութե՟ բանիւ և գրով, և առաւել ևս օրինակաւ․ զի էր յորդաբուղխ բանիւ, և յաջողակ յոյժ 'ի շարագրութիս՟ անոյշս․ քերթող կատարեալ 'ի բնէ, և բանահիւս ճարտար ըստ արուեստի․ և լեզու նր՟ իբրև գրիչ արագագիր դպրի հոգւոյն սբյ՟, որով սփռէին և շնորհք 'ի շրթանց նորա 'ի շինութի՟ ամենեցուն։ Հեզ և խոնարհ բարուք․

րուք · քաղցր 'ի խօսս · փարելի 'ի կենցաղավարութե՟ · խրատիչ, ուղղիչ, յանձանձիչ, և շահեցօղ մերձաւորաց և հեռաւորաց · սիրելի յաչս ամենեցուն ոպ՟ հրեշտակ ա՟յ, և պատկառելի մեծի և փոքու իբրև առաքելաշնորհ այր ա՟յ, և հասարակաց հայր ազնուագութ և բարեգորով։

Եթէ աղքատ ոք էր և կարօտեալ, առ նա դիմէր և լիանայր · եթէ նեղեալ ոք և հարստահարեալ, նովաւ սփոփէր և դիւրանայր · եթէ տգէտ, նովաւ իմաստնանայր · եթէ մեղաւոր, նովաւ դառնայր · մոլորելոց էր առաջնորդ, հիւանդացելոց հոգւով՝ բժիշկ · ը՟ ա՟մի ա՟մ, և ամենեցուն բարերար · մինչև զթշնամիս սիրով և հեզութ՟բ նուաճել, և զսիրտս բոլորից յինքն յանկուցանել։

Այլ առաւել քան զառաւել եղև խնամք երանելւոյն 'ի վ՟ր եկեղեցական բարեկարգութե՟ց · զառաջնոցն յառաջնորդաց մերոց ըդ՟ բարի բարի կարգաւորութիւնս խրթնացե՟լս յաւուրս յետինս՝ կրկին ևս նորոգեաց, և պայծառացոյց եօթնպատիկ վայելչութ՟բ քան զառաջինն · որով և եթող յիշատակ անմահական յեկեղեցիս հայաստանեայց, տիրապէս գոլով վերջին կարգադիր և լրացուցիչ ա՟մ գլխաւոր ծիսից և ծիսարանաց, պաշտամանց և եկեղեցական կարգացմանց և երգոց, և ամենայն կարգաց գեղեցիկ բարեզարդութե՟։

Ոսկեբերան արամեանց կոչեցին զնա և յոյնք գլխովին, և ա՟ծաբան թորգոմեանց · և եթէ յայլ լեզուս յեղեալ լինէին լուսաւոր և զօրաւոր մատեանք ն՟րյն, տիեզերալոյս վէպ ճանաչիւր առ ամենեսին առաքելաշնորհ հայրապետս հայաստանեայց ։ Բայց սակայն և արդեամբք գործոց առ կենդանութ՟բ իսկ իւրով ոչ միայն ՚ի հայս պայծառացաւ անուն նորա, այլ և մինչև ՚ի մեծն հռովմ հնչեաց համբաւ նր՟, որպ՟ վկայէ լամբրոնացին . և ՚ի պատիւ երեսաց նորա պատուեցաւ աթոռն հայրապետական ՚ի գահէն հռովմայ՝ առաքելով գաւազան և քօղ և այլ օժիտս պէսպէս առ եղբայր նր՟ գրիգորիս կթղկս, և գրով զսէրն հաստատելով . որպ՟ և ՚ի մէջ յունաց պանծալի գովութ՟ք քարոզեցաւ անուն տն՟ ներսեսի ՚ի կայսերէ և ՚ի պատրիարգէ նց՟ . նոյնպէս և ը՟ ամ՟ ասորիս և յայլ ևս եկեղեցիս հռչակելի եղև . թող զի և առաջի անհաւատից գլխովին մեծարու և պատկառելի ցուցաւ . մինչ զի և այլասեռքն գային պատարագօք ՚ի տես տն՟ գրիգորիսի և տն՟ ներսեսի, և երկրպագութ՟ք պատուէին ։

Այլ որ մեծն է, որչափ և մեծացաւ անուն ն՟րյն ներսեսի, և յարդեանց քարոզեցաւ իմաստութ՟, սրբութ՟ և առաքինութ՟ նր՟, նոյնչափ և խորին խոնարհութ՟ք զարդարե՟լ գտաւ երանելին . միանգամայն և ճգնասէր, աղօթասէր, արտօսրաբուղխ, և կենակից ընդ ա՟յ ՚ի սրտի, յանչափ զբաղանս եկեղեցւոյ՝ անզբաղ հոգւով ։ Փափաքէր և իսպառ առանձնանալ յանապատ . այլ ոչ թողլին զնա մարդիկ. զի և Աստուծոյ կամք էին կացուցանել զնա եօթնաջահեան ճրագ լուսատու ազգին ։ Այլ երբ մերձեցան աւուրք վախճանի երջանիկ կաթողիկոսին Գրիգորիսի՝ յետ ծդ ամաց հայրապետութեան, արար ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց ՚ի հայրապետական աթոռն ՚ի Հռոմկլայ. և առաջի եդեալ նոցա զտկարութիւն ծերութեան իւրոյ, միանգամայն և գուշակեալ զմերձակայ փոխումն իւր յաշխարհէ, ետ նոցա հովիւ զհարազատն իւր զսուրբն Ներսէս. և թէպէտ նա բազմօք հրաժարէր առ խոնարհութեան և առանձնասիրութեան, պատճառելով զիւրն իսկ ծերութիւն, այլ բռնադատեալ յամենեցուն՝ հարկեցաւ հնազանդ լինել ։ Յայնժամ էօծ զնա երանելին Գրիգորիս, և զգեցուցեալ նմա զզարդն իւր հայրապետական՝ եարկ ՚ի գլուխ նորա զկրկին քող կաթողիկոսական, ետ և զգաւազանն ՚ի ձեռս նորա, և նստոյց յաթոռ իւր. և ողջունեաց զնա երկրպագութեամբ իբրև կաթուղիկոս ամենայն Հայոց՝ ինքն և որ ընդ նմա էին ժողովուրդն ամենայն ։ Իսկ շնորհալին սուրբ Հայրապետն Ներսէս յարուցեալ ՚ի մէջ բազմութեանն՝ սկսաւ գեղեցիկ ատենախօսութեամբ յանդիման առնել զանձին խոնարհութիւն, և զմեծ պարտաւորութիւն հովուապետական. և յայտնի կացոյց բանիւն, թէ որպիսի արժանաւոր հովիւ պարտի ընտրիլ բանաւոր հօտին Քրիստոսի՝ անթերի սրբութեամբ և կատարեալ իմաստութեամբ ըստ Աստուծոյ. յորմէ վերջացեալ զանձն խոստովանէր երանելին. ուր արդիւնք գործոցն աղաղակէին, թէ չէր ոք այլ արժանաւոր քան զնա, կամ իբրև զնա. և իցէ՞ թէ գտցին նմանօղք հետոց նր՟: Այս եղև յամի տն՟ 1165. 'ի Թուականիս Հայոց ՈԺԴ. մօտ յելս տարւոյն. յորոյ վր՟ իբրև անցին ամիսք երեք, 'ի սկզբան ամին յաջորդի փոխեցաւ 'ի կենաց երանելին Գրիգորիս, և թաղեցաւ 'ի Հռոմկլայ 'ի շիրմի իւրում:

Յայնժամ գրեաց ո՟ք հայրապետն Ներսէս թուղթ ը՟հանրական առ ա՟մ ազգ հայկազուն ցրուեալ ը՟ ա՟մ տեղիս. յորում յիշատակեալ զփոխումն եղբօր իւրոյ յծ՟է, և զակամեայ ընտրութ՟ն իւր յաթոռ կթ՟ղկսութե ա՟մ Հայոց, յայտ արար զհովուական պարտս իւր 'ի վր՟ լրուե՟ հօտին. և զի անկարանամք ասել ը՟ ամենեսին բերանով խօսել և առաջնորդել խրատուք՝ ոչ՟ արժանն է, գրով ազդառնեմք ա՟մ հեռաւորաց՝ իբրև 'ի մօտոյ, զոր պարտն է մեզ ասել, և ձեզ լսել և առնել. և սկսեալ 'ի վանականաց և յեպս՟աց և 'ի քահանայից մինչև ցաշխարհիկս ը՟ իւրաքանչիւր աստիճանի և վիճակի՝ 'ի գլուխս գլուխս կարգէ մարգարտաշար խրատս ընքանչելիս՝ ա՟ծագութ սիրով և հայրախնամ փութով, հոգեբուղխ բանի՛ և ա՟ծաշնորհ վրդպութբ՟:

Ուո՛ղ զի յաւել առաքել ընտրանաւ զանձինս, որ ունէին զհոգի ա՟յ, յայլ և այլ տեղիս 'ի քարոզութ՟ի և 'ի մշակութ՟ի հոգւոց: Ուո՛ղ և զայլ թուղթս բազումս, զորս առ առանձին գաւառս և քաղաքս, և առ զանազան անձինս գրեաց լի հոգւով և շնորհօք ։

Այլ առաւել ես յիշատակաց արժանի են թղթակցութիւնք շնորհալւոյն ը՟ կիռ մանուէլի կայսեր յունաց և ը՟ միքայէլի պատրիարգի նոցա , յառաջ քան զկթղ՟կոսութ՟ին և զկնի կթղ՟կոսուէ մինչև ցվախճան իւր ցանկալի · յորոց ունին իմաստասիրել վերծանօղք , եթէ որպէս անհնարին կարծեցելոց հնարաւորիչ եղև հրեշտակային առաքինութիւն և շնորհալից վ՟պութ՟ի սբ՟ հօրս մերոյ , զերկոսին ազգս երկպառակեալս ատելութ՟բ ՚ի սէր զօդել միաբանութ՟ե , բառնալ ՚ի միջոյ զհերձուած բաժանման , և միաւորել զամենեսին ՚ի մի ուղղափառ դաւանութ՟ի և ՚ի հաւասարութ՟ի քրիստոնէական հարազատութ՟ե · որոյ և կատարումն ՚ի գործ եղաւ ազգային ժողովով երկոցունց կողմանց յաւուրս գրիգորի կթղ՟կսի տղայ կոչեցելոյ զկնի փոխման շնորհալւոյն · այլ որ զկնի եկին թագաւորք յունաց և առաջնորդք ազգի և ազգի՝ յետնեալ գտան ՚ի նմին ոգւոյ միաբանական սիրոյ ։

Յիշեսցուք ծաղկաքաղ և զայլ գրաւոր երկասիրութ՟իս շնորհալւոյն յայլևայլ ժամանակս ։ Յառոյգ հասակի նորընծայ քհ՟նյութ՟ե իւրոյ էր յօրինեալ զոտանաւոր վիպասանութ՟ի նախնեաց ՚ի թուին հայոց շհ՟ ։ Եւ յետ առման եդեսիոյ քաղաքի ՚ի զանգի ամիրայէն , որ եղև ՚ի թուին մերում շղ՟գ , գրեաց զողբսն եդեսիոյ ՚ի խնդրոյ եղբօրորդւոյ իւրոյ ապիրատայ , որ և յետ ժամանակաց եւ կթ՟ղկս՝ գրիգոր ապիրատ կոչեցեալ. որպէս և զխոստովանիմն, որ է եօթն հարիւր տուն ոտանաւոր՝ իբր քաղուած աւետարանին, արար ը՟դ խնդրոյ նորուն ապիրատայ 'ի թուին Ո՟։ Սմին գրեալ և զայլ առանձին նամակ ոտանաւոր առ նոյն ապիրատ յերկրպագութեան նր՟ 'ի վր՟ գրոյ անուան նորին։ Իսկ զողջոյն մատեանն Յս՟ որդի կոչեցեալ 'ի սկզբնաւորութենն, երկու հազար տուն ոտանաւոր, շարադրեաց 'ի թուին Ո՟ և ոա՟. որ է գեղեցիկ բովանդակութ՟ի հին և նոր կտակարանաց՝ աղօթական ձևով, և լի հոգւով սյ՟։ Ողբ և զայրուբենական տաղաչափութ՟իս 'ի վերայ պէսպէս իրաց. և զոտանաւոր գովեստ հրեշտակաց՝ հանդերձ արձակ ներբողենիւք։ Յայտնի են և բազմապատիկ երգք և տաղք և գանձք 'ի վր՟ տ՟րունական տօնից և 'ի պատիւ սբ՟ց, գեղեցիկ և վայելուչ խորհրդածութբ՟ք. յորս են որ 'ի վր՟ այբուբենի են կարգեալ, և են որ յօդեն զանունս ՆԵՐՍԷՍ, կմ՟ ՆԵՐՍԷՍԻ ԵՐԳ. են։ Իսկ շարականք են բազմագոյն՝ մարգարտայեռ բանիւ և ա՟ծիմաստ խորհրդով. յորս փայլեն հրաշալի ա՟ծաբանութ՟բք և խորհրդական մեկնութ՟բք ա՟ծային տառից՝ վսեմ և դիւրիմաց ոճով. որ է հրաշալի հոգի շնորհալի վրդ՟պիս։

Արար և ոտանաւոր ներբող 'ի սբ՟ խաչն ա՟ծընկալ՝ հանդերձ արձակ վերլուծութ՟բ ճառի դաւթի անյաղթին, որ և պատճառք ճառի խաչին և մեկնութ՟ի բարձրացուցէքն,

'ի

՚ի խնդրոյ վարդանայ վրդպի՝ որ ՚ի վանաց հաղբատու . զոր օրինակ և ՚ի խնդրոյ գէորգեայ առաջնորդին հաղբատու ՚ի լոյս ած զպատմութիւն սրբոյն սարգսի զօրավարի ՚ի թուին ՈԷ : Նաև ըստ խնդրոյ սյլում վրդպի արար զմեկնութիւն Ա.Ժ չոր տասնըչելէ ճառին, որ գտանի ՚ի վախճան գրոցն սահմանաց դաւթի անյաղթի՝ առեալ ՚ի գրիգորէ նիւսացւոյ : Գրեաց և զայլ հոգևոր և իմաստասիրական պիտառնութիւնս անթիւս՝ եթէ ոտանաւոր և եթէ արձակ բանիւ . * Անթիւ են բանք՝ զոր նա խօսէր, և անդանդաղ մատամբք գրէր ||, ասէ Լամբրոնացին : Մինչ զի և առակս հեշտալուրս յօրինեաց, որ ասին հանելուկք, իբր յծիկ լեզու . զի լիցի ՚ի բերանս ռամկաց նիւթ մտացի և խորհրդաւոր զրուցաց՝ փոխանակ շաղփաղփութեանց և բամբասանաց :

՚Ի բերանս հասարակաց է, քահանայից և ժողովրդոց՝ սքանչելի աղօթք նորին՝ Տէր խոստովանիմ . զոր խորհրդով՝ պարզ և յստակ գրեաց ՚ի բարբառ գրոց, ՚ի պէտս ամենեցուն՝ մեծի և փոքու, արանց և կանանց, բաժանեալ ՚ի ԻԴ տունս՝ ըստ ժամուց աւուրն, և ըստ թուոյ մարգարէական տառից . զի մի ոք ՚ի հեղգացելոց պատճառանս գիցէ չունել առ ձեռն պատրաստ զբովանդակութիւն կարևոր աղօթից և հանապազորդեան խնդրուածոց . որ և թարգմանեցաւ զկնի յամենայն գոգցես լեզուս ազգաց և ազանց . զի չիք իբրև զայն ՚ի մէջ ամենայն աղօթական բանից վրդպաց ը̅ համօրէն եկեղեցիս ։

Յետ ա̅մ բանից և գործոց արդեօք ձեւն էարկ երանելին և 'ի մեկնութ̅ի ս̅բյ աւետարանին՝ որ ը̅ մատթէոսի, լի ա̅մ հմտութ̅բ և համեղ բանիւք՝ ը̅ ընթացից ոսկեբերանին յովհաննու․ այլ ցաւ է մեզ, զի որպէս ասի՝ չկարաց 'ի լրումն ածել յերեսաց բազում հոգոց եկեղեցեաց և 'ի կանխելոյ մահու․ կամ թէ ոչ գտաւ ցարդ ևս ամբողջ գործն այն․ այլ միայն մինչև ցտեղին, * Մ՛ի համարիք՝ եթէ եկի լուծանել ‖ և ն̅․ յորմէ և անդր լրացոյց զկնի՝ յովհաննն ծործորեցի, որ և երզնկացի․ բայց գտանին և արտաքոյ ծործորեցւոյն հատուա՛ծք ինչ մեկնութ̅ե մատթէի 'ի միջին գլխոց․ ոչ գիտեմ, 'ի շնորհալւո՞յն արդեօք, եթէ յայլմէ աշխատասիրեալ ։

Արդ այսպիսի և այլ ևս բարեվաստակ և յաւերժայիշատակ արդեամբք լցեալ զաւուրս իւր ս̅բ հայրապետն, և 'ի չափաւոր ծերութ̅ի հասեալ, այն ինչ զհետ էր զվերջին ժողով գումարելոյ վ̅ս միաբանութ̅ե եկեղեցւոյ, վտանգեցաւ յերեսաց տկարութ̅ե մարմնոյն, զոր ինքն իսկ նիհարացուցեալ էր խստակրօն ճգնութ̅բ, և ցամաքեցուցե̅լ հանապազաբուղխ արտասուօք, և վաստակաբեկ արարեալ բազմադիմի հոգովք եկեղեցեաց, և անդադար ընթերցանութ̅բ և գրութ̅բ․ և այնպէս իբրև ցորեան հասունացեալ ամբարեցաւ 'ի շտեմարանս երկնից արքայութ̅ե՝ ը̅ մեծամեծ հայրապետաց և վ̃դպաց եկեղեցւոյ , 'ի հասակի եօթանասուն և հինգ , կմ̃ հզ̃ ամաց ,յետ լրման եօթնամեայ ժամանակի կաթողիկոսութե̃ , յամի տն̃ 1173. և 'ի թուին հայոց ո̃ի̃բ ,յաւուր հինգշաբաթի , որ օր հինգ էր օգոստոս ամսոյ , կամ է̃ այլոց ժ̃զ̃:

Եւ թաղեցաւ մեծաշուք հանդիսիւ՛ 'ի դամբարանի իւրում 'ի հռոմկլայ՝ առընթեր եղբօր իւրոյ : Եւ եղև սուգ մ̃մ ազգիս հայոց, և տանն իսկ յունաց. և ո̃պ հայք արժանա̃պ կարգեցին իսկ և իսկ՝ տօնախմբել ամ̃ է̃ ամէ զօր փոխման երանելւոյն , նոյնպէս և մանուէլ կայսր հռոմոց ետ դնել յիւր աւուրս զյիշատակ նր̃ 'ի կարգի նախնի ս̃րց հայրապետաց : Գերեզման շնորհալի հայրապետիս փայլեալ նշանագործութ̃ յաւուրց անտի իւրոց՝ պատուի և յարգ ս̃ր Ներսէս անուամբ յայլազգեաց անգամ , յորոց 'ի ձեռս է կլայն . և հրամանաւ նց̃ լինի և հաւատացելոց մտանել 'ի տեղին մ̃ ուխտի . զի թէպէտև դրամս հարկին տալ օտարաց , այլ առնուն 'ի ն̃քյն զամենայն շնորհս՝ զոր խընդրեն : (1)

* * *

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ.

(1) Միախուռն տօնախմբութին վեցեցունց ս̃ք հարց և վ̃դպաց մերոց՝ 'ի մեծէն մեսրոպայ մինչև 'ի շնորհալէն ներսէս , տայ մեզ իմանալ՝ թէ է̃ ամսոյ փոխման շնորհալւոյն , որ եղև յօգոստոսի , միաւորեալ են և յիշատակք այլոց յայսմ միջոցի . ապա թէ ոչ՝ սր̃ն մեսրոպ

'ի փետրվարի վախճանեցաւ, և սեպհական տօն նր̄ ունէր լինել 'ի միջոցի առաջաւորաց, անդ' ուր տօնեմք այժմ առանձին զամոլակից նր̄ զսահակ պարթև • ոպ̄ և զսահակ 'ի դէպ էր տօնել յայսմ վայրի, զի յօգոստոսի վախճանեցաւ • Թող զայլ Թարգմանիչս, որոց չէ յայտ օր փոխման • և զնարեկացին' որ ը̄ միում տեսութե 'ի փետրվարի ամսի վախճանել. և ըստ այլում հաշուէի' 'ի հոկտեմբերի : Իսկ' թէ ունէաք 'ի ձեռին զհնագոյն տօնացոյց գրեալ յռ̄ջ ք̄ զաւուրս շնորհալւոյն • զի անտի ունէաք իմանալ' թէ որպիսի էր վաղեմի կարգաւորութի առ համեմատութի̄ վերջին կարգաւորութեա, որ 'ի շնորհալւոյ և այլոց չերևի ընկալեալ զերևելի փոփոխութի, բայց միայն' զի և զշնորհալին յաւել յաջորդ նր̄ 'ի կարգ տօնացուցին լրացելոյ առ նովաւ • ուր յետոյ ոչ իշխեաց ազգն յաւելուած ինչ առնել զկնի աւուրց լամբրոնացւոյն : Ազգն ասեմ• ապա թէ ոչ' առանձին հեղինակութ̄ կի̄ մասնաւոր յօժարութ̄ յաւելուլ զայս ոք և զայն' չէ 'ի համարի • այլ կայ մնայ 'ի կարգս սր̄ց յիշատակելեաց ը̄ յայսմաւուրաց :

Միայն այս առոյգ երևի, զի ը̄ ներսեսի շնորհալւոյ' եթէ ոչ ներգործութ̄, գէթ զօրութ̄ տօնախմբէ ազգն և զներսէս լամբրոնացի' ներսիսեանք կոչմամբ • գուցէ և զգրիգորիս զեղբայր շնորհալւոյն և զգրիգոր վկայասէր և զգրիգոր տղայ և զգրիգոր ապիրատ' որ գրիգորիսեանք կոչին, կից ը̄ անուան գրիգորի նարեկացւոյ • քանզի 'ի ձեռագիր յայսմաւուրս յօգոստ • 9• համախումբ նշանակին այս ա̄մ սր̄ք այսպէս • * Յիշատակ սր̄ հայրապետացն մերոց գրիգորիսեանց և ներսիսեանց ||• ուր և գրին պատմութիւք նց̄' սկսեալ 'ի բարսղէ կթղկսէ և 'ի գրիգորէ վկայասիրէ մինչև ցգրիգոր ապիրատն, ոպ̄ և ներսեսի կլայեցւոյն և ներսեսի լամբրոնացւոյն : Զորս բաժանեալ են յետին օրինակք և տպագիրք յերիս և 'ի չորս տեղիս • զմ̄ 'ի յունիսի • 13• և օգոստ • 5 • զշնորհալին • 'ի յուլիսի 17 • զլամբրոնացին • և 'ի յուլիսի 30• զգրիգորիսեանս, պահմամբ նոյն շարադրութե : Այլ 'ի հին օրինակս ինչ ներսիսեանք դնին 'ի փետր• 19• ը̄ սր̄ն մեսրոպայ :

Ծանիր և զայն, զի 'ի հին պատարագամատուցի' որ առ ժամանակօք կիլիկեցւոյ գրեալ, 'ի կարգի յիշատակաց սր̄ց ասի • * Առաջնորդացն մերոց • • • Ներսէսի, սահակայ, դանիէլի, և սր̄ց ներսիսեանցն, և ա̄մ սր̄ց հովուաց ||են • և զկնի • * Միանձնացելոց • • • պօղոսի, մա_

,, մակարայ, Մեսրոպեայ վ՟պին, անոփրիոսի ||. ևն. ուր
ո՟պ խորհրդով ս՟բն Մեսրոպայ դասն ը՟ միանձնացելոց անապատաւորաց, զի եղև միայնակեաց կատարե՟լ հանդոյն սկիտացի հարց. սոյնպէս և 'ի կարգս առաջնորդաց՝ բաց 'ի մեծէն ներսիսէ պարթևէ իրաւամբք յիշին ներսիսեանք, ք՟ շնորհալին և լամբրոնացին՝ հանդերձ գործակցօք իւրեանց. զի ս՟ք եղեն 'ի վերջին առաջնորդս ազգին նմանօղք առաջնոց, և լուսաւորիչք հայաստանեայց։

ՄԵԾ է և այն, զի լամբրոնացին և 'ի կենդանութ՟ե ճանաչէր իբրև զմի յառաջնոց անաի րաբունապետաց ազգիս. վ՟յ և ծերունի ո՟ն սամուէլ 'ի վանաց սկեռայ՝ որոյ առաջնորդ էր լամբրոնացին, յօրինակել անդ ըզսաղմոսամեկնիչ ն՟ր՝ գրէ 'ի վախճանի և զվարս ն՟ր իբրև զկենդանի ս՟յ. և 'ի վ՟ր բերէ՝ ասելով. * Յաւար-
,, տումն սորին փոքր ինչ թողի ձեզ զպատմութ՟ե կե-
,, նաց սորին ընթացից. զի մի մնասցէ տարակոյս յա-
,, ռաջել ժամանակին՝ սորին քննողի, ո՞վ և ո՞ւստի և
,, զիա՞րդն. ո՟պ և մեք այսօր ունիմք զբաղում հայրա-
,, պետաց մերոց և վ՟պաց հայոց. ք՟ զդաւիթ ներգե-
,, նեցի, և զգրիգոր նարեկացի, և զմովսէս խորենա-
,, ցի, և զայլս. որոց 'ի բանիցն պարարտութ՟է զուար-
,, ճանամք. և զիա՞րդն կենաց և վարուց փափագելով
,, գիտել, ո՛չ ունիմք. և ո՛չ միաբան վասն երանելեացն
,, պատմութ՟ի։ Յաղագս այսր զորայս (ք՟ զներսէսի
,, լամբրոնացւոյ արքեպ՟սին տարսոնի) մինչ ցայս, որ է
,, կենաց իւրոց ժամանակ՝ լ՟է ամ, ցուցաք համառօտ.
,, և մաղթեմք ք՟ի տալ զոյն մեզ և յերկարութեամբ
,, աւուրց ||. ևն. Ո՟պ և ան ը՟ միջապէս զկնի մահուան
գրեաց զներբողեան ն՟ր պատմագրաբար գրիգոր վ՟պ սկեւռացի. մինչ զի անտարակոյս է, թէ գոնէ 'ի կիլիկիա տօն լամբրոնացւոյն կատարիւր զոյգ ը՟ շնորհալւոյն և ընդ նախանշանակեալ վ՟պաց ս՟ց. վ՟յ և մեք իրաւամբք տօնեմք, և իրաւունս համարիմք գրել զպատմութ՟ի ն՟ր 'ի կարգի ս՟ց տօնելեաց։

ՎԱՐՔ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ

Ներսեսի լամբրոնացւոյ՝ արքեպ̃սին տարսոնի կիլիկեցւոց ։

Հ • օգոստ • 9 • Հմ̃ փետր • 19 • Հաճ յուլիսի 17 ։
Սամուէլ ծերունի ճշ̄անէց ։ Գրիգոր ակնացի • և այլք ։

ԵՐԿՐՈՐԴ ՊՕՂՈՍ փողն տարսոնեան, այլն սքանչելի և քարոզ բանին առաքելանման, լուսաւոր վիճակն եկեղեցւոյ հայաստանեայց՝ տ̃րն Ներսէս լամբրոնացի, էր 'ի բնիկ հայկազունեաց՝ խառն յազգականութե̃ արշակունեաց • որդի օշնի սեբաստոսի հեթումեան՝ տ̃ն լամբրոն դղեկի 'ի կիլիկիա, և շահանդխտոյ դստեր շահանայ՝ զօրավար կոչեցելոյ, եղբօր սբ̃յն ներսեսի շնորհալւոյ • զորոյ և զանունն ընկալաւ • զի առաջին անունն նր̃ էր սմբատ ։ Էին նր̃ և չորս եղբարք, հեթում, ապլղրատ, շահնշահ և գրիգոր • և երեք քորք, մարիամ, շուշան, և տալիթա ։

Մինչդեռ յարգանդի մօր էր սմբատ՝ որ և ներսէս, ուխտեալ էր ծնողացն՝ ա̃յ ընծայել զզաւակն զայն • այլ յետ ծնանելոյն յամի

1153

1153 կ՟մ 1154, հայեցե՟լ 'ի հրաշատիպ վայելչութիւն մանկանն՝ ասեն. ո՛չ է արժան զայսպիսի գեղ յԾ՟է զրկել. տացուք զմի այլ յորդւոց մերոց Ա՟յ փոխանակ սորա. և ա՛հա հասանէր 'ի վ՟ր տղային խօթութ՟ի մահառիթ ։ Յայնժամ 'ի միտս եկն բարեպաշտուհի մայր նորա Շահանդուխտ. էառ տարաւ զնա յեկեղեցի ս՟բ Ա՟ծածնի 'ի վանս սկեւռայ՝ մօտ յամուրն լամբրօնի, և կրկին ընծայեաց զնա Տ՟ն ուխտիւք, ուր և ուխտեալ էր նորա նախ քան զծնունդ մանկանն. և 'ի խանձարրի անդ ետ կարդալ 'ի վ՟ր ն՟ր զքահանայական օրհնութ՟իան՝ առ անլուծանելի մնալոյ ուխտին. և անդէն վաղվաղակի առողջացաւ մանուկն ։

Իբրև աճեաց փոքր մի, շնորհք Ա՟յ երևէին 'ի վ՟ր ն՟ր. և սնեալ յերկիւղն Ա՟յ՝ ցանկալի լինէր ամենեցուն իբրև հրեշտակ 'ի մարմնի ։ Պէտք եղև տանել զնա հօրն 'ի կոստանդնուպօլիս առ կայսրն կիռ մանուէլ. որոյ առե՟լ զտղայն 'ի գիրկս՝ գգուէր և յորդորէր կալ յարքունիս, զի մեծացուցից զքեզ առաւէ պատուով քան զհայր քո ։ Պ՟խնի ետ մանուկն. եթէ անանց էին մեծութ՟իքս, անսայի բանիցդ. ես յանանցն փութամ ժամանել մեծութ՟ի. սմին նման խօսեցաւ երբեմն և առ լատին կոմսն անտիոքայ ։

Յետ այսորիկ սնաւ մանուկն 'ի վանս սկեւռայ՝ ը՟ հոգևոր դաստիարակութ՟բ յովհաննու առաքինւոյ՝ ճգնազգեաց վ՟դպի. և յառաջադէմ եղև 'ի վարս սրբութ՟ե և 'ի գիտու-

թի

թէ գրոց. զի էր փոյթ ՚ի հոգևորս յոյժ, և յուսմունս իմաստից ծարաւի. ոչ և ուշիմութ͞բ աննման, զարդարեալ ձիրուք հոգւոյն ա͞յ: Վեշտասան ամաց էր ինքն՝ յորժամ մեռաւ հայր նր͞ օշին. որ յանձնեաց կտակաւ, զի հեթում որդի իւր լիցի իշխան լամբրոնի հայրենի պատուով. և սմբատ նուիրեալն ա͞յ՝ լիցի ը͞ ժամանակին առաջնորդ սկեւռայ, զորոյ զեկեղեցին ինքն էր շինել: Բայց այլ էին խորհուրդք սրտին սմբատայ. զի նա առտենչանաց ճգնութե͞ և անապատական կենաց՝ կամէր խոյս տալ յառանձնութե͞, և ոչ առնուլ յանձն զեկեղեցական պատիւ:

Զայս գիտելով մօր նորա շահանդխտոյ՝ հնարս հնարեցաւ, զի մի հեռասցի զաւակն յիւրմէ. հանդերձեալ գնալ վասն ուխտի յե͞ղմ՝ առեալ տարաւ ը͞ իւր զսմբատ պատանին ՚ի հռոմկլայ՝ օրհնել ՚ի ս͞բ հայրապետէն ներսիսէ շնորհալւոյ. և զի հօրեղբայր իւր էր նա, ընտանութ͞բ զգացոյց նմա զիրսն: Եւ շնորհալին տեսե͞լ զպատանին՝ ծանեաւ հոգւով զմ͞ծային շնորհն, որ ՚ի նմա. և բռնադատե͞լ ձեռնադրեաց զնա քահանայ. և կոչեաց զնա յանուն իւր ներսէս. և պահեաց առ ժամանակ մի ՚ի հայրապետանոցի. ուր վայելեալ նորընծայ քահանային ներսէսի ՚ի հոգևոր խնամս ներսեսի շնորհալւոյ՝ զգեցաւ զհոգի նր͞. և ապա հրամանաւ նր͞ գնաց ՚ի վանս սևաւ լերին. և եկաց ը͞ վարժապետութեամբ ստեփաննոսի գիտնական վ͞դպի՝ տիրացու կոչեցելոյ. և որ քան զօր փայլեաց սրբութ̅բ և ա̅մ իմաստութ̅բ :

Տեսե̅լ վանականաց զեռանդն հոգւոյ ներսեսի աբեղայի՝ ստիպեցին զնա ՚ի գործ արկանել զտաղանդն տ̅րունեան, և լինել քարոզ բանին ՚ի քաղաքի իւրում ՚ի շահ հոգւոց բազմաց : Ապ̅յ եկն ՚ի լամբրոն, և ութուտասան ամաց գոլով՝ ոպ̅ այր կատարեալ և բանիբուն րաբունն՝ քարոզէր յեկեղեցւոջ հրաշալի բանիւք, և թուէր նոր ոսկեբերան, և բղխէր շնորհս ՚ի շրթանց իւրոց · մինչև հռչակեցաւ անունն նորա յոյժ · վ̅ոյ միաբան թախանձէին զնա քաղաքացիք՝ լինել իւրեանց եպ̅ս, և նստել յառաջնորդութ̅ի մօտակայ վանացն սկեւռայ : Յայնժամ խոյս ետ երանելին ը̅ հոգեւոր հօր իւրում յովհաննու յանապատն սաղրու ՚ի մէջ լերանց տորոսի · ուր կայր վանք միանձանց՝ ա̅ծածին սաղրուի կոչեցեալ՝ ՚ի հոսանս գետոյն Ժեռակրեայ՝ մերձ յեկեղեցի ս̅բյն գէորգեայ :

Ընդ առանձնացեալ ներսեսի յանձուկ սենեակ՝ զցայգ և զցերեկ դեգերէր ՚ի խորհուրդս ա̅ծայինս և յարտօսրաբուղխ աղօթս մշտամռունչս, միանգամայն և յընթերցուածս ս̅բ գրոց և բանից հարցն ս̅ց, և ՚ի շարագրութ̅իս և ՚ի թարգմանութ̅իս : Ի կիւրակէէ ՚ի կիւրակէ գայր յեկեղեցի վանիցն՝ մատուցանել զս̅բ պատարագն : Իսկ զայլ աւուրս ՚ի խղի անցուցանէր՝ մենամարտեալ ը̅դէմ անմարմին թշնամւոյն բազմօրինակ հանդիսիւք ճգնութ̅ե · մինչև բազում անգամ եկե̅լ սպասաւորին՝ որ բերէր զպէտս

նր̅

նորա, տեսանէր՝ զի առաջին բերեալքն 'ի տեղւոջ անդ կային 'ի պատուհանին ։ Եւ ետ նմա տ՟ր զշնորհս սքանչելագործութե. զի զբազումս բժշկեաց 'ի պէսպէս ախտից, և ազատեաց զայլս յայսոց չարաց. այլ փախուցեալ երանելին 'ի փառաց՝ փոխեաց զտեղին. և ստէպ երթայր առ շնորհալին ըստ կոչման նորա. որոյ և փոխմանն առաջիկայ գտեալ՝ դարձաւ յանապատ իւր ։

Յայնժամ յաջորդ շնորհալւոյն գրիգոր կաթողիկոս՝ տղայ կոչեցեալ, գրեաց ստիպաւ, և կոչեալ զլամբրոնացին՝ ձեռնադրեաց զնա արքեպ՟ս տարսոնի կիլիկեցւոց 'ի հասակի քսան և երեք ամաց, յամի 1176. ոիե. քանզի քաջ գիտէր զառաքինութի և զիմաստուտուի ն՟ր. միանգամայն և վանականք սկեւայ յանձն արարին նմա զառաջնորդութի տեղւոյն. և նա ո՟պ հովիւ քաջ և արթուն զամենեսին խնամէր. և էր սքանչելի յաչս ամենեցուն, և հզօր քարոզ ճշմարտութե՝ բանիւ և գրով ։

Այլ յետ տարւոյ տեսեալ ն՟ր՝ թէ զբաղանք առաջնորդութե խափան լինէին ընթերցասիրութե և աղօթասիրութե իւրում, գաղտագընաց լինէր մինչև յանապատ իւր 'ի սաղրու. ուր քսան և չորս ամաց էր՝ յորժամ գրեաց 'ի խնդրոյ միանձանց զսքանչելին զայն մեկնութիւն եկեղեցական կարգաւորութեց և խորհրդոյ պատարագին և զճառս ժառանգաւորաց. ո՟պ և 'ի յաջորդ ամի, այն է 'ի թուին մերում ոիզ, 'ի խնդրոյ յովհաննու հոգևոր հօր իւրոյ ձեռն էարկ 'ի խորհրդական մեկնուե̃ի սաղմոսի . յորում ժամանակի մայր նորա և եղբարք նորին հանդերձ միաբանօք սկևռայ՝ կարօտեալ ս̃բյն , դարձուցին զնա հրամանաւ կթղ̃կսի 'ի վիճակ իւր ։

Բայց նա զկնի սակաւուց խոյս տուեալ 'ի փառաց և 'ի զբաղմանց՝ դիմեաց ը̃ ճանապարհն եգիպտոսի թաքչիլ յանապատս նախնի ճգնաւորաց . և զի յետս դարձուցին զնա խնդրակք , հանդարտեաց աւուրս քանի մի . և ելեալ լռելեայն ուղեկցութ̃բ միոյն 'ի մտերմաց՝ ընթացաւ հետի դէպ 'ի սեպուհ լեառն 'ի ճգնարան ս̃բ լուսաւորչին բազում տարժանմամբ , մինչև պատառոտիլ ոտիցն . այլ դարձուցին զնա 'ի կէս ուղւոյ բռնութ̃բ . այս եղև երկիցս և երիցս՝ 'ի քահանայութ̃ե և յեպ̃սութ̃ե , զի դարձոյց զնա ժողովուրդն 'ի ճանապարհէն սեպուհոյ ։ Դարձեալ փախեաւ անծանօթ կերպարանօք 'ի կիպրոս կղզի 'ի վանս միանձանց յունաց . զոր անագան ուրեմն իմացեալ ազգականացն՝ եկին և տարան անդրէն առ իւրեանս ։

Այնուհետև զիջեալ ս̃բյն 'ի կամս նց̃՝ նըստաւ առ ժամանակ մի 'ի վիճակի իւրում, և ծովացուցանէր զբանն վդ̃պութ̃ե և արբուցանէր զծարաւեալս . և հնչեաց համբաւ սրբութ̃ե և իմաստութ̃ե նորա ը̃ ա̃մ հայս , եւս և 'ի յոյնս , 'ի լատինս , և յասորիս . և մեծացաւ անուն նորա առաջի իշխանաց ։ Ապ̃յ դարձեալ փախուցեալ 'ի փառաց՝ գնաց՝ 'ի նախկին ճգնաւորան իւր 'ի սաղրու. և ետ զանձն իւր առաջին կարգի 'ի տքնութիւն աղօթից և ընթերցուածոց. այլ փութով հարկեցաւ դառնալ 'ի հռոմկլայ՝ 'ի հարկեցուցիչ հրամանէ կաթողիկոսին մի բանի ժողովոյ միաբանութեան ընդ յոյնս. յորում ժամանակի խօսեցաւ զատենաբանութիւն զայն հրաշալի։ Մարգմնեաց և ձեռնտուութեամբ այլոց զմեկնութիւն յայտնութեան յովհաննու՝ զարարեալն անդրէի կրետացւոյ արքեպիսկոպոսին կեսարու. և զկնի այնորիկ աւարտեաց զմեկնութիւն սաղմոսաց 'ի թուին ոլ, մինչդեռ էր 'ի տարսոն և 'ի վանս սկեռայ։

Գրեաց լամբրոնացին և զմեկնութիւն առակացն սողոմոնի և զժողովողի և զիմաստութեան, և զերկոտասան մարգարէիցն. մեկնեաց և զերեղբարսն. յօրինեաց և բաղումճառս 'ի խորհուրդ տէրունական տօնից, յորս է և ճառն վերափոխման՝ գործ նորընծայութեան նուիրական առ որ աստուածածինն. իսկ ճառն համբարձման, են առաւել պենտեկոստէին է սխրափայլ և հոգելից. թող և զայլ ազգի ազգի գրուածս և զզօրաւոր նամակս, որ և զբազմապատիկ թարգմանութիւնս 'ի յունէ և 'ի լատինէ. թող և զշարականս, և զոտանաւոր վարս շնորհալւոյն. և զայլ պէսպէս հոգևոր աշխատասիրութիւնս։

Իսկ եռանդն հոգւոյ նորա 'ի քարոզութեան և 'ի տնտեսութեան եկեղեցւոյ՝ ետ յունաց և լատինացւոց կոչել զնա երկրորդ պօղոս առաքեալ տարսոնացի։ Եւ նորին հոգւոյ է անմոռաց յիշատակ՝ վերջին լրումն ամ՟ բարեզարդութե՟ց և բարեկարգուե՟ց հայաստանեայց եկեղեցւոյ , աջակից և հետևող գոլով անուանակցին իւրոյ ս՟բ հայրապետին ներսեսի շնորհալւոյ . վ՟ոյ և Բ՟ մի համար կարգեցաւ տօն և յիշատակ նց՟՝ անուամբ ներսիսեանց՝ Բ՟ գրիգորիսեանս ։

Եւ զոր օրինակ շնորհալին հեղացոյց զլոյսն Բ՟ հայոց , նոյնպէս և լամբրոնացին սիրելի եղև և սիրելի եցոյց զհայս՝ առաջի յունաց և հռովմայեցւոց և ասորւոց և ամ՟ ազգաց քրիստոնէից , և պայծառացոյց զեկեղեցի ազգին իւրոյ բազում իրօք ։ Առանձին ևս հաստատեաց յեկեղեցւոջ տարսոնի՝ որ կոչիւր ս՟բ սոփիա , զի յաւուրս չորեքշաբաթի և ուրբաթու տացի երբեք հարիւր աղքատաց հաց և բակլայ . Թող զայլ գործս խնամոց ՚ի վերայ հօտին իւրոյ ։

Շինեաց և նոր եկեղեցի ՚ի վանս սկեւռայ , և արար զնաւակատիս եկեղեցւոյն շինելոյ յեղբօրէն կամ ՚ի հօրէն իւրմէ՝ յաւուր նոր կիւրակէի . յոր հայի և խորհուրդ շարականին աւուրն ։ Ետ քօղ և զգեստ կրօնաւորութե՟ երկուց քերց իւրոց շուշանայ և տալիթայի՝ ընդ բարեպաշտուհի մօր իւրում շահանդխտոյ . ոմ՟ և զկնի կրօնաւորեցաւ նաև միւս քոյրն մարիամ ։

Եհաս լամբրոնացին մինչև ցաւուրս օծուե՟ լևոնի ՚ի Թգ՟ր հայոց՝ ՚ի գրիգորէ ապիրատայ , յամի 1198 . ոխէ՟ . ՚ի յունվարի . 6 . և ՚ի նմին իսկ տարւոջ եհաս նմա հրաւէր կոչման յերկինս՝

կինս՝ ը̅ հանապազօրդեան տենչմանց իւրոց, որով զդաւթին երկրորդէր երգ․ Երբ եկից երևեցայց երեսացդ ա̅յ․ և ասելով զայս բան, ՚ի ձեռս քո յ՛սուս աւանդեմ զհոգի իմ, ընկա՛լ զհոգի ներսեսի քոյ, աւանդեաց զմաքրափայլ հոգին՝ ՚ի յուլիսի ժ̅դ․ քառասուն և հինգ, կամ խ̅է ամաց․ և թաղեցաւ փառօք ՚ի ս̅բ ուխտն սկեւռայ առ դղեկին լամբրոնի ։

Նա ՚ի խնդրոյ քեռորդւոյ ն̅ր ներսեսի սրբակրօն ք̅հնյի, ՚ի թուին ոձգ․ յօրինեաց Ճառներբողական ը̅արձակ ՚ի վ̅ր ս̅բյն գիտնաւոր վ̅դն գրիգոր սկեւռացի կ̅մ լամբրոնեցի, որ և Ճանաչի աշակերտ և յաջորդ ս̅բյն ներսեսի լամբրոնացւոյ յառաջնորդութե̅ սկեւռայ վանաց․ թող զի և այլք յիմաստնոց ժամանակին համարին ՚ի համարի աշակերտաց ս̅բց ներսիսեանց․ որոց յաւիտենական յիշատակ օրհնութ̅ք եղիցի ։ (1)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Բ։

---

(1) Տեսանես ՚ի նախընթաց ծանօթութե̅՝ որ ՚ի կատարած վարուց շնորհալւոյն, թէ տօն երկոցունց ս̅բց ներսիսեանցս է անբաժանելի․ վ̅զի որպէս շնորհալին՝ նոյնպէս և լամբրոնացին է ՚ի կարգէ տօնելի ս̅բց, զօրութ̅ք իմանալի ՚ի տօնացուցի․ ուր չէ յաւելեալ ներգործութ̅ք, զի ոչ ոք յետ աւուրց լամբրոնացւոյն իշխեաց նոր յաւելուած առնել ՚ի հին տօնացոյց ազգին ։ ՚Ի հին յայսմաւուրս անուանեալ Կիրակոսի արևելցւոյ կ̅մ գետկցոյ, աստանօր ՚ի փետր․ ժթ․ դնի, * Վարք

« մեծի ներսիսեանցն կլայեցւոյն և լամբրոնեցւոյն . և
« փառք և կատարումն սբ̃ հօրն մերոյ մեսրոպայ || ։ Եւ
'ի կատարածի յարի Ծինկ լեղոճաւ . * Ողբ 'ի յարհի-
« եպ̃սն տարսոնի 'ի մեծն ներսէս . Այ (գուցէ , Ա՞հ)
« զահ թողում՝ զամօթ մոռանամ, զիմ լուսեղէն տ̃րն
« մեծարեմ . զիւր սննդեան պարտքն վճարեմ . ածեմ
« զուժովս ու դառնամ 'ի միտ , երբ զիմ ճարակ տ̃րն յի-
« շեցի , լոյս գնաց , ուժս պակասեաց . խելք ու հո-
« գիս իմ գումարեցաւ . յիշեմ զիմ տ̃րն 'ի չլքիրոնին
« (գուցէ 'ի չիրակունին) . յիշեմ զիմ տ̃րն 'ի նարեկա-
« ցին || . ևն̃ . որ է ասացուած ընտանւոյ ուրուք սբ̃յն՝
իբր գանձ մեռելոց ։

Դէպ եղև ինձ տեսանել ուրեք զօրինակ մի Հարանց վարուց՝ գրեալ 'ի սկևռայ վանս յաւուրս լամբրոնացւոյն 'ի պէտս գործածութե̃ ն̃ր , ոպ̃ մեկն նշանակեալ կայր 'ի յիշատակարանի գրչին . շարադրութին կմ̃ թարգմանութին տարբեր 'ի սովորականէն , ոպ̃ և ընթացքն և կարգաւորութին այլազգ . ուստի յայտնի իմաստասիրեմք , թէ լամբրոնացին ունելով 'ի ձեռին զյունարէն և զհայերէն օրինակս պէսպէս՝ հուսկ յետոյ 'ի լոյս էած զայն օրինակ , որ է առաւել կարգաւորեալ . այն իսկ է , զ̃ որոյ տպեցաւ և տպագրեալն . Թող զաւելորդ ինչ յաւելուածս յօտարաց ։

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

Եզեկիէլի Մարգարէի ։

Հ. մարտ. 12 ։ Յ. եւ. յուլիս. 21 ։ Ժմ. յուլ. 23.
Լ. ապրիլ. 10 ։ Բոլլանդեանն եաբէեպրոք 'ի ա̃ հար.
ամր. երեւ. 857 ։ Նահատակութի̃ եզեկ ։ Նաայե
Վէդ 'ի մեկն. Եզեկ. և այլ հարք և մեկնիչք ։ (1)

ՀՐԱՇԱՏԵՍՆ 'Ի ՏԵսանողս՝ բազմախորհուրդ և գաղտնագուշակ մարգարէն Եզեկիէլ, էր քահանայ ա̃յ՝ որդի Բուզեայ յազգէն ղեւեայ, առ գերութե̃ն բաբելացւոց՝ իբր վեց հարիւր ամօք յառաջ քան զՔ̃ս. զի 'ի խաղացուցանել Նաբուգոդոնոսորայ արքային քաղդէացւոց միանգամ և երկիցս և երիցս զյուդա և զայլս 'ի հրէից 'ի բաբելոն, վարեցաւ ը̃ գերեալսն և Եզեկիէլ 'ի հասակի պատանեկութե̃ ։ Իսկ յամին հինգերորդի գերութե̃ յովակիմայ արքայի յուդայ, որ և յեքոնիա հայրն սաղաթիէլի, այն ամ հինգերորդ էր թագաւորութե̃ սեդեկիայ արքայի, սկսաւ Եզեկիէլ մարգարէանալ անդէն յ̃րին քաղդէացւոց 'ի մէջ գերութե̃ն. յորում ժամանակի անդ 'ի բաբելոն էին և Դանիէլ և երեք մանկունքն, կունք, կրտսեր հասակաւ քան զեզեկիէլ. ոփ և երեմիա 'ի հրէաստան՝ երիցագոյն։

Սկիզբն մարգարէութեան եզեկիէլի եղև ահաւոր և հրաշալի տեսլեամբ առ ափն քոբարայ գետոյ. ուր տեսանէր չորեքկերպեան կառս՝ քառաթև և քառադիմի կենդանեօք հանդերձ՝ 'ի կերպարանս մարդոյ և առիւծու, եզին և արծուոյ, 'ի նախանկար օրինակ չորից սրբոց աւետարանչաց, և բազմապատիկ խորին խորհրդոց նորոյ սիովնի և վերին եդեմի.

Այլ ըստ ճառին դնի պատճառս սքանչելի տեսլեանս 'ի նախադրութեան գրոց նորա առ մեզ՝ ձայնակցութեամբ սրբոյն յուստինոսի վկայի և այլոց հարց այսպէս։

Յետ գերելոյ բազմութեան հրէից հանդերձ յեքոնիաւ 'ի բաբելոն վասն բազմանալոյ անօրէնութեան նոցա, տակաւին մնացեալքն յերուսաղէմ ընդ սեդեկիայ արքայի ոչ զգաստանային. այլ վստահացեալք 'ի տաճարն աստուածաբնակ՝ չև ևս հրկիզեալ, անհնար կարծէին՝ թէ մատնեսցէ զայն աստուած 'ի ձեռս հեթանոսաց. և այնպէս ամբարտաւանեալք յառաջէին 'ի չարիս, զի և երեմիայ մարգարէի անսաստ գուժել՝ խորհէին սպանանել զնա իբրև համախոհ թշնամեաց, յասելն նորա՝ թէ մատնեսցի քաղաքս և տաճարն 'ի ձեռս քաղդէացւոց։

Սորին վասն էառ աստուած 'ի ձեռն մարգարէական շնորհին զեզեկիէլ 'ի բաբելոն. ընդ որում ոչ գոյր հրէիցն իրք նախանձու ոխ ընդ երեմիայի. և տայ նմա ձայնակից լինել երեմիայի 'ի կշտամբանս տանն դառնացողի, և 'ի սպառնալիս կործանման քաղաքին և տաճարին, թէ ոչ դարձցին 'ի չարեաց իւրեանց: Արդ՝ ետես եզեկիէլ զտեսիլ փառացն Ա՟յ 'ի վերայ քրովբէից ահեղահրաշ սքանչելեօք լի, 'ի ցուցանել ընդդէմ կարծեացն հրէից՝ թէ չէ Ա՟ծ կարօտ տաճարին կամ քրովբէիցն որ 'ի տաճարի անդ, զի յևս զարմանալի կենդանեաց պաշտի. և չխնայէ մատնել զտաճարն հանդերձ մնացորդօք անդարձ հրէից 'ի ձեռս Նաբուգոդոնոսորայ: Ս՟ոյ յայնմ տեսլեան երևէր հանդերձ ահաւորութ՟բ Ա՟յ և նշանակ պատուհասին, զոր ունէր ածել 'ի վերայ հրէից 'ի ձեռն առն այնպիսւոյ, որ թէպէտև մարդ էր բնութ՟բ, բայց միանգամայն բուռն իբրև զառիւծ, և սուր իբրև զարծուի, և կասող և մանրող իբրև զուարակ. որ և անձամբ ունէր փոխիլ 'ի նմանութ՟ի արջառոյ. այն ինքն է Նաբուգոդոնոսոր. ո՟պ և եկին հասին յետ սակաւուց այս ա՟մ ահարկու սպառնալիք. յորոց 'ի կատարումն հայէին և բազումք յայլոց անտի տեսլեանց՝ որք ցուցան այնուհետև եզեկիէլի, միանգամայն և 'ի նշանակ դարձի գերութ՟ե. յա՟մի խորհրդաբար նկարագրելով զայլևայլ գործս տնօրէնութ՟եցն ք՟սի յառաջնումն և յերկրորդում գալստեան:

Յայսմ ա՟մի փայլէ տիրապէս ա՟ծամերձ ընտանութ՟ի եզեկիէլի և հրեշտակահանդէտ առաքինութ՟ի ն՟ր. զի ոչ միայն խորհրդազգած լինէր տեսլեամբք ա՟ծեղէն գաղտնեաց, այլև յանձին իւրում օրինակելով ընդ-

բա

բազում խորհուրդս՝ 'ի բազմապատիկ հանդէս ճգանաց և մրցանաց առաքինանայր ։ Քանզի նախ ընկալեալ զմատեանն ջամբեալ նմա յա՟յ՝ կերաւ զայն ․ որով կարգեցաւ դէտ և վարժապետ տիեզերաց , և ցուցաւ ընդունարան պատգամաց և շնորհաց հոգւոյն ա՟յ ․ ուր դառնութ՟ի մատենին 'ի սկզբանն՝ յայտ առնէր զսպառնալիս առ տունն դառնացողաց , և զկնի քաղցրութ՟ին ո՟պ մեղու՝ զքաղցր յոյս մխիթարութե՟ դարձելոցն առ ա՟ծ ։

Յետ այսորիկ 'ի յանդիմանութ՟ի անարժանիցն ազգի ազգի վշտօք ճգնի մարգարէն ը՟ն տ՟ն հրամանի ․ քանզի արգելաւ 'ի տան , և իւրքն համարելով զնա ո՟պ ցնորեալ՝ կապեցին կապանօք առաջի խստապարանոց ազգին ․ և ա՟ծ կապեաց զլեզու մարգարէին 'ի քիմս նո՟ր , և եղև իբրև համր ․ զի ոչ կարէր խօսել ինչ , բայց միայն յորժամ բան տ՟ն լինէր առ նա , զայն բարբառէր համարձակ ։ Նաև յոչ կամիլ հրէից լսել ականջօք զվերջին պաշարումն և զաւերն եր՟մի , դրոշմեաց մարգարէն զօրինակ նո՟ր յանդիման նց՟ 'ի վերայ աղիւսոյ , զի աչօք տեսանիցեն ։

Ապա բանիւ տ՟ն ննջեաց , այս է ընկողմնեցաւ մարգարէն 'ի ձախակողմն իւր անընդհատ զաւուրս հարիւր և յիսուն , (կամ ըստ այլ ընթերցուածոյ 190 , և ը՟ն այլոց 390 ․) ո՟պ թէ օր ը՟ն տարւոյ փոխանակելով՝ առ 'ի ցուցանելոյ զչափ պատուհասի տանն իէ՟լի և քաւելոյ զանիրաւութ՟իս նց՟ ․ և այլ ևս աւուրս քառասուն՝, 'ի նշանակ տանն յուդայ . զի օր՟ ասի , 'ի մարգարէութ՟է իւրմէ՝ մինչև 'ի դարձ գերութեն յուդայ յառաջնում ամի կիւրոսի , անցին ամք քառասուն . և յաւերածէ տաճարին մինչև 'ի կանգնումն պարսպացն առ նէեմեաւ՝ յորում եզև այցելութ՟ի գրեթէ ամ՟ տանն իէ՟լի , անցին ամք հարիւր և յիսուն : Եւ յայնչափ աւուրս հաց լոկ և ջուր ճաշակէր մարգարէն ա՟յ , և այն՝ կշռով և չափով . իսկ հացն էր կազմեալ խառն 'ի ցորենոյ , 'ի գարւոյ , յոսպանէ , յոլոռէ , 'ի կորեկէ և 'ի հաճարոյ , և եփեալ 'ի հուր քակորոյ արջառոյ . որովք դուշակէր ճգնօղ մարգարէն զսով և զգերութ՟ի հրէից՝ ը՟ մարմնոյ , և ամ՟ մեղաւորաց՝ ը՟ հոգւոյ , եթէ ոչ դարձցին առ տ՟ր :

ԱՅԼ յօրինակ կատարածի սրով և հրով՝ հրամայեաց և ևս ա՟ծ եզեկիէլի առնուլ սուսեր յեսանաւոր սուր քան զածելիս վարսաւիրաց , և գերծուլ զգլուխ իւր և զմօրուս . և զմասն ինչ 'ի հերաց ը՟ սուր անցուցանել , և զմասն ինչ՝ հրոյ ճարակ տալ . և զմասն ինչ հոսել հողմոյ . և զայլ ևս մասն պահել առ ժմկ մի , և դարձե՟լ 'ի հուր արկանել : Եւ զի մի լիցի կարծել ումեք , թէ 'ի վեր են քան զչափ մեղաց այս ամ՟ սպառնալիք , եցոյց ա՟ծ մարգարէին զանչափութ՟ի անօրէնութ՟ե ժողովրդեանն . քանզի համբարձեալ զեզեկիէլ 'ի տեսլեան՝ եած 'ի բաբելոնէ յէ՟մ . և եցոյց նմ՟ զկռուռսն 'ի դրունս և յորմս տաճարին . և թէ զինչ լային զթամուզն ա-

ռաւ

ռասպելեալ· և զայլ ազգի ազգի գործս գործէին անարժանութե՟՝ որ յայտնի և որ ՚ի ծածուկ։ Այս եցոյց տ՟ր եզեկիէլի և զայն տեսիլ, յորում յարձակեցան վեց արք տապար ՚ի ձեռին ՚ի կոտորել անխնայ զժողովուրդն· և միայն ՚ի դրոշմեալսն ՚ի ճակատու թաւ նշանաւ խնայէին, որ էին կնքեալք նշանաւ ս՟րբյ խաչին· և յաւել տ՟ր պատուիրել եզեկիէլի չառնուլ սուգ ՚ի վ՟ր կնոջն մեռելոյ, ՚ի նշանակ անմխիթար պատուհասից տանն ի՟էլի։

Այլ յայսր տ՟մի վերայ՝ բազմօք սպառնայ մարգարէն բանիւ տ՟ն և ՚ի վերայ այլազգեաց, որք ոտնհար լինէին հրէից· և յետ յիշելոյ զառումն ե՟ղմի՝ տայ աւետիս դարձի· զոր և հաստատէ նաև տեսլեամբ յարութե՟ ոսկերաց ցամաքելոց՝ յաւուր հասարակաց· ո՟պ և տեսլեամբ շինուածոյ տաճարին նկարագրէ զշինութ՟ի երկրորդ տաճարին առ զօրաբաբէլիւ, և զկանգնումն պարսպին և դրանցն ե՟ղմի առ նէեմեաւ· և խորհրդաբար զշինութ՟ի եկեղեցւոյն ք՟սի, և զվայելչութ՟ի անձեռագործ տաճարի վերնոյն ե՟ղմի, և սքանչելի դրանցն ը՟ անուան իւրաքանչիւր ցեղի· զոր յայտնագոյն ևս նշանակեաց աւետարանիչն յովհաննէս յիւրումն տեսլեան· քանզի և բազում միաբանութ՟ի է ը՟ բանս եզեկիէլի և յովհաննու· ըզնոյն իմն և զդանիէլէ, որ գրեթէ ՚ի նմին ամի՝ յորում դադարեցին տեսիլք եզեկիէլի, սկսաւ տեսիլս տեսանել և մարգարէանալ նաւ 'ի Բաբելոն ։

Արդ յետ իբրու քսան կամ քսան և հինգ ամաց, յորս մարգարէացաւ խորազգած տեսանօղն եզեկիէլ՝ տեսլեամբք և օրինակօք, բանիւ և գործով, վախճան ն͞ր եղև վկայական մահուամբ ։ Քանզի ը͞ս միաբան աւանդութ͞ե հարց և վկայագրաց, առաջնորդ ցեղին դանայ սպան զմարգարէն ա͞յ՝ 'ի յանդիմանել նորա զկռապաշտելն ազգին դանայ և գադայ յերկրի անդ քաղդէացւոց. և այն՝ ոչ ասի, կապեալ զերանելին յագի ձիոյ, և վարեալ ընդ վիմուտ տեղիս ։ Բայց օրինապահք բարձին զմարմին ս͞բ մարգարէին, և թաղեցին պատուով անդ 'ի բաբելոն, 'ի տեղւոջն՝ որ համարեալ էր 'ի բնակչաց շիրիմ նախնեացն աբրահամու, կամ գերեզման սեմայ և արփաքսադայ. և յետ թաղման եզեկիէլի առաւել ևս պատուեցաւ տեղին, զի բ͞զմք գնային յուխտ ն͞ր ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Այնչափ են խորհրդաւոր խորութիւնք և խրթնութիւնք տեսլեանց 'ի մարգարէութ͞ե եզեկիէլի, մինչև ասել հերոնիմոսի 'ի մեկնութ͞ե ն͞ր. * Եզեկիէլ ովկիանոս գրոց, միանգամայն և բաւիղ (ը͞ս լաբիւրինթոս) խորհրդոցն ա͞յ ||: Այդ 'ի մեկնիչս անդր հայի. բայց և ը͞ս պատմութ͞ե վարուց և գործոց ն͞ր՝ որ մեզ երանի, տեսանեմք՝ զի բաց 'ի բանից առելոց 'ի գրոց անտի իւրոց՝ բազմօրինակ աւանդք են առ հրէայս, առաւել անստոյգք և սուտք՝ քան ստոյգք և հաւաստիք. յորոց

ոչ սակաւ բանք սպրդեցին եւ առ զանազան մատենագիրս 'ի մէջ քրիստոնէից · զ̃ թէ եզեկիէլ անցուցեալ իցէ ը̃ օրինակին մովսեսի զհրէայս ը̃ քօբար գետ , անթաց ոտիւք իբրեւ ը̃ ցամաք · եւ քաղդեացիքն 'ի պնդիլն զհետ ն̃ց գետավէժ կորուսեալ իցեն · եւ թէ՝ աղօթիւք եզեկիէլի տուեալ իցէ յո̃յ ժողովրդեան բազմութի̃ ձկանց յաւուրս սովու 'ի կերակուր · եւ թէ՝ օձք թունաւորք արձակեալ իցեն 'ի վ̃ր ցեղին դանայ եւ գադայ · եւն :

Գրէ ա̃ծաբանն գրիգոր 'ի ճառն · խէ · * Նաեւ զեզեկիէլէ , թէ յառաջագոյն ծառայ լեալ իցէ երեմիայի || : որ ոչ այլազգ արդարանայ , բայց իմանալով զծառայն իբրեւ պաշտօնեայ կ̃մ աշակերտ , ո̃պ եղիսէ՝ եղիայի · զի եւ ինքն եզեկիէլ էր 'ի քհ̃նյից անտի : **Այլ** անհեթեթ է այն , զի հրէայք զծառայն որդի իմանալ կամեցան մնոտի պատճառանօք սուտ մեկնութե̃ · զի որովհետեւ եզեկիէլ էր որդի բուզեայ , յերազեցին ռաբբիք , թէ բուզի՝ որ թարգմանի արհամարհ , իցէ նա ինքն երեմիա , եւ նր̃ որդի իցէ եզեկիէլ · զի ոչ տանէին հրէայք կուսակրօն վարուց երեմիայի :

Եզեկիէլ անուանն թարգմանի յոմանց՝ իշխանութի̃ կ̃մ տ̃րութի̃ ա̃յ · եւ յայլոց՝ զօրութի̃ ա̃յ , կ̃մ հզօրացեալ ա̃ծ · եւ այսմ նշանակէ ասեն այն՝ որ գրեալն է յեզեկ · գ̄ · ը ·

* Եւ ահաւասիկ արարի զդէմս քո հաստատուն առա-
,, ջի երեսաց ն̃ց · եւ զյաղթութի̃ քո զօրացուցից առա-
,, ջի հկռկութե̃ ն̃ց · եւ եղիցի յա̃մ ժամ հաստատուն
,, իբրեւ զվէմ յաղթութի̃ քո || :

Ուր փոխանակ բառիս հաստատուն յառաջին տեղւոջ՝ եբրայական ձայնն է հազագէն · յորմէ երեւի ծագեալ ասեն հէզէգիէլ · այն է եզեկիէլ :

Այլ որ հետաքննին ե̃ս է՝ միանգամայն եւ ծաղրալուր , 'ի վաղեմի դարս շփոթէին ոմանք զեզեկիէլ մարգարէ ը̃ պիւթագորայ փիլիսոփայի : 'Ի պէտս բանասիրաց եւ զբօսասիրաց 'ի մէջ բերցուք զայս խնդիր յայտնի՝ բանիւ կուռնելիոսի ալափիտէին , որ 'ի յառաջաբ · մեկն · եզեկ · ունի այսպէս · * Եղեն ոմանք յառաջնոց , որք համարե-
,, ցան զեզեկիէլ պիւթագորաս լինել : Ս̃ր կղեմայ
,, (աղեքսանդրացւոյ) , զի ասէ 'ի ա̃ գիրս յաճախ ·
,, Պատմէ աղեքսանդրոս 'ի գիրսն՝ որ յաղագս պիւթա-
,, գորեան նշանաց , թէ պիւթագորաս էր աշակերտ
,, նազարեթի ասորեստանցւոյ · ոմանք զնա եզեկիէլ
,, կարծեցին · բայց ոչ է · ո̃պ ցուցցի զկնի : Իսկ կղեար-
,, քոս ճեմական ասէ զանձնէ , թէ ճանաչէր հրէայ
,, զոմն ,

,, զոմն, ընդ որում կենցաղավարեցաւ արիստոտէլ ":
,, Որով ակնարկէ, թէ արիստոտէլ զիւր փ̃պութի քաղեալ
,, իցէ 'ի հրէից. ոչ̃ և պիւթագորաս և պղատոն,
,, որ և նմին իրի կոչեցաւ մովսէս ատտիկեցի: Եւ յեզեկիելէ
,, երևի անուն առեալ եզեկիելոս քերթող նոխազերգակ.
,, զորմէ այսպէս գրէ նա ինքն կղեմէս 'ի
,, նոյն գիրս. ,, Յաղագս սննդեանն մովսեսի միաբանի
,, ը̃ մեզ և եզեկիելոս քերթող հրէական նոխազերգութե̃ց,
,, 'ի գործն մակագրեալ արտածութի̃ " . . . Գրէ
,, և սբ̃ն ամբրոսիոս. գիրք դ̃. թղթ. ը̃. առ իրենէոս.
,, Զպիւթագորեան պատուէր գտանեմք 'ի գիրս ոմանց
,, քարոզեալ, որով արգել նա զաշակերտս իւր 'ի քաղլելոյ
,, ընդ հասարակ ճանապարհ, ը̃ որ անցանէ ամբոխն:
,, Այլ թէ զայս ուսումն առեալ իցէ նորա, չէ
,, ինչ անծանօթ. զի որովհետև՝ ոչ̃ բազումք վարկանին,
,, 'ի ժողովրդենէ հրէից ունէր զծագումն տոհմին,
,, 'ի նորուն ուսմանէ եհան և զպատուէրս փ̃պութե.
,, և արդեամբք մեծ անուն ստացաւ առ փիլիսոփայս,
,, որպիսի՝ ոչ զոք այլ գտցես ասեն: Ապա ընթերցե̃լ
,, էր նր̃ յելսն, եթէ յա̃ծային պատգամաց պատուէր
,, եղաւ մովսեսի, լոյծ զկօշիկս ոտից քոց. նոյն հրաման
,, եղև և առ յեսու նաւեան. իբր զի 'ի բաց դնիցեն
,, զփոշին բազմակոխ և ռամկական վարուց, որք
,, միանգամ ցանկան ընթանալ զճ̃նհ տ̃ն: Ընթերցեալ
,, էր և զպատուէրն՝ որ եղև առ մովսէս, ելանել 'ի
,, լեառն ը̃ քահանայս. և ժողովրդեան մնալ 'ի վայր":
,, Եւ թէոդորետոս ասէ 'ի ա̃ գիրս յղ. հաւատոյ. ,,
,, Պատմի՝ թէ պիւթագորաս յանձին կալաւ զթլփատութի՝
,, առեալ յեգիպտացւոց. բայց եգիպտացիք
,, առեալ էին զայն յեբրայեցի նախնեաց ,,:
,, Ձեռն տայ և պատճառաբանութին. քանզի ոչ̃ եզեկիէլ,
,, նոյնպէս և պիւթագորաս է գլխովին խորհրդաբան
,, և գաղտնանշան. և ոչ̃ մին զպատգամս իւր,
,, նոյնպէս և միւսն զքարոյական իւր ուսուցանէ խորհրդաւոր
,, առակօք և օրինակօք: Եւ դարձեալ գրեթէ
,, երկոքեանն 'ի նմին ժամանակի ծաղկեցան. ք̃ի
,, եզեկիել առ նաբուգոդոնոսորաւ, և պիւթագորաս
,, առ կիւրոսիւ և կամբիւսեաւ, ը̃ վկայելոյ եւսեբի
,, 'ի քրոնիկոնն: Եւ ևս՝ ոչ̃ եզեկիէլ ա̃ծախօս էր և
,, ա̃ծուսոյց, սոյնպէս և պիւթագորաս զանուն իւր
,, էառ 'ի պիւթեանն ապողոնէ, որ խօսէր ընդ նմա.
,, վ̃յ և ոչինչ նուազ ճշմարիտս ուսուցանէր և ինքն

,, քան զպիւթիա (պատգամախօս) : Նմին իրի համարեալ
,, էր նա առաջի իւրոցն իբրև կենդանի պատգամ
,, . քանզի վ՟ ն՟ր ասէին . Նա ասաց , ապա ճշմարիտ
,, է և աներկուանալի : Վ՟ այն և ովիդիոս նուագէ
,, զնմանէ 'ի ԺԵ գիրս կերպարանափոխութեան ,
,, Մտօք յածս սլացեալ՝ աչօք սրտի իմացաւ , զոր 'ի
,, բնէ զլացեալ՝ ջան մարդկեղէն չստացաւ :,,
,, (Պլինի) . Բայց սակայն ստոյգ է , թէ պիւթագորաս
,, ոչ եզեկիէլ էր , և ոչ հրեայ . թէև 'ի հրէից և
,, 'ի մարգարէից 'ի փոխ առեալ իցէ զիւր վ՟պութիւն ,
,, գուցէ նաև զթլփատութի՟ : Վ՟ զի նախ՝ հին մատենագիրք
,, հասարակօրէն աւանդեն , թէ պիւթագորաս
,, էր ծննդեամբ 'ի սամոս կղզւոյ . ապա հելլենացի էր ,
,, և ոչ հրեայ : Երկրորդ՝ պիւթագորաս ուսոյց զհոգեփոխութի ,
,, ք՟ զփոխադրութի հոգւոց 'ի մարմնոյ 'ի
,, մարմին ոչ միայն մարդոյ , այլև անասնոյ . որ ամ՟ իրօք
,, ըդ՟էմ ելանէ աւանդիցն եբրայեցւոց ; և յանուծանէ՝
,, պատգամացն եզեկիէլի 'ի գլ . լէ . որ յաղագս
,, դարձի հոգւոյն յոսկերս իւր և 'ի մարմին .
,, Զի ոպ՟ մեկն ուսուցանէ տերտուղիանոս 'ի գիրսն
,, յղ . հոգւոյ . գլ . ԻԸ . կամեցեալ պիւթագորայ հաւատարիմ
,, առնել առաջի ժողովրդեան զայս մոլորութի
,, հոգեփոխութե՟՝ կեղծաւորեցաւ զմահ , և ղօղեցաւ
,, 'ի գետնափոր քարանձաւի զեօթնամեայ ժամանակ
,, . և անդ ինքնադատապարտ ծգանօք ժուժկալեաց
,, առանց ուրուք գիտելոյ՝ բաց 'ի մօրէ իւրմէ .
,, և իբրև ետես՝ եթէ է՟ բաւականին այլափոխեցաւ
,, Թանձրամասութի մարմնոյն , 'ի վեր ել 'ի կաղաղէ
,, անտի խաբէութե՟ , զի ցուցցէ զանձն 'ի դժոխոց ուտեք
,, եկաւորեալ , ասելով՝ թէ ես էի յառաջագոյն
,, այեթաղիդէս կմ՟ եւփորբոս , ապա պիւռոս ձկնորս ,
,, և այժմ երմոտիմոս : Պիւթագորայ բարբառ է այն ,
,, զոր յանձն իւր առակեալ ծաղրէ հերմիաս փիլիսոփայ
,, 'ի ճառն յաղագս այպանելոյ զփիլիսոփայիւք
,, հեթանոսաց . որ կայ 'ի Դ հատ . մատենադարանի
,, հարց . ասէ . ,, Ե՛ զի անմահ եմ , և ցնծամ . է զի
,, մահկանացու դարձեալ , և լամ . յետ պահու յանհատ
,, լուծանիմ մարմինս . ջուր դառնիմ , օդ եղանիմ
,, , հուր լինիմ . զկնի սակաւուց ոչ օդ և ոչ հուր
,, առնէ զիս (բնութի՟ն) , այլ՝ գազանացուցանէ , ձկնացուցանէ
,, . ապա համահարազատ եղբարք իմ են դելբինք
,, : Այլ յորժամ 'ի մարմին անդր հայիմ , զա-
,, հի

„ հի հարկանիմ. և ոչ գիտեմ, զինչ կոչեցից զնա, կամ
„ յոր անուն անուանեցից. շուն արդեօք, եթէ գայլ,
„ եթէ ցուլ, եթէ թռչուն, եթէ զեռուն, եթէ վիշապ, եթէ եղջերուաքաղ. զի յամ կենդանիս փոխակերպիմ, 'ի ցամաքայինս, 'ի ջրայինս, 'ի թեւաւորս,
„ 'ի բազմակերպիս, 'ի վայրենիս և յընտանիս, յանբարբառս և 'ի ձայնարձակս, յանբանս և 'ի բանաւորս. լուղիմ, թռչիմ, 'ի բարձունս օդոյ վերաբերիմ, սողիմ, ընթանամ, նստիմ„։ Երրորդ՝ եզեկիէլ
„ և պիւթագորաս չէին ժմկաւ նոյն, այլ սա յետոյ
„ քան զնա. քանզի եզեկիէլ ... կանխագոյն էր քան
„ զպիւթագորաս՝ հնգետասան ողոմպիադիւք, այն 60
„ ամօք ||։ Ցայս վայր աւափիտէ. թող և զայլ քննիչս. զի ո̅չ մեզ չարժէ և այսչափ աշխատասիրել վ̅ն յայտնի բանից։

ՎԵՐՋ

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

Եզրի քահանայի և մարգարէի ։

Հ. մարտ. 12 ։ Լ. յուլ. 13 ։ Բոլլանդեանն սուլբերեոս, անդ ։ Եւսեբ ։ Յովսեպոս ։ Մեկնիչք գրոց ընդ հայոց ։ (1)

ԵԶՐ, ՈՐ ԵՒ ԵԶՐԱՍ քահանայ ա՟յ և մարգարէ , գրիչ և ուսուցիչ օրինաց , էր որդի սարեայ քահանայապետի՝ որդւոյ ազարեայ որդւոյ քեղկեայ յորդւոցն ահարոնի , եղբայր՝ ո՟պ կարծի՝ յովսեդեկեայ քահանայապետի , և հօրեղբայր յեսու՛այ յովսեդեկեանց , ծնեալ 'ի բաբելոն յաւուրս գերութե՟ , և սնեալ օրինօքն ա՟յ ։ Որոյ յարբունս հասեալ՝ լցաւ հոգւով ա՟յ , և եղև նախանձաւոր մովսիսական աւանդից , օրէնսուսոյց պատուական առաջի ա՟մ ժողովրդեան . և որ մեծն է՝ նորոգիչ ոչ միայն կարգաց և իրաւանց , այլև բուն իսկ ա՟ծաշունչ տառից . ոյր վ՟ն և կոչի գրիչ օրինաց ։ Ս՟ն զի յորժամ այրեցին քաղդէացիք զ՟է տաճարին եէ՟մի և զմատեանս ա՟մ , զոր գտին , խորթնացեալ էր 'ի մէջ իէ՟լի դպրութի՟ն հին եբրայական գրոց , ա՟մ մովսիսական տառից և այլ ևս մարգարէական մատենից՝ որ նովին նշանագրովք էին դրոշմեալ. և մնացեալ էր օրինակ նոյն նշանագրաց առ սամարացիս և եթ՝ իբր անծանօթ առ բազումս 'ի Հրէից, և դուն ուրեք էր տեսանել 'ի թաքստի զա՟ծային մատեանս ։

Ապա ը՟ստ առանձին տուչութե՟ և ազդեցութե՟ ս՟բ հոգւոյն՝ որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս, սա ինքն եզրաս՝ որ քաջ մարզեալ սերտ 'ի բերան ունէր զա՟մ ս՟բ գիրս, հաւաքեաց 'ի մի և զհին օրինակս, և բովանդակեալ զա՟մ՝ նորոգ գրեաց ճարտար գրչութ՟, ո՛չ ը՟ստ առաջին նշանագրաց, այլ՝ քաղդէական տառիւք, յոր յայնժամ առաւել ընտելացեալ էին Հրեայք. և այն գիր է՝ որով ցարդ վարին եբրայեցիք. զի զառաջինն՝ որ այժմ սամարացւոց կամ շամրտացւոց կոչի, սակաւք են՝ որ գիտիցեն ։ Եւ այսպէս վերստին ընդելացոյց եզր զտունն իսր՟լի 'ի կարդացմունս օրինաց, և նախանձու փառացն ա՟յ ստէպ ընթեռնոյր 'ի լուր ամենեցուն զօրէնս, և կրթէր զն՟ա յօրինապահութե՟ անդէն 'ի բաբելոնի, գործակից և աջակից գոլով քահանայապետաց ժամանակին՝ յովսեդեկեայ, յեսուայ, և յաջորդաց նոցա. քանզի և յերկար ժամանակս եկեաց ։

Եւ զի այսպիսի ոմն էր սա՝ պատուեալ ոչ միայն 'ի Հրէից, այլև 'ի հեթանոսաց՝ վ՟ն ա՟ծային իմաստութե՟ իւրոյ և աջողակութե՟ յա՟մի, սիրելի եղև նաև յաչս արտաշեսի արքային պարսից՝ երկայնաձեռն կոչեցելոյ 'ի կարգի յաջորդայն կիւրոսի . և հրամանաւ նր՟ արձակեցաւ 'ի բաբելոնէ յե՟էմ մեծաւ պատուով` իբր չորեք հարիւր վաթսուն ամօք յառաջ քան զքս՟ , ուսուցանել հրէից զօրէնս այ՟ բանիւ և գրով : Եւ եկեալ սրբեաց զժողովուրդն և զքահանայս , 'ի բաց արձակելով 'ի նոցանէ զայլազգի կանայսն հանդերձ որդւովք իւրեանց . և ժողովել զբազմութ՟ի ազգին 'ի նորաշէն տաճարն զօրաբաբել` ընթեռնոյր և մեկնէր օր ըստ օրէ յականջս ամ՟ ժողովրդեան զօրէնս և զիրաւունս այ՟ , և առաջնորդէր ամենեցուն գնալ 'ի պատուիրանս և 'ի հրամանս տն՟ ` ը՟ մովսիսական և մարգարէական մատենից : Եւ այնպէս բազմամեայ վաստակօք և առաքինի վարուք ելից զաւուրս իւր յե՟էմ . և անդ թաղեցաւ պատուով :

Յետ նր՟ ոչ յարեաւ այլ ոք այր մարգարէ այ՟ բանիւ կմ՟ գրով , մինչև 'ի գալուստ փրկչին , որ տէրն էր մարգարէից , և եկն 'ի լնուլ զբանսն` զոր խօսեցաւ 'ի ձեռն ծառայից իւրոց , 'ի փրկութ՟ի տիեզերաց . քանզի և մաղաքիաս վերջինն 'ի մարգարէս` էր ժամակից եզրայ . մինչև ոմանց ընդ մի համար գրել զերկոսեանն . ոմ՟ և այլք նոյնացուցին զեզր ը՟ նէեմեայ , կմ՟ ընդ յովսեդեկեայ . զի էր յաւուրս նց՟ , և երևելի ք՟ զնս՟ :

Այլ է և եզր ոմն սաղաթիէլ կոչեցեալ , որ արտաքոյ երից գրոցն եզրասայ գրեաց զկնի զգիրսն` որ կոչի չորրորդ եզրաս . որ միշտ երկբայելի կամ անընդունելի ծանուցաւ .

մինչ զի և 'ի հարց անտի՝ որ յիշատակեն զնա, երազապատում դատեալ եղև ։ Այլ զայսցանէ մեկնիչք ։

Թերևս սորին երկրորդ եզրի լիցէ շփոթումն այն՝ որ ցուցեալ լինի մինչև ցայժմ 'ի խուռնա, որ 'ի սահմանս բաղտատու և բասրայու՝ 'ի խառնուած տիգրիսի և եփրատայ, իբրև ուխտատեղի բնակչաց և անցաւորաց, եզրի գերեզման ասացեալ։

* * *

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Բազում ինչ հաւաքեալ էր մեր 'ի զանազանից՝ 'ի նախնեաց և 'ի յետնոց, 'ի քննութիւն գործոց և գրոց եզրի․ այլ քանզի այն ամենայն առաւել առ մեկնիչս հայի քան առ վկայագիրս, վ՟յ զանց արարաք ։ Միայն 'ի կարճոյ յիշեցից զայն խնդիր երևելի, թէ արդեօք եզր դպիր օրինաց որով օրինակաւ եղև նորոգիչ աստուածաշունչ գրոց․ օրինակելով 'ի հին նշանագրաց 'ի նորն, կամ 'ի սամարացւոցն 'ի քաղդէականն, եթէ առանց օրինակի սերտողաբար 'ի առնչութէ հոգւոյն արար զամենայն զոր արար ։ Պատճառ տարակուսանացս է, զի զերկրորդ զայս եզրանակ և եթ նշանակեն հարք հաստատակօրէն․ փոխան ամենայնի լիցի եւսեբիոս՝ որ ասէ 'ի ա՟ մասն․ քրոնիկոնի․ * Այլ-
,, ազգ՝ հրէից յաջորդք ունին զգիր օրինաց, և այլազգ
,, շամրտացւոց (կամ սամարացւոց՝) որ եկամուտքն էին
,, հրէից․ Նաև նշանագիրք իսկ գրոցն եբրայեցւոց
,, այլազգ առ հրէայս գտանին, և այլազգունակ առ
,, շամրտացիս․ զոր ճշմարիտ և առաջին համարել և
,, ոչ հրէից իսկ պայազատքն ուրանայցեն․ այլ ոչ ու-
,, րեմն չգոյր ինչ 'ի միջի նոցա այլակերպութիւն մինչև 'ի
,, նշանագրացն փոփոխումն ||։ Եւ յետ սակաւոյ՝ թէ թարգմանութիւն եօթանասնից առաւել մերձաւոր է շամրտացւոյն՝ քան հրէականին, այլ այսու գրէ յաւուրս երկայնաձեռն արտաշէսի․ * Առ սովաւ եզր եբրայեց-
,, ւոց ն՟ր գրոց գրագէտ ճանաչէր․ զորմէ ասի՝ զամենայն

,, ածեղէն գիրս վերստին յիշել, և աւանդել հրէից ,, նորանկար եբրայեցւոց նշանագրօք (որ է քաղդէական), վն պատերազմաց Ծին հաստանելոյ||:

Այսպէս խօսին և սբն իրենոս, տերտուղիանոս, կղեմէս աղեքսանդրացի, սբն բարսեղ, հերոնիմոս, իսիդորոս, ղևոնդիոս, և այլք. որպէս և 'ի յետնոց լևոն կաստրացի: Եւ զայս ոմանք 'ի քննչաց ոչինչ տարադէպ վարկանին ըստ ինքեան. ապաքէն ասեն և սբ անտոն պատովացին սերտ 'ի բերան ունէր զսբ գիրս ած. վն և կոչեցաւ տապանակ ուխտի, կամ արկղ կտակարանաց. և գրիչն իսկ վարուց նր ասէ. * Այնպէս սերտ ,, և պինդ ունէր 'ի յիշողութե զհին և զնոր կտակարանս, մինչև կարող իսկ էր համգոյն եզրի՝ եթէ ,, պէտք իրացն պահանջէին, զամ ածեղէն տառս անթերի 'ի լոյս ընծայել յուշոյ իւրմէ, թէ և պակասէին օրինակք ած||: Եւ մեք իսկ տեսող եղեաք ոմանց ոմանց յարևելս և յարևմուտս, զի զնոր կտակարանս ողջոյն և զբազում տեղիս 'ի հնոյն, ոմ և զայլ գրեանս ինչ ամբողջ 'ի բերան գիտէին և խօսէին կարգաւ. վն ոչ մեծ զարմանք թուին, եթէ և եզրաս սերտեալ ունէր զգիրս օրինաց և մարգարէից. թող զի առաւել զհինն գրոց մոռացեալ էր բանն:

Այլ սակայն թէպէտև ոչ անհնար թուեսցին իրքդ, ևս առաւել դիւրահնար հոգւով սբվ, համարակաց կարծեօք անտեղի երևի այդմ այդպէս լինել. զի գոնէ առ արտաքս պահպանէր հին հեղինակութիւն գրոց, և մայր բովանդակ հեղինակութիւն յանձին եզրի. զոր դժուարին է ասել: Այս ասելի է ըստ միաբան վկայութե իմաստուն մեկնչաց, թէ հարք իսկ ոչ հաստատեն զայդ կարծիս, այլ իբրև աւանդ ինչ յիշատակեն, այսպէս ասի՝ ասելով. իսկ հիմն աւանդիցս է արդէն երկբայական և անընդունելի. զի առեալ է առաւելապէս 'ի գրոց չորրորդ եզրասայ. 'ի ԺԴ գլխոյն: Եւ դարձեալ՝ ոչ գիրք հաստատեն, և ոչ միտք հաւանին, թէ յայրել քաղդէացւոց զտաճարն և զմատեանս եհէմի, չիցէ մնացեալ այլ օրինակ 'ի մէջ տանն իէլի և յուդայ, և 'ի սփիւռս ազգի նր. այլ զի 'ի պատճառս խռովութե ժմկին և առ ահի հեթանոսաց 'ի թաքստի էին օրինակքն, 'ի լոյս ածել զայն եզրի նոր գրով քաղդէացւոց իբր նոր նորոգումն համարեցաւ իրաւամբք. թող և զայլ նշանակս 'ի գրոց և 'ի պատմութեց՝ թէ կային օրինակք ինչ մատենից 'ի ձեռս զանազանից. զդ ըստ պատմերոյ յովսեպոսի՝ հրէայք ցուցին կիւրոսի զգիրս եսայեայ , յորում գուշակեալ էր անուն մեծութե̃ ն̃ր երկերիւր ամօք յառաջ . որով և առաւել մարդասիրութ̃ն եցոյց առ եբրայեցիս :

Աւանդեն ոմանք հրէից , թէ առ եզրիւ գումարեցաւ մեծ սինագովգա ի̃ ժողով , որոյ գահագլուխ էին՝ եզր , նէեմի , դանիէլ , մուրթքէ , զօրաբաբէլ , և յեսու յովսեդեկեայ . ուրանօր բանք եղեն ատեն՝ վ̃ն կանոնի ա̃ծաշունչ ս̃բ գրոց , և վ̃ն ուղղագրելոյ զօրինակս գրոց , և բաժանելոյ յընթերցուածս և 'ի գլխակարգութիւնս . և հոգ իրացս յանձն եղև եզրի դպրի և ուսուցչի օրինաց : Եւ այս ևս յայտ առնէ՝ թէ եզր չեղև հեղինակ նորութե̃ , այլ՝ նորոգութե̃ . զի որ չէ̃ մարթ երկուանալ :

ՎԵՐՋ

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

Զաքարիայ հօրն յովհաննու մկրտչի ։

Հ. Յ. սեպտ. 5 ։ Լ. նոյեմբ. 5 ։ Հայոց և
մեհեկանի ։

ԵՐՋԱՆԱՒՈՐ ԾՆՈՂ մեծին 'ի ծնունդս կանանց, մարգարէածին և մարգարէաշնորհ սբ. քահանայն զաքարիա՝ էր յազգէն ղևեայ յորդւոյն ահարոնի, 'ի դասակարգէ աբիայ, որ յաւուրս դաւթի արքայի ութերորդ էր 'ի կարգի քսան և չորս երիցանց պաշտօնէից տաճարին յահարոնեան տանէ, որք էին իշխանք սրբուեցն և առաջնորդք 'ի տանն տն ։ Այս ոչ այնչափ ստոյգ է քահանայապետն գոլ զաքարիայի՝ որպէս ոմանք յառաջնոց համարեցան, որչափ 'ի համարոյ գլխաւոր քահանայից, որք խնկարկէին առաջի սեղանոյ խնկոց՝ արտաքոյ վարագուրի սրբուե սրց, և զայլ պաշտամունս կատարէին շաբաթաւոր կարգօք ։ Այնպէս և սրբասէր կինն զաքարիայ սքանչելին եղիսաբէթ՝ որ զօրութ. ը̄ տօնախմբի ը̄ առն իւրում, էր 'ի դստերաց ահարոնի, արդար արդարոյ վիճակեալ՝ և 'ի տնէ պատշաճեալ ․ քանզի երկոքեանն իսկ էին ստուգապէս երկիւղածք յայ՟, և ուղղապէս արդարք, ո՛չ առաչս մարդկան՝ որոց առաջի ձևանալ դիւրին է, այլ՝ առաջի այ՟. և գնային ը՟ աւետարանագրին՝ յամ՟ պատուիրանս և յիրաւունս տն՟ անարատք, բնակեալ 'ի միում 'ի քաղաքաց ցեղին յուդայ 'ի լեռնակողման՝ ոչինչ հեռի յեէ՟մէ։

Եւ տր՟ փակեաց զարգանդ եղիսաբեթի, զի յետ անցանելոյ զաւուրբք՝ կրկնակի սքանչելեօք 'ի լոյս ընծայեսցի մանուկն սքանչելի, որ հանդերձեալ էր կարապետ լինել բանին այ՟, յամուլ մօրէ պառաւելոյ և յալևորեալ հօրէ. ոպ՟ և եղև իսկ աւետարանութե՟ մեծին գաբրիէլի առ զաքարիա. զոր մի առ մի ճառէ աւետարանն ղուկայ։ Եւ ոպ՟ իմաստասիրեն վէպք 'ի բանից անտի սբ՟յն ղուկասու, աւետիք ծննդեանն՝ ոպ՟ զաքարիայի տո՛ւեալ 'ի տաճարի, նոյնպէս և եղիսաբեթի յայտնեցաւ 'ի տան՝ հանդերձ անո՛ւամբ մանկանն, որ ծնանելոցն էր. զի ուր կայր մնայր զաքարիա պապանձեալ լեզո՛ւաւ մինչև ցօր ծննդեան և թլփատութե՟ մանկանն, եղիսաբեթ մայր մանկանն իբրև իրագէտ հոգւով ընդէր՝ թէ յովհաննէս կոչեսցի անուն զաւակիս. քանզի և եղիսաբեթ էր արժանաւոր հոգւոյն ը՟ունելոյն, և լցեալ ևս էր հոգւով սբ՟վ 'ի գալ առ նա մօր տն՟ և կուսի, մինչդեռ յարգանդի կրէր զարուսեակն արեգականն արդարութե՟։

Եւ որ մեծն է, զոր ասաց մայրն՝ զնոյն և հայրն հաստատեաց, գրեալ 'ի տախտակի՝

եթէ յովհաննէս է անուն դորա ․ և նոյնժամայն արձակեցաւ լեզու հօրն՝ ը̃ նշանակել զանուն որդւոյն , որ լինելոց էր ձայն բարբառոյ յանապատի ․ և լցաւ զաքարիա հոգւով սբ̃վ , և սկսաւ մարգարէանալ օրհնութ̃բ , փառս վերառաքելով ա̃յ վ̃ն եղելոցն իրաց և լինելեաց 'ի մօտոյ , և քարոզելով զխորհուրդ սքանչելեացն , եթէ առ ի՞նչ եղև ծնունդ այնպիսի նորանշան զաւակի , և ո՞յր կարապետ և մարգարէ կարգեցաւ մանուկն իւր , այս է յառաջընթաց փրկչին տիեզերաց՝ ք̃սի որդւոյն ա̃յ , որ եկն 'ի փրկել զորդիս մարդկան 'ի ձեռաց աներևոյթ թշնամւոյն հասարակաց , և լուսաւոր առնել զորս նստէինն 'ի խաւարի և 'ի ստուերս մահու ։

Մեծ եղեն այցելութիւնք ա̃ծ՝ որպէս ա̃մծի , նոյնպէս և առաւել ևս՝ տանն զաքարիայ և եղիսաբեթի , ուր եկուորե̃լ որդին ա̃յ յղացեալն 'ի կուսական արգանդի՝ ելից զտունն և զբնակիչս ն̃ր երախայրեօք երկնաւոր օրհնութ̃ե ․ և մայրն ա̃յ՝ տաճար բանին մարիամ՝ օրհնաբանական երգով տաճարացոյց զտունն զայն ․ և այնուհետև՝ ո̃չ յովհաննէս յորովայնէ յորովայն երկրպագէր ք̃սի , նոյնպէս և եղիսաբեթ ձայնակից լինէր օրհնութեան կուսին ․ և զաքարիա քահանայ 'ի դէպ ժամանակի յաւելոյր 'ի նոյն ձայնակցութիւն զօրհնութիւն 'ի բարձունս ։ Եւ այս ոչ փոքր պատիւ զաքարիայի , զի բանք օրհնութեան նր՟՝ զոյգ ընդ մեծացուցէ օրհնաբանութե՟ կուսին հանապազօր պաշտի յեկեղեցի այ՟ ՚ի վեր քան զդաւթեան սաղմոսերգութի՟ , զոյգ ընդ ըղձաձայնութեան սիմէոնի ծերունւոյն ։

Եւ արդ՝ եթէ բանիւք զայնպիսիս բարբառեցաւ զաքարիա մարգարէական տեսութ՟ս զորդւոյ իւրմէ զյովհաննէ , և զա՟ծորդւոյ կուսին , զի՞նչ արդեօք ՚ի սրտին խորհրդազգած լինէր յաւուրս լռութե՟ն , որ տևեաց աւելի ք՟ զիննամսեայ աւուրս ․ յայտ է թէ ցորչափ անբարբառ մնաց լեզուն , այնչափ առաւել խելամուտ եղև սիրտ նր՟ խորութե՟ առաջիկայ խորհրդոց և մեծամեծացն այ՟ , զորս զկնի և բերանով բացածանոյց՝ որպէս փոքր ՚ի շատէ ։

Բայց ո՟չ զկապանս լեզուին հրաշալի համբերութե՟ տարաւ՝ կատարեալ միաբանութ՟ ը՟ կամս այ՟ , նոյնպէս և ՚ի բանալ բերանոյ իւրոյ անդրէն՝ ոչ դադարեաց երբէք յօրհնելոյ զա՟ծ զա՟մ աւուրս կենաց իւրոց նոր երգովք ցնծութե՟ ․ զի մեծ արար տր՟ զողորմութի՟ իւր ը՟ նմա՝ միանգամայն և ա՟մ աշ՟ի , տալով զայնպիսի զաւակ շնորհանուն՝ քարոզ փրկութե՟ աշ՟ի ։

Յետ այսպիսի ուրախութե՟ կրեաց ծերունին զաքարիաս և նեղութի՟ս ոչ սակաւ ՚ի պատճառս պանծալի զաւակին , մանաւանդ թէ ՚ի պատի՟ փառաց երկնաւոր թագաւորին այն ինչ ծնելոյ ․ զի ո՟չ ասի , յորժամ անօրէնն հերովդէս ՚ի խնդիր եղև կորուսանել զկենսատուն տիեզերաց զմանուկն յ՟ի, և առաքեաց կոտորեաց զմանկունս բեթղեհեմի, յղեաց և խնդրակս 'ի լեռնակողմն վ՟ յովհաննու. զի անուն նր՟ հնչեալ էր ը՟ ամ՟ հրէաստան, թէ զի՞նչ լինիցի մանուկս այս: Յայնժամ 'ի տագնապ տարակուսի անկեալ զաքարիայ և եղիսաբեթի՝ փութացան աներևոյթ առնել զմանուկն. և խնամօքն ա՟յ ապրեցաւ մանուկն հանդերձ մարբն՝ թողեալ 'ի քարանձաւս լեռնակողման. կ՟մ ոպ՟ այլք ասեն, 'ի փախչել նր՟ յանապատն կոյս՝ բացաւ վէմ մի, և 'ի ներքս ընկալաւ զեղիսաբեթ և զյովհաննէս. մինչև ունայնաձեռն յետս դարձան խնդրակք. և ապա յովհաննէս մնաւ յանապատի առ հովիւս. իսկ եղիսաբեթ եկեալ 'ի տուն իւր՝ կատարեաց զաւուրս իւր խաղաղութ՟բ:

Իսկ վ՟ զաքարիայի աւանդութի՟ է բազմաց, թէ մատնեցաւ 'ի ձեռս հերովդի արքայի կ՟մ հերովդիանոսաց, և սպանաւ 'ի տաճարի. զի սա կարծի յոմանց զաքարիա որդի բարաքեայ սպանեալ ը՟ մէջ տաճարին և սեղանոյն. ոպ՟ և յայլոց զաքարիա մարգարէն մին յերկոտասանից: Բայց թէպէտ և սոցայս պահեսցի բան, ոչինչ անկարծելի թուի և սորին զաքարիայ քահանայի սպանումն 'ի հերովդէ՝ եթէ 'ի տաճարի, և եթէ արտաքոյ. ոպ՟ և որդին իւր յովհաննէս 'ի միւս հերովդէ գլխատեցաւ. զոր ոչն յիշեաց տ՟րն իբրև քաջածանօթ ամենեցուն 'ի ժամանակին: Արդ ասի վասն սորին զաքարիայ հօր յովհաննու մկրտչի՝, թէ զմարմին նր̄ խողխողեալ՝ եւ ընկենուլ հերովդէս 'ի խորափիտ մի · զոր բարձեալ երկիւղածաց՝ թաղեցին 'ի գերեզմանս հարց նորա · և ոմանք ժողովեցին զարիւն նր̄ 'ի փոքրիկ շիշս և 'ի կտաւս ։

Հաստատուն աւանդութիւն է սեպհական ազգիս, թէ յաւուրս սր̄յն գրիգորի մեր լուսաւորչին բերաւ 'ի հայս յարենէ սր̄յն զաքարիայի, որ եդեալ էր 'ի շիշ մի փոքրիկ · ընդ նմին և մասն ինչ 'ի նշխարաց սր̄յն պանդալէոնի բժշկին, որ կատարեցաւ նահատակութեամբ առ մաքսիմիանոսիւ ։ Եւ յորժամ գնաց յաղուանս սր̄ն գրիգորիս թոռն սր̄յն գրիգորի, ընդ իւր տարաւ զայն պատուական մասունս սր̄ց · իսկ 'ի մարտիրոսանալ նորա անդէն՝ 'ի գերեզմանի նորուն եդին զայնոսիկ հաւատացեալքն · զի մի՛ 'ի ձեռս անկցին բարբարոսաց ։ Եւ այս յաւուրս վաչագանայ բարեպաշտ արքային աղուանից՝ յորժամ յայտնեցան նշխարք սր̄յն գրիգորիսի աղուանից կթղ̄կսի, ը̄ նմին 'ի վեր ելին և արիւն զաքարիայի և մասն սուկերաց պանդալէոնի՝ յանուանէ նշանակել ։ Իսկ պատմութիւն և պատճառք արեամբ նահատակելոյ զաքարիայ հօր յովհաննու մկրտչի, որպէս 'ի յայսմաւուրս հայոց, նոյնպէս և 'ի յունացն աւանդելին՝ առանց ընդբանս ինչ ածելոյ · եւս առաւել 'ի ժամագիրս նոցա կան երգք և տաղք նկարագրութք̄ նոցին իրաց · թող և զչափազանց ձեհռետորական, որով նուագի անդանօր՝ ոչ թէ արիւն նորա եղև առիթ փրկութե՟ ձի. զոր ումանց նիւթապէս առեալ՝ ոչ լուաք, խղճեն նուագել. և յիրաւի՝ զի պատերազմօղ է լսելեաց : Հռովմայեցիք յանուանէ յեշեն և զեղիսաբէթ 'ի տօնել անդ զզաքարիա. զոր հայք և յոյնք զօրութ՟բ իմանան, ոչ և զն՟մ նախամարս 'ի տօնի նախահարց :

ՏՕ՛Ն ՍՐԲՈՑ՛Ն

Յովհաննու կարապետին չորրորդ, զկնի երից առաջնոց :

Հ. յուլիս. 5, կ՟մ 11. և օգոստ. 29. և փետր. 24. և յունվր. 14 :

Պատճառ տօնիս մեծի Մկրտչին յայսմ վայրի՝ եաղմադեմի տեսանի. զի որոշեալ յայս և 'ի սոյն միջոց Ա՟ծածնի և խաչի վերածելն տօնք յուլիս և օգոստոս ամսոց առաւելապէս, եթէ 'ի չորք յուլիսի անհարկեցուք, ծննդեան կարապետին դնի 'ի յայսմաւուրս հայոց 'ի յուլիսի 5, կ՟մ 11. որ և ըստ յունաց և ըստ հռովմայեցւոց տօնի մի յաւուր կատարի 'ի յունիսի 24 : Բայց եթէ յընթացս օգոստոսի նկատեմք, գլխատումն է Մկրտչին 'ի 29. օգոստ. միօրինակ ըստ յայսմաւուրաց երեցունց ազգաց : Այլ կամ 'ի խորհուրդ ծննդեան, և կ՟մ 'ի խորհուրդ գլխատման ունի հայել այս տօն ս̄բյ կարապետին պարզապէս նշանակեալ 'ի տօնացուցի ։ Այս երկոցունց 'ի դէպ գայ անխտիր՝ զուգադրութ̄ի ընդ հօր իւրում , կ̄մ զկնի հօր իւրոյ զաքարեայ . զի եթէ ըստ ծննդեանն իմասցես , գեղեցիկ է առընթեր ծնողին կարգել . և եթէ ըստ կատարմանն , նոյնպէս վայելուչ . զի որպէս ծնօղն տօնախմբի ընդ այլ մարգարէս ըստ կատարման իւրում , նոյնպէս և որդին՝ նովին պատուութբ̄ . որ և է կատարումն մարգարէական դասուց , և նախասկիզբն առաքելոց ։

Արդ թէպէտև այս այսպէս , բայց և այն յայտնի , զի ըստ ասացելոցս յառաջնում տօնի կարապետին զկնի ութօրէից յայտնութ̄ե , որովհետև յիշատակ ծննդեան նր̄ ո՛չ գոյր ուրոյն յառաջին դարս նախ քան զնորոգութ̄ի տօմարիս մերոյ , առ նախնիս մեր ընդ մի համար էր կարգեալ ծնունդ նր̄ ընդ մեծի տօնախմբութ̄ե մկրտչին , որ 'ի յունաց ս՛նաքսիս կոչէւր , այսինքն համախմբութ̄ի , առընթեր տօնի մկրտութ̄ե . ըստ որում պաշտօն մկրտութ̄ե առաւել է քան զն̄մ պատիւ̂ նորին մկրտչի . և այնպէս կարծեցաւ և պահեցաւ առ յետինս նոյն օր երբեմն սահմանեալ 'ի պատիւ̂ ծննդեան կարապետին , և ո՛չ եդաւ այլ օր առանձին վս̄ յիշատակի ծննդեանն ըստ ամսոյն պահանջելոյ ։ Նոյնպէս և գլխատման տօն այլով խորհրդով՝ որպէս ասացաք յերում տեղւոջ , մանաւանդ վասն համարելոյ՝ թէ զաւուրբք զատկի է գլխատեալ , կարգեցաւ յառաջին շաբաթ յինանց ։ Այս այսպէս առաջիկայս տօն յայժմուս առնել ուրոյն զայլ խորհուրդ առանձին . ա՛յն է գիւտ նշխարաց սբ̄յն . ո՛չ ըստ փոխադրութ̄ե մասանց նշխարաց 'ի հայս բերելոյ 'ի ձեռն լուսաւորչին , զի զայն կատարեմք ուրոյն զկնի պենտեկոստէի , այլ

ըստ

րութ յայտնութե՟ պատուական գլխոյ Մկրտչին և Նշխարաց նր՟ յայլևայլ ժամանակս ։ Յօրինակ այսմ տեսանեմք, զի և Հռովմայեցիք աստանօր յօգոստոսի 29 · մատուցանեն զտօն գլխատման և գիւտի գլխոյն, վերծանելով օրինակ զայս · * Գլխատումն սբ՟յն Յով-
,, հաննու Մկրտչի , զոր Հերովդէս մօտ յաւուրս պա-
,, սեքին հրաման ետ գլխատել · Բայց յիշատակ նորա
,, յայսմ աւուր կատարի տօնախմբութե՟ , յորժամ պատ-
,, ուական գլուխն նր՟ գտաւ յերկրորդում նուագի || ։
Այլ ջանացի մեք զպատմութ՟ե գիւտի գլխոյն և Նշխարացն աւանդեցաք ՚ի տօնի գլխատման չինի պատճէի, յայսմ վայրի միայ ՚ի ճառօրէն ներքոյ աւարտել ընթանս ։

ՃԱՌ ՆԵՐԲՈՂԱԿԱՆ

՚Ի սբ՟ն Յովհաննէս հայրապետէ և Մկրտէն ։

ԶՈՐ ՆԱԽԿԱՐՊԵՏՆ ՅՈՐդանեաց խորհրդոյն քարոզիչ հռչակի ամլորդին Յովհաննէս, ո՛չ զստուերական օրինակն տեսանելով չորից աւետարանչաց՝ ոչ եզեկիէլ մարգարէ ՚ի վր՟ քոբար գետոյ, այլ զճշմարտութ՟ն աւետարանին աւետաւոր ձայնիւ քարոզելով աշ՟ի առ յորդանան գետով, ուր և զգառն այ՟՝ որ բառնայ զմեղս աշ՟ի, մատամբ եցոյց տիեզերաց , և զնոյն փրկիչ աշ՟ի մկրտեաց և ձեռնադրեաց 'ի յորձանսն յորդանանու , զմարգարէականն և զառաքելական քարոզութի̃ զուգաւորեալ ընդ պաշտաման կարապետութե̃ բանին ա̃յ . որ և զընթացսն լնոյր վկայութե̃ք և վկայական արեամբ . և մեծ 'ի ծնունդս կանանց վկայեալ լինէր 'ի բերանոյ Ճշմարտութե̃ , որոյ եղև վկայ ։ Եւ զի այս այսպէս , կարի ճահողապէս՝ ոչ միանգամ և ոչ միւսանգամ տօնախմբել բաւական համարիմք զերիցս երանելին , այլև երիցս և չորիցս՝ մինչև 'ի լնուլ զթիւ̂ ս̃բց աւետարանչաց . զի և սա կենդանի աւետարանիչ , և յաւետարանչաց գովուե̃ ճառեալ ը̃ քառեակ խորհրդոյ տօնից իւրոց ։

Ծնունդ ս̃բյ կարապետիս սքանչելի՝ ճոխաբար պատմի 'ի սկիզբն աւետարանի , որ ը̃ ղուկասու . պաշտօն մկրտչին ը̃արձակ նկարագրի 'ի միոյ միոյ 'ի չորից աւետարանչաց . և գլխատումն միօրինակ պատմի յերից անտի իբրև 'ի միջէ բերանոյ , 'ի մատթէոսէ և 'ի մարկոսէ և 'ի ղուկայ . ո̃պ և թաղումն մարմնոյն 'ի ձեռն աշակերտաց՝ խորհրդով 'ի վ̃ր բերի . յորում և զգիւտ և զփոխադրութիւն պատուականն գլխոյն և նշխարացն իմանամք բովանդակապէս . զի թէ չէր ծածկե̃լ զանձն յագարակի , ապա և ոչ յայտնեալ . և եթէ չէր ազացե̃լ ո̃պ կորուսե̃լ , ոչ ևս էր գտե̃լ . և այն զի՝ եթէ գլխատումն տօնելի եղև անտրտում , ապա և գիւտ գլխոյն և նշխարացն կրկին տօնեցի ուրախութե̃ք՝ զոյգ ը̃ ցնծութե̃ ծննդեանն և պաշտաման մկրտութեան .

թեան. քանզի և լուսաւորիչն մեր զմի կարգեաց տօն 'ի պատիւ ամենայն խորհրդոց մկրտչին ։ Արդ ինձ ո՞ տացէ յաւուրս հանդիսի բան բաւական՝ ասել զքոյին մեծամեծս՝ ով մեծդ 'ի ծնունդս կանանց, եթէ ոչ դու շնորհեսցես անարժան անուանակրիդ 'ի ժամուս իբրև 'ի փոխ ցանկալի զգեղեցիկ ձայնդ բարբառոյ, լսելի առնել ընդ տիեզերս զգովութիւնս քո. թէպէտև այն անկարօտ մերումս գոչման. զի քոյդ քաջահնչօղ բարբառ զտեառնէ քուսմէ՝ և զքեզ քաջածանօթ արար ծագաց 'ի ծագս տիեզերաց, իբրև պարագլուխ մարգարէից և առաքելոց՝ զորոց գրեալն է, ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և մինչև 'ի ծագս տիեզերաց ելին խօսք նոցա ։

Ո ի եթէ մարգարէ զքեզ ձայնեսցուք, այո, և առաւել ևս քան զմարգարէ՝ երկրորդէ զքէն բերանն աստուածեղէն. և եթէ առաքեալ, նոյնպէս հաւատարմացուցանեն բանք մարգարէից զքէն երկրորդեալք յաւետարանաց, եթէ դու այն ես՝ զորմէ ասաց որ առաքեացն. ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քո ։ Ապա ուրեմն որով առաքեալ, նովիմբ և հրեշտակ տեառն ամենակալի յուցար, 'ի մարմնի հրեշտակդ՝ հոգւով զուարթուն հոգեղինաց ցանկալի և նախանձելի. զի որում դասք սերովբէից և քերովբէից ահիւ 'ի պաշտօն կային երկրպագութեամբ, դու անդստին յորովայնէ յորովայն նմին երկրպագու՝ 'ի հասանել ժամանակին համարձակ ձեռնադրօղ և միրոնիչ նմին հրամայեցար լինել ․ և փեսաւէր և բարեկամ երկնաւոր փեսային զանձն անուանել համարձակեցար , որ նա և պսակիչ է հարսին եկեղեցւոյ ծանուցար , խօսելով զնոր ժողովուրդ քսի՝ իբրև զկոյս մի ոք յանդիման կացուցանել նմա , ջրովն մաքրութե և հոգւով խոստովանութե և ապաշխարութե ․ և այնպէս 'ի ձեռս աւանդեցեր փեսայացեալ բանին ըդհարսնացեալս եկեղեցի 'ի հնազանդութի , և զտրն փառաց 'ի տուն ածեր նորոյ սիոնի , զի ածցէ և սա զնա 'ի տուն հօր իւրոյ երկնաւորի ։

Տեսանէ՞ք ո՛վ մանկունք սիոնի նորոյ զգերածայրեալ պաշտօն մեծ կարապետին և միրոնչին յովհաննու ․ որ և ձեզ փառք պարծանաց՝ աշակերտելոցդ երկնաւոր վրդպին , իբրև նախավարժիչ ձեր յօրինակին ․ զի նախ 'ի դպրատան յովհաննու մարզեցան՝ որք արժանաւորեցան կոչիլ յաշակերտութի քսի ․ նախ յովհաննու ձայնի բարբառոյ յանապատի լուա՛ն՝ ոյք զհետ չոգան ձայնի քաջ հովուապետին ․ նախ 'ի յովհաննու մկրտութե յղացան՝ որք վերստին ծնան մկրտութբն քսի ․ ո՞չ և նախ 'ի լոյս ճրագին յովհաննու ընտելացան՝ ոյք լուսաւորեցանն յարփիափայլ ծագման արեգականն արդարութե ։

Այլ այս ո՛չ փոքր պատի՛ւ , բազմօրինակ սատար լինել փոքուն 'ի մեծութի փառաց մեծին ։ Պատի՛ւ անձին գրէր բերզելի գաղադացի սպասաւորութի հարկանել արքային դաւթի առ անցուցանել զնա ը՟ յորդանան · որչափ ևս առաւել մեծաշուք փառք յովհաննու և անհամեմատ պատի՟ւ, սպասահարկու լինել որդւոյ դաւթի, որ և որդի ա՟յ, թագաւոր թ՟գ՟րաց և տ՟ր տ՟րանց, առ անցուցանել զնա ը՟ ջուրս յորդանանու՝ նորահրաշ խորհրդով մկրտութե՟, յորմէ մաքրուրութի՟ և փրկութի՟ ծ՟ի ։ Մ՛չ յեսու և ոչ մովսէս առ սովաւ մեծ, ո՟պ սա առ նոքօք մեծագոյն · զի ոչ միայն զժողովուրդն, այլև զփրկիչն գլխովին ժողովրդեան անցուցանէր ը՟ ծով ծական և ը՟ յորդանան մկրտութե՟ ։ Մ՛չ ահարոն առ սովաւ մեծապատի՟ւ, ո՟պ սա առ նովաւ գերապատի՟ւ · զի զքահանայապետն ճշմարիտ ը՟ կարգին մելքիսեդեկի ձեռնադրեր կարապետն՝ հանդերձ օծութե՟ հոգւոյն իջելոյ 'ի յորդանան 'ի վ՟ր էակցին աղաւնակերպ երևմամբ · որով զետացին յովհան որդի զևտացւոյ զահարոնեանն զքահանայութի՟ խափանելի գոլ վըկայէր առ ք՟րի՟ որդւո՟ն ա՟յ, վ՟ն և ոչ ինքն քահանայանայր զկնի հօր իւրոյ զաքարեայ, այլ սարկաւագել մշտնջենաւոր քահանայապետին երկնաւորի՝ գերագոյն փառք և մեծութի՟ անձին գիտէր · զի թէ որ մերձենայ առ մեծն՝ մեծանայ, ապա և ա՟ծամերձն՝

ա՟ծանման ճանաչի ։

Այլ լուա՛րուք զբան տ՟ն ահաւոր, որք մեծութե՟ էք ցանկացօղք երկնաւորին, եթէ ի՟չ է մեծութի՟ յովհաննու 'ի վեր քան ըզբան · զի ուր հաստատեացն անսուտն ճշմարմարտութ̃ի զմկրտչէն լուրմէ, եթէ սա է մեծն ՚ի ծնունդս կանանց, ՚ի վերայ էած. բայց փոքրիկն յարքայութ̃ն երկնից մեծ է ք̃ զնա։ Փոքրկացա՞ւ ուրեմն արդեօք պատի՛ւ մեծին. և զիա՞րդ. բայց զի իմասցուք ՚ի խրատ և ՚ի յորդոր մեզ այսմ̃. եթէ արդարև յերկրի ևեթ մնայր մեծութ̃ի յովհաննու, փոքր էր յովհաննէս և քան զյետինն ՚ի փոքրկանց երկնից։ Իսկ արդ՝ ո՞չ և ինքն յովհաննէս յետ վկայելոյ ճշմարտութ̃են և գլխատելոյ վս̃ վկայութ̃են, հիւթական մարմնով յերկրի պարածածկել̃՝ աննիւթական հոգւովն ը̅ ք̅սի յարքայութ̃ին երկնից վերափոխեցաւ, յայտ է թէ յաւուր համբարձման տ̅ն յերկինս. և կարի իսկ քաջ։ Ապա ուրեմն ոչ մեծն փոքրկացաւ, այլ փոքրիկն ևս քան զևս մեծացաւ. և արդարև փոքր էր ն̃ր երբեմն մեծութ̃ի առ այժմու անանց մեծութ̃ե. զի նախ յերկրի էր, և այժմ ՚ի վերոյ ք̃ զերկինս երկնից. արդ որչափ հեռի են երկինք յերկրէ, այնչափ բարձր է վերջին մեծութ̃ի յովհաննու քան զառաջինն. մինչ զի առաջինն առ վերջնովս՝ փոքրկութ̃ի էր քան մեծութ̃ի, բայց և վերջինն զառաջնոյն կախեալ։

Ու ո՞ յերկբայեսցի. զի յերկրի պատի՛ւն էր մեծ, այլ յերկինս փառքն մեծագոյն. աստ պաշտօնն մեծ, անդ պսակն մեծագոյն. յերկրի անշուք ըստ արտաքնոյն, յերկինս արտափայլեալ շքով ը̅ չափու ներքին պայծառութ̃են հրաշափառապէս. աստ անպաճոյճ խոշորազգեաց ստեւապատ եւ մաշկեգօտի ; անդ փառազգեաց լուսաճաճանչ՝ ը̄ մէջ ածեալ զերկնից ծիածան . աստ մարախ եւ մեղր վայրենի չափով կերակրեալ , անդ 'ի մանանայէն թաքուցելոյ 'ի բուն 'ի կոչունս երկնաւոր թագաւորին՝ բարեկամին իւրոյ վայելեալ , եւ յուղխից փափկութե̄ արբեալ . աստ տնանկ եւ վաստակաւոր 'ի մանկութե̄ , անդ 'ի հանգիստ մշտնջենաւոր գրգե̄լ : Երբեմն ճգնասուն անապատաւոր , եւ այժմ փառազուն թագաւոր . երբեմն ձայն բարբառոյ յանապատի , այժմ ձայնապետ հրեշտակական պարու 'ի յերկնի . երբեմն մշակ արդարութե̄ , այժմ ամբարեալ 'ի շտեմարանս արքայութե̄ . երբեմն քարոզ եւ վկայ ճշմարտութե̄ եւ արդարութե̄ , այժմ քարոզեալ եւ հռչակե̄լ ներբողական ձայնի̂ զուարթնոցն բազմութեան : Եւ պարզաբար՝ որ երբեմն մարգարէ եւ առաքեալ եւ մարտիրոս գլխովին արեամբ նահատակեալ , այժմ փառաւորեալ 'ի գունդս մարգարէից , վերապատուեալ 'ի դասս առաքելոց , եւ պսակեալ 'ի գլուխ պսակահոյլ բանակաց բիւրաւոր վկայից , վարդագեղ եւ շուշանափայլ զարդուք ականաւոր 'ի հոյլս մաքրակրօն կուսից արեամբ պսակելոց :

Տեսե՞ր զահաւոր մեծութի̄ մկրտչին ը̄ փոքրկունս եւ ը̄ մեծամեծս յերկնից արքայութե̄ . տեսե՞ր եւ զպատճառս մեծանալոյն՝ զաստանօր խոնարհութի̄ն , զհիմն ասեմ երկնաբերձ բարձրութե̄ն . զի թէ ոչ սերմանկըն սաստ առատութ͞ե զվաստակս առաքինութ͞ե , ոչ մեծանայր 'ի փառս անդ երանութ͞ե ։ Ո՛ն առեալ և մեք եղբարք , մի՛ աստանօր պատուով և մեծութ͞ե բարձրամըտեսցուք , այլ առաւել խոնարհութ͞ե անդանօր բարձրութ͞ե և մեծութ͞ե ուշ կալցուք . որում մի միայն սատար՝ փոքր լինել յերկրի , ևս առաւել փոքրկանալ յաչս անձին . զի որ խոնարհեցուցանէ զանձն , բարձրասցի . որ վաստակի , նոյն և հանգչիցի . որ ճգնին՝ վարձատրեսցի . և որ յաղթէն՝ պսակեսցի . չի՛ք այլ ճանապարհ յերկինս 'ի վեր՝ յերկիր 'ի խոնարհ ։

Զի և ես ինքնին ասէ Տ͞ր , որ եմ ճանապարհ , ճշմարտու͞ն և կեանք , յանձնէ ետու ձեզ օրինակ , կնքեալ բանի՛ւս ը͞ս արդեանց . ո՞չ զնոյնս պարտ էր չարչարիլ ք͞ի , և մտանել 'ի փառս իւր . և զնոյն ակնարկեցի ըղկարապետէս նախաճառեալ առածի՛ւս . ո՞չ զնոյնս պարտ էր կրել յովհաննու մկրտչի՝ անցս ճգնութ͞ե , քարոզութ͞ե , և նահատակութ͞ե , և այնպէս մտանել յիմ փառս . զի մեծն 'ի ծնունդս կանանց լինիցի մեծ և յերամս արդարոց և 'ի դասս երջանկաց . ապա թէ ոչ՝ եթէ ոչ կատարեսցէ զընթացս իւր մեծապէս առաքինութ͞ե , ոչ մեծասցի քան զայլս յարքայութ͞ե . ո՞չ և առաքելոցս նոյնօրինակ ազդեցի , եթէ ոչ առաւելուցու արդարութ͞ն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց , ոչ մտանիցէք յարքայու͞ն երկնից ։ Արդ քանզի կատարեաց կատարեալն իմ

Մկրտիչ կատարելապէս զա՟մ զկամս իմ, վ՟յ և ես պսակեցի զնա փառօք մեծութե՟ երկնաւոր կատարելութե՟, որ ոչ գտանիցի և յերկինս կանանցածին այլ մեծ քան զյովհաննէս • զի ոչ ոք այլ մօտաւոր առ իս 'ի մէջ խմբից առաքելոց, մարգարէից, վ՟կայց, մարտիրոսաց, կուսանաց, միանձանց, և ա՟մ դասուց արդարոց՝ որ՟պս զկարապետն իմ և զՄկրտիչն յովհաննէս, որ զբոլորեցուն եցոյց յանձին տիրապէս զառաքինութե՟ց զհանդէս • ո՛չ և ո՛չ յաստեղս երևելիս գերապայծառ քան զարուսեակն լուսաբեր առաւօտեան՝ գեղեցիկ շողշողեալ, ե՟ որում աւաւել համանման և մերձաւոր փայլման գեղեցիկ լուսնի՝ օրինակի մօր իմոյ, և ընտիր արեգական արդարութե՟ :

Այլ և զայնու ո՛չ է պարտ զանց առնել, զի և հարազատ ազգակցութե՟ հպաւոր Մարիամու և յ՟ի՝ Մկրտիչն յովհաննէս տեսանի աւաւել քան զա՟մ տոհմակից կարծեցեալս • զի Թէպէտև մերձաւորագոյն երևէին եղբարքն անուանակոչեալք՝ յազգէ ո՟քյն յովսեփայ ա՟ծահայր անուանելոյ, այլ քանզի անհայր ծննդեամբ 'ի կուսէն միայնոյ եր տ՟րն մեր, ազգականք կուսին մերձագոյն ազգակիցք էին յ՟ի • յորս զառաջին տեղին ունի Մկրտիչն յովհաննէս :

Իսկ զի այսոքիկ այսպէս, եկա՛յք հաւատացեալք ք՟ի՝ 'ի տօնի մեծ կարապետիս, զոր միշտ ունիք բարեխօս համ՟ծական, և պատուէք վայելչապէս փառօք չորեքկին տօնախմբութե՟, և մեծարէք աղօթիւք և պահօք. առաւել կամաւոր ծոմապահութբ՟, է՛ որ եռօրեայ, է՛ որ հնգօրեայ, եւս և եօթնօրեայ անգամ, զի և գիտէք զնա ուխտակատար և արագահաս օգնական յա՟մ կարիս հոգւոյ և մարմնոյ, եկա՛յք ասեմ այսօր 'ի գիւտ պատուական գլխոյ և նր՟ նշխարաց նր՟ ընթասցուք, լինել մեզ դեղ կենաց, ոչ և երբեմն առ մեզ բերէր 'ի նշխարաց անտի 'ի պարգևի մասին լուսաւորիչն հոգւոյ մերոյ: Բայց 'ի գիւտն ընթասցուք՝ այնմ, զոր մեք կորուսաք, կմ՟ որ 'ի մէնջ ծածկեցաւ գլուխն պատուական. այս է՝ պատուական և գլխաւոր առաքինութե՟ց մեծին յովհաննու. և սրբամաքուր նշխարաց նր՟, մասանց իմա՛ հանդիսից վարուց լաւութե՟:

Խնդրեսցուք զխոնարհուի՟ նր՟ իբրև զօտս, զի գտցուք զբարձրութի՟ նր՟ որպէս զգլուխ. խնդրեսցուք զմեռելութիւն մարմնոյ նորա՝ սպանանելով զանդամս մարմնոյ զերկրաւորս, զի գտցուք զկենդանութի՟ նր՟ հոգւով յանմահ 'ի կեանս երկնաւորս: Խնդրեսցուք զբազմավաստակ քրտունս աշխատութե՟ նր՟ յա՟մ 'ի կեանս, զի գտցուք զնորուն հանգիստ 'ի մահուան. խնդրեսցուք զվկայութի՟ նր՟ արեամբ չափ վ՟ն ճշմարտութե՟ և արդարութե՟, զի գտցուք և զփառս և զպսակս նորա անպատումս յերկնաւոր հանդիսադրէն. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել 'ի ձեռն զօրաւոր մաղթանաց մեծ կարապետին:

Վ.Ե.Ր.Ջ.

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

Յովբայ արդարոյ ։

Հ. Յ. մայիս. 6 ։ Լ. մայ. 10 ։ Բոլլանդեանն հենսաքենեսս. անդ ։ Հարք, և մեկնիչք ։ (1)

ՀԱՄԲԵՐՈՂԱՑՆ նախատիպ, և կենդանի նահատակ առաքինի՝ յոբ երանելին, վկայեալ յա̃յ այր ճշմարիտ, անարատ, արդար, ա̃ծապաշտ, մեկնեալ յա̃մ իրաց չարութ̃է մեղաց, էր յաբրահամեան զաւակէ 'ի սերնդոցն եսաւայ․ որպէս զի լինել նմա վեցերորդ յաբրահամէ․ քանզի աբրահամ ծնաւ զիսահակ․ իսահակ ծնաւ զեսաւ և զյակոբ․ եսաւ՝ որ կոչեցաւն եդոմ, ծնաւ 'ի բասեմաթայ դստերէն իսմայելի հօրեղբօր իւրոյ զռագուէլ․ ռագուէլ ծնաւ զզարեհ․ և զարեհ ծնաւ 'ի բոսորայի կնոջէ իւրմէ զյոբաբ, որ և կոչեցաւ յոբ․ որով լինի սա ժամանակակից մովսեսի, և երիցագոյն քան զնա միով ծննդով․ այլ յերկար ևս եկեաց քան զմովսէս մինչև ցաւուրս դատաւորաց ։

Եւ էին առ մովսեսիւ երկու թագաւորք քաղաք անուանի 'ի մէջ այլազգեաց․ մին՝ քաղաք ղակ սեպփորեան արքայ մովաբու , որ եհարց խորհուրդ 'ի բաղաամայ բէովրեան ը̃դէմ իէ̃լի . (Թւ՛ . իբ̃ . և յետ . իդ̃) . և միւսն բաղակ սեպփորեան կմ՛ բէովրեան՝ արքայ եդոմայ 'ի դեննաբա , որ էր բարեկամութք ը̃ իէ̃լի . (Ծնն . լզ̃ . 32 : ա̃ . Մնաց . ա̃ . 43 : և յոբ . իէ̃ . 19 .) և սորին բաղակայ եդովմայեցւոյ յաջորդ եղև 'ի թգ̃րութե յոբաբ , որ և յոբ արդարն , 'ի քաղաքի անդ դեննաբայ կմ՛ 'ի միում 'ի քաղաքացն եդովմայ . քանզի և ինքն էր ծննդեամբ և հայրենեօք յերկրէն աւսիտայ , որ և ուսիտ , կամ ուս կոչիւր՝ 'ի սահմանս եդոմայեցւոց և արաբացւոց (2) . այն է ըստ գրոց երկիր արևելից անուանեալ 'ի կողմանս անապատ արաբիոյ . թող զի ոմանք համարեցան լինել 'ի միջագետս ասորւոց՝ 'ի մէջ երից քաղաքաց ամդայ , բերդնայ և ուռհայու . և այլք՝ մերձ 'ի թլկուրան , 'ի սահմանս միջագետաց հայոց . որպէս և յովսէփ քաղդէական մեկնաբանն եդ պարզապէս 'ի հայոց ձորն :

Արդ այրս այս արևելեան՝ յոբ ընտրեալն յա̃յ , եթէ յաւուրս նախորդին իւրոյ բաղակայ , և եթէ յետ թգ̃րելոյ 'ի տեղի նորա , ծանուցեալ էր յամենեցուն իբրև այր թագաւոր յիւրում գաւառի՝ ըն ճոխութք և հարուստ ստացուածովք , ևս առաւել մեծատուն հաւատով , և կատարեալ իմաստութք , և գործք մեծամեծք էին նորա 'ի վը̃ երկրի . և ոչ կարծեն ոմանք՝ զքահանայականն իսկ ունէր զպատիւ իբրև ը̃ նմանութե մելքիսեդեկի, ըստ որում հանապազօր մատուցանէր զոհս հաճոյականս ա՟յ բարձրելոյ՝ 'ի քաւութ՟ի տան իւրոյ և 'ի գոհութիւն բարերարին ա՟յ ։

Նա էր 'ի մէջ արևելեայց կենդանի օրինակ ա՟ծպաշտութե՟, և իբրև կենդանի պատգամ յա՟ծակոյս կողմանէ, առաջնորդելով ամենեցուն ը՟ ճանապարհ ուղղութե՟, և արդարապէս դատելով զա՟մ դատաստան ․ առատաձեռն առ կարօտեալս, և հայր որբոց և այրեաց ․ խորհրդատու իմաստնոց, և խրատիչ անզգամաց ․ փայլեալ ա՟մ առաքինու՟բ, և գովելի և սիրելի յաչս ա՟մ մարդոյ, ևս առաւել առաջի ա՟յ ․ մինչև պարծիլ արարողին տիեզերաց 'ի վ՟ր հաւատարիմ ծառային իւրոյ յոբայ, և ասել ցփորձիչն հասարակաց ցսատանայ ․ նայեցա՞ր մտօք քովք ը՟ ծառայ իմ յոբ ․ զի ո՛չ գոյ իբրև զնա 'ի վ՟ր երկրի, այր անարատ՝ ճշմարիտ՝ ա՟ծպաշտ, մեկնեալ յա՟մ իրաց չարաց ։ Ս՟ա զի առանց օրինաց 'ի վեր քան զօրէնս առաքինանայր արդարն ․ և էր այր ը՟ս սրտին ա՟յ ։

Սորին վ՟ս և չարանախանձ թշնամին մախանօք բերեալ ը՟դէմ արդարոյն՝ չարախօսել ժպրհէր բանսարկու՟բ զնմանէ առաջի տ՟ն ․ ասէ ․ միթէ ձրի՞ պաշտիցէ յոբ զտ՟ր, ուր դու ետուր նմա զա՟մ մեծութ՟ի և զդիւրութիւն կենաց ․ նմին իրի և գոհ կեանս կեայ ․ ա՛ղէ թո՛յլ տուր ինձ կորուսանել զա՟մ ինչ զն՟ր, և տես թէ զի՛արդ այնուհետև փոխանակ օրհնելոյ անիծանիցէ զքեզ ։ Խաբեցաւ խորամանկ

մանկ բանսարկուն ։ զի կամելով սուտ հանել զանսուտ վկայութ̃ին ա̃յ՝ ևս քան զևս հաստատէր կացոյց յանդիմանն ա̃մ ախեղերաց , և առաւել ևս վարձուց մեծաց առիթ եղև առն ա̃յ ։ և զի վայր իսկ կամէր ա̃ծ ,

Թոյլ ետ փորձողին առնել զոր գիտէ ։

Յայնժամ արձակեաց սատանայ նախ զառաջինն՝ գերեվարս ՚ի վ̃ր անդէոց և հօտից յօբայ եղելոց յագարակս և ՚ի դաշտս ։ ուր կային նորա խաշինք եօթն հազար , ուղտք երեքհազար , լուծք եզանց հինգ հարիւր , և էշք մատակք արօտականք հինգ հարիւր ։ և ետ գերել զարջառս և զէշս , և կոտորել զմանկտին՝ որք ունէին զհօտ նոցա ։ ետ և հրոյ տեղալ յերկնից , և այրեաց զհօտս ոչխարաց և զհովիւ՛սն ։ նոյնպէս արձակեաց ասպատակաւորս , որք գերեցին զուղտս , որոյ ճարակ տու՛եալ զուղտապանսն և զայլ սպասաւորս ։ Միանգամայն ձեռն էարկ չարն և ՚ի զաւակս արդարոյն ։ քանզի էին ն̃ր ուստերք եօթն , և դստերք երեք ։ որք ա̃մ հանապազորդ սովորութե̃ ժողովեալ էին ՚ի տուն եղբօր իւրեանց երիցու ։ և մինչդեռ բազմեալ էին ՚ի սեղան ուրախուե̃ , յարոյց դեւն յանկարծակի հողմ մեծ ՚ի կողմանէ անապատին , որ եհար զչորեսին անկիւնս տանն ։ և անկաւ տունն ՚ի վ̃ր նստելոցն , և

կորոյս զամենեսին ։

Արդ յայս ա̃մ հարու՛ածոյս հազի՛ւ մի մի անձինք ՚ի ծառայից ապրեալ՝ եկին գոյժ տալ յօբայ մի զհետ միոյ ։ զի մինչև էր առաջնոյ բօթաբերի վճարեալ զբանս իւր՝ միւսն 'ի վր̅ հասանէր․ և այնպէս 'ի միում ժամու եհաս առ յոբ բօթն այս ա̅մ անհնարին վնասուց ։ Իսկ արդարոյն լուեալ զա̅մ̅ն հեզիկ լռութ̅բ և սքանչելի համբերութ̅բ՝ ոչինչ գանգատ կալաւ զումեքէ, այլ յարուցեալ պատառեաց զհանդերձս իւր, և կտրեաց զվարսս գլխոյ իւրոյ՝ 'ի նշանակ օրինաւոր սգոյ․ և անկեալ 'ի գետին՝ երկիր եպագ Տ̅ն, և ասէ զյաւերժական յիշատակաց արժանին բան․ Մերկ իսկ ելի ես յորովայնէ մօր իմոյ, և մերկանդամ դարձայց անդրէն․ Տ̅ր ետ, և Տ̅ր եառ․ որպէս Տ̅ն հաճոյ թուեցաւ, նոյնպէս և եղև․ եղիցի անուն Տ̅ն օրհնեալ ։

Ահա այսպիսի եղև անպարտելի առաքինութի̅ն քաջ նահատակին ը̅դէմ մրցանաց չարին․ համբերութի̅ն նր̅ անվանելի վանեաց զամուրս բանսարկուին, և ունայնացոյց զա̅մ մեքենայս չարութե̅ նր̅ ։ Այլ և Ա̅ծ փառաւորեալ 'ի գործոց ծառային իւրոյ՝ յերեսս հարկանէր բանսարկուին երկրորդ անգամ․ ապաքէն հայեցար ասէ ը̅ ծառայ իմ յոբ, զի ո̅չ գոյ իբրև զնա 'ի վր̅ երկրի, այր ճշմարիտ, անարատ․ ա̅ծապաշտ, մեկնեալ յա̅մ չարութ̅է․ և տակաւին կայ արդարն հաստատուն յանմեղութե̅ իւրում․ և դու տարապարտ խօսեցար կորուսանել զինչս նր̅ ։ Յայնժամ ներելով ա̅յ կրկին ևս խստանայր չարն, և պատճառանս բաղբաղէր ընդդէմ արիութե̅ առաքինւոյն 'ի հանդէսի փորձանաց․

նաց. ո՛չ թէ չիցէ՝ ինչ մեծ կորուստ ընչիցն, ուր ինքն ողջ առողջ կայ. թո՛ղ, զի հարեց ասէ զնա չարաչար ախտիւք մինչեւ 'ի դրունս մահու, եւ տե՛ս թէ մնա՞յ անտրտունջ: Այլ ա՟ծ թողացոյց նմա, միայն թէ պահեսցէ զոգի նր՟ 'ի մարմնի, եւ մի՛ սպանցէ. զի եւս քան զեւս հանդիսացի քաջութ՟ի զօրականին իւրոյ: Այլ եհար սատանայ զյոբ չարաչար կեղով յոտից մինչեւ ցգլուխ. մինչ լի լինել նմա խղխայթիւք վիրաց եւ շարաւօք եւ զազրութ՟բ որդանց, եւ ծառայից առ չհանդուրժելոյ հոտոյն հանել զնա արտաքս 'ի տանէ, եւ ընկենուլ 'ի տեղի աղբեաց. ուր նստէր ցաւագին անձամբ եւ անայլայլակ սրտիւ, եւ առեալ խեցի՝ քերէր զթարախն:

Մեծ էր հարուածն, եւ ողորմ տեսիլն, տեսանել զայր թագաւոր յաղբիւս նստեալ շարաւալից՝ անօգնական եւ անմխիթար, զտիւ եւ զգիշեր յանբերելի ցաւս վարակեալ 'ի վեր քան զա՟մ խօթութ՟իս հիւանդութեց. մ՟ զի աներեւոյթ ձեռն դժոխային դահճին խոշտանգէր զնա անխնայ կտտանօք: Այլ այսպէս՝ բազում ժամանակք անցանէր 'ի վ՟ր՝ ասէ գիրն. զոր յոլովք 'ի նախնի վ՟պաց՝ եօթն ամ ասեն լինել. եւ այլք աւելի կամ պակաս (3). եւ այն զի՝ թէպէտեւ սակաւօրեայ լինէր, անտանելի թուէր ա՟մ մարդոյ. իսկ զի՞նչ լինիցի սաստկութիւն է՟ երկարութ՟ն:

Այլ սակայն երանելի նահատակն կատարեալ համբերութ՟բ տանէր զայն ա՟մ, եւ անդադար օրհնէր սրտիւ և բերանով զՏ̃ր , յորմէ միայնոյ գիտէր զամ̃ հանգիստ և զտառապանս անցաւոր կենցաղոյս · և զի անարատ էր հոգին՝ վկայութ̃ անստգիւտ խղճի մտաց կայր մնայր անալեկոծ 'ի խորհուրդս իւր · գիտելով չափ , թէ 'ի վարձ , և ոչ 'ի պատիժ են խրատք նռ̃ 'ի վր̃ երկիւղածաց իւրոց · չէր 'ի ժամուն տխրապէս գիտակ , թէ սատանայ ինքնին փորձէ զնա չարակնութ̃ , այլ քաջ խելամուտ էր՝ թէ առանձին թոյլտուութ̃ են Այ̃ իւրքն , ոպ̃ և ամ̃ արկածք յօգուտ ծառայից նռ̃ ։

Տեսեալ բանսարկուին՝ եթէ խայտառ յամօթ եղև յերեսաց առաքինութեան , զի թէ՛ ծ̃ և ինչք նր̃ զէնք սովորականք՝ կորեան եղեն ը̃ ոտիւք նահատակին , և եթէ՛ մարմին և փափկութիւնք նր̃՝ նոյնպէս յոչինչ համարեցան , 'ի հին զէնն իւր ընթանայր , և գործի 'ի ձեռն առնոյր զկինն · զի թերևս նովաւ հնարեսցի դրդուել զամրութի̃ մտաց արդարոյն , և որսալ ինչ բանս տժգոհութե̃ 'ի բերանոյ նր̃ ։ Արդ թէպէտև կինն յոբայ էր անդստին կիրթ յա̃ծպաշտութե̃՝ խրատեալ և յառաքինի օրինակէ առն , այլ դիւրախաբ գտեալ 'ի գաղտնի թելադրութ̃է չարին՝ ը̃ կանացի բարուցն տկարութե̃ խորհէր զեղելոցն , և ոչ կարէր հանդուրժել ը̃ իւրն · քանզի և ինքն 'ի պատճառս առն իւրոյ մերկացեալ էր և ունայնացեալ յամ̃ փառաց տիկնութե̃ , և 'ի յետին անանկութի̃ հասեալ , յուստերաց և 'ի դստերաց զրկեալ , և յամ̃ յուսոյ կենաց օտարացեալ. մ͞ոյ եկն եկաց առաջի յոբայ, և սկսաւ գանգատել զվիճակէ երկոցունցն. և առ դառնութե ոգւոյ իւրոյ ոչ գիտէր զի՛նչ խօսէր. ա՛ղէ ասէ՝ ասա՛ բա՛ն ինչ 'ի տ͞ր, և մախձանեա՛ց. ո՞պ թէ տրտնջեցէ զտ͞նէ, և պատուհասե͞լ յայտնապէս՝ փութով 'ի միջոյ բարձցի:

Իսկ երանելոյն յոբայ հայեցեալ ը͞ն նա խոժոռ դիմօք՝ ասէ. իբրև զմի 'ի կանանց անըզգամաց խօսեցար, այն՝ որ յերկիւղածութե և 'ի բարեպաշտութե վարս անեալ էիր. և ոչ գիտացեր միով ոգւով տանել յաջողութեց և ձախողութեց, որք առ հասարակ 'ի ձեռանէ տ͞յ մեզ բաշխին. և արդ՝ եթէ զբարիսն ընկալաք 'ի տ͞նէ, չարեացս ո՞չ համբերիցեմք: Ո՞վ հրաշալի բարբառ կատարեալ համբերողին և քաջայաղթ նահատակին. որ սովին բանիւ՛ս զվերջինն տարաւ 'ի գլուխ զյաղթութի ը͞դէմ սատանայի. զի չարն 'ի մ͞ր տ͞մ հարուածոց անփոյթ պահէր զլեզու արդարոյն՝ զի չար ինչ լուիցէ 'ի բերանոյ նորա. բայց անհնար եղև ելանել անիծից յօրհնե͞լ բերանոյ, յորմէ միշտ օրհնութիւք բղխէին: Օ ի՞նչ ապա. տակաւին փորձ փորձէր չարն՝ որսալ զնա բանիւ՛ 'ի բերանոյ բարեկամաց ն͞ր, զորս գրգռեաց ը͞դէմ երանելոյն ոգւով նախանձաւորութե և եղբայրական յանդիմանութե:

Բայց բարեկամք յոբայ երեքին էին արք երևելիք ա͞ծպաշտութ͞բ և իմաստութ͞բ, և իշխանք մեծամեծք հանգոյն նմին՝ իբրև թա-

գա

գաւորք, սահմանակից տեղեաւ, և մերձաւոր իսկ տոհմակցութ՟բ. անուն միոյն Եղիփազ արքայ Թեմ՟նացւոց, իբ՟ երկրին Թեմանայ՝ 'ի տանէն Եսաւայ, որպ՟ս և անուն անդրանկանն Եսաւայ էր Եղիփազ. Երկրորդն՝ բաղդատ բռնաւոր սոքեցւոց, այս է ինքնագլուխ իշխան երկրին սուքայ (ուր կարծի լինել յետոյ տեղի գերեզմանին յոբայ). և երրորդն՝ սովփար արքայ մինեցւոց. որ և սա 'ի տանէն Եսաւայ համարի, զի սովփար էր անուն Եղիփազայ որդւոյ Եսաւայ։ Արդ 'ի գալ ս՟ց միաբան 'ի լուր աղետիցն յոբայ՝ վ՟ն մխիթարելոյ զնա օրինօք բարեկամութ՟ե, տեսել զնա 'ի բացուստ՝ ոչ ծանեան զառաջինն. զի էր երանելին իբրև անշունչ պատկեր՝ որդնալից և շարաւալից. և ապա 'ի վ՟ր հասեալ ստուգութ՟բ՝ ձայն բարձել կականօք լացին 'ի վ՟ր ն՟ր իբրև 'ի վ՟ր մեռելոյ. պատառեցին զպատմուճանս իւրեանց, և ցանեցին հող 'ի վ՟ր գլխոց իւրեանց՝ ը՟ երկինս հայելով. և նստան շուրջ զնովաւ յերկրի զեօթն տիւ և զեօթն գիշեր. և ոչ ոք 'ի նոցանէ իշխէր խօսել ը՟ նմ՟ բան մի 'ի մխիթարութ՟ի. քանզի տեսանէին զանհնարին հարուածսն և մեծամեծս յոյժ, ասէ գիր։ Իսկ թէ զի՞նչ յայն աւուրս ապշութ՟ե որոճէին ը՟ միտս իւրեանց, կ՟մ հծծէին ը՟ միմեանս, ակնարկի առնելով այր եղբօր իւրում, և զի՞նչ խորհուրդք էին 'ի սրտի յոբայ արդարոյ, յայտ առնեն բանք սորա և նոցա՝ որք յերկարեցան յոյժ յետ միանգամ սկսանելոյ , ո՜վ գետ յորդեալ 'ի գնացս յետ առ փոքր մի արգելմանն : Քանզի նք՟ երեքեանն տեսանելով զբարեկամ իւրեանց յայնպիսի անլուր հարուածս , մարդկօրէն խորհրդով դատեցան զնա առ դաղտնի յանցանաց չարաչար պատուհասել յա՟յ գոլ . զի այս բնութ՟ի է մարդկան մեղադրելի յոյժ , ը՟ տեսանել զոք անկեալ՝ ունհար լինել , կմ՟ զփխասն 'ի վր՟ հասեալ՝ արժանահաս պատիժ առդնել . և ը՟ այսմ մեղանչեմք զօրհանապազ ըդ՟էմ սիրոյ եղբօր : Բայց արդարն յոբ՝ որ ոչն գիտէր զանձին ինչ մեղս արժանի այնպիսում պատուհասի , ոչ տայր տեղի մտածութ՟եց նց՟ և բանից . այլ միայն դաղտնիս ա՟յ զիրսն ցուցանէր լինել՝ 'ի հանդէս երկիղածաց իւրոց , և ուսուցանէր աւաղելի գոլ զունայնութ՟ի կենցաղոյս և զփառս անցաւորս , զմեծութ՟ի թգ՟րական և զփափկութիւծի . որպ՟ս թէ լաւ ես իցէ ոչ տեսանել անդամ զվայելս առօրեայ կենաց , ք՟ թէ յետ առժամանակ մի վայելելոյ՝ յայսպիսի ողորմ վիճակ մատնիլ . և յայս միտ զանձնէ դատախազէր , թէ ընդէ՞ր եղև ինձ բնաւ արև տեսանել և աւուրս բարօրութ՟ե , երբ զայսպիսիս ունէի կրել :

Եւ որչափ նա այսպիսօրէն վստահութ՟բ ը՟ ա՟յ խօսէր , այնչափ առաւել զչարէին բարեկամքն և վառէին ը՟դէմ նր՟ , ո՜վ թէ մեղապարտ գոլով՝ իբրև արդար խօսի զանձնէ . և սկսեալ սիրով խրատել զնա՝ զի ծանիցէ զանձն յանցաւոր և արժանաւոր այնմ ա՟մի , զոր կրէր ,'ի դառն կշտամբութ՟իս զկծեցուցիչս բերեալ լինէին , իբրև ոգւով ա՟ծսիրութ՟ե յեղբայրատեցութ՟ի կրթեալք • վ՟յ և արդարն իրաւամբք բժիշկս մեղանչականս կոչէր զնո՟ և մխիթարիչս չարեաց • զի կարծելով բարերարել նմ՟ խրատուք՝ վայրապար չարախօսէին ։

Եւ իբրև ոչ կարացին զնա յաղթահարել , յառաջ մատեաւ եղիուս որդի բարաքիելի բուզացի՝ յազգականութե՟ն արամայ 'ի նոյն աշխարհէն աւսիտայ , այր հզօր բանիւք և զօրաւոր մտօք • և բարկացաւ յոյժ յոբայ , զի երևեցոյց զանձն արդար առաջի ա՟ծ • նոյնպէս և 'ի վ՟ր երեցունց բարեկամաց նր՟ սրտմտեցաւ ոգի նորա , զի ոչ կարացին ըմբերանել զյոբ • և ինքն սկսաւ եւս ճարտար բանիւք յանդիման առնել յոբայ , թէ ա՟ծ դատաւոր արդար ո՛չ պատժէ զարդարս • գիտեմ ասէ , զի տ՟ր ո՛չ մերժէ զանմեղն , և որ 'ի սոյն հայլին բանք ե՟ն ինքեան ճշմարտեալք , այլ ոչ ուղիղ յանձն յոբայ առակեն՟ք ։ Վ՟յ և յոբ երանելին լուռ և եթ կայր , և ոչ առնէր պ՟նի բանից եղիուսայ • քանզի ետես՝ զի դիմախօսք իւր չառնուն 'ի միտ՝ թէ այլ է արդարութ՟ի վրէժխնդիր , և այլ արդարութ՟ի ինքնիշխան տ՟րութ՟ե • վ՟յ ո՛չ անիրաւի ա՟ծ յածել անդ զարտաքին հարուածս և 'ի վ՟ր արդարոց • զո՛ կամի հարկանէ , զո՛ կամի բժշկէ • և առաւել տանջէ՝ զոր սիրէ , խրատելով իբրև զորդի սիրելի • աստ նեղէ , զի 'ի հանդերձելումն առաւել պսակեսցէ փառօք ։

ռօք : Եւ այսու օրինակաւ յոբ մնաց 'ի կարծիս մտաց իւրոց, և յանդիմանէին զնա յիւրեանց կարծիս . մինչև ինքնին ա͞ծ ելոյծ զանլուծանելի վէճ՝ նոցա բանիւք և արդեամբք :

•Քանզի յետ դադարելոյ եղիուսայ 'ի խօսելոյ՝ եղև յանկարծակի մրրիկ ահագին, և երևեցաւ նորատեսիլ ամպ 'ի վ͞ր տեղւոյն՝ ուր նստէին յոբ և որ ը͞ նմա . և սկսաւ տ͞ր խօսել յամպոյ անտի ը͞ յոբայ ո͞չ ը͞ բարեկամի ընտանւոյ . և ուսոյց բարեկամացն յոբայ, թէ որպիսի օրինակաւ լինի խրատել տիրապէս բարեկամի զբարեկամ, ո՛չ զի ըղկծեսցի, այլ զի խելամտեսցի . բացարձակ տ͞րութի͞ն ա͞յ ծանիցի, և արդարութի͞ն ն͞ր մի՛ բամբասեսցի 'ի պատժել զարդարս ո͞չ զմեղաւորս : Իսկ յոբայ ուսոյց, թէ ես զա͞մ գաղտնիս խորհրդոց քոց և ա͞մ որդւոց մարդկան քաջ գիտեմ . այլ դուք չէք բաւական իրագէտ լինել, և ո՛չ խուզարկու դատաստանաց իմոց, թէ առ ի՞նչ թողացուցի այս ա͞մ չարեացս գալ 'ի վ͞ր քո . զի ա՛յլ են խորհուրդք իմ 'ի խորհրդոց ձերոց . դուք մարդկաբար խորհիք, այլ ես ա͞ծաբար գործեմ . և ո՞ 'ի մարդկանէ խելամուտ լիցի գործոցն ա͞յ, թո՛ղ թէ հասու խորհրդոց ն͞ր : Եւ առ այս սկսաւ ա͞ծ մի առ մի յուշ առնել յոբայ զերևելի արարածս, եթէ կարող ի՞նչ իցես 'ի միտ առնուլ զա͞մ կարգ և զընթացս ն͞ց, կ՛մ թէ հրամանատա՞ր իցես ն͞ց ա͞մի, ո͞չ ես . և եթէ այսոցիկ չես բաւական, անբաւական

կամ ծանի՛ր զքեզ առաւել ևս զաղտնեաց
իմոց ։

Նա զի մեծամեծս և զարմանալիս լռեալ յոբ 'ի տ՟նէ, և համարէր զամ՟ն 'ի խրատ և 'ի յանդիմանութի՟ իւր ասացեալ, ոչ իշխեաց բերան բանալ, և տալ պատասխանի ․ այլ միայն զանգատանս սրտոյ առաջի արկեալ որդիական երկիւղիւն՝ յայտ արար զպարտութի՟ անձին իւրոյ, միանգամայն և զլքումն սրտին ․ զի ոչ 'ի մարդկանէ միայն ասէ, այլ և 'ի տ՟նէ կշտամբանս լսեմ ․ և ես ոչինչ մի եմ ․ և զի՞նչ տաց առ այդ պատասխանի, բայց եթէ ափ 'ի բերան եդից ։ Բայց ա՟ծ կրկին ևս խօսեցաւ ը՟ ծառայի իւրում սիրելւոյ՝ զօրացուցանելով զնա բանիւն, թէ մի՞ համարիր այլազգ ինչ արարեալ առ քեզ յայտնութիւն, բայց զի երևեսցիս արդար ․ և յաջորդօքն առաւել 'ի խոնարհութիւն կրթեաց, զի չի՞ք քո ասէ կար իբր բազուկ առ բազուկ մրցիլ ը՟ ա՟յ, և տալ պատասխանի ա՟մ բանից ն՟ր ․ և յաւել յանդիմանս կացուցանել նմա օրինակաւ կիտին մեծի կամ վիշապ ձկան զգազանութի՟ սադայէլի, որ հնարի որսալ զա՟մ ոգիս մարդկան ․ յայտ արարեալ՝ թէ ոչ ոք կարէ յաղթահարել զչարն, եթէ ոչ ա՟վ ․ և թէ 'ի հասանել ժամանակին ունի ինքնին ա՟ծ սանձահարել զնա իսպառ՝ զօրութ՟բ խաչին ք՟սի, և նուաճել զապստամբն ը՟ ոտիւք ծառայից իւրոց՝ ծառայ յաւիտենականն ։

Սոքիմբք բանիւք՝ զորոց զխորհուրդն խորագոյնս տպաւորէր ա՟ծ 'ի սիրտ յոբայ, ետ նմա յայտնապէս ճանաչել, թէ որ ինքնին թոյլ ետ բանսարկուին մարտնչիլ ընդ նմա, և ինքն էր՝ որ զօրացոյց զնա յաղթել չարին. միանգամայն և խորհրդազգած արար զյոբ մարգարէական հոգւով՝ խորհրդոյ մարդեղութեան միածնի իւրոյ։ Որոյ վ̃ս իսկ 'ի կատարած բանից տ̃ն 'ի խորս խոնարհութեան ընկղմեալ յոբայ զանձն իւր՝ խոստովան եղև ուրախութ̃, թէ լուայ զմեծամեծս և զզարմանալիս, որոց ոչ էի խելամուտ. 'ի լուր ականջաց լսէի ասէ զքէն յառաջագոյն, բայց արդ և ակն իմ իսկ ետես զքեզ. վ̃յ խոտեցի զանձն, և հալեցայ. և համարիմ զանձն իմ հող և մոխիր։

Եւ զի մի՛ կարծեսցեն բարեկամքն յոբայ, թէ նա իբրև յանցաւոր անպիտանի դատաւ առաջի տ̃ն, յետ ա̃մ բանիցս այսոցիկ ասէ տ̃ր ցեղիփազ թեմնացի. մեղար դու և երկոքին բարեկամք քո. զի ոչ խօսեցայք առաջի իմ ճշմարիտ և ոչինչ իբրև զծառայ իմ յոբ, և 'ի զուր կշտամբեցիք զնա ո̃պ մեղաւոր պատուհասեալ. և ես 'ի պատիւ երեսաց նորա խնայեցի 'ի ձեզ. ապա թէ ոչ՝ կորուսանէի զձեզ։ Բայց արդ առէք զուարակս եօթն և խոյս եօթն, և երթայք առ ծառայ իմ յոբ. և արասցէ ողջակէզս վ̃ս ձեր, և աղօթեսցէ. զի քաւեսցից զմեղս ձեր։

Յայնմ ժամանակի ողջացոյց ա̃ծ զյոբ յա̃մ հարուածոց և 'ի ցաւոց, նորափետուր զարդարեալ. և երեքին բարեկամք ն̃ր արարին զա̃մ, ո̃պ հրամայեաց ն̃ց տ̃ր, և ելոյծ զմեղս նց վ՟ր յոբայ ։ Եւ տ՟ր աճեցոյց զյոբ , և ետ նմա կրկին՝ քան որչափ ինչ էր ն՟ր յառաջագոյն՝ ստացուած և մեծութ՟ի բազումյոյժ , և օրհնեաց զվերջինն ն՟ր քան զառաջինն ։ Եւ լուան ա՟մ մերձաւորք ն՟ր և ազգակիցք , և եկին առ նա հանդերձ ընծայիւք · և խընդակից եղեն նմա , և մխիթարեցին զնա · և զարմացան 'ի վ՟ր ա՟մի՝ զոր եած 'ի վ՟ր նորա տ՟ր ։ Եւ ծնան դարձեալ յոբայ ուստերք եօթն , և դստերք երեք · և ո՛չ գտան համեմատ դստերացն յոբայ ազնուագոյնք 'ի ներքոյ երկնից ։

Եւ եկաց արդարն յոբ յետ հարուածոցն ամս հարիւր և եօթանասուն · և զի յառաջագոյն կեցեալ էր ն՟ր ամս եօթանասուն և ութ՝ հանդերձ հարուածովքն , ա՟մ ամք կենաց ն՟ր եղեն երկերիւր քառասուն և ութ · և վախճանեցաւ երանելին յոբ ծերացեալ և լցեալ աւուրբք և արդեամբք ա՟ծահաճոյ վարուց և կատարեալ համբերութ՟ե իւրոյ , յառնել փառօք ը՟ այնոսիկ՝ զորս տ՟ր յարուցանէ յանմահ 'ի կեանս ։

Այլ յառաջ քան զմահ իւր գրեաց զա՟մ անցս՝ որ անցին ը՟ նա , 'ի յիշատակ սքանչելեացն ա՟յ ազգաց յազգս · ուր պատմական մասն՝ որ 'ի սկիզբն և 'ի վերջն , է արձակ շարադրութ՟ի յեբրայական բնագրի · իսկ խօսակցութ՟ին աստի և անտի , որպիսի է մեծ մասն մատենին , է ոտանաւոր ը՟ հին քերթողութ՟ե արևելեայց · և զի ոճ գրութ՟ենն է ո՛չ պարզ եբրայեցի , այլ ը՟ իմիք և ասորի , արաբացի և քաղդէացի, բազմադիմի կարծիք եղեն առ նախնիս և առ յետինս 'ի մեկնչաց, արդեօք զայսօրինա՞կ գրեցաւ սկզբնագիրն 'ի յոբայ կամ՝ 'ի բարեկամաց նր՟ և կմ՟ յեղիուսայ, կմ՟ 'ի մովսիսէ, եթէ յետոյ սողոմոն ըստիքսեաց, պս՟ ոտանաւոր յօրինեաց ըստ խառն բարբառոյ ժամանակին իւրոյ. զոր անմարթ է տիրապէս որոշել. Թո՛ղ զի և չափաբերութե՟ն եղանակ և հանգամանք արուե՛ստին է հին, որում ոչ ոք մինչև ցարդ ը՟ բաւականին եղև հասու ։

Որչափ է օգտակարութ՟ի ընթերցուա՛ծոյ գրոցն յոբայ, մինչև իրաւամբք գրի 'ի նախադրութիս նր՟ այսպէս ։ * Բազում մխիթարութ՟ի տայ համբերողաց գիրքս, զայրս վշտագնեալ 'ի մէջ բերեալ՝ որ զջանն ընկալաւ ը՟ քնի խորհրդոցն ... Գտանի սա ամենեցուն խրատ. Թագաւորաց, քահանայից, իշխանաց, ռամկաց, աղքատաց, մեծամեծաց, վիրաւորաց. որոց տայ բիւր օրինակս. և հաստատէ ը՟ ընչից, ը՟ որդւոյ, զորս 'ի դայթակղութիս անկանին. նա և որք 'ի դիւաց վշտագնին, զհանգիստ և զբժշկութ՟ի գտանեն յայսմ գրոյ. և որք սմս զգուշանան, մեծախոհութ՟ք տանին զրկանաց ‖ ։

Զամ՟ գովութ՟ի յոբայ բովանդակեալ տեսանեմք 'ի բանս յակոբոսի առաքելոյն, յասել անդ. * Զհամբերութ՟ի յոբայ լուարուք (պս՟ լուայք), և զկատարումն տն՟ տեսէք (պս՟ տեսիք) ‖ ։ Իսկ 'ի գիրս նր՟ վ՟պաց կոչի երանելին յոբ, նահապետ, մարգարէ, թագաւոր, քահանայ, նահապետ, և վկայ. * Օ՜ր թէպէտև ոչ կացուցաւ յատենի, և ոչ զձայն լուաւ դատաւորի, և ոչ դահիճ ետես, բայց սակայն զկարի ծանունս կրեաց քան զմարտիրոսս ||, ասէ ոսկեբերան. ('ի ճառն է՟. առ ժողովուրդ անտիոքայ)։ Բազում բանք են անստոյգ վ՟ս տեղւոյ գերեզմանին յոբայ, զոր յայլևայլ տեղիս դնեն մատենագիրք. յիշին և նշխարք նորա ուրեք ուրեք յարևմուտս (4)։ Կան և հիւանդանոցք և անկելանոցք հանդերձ եկեղեցեաւ յանուն յոբայ. որ և բարեխօս իսկ է ա՟մ հարուածելոց և նեղելոց յա՟մ ցաւոց հոգւոյ և մարմնոյ, և օրինակ համբերութեան ա՟մ առաքինեաց, արդար կարդացեալ՝ և հայելի արդարոց, վայելչապէս տօնեալ 'ի մեզ ը՟ն ս՟բյ կարապետին, որ գերագոյնն է արդարոց. ո՟ստ և եզեկիէլ մարգարէն թուէ զնա ը՟ն նոյի և ը՟ն դանիէլի. (եզեկ. ժդ ։)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Քանզի 'ի մայիս ամսեան նշանակեն յայսմաւուրք ա՟մ ազգաց հասարակօրէն զս՟բն յոբայ զյիշատակ, առ ի՞նչ արդեօք յայս միջոց օգոստոսի մօտ 'ի սեպտեմբեր կարգել իցէ 'ի տօնացուցի, չունիմք զայլ պատճառս տալ, բայց զի որովհետև օր փոխմանն ս՟բց հին օրինաց է անգիտելի, խորհրդով եդեալ է 'ի մեջ յոբ յայն աւուրս՝ յորս 'ի մի բերեալ են տօնք մարգարէից. և այն՝ յայտ է թէ ը՟ն ոմանց 'ի ճառընտրաց դիտելով և զկարգ իմն այբուբենի. զի եզեկիէլ և եզր 'ի միասին դնին, յորս յարի զաքարիա. և զկնի ը՟ն յով-

համնու յովբ․ Թո՛ղ և զայլ խորհուրդ տեսցեն այլք։ Զարմանալի ինչ դիպուած նշանակեն բոլլանդեանք, չասացից թէ ծաղրական, վս̄ խնդիր հանելոյ ումանց 'ի տգիտաց 'ի վր̄ տօնելի սր̄ գոլոյն յոբայ․ մինչև տարապարտ գլխացաւ տալ և հռովմայ գահին․ զոր 'ի խրատ զգուշութե̄ բանասիրաց նշանակեսցուք բանիւք նոցին իսկ բոլլանդեանց, որք 'ի յաւելուածս ը̄․ աւուր մայիսի․ Էրէ․․ 915․ գրեն այսպէս․ * Մեծապէս մեզ անկ ,, է յառաջ բերել զխնդիրն, որ յամի 1680, յորում ,, ժամանակի 'ի լոյս ընծայիւր մերս է̄ հատոր մայիսի ,, հանդերձ երկու այլ հատորովք, յուղեցաւ 'ի հռովմ, ,, և խիստ հակառակութիւնք եղեն 'ի մէջ բազմաց գիտնաւոր արանց, 'ի պատճառս առթին ծագելոյ յալբան (որ 'ի դաշտին հռովմայ)․ ուր հոգաբարձուք ,, անկելանոցին՝ որ յանուն սր̄ հոգւոյն, 'ի հիւրանոցի դեռառողջից՝ որ փոքր մի յառաջ էր շինեալ, ,, կազմեցին մատուռն հոյակապ, և 'ի խորանի անդ նր̄ ,, եդին զփառաւոր պատկեր երանելւոյն յոբայ։ Իսկ ,, փոխանորդն եպ̄սին խիղճ անձին համարեցաւ թոյլ ,, տալ բանալ զմատուռն, որպ̃ս թէ յերկբայս անկեալ՝ ,, եթէ օրէն իցէ արդեօք զյոբ այնպէս հանդիսապէս ,, իբրև ս̄բ պաշտել։

,, Եւ 'ի լինել զանազան դատմանց դէմ ը̄դդէմ՝ զայրացաւ վէճն, մինչև հասուցին զխնդիրն յատեան սրբազան ժողովոյն՝ որ 'ի վր̄ ծիսից։ Յովհաննէս հրիկկիոս հայր վարժապետ՝ սերտ բարեկամն մեր՝ խորհրդական այնր ժողովոյ, հանդերձ այլովք ումամբք ,, մեծանուն արամբք եցոյց զանձն 'ի բացասական կողմն ,, հակամիտել․ բայց սակայն յարեան և այլ ոչ նուազ ,, գիտնական անձինք, որք զխնդիրն ըստ առածի 'ի ,, ձուոյ սկսեալ՝ սկիզբն արարին քննութե̄, որպ̃ս թէ ,, ոչ 'ի վր̄ յոբայ ևեթ, այլև 'ի վր̄ ամ̄ սր̄ց հնոյ կտակի։ Եւ յայն աստիճան հասուցին զբանն, մինչ զի ,, երկուստեք վիճաբանութ̄ց հաւաքումն՝ զոր հաւաքեաց առաջարկուն իւրացս՝ պատուական պրոսպեր ,, բոտտինոս արքեպ̃ս միւռայ, տպագրութե̄ արժանի ,, դատեալ եղև յառաքելական սենեկէ։ Եւ մեզ իսկ ,, 'ի դէպ երևեցաւ զտեղեկութ̄ն իրացդ արձանագրել ,, 'ի կարգի գործոյս 'ի յիշատակ ապագայից՝ իբրև ցուցակ խոհեմութե̄ և ծանրութե̄ հռովմայ յայսպիսի ,, իրս․ որ զխնդիրս առաջարկեալս ինքեան, թէպէտև ,, այլուստ կարի դուզնաքեայ ինչ մարթասցին համա-

,, րել և իւր անտարակուսելի, ա̅մ սարօք և հանգամանօք
,, մանր կրկտէ և կշռէ, յորժամ դէմ առ դէմ
,, դատախազութե̅ վիճման խուզարկէ : Այլ այսմ միշտ
,, և յա̅մ առիթս լինել, ևս և յորժամ ոչ ոք պնդագոյն
,, դիմակաց գտանի, վայրապար գործ է չարաչար
,, յանդգնութե̅ ոմանց, այնչափ՝ որչափ ստոյգ է, թէ
,, յիրս սրբազանս, եթէ հանդիսականք լիցեն՝ և եթէ
,, առանձնականք, բազում ինչ իրաց լինի տանել, զի
,, մի աւելի ինչ ասացից՝ անստուգից և երկբայականաց,
,, և երբեմն այնպիսի իրաց՝ որք հաւանականաբար
,, պէտս ունին ուղղութե̅, երբ ո̅չ բաւականին ը̅
,, վիճաբանական քննութե̅ արկեալ լինիցին ||.

Այլ այս եղանակ մանուածոյ և պաշ'ըպատ խօսից բոլլանդեան առն բաբէպրոքայ կմ̅ հենսքենեայ՝ անցոյց զանցոյց զխոհեմութե̅ և զծանրութե̅ հռովմայ. և ո̅պ ինձ թուէր՝ եթէ երանելին յոբ կամէր յանդիմանել զայսպիսի բանախնդիրս, զայն երկրորդէր՝ զոր առ բարեկամին ասաց. բժիշկք մեղանչականք, և մխիթարիչք չարեաց : Զի թէ ոգեւք ոմանք վէճ յարուցին, և ըզգիտնաւորս աշխատ արարին, ոչինչ են զարմանք. զի յայտնի է ռամկական առակն, թէ զմի քար արկեալ 'ի տխմարէ ումեմնէ 'ի խորափիտ՝ հարիւրաւոր իմաստունք դժուարին 'ի վեր հանել. բայց իմաստնոց ընդ իմաստունս այլ է դաշնաւորութի̅. գիտել զհին և զնոր, և ընտրուե̅ առնել ը̅ ը̅հանուր և ը̅ մասնաւոր կարծիս :

Արդ պա՛րտ էր իմաստուն գրչացս դնել եզրակացուե̅, թէ զո՛րս վաղեմիս յառաջելոց գովեալս չունի ոք իշխանուե̅ ը̅ քննուե̅ արկանել. ո̅պ և ո՛չ նոր կտակարանն լուծանէ զհին օրէնս, այլ՝ լնու. ապա թէ ոչ՝ 'ի խախտել սեանց և տունն քայքայի. և որ զսիւնս հին և նոր եկեղեցւոյ բախել կամի, թէպէտև ինչ ոչ կարէ սասանել ա̅ծեղէն անխախտելի շինուածոյ. բայց յայտ առնէ զտխմարուե̅ իւր. զի յիմար է՝ որ ը̅ վեհս քան զինքն հակառակի, ասաց որ ասացն : Այսոքիկ այսքան, զի մի աւելի ինչ ասացից. չա՛տ է յիշել զառածն, թէ գոյ քուն և իմաստնոց :

(2) Ադրիքոմ քրիստիանոս 'ի թեատրոնի սր̅ երկրին. գւ. 95. գրէ այսպէս. * Երկիրն հուս է գաւառ, որ
, եբրայական ձայնիւ հուս կմ̅ հուզ, ուս կմ̅ ուզ ասի,
, և յեօթանասնից յունարէն կոչի աւսիտ, ո̅պ թէ
, ուսիտ կմ̅ հուսիտ. և կայ յայնկոյս յորդանանու 'ի
, տրաքոնացւոց ծ̅ին՝ ը̅ մէջ պաղեստինու և կէլէսուրայ :

‚ րայ ։ Ըստ յովսեպոսի և հերոնիմոսի շինեալ է, և ա-
‚ նուն առեալ 'ի հուսայ յորդւոյ արամայ որդւոյ սե-
‚ մայ որդւոյ նոյի ։ որ և տրաքոնիտոյ և դամասկոսի
‚ եղև հիմնադիր ։ և 'ի գաւառի անդ զառաջինն կա-
‚ լաւ զբնակութիւն և զիշխանութիւն ։ Ընդ յետ ժամա-
‚ նակաց՝ ըստ պատմելոյ սբ գրոց նաև երանելի մարգա-
‚ րէն յոբ բնակեաց և իշխեաց ։ և բրգաշէն գերեզմանն
‚ նորա մօտ 'ի սուետ մինչև ցարդ ցուցեալ լինի ॥ ։
Որ և է (ասէ 'ի գլ. 78) 'ի տափարակ վայրի յարևե-
լից սուետայ քաղաքի՝ պատուեալ 'ի յունաց և յայլոց
ազգաց ։ Եւ ուր գրէ 'ի գլ. 92. * սուէտա կամ սուէի-
„ տա, որ և սուիտ, սուհի և սուքի կոչի, է քաղաք
„ երևելի 'ի հուս գաւառի . . . ուստի էառ զծագումն
„ և զանուն բաղդատ սուեցի կամ սուքեցի ॥ ։ Զայսոսիկ
փոքր 'ի շատէ նշանակեալ և կալմեթի՝ ասէ, թէ * 'ի
„ զանազան տեղիս պատուեալ լինէր գերեզման առն
„ սբյ ։ այլ առաւել հռչակաւորն էր 'ի տրաքոնացւոց
„ ծի յայնկոյս յորդանանու առ ակունս գետոյն ॥ ։
Եւ 'ի վր բերէ, թէ յոբն այն՝ զոր յովսէփ մեկնաբան
քաղդէական ասէ լինել յազգէն հայոց, ուր և ճանապար-
հորդք յիշեն զշիրիմ նր, կարծի լինել ոմն յերևելի զօ-
րավարացն այլազգեաց ։ որպս և այլ ոմն մեկնիչ քաղ-
դէական համարեցաւ զյոբ լինել բիւզանդացի ։ զի 'ի
կոստանդինուպօլիս կայ շիրիմ յանուն յոբայ, այն է
էյուպ ։ բայց այն է արաբացի ոմն սպանեալ 'ի պաշար-
ման կոստանդինուպօլսոյ յամի 672 ։ և առ պարսպօք
քաղաքին թաղեալ ։ Թող և զայլս՝ որք պէսպէս խօսին
'ի վր անստոյգ իրացս,

(3) Եօթն ամ դնեն վասն հարուածոց յոբայ ոչ միայն
յայսմաւուրք հայոց, և նախադրութիւն գրոց նր, այլև
ոսկեբերան, ողոմպիոդորոս, իսիդորոս, չուէխտաս,
տոռնիէլ, գենեբրարդոս, սաղիանոս և՛ն ։ Թող զայլս՝
որք տասն ասեն ։ և կամ ըստ ոմանց 'ի րաբունեաց հրէ-
ից՝ ամ մի ։ Եւ էր յայնժամ յոբ ըստ հասարակ ընթերց-
ուածոյ եօթանասնից և իմացուածոյ հարց՝ 'ի հասակի
հտ, կամ հշ ամաց ։ այլք ըստ կամի յիսնամեայ կամեցան
դնել ։ և այլք այլազգ ։ Թող զի և զժմկն յոբայ աստ
անդ տարուբերեն՝ որք միանգամ դեգերին արտաքոյ
օրինակաց եօթանասնից ։ զի յեբրայականն պակասի
հատուածն ազգաբանութեան նր 'ի սերնդոցն եսաւայ ։
այլ զայցանէ մեկնիչք ։

(4) Յերկար գրէ աստանօր հենսքենիոս բոլլանդեան

վ̄ն աւանդութ̄ե բնակչաց տիկկինոն քաղաքի իտալացւոց, այն է բավիա 'ի լոմպարտիա, թէ յաւուրց անտի թ̄գրաց լոնգոբարտացւոց կային անդ նշխարք ս̄բյն յոբայ 'ի մատուան ս̄բյն ռափայէլի հրեշտակապետին՝ զոյգ ը̄ նշխարաց ս̄բյն տոբիթայ և տոբիայ բերեալք 'ի հռովմայ. զորս յետոյ գողացեալ լիցեն ոմանք, և խռովութ̄ի մեծ լեալ 'ի բավիա ։ Այնպէս խօսի և վ̄ն այլևայլ եկեղեցեաց՝ որ յանուն ս̄բյն յոբայ 'ի վենետիկ, յանտուէրպիա, 'ի լովանիա, ևն. և հիւանդանոցաց շինելոց ը̄ հովանաւորութ̄բ նորին յոբայ 'ի բազում տեղիս. և յաւելու ասել. * գրեթէ արտաքոյ
,, ամ̄ դրաց քաղաքացն բեղգացւոց, և բազում այն է՝
,, զի և 'ի ներքս 'ի պարսպի՝ կայ մատուռն ինչ կամ
,, խորան նուիրեալ 'ի պատիւ ն̄ր ||: Յիշի 'ի պատմութիս և վանք ս̄բյն յոբայ երբեմն 'ի կոստանդինուպօլիս հանդերձ եկեղեցեաւ յանուն ն̄ր՝ մինչև ցեօթներորդդար. ուր և անկելանոց յանուանք մօտ յեկեղեցի ս̄բյն յոբայ ։

ՏՕ՛Ն ՛ՆԻԿԻՈՅ

Սբ̅ Ժողովոյն՝
յՅԸ. հայրապետաց ։

Լ. Մայիս . 27 . կ̅մ 28 . և Յուլիս . 7 ։ Յ. Մայիս . 29 ։ Սիւնհոդ . հատ . Է̅ ։ Սբ̅ն Աթանաս . և այլ ո̅մ եկեղեցական մատենագիրք և պատմագիրք ամենայն ազգաց ։

ԱՌԱՋԻ՛Ն ՏԻԵԶԵրական ժողով սբ̅ հայրապետաց 'ի քակտումն մոլորութե̅ց և 'ի հաստատութի̅ ուղղափառ դաւանութե̅ կաթողիկէ եկեղեցւոյ, եղև 'ի Նիկիա . որոյ և անունն զյաղթութե̅ տայ աւետիս . ուր ճշմարտեցաւ ստուերական օրինակն յաղթութե̅ հօրն հաւատոց աբրահամու . զի որ̅ մեծ նահապետն երեքհարիւր ութևտասն արամբք տան իւրոյ եհար վանեաց զօտարս, նոյնպէս և որդին ա̅յ յս̅ քս̅՝ որ 'ի զաւակէն աբրահամու ը̅ մարմնոյ, 'ի ձեռն զուգաթիւ հարց նիկիոյ՝ գումարելոց յանուն իւր՝ 'ի գլուխ տարաւ զկատարեալ յաղթութի̅ ը̅դէմ օտարացելոցն 'ի ճշմարտութէ̅, յամի մարդեղութե̅ 325 . որ և է ը̅ յունաց հաշուի, 318 ։ Իսկ արդարև մեծ

էր պատերազմն, զոր միայն ո̃չ էր յաղթահարել․ և ը̃դէմ բանին ո̃չ էր թշնամութ̃ի չարին․ վ̃ս և նմա անկ էր խնդրել զվրէժ
չարութ̃ե թշնամւոյն :

Բանիւ գլխաւոր պատճառ գումարման մեծի սինհոդոսին էր վանումն աղանդոյն Արիոսի, որ էր երէց եկեղեցւոյն աղէքսանդրիոյ եգիպտացւոց, այր չարարու̂եստ, աղու̂խսաբանոյ, սոփեստէս իմաստակ, փառամոլ և յանձնապաստան : Սա զառաջինն՝ մինչև էր քահանայացեալ, յարեցաւ 'ի Մելիտիոս ուրացող եպ̃կսն լիկոպօլսոյ (որ Թարգմանի գայլ քաղաք), և նովաւ հանդերձ որոշեցաւ յեկեղեցւոյ 'ի ձեռն սբ̃յն պետրոսի հայրապետին աղէքսանդրացւոց․ և ապա կեղծաւորեալ զդարձ՝ ընդունելի եղև 'ի հաղորդութ̃ի եկեղեցւոյ․ և միւսանգամ 'ի փոխածն դարձեալ՝ վերստին հատաւ 'ի հաղորդութ̃է : Սո̃յ մօտ 'ի վերջին աւուրս կատարման սբ̃յն պետրոսի՝ յորժամ 'ի բանտի էր նա վ̃ս վկայութ̃ե հաւատոյ, հնարէր արիոս միջնորդ ունել առ նա զերիցունս հայրապետանոցին և զիշխանաւորս՝ զի արձակեսցէ զինքն 'ի կապանաց ո̃չ զղջացեալ․ բայց չէառ յանձն սբ̃ հայրապետն․ զի ետես 'ի նմին գիշերի զք̃ս իբրև մանուկ պատառեալ պատմուճանաւ, և լուաւ 'ի ն̃նէ ասել, թէ արիոս պատառեաց զիս․ և այս մինչև էր 'ի վեր երևեալ աղանդն արիոսի․ զի կամեցաւ ա̃ծ կանխաւ զգուշացուցանել զամենեսին 'ի չար հերձուածոյն, զոր երկնէր

անօ

անօրէնն. ոպ̃ և յետ աւուրց՝ նաև սբ̃յն անտոնի մեծի աբբայի ցուցաւ ՚ի տեսլեան օրինակ չարեացն արիանոսաց. զի ջորիք մտեալ յեկեղեցի՝ աքացէին զսբ̃ սեղանն։

Արդ իբրև յետ նահատակելոյ սբ̃յն պետրոսի նստաւ աքսիլաս յաթոռ պատրիարգութե̃ աղեքսանդրու, աղուէսն արիոս զեղջ յանձին երևեցուցեալ՝ եմուտ յեկեղեցի, և ձեռնադրեալ իսկ ՚ի սարկաւագութի̃ և ՚ի քահանայութի̃՝ թեկն ածէր պատրիարգութե̃։

Իսկ զի ոչ յաջողեցին իրքն ը̃ կամս նր̃, զի յետ աքսիլայ նստաւ երանելին աղեքսանդրոս, զչարեցաւ ը̃դէմ նորա. և ոչ ինչ գտեալ պատճառս յանստգիւտ վարս սբ̃յ հայրապետին՝ սկսաւ հակառակ կալ ուղղամիտ վ̃դպութե̃ նր̃ նորաձև և անլուր հայհոյութբ̃. քանզի ՚ի խօսել հայրապետին ՚ի քարոզս իւր յաղագս անճառ ծ̃նուէ բանին, ըմբոստացաւ ժանտն արիոս, և սկսաւ սերմանել ՚ի լսելիս բազմաց մոլորութի̃ աղանդին, ասելով զքս̃ ոչ գոլ ած̃ ճշմարիտ, այլ արարած գերագոյն և անդրանիկ ա̃մ արարածոց. էր ասէ երբեմն, յորժամ ոչ էր, և եղև յոչ գոյից. ո՛չ ՚ի յաւիտենից ծնեալ ՚ի հօրն էութե̃, այլ ՚ի ժամանակի եղեալ. որով հիմն ՚ի վեր տապալել կամէր զհաւատս ճշմարտութե̃ քրիստոնէից՝ հրէական և հեթանոսական բարբանջմամբ. վ̃յ և ուսուցանէր չասել զօրհնութի̃ միանական սբ̃ երրորդութե̃, փառք հօր և որդւոյ և հոգւոյն սբ̃յ, այլ՝ փառք հօր որդւով ՚ի ձեռն հոգւոյն սբ̃յ. զի բարձցի համագոյուն , և մուծցի երիցութն և կրտսերութն յածայինս ։

Ամփոփեք և այլ ևս ամպարիշտ ասացուածովք 'ի սակաւ աւուրս որսացաւ 'ի հաղբս սատանայի զբազումս 'ի պարզամտաց յարանց և 'ի կանանց , յաշխարհականաց և յեկեղեցականաց · յորս անուանիք էին եօթն երիցունք , երկոտասան սարկաւագունք , և եօթանասուն կուսանք · թող զի զևս բազումս յաշխարհասիրաց ձգեալ էր զհետ իւր սնոտի խաբէութբ 'ի ձեռն ճարտար և դիւական քերթածաց , զոր յօրինեաց 'ի պէտս խնջոյից և աշխարհական պարուց կաքաւչաց ։

Բազմօք խրատեալ խրատեաց զարիոս քաղցրութբ և սաստիւք հայրապետն աղեքսանդրոս , այլ ոչինչ օգտեաց · զի նա օր քան զօր գայլաբար յարձակեալ 'ի հօտն քսի' յափշտակէր և զընտիրս 'ի գառանց , ևս և 'ի հովուաց , զմերձաւորս և զհեռաւորս · մինչև որսալ և զքանի մի եպսունս երևելի աթոռոց · յորս գլխաւոր եղև եւսեբիոս եպս նիկոմիդացւոց' դրօշակիր և զինակիր սպառազինութե չարին' իւրովք գործակցօք ։

Իբրև ետես աղեքսանդրոս հայրապետ զզօրանալ ամպարշտութե արիոսի , արար ժողով յաղեքսանդրիա հարիւր եպսաց վիճակին իւրոյ' որ յեգիպտոս և 'ի լիբիա , և նզովեաց զարիոս և զհետևողս նորա , որք արիանոսք կոչեցան · և գրեաց շրջաբերական նամակս առ ամ եկեղեցիս վասն բանիցս այսոցիկ ։

Յայնժամ արիոս վտարանդի յածեալ էր պա-

ղես

ղեստին մինչև յասիա , ծանր ծանր վնասուք չարախօս լինէր զաղեքսանդրոսէ , և խորամանկ բանիւք ծաւալէր ը̃ ա̃մ տեղիս զթոյնս դառնութե̃ իւրոյ · յորոյ 'ի բանս եղեալ եւսեբի նիկոմիդացւոյ` արար և ինքն ժողովակ 'ի համախոհ եպ̃սաց 'ի բիւթանիա , և արդարացոյց և ընկալաւ յեկեղեցի զպիղծն արիոս :

Զայն լուեալ աղեքսանդրի հայրապետին աղեքսանդրու` գրեաց առ բարեպաշտ ինքնակալն , որ նա ինքն էր առաջին հաւատացեալ կայսրն և ա̃ծասէր թագաւորն կոստանդիանոս , փոյթ տանել վ̃ս չնջուցանելոյ զհրդեհն ամպարշտութե̃ արիոսի · և կայսրն առաքեաց յեգիպտոս զօսիոս եպ̃սն կորդուբայ` որ յաշխ̃էն սպանիոյ` զայր զգօն , հնարել ըստ կարի խաղաղութե̃ և լռութե̃ վճարել զիրսն · քանզի երկիւղած էր յոյժ ինքնակալն , և զգուշանայր` զի մի̃ լինիցի աղմուկ և երկպառակութի̃ 'ի մէջ եպ̃սաց և քահանայից ա̃յ · բայց ժանտ աղանդն ևս քան զևս աճէր զայրացեալ , և ճարակէր յեկեղեցի ա̃յ :

'Ի վ̃ր կայր միւս ևս պատճառ խռովութե̃ , զի մելիտիոսն այն ուրացօղ եպ̃ս յետ մերժելոյն 'ի ս̃բյն պետրոսէ աղեքսանդրացւոյ ինքնագլուխ շրջէր և ձեռնադրէր զսարկաւագունս , զերիցունս և զեպ̃սունս · որով բազմանային անգլուխ անձինք և ինքնատէր հովիւք` մանաւանդ թէ գայլք ապականիչք : Կայր և այլ երրորդ առիթ երկպառակութե̃

'ի

'ի մէջ եկեղեցեաց ասիացւոց եւ արեւմտեայց վ͞ս տօնի պասեքին • քանզի ասիացիք զզատիկն կատարէին 'ի չորեքտասանն լուսնի՝ յոր օր եւ հանդիպէր՝ ը͞ս պասքային հրէից • իսկ արեւմտեայք եւ այլ եկեղեցիք զգուշացեալ 'ի տօնելոյ ը͞ս հրէայս՝ կատարէին զզատիկն յաւուր կիրակէի յարութե͞ն տ͞ն , զկնի աւագ լրման լուսնի գարնանային հ͞ւրկածի • զի Թէպէտեւ բազումք բազում անգամ յորդորեցին զասիացիս միաբանել 'ի սոյն առաքելական աւանդութի͞ , բայց չեղեւ հնար • զի եւ նո͞ք պնդէին , թէ յառաքելոց հետէ այսպէս ուսաք :

Արդ բարեպաշտն կոստանդիանոս՝ որ նեղեալ էր յերեսաց այսպիսի երկպառակութե͞ց , կամեցեալ ա͞մի միանգամայն դարման մատուցանել՝ եւս առաւել մեծի հերձուածոյն արիոսի , գրեաց արքունի հրովարտակ խորհրդով եւ ձեռնարկութե͞բ ս͞րբյն սեղբեստրոսի պապին հռովմայ ընդ ա͞մ տիեզերս , զի յա͞մ տ͞ղաց ժողովեսցին հովիւք եկեղեցւոյն ք͞ի 'ի Նիկիա քաղաք բիւթանացւոց առ սակաւն ըձիւ , պատրաստեալ զա͞մ ծախս եւ զհանդերձանս ճանապարհի՝ կառօք եւ նաւուք , ը͞ս ծով եւ ը͞ս ցամաք :

Յղեաց ինքնակալն հրաւէր առանձին եւ առ մտերիմն իւր ք͞նասէր արքայ հայոց տրդատէս , զի առեալ ածիցէ ը͞ս իւր զս͞ք խոստովանողն ք͞ի զմեծն գրիգոր լուսաւորիչ հայաստանեայց : Բայց քանզի չէր մարթ 'ի ժամանակին թողուլ տրդատայ զտ͞ղ իւր՝ առկասկածանաց պարսից , և ս՟բն գրիգոր ոչ կամեցաւ երթալ , զի մի՛ փառաւորեսցի ՚ի ժողովոյն , փոխան իւրեանց առաքեցին զս՟բն արիստակէս՝ որ ձեռնադրեալ էր ՚ի հօրէն իւրմէ եպս վ՟ն գործակցութե տնտեսութե : Եւ եղեն ուղեկից ս՟բյն արիստակեայ՝ ս՟բ յակոբ մըծբնայ հայրապետ , և յովհան պարսից եպս . որք իբրև հասին ՚ի կեսարիա , զի ուղեկցութք ս՟բյն ղևոնդեայ երթիցեն ՚ի ժողովն , տեսօղ եղեն հանդիսի մկրտութե գրիգորիոսի հօրն գրիգորի ա՟ծաբանի , և իջման հոգւոյն ս՟բյ ՚ի վ՟ր ն՟ր . և ապա միաբան յուղի անկան և եկին ՚ի նիկիա . ուր ժողովեցան և այլ բազմութիւնք յոյժ . այս է՝ եպսունք և արքեպսունք թուով ընդ ա՟մ երեքհարիւր ութ և տասն . թող զանհամար երիցունս և զսարկաւագունս զգործակիցս ս՟բ հայրապետաց . և այս ե՟ղ ասացելոցս՝ յամի տ՟ն 325 . յաւուրս գարնայնոյ զկնի զատկին :

Եւ էին գլխաւորք ժողովոյն՝ վիկտոր և վինկենտիոս (կ՟մ բեկտոր և բեկենտի) երիցունք ե՟ ովսիոսի եպսին կորդուբայ՝ փոխանորդք ս՟բյն սեղբեստրոսի հռովմայ հայրապետի . և յետ ն՟ց երեքին պատրիարգունք ժամանակին . ա՟յ Առ՝ ս՟բն աղեքսանդր՝ աղեքսանդրու հայրապետ , առաջին դիմակալ պղծոյն արիոսի , ունելով աջակից ըզսարկաւագ իւր զաթանաս ախոյեանն ուղղափառութե : Երկրորդ՝ ս՟բն եւստաթէոս անտիոքայ հայրապետ , այր նշանաւոր սրբութք և իմաստութք , փող պատերազմական կոչեցեն՝ քաղջահնչօղ ը՟դէմ թշնամեաց հաւատոյ ։ Երրորդ՝ տ՟րն մակար՝ ե՟է մի հայրապետ , յորոյ անուանեն անգամ սարսէր այլոս , և գանգատէր զնմանէ առ իւրսն իբրև զգլխաւոր ոսոխն իւրմէ ։

Յետ ո՟րց և այլ ևս ականաւոր աթոռակալք երևելի աթոռոց ․ յորս ոչ սակաւք էին արք սքանչելիք և սքանչելագործք ․ ո՟պ տ՟րն պօտամոն հերակլացի՝ խոստովանօղ եպ՟ս , որոյ մի ակն բրեալ էր վ՟ս վկայու՟ե յ՟սի ք՟սի ․ տ՟րն պափնուտիոս՝ խոստովանօղ եպ՟ս վերին թեբայիդոյ , առաքելագործ նշանօք երևելի ․ և սորա ևս մի ակն էր բրեալ , և կարթ ձախոյ ծնգանն խորտակեալ վ՟ս խոստովանութ՟ե հաւատոյ ․ տ՟րն պօղոս խոստովանօղ եպ՟ս նէոկեսարիոյ , որոյ ձեռն խանձոյեալ էր շանթացեն երկաթով ․ տ՟րն սպիրիդիոն եպ՟ս տրիմիթունտայ կիպրացւոց՝ հրաշալի սրբութ՟բ և նշանագործու՟բ , պարծանք կորկիւրայ (յ՟մ քեօրֆեզ կղզւոյն) ։ Տ՟րն յակոբ մծբնայ հայրապետ՝ զգօնն կոչեցեալ , առաքելանման այր՝ սքանչելագործ և յարուցիչ մեռելոց ․ և տ՟րն եփրեմ խուրի ասորի՝ սարկաւագ նորա ը՟դ նմա ։ Տ՟րն նիկողայոս եպ՟ս միւռայ՝ որ և զմիւռնայ հայրապետ ասի , երևելին ՚ի սքանչելագործ տ՟րս , և փառաւորեն յամենեցուն ։ Տ՟րն ղևոնդիոս արքեպիսկոպոս կեսարու կապադովկացւոց՝ մարգարէական հոգւով լի ։ Տ՟րն արիստակէս եպ՟ս հայոց մեծաց՝ տեղակալ հօր իւրոյ տ՟ռն գրիգորի լուսաւորչի ․ որ եթէ անձամբ էր եկաւորել՝ խոստովանողական արդեամբք և նշանագործ սրբութ՟՝ յոգունց գերազանց հանդիսանայր · այլ որք զորդին տեսին համանման, նովին և զհօրն կարօտ առին փոքր ՚ի շատէ ։ Դարձեալ ս՟բն հիւպատիոս գանգրայցի՝ կենդանի նահատակութ՟ և գործովք երևելի · ս՟բն ամփիոն մեծանուն խոստովանող · և այլ ևս արք անուանիք ։

Նա եղև ՚ի գումարիլ սոցա զառաջինն ըստ արքունի ժամադրութե՟ յամսեանն յունիսի՝ յերեքտասաներորդ աւուր կաղանդացն յուլիսի, առաջիկայ եղև անձամբ և ք՟սապսակ կայսրն կոստանդիանոս, որ ամ՟ մեծարանօք և խոնարհութ՟ մատուցեալ առ մի մի ՚ի ս՟բց հայրապետաց՝ ողջունէր սիրողապէս, և ջերմեռանդն փափաքմամբ համբուրէր զսպիս վիրաց ս՟բ խոստովանողացն, և դիրկս արկանէր առաքելանման հարանց՝ հայցելով զօրհնութի՟ ն՟ց ։ Նա յետ բազմեցուցանելոյ զհայրապետս և զեպիսկոպոսունս իւրաքանչիւր ը՟ կարգի և ը՟ աստիճանի յընդարձակ ժողովարանի ս՟բյ տաճարին, ը՟ հարկեցուցանելոյ ն՟ց յանձն առ և ինքն թագաւորն նստել ՚ի մէջ ն՟ց, այլ ՚ի վայր քան զեպիսկոպոսունս յառանձին գահոյս իւր արքայավայել ։

Յայնժամ երանելին եւստաթէոս անտիոքայ հայրապետ ՚ի դիմաց համօրէն ժողովոյն խօսեցաւ բանս գովութե՟ ՚ի պատիւ ք՟սասէր ինքնակալին ՚ի յոյժ բարբառ, գովելով զբարեպաշտութի՟ ն՟ր և զփոյթ խնամոց վ՟ն եկեղեցւոյն ա՟յ ։ Ապա և ինքն կոստանդիանոս կայսր վայելչական ցածութե̃ և երկիւղածութե̃ խօսեցաւ 'ի բարբառ հռովմայեցի առ ս̃բ ժողովն յորդորական բանս, խրախուսելով զհովիւս եկեղեցւոյ 'ի յայտնաբանել համարձակ և 'ի հաստատել զճշմարիտ հաւատս ը̃դդէմ մոլար վարդապետութե̃ց, և 'ի բառնալ զերկպառակութի̃ և զգայթակղութի̃ յեկեղեցւոյն ա̃յ ։ Ընդ ետես ս̃բ հայրապետն մծբնայ յակոբ, զի հրեշտակք անմարմինք սպասաւորէին կայսերն իբրև զմարմնաւոր ծառայս. ետես և թագաւորն զհրանիւթ զօրութիւնս, որք սպասաւորէին ս̃բ հայրապետին յակոբայ. և երկոքին յայտնեցին զտեսիլն իւրեանց սիւնհոդոսին ։

Մինչ չև էր հարց ժողովոյն ձեռն արկեալ 'ի խնդիր հաւատոյ, ոմանք յեպ̃սաց՝ որք ունէին վէճս ընդ միմեանս վ̃ս առանձնական զրկանաց և պէսպէս դիպուածոց, մատուցին առ ինքնակալն գիր բողոքանաց և ամբաստանութե̃ց. իսկ ա̃ծասէր թագաւորն անդէն և անդ հրաման ետ 'ի հուր արկանել զայն թուղթս և այրել. և ցեպ̃սունսն ասէ բանիւ արքային դաւթի. Ա̃ծ եկաց 'ի ժողովս աստուծոց, և 'ի միջի ն̃ց դատէր զն̃ս. և արդ՝ դուք ո՛ հարք ս̃բք՝ ա̃ծք ուրեմն էք տուեալ մեզ յա̃յ. և չէ՛ մարթ մարդոյ դատել զա̃ծս ։ Այլ ես եթէ տեսանէի իսկ զեպ̃ս շնացեալ, ծածկէի զմեղս ն̃ր՝ արքունի ծիրանեաւս վերարկելով. հապա թողէք անդր 'ի բաց զառանձնական բաներդ, և փոյթ յանձինս կալարուք միաբանութ՟ն վանել զթշնամիս հաւատոյ ։ Եւ զայսպիսի իմաստուն ասացուածս մեծին կոստանդիանոսի միաբերան գովեցին ամ՟ բազմու՟ն գլխաւոր հարց ս՟րբ ժողովոյն ։

Այն ինչ հրաման եղև զարիոսին դատ քննութե՟ ՚ի մէջ առնուլ, յառաջ մատեան ՚ի կողմանէ արիոսի վարձկանք նր՟ և թևակիցք՝ հեթանոս փիլիսոփայք. որք կէս մի ՚ի թելադրութ՟է արիոսի, և կէս մի յընդվայրաքննին և ՚ի հակառակասէր բարուց եկել էին ՚ի տեղի անդր ժողովոյ՝ վիճել ը՟ առաջնորդս քրիստոնէից տրամաբանական ձեռնարկութ՟ք, կարծելով ՚ի նեղ արկանել զս՟բ հարս արիստոտէլեան նրբութ՟բ. և կայսրն ոչինչ արգել զն՟ս, զի մի կարծեսցի՝ թէ չկարեն քրիստոնեայք տալ պ՟խնի առարկուածոյ նց ։ Ապա յառաջի առնել նց դիմադրութ՟ս պէսպէս ը՟դէմ հաւատոյն ճշմարտութե՟, և առաւել հակառակ ամենասր՟բ խորհրդոյ երրորդութե՟, և ա՟ծութե՟ ք՟ի՝ ՚ի բերանոյ ժանտոյն արիոսի, որ ՚ի միջի նց կայր, և ձայնակից լինէր փիլիսոփայից, բան առ բան ետուն նց պ՟խնի երևելիքն ՚ի հարս՝ ՚ի դիմաց համօրէն ժողովոյն. և նախ եւստաթէոս անտիոքացի. ապա ոսիոս կորդուբացի. Ճոխագոյն ևս ս՟բն ղևոնդիոս կեսարացի, և երանելին եւփսիքիոս տիանացի. և ևս յերկարագոյն եւսեբի պամփիլեայն կեսարացի, այս է ՚ի կեսարիոյ պաղեստինոյ՝ որ և պատմաբանն. զի սա թէպէտև առ փոքր մի գործակից էր երևեալ արիանոսաց , այլ 'ի ժողովին անդ քաջ հանդիսացաւ 'ի պաշտպանութի ճշմարտութե ընդդէմ իմաստասիրաց. զի և ինքն էր կատարեալ իմաստասէր . Թող զի ըստ վկայելոյ նորին աթանասի 'ի թուղթն առ ափրիկեցիս՝ սա ինքն եւսեբիոս 'ի նամակն գրեալ 'ի վիճակ իւր՝ գովեաց զնիկիական ձայնս համագոյակից իբրև աւանդ նախնեաց : Ո՛չ սակաւ խօսեցաւ ընդդէմ փիլիսոփայից և նորին մակարիոս եգիպտացի , որպէս և

պռոտեգենէս սարդիկեցի :

Յորոց 'ի բանիցն պատկառեցան իմաստասէրքն . և ոմանք լսօղ եղեալ ճշմարտութե՝ 'ի բաց կացին յարիոսէ , նզովս արձակելով զկնի նր : Բայց մի ոմն յիմաստասիրաց անտի կարի յանդգնագոյն քան զայլս՝ պէսպէս պատուհասութեբ պատիր բանից ոպ օձ սողեալ սպրդէր 'ի ձեռաց եպսաց , և պնդագոյնս ձեռնարկէր 'ի հարցմունս և 'ի պատասխանիս : Յայնժամ ծերունի ոմն 'ի կարգէ նր խոստովանողաց (ըստ ոմանց սրբն սպիրիդոն կարծեցեալ) , որ ոչ այլ ինչ գիտէր , բայց միայն զյս քս , և զնոյն 'ի խաչ ելեալ , հրաման առեալ 'ի հայրապետաց՝ բարբառեցաւ առ հակառակորդն ճշմարտութե , և ասէ . քեզ ասեմ յանուն յսի քսի՝ ով փիլիսոփոս , ունկնդիր լեր ճշմարտութե : Յայն բան կարկեցաւ այրն , և ափ 'ի բերան եղեւ՝ ոչինչ այլ այնուհետև կարօղ եղև դիմախօսել . բայց միայն՝ զոր ինչ ծերունին ասէր , նա երկրորդէր , հաւատամ , հաւատամ : Նւ ս̃բ ծերն ասէ ցնա . եթէ հաւատաս զայս այսպէս , արի՛ եկ զկնի իմ , և ընկա՛լ զկնիք ս̃բ հաւատոցս : Յայնժամ դարձաւ իմաստասէրն , և ասէ ցորս անդն կային . ցորչափ բանիւք մրցէին ը̃ իս , բանից ը̃դէմ բանս դնէի . իսկ յորժամ փոխանակ բանից զօրութ̃ի ել 'ի բերանոյ ասողին , ոչ ևս կարացին բանքս զդէմ ունել զօրութե̃ :

Արդ իբրև ձեռնթափ եղև արիոս 'ի փիլիսոփայից , ակն եդեալ էր յօգնականութիւն ոմանց ոմանց յեպիսկոպոսաց համախոհից իւրոց . բայց և նք̃ յամօթ եղեն յատենի . զի ս̃բ հարք ժողովոյն հանդարտուբ̃ և բազում զգուշուբ̃ քննեալ զամենայն զմիտս և զբանս՝ հերքեցին զգայլսն 'ի հօտէ գառանց : Յորժամ ընթերցեալ եղև զառաջինն 'ի մէջ ատենի դաւանութ̃ին արիոսի կամ վճ̃պութ̃ի ն̃ր , խորշեցան քստմնեցան սոսկացան ս̃բ հարք առ հասարակ , և խցեալ զլսելիս իւրեանց՝ զզուեցին և նզովեցին զարիոս և զաղանդն իւր պիղծ : Նոյնպէս ընդվերծանիլ բանից եւսեբիոսի նիկոմիդացւոյ , բացէ 'ի բաց հերքեցին զհայհոյութ̃իս ն̃ր իբրև ձայնակից արիոսի . և ետուն պատառել առաջի ամենեցուն :

Ընթերցան և զբանս ժողովոյն աղեքսանդրի հայրապետի ը̃դէմ արիոսի . և մի ըստ միոջէ տեղեկացեալ ա̃մ անցից անցելոց՝ ըսկսան հարք ս̃բք յորդորել մեղմով զարիանոսս դալ 'ի զեղջ և յուղղութ̃ի . իսկ նոքա յամառեալ կային 'ի մոլորութե̃ իւրեանց .

և ընդ միմեանս մաքառեալ՝ աղմուկ խորհէին յարուցանել ․ և ոմանք 'ի նոցանէ նորաձև կանոնս հաւատոյ 'ի մէջ ածէին ․ զոր նոյն ժամայն եւս պատառեալ սուրբ ժողովն ։

Ապա 'ի պատուիրել ինքնակալին , զի ամենայն ինչ ըստ կարգի և խաղաղութեամբ վճարեսցի , սկսան դէմ ընդդէմ վիճել ուղղափառք և չարափառք ․ յորում վայրի քաջ հանդիսացան բազումք 'ի սրբոց հայրապետաց ․ այլ առաւել իմն քան զայլոցն սրբոյն աթանաս սարկաւագ աղեքսանդրի հզօր զօրութեամբ և լի հոգւով սրբով մենամարտեալ ընդդէմ ժանտին արիոսի , խայտառակեալ նշաւակեաց զամենայն հնարս չարութեան նորա ։ Եւ 'ի կատարած ամենայնի՝ միաբան հաւանութեամբ համօրէն սինհոդոսին դատապարտեալ հերքեցան արիոս հերեսիովտապետ , և եւսեբիոս նիկոմիդացի համախոհ նորա ։ Յայնժամ իբրև ընդ մի բերան աղաղակեցին սուրբ հարքն ժողովոյն վասն քրիստոսի աստուծոյ մերոյ ․ * Որդի աստուծոյ , աստուած յաստուծոյ , լոյս 'ի լուսոյ , աստուած ճշմարիտ յաստուծոյ ճշմարտէ , համագոյակից հօր ‖ ։ Եւ սովին ուղղափառ դաւանութեամբ յօրինեցաւ 'ի ժողովոյն հոգւովն սրբով հանգանակն նիկիական ․ զոր և հանդիսապէս ընթերցաւ ոսիոս փոխանորդ պապին 'ի դիմաց ժողովոյն իբրև զկանոն ուղղափառ հաւատոյ և առաքելաւանդ վարդապետութեան ․ որում ձայնակից եղեն ամենեքեան , նզովս 'ի վերայ բերեալ՝ որոց ասէին , էր երբեմն յորժամ ոչ էր որդի , կամ թէ յոչ էից եղև ․ և յանուանէ անաթեմա տասցին արիոսի և արիանոսաց, զորս պորփիւրեանս կոչէր ա՟ծաւէր կայսրն Կոստանդիանոս. զի և պորփիւր փիլիսոփայ Թշնամի քրիստոնէից ոչինչ ը՟հատ ՚ի մոլորութ՟է արիանոսաց բարբանջեալ էր

ը՟դէմ ք՟նի ։

Հրաման ետ կայսրն, զի ոչ միայն վ՟էպական գրութիւք արիոսի ճարակ լիցին հրոյ, այլև գիրք ն՟ր՝ որ վ՟ն խնջոյից և պարուց՝ Թալիա կոչեցեալ. և որ միանգամ ընթեռնու զայն կ՟մ պահէ, գլխապարտ լիցի ։ Ապա ը՟ խորհրդոյ ս՟բյ ժողովոյն արտաքսահմանեաց յաքսորս զարիոս և զհամախոհս ն՟ր. բայց եւսեբիոս Նիկոմիդացի և այլք ումանք ը՟ նմա գիր աղերսանաց մատուցեալ, ՚ի վերին երեսս խոստանալով հնազանդ լինել վճռոյ ս՟բ ժողովոյն, կալան անդրէն զաթոռ իւրեանց ։ Յետ այսորիկ առ ՚ի դարման մատուցանել և այլոց երկպառակութ՟եց եկեղեցւոյ՝ սահմանեալ հաստատեաց ս՟բ. ժողովն, զի տօն զատկին կատարեսցի յ՟մ եկեղեցիս յաւուր կիրակէի զկնի լրման լուսնի՝ որ յետ գարնանային հաւասարակաւորութ՟է. և ՚ի սոյն պէտս յօրինեցաւ շրջանն ինն և տասան ամաց՝ իննևտասներեակ կոչեցեալ ։ Նա և վ՟ն մելետիոսի սահմանեցաւ, զի անկցի յ՟մ իրաւանց եպսութ՟է, և նստցի ՚ի լիւկոս՝ որ է գայլ քաղաք, առանց խառնելոյ ՚ի գործ ինչ եկեղեցւոյ. իսկ ձեռնադրելքն ՚ի նմանէ լիցին ը՟ իշխանութ՟բ աղեքսանդրու պատրիարգին ՚ի խոնարհագոյն աստիճանի քան զայլ պաշտօնեայս եկեղեցւոյ ։ Կարգեցան և. կանոնք քսան մի բարեկարգուեց եդեմ ինչ ինչ անկարգութեանց ժամանակին ։ Եւ ապա ձեռն եդին բանից ժողովոյն ամ հարք՝ ՚ի հաստատութի հանգանակի հաւատոյ և կանոնական տառից ։

Իբրև կատարեցաւ սբ ժողովն ՚ի յութն կաղանդից սեպտեմբերի , արար կայսրն կոստանդիանոս ըս օրինի ինքնակալաց զքսանեմեակն իւր , զի զհանդէս ուրախութե քսաներորդ ամի թգրութե իւրոյ՝ հանդերձ բազմութբ սբ եպսաց · որոց արար կոչունս արքայավայել՝ ՚ի նորաշէն քաղաք իւր ՚ի կոստանդինուպօլիս , որ և պալատ և Նոր Հռովմ կոչեցաւ · և ետ օրհնել նոցա զքաղաքն · և յանձն արարեալ յաղօթս նց զինքն և զթագաւորութի իւր՝ արձակեաց պատուով յիւրաքանչիւր տեղիս ։

Յղեալ էր նր յառաջագոյն ՚ի Հռովմ զհանգանակ ժողովոյն և զկանոնսն առ սբն սեղբեստրոս · որոյ արարեալ ժողով երկերիւր և եօթանասուն և հինգ եպսաց արևմտից՝ հաստատեաց զնիկիական սահման բանիւքս այսոքիւք · * Սեղբեստրոս եպս սբյ և առա-
,, քելական աթոռոյ՝ նախագահ քաղաքին
,, հռովմայ ասաց ։ Որ ինչ ՚ի Նիկիա բիւթա-
,, նացւոց սահմանեցաւ յամրութի սբ մայր
,, կաթողիկէ և առաքելական եկեղեցւոյ ՚ի
,, սբ քահանայից երեքհարիւրոց և ութու-
,, տասնից , մերով բերանով միաձայնելով
,, հաստատեմք ։ Զամենեսին՝ որ միան-
,, գամ իշխեսցեն լուծանել զսահմանս սբյ
,, և

„ և մեծի ժողովոյն , որ 'ի Նիկիա գումարեցաւ յառաջիկայութե՟ բարեպաշտ և պատուական ինքնակալին կոստանդիանոսի օգոստեայ , Նզովեմք ։ Եւ ասացին ամենեքեան . Հաճոյ է ‖ ։

Այնպէս և 'ի դառնալ սբ՟յն արիստակեայ 'ի Հայս , ո՟ք լուսաւորիչն մեր միաբանութ՟ք բազմութ՟ե եպ՟սաց Հայոց մեծաց՝ ընկալաւ զդաւանութ՟ի և զկանոնս սբ՟յ ժողովոյն . և կնքեաց բանիւն . * Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս , երկրպագանելով ս՟ք երրորդութ՟ե և մի ա՟ծութ՟ե Հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ , այժմ „ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն ‖ . յաւելեալ և ինչ ինչ կանոնս վ՟ն վիճակին իւրոյ առանձինն , ո՟պ և քանի մի բառս բացայայտագոյնս 'ի Հանգանակն . ուր կրկին կըրկին մեկնօրէն եդ զԹարգմանութի օմօուսիոս , ը՟ն համագոյակից , կամ բնութենակից ձայնի , նոյն էութն 'ի բնութե հօր , կամ յէութե հօր . զի մի ոք յարիանոսաց և 'ի կիսարիանոսաց մարթասցի ծեքել զձայնն և զիմաստն նիկիական . ը՟ս նմին և զայլ ինչ յաւելուածս եդ , որովք փակին ա՟մ հերեսիովտացն Ճանապարհք . Վ՟ոյ և Հանգանակն Հայերէն կոչի և է նիկիական և լուսաւորչեան միանգամայն ։ (1)

Արդ թէպէտև այսպէս և այսչափ զգուշաւոր կարգօք և ամրութ՟ք հաստատեցաւ ճըշմարտութ՟ի ուղղափառ դաւանութ՟ե 'ի ս՟բ ժողովն նիկիոյ , և հերքեալ մերժեցաւ յետին մոլորութի արիոսական , բայց յետ ամաց ինչ անցելոց աղուէսաբարոյն արիոս յաքսորանս իւր դարձ և զղջումն յոյժ կեղծաւորեալ՝ էառ հրաման յարքունուստ դառնալ ՚ի քաղաք իւր յաղեքսանդրիա ։ Նու ք՟ղի ՚ի ժամանակին նստեալ էր անդ պատրիարգ մեծն աթանաս ախոյեանն հաւատոյ , չընկալու զարիոս ՚ի հաղորդութ՟ի եկեղեցւոյ · և նա դէմ եդեալ գնաց ՚ի կոստանդինուպօլիս , և ՚ի ձեռն գործակցին իւրոյ եւսեբեայ նիկոմիդացւոյ՝ ը՟ունելութ՟ի եգիտ առ բազումս ։

Իբրև լու եղև բանս այս առ ս՟բ եպ՟սունս այլևայլ տեղեաց , անկան ՚ի հոգս կասկածանաց , և մեծաւ պաղատանօք կարդային առ ա՟ծ , զի մի տացէ պղծոյն մտանել յեկեղեցի իւր ս՟բ , և միւսանգամ ապականել զայգի տ՟ն իբրև զկինձ վայրենի ։ Զայս աղօթէր առաւելա՟պս աղեքսանդրոս ս՟բ եպ՟ս կոստանդնուպօլսոյ , և ս՟բն յակոբ մծբնայ հայրապետ՝ այլովքն հանդերձ · և լուաւ տ՟ր աղօթից ն՟ց , և փութով եբարձ զչարն ՚ի միջոյ · զի յորժամ ածեալ լինէր արիոս յեկեղեցի (ս՟բյն սոփիայ՝ ո՟պ կարծի) , զճանապարհայն ստիպեալ ՚ի կարեաց որովայնի՝ մեկուսացաւ ՚ի տեղի մի · ուր վայթեցան աղիք ն՟ր · և ՚ի գարշելիս անդ սատակեցաւ գարշելին ։

Այլ յաղագս բազմապատիկ անցից անցելոց ՚ի ժամանակին ունիս տեսանել և ՚ի վարս ս՟բյն աթանասի և մեծին կոստանդիանոսի , ո՟պ և գրիգորի ա՟ծաբանի և մեծին թէոդոսի , սի, առ որով եղև երկրորդ ժողովն տիեզերական 'ի կոստանդինուպօլիս. և յայնժամ իսպառ նուաճեցան հակառակորդք ճշմարտութե՟, և պայծառացան ա՟մ եկեղեցիք ուղղափառաց՝ հաւատով ամենաս՟բ երրորդութե՟ և մի ա՟ծութե՟ հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ. նմա փառք յաւիտեանս, ամէն :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ :

(1) Առ իմանալ զլրումն լուսաւորչեան հանգանակին մերոյ 'ի վ՟ր նիկիականին, դիցուք նախ զբուն օրինակն հանգանակին նիկիոյ, ապա և զկոստանդինուպօլսին, բառ առ բառ թարգմանելով 'ի յոյն բնագրէ. որպէս և զառաքելականն 'ի լատինէ, 'ի պէտս իմաստնոց :

Հանգանակ ժողովոյն նիկիոյ :

Հաւատամք 'ի մի Ա՟Ծ, հայր ամենակալ, ա՟մ երևելեաց և աներևութից արարիչ: Եւ 'ի մի տ՟ր յ՟ս ք՟ս որդին Ա՟Յ. ծնեալ 'ի հօրէ միածին, այսինքն յէութէն հօր. Ա՟Ծ յԱ՟յ, լոյս 'ի լուսոյ, ա՟ծ ճշմարիտ յա՟յ ճշմարտէ. ծնեալ, ոչ արարեալ. համագոյակից հօրն. որով ա՟մ ինչ եղև, որ յերկինս, և որ 'ի վ՟ր երկրի. որ յաղագս մեր մարդկան, և վ՟ն մերոյ փրկութե՟ իջեալ, և մարմնացեալ և մարդացեալ. չարչարեալ, և յարուցեալ յերրորդ աւուր, և ելեալ յերկինս. և գալոց միւսանգամ դատել զկենդանիս և զմեռեալս: Եւ 'ի հոգին ս՟բ: Իսկ որք ասենն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր, և մինչև ծնեալ՝ ոչ էր. և թէ յոչէից եղև. կամ յայլմէ ենթակայութէ կ՟մ յէութէ ասեն լինել, կամ ստեղծական, կ՟մ այլայլելի, կ՟մ փոփոխելի զորդին ա՟յ, զնոսա նզովէ կաթողիկէ և առաքելական եկեղեցի :

Հանգանակ ժող. Կոստանդնուպօլսոյ :

Հաւատամք 'ի մի Ա՟ծ՝ Հայր ամենակալ, արարիչ երկնի և երկրի, երևելեաց ա՟մի և աներևութից : Եւ 'ի մի տ՟ր յ՟ս ք՟ս որդին ա՟յ միածինն, 'ի հօրէ ծնեալ յառաջ քան զա՟մ յաւիտեանս, լոյս 'ի լուսոյ, Ա՟ծ ճշմարիտ յա՟յ ճշմարտէ, ծնեալ՝ ոչ արարեալ, համագոյակից հօրն. որով ա՟մ ինչ եղև. որ յաղագս մեր մարդկան և վ՟ն մերոյ փրկութ՟ե իջեալ յերկնից, և մարմնացեալ 'ի հոգւոյն ս՟բյ և 'ի մարիամայ կուսէն, և ներմարդացեալ. խաչեալ վ՟ն մեր առ պոնտացի պիղատոսիւ, և չարչարեալ և թաղեալ, և յարուցեալ յերրորդ աւուր ը՟ գրոց. և ելեալ յերկինս, և նստեալ ը՟ աջմէ հօրն. և միւսանգամ գալոց (հանդերձ) փառօք՝ դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութ՟ե ոչ եղիցի վախճան : Եւ 'ի հոգին ս՟բ՝ տ՟րն, կենդանարարն, 'ի հօրէ ելօղն, ը՟ հօր և որդւոյ երկրպագակիցն և փառաւորակից, որ խօսեցաւ մարգարէիւք : 'Ի մի ս՟բ կաթողիկէ և առաքելական եկեղեցի : Խոստովանիմք մի մկրտութ՟ի 'ի թողութ՟ի մեղաց. ակն ունիմք յարութ՟ե մեռելոց, և կենացն հանդերձեալ յաւիտենին. ամէն :

Հանգանակ առաքելական :

Հաւատամ ('ի) յԱ՟ծ, ('ի) հայրն ամենակարօղ, արարիչ երկնի և երկրի : Եւ 'ի յ՟ս ք՟ս որդի ն՟ր միակ, 'ի տ՟ր մեր. որ յղացաւ 'ի հոգւոյն սրբոյ, ծնաւ 'ի մարիամայ կուսէն, չարչարեցաւ առ պոնտացի պիղատոսիւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ. էջ 'ի դժոխս (կ՟մ 'ի ստորինս). յերրորդ աւուր յարեաւ 'ի մեռելոց. համբարձաւ 'ի յերկինս, նստի ը՟ աջմէ ա՟յ հօր ամենակարօղի. ուստի գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս : Հաւատամ 'ի հոգին ս՟բ. 'ի ս՟բ եկեղեցի կաթողիկէ, 'ի հաղորդութ՟ի սրբոց, 'ի թողութ՟ի մեղաց, 'ի յարութիւն մարմնոյ. ('ի կեանսն յաւիտենական). Ամէն :

Հան-

Հանգանակ Հայաստանեայց Եկեղեցւոյ ․

(Բաղդատեալ ընդ հին ձեռագիրս) ։

◆

Հաւատամք ՚ի մի ա՟ծ՝ հայր ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից ։ Եւ ՚ի մի տ՟ր յ՟ս ք՟ս յորդին ա՟յ, ծնեալն յա՟յ հօրէ միածին ․ այսինքն յէութենէ հօր ․ Ա՟ծ յա՟յ, լոյս ՚ի լուսոյ, ա՟ծ ճշմարիտ՝ յա՟յ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած ․ Նոյն ինքն ՚ի բնութենէ հօր ․ որով ա՟մ ինչ եղև յերկինս և ՚ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք ։ Որ յաղագս մեր մարդկան՝ և վ՟ն մերոյ փրկութե՟, իջեալ ՚ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի մարիամայ սրբոյ կուսէն՝ հոգւովն սրբով ։ Որով էառ մարմին, հոգի և միտք, և զա՟մ որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք ․ (կա՟մ, և ոչ կարծիս ունելով) ։ Չարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ ․ յերրորդ աւուր յարուցեալ ․ ելեալ յերկինս նովին մարմնով նստաւ ընդ աջմէ հօր ։ Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր, դատել զկենդանիս և զմեռեալս ։ Որոյ թագաւորութե՟ն ոչ գոյ վախճան ։ Հաւատամք և ՚ի ս՟բ հոգին յանեղն և ՚ի կատարեալն ։ Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս՝ և յաւետարանս ։ Որ էջն ՚ի յորդանան, քարոզեաց զառաքեալսն ․ և բնակեցաւ ՚ի սուրբսն ։ Հաւատամք և ՚ի մի միայն՝ ընդհանրական, և առաքելական եկեղեցի ։ ՚Ի մի մկրտութի՟ ։ Յապաշխարութի՟ ։ ՚Ի քաւութի՟, և ՚ի թողութի՟ մեղաց ։ ՚Ի յարութի՟ մեռելոց, ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց ․ յարքայութի՟ երկնից ․ և ՚ի կեանսն յաւիտենականս ։

Իսկ որք ասենն, էր երբեմն, յորժամ ոչ էր որդի ․ կամ էր երբեմն, յորժամ ոչ էր ս՟բ հոգին ․ կամ թէ յոչէից եղեն, կա՟մ յայլմէ էութենէ (կա՟մ ՚ի գոյութենէ) ասեն լինել զորդին ա՟յ ․ և կա՟մ զսուրբ հոգին ։ Եւ թէ փոփոխելի են, կա՟մ այլայլելի, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի ։

Իսկ մեք փառաւորեսցուք՝ որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր պագանելով սրբոյ երրորդութե՟ն՝ և մի ա՟ծութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ․ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ․ Ամէն ։

ՑԱՆԿ

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՑԱՆԿ

ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՑ

որ ՚ի հատորն · Ե։

Երես.

ա. Յովակիմայ և աննայի ծնողաց ս̃բ̃ ա̃ծածնի 5
բ. Կանանցն իւղաբերից . . . 24
գ. Բաբելայ հայրապետին, և երից մանկանց աշակերտաց նորին 26
(Երկրորդումն տօնի գրիգորի ակռականդացւոյն .) . . 53
դ. Երեմիայ մարգարէի . . . 54
ե. Ստեփաննոսի ուլնեցւոյ, և որոց ը̃ նմա 62
զ. Աբդլմսեհի վկային . . . 92
է. Անդրէի զօրավարին, և բանակի նորին 121
ը. Կալինիկոսի վկային . . . 146
թ. Դիոմիդեայ բժշկի . . . 153
ժ. Ադրիանոսի և կնոջ ն̃ր անատոլայ, և որոց ը̃ ն̃ս . . . 167
ժա. Թէոդորոսի ստրատելատի արակլացւոյ 201

ժբ̃

ժբ. Թէոդորոսի վկայի, և որոց ընդ նմա 221
ժգ. Թովմայի առաքելոյն . . . 252
ժդ. Մեսրոպայ վ̃րդպի 281
ժե. Եղիշէի, մովսեսի քերթողի, և դաւթի անյաղթ փիլիսոփայի 309
ժզ. Գրիգորի Նարեկացւոյ . . 321
ժէ. Ներսեսի կլայեցւոյ, ծ̃ Շնորհալւոյն 330
ժը. Ներսեսի Լամբրոնացւոյ . . 344
ժթ. Եզեկիելի մարգարէի . . 354
ի. Եզրի, որ և Եզրաս . . . 365
իա. Զաքարիայ հօրն յովհաննու Մկրտչի 371
իբ. Յովհաննու կարապետի (տօն չորրորդ) 377
իգ. Յովբայ արդարոյ . . . 389
իդ. Նիկիոյ սբ̃ ժողովոյն՝ յժ̃ը հայրապետաց 410

1971 Թ.

ՎԱԽՃԱՆ

593



[illegible]



ՖՈՆԴ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
[illegible]